

ԹՈՒՐԳԵՐԸ ԹՈՒՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

I

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2011**

ՀՏԴ 941(479.25) : 94/99
ԳՄԴ 63.3(27)+63.3
Պ 499

Տպագրված է պետական պատվերով

Պետոյան Ս. Հ.

Պ 499 Թուրքերը թուրքերի մասին, / Ս. Հ. Պետոյան կազմող. – Եր.: ԵՊՀ հրատ., 2011, հ. 1, 294 էջ:

ԵռաՀատորյակի առաջին գրքում ներկայացված նյութերը, հիմնականում՝ վավերագրեր, ընդգրկում են XIX դարի կեսերի և XX դարի սկզբների ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության պատմությունը՝ Թանգիմաթի բարենորոգումներից մինչև Աբդուլ Համիդի գահընկեցությունը:

Հրեթաքս լուսարանվում են պետական, կրոնական, հասարակական խմբումները և օսմանյան հայաջինջ քաղաքականության ղրղապատճառներն ու սկիզբը:

ՀՏԴ 941(479.25) : 94/99
ԳՄԴ 63.3(27)+63.3

© Կազմողի համար, 2011
© ԵՊՀ հրատ., 2011

ISBN 978-5-8084-1411-2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանությունը մարդկության պատմությանը Հայտնի ամենաողբերգական, միաժամանակ, ամենազարհուրելի ու ստոր երևույթներից է, ավելի զազրելի ու ստոր, քան անգամ Երկրորդ աշխարհամարտը, որը խլեց 50 միլիոն մարդու կյանք: Եթե աշխարհամարտը ուժերի բացահայտ բախում էր և հաղթեց ուժեղագույնը, ապա ցեղասպանությունը ոչ թե բախում էր, այլ բնաջնջում, երբ բնաջնջողն ուժեղ էր ռազմական ու նյութական առումով, իսկ զոհը՝ զուրկ այդ բոլորից և նաև ենթակա իր համար անսպասելի զանգվածային ոճրագործության:

Հայոց ցեղասպանության գլխավոր հարցը ուսումնասիրվել է հիմնականում ոչ թուրքական աղբյուրներից քաղված նյութերով: Պատճառներն ակնհայտ են. դրանցից գլխավորը թուրքական աղբյուրների փականքի տակ գտնվելն է ու նաև այն, որ թուրք մասնագետները օրյեկտիվ ու շատ հաճախ նաև սուրյեկտիվ պատճառներով թեմայի գիտական մշակմանը չէին մասնակցում, քանի որ պետական թաբուի տակ էին գտնվում: Հայոց ցեղասպանության նկատմամբ գիտական մոտեցումը դարձավ նաև միջազգային հարաբերությունների զոհ, և կատարվեց տարօրինակ բան: 1,5 մլն Հայի կյանք խլած ցեղասպանության չուրջ անմիջապես ձևավորվեց համաշխարհային քար լուծություն, որը տևեց չուրջ կես դար:

60-ական թվականների կեսերից վիճակը փոխվեց. համենայնդեպս, Հայ ժողովուրդը սկսեց դժգոհել, ուսումնասիրել Մեծ եղեռնի պատմությունը, բայց հիմնականում առանց թուրքական աղբյուրների: Միայն վերջին տարիներին է, որ արտասահմանում հաստատված թուրք մտավորականներից մի քանիսի ջանքերով չըջանառություն մեջ դրվեց նաև թուրքական արխիվային նյութերի միայն մի չնչին մասը, որովհետև անցյալ դարի 70–80-ական թվականներին դրանք մաքրազատվեցին և անհնարին դարձրեցին Մեծ եղեռնին վերաբերող կարևորագույն նյութերի օգտագործումը:

Համաշխարհային զարգացումները, մասնավորապես սառը պատերազմի հավատքի չնորհիվ նախկին հզոր պետությունների միջև պայքարի մեղմացումը, նպաստեցին Թուրքիայից մի շարք առաջադեմ մտավորականների, հետևալը կամ արտաքսվելը, ինչն էլ ուժեղացրեց նրանց վրա համաշխարհային առաջադիմական ուսմունքների ու կեցվածքի ազդեցությունը: Ի հայտ եկան մի քանի թուրք առաջադեմ մտավորականներ, որոնք Թուրքիայի ներքին կյանքը քննադատություն ենթարկելուց բացի մեծ քայլեր կատարեցին Հայոց ցեղասպանությունը մերժող թուրքական թեզը ժխտելու ուղղությամբ:

Այսօր արդեն նմանների թիվը զգալի է, սակայն էմիգրանտ թուրք պատմաբաններից առաջինը Թաներ Ակչամն էր, որը շատ բան արեց Հայոց ցեղասպանության թուրքական պաշտոնական տեսակետը ժխտելու և աշխարհին ասելու, թե Օսմանյան կայսրության տարածքում ցեղասպանության իրողությունն անժխտելի փաստ է:

Հայկական հարցին և մասնավորապես Հայոց ցեղասպանությանը ամենաուշը անդրադարձան Հայ պատմաբանները: Իրականում մեղքը նրանցը չէր: ԽՍՀՄ այդ թեմայի վրա թաքու էր դրել: Այնուամենայնիվ, դարի կեսերին, հատկապես Սփյուռքում, ասպարեզ ելան թեմային նվիրված մի քանի աշխատություններ: Դրանցից ամենահաջողվածներից մեկը «Հուշամատյան Մեծ եղեռնի» 1000 էջանոց աշխատությունն է:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վիճակը կարծես թե փոխվեց: Նորանկախ ՀՀ-ում չարժ նկատվեց Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրման արդար գործում: Վերջին տասնամյակում բավականին մեծ աշխատանք կատարվեց, հրատարակվեցին ու թարգմանվեցին բազմաթիվ կարևոր աշխատություններ՝ նվիրված Հայոց ցեղասպանությանն ու Հայկական հարցին: Սակայն այս ամենն էլ բավարար չէ. պետք է շարունակել ուսումնասիրությունները, կատարել խնդրի լուծմանը նպաստող մի շարք խթանիչ քայլեր՝ վիճակը հանգամանորեն բարելավելու նպատակով: Հատկապես անհրաժեշտ է.

ա. Շնորհալի երիտասարդների գործուղել արտասահման, մասնավորապես՝ Իսրայելի Ցեղասպանության գիտական կենտրոններում մասնագիտական կրթություն ստանալու համար:

բ. Ստեղծել գիտաուսումնական արչավախճեր: Հայոց ցեղասպանությունն առնչվող նյութեր հավաքելու խնդիրը լուծելու համար կպահանջվի լուրջ ֆինանսավորում:

գ. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծել ցեղասպանությունն ուսումնասիրող ամբիոններ և բաժիններ:

դ. Հատկապես մեծ ուշադրություն դարձնել թուրքական աղբյուրներին, որոնք կարող են վճռական դեր խաղալ Մեծ եղեռնի պատմությունը մարդկությունը ավելի ամբողջական ներկայացնելու գործում:

Ընթերցողի ուշադրությունը ներկայացվող այս եռահատորը հավակնում է ինչ-որ չափով լրացնելու այդ բացը:

* * *

Հայոց ցեղասպանության տարեթվի մասին կարծիքները տարբեր են: Ոմանք այն անգամ նույնացնում են Օսմանյան կայսրության ստեղծման, ուրիշները՝ Մեծ եղեռնի հետ, այսինքն՝ պարփակում են 1915-ի չրջանակներում:

Իրականությունն ուրիշ է: Հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը սկսեց ձևավորվել 19-րդ դարի առաջին կեսից և առնչություններ ունեն թանգիմաթի հետ, որի ընձեռած հնարավորությունից կարողացան օգտվել Թուրքիայում բնակվող միայն համեմատաբար զարգացած ժողովուրդները (հայեր, հույներ, հրեաներ), ովքեր ի վիճակի եղան հասարակության տնտեսական կյանքն իրենց ձեռքը վերցնել: Եվ երբ թուրքական բուրժուազիան աչքը բացեց, սեփական հայրենիքի շուկան զբաղված տեսավ և հարձակում սկսեց «գլավուրների» դեմ: Երկար ժամանակ չպահանջվեց Օսմանյան կայսրությունում թուրքերի կողմից բացահայտորեն հակահայկական քաղաքականության ձևավորմանը, ինչն էլ պատճառ դարձավ, որ հայերը փորձ կատարեին ինչ-որ կերպ դիմադրելու այս ամենին: Դրա առաջին արտահայտություններն էին Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, սահմանադրական շարժումը, զավառների հայ բնակչության անտանելի վիճակի մասին 70-ական թվականներին Բ. Դոանը ներկայացված նամակները և այլն: Սակայն հայ-թուրքական առճակատում ամբողջությամբ ձևափոխվեց 1877-1878 թթ. ռուս-թուր-

քական պատերազմի ընթացքում, ինչը հետևանք էր հայերի հանդեպ հրահրված զանգվածային թշնամական գործողությունների. իբրև թե հայերը դավաճանել են իրենց Օսմանյան հայրենիքը և անցել ռուսների կողմը:

Որ հայերի ռուսական կողմնորոշումը 19-րդ դարի սկզբներից նոր թափ էր ստանում, անհնար է ժխտել: Դրա վառ օրինակներից է այն, որ դարասկզբի ռուս-թուրքական պատերազմի ավարտին չուրջ 100 հազար թուրքահայատակ հայեր անցան ռուս-թուրքական սահմանը, և 1877 թ. պատերազմում հայ բնակչության համակրանքը նորից ռուսների կողմն էր, արևմտահայության ազատագրության հիմքում հայ քաղաքական գրեթե բոլոր ուժերը դնում էին Ռուսաստանին աջակցություն և օգնություն ցույց տալու խնդիրը:

Արևմտահայության բնաջնջման առաջին շրջանը սկզբնավորվեց այդ պատերազմի ժամանակ: Հրապարակվեցին օսմանյան պետական մի քանի խոշոր գործիչների (Ֆուադ, Քեմալ, Սայիդ փաշաների) նամակները՝ ուղղված սուլթանին, որոնցում բացահայտ կերպով ասվում էր, որ Օսմանյան կայսրության փրկության միակ միջոցը հայության բնաջնջումն է... Քրդերին հարձակման մղեցին հայերի դեմ. սկսվեցին Զուլումի տարիները: Տեղի ունեցան Սասունի հայ բնակչության ջարդերը 1894 և 1904 թվերին:

Դրությունը գնալով աղետալի էր դառնում նաև Կիլիկիայում: Սակայն այնտեղ թուրքերի ջարդարար քաղաքականության հաջողությունը մեծ չէր, քանի որ հայերին հաջողվում էր դիմադրել:

Թուրքերի հակահայ քաղաքականության հիմքերից էր նաև կրոնական անհանդուրժողականությունը, որ հայկական ջարդերին աներևակայելի դաժանություն հաջորդեց:

Հայոց ցեղասպանությունը ծնունդն էր թուրքական մեծ Թուրան ստեղծելու երազանքի ու նաև հետևանք էր մեծ տերությունների շահերի թելադրանքի: Ահա ժամանակակից թուրք-թուրանական նկրտումները նկատի ունենալով՝ անհնար է ճշտորեն պատկերացնել թուրքական հիմնախնդրի դերը համաշխարհային քաղաքականության ծավալման, ուժերի նոր վերադասավորման գործում: Եվրոպայի սրտի վրա ձևավորվել էր մի կիսաքոչվոր ռազմական միավորում, որը հավակնություն ուներ դառնալու առաջատար, գերիշխող ուժ մարդկության հոգու և սրտի վրա:

Առանց պատմության այս հզոր տրամաբանությունը նկատի ունենալով՝ անհնար է հասկանալ և ըստ էության գնահատել թուրքական-մահմեդական աշխարհի գործոնի դերն արդի աշխարհի հարատևման գործում:

Սկսած 20-րդ դարի սկզբներից՝ թուրքական գործոնը դուրս եկավ առաջին պլան և վերածվեց միջազգային հարաբերությունների առաջատար ուժի:

Այն առանձնակի նշանակություն է ձեռք բերել հատկապես քրիստոնյա ու մահմեդական աշխարհների փոխհարաբերություններում և նպատակ ուներ ծնելու թուրք-մահմեդական համաշխարհային մի նոր միություն և հաստատելու միանգամայն նոր քաղաքականություն ու բարոյականություն:

Ուստի, թուրքիայի քաղաքականությունը կողքից նայելը ոչ միայն ընթացիկ մարտավարական բնույթ ունի, այլև ռազմավարական համընդհանուր ընդգրկում ունեցող քաղաքականություն է: Այդ ճանապարհին թուրքիան վերածվել է մի չարիքի, որը ձգտում է ամեն ինչի, բայց հաջողության հասնել չի կարողանում և վրեժ է լուծում թուրքահայատակ ժողովուրդների դժբախտության հաշվին:

Ուստի, հնարովի չէ սույն գրքի տրամաբանությունը՝ թուրքերի համաթուրքական քաղաքականությունը վերածվել է համաերկրային հավակնություններ ունեցող ծրագրի:

Սույն աշխատության նշանաբանն է. «Թուրքերը թուրքերի մասին», սակայն այն գիտական ճշմարտությունից հեռու կլինի, եթե ամբողջությամբ խաբսխված չլինի այդ քաղաքականության հետևյալ փանքների վրա: Ուստի, թուրքական կարծիքի հետ միասին շատ կարևոր է քաղաքականություն ձևավորող միջազգային հարաբերությունների այն ոլորապտույտը, որը փաստորեն վերածվել է համաշխարհային զարգացման մայրուղու:

Ուստի, «Թուրքերը թուրքերի մասին» ժողովածուների հիմքում ընկած է այդ ժողովրդի պետական քաղաքականությունը մեր կիսագնդի ցանկացած մասում և առաջին հերթին՝ երեք մայրցամաքներում՝ Ասիա, Եվրոպա, Աֆրիկա:

Աշխարհի բախտը որոշողները քաջ գիտեին, թե ինչ աղետներ էին բերելու թուրք-սելջուկներն Արևելքից, բայց նրանց ոչ միայն չկանգ-

նեցրին, այլև օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներն ու միջոցները ներառվեցին նոր, երիտասարդ քաղաքականությունից ծնած արյան հեղեղների գոյացմանը, ինչու էլ, նաև աշխարհի թուրքացման գործընթացին:

Ջնայած որ Աբդուլ Համիդ II-ը, երիտթուրք ղեկավար եռյակը և Քեմալ Աթաթուրքը ոխերիմ հակառակորդներ էին և նույնիսկ երիտթուրք եռյակի պարագլուխները՝ Ջեմալը, էնվերն ու Թալեաթը, ատում էին միմյանց, սակայն Հայկական հարցում նրանք միասնական էին. միայն ջարդերի փաստերն ու եղանակներն էին տարբեր: Համիդը դրանք իրականացրեց Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում և հատկապես Սասունում, երիտթուրքերն՝ ամբողջ կայսրությունում, իսկ Մ. Քեմալը՝ Արևելյան Հայաստանում:

Աղանայի հայության ջարդերով երիտթուրքերն ապացուցեցին, որ իրենց հայաջինջ քաղաքականությամբ Աբդուլ Համիդին ոչնչով չեն գիշում:

Երիտթուրքերի Սալոնիկի համագումարում 1910 թ. օգոստոսի 6-ին հանդես եկած Թալեաթը նպատակ ունեւր կուսակցությունը և հանձնաժողովին կողմնորոշել անցում կատարելու պանօսմանիզմից թուրքիզմ (թրքություն) և պանթուրքիզմ (համաթրքություն): Դա ոչ միայն Թալեաթի մտահղացումն ու կարծիքն էր, այլև Իթթիհատի կենտրոնից, որի համաժողովում նա ասաց. «Դուք գիտակցում եք, որ Սահմանադրությամբ հաստատված է մահմեդականների և գյավուրների հավասարությունը, և բոլորը զգում են ու գիտեն, որ դա անիրագործելի գաղափար է: Ծարիաթը, մեր ողջ անցյալ և ներկա պատմությունը, ինչպես նաև հարյուրավոր մահմեդականների, անգամ գյավուրների զգացմունքները... ներկայացնում են անանցանելի խոչընդոտներ իրական հավասարության հաստատման համար... Ուստի չի կարող որևէ հավասարության հարց լինել մինչև մենք կարողանանք հաջողել կայսրության օսմանացման մեր խնդիրը»¹:

Սալոնիկում մեկ ուրիշ երիտթուրք առաջնորդ՝ Նազըմը, հայտարարեց. «Այս պահին կարևորը մեզ համար գաղափարի ոչ թե տեսական վերլուծություններն ու հիմնավորումներն են, այլ դրանց իրականացման գործնական միջոցների ճշտումը... Այս պահին մեզ համար

¹ British documents on the origins of war 1898–1914, vol. IX, part I, London, 1926, p. 208.

առաջնային են ոչ թե գաղափարի տեսական վերլուծություններն ու հիմնավորումները, այլ դրանց իրականացման գործնական միջոցների ճշտումները»²:

Էնվերը 1915 թ. ապրիլին հայտարարեց. «Թուրքիայում գոյություն ունի խոր համոզմունք, որ թուրքերի անհաջողությունը կովկասյան ռազմաճակատում պետք է վերագրվի հայերին: Եթե նրանք այդքան համառորեն չպաշտպանեին ռուսական շահերը Կովկասում, թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս էապես կթեթևանար, այդ իսկ պատճառով նման կատաղությամբ հարձակվում են հայերի վրա: Թուրքերի պետական շահը պահանջում է հայերի ամբողջական տեղահանում...»³:

«Եթե մեր հայերը միացած լինեին մեզ, ասել է մի թուրք սպա, աննք վաղուց ջարդած կլինեինք ռուսներին»³:

Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց անմիջապես հետո՝ ամենուրեք սպանված հայերի թիվը հաշվվում էր հազարներով: 1914 թ. սեպտեմբերի 27-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարքը գրում է Էրզրումի վալի Իգեթին. «Ամիսն մը ավելի, որ Սեքերպերլիք յայտարարում է, զորակոչը սկսել է և զենքի տակ կը հրավիրուին 20–45 տարեկանները... ով որ չհնազանդի, ով որ անմիջապես զորակոչին չպատասխանե, իտամի (մահվան) կը դատապարտուի... այս երկրի 45 տարեկանները 50–55 տարեկան են, տարիքի թիվերը պակաս արձանագրած ըլլալուն պատճառով... շատերը կորաքամակ են, ոչ ապաքեն քրիստոնեաները զինուորական տուրք տուած են, սակայն այս առարկութիւնները բան մը չեն արժեր...»

Ժողովուրդի յուսահատությունը իր գագաթնակետին հասած էր, բայց անոր ցավը միայն այս չէ, հետզհետե անկե կը պահանջուի այն ամենը, ինչ որ պատերազմող զորաց պետք է, զինուոր հավաքելու միևնույն խստութեամբ սկսած են հավաքել եղներ և սայլեր, իւրաքանչիւր գիւղեն եթե չորս կամ վեց եզ պետք է, Ժանտարմները ամեն մեկ գիւղեն 30–40 եզ կը բերին...»⁴:

¹ Միմնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 154:

² Армянский вестник, 1916, стр. 8.

³ Նույն տեղում:

⁴ Զավեն արքեպ., նշվ. աշխ., էջ 55–56:

Երիտթուրքերը ի սկզբանե կայսրության բնակչության գիտակցության մեջ ուսուցում էին մի գաղափար, թե այլևս Օսմանյան կայսրության գոյությունն անհնար էր առանց Հայկական Հարցի լուծման, կայսրությունում Հայ տարրի վերացման, բնաջնջման ու արտաքսման:

Սկսած 1909 թվականից՝ երիտթուրքերը բազմիցս անդրադարձել են Հայկական Հարցին՝ Հայերի բնաջնջման կամ բռնագաղթի կազմակերպման միջոցով Հայկական Հարցը լուծելու խնդրին: Վերջնական որոշումն ընդունվեց Իթթիհադի կենտկոմի 1915 թ. փետրվարի կեսերին կայացած նիստի կողմից...

Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Թուրք Հասարակական գործիչ-լրագրող Շուլե Բեթինջեկը Օսմանյան կայսրությունում Հայերի ունեցած ավանդի մասին.

— Հարյուրավոր տարիներ այս հողի վրա ապրելով՝ Հայերն էլ դրոշ են դրել երկրի վրա: Իրենց ճաշերով, երաժշտությունով, արդուզարդով, արվեստագետ ոգով և այլ գործունեությամբ պճնել, գեղեցկացրել են մեր երկրի բոլոր անկյունները: Որ կողմը նայելու լինենք՝ նրանց հոգու նրբությունը, ճարտար ձեռքերի վաստակը, ճաշակն ու ճկունությունն ենք տեսնելու: Նրանք Թուրքիայի «առաջիններն են»՝ սկսած բազմաձայն երաժշտությունից մինչև թատրոն և կերպարավեստ: Անմտյան ըմբռնումով առաջին թատրոնները Թուրքիայում ստեղծվել են Հայկական վարժարաններում... Առաջին անգամ բեմ ելած դերասանուհին նորից Հայուհի էր՝ Արուսյակ Փափաղյանը:

Թուրքիայում բազմաձայն երաժշտության, օպերայի և առաջին օպերետի հիմնադիրն էլ Հայերն են: Թուրքական առաջին օպերան և օպերետը ստեղծեց Տիգրան Չուխաջյանը, որին Արևմուտքում անվանում էին Օֆենբախ և Վերդի: Գ. Սինասյանն է հիմնել Թուրքիայի առաջին նվագախումբը, Ե. Ոսկանը՝ «օսմանցի» առաջին արձանագործն է, նա է հիմնել գեղարվեստի վարժարանը: Ամբողջ աշխարհի գեղանկարչության պատմության մեջ ասվում է, որ առաջին անգամ Հոռմկլայում Թորոս Ռուսլինն է եղել տարածականության կանոնի կիրառողը... Զուլթակի առաջին ուսուցիչը՝ Հ. Մուհենտիայանն է, իսկ դաշնամուրի առաջին ուսուցիչը՝ Հ. Սինանյանը, որն, ի դեպ, նաև հեղինակել է երիտթուրքերի քայլերգը:

Է. Մանասը կազմակերպեց Թուրքական առաջին երգչախումբը... Աշխարհում Հայտնի «Թուրքական ծնծղան» ստեղծել է Զիլջյան ընտանիքը... Պոլսի առաջին ծաղկավաճառանոցը բացել է Մ. Գարազաչը, որը նաև օպերային առաջին երգչուհին էր (սոպրանո):

Թուրքերենի առաջին ստուգաբանական բառարանի հեղինակը Պ. Քերեսթյանն է, գիրք, որ մինչև օրս հավասարը չունի...

Կ. Մարքսի «Մանիֆեստը» 1887-ին է թարգմանվել Հայերեն՝ անգլերեն հրատարակությունից մի տարի չուտ...

Հ. Վարդանյանը հիմնադրեց թուրքական առաջին երգիծական թերթը... Ն. Բերբերյանն ու Հ. Հեքիմյանը ստեղծեցին թուրքական ծաղրանկարչությունը...

Պալյան բնտանիքի օրհնյալ ձեռքն է Ստամբուլի վրա: Նրանք խոչոր կնիք են դրել օսմանա-թուրքական ճարտարապետության վրա... Դոմաբախչե, Չրադան Բալթալա, Ելդըզ, Բեյքերբեյ, Գալենտերի, Այնալգավաք, Գյոքսու, Յըխլամուր ապարանքները, Բալմուճի, Ռումի, Սելիմիե, Թոփճուլար, Թաշկչուղ, Գյումաշսու զորանոցները, Վալիդե, Նուսրետիե, Օրթագյուղի մզկիթները... զանազան ջրավազաններ... Թոփճանեի ժամացույցի աշտարակը... Բեյ-Գադի կաշեգործարանը, Հերեբեի մետաքսի գործարանը... Բանկ, ռազմական նախարարության և համալսարանի շենքեր... Եթե լրիվ ցուցակը տալու լինենք, հանդեսի էջերը գուցե չբավարարեն...

Թուրքերենի առաջին լատիներեն այբուբենը պատրաստել է ոսկերիչ Մադլումյանը...

«Ք. Աթաթուրք» ստորագրությունը ստեղծել է Վ. Չերչյանը:

Օսմանյան շրջանում ավելի քան 40 հայեր ամենակարևոր նախարարական պաշտոններ են վարել... Նրանց վստահվել է նաև դեսպանի, խորհրդականի, պետական խորհրդի անդամի, երեսփոխանի պաշտոնները... Հայերի ձեռքին էին օսմանյան ֆինանսները, արդյունաբերության և արհեստների 20 տոկոսը, գրեթե ամբողջ արտաքին առևտուրը, ներքին առևտրի՝ 60 տոկոսը... Հայեր էին առաջատար իրավաբանները, բժիշկները, լրագրողները, քիմիկոսները...¹:

Թուրք մտավորական Թահսին Ջալալը Հայկական Հարցի և հայերի մասին.

– Հայկական Հարցի մասին ծանոթ ենք միայն թուրքերի ասածներից, որոնք պաշտոնապես հերքում են այն: Այդ նույն հերքումը իշխում է թե պաշտոնական և թե անհատական դիրքորոշումների մեջ...

Այսօրվա թուրք բնակչության տարբեր սերունդներն իրականում ի՞նչ գիտեն հայերի և նրանց հանդեպ գործված ոճիրների մասին:

¹ «Մարմարա», 6-ր մայիսի 1987 թ., արտատպությունը, թուրքական «İki Bine Doğru» պարբերականից, «Le problème arménien, neuf questions, neuf réponses», Institut de Politique Etrangère le Problème arménien, Ankara, 1982.

Պաշտոնական ճառերում բացառվում է հայկականության որևէ ակնարկ, թե Թուրքիայի ներկա տարածքի վրա հայեր են եղել և այդ արվել է մի նպատակով, որպեսզի հիշողություններից լիովին ջնջեն 1915-ի քստմենլի գործերը: Սակայն որքան էլ կարճ լինի մարդկանց հիշողությունը, նման ահարկու դեպքերն անհնար է բնդմիշտ ջնջել:

Եվ իրոք, 70-ական թվականներից շատ առաջ, երբ թուրք դիվանագետների դեմ մահափորձերը համաշխարհային հասարակությանը և թուրքերին վերհիշեցրին դեռ չփակված վերքի առկայության, չփոխհատուցված ոճիրի գոյության մասին, այլևս այն հիշվում է մշտապես և ամենուրեք: Լինեն շինությունների ավերակներ՝ տներ և եկեղեցիներ, այգիներ և լքված դաշտեր, լինեն բռնագրավված կամ լքված շենքեր, պահեստի կամ բանտի վերածված վանքեր՝ դրանք բոլորը չեն կարող չհիշեցնել, որ անցյալում մի ազդ ծաղկացրել է Անատոլիայի դաժան բնապատկերները:

Իսկ ի՞նչ ասել այն երեխաների ու կանանց մասին, որոնք 1915 թվին բռնի թուրքացվեցին, և որոնց ոչ ոք՝ ո՛չ ուրիշները, ո՛չ իրենք, ո՛չ իրենց երեխաներն իսկ չէին կարող հարկադրել լիովին մոռանալու ջարդի տառապանքը: Քանիցս թուրքերից հայհոյանք ու վիրավորանք ստացան՝ այս ու այն առիթով «հայի ծնունդ» անվանվելով: Իսկ եթե ճարտարապետական բեկորներ կամ հայեր չկան մերձակայքում, միևնույնն է, դաժան անցյալի հետ սոսկալի հանդիպումը կարող է տեղի ունենալ որևէ անդունդի խորքում կամ մութ քարանձավի մեջ, որտեղ մինչև օրս դեռ մնում են մեռելային կուտակկուտակ անթաղ հիշողությունները, որոնք ամոթանքի կնիքով առհավետ դրոշմելու են նրան, ով հայտնաբերում է դրանք:

Թուրքական մի Վիլլի Բրանդտի ծնունդը վաղվա համար չէ: Սակայն երկարաշունչ և բարդ այդ աշխատանքը չպետք է բնկնի հայերին... Թերևս սոսկալի ճակատագիրը քաջաբար տանելու այդ պարտադրված կտակը թաքստոցն է նրանց անցյալ, ներկա և ապագա փառքի: Բացի այդ Հայկական Հարցը... պատկանում է բոլոր նրանց, ովքեր ձգտում և գործում են, որպեսզի այս հողի վրա ավելի շատ արդարություն լինի: Դրանք մեզ հույս են ներշնչում, որ մի օր զոհերին կվերադարձվի արդարությունը, և ոճիրը հատուցում կստանա: Այսպիսով կվերականգնվի նաև մարդու պատիվը¹:

¹ «Armenian Special», «Ուրբաթ» շրթ., Երևան, 23-ը ապրիլի 1993 թ.:

2001 թ. Անկարայում հրատարակած դոկտոր էրդալ Իզթերի «Թուրք-Հայկական հարաբերություններ» գրքից.

– Հայերը, ինչպես XIX և XX դարերում, այնպես էլ այսօր աշխարհի հասարակությանը խաբելով վարպետորեն ներկայանում են որպես թուրքերի կողմից բռնությունների, ճնշումների, ցեղասպանության ենթարկված քրիստոնյա մի ազգ՝ շարունակելով այդ ուղղությամբ տանող պրոպագանդան...

Հայերը հիմնվելով օտար պետությունների հետ իրենց ունեցած շահերի վրա, «այսպես կոչված» Հայկական հարցը բարձրացրել են այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությանը սպառնում էր կործանման վտանգ: Այդ գործողությունները քարոզչության միջոցով իրագործում էին Հայկական կազմակերպությունները՝ հանրության վրա գործելով հոգեբանական ազդեցություն: Ներկայումս էլ աշխարհի շատ երկրներում, հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում և եվրոպական երկրներում Հայ գիտնականներն ու Հայկական կազմակերպությունները որոշ երկրների դեկավարների աջակցությամբ այս Հարցը օրակարգ բերելով՝ պնդում են, որ Օսմանյան կայսրությունում Հայերը ենթարկվել են անօրինակությունների¹:

Թուրք Վեհիբ փաշան Բաթումիի բանակցությունների ժամանակ Հայկական պատվիրակությանը հայտարարել է.

– Դուք տեսնում եք, որ ճակատագիրը թուրքերին Արևմուտքից Արևելք է քշում: Մենք հեռացանք Բալկաններից, կհեռանանք նաև Աֆրիկայից, բայց մենք պիտի տարածվենք դեպի Արևելք, այնտեղ է մեր արյունը, կրոնն ու լեզուն: Եվ սա տարերային ձգողություն ունի... Մենք պետք է ճանապարհ ունենանք դեպի այնտեղ... Եվ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր ճանապարհին... Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզ ճանապարհ տաք... Ահա՛ թե որտեղ է մեր հիմնական վեճը...²:

Թուրք նշանավոր պատմաբան Օսման Նուրիի «Աբդուլ Համիդ Երկրորդի և նրա իշխանության շրջանը» եռահատոր աշխատությունից.

... Օսմանյան երկրում Հայերը վայելում էին կատարյալ ազատություն: Եկեղեցիներում ազատորեն կատարում էին բոլոր տեսակի

¹ Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, էջ 287–288:

² Նաախյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Աթենք, 1930, էջ 70:

ծեսերն ու արարողությունները, պալատում, կայսերական զանաքանում, Բարձրագույն Դուանը ծառայում էին բազմաթիվ հայ բարձրաստիճան պաշտոնյաներ: Օրինակ՝ Հակոբ փաշան Փինանսների մինիստր էր: Կառավարչություններում, դատարաններում և նման վրատահություն պահանջող պաշտոններում ծառայում էին մեծ թվով Հայեր: Գրեթե բոլոր նահանգներում կուսակալներին առնթեր համարյա բոլոր քաղաքական գործերը գտնվում էին Հայերի ձեռքին: Ավելի ճիշտ՝ 1880-ից մինչև 1888 թվականը օսմանյան կառավարության ամենակարևոր պաշտոններում ծառայում էին Հայերը: Աբդուլ Համիդն իր կայսերական զանաքանում Հայերին էր ծառայության վերցնում, արտոնում էր, որ Հայ ուսանողները Եվրոպա գնան սովորելու: Հայերի ուշիմությունն ու ուղղամտությունը հայտնի լինելով՝ նրանց մանր-մունր սխալներին երբեք կարևորություն չէր տրվում:

Հայերի և մուսուլմանների միջև կային անհամաձայնությունն առաջացնող մի քանի կետեր՝ քրդերի հարձակումները, տեղական պաշտոնյաների պարտազանցությունները... Թեև Հայերը գանգատվում էին օսմանյան վարչության հոռի վերաբերմունքից, սակայն չէին դադարում իրենց համար մեծ վտանգ համարել նաև ուսուներին: Հայերը 1870 թվականից ի վեր չափազանց առաջադիմել էին Կովկասում, իրենց սահմանները տարածել էին Վրաստան՝ մեծ թիվ կազմելով Թիֆլիս քաղաքում: Որոշ ժամանակ հետո Հայերը իրենց իրավունքները պաշտպանելու համար Փարիզում հիմնել էին «Հնչակ» անունով մի կազմակերպություն: Այս կազմակերպության նպատակն էր Հայերին կառավարել սոցիալական սկզբունքներով:

Հնչակյան կուսակցությունը Եվրոպայում բազմաթիվ հրատարակություններ ունենալուց հետո ի վերջո հաստատվել էր Լոնդոնում:

Կուսակցության նպատակը լիակատար անկախությունը չէր, նույնիսկ օսմանյան երկրում եղած նրա անդամները պահանջում էին միայն, որ կառավարությունը քրդերի հանդեպ մի քիչ ավելի խիստ պատիժ սահմանի. գանգատվում էին նաև պարտազանց կուսակալներից և անպետք ոստիկաններից: Հնչակ կուսակցության հիմնական նպատակն էր Հայերով բնակված նահանգներում իրազործել բարենորոգումներ...

Աբդուլ Համիդը մեծ ուշադրությամբ հետևում էր Եվրոպայի քաղաքականությանը: Մինչ այդ ժամանակ առանձին մնացած Ռուսաստանը արդեն գտել էր մի բարեկամ: Աբդուլ Համիդը, տեսնելով Ռուսաստանի հզորացումը, սկսել էր աստիճանաբար բարեկամու-

Թյուն ցույց տալ Ռուսաստանին: Այդ օրվանից սկսած՝ փոխվեց նաև հայերի հանդեպ նրա վերաբերմունքը: Սակայն գոյություն ունեին այս փոփոխության պատճառ հանդիսացած այլ կարևոր ազդակներ ևս: 1887 թվականին Արդուլ Համիդի համակրությունից հետո մնացած Սայիդ փաշան ցանկանում էր գործի գլուխ անցնել: Առանց որևէ պատճառի Սայիդ փաշան պահանջեց գործադրել (հայերին վերաբերող) Բեուլինի դաշնագրի հոդվածները: Արդուլ Համիդը կարծեց, թե Սայիդ փաշան կաշառվել է հայերի կողմից: Արդեն մի կողմից էլ մտատանջվում էր Հնչակ կուսակցության կազմվելուց: Հատկապես հայերի գաղտնի սաղրանքների մասին պաշտոնյաների գանգատները վախեցնում էին Արդուլ Համիդին: Արդուլ Համիդը իր այս վախը փառատելու համար ստիպված եղավ նախ մոտենալ քրդերին: Ուխտ հսկողության տակ առնվեցին հայ պաշտոնյաները և հայկական հրատարակությունները: Այդ պահից սկսեցին իրար հաջորդել աքսորումները: Կուսակալների կողմից քննության առնվեցին եկեղեցիների և դպրոցների մասին տրված հրովարտականքները: Վերջին տարիների ընթացքում փակվեցին այն հայկական դպրոցները, որոնք բացվել էին ոչ թե հրովարտելով, այլ միայն կառավարական թույլտվությամբ: Հարկերի գանձման նկատմամբ ցուցաբերվեց խստություն և բռնություն: Միևնույն ժամանակ քրդերն էլ, իշխանությունների օժանդակությամբ, վրա վստահ լինելով, սկսեցին գործել իրենց ցանկությունների համաձայն: 1889 թվականին հայերի վիճակը ծայրաստիճան վատացավ:

1890 թվականին հայոց Ազգային ժողովը Ալեքյան պատրիարքի միջոցով դիմում ներկայացրեց Բարձրագույն Դռանը: Այս դիմումին Բարձրագույն Դուռը պատասխանեց չատ քաղաքավարի կերպով: Սակայն երեք ամիս հետո, ով իմանա որտեղից, հրամանի հիման վրա խուզարկվեցին հայ եկեղեցիները: Նրանք ցանկանում էին գտնել հայ հեղափոխականների պահած զենքերն ու ռումբերը: Էրզրումի ղեպքի պատճառով Արդուլ Համիդի և հայերի միջև գոյություն ունեցած համաձայնությունը իսպառ անհետացավ: Դրանից հետո Արդուլ Համիդը կարծեց, թե այլևս հայերի բոլոր գործողություններն ուղղված են իր դեմ, և բոլոր հայերն էլ ղեկավարվում են կոմիտեների կողմից: Մյուս կողմից էլ հայերը համոզվեցին, որ Արդուլ Համիդից քաղցրությամբ ոչ մի բան չի կարելի ձեռք բերել և, հետևաբար, անհրաժեշտ է նրանց սարսափեցնել: Դրանից հետո հայերը հետամուտ եղան ստեղծելու այնպիսի մի կացություն, որ վախեցնեք Արդուլ Համիդին

և Եվրոպայի ուշադրությունը գրավեք Անատոլիայի վրա, նույնիսկ մեծ տերությունների միջամտություն պատճառ հանդիսանալ:

Ջեմալ փաշան հայերի, հայկական հարցի և Օսմանյան կայսրության մասին.

Մենք՝ երիտասարդ թուրքերս հայերին և հատկապես՝ հայ հեղափոխականներին հույն և բուլղար հեղափոխականներից անհամեմատ գերադասում ենք: Հայերն ավելի շիտակ են և ավելի քաջ, քան հիշածս երկու ազգերի հեղափոխականները. նրանք ավելի անկեղծ են իբրև բարեկամներ և ավելի համառ՝ երբ ատում են: Մենք խորապես համոզված ենք, որ հայերի և թուրքերի մեջ գոյություն ունեցող թշնամության միակ հեղինակը եղել է ռուս դիպլոմատիան: Եվ իրոք, վաթսու տարիներ ի վեր, կամ, ավելի ճիշտ, 1877–78 թվերի ռուս–տաճկական պատերազմից ղեռ տաս տարի առաջ այդ երկու ցեղերի մեջ կրոնական հողի վրա ծագած ընդհարման ոչ մի ղեպք չի եղել, ուրիշ խոսքով՝ մահմեդականների և քրիստոնյաների մեջ մտքերի տարաձայնություն չկար: Ընդհակառակը. Անատոլիայում, Ռումելիայում, Կ. Պոլսում հայերի և թուրքերի միջև այնպիսի համերաշխություն էր տիրում, որ այն ժամանակների պատմագրությունը «Հայկական հարց»-ի մասին հիշատակություն անգամ չունի: Գալով ընտանեկան հարաբերություններին՝ այստեղ էլ թուրք–հայկական բարեկամությունն անսահման էր: Երբ Փոքր Ասիայի մի թուրք, առևտրական նպատակներով իր գյուղից հեռանալ էր ուզում, նա հայ հարևանի խնամքին ու պաշտպանությանն էր վստահում իր ընտանիքը, պատիվն ու իրավունքները. նույն վստահությունն էր տաժում նաև հայը իր թուրք հարևանների վերաբերմամբ:

«Ամբողջ Անատոլիայում, Ռումելիայում, նույնիսկ Կ. Պոլսում չկար մի հայ, որը հայերեն խոսել կարողանար: Բոլոր դպրոցներում թուրքերենը հայ տառերով էին սովորեցնում, իսկ հայ եկեղեցիներում պատարագը թուրքերեն էր մատուցվում: Հայերի համար բաց էին պետական ամենակարևոր պաշտոնները, և նրանք Օսմանյան կայսրության ամենահավատարիմ հպատակներն էին համարվում:

Անհրաժեշտ ճշմարտություն է, որ ինչպես արդարամտությունն ու համբերատարությունը պատճառ են դարձել թուրքիայի պետությունը դառնալուն և նրա արագ ծավալմանը, նմանապես հայերի ղեպի

¹ Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, հ. IV, Երևան, 1972, էջ 167–171:

Թուրքերը տաճած երախտագիտությունն արդյունք է եղել Թուրքերի՝ ղեպի հայերն ունեցած մեծահոգության և բարեկամության: Ահա թե ինչու հինգ հարյուր տարիների ընթացքում այդ երկու ժողովուրդների միջև ոչ մի ընդհարում չի եղել, և դժվար էր գտնել մի հատիկ հայ, որը Թուրքի լեզուն և նրա նիստ ու կացն իրեն հարազատ չհամարեր:

Երբ սուլթան Ֆաթի Մահմեդ խանը Կ. Պոլիսը վերցնելուց հետո Թուլյ տվեց օրթոդոքս պատրիարքին մնալ իր տեղում և հույներին, առանց որևէ կողմնակի ճնշման, այլ բացառապես իր մեծահոգության և ազնվամտության հետևանքով «կրոնական արտոնություններ» անունով հայտնի առանձնաշնորհումները տվեց, նա անմիջապես կայսրության մայրաքաղաքում հիմնեց նաև Հայոց պատրիարքարան, որպեսզի Անատոլիայի մահմեդականության մեջ ապրող հայ փոքրամասնության իրավունքներն ուժեղին կերպով պաշտպանել կարողանա, և հայերին շնորհեց միևնույն իրավունքներն ու արտոնությունները, որպիսին նա տվել էր հույներին:

Այնինչ ղեռնա 1462 թվին, ըստ քրիստոնեական ժամանակագրության, այսինքն այն ժամանակներում, երբ ամբողջ Եվրոպային ղեռնա անձանոթ էր «ազգային փոքրամասնությունների իրավունք» հասկացողությունը, մի մահմեդական սուլթան, իր հզորության գագաթնակետին հասած, Թուլյատրում է, որ Կ. Պոլսում հաստատվի հունական պատրիարքություն և «կրոնական արտոնություններ» անվան տակ հույներին իրավունք է տալիս օգտվել ամուսնություն, ժառանգություն և լուսավորության վերաբերյալ մի շարք արտոնություններից. դրա հետ միաժամանակ՝ նույն սուլթանն իր մայրաքաղաքում մի այլ ազգություն՝ հայերի համար, որոնք մինչ այդ քուրդ ֆեոդալների լծի տակ էին, պատրիարքություն է հիմնում՝ շնորհելով նրանց միևնույն արտոնություններն ու առանձնաշնորհումները...

Միջին XV դարում Թուրքական մեծ սուլթանի կողմից շնորհված այս իրավունքներն ամենակատարյալ գործադրությունը չեն այն սկզբունքի, որը միայն այժմ Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնը «փոքրամասնությունների իրավունք» անվան տակ ցանկանում է, որ քաղաքակիրթ աշխարհին ճանաչել տա:

Միջին նույն սկզբունքը, որ այնպես պարզ և լայնորեն գործադրություն գտավ Թուրքիայի կողմից՝ իր քրիստոնյա փոքրամասնության իրավունքները պաշտպանելու խնդրում, միայն նորերումս չէր, որ մտցվելու էր Ավստրիայի հետ՝ Սեն-ժերմենում կապված հաշ-

տություն պայմանագրի մեջ, որը, սակայն, ռումինական և Հարավ-արևմտյան կառավարությունները մերժեցին ընդունել:

Հայերը չատ լավ գիտեն, որ այդ արտոնությունների հետևանքով է, որ նրանք պահպանեցին իրենց կրոնն ու ազգությունը: Քուրդ ավատական իշխանության ճնշման տեղ հայերը Թուրքերի, և մանավանդ Թուրք կառավարության, հետ լավագույն հարաբերությունների մեջ ապրելու հնարավորությունն ստացան:

... Մինչև 1856 թվի Ղրիմի պատերազմի վերջը Թուրքերը հայերի հետ ամենամեծ համերաշխության մեջ էին գտնվում և նրանք հայերի վերաբերմամբ ոչ մի բռնություն չեն արել: Սակայն այն օրից, երբ ռուսներն իրենց ազա՜հ և ավազակաբարո հայացքը զցեցին Օսմանյան կայսրության վրա, նրանք գտան, որ քաղաքական տեսակետից իրենց ձեռնառու կլինի, եթե նրանք Ռումելիայի քրիստոնյա տարրերին իրենց հաջողության գործիք դարձնեն...

Պետք է այստեղ նաև խոստովանել, որ ազգայնական ձգտումները, որ XIX դարի կեսին նկատվեցին և տարածվեցին Եվրոպայում, իրենց անմիջական այն հետևանքն ունեցան, որ առևտրական կամ ուսում առնելու նպատակով Եվրոպա և Ամերիկա ուղևորված հայ երիտասարդությունը տարվեց այն գաղափարով, որ իր ազգին ևս անհրաժեշտ է ձգտել ձեռք բերելու անկախ կյանք և սկսել ինքնուրույն գործունեություն: Այս գաղափարական ձգտումը, որպես աստվածային մի պարզե, ողջունվեց ռուս դիպլոմատիայի կողմից, և, սկսած այս րոպեից, նա ամեն ջանք գործ դրեց, որպեսզի հայերին զրգոի Թուրք կառավարության դեմ:

Սուլթան Մահմուդ Բ-ն XIX դարի սկզբին, իր պետության մեջ կարգ ու կանոն հաստատելու և երկու հարյուր տարիներ ի վեր վարչական և ղինվորական հաստատություններում գոյություն ունեցող անարխիան վերացնելու նպատակով, դիմեց ամենակտրուկ միջոցների: Նա ոչնչացրեց ենիչերիությունը, սահմանափակեց Անատոլիայի և Ռումելիայի բեյերի իրավունքները՝ հասցնելով այն գրեթե անգործության աստիճանի և ծանր հարված հասցրեց քուրդ բեյերի իշխանությանը: Եվ մինչդեռ անբախտ թագավորն իր երկրում ներքին կարգ վերահաստատել էր ձգտում՝ նա իրեն հազար դժվարություններով շրջապատված տեսավ: Եվ մինչ նա ջանում էր ռուս դրամով պահպանվող «Եստիկա Հետերիա» կազմակերպության շնորհիվ ծագած հունական ապստամբությունը մի կերպ հանգցնել՝ մեկ էլ նրա վրա հարձակվեցին ֆրանսիացիները, անգլիացիներն ու ռուսները:

Նավարինի մոտ կորցնելով իր ամբողջ նավատորմիդը՝ նա ստիպված եղավ ճանաչել Հունաստանի անկախությունը: Այնուհետև, Ֆրանսիայի հրահրումներից ազդվելով, ապստամբում է սուլթանի դեմ Շահիպաշի գեներալ-նահանգապետ Մահմադ Ալի փաշան, որն ուղում էր տաճկական թագը ձեռք բերել, հասցնելով իշխանության սահմանները մինչև Քաթանիա:

Կարելի⁶ է արդյոք մեղադրել մի պետության, որը չընդապատված էր այսպիսի ներքին և արտաքին դժվարություններով, նրա համար, թե ինչո՞ւ նա ձեռք չի առել բոլոր միջոցները՝ կարգավորելու համար ոչ միայն հայ, այլ ընդհանրապես իր բոլոր հպատակների բարեկեցությունը:

Սուլթան Աբդուլ Մեջիտի թագավորության ժամանակ հայերն այնպիսի ընդարձակ արտոնություններ են ստանում, որոնցով ոգևորվում է նույնիսկ ինքը՝ Մանդեկշտամը^{*}: Իր գրքի 190-րդ երեսում նա գրում է. «1863 թվին հայերն իսկական սահմանադրություն ստացան: Սահմանադրությունը նրանց իրավունք էր տալիս ընտրելու բարձրագույն մի խորհուրդ, որը գտնվելու էր Կ. Պոլսում և որը բաղկացած էր 140 պատգամավորներից. դրանցից 140-ին ընտրում էր ինքը՝ հայ ժողովուրդը»:

Կարո՞ղ էր արդյոք նախագահ Վիլսոնն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար սրանից ավելի իրական միջոց հնարել:

Օսմանյան կառավարությունը տվեց հայերին այս սահմանադրությունն առանց որևէ արտաքին ճնշման: Թուրքիայի հանդեպ հայ ժողովրդի լոյալ դիրքը այն աստիճան գրավեց կառավարության համակրությունը, որ նա, առանց մի բռնական տատանվելու, «հավատարիմ հայ ազգին» չնորհեց հիշյալ սահմանադրությունը, որը հայերի համար մի նոր, բախտավոր դարաշրջանի սկիզբ էր դառնալու: Սակայն ուսաներն այս սահմանադրությունն օգտագործեցին հայկական գործերին միջամտելու նպատակով:

Արդեն 1856 թվի ուսու-թուրքական պատերազմի մի շարք հայ ապստամբություններ ուսաներին օգնություն մատուցեցին: Սկսած այդ օրվանից՝ ուսաները սերտ կապ են պահպանում տաճկահայերի հետ և հայ հեղափոխականներին անընդհատ խրախուսում են: Այդ գործերակերպի հետևանքը չուտով երևան եկավ: Սահմանադրություն

^{*} Կ. Պոլսում Ռուսական դեսպանության I դրագոման (թարգմանիչ):

ստանալուց ընդամենը չորս տարի անց (1867 թ.) Զեյթունում բռնկվեց հայկական առաջին ապստամբությունը:

Հայկական այս առաջին զինյալ ապստամբությունը, բնականաբար, զգալի ազդեցություն թողեց կառավարության վրա: Ահագին էին այն դժվարությունները, որոնք 1877–78 թվին ռուսական բանակը և Անատոլիայի հայերը պատճառեցին թուրք բանակին:

Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես էֆենդին Սան-Ստեֆանո է գնում, որպեսզի ռուսաց ցարի օգնությամբ հայերի համար անկախություն ձեռք բերի. իր այդ քայլով նա պատճառ է դառնում, որ հայերը «հավատարիմ ազգի (միլլեթ սադիկա)» հինավուրց կոչումից ընդմիջտ զրկվեն:

Ռուս դիպլոմատիան շատ լավ հաշվի էր առնում այն հանգամանքը, որ Բուլղարիայի անկախություն ստանալուց հետո ինքն այլևս զրկվելու է Թուրքիայի ներքին գործերի մեջ խառնվելու առիթից: Եվ որովհետև ռուս կառավարությունը չէր ուղում այդ իրավունքը կորցնել, ուստի հենց այդ նպատակն աչքի առաջ ունենալով՝ Սան-Ստեֆանոյում Թուրքիայի հետ կապած դաշնագրի մեջ մտցնում է հայերին վերաբերող հատուկ մի հոդված, որը հետագայում փոքր-ինչ փոփոխված ձևով մտցվում է Բեռլինի դաշնագրում:

Եվ ահա սրանից հետո է, որ հայերի, քրդերի և թուրքերի հարաբերությունները ծայր աստիճան լարվում են: Օսմանյան պետության մեջ՝ ամենուրեք մեծ քաղաքներում, որպես և ամենափոքր գյուղերում, առաջ են գալիս շատ լավ կազմակերպված հայ հեղափոխական գաղտնի կոմիտեներ:

Այս գաղտնի միություններն անընդհատ ջանք են թափում գրգռելու հայերին քրդերի ու թուրքերի դեմ և պահանջում են կազմել մի անկախ, առանձնաչնորհված Հայաստան, որը բաղկացած էր լինելու ոչ ավելի, ոչ պակաս, քան Արևելյան Անատոլիայի վեց նահանգներից: Ինքնըստինքյան հասկանալի է, որ թե՛ կառավարությունը և թե՛ թուրք ու քուրդ ազգաբնակչությունը լավ տեղյակ էին ռուսական այս ինտրիգներին:

Եվ որովհետև հայերն անկախ մի պետություն հիմնելու ձգտում ունեին, մի պետություն, ուր նրանք, չնայած քրդերի և թուրքերի թվական գերազանցությանը, պետք է վերջինների վրա իշխեին, ուստի, ինքնըստինքյան հասկանալի է, որ սրանք էլ իրենց կողմից ամեն կերպ աշխատում էին ի դերև հանել հայերի այդ ծրագիրը: Պարզ առած՝ քրդերն ու թուրքերը շատ լավ ըմբռնում էին, որ այդ բոլորը

ոչ այլ ինչ են, եթե ոչ ուսանելի կողմից սարքած մի պատրվակ, որ-պեսզի բացառապես քրդերով և թուրքերով բնակեցրած Անատոլիայի մի խոշոր մաս իրենց ճանկը գցեն, իսկ անկախ Հայաստանը նրանք համարում էին Ռուսաստանի կողմից իրենց բռնելու համար դրած մի ծուղակ միայն:

1880 թվին, մի կողմից՝ Ռուսաստանի անընդհատ ճնշման ազդեցության տակ, իսկ մյուս կողմից՝ Հայերի քանիցս բարձրացրած ապստամբության, եվուպական պետությունները Բարձր Դռանը ներկայացրին մի հայտագիր, որով առաջարկում էին նրան Հայկական նահանգներում վարչական ռեֆորմներ մտցնել: Դա ճիշտ այն միջոցին էր, երբ Բուլղարիան փորձում էր Արևելյան Ռումելիան միացնել իրեն:

Նշանակալից է, որ ամեն անգամ, երբ Թուրքիան ձեռնարկում էր իր արտաքին կամ ներքին կյանքում որևէ կարևոր մի հարց լուծել, Ռուսաստանն իսկույն հրապարակ էր հանում Հայկական հարցը: Այս անգամ էլ Արդուլ Համիդ II-ն այս հարցը լուծեց նրանով, որ Ռուսաստանին մի չարք զիջումներ արեց:

1894–96 թվականներին Հայերն ուժգին գործունեություն սկսեցին և ամենուրեք մեծ կամ փոքր ապստամբություններ առաջացրին: Այդպիսով ահա Հայկական խռովությունները այն աստիճան զրգռեցին այդ երեք, մինչ այդ գրեթե հինգ-վեց դար շարունակ իրար կողքին խաղաղ ու հաշտ ապրող ազգերին, որ այժմ դրանք պատրաստ են հարձակվել իրար վրա՝ իրար արյունով ներկել Անատոլիայի հողը և նույնիսկ Կ. Պոլսի փողոցները...

... Շատ թուրքեր մրցում էին իրարու հետ՝ Հայերին իրենց պաշտպանության տակ առնելու ձգտման մեջ: Կ. Պոլսում բազմաթիվ թուրք ընտանիքներ Հայերի վերաբերմամբ ունեցած իրենց հարևանական զգացմունքն այն աստիճանի հասցրին, որ սրանց կյանքը մահից փրկելու նպատակով, նրանց թաքցնում էին իրենց տներում: Եվ չպետք է թաքցնել, որ բազմաթիվ պետական թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ զզվանքով դատապարտում էին Կ. Պոլսի մաքսատան բեռնակիրների կողմից Հայերի վերաբերմամբ կատարած կոտորածը: Նրանք ոչ մի առիթ բաց չէին թողնում Հայերին պաշտպանելու համար:

Ամբողջ աշխարհին հայտնի են այն կտրուկ միջոցները, որին դիմեց մարչալ Ֆուադ փաշան Կադի-Քյոյում Հայերին փրկելու նպատակով: Մանդելշտամն ինքը պնդում է, որ Ֆուադ փաշան հենց այդ հայա-

սիրության համար էլ հետագայում բարձրագույն ողորմածությունից զրկվեց, սակայն Կ. Պոլսում բոլորն էլ գիտեն, որ դա սուտ է:

Այն երկու-երեք տարիների ընթացքում, երբ տեղի էին ունենում այդ կոտորածները, Հայերի ձեռքով սպանվեցին բազմաթիվ քրդեր և թուրքեր. երկու կողմերն էլ իրարու ոչնչացնելու գործում մրցման էին մտել: Եվ քանի որ ամեն տեղ Հայերը թվով քիչ էին, ուստի, բնական է, որ թուրքերն ու քրդերը ջնջման գործն ավելի հաջողությամբ էին առաջ տանում. պարզ է, որ եթե Հայերը մեծ թիվ կազմեին, այս անգամ նրանք ավելի շատ քուրդ ու թուրք կկոտորեին: Դրան որպես ապացույց կարող է ծառայել Հույների ձեռքով Մորեայում սպանված թուրքերի թիվը: Բայց որովհետև այս անգամ զոհերը թուրքեր ու մահմեդականներ էին, ուստի չգտնվեցին Բայրոնի և Շատոբրիանի նման բանաստեղծներ, որոնք այդ թշվառ մարտիրոսների կորուստը ողբային, ուստի արյունալից այդ եղելությունը, օսմանյան պատմագրությունից բացի, ուրիշ ոչ մի տեղ չարձանագրվեց:

Պետություն կառավարելու մասին իմ ունեցած հայացքներով ես զզվանքով դատապարտում եմ «հեղափոխությունը խեղդելու» նրպատակով մասսայական կոտորածներին դիմելու սխտեմը. այդ միջոցը, — բացի այն, որ երկրին մեծ վնաս է հասցնում, — միաժամանակ արատավորում է մի ժողովրդի պատմությունը:

Այս հայացքն ունեին նաև բոլոր այն հայրենասերները, որոնք խմբված էին «Երիտասարդ թուրքեր» հեղափոխական կազմակերպության մեջ: Նրանք դատապարտում էին 1894–96 թվականների Հայկական կոտորածները, համարելով այն սուլթան Համիդ Երկրորդի գործած ամենաժանր սխալներից մեկը, որով նա իր բռնակալական կառավարությունն ամրացնել էր ուզում: Ահա այս տեսակետից ելնելով՝ Ահմեդ Ռիզա բեյը և նրա ընկերները, որ այդ ժամանակ Եվրոպայում էին գտնվում, ապստամբած Հայերին էական օգնություն ցույց տվին: Մյուս թուրք հեղափոխականները, որոնք, ինչպես ես, ապրում էին բուն երկրում, միևնույն հայացքին էինք, ինչ և Եվրոպայում ապրողները, նմանապես խստագույնս դատապարտում էինք Արդուլ Համիդին, որը Հայկական իր կոտորածներով ոչ միայն թուրքական, այլև առավելապես օսմանյան գործին ահագին վնաս էր հասցնում:

Հայ հեղափոխականների մի քանի ականավոր ներկայացուցիչներ այդ ժամանակ միայն սկսեցին ըմբռնել իրերի իսկական դրությունը: Նրանք տեսան, որ ինչ-որ մի կողմից՝ Ռուսաստանը դիմում է ամեն

տեսակ միջոցների տաճկահայերի համար անկախություն ձեռք բերելու խնդրում, մյուս կողմից՝ Կովկասում ապրող ռուսահայերը զալարվում են ռուսական բռնապետության ճիրաններում: Ցար Նիկոլայ Բ-ն խոստացել էր Աբդուլ Համիդ Բ-ին, որ եթե սա Արևելյան Անատոլիայում երկաթուղիներ չչինի, ինքն էլ իր կողմից թույլ չի տա 1896 թվի հեղափոխությունից հետո Տաճկաստանից Կովկաս գաղթած հայերին նորից Թուրքիա վերադառնալ: Լավագույն ապացույց, թե ինչ նպատակներով էր ղեկավարվում Ռուսաստանը հայերի և Թուրքիայի վերաբերմամբ, հազիվ թե կարելի լիներ գտնել:

Կասկածից դուրս է, որ մի ժողովրդի գոյության համար քաղաքակրթությունն ու նյութական բարեկեցությունն ամենամեծ գործոններն են, և այդ բարեկեցությունն սկսվում է երկաթուղու և խճուղու նման հաղորդակցության միջոցներ անցկացնելով: Եվ ահա ռուսները մի կողմից հայերով բնակեցրած վիլայեթների բարեկեցության և ինքնուրույնության համար բարենորոգումներ են պահանջում, իսկ մյուս կողմից՝ այն միջոցները, որոնք բերելու են երկրին այդ բարեկեցությունը, ինչպես, օրինակ, երկաթուղիներն են, նրանք արգելում են...

Ռուս դիպլոմատիայի այս երկդիմի քաղաքականությունն ազնվավամիտ հայերին Ռուսաստանից խրտնել ստիպեց. նրանք իրենց հետևյալ հարցն էին տալիս. եթե հայերն ինքնավարություն ստանան, արդյո՞ք նրանք դրանով իրենց վզերին չեն դնի ռուսական լուծը, որը թուրքականից հազար անգամ ավելի զգվելի էր լինելու: Դրա համար էլ Թուրք հեղափոխական կոմիտեն ամեն կերպ ձգտում էր համոզել «Դաշնակցություն» կուսակցությանը, որը հայ կուսակցություններից ամենից լավ կազմակերպություն ունեցող և ամենից լավ ղեկավարվող կուսակցությունն էր, օգնել իրենց Օսմանյան կայսրության բոլոր ազգերի համար ռեֆորմներ մտցնելու գործում...¹:

¹ Զեմալ փաշա, Հայկական հարցը, Երևան, 1927, էջ 5–13:

ԲՆԱԶԱԶՄԱՆ ՕՍՄԱՆՑԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Թուրք զինվորական մի մայոր հայերի մասին.

— Հայը առաջադիմական, կուլտուրական հատկություններ ունի, հայը ջանասեր, աշխատասեր է, հայը քաջ է խելքով, քաջ է հոգով ու մտքով: Հայը այդքան նեղ ու դառը պայմանների մեջ անգամ կարողացել է եվրոպական քաղաքակրթությունը յուրացնել, պահպանել յուր եկեղեցին, կրոնն ու լեզուն: Հայը ստեղծեց և զարգացրեց մեր երկրի առևտրականությունը, ծաղկեցրեց մեր գրականությունը, նպաստեց մեր տպագրական արվեստի առաջադիմությանը: Հայը կարողացավ նաև մի քանի անգամ փրկել մեզ կատարյալ անկումից... Ուրեմն եթե այդ հայի վիճակը բավարարենք, եթե նրա հարստությունը թողնենք իր ձեռքում, եթե ասպարեզ տանք զարգանալու, առաջադիմելու և աճելու, ապա նա մի օր ամենայն իրավամբ կգա, կնստի մեր գլխին ու մեզ կասի. «Որովհետև դուք քաղաքականության ասպարեզում անընդունակ եք, որովհետև դուք ձանրություն արգելք եք դառնում մարդկային հասարակության ընդհանուր լուսավորության և առաջադիմության գործին, ուրեմն դուք մեզ տիրապետելու և կառավարելու իրավունք չունեք: Մենք ձեզ պիտի տիրապետենք ու կառավարենք...»: Իսկ լուսավորության ախտով վարակված եվրոպան էլ ոչ միայն իրավունք կտա հային, այլև ուժ կտա, այլև կաջակցի նրան մեր գլխին տեղ դառնալու գործում...¹:

Մի թուրք հայերի մասին.

— Դարեր չարունակ հայը գոյության կռվում օգնության ձեռք է մեկնել Ալլահի որդիներին՝ մահմեդականներին... Տերության գանձարանը լցրել են հայերը, արհեստն ու առևտուրը ծաղկել է նրանց ձեռքերով, երկրի քաղաքական ղեկավարները եղել են նրանք: Առանց հայի մենք կյանք չունենք, մենք ինքներս կտրեցինք մեզ կերակրող ձեռքը²:

¹ «Նոր Դար», 1895, թիվ 84:

² «Դրոշակ», 1896, թիվ 8:

Բիթլիսի թուրք կալվածատերը անգլիացի բարձրաստիճան ղեկավարագետ է. Դիլոնին ասել է.

– Մինչև վերջին ժամանակները չնորհիվ աշխատասիրության ու գործիմացության, Հայերը նյութապես ավելի բարվոք վիճակում են: Այդ ժողովուրդը մեզ հաց է տալիս, և մենք ոչ միայն ստիպում ենք նրան ծանր գնով գնել մեզ համար աշխատելու իրավունք, այլև նրան զրկում ենք աշխատելու միջոցներից՝ չհասկանալով, որ եթե Հայերը լրիվ սնանկանան, վատ օրեր կսկսվեն թուրքերի համար, և նրանք հարկադրված կլինեն աշխատել¹:

Թուրք գորահրամանատար Սուրդիշը 1863 թ. լույս տեսած իր «Միահեղ նամե-ի-խուդուդ» գրքում գրել է.

– Բոլոր արհեստավորներն ու հողագործների մեծ մասը Հայեր են... Մահմեդականներից չկա ոչ միայն արհեստավոր վարպետ, այլև նույնիկ օժանդակ բանվոր: Հայերը աշխատասեր ժողովուրդ են, իսկ մահմեդականներն՝ ընդհակառակը²:

Սուլթան Մահմուդ II-ի բարձր հրովարտակը ուղղված Հայոց պատրիարքին (1828 թ.).

– Իմ օսմանյան կայսերական անսասան իշխանության հարկատու Հայ հպատակներից ոմանք հանդգնում են իրենց վաղեմի սովորություններին և հպատակության կանոններին հակառակ ընթացքի մեջ գտնվել: Թեև երբեմն ձեռնարկվել են միջոցներ այդպիսիներին զրսպելու համար, բայց չափազանց շատ զբաղվածության հետևանքով հնարավոր չի եղել կատարել արժանի աշխատանք և ցուցաբերել զգուշավորություն, որով թե՛ Ստամբուլում, թե՛ Օսմանյան երկրի տարբեր վայրերում գնալով ավելանում է այն մարդկանց թիվը, որոնք գտնվում են այդ ընթացքի մեջ: Եթե սրանից հետո էլ պիտի աչքերը փակել այդ ամենի վրա և անտեսել, ապա պարզ է, որ բոլորովին պիտի խանգարվի հպատակության կարգը: Ստուգված է, որ այդպիսի անկարգությունների հանդգնություն ունեցողները անկարացի Հայ հպատակներն են, որոնք որոշ ժամանակ ի վեր, որպես սեղանավորներ, արհեստավորներ և առևտրականներ, բնակություն են հաստատել Ստամբուլում: Բացառապես հպատակության կարգը

վերականգնելու համար Ստամբուլում գտնվող նման անկարացի Հայ հպատակները իրենց կանանց և զավակների հետ խուճ-խուճ արք-սորվել են Ստամբուլից դեպի իրենց նահանգը՝ պայմանով, որ այսուհետև ոտք չդնեն այստեղ: Այս խնդրի բուն սկզբնապատճառը հանդիսացող մի շարք խառնակիչ վարդապետներից Ստամբուլում գտնվողներն էլ արքսորվել են Միջերկրական ծովի կողմերը: Գավառացի կանանցից նրանք, ովքեր կրում են մայրապետ անունը և աշխատում են մոլորության մեջ գցել հայազգի կանացի սեռից մի շարք միամիտների, արքսորվելու են իրենց բնակավայրերը, իսկ քաղաքացի կանայք՝ Բանդրմա և Միխալիջ (Մարմարա ծովի հարավային եզերք): Գավառների մի շարք վայրերում ապրող նման խառնակիչ վարդապետներին ևս հարկավոր է հայտնաբերել և նրանց նկատմամբ խիստ ուշադիր լինել... Ի միջի այլոց, հավանական է, որ հիշյալ վարդապետներից ոմանք ծաղկելով և իրենց կերպարանքը այլափոխելու միջոցով թաքնվեն, այդպիսիներին խստորեն որոնելու և արտաքսելու գործում հոգատար և ուշադիր լինելու համար ըստ հարկի քննել և ստուգել՝ տալով Օսմանյան երկրում գտնվող բոլոր Հայ եկեղեցականների վիճակն ու հանգամանքը. իրենց ձեռքում նրա կողմից կնքված վկայագիր չունեցող խառնակիչ վարդապետների մասին հաղորդելու տեղի դատավորին և ոստիկանապետին, նրանց միջոցով անմիջապես ձերբակալելու և Միջերկրական ծովի կողմերը արտաքսելու համար ծովեզերքին մոտ նավամատույցներն ուղարկելու գործում խիստ ուշադիր լինելու մասին իմ կայսերական հրամանի այս տրամադրության առնչությամբ գործիք նաև (պատրիարքի մասին է խոսքը) դու և մանրամասն հայտնի ու բացատրիր ազգին և նրանց, ում հարկն է, որ այդպիսի խառնակիչներին թաքցնող, պաշտպանող և հովանավորող անձինք պիտի պատժվեն՝ իբր օրինակ ուրիշներին: Այս օրվանից հետո անհրաժեշտ է այդ ազգը ինչպես հարկն է գտել և մաքրել նման խառնակիչներից, որպեսզի այդ ազգի մեջ այլևս հպատակության կանոնին հակառակ նվազագույն չափով անգամ անհարմար գործեր և հպատակության կարգին անհարիր և ազգի սովորությանը խորթ վիճակներ չստեղծվեն: Այս առիթով իմ կայսերական հրամանն է՝ անհրաժեշտ ուժն ու կարողությունը գործադրել, որպեսզի պատվով և պարկեշտությամբ աշխատող օսմանյան իմ հպատակների նկատմամբ որևէ ոտնձգություն և թշնամանք տեղի չունենա, իսկ հակառակ ընթացքի արտոնություն ցույց տվողները

¹ «Daily News», 29-ը ապրիլի, 1895 թ.:

² Арцрун Г., Экономическое положение турецких армян, Москва, 1880, стр. 20.

խստորեն զգուշանան և հեռու մնան պատասխանատվությունից և կշտամբանքի ենթարկվելուց, որի համար, իմ արքայական վեհափառության պճնագարդ հրովարտակի համաձայն, հատուկ պատվիրումով և հոգատարությունամբ արձակվել է սույն բարձրարժեք հրամանը և, վերևում իմ արքայական մեծագոր ինքնագրությամբ զարդարվելով, տրվել է ձեր ձեռքը: Արդ, իմ այս նվիրական հրամանը թո՛ղ պահվի պատրիարքարանում, իսկ նրա առանձին պատճենները ուղարկվեն օսմանյան երկրի այն վայրերը, որտեղ կան հայ հպատակներ ու առաջնորդներ, որպեսզի այս հրամանի վեհամաստ բովանդակությունը այսուհետև, Աստծու կամեցածին չափ, նրանց համար ծառայի որպես ուղեցույց կանոն. քո կողմից էլ խնդիրը ամենայն մանրամասնությամբ գրվի, ու ծանուցվի և այն տառացիորեն ամեն տեղ կիրառվի և գործադրվի: Այս ազգի միջից վերոհիշյալ խառնակիչ վարդապետներին ամբողջովին վտարելով ու հեռացնելով՝ հարկավոր է այսուհետև հպատակության կանոնից դուրս որևէ անհարմար վիճակի տեղի չտալու համար անհրաժեշտ միջոցներ ստեղծել և լրացնելու գործում լինել չափազանց հոգատար և ուշադիր: Այս օրվանից հետո այդպիսի խառնակիչներին պաշտպանելու հանդգնություն ունեցող անձանց, ովքեր էլ որ լինեն, բոլոր պարագաներում անհրաժեշտ խստագույն պատիժը անհապաղ ի կատար ածելու համար աշխատեցե՛ք տեղեկացնել: Դու ևս այդ հարցում լինե՛ս ուշադիր և խիստ ջանադիր, հեռու՛ մնաս այն գործերից, որոնք կարող են թյուրիմացաբար վնաս և զրկանք պատճառել խառնակչություններին մասնակցություն չունեցող անձանց. ստույգ իմացի՛ր, որ իմ այս արքայական պատվերները կատարելու գործում որևէ ներողամիտ թուլտվությունը կարող է քո մասին դառնալ վտանգի պատճառ, պատժի ու զղջման արժանի, ուստի ըստ այդմ վարվեցե՛ք ու գործեցե՛ք, իսկ հակառակը գործելուց՝ խիստ զգուշացե՛ք և հեռու՛ մնացե՛ք¹:

Թուրք տարեգիր Ահմեդ Լուծֆին իր «Թարիխ-ի Լուծֆի» գրքում գրել է.

– Օսմանյան պետության ուսանողներից որոշ հայեր, թողնելով ուսյաներին հատուկ իրենց կենցաղը, ընդունեցին ֆրենզի դավանանքը:

¹ Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, Հ. IV, Երևան, 1972, էջ 238–240:

Քանի որ այդպիսի մարդկանց թվի ավելացումը վտանգավոր համարվեց օսմանյան կառավարության համար, պետությունը անհրաժեշտ գտավ նրանց իրենց ընտանիքներով Ստամբուլից արտաքսել... Որոշվեց հայկական թաղամասերից դուրս նրանց ունեցած տները վաճառել, որի համար նշանակվեց հատուկ պաշտոնյա... Արտաքսվողների թվում կային արհեստավորներ և առևտրականներ... Չնայած Ստամբուլում տարածված էին կաթոլիկական ծիսակատարությունները, սակայն հայ-կաթոլիկների ծեսերն ու մեռելների թաղումը առաջվա նման կատարվում էր հայ (լուսավորչական) հոգևորականների կողմից... Փաղիչահն իր Ֆերմանում նշում է. «... Քանի որ հայ կաթոլիկները Օսմանյան պետության հարկատու ուսյաներ են, նրանց բոլոր գործերի կարգավորումը օտար պետության միջամտությամբ բազմաթիվ անպատեհություններ է առաջացնում: Ամեն դեպքում անհրաժեշտ է միջոցներ գտնել այս խոտվության առաջն առնելու համար...»¹:

Թուրքական Հայտնի ծովակալ Ուալի փաշան 1830 թվականի իր մի ճառում հայտնում է հետևյալ միտքը.

– Ես համոզված եմ, որ եթե մենք չչտապենք Եվրոպային նմանվել, պետք է համակերպվենք այն մտքի հետ, որ Ասիան նորից ենք անցնելու²:

Օսմանյան կայսրությունում հայերի թվաքանակի մասին (1845 թ.).

– Օսմանյան կայսրությունում առաջին անգամ մարդահամար կատարվել է 1845 թվականին՝ սուլթան Աբդուլ Մեջիդի իշխանության օրոք: Այդ առաջին փորձը (պաշտոնական տվյալների համաձայն) ցույց տվեց, որ այդ թվականին հայերի թիվը Օսմանյան կայսրությունում եղել է 2.5 միլիոն, որից 400 հազարը բնակվում էին Կ. Պոլսում և եվրոպական Թուրքիայում, իսկ մնացած մասը՝ Հայաստանում և Փոքր Ասիայում³:

¹ Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, Հ. IV, Երևան, 1972, էջ 14–15, 30–33:

² Պետոյան Վ., Սասունն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները, Երևան, 2005, էջ 87:

³ Պիպեռյան Ա., Օսմանյան պետություն, Կ. Պոլիս, 1913, էջ 25–26:

Թուրք պատմաբան Օսման Նուրին հայերով բնակեցված վայրերի մասին.

– Հայերով բնակեցված նահանգներն են Վանա լճի հյուսիսային և հարավային կողմերն ու Սասունի չրջակայքը, էրզրումի, Մուշի, Բիթլիսի, Դիարբեքի, Ալեքսանդրեթի, Ջեյթունի, Մարաշի և Ադանայի չրջանները...¹։

1837 թ. ապրիլին բուլղարների հերթական հզոր ապստամբությունը ճնշելուց հետո սուլթան Մահմուդ Բ. այցելեց բուլղարական չրջանները և քրիստոնյա համայնքների ղեկավարների առջև հայտարարեց.

– Մեր ցանկությունն է... մեր պետություն բոլոր բնակիչների՝ ինչպես մահմեդականների, այնպես էլ ռայայի անվտանգության ապահովումը... Դուք (այսինքն՝ քրիստոնյա համայնքների ղեկավարները), նկատի ունենալով մեր ցանկությունը, պետք է հավատարիմ լինեք մեզ այդ գործում²։

1839 թվականի նոյեմբերի 3-ին սուլթան Աբդուլ Մեջիդի իշխանության օրոք հրապարակած «Նաթիթ-Շերիֆը»։

Եւրոպական ներկայացուցիչների, բարձրաստիճան պաշտօնեաների, թիւրք, հայ, յոյն, բօլգար ու հրէայ ժողովրդական պատգամաւորների ու խումուն բաղմութեան ներկայութեամբ և 101 թնդանօթաձգութեան շեշտերի տակ կարդացւում է այդ նշանաւոր հրովարտակը, որ առաջին խոշորագոյն յաղթանակն էր և արմատական բարենորոգումների ազդանշանը։

«Ամբողջ աշխարհին յայտնի է, ասում է այդ Նաթիթ-Շերիֆը», որ օսմանեան տիրապետութեան առաջւայ ժամանակներին ամենքը իւրանց կենաց սկզբունք համարում էին Ղուրանի փառաւոր հրամանները և տէրութեան օրէնքները։ Հետեաբար, թագաւորութիւնը մեծանում էր և զարգանում, և առանց խտրութեան բոլոր հպատակները հասնում էին բարօրութեան գերագոյն աստիճանին։ Բայց վերջին 150 տարւայ մէջ շատ անյաջող հանգամանքների շնորհիւ և այլ և այլ պատճառներով ձեռք վեր առան սրբազան օրէնքները յարգելուց, և այդ օրէնքներից ծագած կանոնները իւրեանց կենաց մէջ իբր մի առաջնորդող աստղ համարելուց դադարեցին, ուստի հինօրեայ ոյժը

¹ Օսման Նուրի, Սուլթան Համիդ II-ն ու նրա իշխանության շրջանը, հ. Բ. Կ. Պոլիս, 1909, էջ 820 (արաբատառ թուրքերեն)։

² İnalık H., Tanzimat ve Bulgar Meselesi, İstanbul, 1992, s. 28.

և բարօրութիւնը փոխեցաւ թուլութեան և աղքատութեան։ Իսկ տէրութիւնը կորցնում է իր ոյժը, երբ նրա սահմաններում օրէնքները չեն պահպանուած։ Այս մտածողութիւնները անդադար զբաղեցնում են մեր միտքը, և մեր գահ նստելու օրից սկսած մենք առանց յոգնելու հոգս ենք տարած հասարակաց օգտի համար, գաւառների բարօրութեան համար և վերջապէս նւաճեալ աղգերի վիճակը բարւոքելու համար։ Եթէ ի նկատի ունենանք աշխարհագրական դրութիւնը Օսմանեան նահանգների, նոցա հողի պտղաբերութիւնը, բնակչաց խելքն ու ընդունակութիւնը, այն ժամանակ չի կարելի չը համոզել, որ եթէ միայն ճշմարտապէս հոգս տարւի, քանի մի տարւայ մէջ շատ յաջող հետեանքներ կուրենանք, ինչպէս որ և ողորմութեամբն Աստծոյ յոյս ունինք տեսնել։

Այս հանգամանքների մէջ, յոյս դնելով ամենաբարձրելոյն ողորմութեան և մեծ մարգարէի օգնութեան վրայ, մենք հարկաւոր համարեցինք նորանոր հիմնարկութեանց ձեռքով տալ Օսմանեան պետութեան բոլոր երկիրներին բարօրութիւն և լաւ վարչութիւն։ Այդ պետական հիմնարկութիւնները պիտի աչքի առաջ ունենան.

I – խոստմունքը, որ ապահովացնում է մեր հպատակների կեանքը, պատիւը և սեփականութիւնը,

II – համահաւասար բաժանումը և ժողովումը տէրութեան հարկերի,

III – զօրաժողովի և զինւորական ծառայութեան սահմանադրութիւնը։

Եւ արդարեւ, ի՞նչ կայ մարդու համար թանգագին, քան կեանքը և պատիւը։ Մինչև անգամ այն անձը, որի սիրտը բարախում է բռնաբարութեան անունը լսելիս, նա եւ, երբ իր կեանքը և պատիւը վտանգի մէջ է տեսնում, նոյն բռնաբարութեանն է դիմում անձնապաշտութեան նպատակաւ և դորանով մեծ վնաս է հասուցանում վարչութեանը և երկրին։ Եւ ընդհակառակը, եթէ մէկը ապահովութիւն է վայելում, նա օրինազանց չի գտնւիլ և հետեաբար նորա գործերը պիտի օգնեն տէրութեան և երկրացոց բարօրութեանը։ Եթէ չը կայ կայքի ապահովութիւն, ի հարկէ, հայրենաց և գահակալի ձայնը արձագանք չի գտնւիլ այդպիսի երկրում, այդտեղ ոչ ոք չի պարապիլ ընդհանուր բարօրութեան խնդիրներով, քանի որ ամեն ոք զբաղւած է իր անձնական ապահովութեան հոգսերով. հակառակ սորա, եթէ քաղաքացին ապահով է իր կայքերի մասին, այն ժամանակը նորա մէջ, ոչ միայն տեսնւում է ցանկութիւն լայնացնել իր գործունէութիւնը, այլ և նորա սիրտը լի է լինում սիրով դէպի իր գահակալը, իր

տէրութիւնը և իր հայրենիքը: Եւ այս գրադմունքները շարժառիթ են լինում շատ գովելի գործերի:

Ոչ պակաս նշանաւոր է տէրութեան հարկերի համաբաժանման խնդիրը, որովհետեւ տէրութիւնը, որի վրայ դրած է պարտականութիւն պաշտպանել թագաւորութիւնը և այդ պատճառով ծախսէրի պէտք ունի, ոչ այլ կերպ կարող է ձեռք բերել զօրք և այլ և այլ պաշտօնատարաց համար պէտք եղած դրամը, եթէ ոչ իր հպատակներից հարկ առնելով: Թէև, փառք Աստծոյ, մեր հպատակները քանի ժամանակից ի վեր ազատ են կեղեքիչ մենավաճառութեան հարկից, որ առաջնայ ժամանակներում սխալմամբ տէրութեան եկամուտներից մէկն էր համարում, բայց դեռ ևս կայ մի վնասակար և ըստ իր հետևանքի չար սովորութիւն, այն է իլլիթղամ, այսինքն՝ տէրութեան հարկերը կապալով տալը այն մենավաճառներին, որոնք խոստանում են աւելի վճարել: Այս սխտեմը քաղաքական և ելեմտական վարչութիւնները հպատակեցնում է մի մարդու կամաց, երբեմն մի այնպիսի մարդու, որ անսահման կրքերի և ցանկութեանց տէր է: Եթէ այդ մենավաճառը բարեխիղճ մէկը չէ, այն ժամանակ նա աչքի առաջ կունենայ միմիայն իր անձնական շահերը:

Այս պատճառաւ այսուհետև օսմանեան տէրութեան ամեն մի մասը պիտի տայ մի որոշեալ գումար հարկ, որ համապատասխան լինի այդ երկրի ոյժի և կարողութեանը, և բացի այդ որոշեալ գումարից, ուրիշ ոչինչ պահանջելու չէ այդ երկրից:

Նմանապէս հաստատ կերպով որոշւած պէտք է լինին առանձին օրէնքներով մեր ցամաքային և ծովային գօրութեանց ծախսերը:

Մենք արդէն ուշադրութիւն դարձրինք թագաւորութեան պաշտպանութեան նշանաւորութեան վրայ: Եթէ համեմատ այս նպատակին բոլոր բնակիչները պարտական են զինուոր տալ, այն ժամանակ հարկ է, որ օրէնքներ սահմանին, թէ որ երկիրը որքան զինուոր տալու է և դոցա ծառայութեան տարիքը չափաւորելու է չորս կամ հինգ տարով: Անարդարութիւն կը լինէր և երկրագործութեանն ու արհեստագործութեանը մեծ վնաս պիտի հասնէր, եթէ այստեղ աւելի զինուոր առնի այնտեղ սակաւ, քան թէ մի երկիր կարող էր զինուոր տալ: Եւ վերջապէս, եթէ զինուորին ստիպէին ծառայել իր ամբողջ կեանքումը, այդ կը նշանակէր նորան յուսահատութեան հասցնել և միւս կողմից նպաստել երկրի անմարդանալուն:

Այս բոլորը միասին ցոյց է տալիս, որ առանց այլ և այլ օրէնքների, որոնց հարկաւորութիւնը վերը յիշեցաւ, չը կայ մի որեւիցէ տէրու-

թեան համար ո'չ հարստութիւն ու գօրութիւն, ո'չ բարօրութիւն, ո'չ հանգիստ. իսկ օրէնքների մտցնելուց յետոյ սպասելու է յիշեալ բարիքը: Այս պատճառով ամենայն յանցանք պէտք է, որ համեմատ Աստուծային օրինաց, նախ քննի, ապացուցի և ապա դատապարտւի հրապարակաւ:

Ոչ ոք չը պէտք է պատժի մահով, ո'չ գաղտնի, ո'չ հրապարակաւ, ո'չ թունաւորելով և ո'չ ուրիշ միջոցներով, քանի որ օրինաւոր դատավճիռ չէ ստացած: Նմանապէս ոչ ոք իրաւունք չունի անպատել ուրիշներին:

Ամենայն ոք իրաւունք ունի իր ամեն տեսակ սեփականութիւնից ուղեցած օգուտը քաղել և վարել ազատաբար՝ առանց ամենայն արգելքի ում կողմից և իցէ:

Ոչ սակաւ սորանից, յանցաւորի անմեղ ժառանգները չը պիտի զրկին իրենց օրինաւոր ժառանգութիւնից և դատապարտւածի կայքը յարքունիս չը պիտի գրավի:

Որովհետև փաղիշահի այս ողորմած հրովարտակը վերաբերում է մեր ամեն հպատակներին ինչ կրօնի և դաւանութեան և լինին դոքա, վասն որոյ ամենեքեանք պէտք է հաւասարապէս օգուտ քաղեն սորանից:

Ուրեմն այդպէս ահա, մենք տալիս ենք տէրութեան ամեն հպատակներին անխտրաբար, համաձայն Աստուծային օրինաց, կատարեալ ապահովութիւն նոցա կենաց, պատուոյ և կայից վերաբերութեամբ:

Իսկ ինչ որ կը վերաբերի յիշեալ կէտերին օրինաւոր իրագործութեան, այդ մասին մեր պետական վարչութիւնը ըստ օրինի խորհրդածելուց յետոյ, կը հաղորդակցէ մեր նախարարների և տէրութեան մեծամեցած հետ այն օրերը, երբ մենք կը նշանակենք հիմնական օրէնքները քննելու և սահմանելու համար՝ այն օրէնքները, որոնք պիտի վերաբերեն կենաց և կայից ապահովութեանը և հարկերի համահաւասար բաժանմանը:

Այս խորհրդածութեանց ժամանակ ամենայն ոք (խորհրդականներից) պարտական է համարձակ յայտնել իւր կարծիքները և խորհուրդ տալ:

Այն օրէնքները, որոնք կվերաբերին զինուորական ծառայութեանը, կքննին զինուորական խորհրդարանում՝ սէրասքէրի (զինուորական նախարարի) ապարանքում:

Ամեն մի վճռական կերպով քննած օրէնք անմիջապէս պիտի մեղ ներկայացուի, և մենք մեր փաղիչահական ստորագրութեամբ ըստ օրինաց կրվաւերացնենք յաւիտենականապէս:

Որովհետեւ այս հիմնարկութիւնների միայնակ նպատակն է պահել պահպանել կրօնը, տէրութիւնը, ազգութիւնը և թագաւորութիւնը, այդ պատճառով մենք պարտաւոր ենք չգործել ոչինչ, որ միանգամայն մեր այս կամքին արգելադրի լինի: Իսկ իբր ապահովութիւն մեր այս խոստման, մենք պարտաւորուած ենք, երբ այս հրովարտակը կրեւրի սանձադի-չէրիֆի (սրբազան դրօշակի) խորանը դրելու ի պահուստ, իսկոյն յանուն Աստուծոյ տալ մեր երդումը բոլոր ուլէմների և տէրութեան մեծամեծների ներկայութեամբ և մի այդպիսի երդում կառնենք նոյնիսկ ուլէմներից և մեծամեծներից:

Այդպէս ահա երգելուց յետոյ ամենայն ոք՝ թէ՛ ուլէմ լինի նա, թէ՛ բարձրաստիճան պաշտօնեայ և թէ՛ հասարակ ոմն, եթէ միայն այն հիմնարկութեանց դէմ ներգործէ ու այդ բանը հաստատուի, պէտք է համեմատ իր մեղաց պատժի՝ չնայելով նրա աստիճանին, արժանաւորութեանը կամ նշանակութեանը: Այս մտքով քրէական օրէնքներ հաստատուելու են:

Որովհետեւ հիմա տէրութեան բոլոր ծառայողները բաւականին ոռճիկ են ստանում, իսկ քիչ ստացողների ոռճիկներն էլ պէտք է աւելացուին, պէտք է որ մի խիստ օրէնք հրատարակուի ընդդէմ քաղաքական անբարոյականութեան և չահասիրութեան, որոնք գլխաւոր պատճառներն են մեր տէրութեան անկմանը:

Եւ որովհետեւ այս հրատարակող կանոնադրութիւնները հիմնապէս վերահաստատում են և վերանորոգում հինաւուրց սովորութիւնները, վասն որոյ այս իմ փաղիչահական հրովարտակը պէտք է յայտնուի Կ. Պոլսոյ մէջ և կայսրութեան ամենագլխաւոր տեղերում, նաև պաշտօնական կերպով պիտի հաղորդուի Պոլսոյ մէջ գտնուող բարեկամ տէրութեանց ղեսպաններին, որպէս զի նոքա վկայ լինեն այս օրէնքների բաշխելուն՝ օրէնքների, որոնք, եթէ կամենայ Աստուած, պիտի յաւիտեան հաստատ մնան:

Վերջ ամենայնի, թող պահէ Աստուած մեզ ամենիս իր սուրբ Հովանաւորութեան տակ. իսկ նոքա, որոնք այս օրէնքին դէմ կլինեն, այդպիսիները թող Աստուծու պատուհասին արժանանան և զուրկ լինին ամեն տեսակ պաշտպանութիւնից»¹:

¹ «Փորձ», 1876, գիրք Բ, Եր. 147:

Թուրք քաղաքական գործիչ Նալիֆ Շերիֆ փաշայի կարծիքը սահմանադրական կարգերի մասին.

– Անհրաժեշտ է ստեղծել սահմանադրական կարգեր, որը կջնջի մահմեդականների և ոչ մահմեդականների միջև եղած քաղաքական ու սոցիալական տարբերութիւնը: Եվ ոչ մահմեդականի համար կվերանա անհրաժեշտութիւնը լսելու դրսի կեղծ խոստումները¹:

Սահմանադրական չարժան դեկավար, մեծ վեզիր Միհդատ փաշան Հայոց պատրիարք Ն. Վարժապետյանին ասել է.

Շնորհակալ ենք, որ Հայերը զենքերը ձեռքին անձնվիրաբար պատերազմական ծառայութիւն մեջ են գտնվում²:

Մեծ վեզիր Միհդատ փաշան Հայոց պատրիարքարանում Հայտարարել է.

Վեհափառ կայսեր առհասարակ իր բոլոր հպատակներուն շնորհած Սահմանադրութեան համաձայն Հայ Ազգը կը գտնուի Օսմանեան կայսրութիւնը կազմող բնական տարրերուն մէջ եւ Օսմանեան դրօշակին յարգն ու պատիվը պաշտպանելու գործը պիտի նախադասէ իր ազգային ու քաղաքական բոլոր իրաւունքներուն³:

Թուրքական սահմանադրական չարժան նշանավոր գործիչ, մեծ վեզիր Ֆուադ փաշան բարենորոգումների մասին.

– 1856 թ. փետրվարի 18-ի կայսերական Փերմանը լոկ հանդիսանում է հաստատումն ու զարգացումը Գյուլիսանների ակտի, որով հանդիսավոր կերպով հաստատվում է հավասարութիւն վարչակարգ, և բացվում է բարենորոգումների դարաշրջան Օսմանյան կայսրութիւնում: Սակայն Գյուլիսանների ակտն ըստ էութիւն լոկ իրավունքների ճանաչում և բարենորոգումների խոստումն է, որոնք կարող են մնալ անպտուղ: Հասել է ժամանակը իրականութիւն դարձնելու խոստացածը, այլ կերպ ասելով՝ դրանք մտցնել երկրի հիմնարկները⁴:

¹ Stern B., Jungtürken und Verschwörer, Leipzig, 1901, s. 120–121.

² Սենսալ Շ., Համառոտ պատմութիւն քաղաքակրթութիւն, Հայկական խնդրի ծագումը, Թիֆլիս, 1909, էջ 135:

³ Ջորմիսեան Լ., Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Հ. Ա, 1850–1878, Պեյրուի, 1972:

⁴ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, стр. 192.

Թուրք տարեգիր Ահմեդ Լուծֆին իր «Թարիխ-ի Լուծֆի» գրքում է.

Թանգիմաթը ինչ-որ բան փոխեց, ինչ-որ բան բարելավեց, չատ ու չատ բաներ էլ չփոխվեցին, օրինակ, տասանորդի հավաքման գործում շարունակում էին տեղ գտնել բազում ապօրինություններ ու չարաշահումներ... Պետության գովասանքին արժանանալու ցանկությունամբ հարկահավաքները... խաբում էին միամիտ մարդկանց, սահմանվածից ավելի տասանորդ հավաքում... Բռնությունների գործադրմամբ հավաքված հարկերը մի քանի անգամ չատ էին թանգիմաթից առաջ հավաքվածից... Մի հատիկ ավանակ ունեցող գյուղացին տարեկան 400–500 դուրուշ հարկ էր վճարում... Եղել են դեպքեր, երբ առաջվա նման տասանորդի գանձումն իլթիզամի կարգով կամ աճուրդով տրվում էր տեղական երեւելիներին ու ազդեցիկ անձանց, որոնք 1840–1841 թվականների հարկերը միանվազ էին հավաքել¹:

Նորագույն շրջանի թուրք պատմաբան Արսալը թանգիմաթյան բարեփոխումների ձախողումը պատճառաբանում է հետևյալ կերպ.

– Թանգիմաթյան հիմնական սկզբունքները, ինչպես կարգն էր, վերաբերում էին ոչ թե մուսուլմաններին, այլ սուլթանի հպատակ քրիստոնյաներին: Մուսուլմանները կարող էին օգուտ քաղել որոշակի բարենորոգումներից, որոնք վերաբերում էին աշխատանքային օրենքներին ու հարկահավաքությանը: Մարդիկ, լիազորված իրականացնելու բարենորոգումների քաղաքականությունը, չունեին հրատակ պատկերացում այն մասին, թե ինչ է իրենց սպասվում: Իսկ նրանք, ովքեր մոտավորապես գիտեին, թե ինչպիսի բարենորոգումներ են անհրաժեշտ երկրին, չունեին ոչ իշխանություն, ոչ էլ քաջություն դրանք անցկացնելու համար, չնայած որ հասարակական խավը պատրաստ էր այդ ամենին... Յուրաքանչյուր շարժում, որը զուրկ է մարդկային շերտերի աջակցությունից, չի կարող հաջողության հնարավորություն ունենալ: Թանգիմաթյան շարժման վերջնական նպատակները հասկանալի էին զանգվածներին, որոնք էլ պետք է քաղեին նրա պտուղները: Այդ ամենի գիտակցության հետաքրքրությունները հայտնվել էին հարվածի տակ: Դրա համար էլ, ինչպես առաջինները, այդպես էլ երկրորդները բարենորոգումները թշնամա-

¹ Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, հ. IV, Երևան, 1972, էջ 55–56:

բար էին դիմավորում: Գյուլխանների Հաթթը-Շերիֆը արտացոլում է հասարակության և առանձին անհատների միջև եղած փոխհարաբերությունները և այդ տեսակետից մի փաստաթուղթ է, որը պարունակում է իրավաբանական ազատություն և երաշխիք տրված օսմանյան ժողովրդին, այլ խոսքով այն հանդիսանում է իսկական սահմանադրական ակտ...¹:

Մեծ վեզիրի պաշտոն զբաղեցրած Նալեդդին փաշան Օսմանյան կայսրության տնտեսական խղճուկ վիճակի մասին.

– Այսօր մեր երկիրը գտնվում է Եվրոպայից կախվածության մեջ: Մենք ողջ տարի բամբակագործությամբ, անասնաբուծությամբ, շերամագործությամբ զբաղվելով քրտնում ենք, որպեսզի հետո վաճառենք մեր արտադրանքը եվրոպացիներին կոպեկներով: Նրանք էլ իրենց ձկուն մտքի շնորհիվ վերամշակում են այդ հումքը և վաճառում են մեզ պատրաստի գործարանային արտադրանք 10 անգամ ավելի թանկ: Դա ցույց է տալիս մեր երկրի տնտեսական ցածր վիճակը²:

Բեյրութի նահանգապետը օսմանյան կառավարությանը ուղարկած իր զեկույցում նշում է.

– Այս շրջանի աշարը (տասանորդը), ինչպես որ մյուս շրջաններում, հարկի գնորդներին վաճառվում է: Եվ սրա արանքում ժողովուրդը մեկ տասանորդի դիմաց վճարում է մի քանիսը: Որպեսզի ցույց տամ, թե ինչի է բերում նման հարստահարումը, ես պետք է նշեմ հետևյալ փաստը. այս շրջանում տասանորդը մտցվել է 1866 թ., և բնակչությունը, խուսափելով հարկահանի կողմից գործադրվող ճնշումներից, կտրել և ոչնչացրել է ամենաքիչը 15 հազար ձիթենու ծառեր: Բնակչությունն այդ բանն արել էր այն պատճառով, որ իր կողմից աճեցված ծառերի բոլոր պտուղները հարկահանին հանձնելուց բացի չվճարի նման գումարային տուգանք³:

Ռուս ճանապարհորդին Ադանայի նահանգապետի քարտուղարը ասել է.

– Կայմականներին, վալիներին, մեծ վեզիրներին փոխում են ամեն ուրբաթ. այսպիսով ինչպես կարող է կարգուկանոն լինել... Մենք՝

¹ Arsal S. M., Teokratik Devlet ve halk Devlet, Tanzimat, s. 92–93.

² Polar Z., Osmanlı İmparatorluğun çöküş Sebepleri, İstanbul, 1962, s. 23.

³ Петросьян Ю. А., Младотурецкое движение, Москва, 1971, стр. 15.

ցածր պաշտոնյաներս, տարիներով չենք ստանում մեզ հասանելի աշխատավարձը: Եվ այսպիսով կամքին հակառակ, դառնում ենք գողեր և ավազակներ¹:

Թուրքական «Հյուրիեթ» թերթի համարներից մեկում տպագրված մի հոդվածից.

– Պետական պարտքերը կատարվում են մի խումբ պաշտոնյաների կողմից, որոնք հաշվի չեն նստում ժողովրդի կարծիքի հետ, այսինքն՝ առանց ժողովրդի համաձայնության: Այդ պարտքերը ձեռնադրում են միայն եվրոպական բանկիրներին և ստամբուլյան գործակալներին: Այդ միջոցները ծախսվում են սուլթանի և նրա նախարարների քմահաճույքների բավարարման համար, և երբեք ոչ պետության պահանջներին²:

Էրզրումի կառավարիչը մեծ վեզիր Սայեդդին փաշային մի տեղեկագրով ծանուցում է. (4-ը հուլիսի, 1867 թ.).

– Մեկ գիշերվա ընթացքում խոնկալ գյուղում հայերից հազարից ավելի ոչխարներ են գողացել, որոնք ունիս խոյից էին ստացել... Հայերը, զարհուրած ու միանգամայն տաղտկացած են նմանօրինակ դեպքերի կրկնումից, սպառնում են երկիրը թողնել: Հայոց այս հառաչանքը և գողությունները մեծապես վնաս են տալու երկրին և արքունի գանձարանին... Շատ հեշտությամբ հնարավոր է լուծել այս խնդիրը, եթե Կարնո պահապան գնդերը ուղարկենք Վան, Մուշ, Բաղեշ և այլուր, որպեսզի հասարակական ապահովությունը հսկեն...

Մեծ վեզիրի պատասխանը. «Դուք պետական ներքին քաղաքականությունը չպետք է խառնվեք...»³:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի քարտուղարի պաշտոնը զբաղեցրած Մուստաֆա Նեդիմը Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված կեղեքումների մասին.

... Ձերբակալությունների վերջը չէր երևում: Սայտառակությունների ու ստորությունների աղբյուր էին հանդիսանում հատկապես ոստիկանները: Օրինակ. թշվառ ու կաշառակեր կոմիսարներից մեկը,

¹ Петросян Ю. А., Младотурецкое движение, Москва, 1971, стр. 20–21.

² Նույն տեղում, էջ 116:

³ Սենուպ Շ., Համառոտ պատմություն քաղաքակրթության, հայկական խնդրի ծագումը, Թիֆլիս, 1909, էջ 35–37:

երբ հասարակաց տուն կամ խաղատուն էր գնում, իր հավատարիմ ոստիկաններից մեկին հրամայում էր գնալ իր ծանոթ վաճառատան տիրոջից 30 ոսկի «պարտքով բերելու»: Եթե վաճառատան տերը վճարեր կոմիսարի պահանջած գումարը, ապա չատ ավելի լավ կլիներ նրա համար, հակառակ դեպքում՝ վաճառատան տիրոջ տուն հաջորդ օրն անսպասելիորեն կներխուժեին ոստիկանությունից խուզարկուները և նրա մահճակալի տակից կամ պահարանի ներսից մի քանի եվրոպական լրագրեր կամ նամակներ կգտնեին: Թշվառ և չվարած մարդու ձեռքերը հսկա երկաթե ձեռնակապեր կանցկացնեին և ծեծելով բանտ կտանեին: Մի քանի օրվա հարցաքննություններից հետո լուր էր տարածվում, որ կամ որևէ տեղ էր աքսորվել, կամ էլ մի քանի ամսվա բանտարկությունից էր դատապարտվել: Այս դեպքից հետո վերահիշյալ կոմիսարը ուր որ իր ձեռքը մեկնում էր, ուզածին հասնում էր... Այս իրավիճակից սկսեցին օգտվել բոլոր ոստիկանները. որոշ ժամանակ անց Փոքր Ասիայում չմնաց որևէ հայ, որ վստահություն ունենար իր կյանքի և ունեցվածքի համար... Չմնաց մեկը, որ լսած չլիներ և չիմանար քարերը սարսռացնելու չափ դառն աղետների և այն հարստահարությունների զարհուրելի աստիճանի մասին, որ թուրքերը գործադրեցին հայերի նկատմամբ...

... Ուարբերդի կուսակալն էր էնիս փաշան: Այդ մարդը վերին աստիճանի տգետ ու ապուշի մեկն էր: Նրա ամբողջ արժեքը Ձեքի փաշայի աները լինելն էր: Հոգով, սրտով հարում էր գող պաշտոնյաներին ու նրանցից բաժին էր ստանում: Կոտորածներն առիթ համարելով՝ մյուս պաշտոնյաներն սկսեցին ավելի չատ կեղեքել հայերին: Մանավանդ ոստիկանի անզգամություններն ու կեղեքումները դարձել էին աներևակայելի: Հարկերը «հավաքելու համար» ոստիկանները գնում էին գյուղեր: Գյուղացիները ահ ու սարսափի էին ենթարկվում: Ոստիկանները գյուղ մտնելուն պես ծեծում էին իրենց առջև գտնվողներին, և ամենուր տարածվում էին նրանց հեծածախներն ու օգնություն կոչերը: Իսկույն կանչում էին գյուղի քրիստոնյա մեծամեծներին, գյուղապետին՝ դրամ պահանջելով տասանորդի տուրքի փոխարեն: Մահվան հասցնելու չափ ծեծում ու զանակոծում էին նրանց, ովքեր ասում էին, թե անկարելի է այդքան կարճ ժամանակահատվածում այդքան մեծ գումար հայթայթել: Ճարահատյալ հայ տղամարդիկ, ցրվելով փողոցները, արտերն ու տները, հավաքում էին իրենց գրպաններում եղած դրամները, կանանցից՝ իրենց հայրերից,

պապերից մնացած չնչին ոսկիները, տանում ու նետում էին ոստիկանների առջև: Իսկ ոստիկանները որպես ստացագիր՝ տալիս էին ստորագրված թղթի մի կտոր, որը բոլորովին արժեք ու նշանակություն չուներ, և խեղճերը մնում էին նորից պարտքի տակ: Որոշ ժամանակ անց ոստիկանները սկսեցին հավաքել նաև կարպետի, թաղիքի, պայուսակի, վերմակի և նույնիսկ՝ չվանի պես հասարակ իրեր... Ոստիկաններն ավելացնում էին իրենց անիծյալ արարքները... Հայերի դրամները խելուց բացի սկսեցին աչք դնել նրանց պատվին: Նարբերդի հայերը շատ պատվախնդիր մարդիկ էին: Հսկայական կուսակալության մեջ լսված չէր նույնիսկ մի անբարոյականի անուն: Տեսնելով և չհանդուրժելով ոստիկանների այս անօրինությունները՝ ես (Մուստաֆա Նեղիմ) մի տեղեկագիր ուղարկեցի եպարքոս Զևադ փաշային, որը չէր սիրում ապօրինություններ... Զևադ փաշան, նկատի առնելով տեղեկագիրս, հանձնեց այն նախարարների խորհրդին՝ քննելու համար: Զեքի փաշան իր աներոջը պաշտպանելու համար մի նամակ ուղարկեց նրան՝ հրամայելով խելքը գլուխը հավաքել, սակայն տխմար էնիս փաշան պարծենալով՝ բոլորին ցույց էր տալիս այն, նույնիսկ ինձ էլ է ցույց տվել: Ես էլ երկրորդ նամակս ուղարկեցի եպարքոսին: Այս անգամ էնիս փաշան պաշտոնանկ արվեց...

... Նարբերդի կուսակալի թիկնապահներից տեղեկացա, որ իբրև թե բռնել են Հայկական կոմիտեի նախագահին: Հետաքրքրվեցի և ուղեցի տեսնել նրան: Եվ սարսափեցի՝ իմ առջև տեսնելով Յազըճյան Գրիգոր էֆենդուն, որը բնակվում էր Քեսրիկ գյուղում: Նա հորից մեծ հարստություն էր ժառանգել և լավ էր ապրում... Ծառ հյուրընկալ մարդ էր, միշտ ճաշի ժամանակ 15–20 հոգի հյուր ուներ: Ես ամառները ընտանիքով հյուրընկալվում էի նրա տանը... Ես շատ հաճախ երիտասարդական խանդավառությամբ քննադատում էի թուրքական կառավարության քաղաքականությունը և անիծում էի Եղբոր գործունեությունը, իսկ Յազըճյան Գրիգորը կառավարության հասցեին ոչ մի բան չէր ասում: Ճշմարիտ, նույնիսկ հյուրի չափ էլ նա քաղաքականության և դիվանագիտության հետ կապ չուներ... Հիմա ինչպե՞ս կարելի է այս մարդուն իբրև կոմիտեի նախագահ տեսնել և չզարմանալ... Այս ճշմարտությունը հասկացրի կուսակալի փոխանորդին, սակայն նա իմ ասածներին նշանակություն չտվեց...¹:

¹ Մուստաֆա Նեղիմ, Հայ Եղեռնը և իմ վկայությունները, 1936, էջ 1–19:

Նարբերդի հայերի նկատմամբ իրականացվող թալանչության մի դեպք.

– Նարբերդի մօտ գտնուող Հողի գիւղից, որ 180 հայ տուն ունի, բոլորն էլ կոտորածների ժամանակ խստիւ թալանւած, կառավարութիւնը պահանջում է ուղիղ 41000 դահեկան տուրք: Չմշկածագի մօտ եղած Սիսէ գիւղից, որ 35 տուն հայ ունի իր մէջ, բոլորն էլ թալանւած, 8000 դահ. հարկ են ուզում: Մամուսա 51 տնոց հայ գիւղից՝ «մաքրապէս» թալանւած 12000 դահ. են պահանջում: Այս գիւղերից առաջինը կօնսուլների տեղեկագրած ժամանակ վճարել էր 32000 դահ., երկրորդը՝ 5000, իսկ երրորդը՝ 8000 և միայն մնացած չնչին գումարների համար մի քիչ յետաձգում էին խնդրել: Չմշկածագի Զապիթա-Մէմուրին (ոստիկանապետը) հետեյալ պատասխանն էր տուել Մամուսա գիւղի բնակիչներին. «Ձեր խնդիրը Միրալայ Պէյին (գայմագամին) հաղորդեցի, ահա նրա պատասխանը. «Ես այդպիսի բան չեմ հասկանում, մինչև որ բոլոր դրամը չվճարի, զինուորները գիւղից չալէտք է դուրս գան»: Հետևաբար՝ աշխատեցէք ժամ առաջ մի հնար գտնել, գիւղացիներից դրամը հաւաքել և հարկը լրացնել»¹:

Մի հայ մեծահարուստի նկատմամբ իրականացված խարդախության մասին է վկայում Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության պետ Զիա բեյը.

– Սուլթանի սիրելի Ֆեհին փաշայի (սուլթանի գաղտնի լրտեսական գրասենյակի ղեկավար) լրտեսների կատարած կամայականություններին չափ ու սահման չկար: Մի անգամ տեղեկացա, որ փաշայի լրտեսները ոստիկանի հագուստներով ներխուժել են մի մեծահարուստ հայի տուն, որը մեծ վստահություն էր վայելում պալատում, և ձերբակալել այդ մարդուն՝ ստիպելով նրան հետևել իրենց: Հայը առանց քննարկման կատարում է նրանց հրամանը՝ վստահ լինելով, որ տեղի է ունեցել թուրիմացություն և նրան չուտով բաց են թողնելու: Սրիկաները հային տեղափոխում են մեծ վեզիրի պալատ՝ մեկ ժամ պահելով նրան լարվածության մեջ: Ոնեղճ մարդը չէր էլ կարող ենթադրել, որ այդ ամենը նախապես ծրագրված էր... Երբ լրտեսները նրան նորից նստեցնում են կառք, հայը հարցնում է, թե ուր են տանում իրեն և նրան պատասխանում են, որ տանում են բանտ: Վախեցած հայը առաջարկում է նրանց 5 հազար ոտուրլի կաշառք, բայց վերջիններս չեն համաձայնվում: Այդ ժամանակ հայը, մեծ հուսա-

¹ Նաթակ, Հարկերը Տաճկա-Հայաստանում, Բաքու, 1904, էջ 126–127:

Հատուկյան մեջ, առաջարկում է 15 Հազար ուրլի, որն էլ սրիկաներին բավարարում է: Լրտեսները հետ են տանում նրան, ստանում իրենց ուզած գումարը և խորհուրդ են տալիս հեռանալ երկրից: Ինչ վերաբերում է Ֆեհիմ փաշային, ապա նա հրճվանքով է վերաբերվում իր լրտեսների ճարպկությունը և հանձն է առնում նրանց անպատժելությունը¹:

Մի թուրք անգլիական հյուպատոս Բիլիոտտին ասել է (1870 թ.).

... Ներկայումս վիճակն ավելի ծանր է, քան ենիչերիների ժամանակ: Ինչպես կառավարման չինովնիկների, այնպես էլ աղաների կողմից ճնշված, սնանկացած և իրենց հողերից քչված մահմեդականներն ու քրիստոնյաները արյուն-արցունք են թափում²:

Քաղվածք թուրքական թերթերից (1870-ական թվականներ).

– Հայրենիքի զավակներ, եկեք լավ մտածենք: Եթե մենք հետագայում ևս արհամարհենք Անատոլիայի բնակչության կարիքները և նրան օգնության ձեռք չմեկնենք, կտրելու ենք մեր աջ ձեռքը: Մեր զինվորների մեծ մասը Անատոլիայից է, Անատոլիան է մեզ կերակրում³:

Թուրք պաշտոնյա Ջեմիլը Վանում 1876 թ. դեկտեմբերի 13-ի տեղի ունեցած ավերիչ հրդեհի մասին վկայում է.

– Հրդեհը թուրքերի կողմից դիտավորյալ պատրաստված ծրագրի գործադրություն էր⁴:

Թաղման թույլտվություն.

Ով դու կուպրի պէս սև հագուստ հագած,

Սատանի թագը գլուխդ դրած,

Տիրոջ գահէն ի բաց վռնտուած,

¹ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 83–84.

² Blue Book, Turkey N 23 (1880), p. 193. 9-ը նոյեմբերի, 1879 թ. Լեյպրիգի տեղեկագիր:

³ Başiret gazetesinden aktaran; David Kuşner, Türk Milliyetçiliğinin Doğusu, İstanbul, 1979, s. 77.

⁴ "Северный вестник", П., 1896, N 10.

Մորուքդ աղաղակեղ, մազդ սևուրակ,
Աչքերդ ստահակ, մարմինդ մեծկակ,
Տեսքդ զգուելի, կրոնդ վայրենի,
Գոյութիւնդ վնասակար, զԱստուած ուրացած,
Սկիզբդ ու ծագումդ վատ, անիծեալ արարած,
Ո՛վ ծեր մողես դողոչեա, դու նահապետ քահանա.
Կը յայտարարուի, որ ձեր զգուելի Հայհոյիչներու ամբոխէն, եւ Շեյխ թաղի բնակիչներէն ու Օսմանեան վեհապանձ պետութեան Հպատակներէն, տպածոյագործ ձենան որդին Յարութիւն կաթուածի հիվանդութենէն յանկարծ սատկած եղած է – թող

Ամենաբարձրեալն Աստուած ամենայն Հայհոյիչները բորբոս եւ բնաջինջ ընէ եւ որքան ալ անոր զգուելի, գարշելի դիակը հողն ու գետինն իսկ չեն ընդուներ, Խնչ ընել, Խնչ ընել, քանի որ օղէն ու տաքէն անոր պժգալի հոտը իսլամ ժողովուրդը անհանգիստ պիտի ըներ, ուստի մեջտեղէն վերցնելու համար Հայհոյիչներու սատակատեղին, յիշեալ աղբանոցին մէջ խորունկ փոս մը բանալով, մէջը նետելով, կարդալէն, փչելէն թաղելը մեր պաշտոնատեղիին կողմէ հաստատուած է¹:

1895 թ-ից մինչև 1918 թ. Զեյթունում գործում էր մի իրադե, որը վերաբերում էր հայերին.

– Սատանայի գլխարկ կրող, Աստուծո ապարանքի դռնն զրկվող վատ սկզբունքի տեր, պառավյալ երեց: Կը ծանուցվի, որ Զեր Հայհոյիչ գարշելի ժողովրդեն, այս ինչ Հայհոյիչի տղա, այն ինչ Հայհոյիչը սատկած ըլլալով՝ թեև գարշելի պիղծ դիակը հողը անգամ չընդունիր, ինչ օգուտ, որ այս զգուելի գարշահոտությունը մեջտեղեն վերցվելու համար քաղաքեն դուրս հանեք, խորունկ փոս մը փորել տվեք, մեջը ձգեք, վրան հողով ծածկեք, լավ մը տրորեք, կոխկոտեք ու գաք, պառավյալ երեց²:

¹ Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթէպի Հայոց, Լոս Անջելես, 1953, էջ 310:

² Զեյթունցի, Զեյթունի անցեալէն և ներկայէն, Մ. Բ., Փարիզ, 1903, էջ 208:

1867 թ. երիտթուրք Ֆազլը փաշայի Փարիզում հրատարակած նամակից, որն ուղղված է եղել սուլթան Աբդուլ Ազիզին.

– Ձեր տերություն հպատակ քրիստոնյանների ապստամբությունները ամբողջովին արդյունք են մեր արտաքին թշնամիների բանսարկությունների: Դրանում զգալի դեր է խաղում նաև ներկա կառավարումը: Առանց բացառության, բոլոր հպատակները ենթակա են հալածանքների ու ճնշումների, իսկ եվրոպան գտնում է, որ հալածվում ու ճնշվում են միայն քրիստոնյաները: Մինչդեռ, որևէ արտաքին հովանավորություն չդիմող մահմեդականներն ավելի են ճնշվում, քան ոչ մահմեդականները: Մահմեդականներն այլևս ոչ ուժ, ոչ համբերություն և ոչ էլ անձնազոհություն ունեն ցավն ու դժբախտությունը տանելու, դրա համար էլ ամենուրեք դժգոհություն է: Ժողովուրդը ամենաշատը կեղեքվում է չինովնիկների կողմից, որոնք գործում են առանց որևէ վերահսկողության, նրանց կամայականությունները խոչընդոտող որևէ բան գոյություն չունի: Դրա համար էլ Ձեր հպատակները բաժանվում են երկու խմբի: Մի խումբն անսանձ բռնապետներ են, մյուսը՝ ճնշվածներ, որոնք տանջվում են առաջինների կամայականություններից... (Երկրի ծանր վիճակի պատճառով) հարկերի գանձման գործում կամայականություններն են, որոնք քայքայում են բնակչությանը... (Ելքը մեկն է)՝ ստեղծել այնպիսի ազատ կարգեր, որտեղ թե՛ մահմեդականների, թե՛ ոչ մահմեդականների համար ապահովվի անձի ազատություն և ունեցվածքի անվտանգություն¹:

Մուշ քաղաքում 1868 թ. հուլիսի 14-ին տեղի ունեցած դատավարության արձանագրությունից.

Դատուում էին ջիպրանցի երեք քրդեր՝ Իբոն, Ղավազն ու Քրնդոն: Դատական ատյան՝ Մշո մութեսարիֆ Հեյդար փաշա, դիվանագիր՝ Սայիդ էֆենդի, դատավոր՝ Աթըֆ էֆենդի, որը և վարում էր հարցաքննությունը:

Աթըֆ էֆենդի (Դիմելով տէր Մանուելին) – Ինչ է քո հոգան ու գանգատը:

Մանուել – ... Մեր Ջատկի տոնին Սլաքանա ժամու մէջ կասեի և պատարագ կանեի,... սրբութեան հացը ձեռքս էր՝ կկարդայի վրան: Այդ օր մեր ազիզ օրը լինելով՝ գեղացի հայեր ամենք ժամիս էին ու

¹ Stern B., Jungtürken und Verschwörer. Leipzig, 1901, ss. 120–121, Петросян Ю. А., Младотурецкое движение, Москва, 1971, стр. 60–61.

սրբութիւն պիտի առնեին... տեսա մեկի մը ձեռքը, խեց տարավ իմ ձեռքէս սրբութեան հացը: Նայիմ, որ այդ քիւրդ Քրնդոն էր... պատարագն ու աղոթքը խաբանեցավ, հանի իմ զգեստն ու ելա դուրս. ժամէն կերթայի գեղի մէջ իմ իջևանը... Քրնդոն գիւղի մէջ տարեր էր սրբութիւնը կապեր շան պոչը...

Աթըֆ – ... Դու քո աչքով տեսա՞ր շան պոչ կապելը...

Մանուել – Ես իմ աչքով տեսա, որ Քրնդոն պոչին կախեց սրբութիւնը:

Աթըֆ (Քրնդոյին) – Ձքեղ ինչո՞ւ համար բանտ դրած են:

Քրնդո – Ես էլ չեմ գիտեր:

Աթըֆ – Դու լսեցի՞ր տէր Մանուելն ինչ ասաց:

Քրնդո – Լսեցի ու հասկացա... սուտ է, ես այդպիսի բան չեմ արած...

Աթըֆ – Քրնդո, դու ի՞նչ տեղ էիր հայոց Ջատկի օրը:

Քրնդո – Ես ի՞նչ չգիտեմ հայոց Ջատկի որ օրն է եղեր և ի՞նչ գիտեմ ուր եմ եղեր...

Աթըֆ – Դու հայոց գեղի մէջ ես, հայոց Ջատկիլը չե՞ս գիտեր... խոստովանե Քրնդո, ըրածդ խոստովանե, այդպես սուտ չլիներ...

Քրնդո – ... Թո՛ղ ապացուցեն, էֆենդի, թո՛ղ երկու վկա բերեն:

Հանկարծ Քրնդոն իր դեմքն ու խոսքը դարձուց Մխիթար վարդապետին և ասաց. «Մխիթար՝ վարդապետ, դու գիտես, որ ես ու իմ եղբայրը մեր կոնակով քար կրեր ենք, Սլաքանա եկեղեցին չինել տուեր ենք, մենք հայերուն այդպես գեշութիւն կանե՞նք, ինչո՞ւ զմեզ կզրպարտեք»:

Այս խոսքին վրա իսկոյն բոլոր տաճկաց ուշադրութիւն արթնացավ, ձայն տուին, ձայն առին, թե Քրնդոն հայոց եկեղեցի է չինել տուեր՝ իր կոնակով քար կրելով...

Աբդուլլահ էֆենդի – Այո՛, ես կհավատամ, որ չինել տուեր են, որպեսզի այդ պատճառով հայերը ժողովն իրենց ձեռքի տակը և ուղածն ընեն հայոց գլխուն:

Աթըֆ (Մանուելին) – Քրնդոն վկաներ է ուզում, կարո՞ղ ես վկայութիւններ բերել:

Մանուել – Ապացույցն իմ վկայութիւնն էր ու իմ ժողովրդեական վկայութիւնը (որոնք ներկա էին դատարանում). այնտեղ ուրիշ տաճիկ, քիւրդ կամ հայ չկար, որ բերեմ վկա:

Աթըֆ – Հապա ի՞նչ կերպով ապացուցել Քրնդոյի վրա այս բանը:

Մանուել – Ինձմով և սլիքանցվոց վկայութեամբ, թե կրնդունիր՝ դուք գիտեք, թե չէք ընդունիր՝ դուք գիտեք:

... Փաշան և ժողովուրդը որոշեցին, որ Իպոն ու Ղավազը իրենց երաշխաւոր տան ու բանտեն ելնեն... Այս խոսքին վրա Վարդովա հայերը կայնեցան աղաղակեցին մեկէն, թե կաղաչենք մի հանեք բանտեն, ոչ ապաքէն մենք աղոնց վրա բողոքագիր տուած ենք արդեն, որ մեկիս աղջիկը կամ հարսն են պղծեր, որ մեկիս բռնի տուգանք, փարա, հաց, ոչխար և այլն առեր, մեկիս գոմեշներն են սատկացուցեր և այլն, և այլն: Եվ խնդրեցին ալ, որ ոչ միայն զանոնք չարձակեն, այլ Նադոն, Մըահեն և Իպոյի եղբայրն ալ բերել տան ու բանտարկեն: Դրանով դատն ավարտուեց: Հայերը բողոքում են Կ. Պոլիս: Շափեղ աղան, այդ լսելով, կերթա կնստի հայերուն վրայ իր ներկայութեամբ գրել կուտա...

ա) ... Սուլեյմանի Ալին Գոնդեմիրու Վարդանի աղջիկը՝ Գուլեն, կյափշտակե տանի, տաճկեցնե, իրեն կին կառնե...

բ) ... Դարձեալ Գոնդեմիրու միջիէն Թորոյի Մկրեի եղբոր աղջիկը կփախցնե քիւրդ մը ու ասոր տաճկեցուցած ու իրեն կին ըրած է:

գ) ... Ղավազ անունով քիւրդ... սուրբ Զատիկի ճրագալոյսին կերթա Գոնդեմիրու ժամը ու, երբ ժողովուրդը ու կնիկները կհաղորդուին, կերթա քահանայի ձեռքէն սուրբ սկիհը կառնե, իր ձեռքով սրբութիւնը կոտորելով ուրիշներու բերանը կղնէ՝ հագնելով պատարագիչի ըրածը...

դ) ... Այս Ղավազը՝ գոնդեմիրցւոյ, Մըահեն՝ պասքանցւոյ և Ալին ու Քընդոն սլիքանցւոյ մէջ թմբուկ զարնել կուտան, ու իրենք նըստած հրապարակի մէջ կհրամեցնե գեղի ամեն աղջիկ, հարս ու կնիկ գան պար խաղան, որին որ հավնեն գիշեր իրենց քով պետք է երթան և մեկը իր աղջիկ կամ հարս կամ կնիկ չղրկե պարելու, անմիջապէս պետք է մեկ լավ ոչխար տա աղային պատիւ, ապա թե ոչ...¹:

Պատմարան, քաղաքական գործիչ Զիա փաշան Օսմանյան կայսրութիւնում տիրող իրավիճակի մասին.

– Երկիրն այնքան է քայքայված, որ Անատոլիան նման է հրդեհված վայրի: Ամենուրեք կործանված գյուղեր, ավերակներ: Պատճառը ծանր հարկերն ու դրանց գանձման եղանակն է, վախառութիւնն ու կամայականութիւնները... Շատ տեղերում բնակչութիւնը սնվում է

¹ Գյուտ Աղանյանց քէն., Դիվան Հայոց պատմութիւն, գիրք ԺԳ, Հարստահարութիւնները Տաճկա-Հայաստանում (Վավերագրեր 1801–1888), Թիֆլիս, 1915, էջ 94–105:

ծառի կեղևով ու խոտաբույսերով: Եթե թանգիմաթից առաջ ամեն մի զավառ պատկանում էր մի քանի ավագատիրոջ, ապա ներկայումս դրանք պատկանում են ազդեցիկ դեմքերին և մեջլիսի անդամներին: Այդ մարդիկ չահագործում ու ճնշում են ժողովրդին իրենց քմահաճույքով... Հարկերի հավաքման կապալային ձևը բառացիորեն քայքայում է ազգաբնակչութիւնը, քանի որ հարկ հավաքելու իրավունքը գնած անձի կամքով տասանորդը դառնում է 1/8, 1/7 և նույնիսկ 1/5 մասը... Ոովհետեւ գործունեութիւն հիմնական սկզբունք էր ընտրված այն դրույթը, թե փոխառութիւնից Օսմանյան պետութիւն համար ոչ կյանք կա և ոչ էլ փրկութիւն, փոխառութիւնները փակվում են նոր փոխառութիւններ վերցնելով, ինչը նշանակում է փորել նոր, ավելի մեծ փոսեր երկիրը թաղելու համար: Ֆինանսական գործունեութիւններն այսօր այնպիսին են, որ պետական գանձարանը հարկադրված է ամեն տարի իր եկամուտների 1/3-ը, հնարավոր է նաև կեսը, առանձնացնել փոխառութիւնների տոկոսները վճարելու և այդ գումարի գրեթե կեսը տալ արտասահմանին, նույն ժամանակ հիմար կառավարման հետևանքով կայսրութիւնը սնանկացած է, իսկ ժողովուրդը՝ դժբախտ¹:

Հեյդար փաշայի ձառը Մշո մեջլիսում Ս. Հովհաննու վանքի 1868 թ. կողոպուտի կապակցութեամբ.

... Ինչ գեշութիւն, որ Մշո մէջ կը գործուի, բնավ տեղ մը չը գործուիր... Եթե ճշմարիտն կուգեք, ո՛վ մեծիս, վանքի գոյքերը ձեր մէջն են եղողներու տուներ եկեր պառկեր, ուրեմն ձեր մէջն են ընկեր կա անոնց հետ: Ինչ կընեք ըրեք, դուրս հանել տուեք, ապա թե ոչ՝ Մշո երեսիկ տաճիկներդ յանցավոր կը լինիք²:

Զիա փաշան Օսմանյան կայսրութիւն հանգուցյալ վիճակի մասին.

– Եվրոպացիները Օսմանյան կայսրութիւնը նայում են իբրեւ հանգուցյալի: Չնայած անհնար էր վերջինին վերադարձնել կյանք՝ համենայնդեպս, փորձում են պաշտպանել այդ դիակին՝ վախենալով, որ հակառակ դեպքում Ռուսաստանը կգավթի Ստամբուլը, նաև նրա համար, որ չեն կարողանում ոչինչ դնել նրա տեղը³:

¹ Karal E. Z., Osmanlı Tarihi, Cilt VII, Ankara, 1984, s. 246–247.

² Գյուտ Աղանյանց քէն., Դիվան Հայոց պատմութիւն, գիրք ԺԳ, Հարստահարութիւնները Տաճկա-Հայաստանում (Վավերագրեր 1801–1888), Թիֆլիս, 1915, էջ 138:

³ Петросян Ю. А., Младотурецкое движение, Москва, 1971, стр. 133.

1867 թ. Ֆուադ փաշան ուսու դեսպան իգնատեին հստակ ձևով ասել է.

– Կայսրության փրկությունը կայանում է միայն մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների միաձուլման, այլ ոչ թե նրանց զուգահեռ գոյակցության մեջ¹:

Ֆուադ փաշա.

– Մենք չենք կարող թույլ տալ, որ քրիստոնյաները լայնորեն ներգրավվեն Բարձր Դռանը ծառայելու մեջ, քանի որ նման պարագայում քրիստոնյա տարրերը չեն հապաղի թուրքերին մղելու երկրորդական պաշտոններին²:

Ջիա փաշա.

– Օսմանյան ազգ հասկացությունը նկատի ունի օսմանահպատակ բոլոր ժողովուրդներին³:

Թուրք հասարակական գործիչ, «Մեշվերեթ» թերթի գլխավոր խմբագիր Ահմեդ Ռիզան նշում է.

– Մեր քաղաքական իմաստուններին Ալլահը չի պարգևել ոչ խելք, ոչ փորձ: Նրանք համոզված են, որ մուսուլմանների հիմնական և սրբազան պարտականությունն է ոչնչացնել անհավատներին ամբողջ աշխարհում⁴:

Թուրք գրող Ռեշադ Նուրի Գյունթեկինը գրում է.

– Ուն էլ որ հարցնես, լինի բնիկ թե եկվոր, իր հոր, եղբոր, որդու, ամուսնու մասին ձեզ կասի, որ նրանք զինվորներ են կամ սպաներ, մի խոսքով, զինվորական: Նույնիսկ ուսուցիչներից շատերը գնդի իմամներ կամ մուֆթիներ են: Մի խոսքով, այստեղ ամբողջ ժողովուրդն այս կամ այն ձևով կապված է բանակի հետ⁵:

¹ АВГПР, ф. Канцелярия, 1867, д. 31, л. 489.

² Fuad Pasha, Political Testament, London, 1876, p. 242.

³ Kurgan S., Ziya Paşa: Hayatı, Sanatı, Eserleri, İstanbul, 1962, s. 121.

⁴ ՀՀ ԳԱ Ինֆորմացիոն բյուրոն, 1984, թիվ 7, էջ 38:

⁵ Голобородько И., Старая и новая Турция, Москва, 1908, стр. 5.

Հայտնի հասարակական, քաղաքական գործիչ և գրող Նամըք Բենալը իր «Երազ» ստեղծագործության մեջ գրել է.

– Մեր մարգարեն ծառայում էր աշխարհին իր դաշույնով: Մենք նույնպես պետք է գնանք այդ ճանապարհով... Աշխատենք ապացուցել, որ մենք պատկանում ենք օսմանյան ժողովուրդին, որը ամբողջ աշխարհին ստիպում է դողալ իր առջև... Յուզց տանք գյավուրներին մեր ուժը, պատճառենք այդ հաճույքը մարգարեին¹:

Նամըք Բենալ.

– Մեր երկրում ապրող բոլոր տարրերը աշխարհագրական առումով հանդիսանում են նույն մարմնի տարբեր մասերը... Դրա համար էլ լրիվ կորցրել են առանձին գոյություն ունենալու ընդունակությունը և անկախության հասնելու համար անհրաժեշտ ուժերը... Հայերի բնաջնջումը արմատապես կլուծի Արևելյան հարցը...²:

Նամըք Բենալ.

– Օսմանցիներից թե՛ թվով և թե՛ ընդունակություններով առաջին տեղը գրավում են թուրքերը, որոնք ունեն այնպիսի առավելություններ, արժանիքներ ու որակներ, ինչպիսիք են ճանաչողական ընդունակություններն ու լայնախոհությունը, բնածին զսպվածությունը, դիմացկունությունն ու խոհեմությունը³:

Կայսրության բոլոր ազգերի «միասնության» պահպանման խնդիրը գտնվում էր մեծ վեզիր Ռեշիդ փաշայի ուշադրության կենտրոնում: 1846-ին ելույթ ունենալով Ադրիանապոլսում քրիստոնյա համայնքների ղեկավարների առջև՝ նա հետևյալ կերպ փորձեց հիմնավորել դրա պահպանման անհրաժեշտությունը.

– Կրոնի և ազանդի տարբերությունը յուրաքանչյուր անհատի գործն է, այն չի արտացոլվում նրա իրավունքների վրա... Մենք բոլորս միևնույն կառավարության հպատակներն ենք, ծնվել և մեծացել ենք միևնույն երկրում: Պետք է միշտ հիշել դրա մասին...⁴:

¹ Kaplan N., Namık Kemal: Hayatı ve Eserleri, İstanbul, 1948, s. 42.

² Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Հ. I, 2008, Երևան, էջ 47:

³ Kuntay M., Namık Kemal Devrinin İnsanları ve Olayları Arasında, İstanbul, 1956, s. 186:

⁴ Şakir Z., Büyük Türk inkılabı, Gilt I, İstanbul, 1956, s. 92.

1858 թ. Թուրքիայում Ֆրանսիայի դեսպան Տուվենելին ուղղված նամակում հայտնի քաղաքական գործիչ Ալի փաշան գրել է.

– Եթե մեր մեջ դեռ կա ժողովուրդ, որը կարող է ղեկավարել ու՝ իշխաններին և ծառայել... Հավասարության համար կապող օղակ, ապա դա օսմանյան ժողովուրդն է (այսինքն՝ թուրքերը)...¹:

1862 թ. Փարիզում գտնվող Ջեմիլ փաշային ուղղված նամակում Ալի փաշան արտահայտում է հետևյալ միտքը.

– Ես կարծում եմ..., որ միայն թուրքերը կարող են կապող օղակ ծառայել կամ... ցանկություն ունեն հաստատել իրենց իշխող դիրքը ուրիշների վրա... Միայն դա կարող է փրկել կայսրությունը մշտական քաոսից և քաղաքացիական պատերազմից²:

Ալի փաշա.

– Ամեն մի համայնք (միլլեթ) կազմում է առանձին ամբողջություն, որը տարբերվում է իր ոգով, լեզվով, սովորություններով, ձգտումներով: Նրանց զարգացումը կարող է դուրս գալ վերահսկողությունից... Կառավարությունը պետք է ամեն մի համայնքին իրավունք տա զբաղվել միայն և միայն կրոնական հարցերով...³:

Ալի փաշա.

– Յուրաքանչյուր ոք, ով ուզում է ծառայության մտնել, պետք է կարողանա թուրքերեն գրել և կարդալ: Պետությունը անպայման պետք է թուրքական լինի. կայսրությունում միայն մի ժողովուրդ կա, որը կարող է մյուսներին կառավարել...

Մեր բոլոր հպատակ քրիստոնյաների դաստիարակությունը իրականացվում է Օսմանյան կայսրության նկատմամբ թշնամության հիմքի վրա... Բոլոր հպատակների ձուլումը հանդիսանում է միակ միջոցը, որն ի վիճակի է մեզ փրկել սպառնացող վտանգից⁴:

Ալի փաշա.

– Կայսրության տարբեր ժողովուրդների միմյանց հակասող չա-

¹ Thouvenel L., Trois années de la Question d'Orient, 1856–1895, Paris, 1897, p. 317.

² Lewis B., Ali Pasha on Nationalism, – Middle Eastern Studies, 1974, № 10, p. 71.

³ Ali Pasha, Testa, est politique, – La Revue de Paris, 1910, t. 3, № 9, p. 106.

⁴ Ali Pasha, Memorandum, B. 1, Leipzig, 1877, s. 84–88.

հերը վկայում են, որ միավորող ուժ կարող են լինել միմիայն թուրքերը¹:

Նամըք Քեմալ 1872 թ.

– Օսմանյան կայսրությունը հիմնված է կրոնական սկզբունքի վրա, եթե այդ սկզբունքը խախտվի, պետության քաղաքական գոյությունը կվտանգվի²:

«Նոր օսմանների» ներկայացուցիչ Ալի Սուլավի.

– Իրենց քաղաքական, ռազմական, պատմական և մշակութային դերով թուրքերը ամենահին և ամենաբարձրագույն ռասան են: Թուրքերեն աշխարհի ամենահարուստ և կատարյալ լեզուն է...

Թուրքերը պետք է լինեն կառավարող ազգ, քանի որ թե՛ ռազմական և թե՛ մշակութային ու քաղաքական առումով նրանք գերազանցում են բոլոր ժողովուրդներին և հնագույն ռասա են...

Մահմեդականները ոչ մի կերպ չեն կարող համաձայնվել, որ իրենց երեկվա գերիները (քրիստոնյաները) իրենց հանդեպ գերակշռություն ստանան: Նրանք կզնան ամեն ինչի դա թույլ չտալու համար. արյան գետեր կհոսեն...³:

Երիտթուրքական գաղափարախոսության ներկայացուցիչ Ջեմալ Նուրին իր «օսմանիզմի ապագան» գրքում գրել է.

– Իմ հրապարակած հոդվածներում և գրքիս զանազան գլուխներում նշել էի, որ օսմանիզմը մի ընդհանուր ազգային հասարակություն է, բոլոր տարրերի հավասար իրավական հիմունքներով: Անկեղծ ասած, օսմանիզմ ընդունողները օգտվում են ամեն տեսակի իրավունքներից: Իսկ նրանք, որոնք չեն ընդունում, կարող են միմիայն երկրի ներսում մարդկային և քաղաքացիական իրավունքներից օգտվել, այլ ոչ քաղաքական իրավունքներից... Հայերը կարող են իսկական, անկեղծ և էական օսմանցի դառնալ, նրանց չահավետությունը օսմանցիության մեջ է...⁴:

¹ Kuşner D., Türk Milliyetçiliğini Doğrusu (1876–1908), İstanbul, 1979, s. 6.

² Davison R., Reform in the Ottoman Empire, 1856–1876, Princeton, 1963, p. 226.

³ Karal E. Z., Osmanlı Tarihi, Cilt VII, s. 293; Акчам Т., Турецкое национальное «Я» и Армянский вопрос, Москва, 1995, стр. 50, 132.

⁴ Celal Nuri, Tarih-i İstikbal, İstanbul, 1913, s. 177, 180 (արարատառ):

Պատմաբան Շերիֆ Մարդին «Նոր օսմաններին» քաղաքականության մասին.

... Թուրքերի նման փառաբանմամբ դժվար էր կայսրության մյուս ժողովուրդներին համոզել, որ նոր պետությունում, ինչի կառուցմանն էին ձգտում «նոր օսմանները», իրենք կունենային թուրքերի հավասար իրավունքներ...

Ն. Քեմալն աստիճանաբար հեռանում էր պանօսմանիդմից և ավելի մեծ ուշադրություն դարձնում կայսրության բոլոր ազգություններին թուրքերի ղեկավարության տակ միավորելու խնդրին¹:

Թուրքական նորագույն շրջանի պատմաբան Թաներ Ակչամը իր «Թուրքական ազգային «ես-ը» և «Հայկական հարցը» գրքում բերում է մի երկխոսություն, որը տեղի էր ունեցել Փարիզում XIX դարավերջում և ապա տալիս է մեկնաբանություններ թուրք ազգի ձևավորման մասին.

- Դուք ո՞ր ազգին եք պատկանում:
- Մենք մահմեդականներ ենք:
- Բայց չէ՞ որ դա կրոնական պատկանելիություն է:
- Այդ ղեկավարում մենք օսմանցիներ ենք:
- Բայց դա ազգություն չէ...

Թուրք ազգի ձևավորումը մի առանձնահատկություն ուներ: Այն տեղի ունեցավ, երբ ղեռ գոյություն ուներ վերազգային Օսմանյան կայսրությունը, և թուրք գործիչները մտահոգ էին, որ նացիոնալիզմի գաղափարների տարածումը կարող է հանգեցնել կայսրության անկմանը... Երբ թուրքերն ունեին մնացած աշխարհի համեմատությամբ առավելության զգացում (մինչև 19-րդ դարի կեսերը), չգիտեին, որ իրենք թուրք են... Այս գիտակցությանը հանգեցին միայն այն ժամանակ, երբ ոչ լիարժեքության հոգեբանությունը լրիվ տիրապետեց նրանց: Փաստորեն, պանթուրքիզմը թուրքերի համար հանդիսացավ անելանելիության, անհուսության և ոչ լիարժեքության հոգեբանությունից անխուսափելի փախուստի արտահայտություն²:

¹ Martin S., The Genesis of Young Ottoman Thought, Princeton, 1962, p. p. 331–332.

² Акчам Т., Турецкое национальное “Я” и Армянский Вопрос, Москва, 1995, стр. 23–27.

Թուրք հայտնի բանաստեղծ Իզզեթ Մուլլայի որդի Քեչինզադե Մեհմեդ Ֆուադը, որը հայտնի քաղաքական և դիվանագիտական անձ է եղել Օսմանյան կայսրությունում (արտաքին և ներքին գործերի նախարար, մեծ վեզիր), ունի մի հայտնի կտակ, որն ուղղված է սուլթան Աբդուլ Մեջիդին: Ֆուադ փաշան կտակը գրել է 1869 թ. հունվարի երեքին՝ իր մահից մի քանի օր առաջ: Ահա այսպես է սկսվում կտակը.

– Թերևս մի քանի օր, գուցե միայն մի քանի ժամ ունեմ ապրելու և ցանկանում եմ դրանք նվիրել սուրբ պարտականություն հաջողությանը: Ես ցանկանում եմ իմ վերջին գաղափարները Ձերդ Վեհափառության ոտքերի առջև դնել. տխուր գաղափարներ՝ երկար ու մտահոգ կյանքի դառը պտուղներ:

Երբ այս գրությունը դրվի Ձերդ Վեհափառության աչքերի առջև, ես այլևս այս աշխարհում չեմ լինի: Դրա համար էլ Դուք ինձ պետք է ունկնդրեք վստահությամբ ու առանց կասկածի: Շիրիմից եկած ձայնը միշտ անկեղծ ու անխարդախ է:

Աստված Ձեզ վստահել է որքան փառավոր, այնքան վտանգավոր առաքելություն: Ձերդ Վեհափառությունը պետք է ճիշդ թափի հասկանալու համար մեծ իրականությունը և ցավալի ու դաժան ճշմարտությունը... Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է: Մեր դրացիների արագ զարգացումն ու առաջադիմությունը և մեր նախնիների անարբազրելի սխալները մեզ դրել են ներկա դժնդակ կացության ու պայմանների մեջ:

Այս սարսափելի աղետի առջևն առնելու համար Ձերդ Վեհափառությունը պետք է դեն նետի անցյալի կապերը, իր ժողովրդին առաջնորդի ղեպի նոր ճակատագիր... Ճակատագրական մի սխալ, աններելի պատրանք... Եթե մեր դրացիները չարունակեն մնալ այնպես, ինչպես մեր նախնիների օրերին, ապա մեր առաջվա գաղափարները գոհացում կստանային... Մեր Եվրոպայի դրացիները շատ հեռու են իրենց նախնիների վիճակից: Վերջին երկու դարերում բոլորն էլ սկսեցին առաջադիմել և բոլորն էլ մեզ ոտնակոխ արեցին: Վստահորեն մենք էլ զարգացանք ու առաջադիմեցինք: Ձեր գործնական կառավարությունը շատ ավելի լուսավորված է և շատ ավելի հույս է ներշնչում, քան մեր նախահայրերի կառավարությունները: Բայց դժբախտաբար այս լավ դիրքը շատ հեռու է ներկա դարի պահանջները գոհացնելու համար:

Ներկայումս Եվրոպայի մեջ ինքդ քեզ պահպանելու համար չպետք է պահանջես հավասարություն և նույնիսկ չպետք է փորձես գերազանցել քո նախորդներին: Ուրեմն մենք էլ պետք է հավասարապես մրցենք մեր ներկայիս դրացիների հետ: Իմ միտքը ավելի հստակ արտահայտելու համար ես պետք է ասեմ, որ Ձեր տերությունը, մահացու վտանգի հարկադրանքով, պարտավոր է ունենալ այնքան դրամ, որքան Անգլիան, այնքան գիտություն, որքան Ֆրանսիան և նույնքան զինվորներ, որքան Ռուսաստանը: Մեզ համար այլև ակնհայտ պետք է լինի ունենալ այնքան առաջադիմություն, որքան Եվրոպայի մյուս ազգերը ունեն: Մեր հրաշալի տերությունը պետք է անցնի եվրոպական բոլոր ուժերից: Սակայն այս անելու համար կա մի բան, որը բացարձակապես կարևոր է: Մենք պետք է փոխենք մեր բոլոր օրենքները՝ և՛ քաղաքական, և՛ պաշտոնական: Կան շատ օրենքներ, որոնք անցյալում օգտակար էին, սակայն ներկայի հասարակական պայմաններում անգործադրելի և անօգուտ են: Մարդ պետք է աշխատի, որ իր անձնական գործերը կատարելության հասցնի: Բարեբախտաբար մեր բնավորության այս առաջին օրենքը ամբողջությամբ համապատասխան է մահմեդական կրոնին... Իսլամական համակեցության մեջ ներառված են աշխարհի առաջադիմությունը և մարդկության կատարելությունը: Մեր կրոնով կարող ենք նպաստել հասարակական կյանքի զարգացմանը: Մյուս կրոնները կապված են մի վարդապետության և անփոփոխ սկզբունքներին, որոնք հակառակն են մարդկային մտքի առաջադիմությանը: Միայն իսլամն է զուրկ բոլոր խորհրդավոր ծուղակներից և անսխալական եկեղեցիներից Մեր սուրբ արդարությունը պահանջում է ծանոթանալ աշխարհին, զարգացնել մեր կարողությունները մինչև ծայրագույնս և փնտրել կրթության ու գիտության լույսը ոչ միայն Արաբիայի և մահմեդական ազգերի մեջ, այլև արտասահմանում՝ Չինաստանի և երկրագնդի հեռավոր մասերում: Պետք է մահմեդական գիտությունը ստորադասել օտար գիտություններից: Գիտությունը մեկն է...

Իսլամը բոլոր ճշմարտությունների և իմացությունների համաշխարհային բացատրությունն է... Նրա համար օգտակար մի խուզարկություն պետք է կազմակերպվի, ինչպես հեթանոսների, այնպես էլ մահմեդականների շրջանում: Թե՛ Մեդինան և թե՛ Փարիզը պատկանում են իսլամին... Ոչ մի բան մեզ չի կարող արգելել, որ Եվրոպայի կողմից հնարած նոր օրենքները և նոր դարմանները վերցնենք: Ես

ուսումնասիրել եմ մեր կրոնը՝ նրա ճշմարիտ հոգին իմանալու համար... Գլուխս տակավին մաքուր է կշռելու գաղափարական արժեքս և դեռ ժամանակը չէ լքելու այս կյանք ու ներկայանալու տիեզերքի գերագույն ատյանին... Ես վստահեցնում եմ Ձեզ, թե ինչ-որ եվրոպական երկրներ մեզ իբրև օրինակ են տալիս, դրա մեջ բացարձակապես ոչ մի բան չկա մեր հավատքին հակառակ... Պետք է ձեռնարկենք հսկայական (իսլամական) հաստատությունների կառուցումը, առանց որոնց ոչ մեկը չի կարող իր գոյությունը պահել ու պահպանել Եվրոպայում: Այս հեղաշրջումներով և նորություններով Դուք մեր դավանանքի սրբության առջև ոչ մի հակասական գործ չեք անի, այլ ընդհակառակը՝ մահմեդականության փառքին արժանի ծառայություն պիտի մատուցեք: Մի գործ, որ Ձեր նախնիները իրենց երազում անգամ չեն տեսել:

Վերածննդի այս մեծ գործը առաջ է բերում անթիվ հարցեր, որոնք իմ ուժերից վեր են... Բայց Ձերդ Վեհափառությունն իր կողքին ունի մի հզոր անձնավորություն (Ալի փաշա), որի բարեկամն ու եղբայրն եմ եղել ես... Աստված թող պահպանի նրան Ձեզ համար, որովհետև նա ուրիշներից ավելի լավ գիտի Ձեր տերության ապահովության գաղափարներն ու ճանապարհները: Ես երբեք Ձերդ Վեհափառությանը, առանց խորապես վստահ լինելու, խորհուրդ չէի տա... Վեհափառ տեր, աղաչում եմ տվեք նրան ձեր գերիշխանությունը և մի բարձր նախարարական պաշտոն: Տվեք այս Ձեր ծառային իմաստուն և գաղափարակից աշխատակիցներ: Ոչինչ նրան չի կարող այնքան հուսահատեցնել, քան այն, եթե ունենա այնպիսի մարդիկ, որոնք իրեն չեն հասկանա և որոնց հետ ստիպված պետք է աշխատի:

Այժմ մի քանի խոսք էլ ասեմ մեր օտար հպատակների մասին, որովհետև այստեղ է, որ մեր կառավարությունը հուսալքված տեսք է ստանում: Անկարող մաքառելու մեր թշնամիների դեմ՝ հարկադրված ենք արտասահմանում փնտրել բարեկամներ: Նրանց հզորանալով մենք մատնվում ենք անտանելի կացության: Պայմանները, որում գտնվում ենք, աննկարագրելի են: Այսօր, եթե ուզենանք պաշտպանել մեր ամենատարրական իրավունքը, պետք է ավելի մեծ ուժ բանեցնենք, ավելի ճկունություն և արիություն դրսևորենք, քան մեր նախահայրերը, որոնք կարիք ունեին թագավորություններ նվաճելու...

Մեր դաշնակիցներից Անգլիային միշտ առաջին զոհում պետք է դնենք: Նրա քաղաքականությունն ու դիվանագիտությունը այնքան

գորավոր են, որքան նրա հաստատությունները: Նա աներևակայելի ծառայություններ է մատուցել մեզ, և անհնար է հաշվել, թե ապագայում ինչքան է մատուցելու: Ինչ էլ պատահի աշխարհում, ամենահրաշալի անգլիական ժողովուրդը պետք է լինի՝ մեր առաջին և վերջին դաշնակիցը: Ես սիրով կուզեմ մի քանի նահանգներ կորցնել, քան Պոլսի նավահանգիստը տեսնել անգլիացիներից լքված...

Ֆրանսիան ասում է, թե մենք պետք է կարգավորենք ամբողջ ղեպքերը... որովհետև նա մեզ կարող է ոչ միայն ամենակարևոր ծառայությունը մատուցել, այլև՝ ամենամահացու հարվածը հասցնել: Այդ ասպետական ազգի մեջ ավելի չատ զգացում կա, քան հաշիվ: Նա հրապուրվում է մեծ գաղափարներով և փառքով նույնիսկ իր թշնամիների մոտ: Մեր միությունը այս մեծահոգի ժողովրդի հետ պահելու ամենալավ միջոցը նրանց գաղափարներին հետևելն է: Այն օրը, երբ Ֆրանսիան մեր պատճառով հուսահատվի, ապա ինքնուսույն ինքյան կրոնի թշնամական դիրք է կհակառակվի մեզ ու մեր շահերին և կսկսի մեզ կործանման տանել:

Ավստրիան չփոթություն է մատնված եվրոպական իր մասնավոր հետաքրքրությունների պատճառով և պարտավորված է ներկայումս Արևելքում իր դիրքը վերականգնել... Նա շատ մեծ սխալ արեց՝ Ղրիմի պատերազմին չմասնակցելով: Գերմանիայից բաժանվելով՝ նա ապագայում հստակորեն պիտի տեսնի այն վտանգը, որը պիտի գահյուսից: Ես վստահ եմ, որ այդ վտանգը ոչ միայն աղետաբեր է լինելու նրանց համար, այլև մեր տերության համար: Այնքան լավ է, որ Վիեննայում գորավոր և հեռատես քաղաքականություն է իշխում. Ավստրիան, բնականաբար, Տաճկաստանի (Թուրքիայի) դաշնակիցը պետք է մնա...

Պրուսիան, որը նմանապես չի միջամտել Արևելքի հարցերին, միայն աշխատում է միավորվել Գերմանիայի հետ: Բայց շատ հավանական է, որ միանալուց հետո... նա էլ միևնույն հետաքրքրություններն ունենա Արևելյան հարցերում, ինչպես որևէ եվրոպական պետություն... Աստված թող չնորհ անի, որպեսզի նա չստանա Ավստրիայի ավարները՝ առաջնորդելով մեր թշնամիներին, որ գան ու տիրեն մեր եվրոպական նահանգներին:

Վերջապես Ռուսաստանը՝ մեր տերության վաղեմի թշնամին: Այդ ուժի ղեպի Արևելք ծավալվելը մոսկովյան ճակատագրի կենաց-մահու օրենքն է: Եթե ես ռուս նախարար լինեի, ամբողջ աշխարհը տակնուվրա կանեի Պոլսը գրավելու համար (Ֆուադ փաշան աշխատել է

որպես ղեսպան Ռուսաստանում): Ուրեմն Դուք չպետք է զարմանաք և զանգատվեք Ռուսաստանի հզոր հարձակումներից: Այսօր էլ նա մեր դեմ է գործում, միայն ուրիշ ձևով. ձիշտ այն ձևով, ինչ մենք արեցինք հույների դեմ: Ռուսաստանի ծավալման դեմ անհոգ լինելու համար պետք է ունենանք մանկական վստահություն մեր ուժերի հանդեպ: Մենք չպետք է փորձենք վերակենդանացնել մեր հին պատմությունը, այլ հարգանք ընծայենք՝ նոր և անդիմադրելի անհրաժեշտություններին, որոնք նոր գիտություններ ու գաղափարներ են ներշնչել եվրոպայի բոլոր ժողովուրդներին: Պետք է Մեծից ի վեր Ռուսաստանը աներևակայելի աաջադիմություն է ապրել, նրա գնացքները շուտով կրկնապատկելու են ուժը... Ինձ վախեցնում է այն, որ եվրոպայի ժողովուրդները, ինչպես երևում է, կամաց-կամաց իրենց վարժեցնում են հրաժարվելու Ռուսաստանի գործերին ապագա միջամտությունից: Կենտրոնական Ասիայում տեղի ունեցածի նկատմամբ Անգլիայի անտարբերությունը ինձ վախեցնում և զարմացնում է... Սակայն ամենաշատը վախենում եմ Ռուսաստանում կատարվող կարևոր փոփոխություններից, որն է՝ Կովկասյան նահանգների խաղաղ դիրքորոշումը: Հեռավոր կասկած ունեմ, որ ապագայում Ռուսաստանի հարձակումները ուղղակիորեն կատարվելու են մեր Փոքր Ասիայի նահանգների վրա: Դրա համար էլ Ձերդ Վեհափառությունը պետք է չարչարվի անընդհատ բարեկամելու մեր ամենաանհրաժեշտ միջոցները: Ո՞վ գիտե, թե մեր դաշնակիցները միշտ ազատ լինելու են, որպեսզի ժամանակին մեզ օգնության հասնեն... Եվրոպայում մի ներքին վեճ, Ռուսաստանում մի Բիսմարկ փոխելու են աշխարհի դեմքը... Ես կառավարության շատ հիմար արարքներ հասկանում եմ: Սակայն մտածում եմ, որ ես թերևս ընդունակ չեմ եղել թափանցելու կառավարությունների անհատական իմաստությունների մեջ, որոնք անտարբերությամբ բռնապետություն են թույլ տալիս աշխարհում, իրենց հույսը դնելով 100 միլիոն բարբարոսների վրա և նրանց օգնելով՝ ունենալու քաղաքական նոր հնարավորություններ: Եվ վերջիններս ամեն անգամ կուլ են տալիս Ֆրանսիայի չափ տարածք ունեցող թագավորություն կամ նահանգ:

Ռուսաստանը ինձ մղում է մի քանի խոսք ասելու նաև Պարսկաստանի մասին: Այդ աղմկարար երկրի կառավարությունը միշտ չիա կրոնի կողմից խռովության մեջ է: Վաղ ժամանակներում նա եղել է մեր թշնամիների դաշնակիցը: Ղրիմի պատերազմից հետո նա կապ հաստատեց Ռուսաստանի հետ... Ներկայիս չահի թագավորությունը

կախված է Պետերբուրգի կեցվածքից: Քանի դեռ չափի կառավարությունը Բ. Դոան հետ կապված չէ և տկար ու նվազ ուժ է, երբեք չի համարձակվի մեր դեմ կոխվ մղել: Իսկ եթե Ռուսաստանը միջամտի մեր գործերին, անկախ նրանից, թե ինչ ջանքեր կպահանջվեն, մենք պետք է բուժենք Պարսկաստանին, նրա քաղաքական կախումները և դեռ ավելին՝ նրա կույր նախանձր...

Մենք պետք է դասենք նրան մեր ամենամեծ թշնամիների շարքին:

Մեր նյութական աղքատներն ավելացնելով՝ Բ. Դուռը կստանա բարոյական իմաստ կամ ավելի գոհացում և պահելով իր իրավունքը՝ երկիրը կբախի բարբարոս բռնապետության՝ կովելով զանազան թեկնածուների դեմ, և ավելին՝ չըջապատված լինելով սուների բնակչությանը:

Այս կետի վերաբերյալ մեր հետաքրքրությունները լի են զանազան հարցերով և դժվարություններով, որոնք մենք միշտ գնահատել ենք, և միայն Արի փաշան կարող է Ձերդ Վեհափառությունը բացատրություններ տալ:

Զմոռանանք Հունաստանի մասին, որն իր մեջ հատուկ, բայց մի տաղտկալի գործիք է թշնամու ձեռքերում: Եվրոպացի բանաստեղծները, հնարելով այս պատրանք-թագավորությունը, մտածում են, թե իրենք կարող են կյանք տալ մի ազգի, որը վերջին 2000 տարիների ընթացքում մահացել է: Հուսալով, որ կկարողանան վերականգնել Հոմերոսի և Արիստոտելի երկիրը, նրանք կարողացել են հնարել մեկ-նարկը անիշխանության, ավազակության և ապստամբության:

Հույն ցեղի ոգին միշտ մեր դառը և հիմնական թշնամին կմնա... Հետևաբար մեր քաղաքականությունը գլխավորապես պետք է կայանա Հույներին մեր մյուս քրիստոնյաներից հեռացնելու և մեկուսացնելու մեջ: Սա շատ կարևոր է: Պետք է բուլղարացիներին հեռացնել Հունական իշխող եկեղեցուց, բայց չնետելով նրանց ուսման իր կամ էլ հոմեոսական կղերականների ձեռքերը: Զպետք է երբեք հանդուրժենք նաև Հայ Եկեղեցու միացումը Հունաղավանի հետ: Ես չտապում եմ ավելացնել, որ մեզ համար ամենալավ և անուրանալի քաղաքականությունը այն պիտի լինի, որ մենք պետությունը բոլոր դավանական հարցերից վեր դասենք:

Մեր համընդհանուր գործերում և մեր բոլոր ձգտումներում միայն մի խնդրի վրա պետք է ուշադրություն դարձնենք. դա մեր երկրի այլազան ցեղերի ձուլումն է: Առանց այս ձուլում-միացման մեր տեությունն պահպանումը ինձ ակնհայտ անհնարին է թվում: Հետև-

վաբար այս հսկայական տերությունը չի կարող ոչ հույներին, ոչ սլավոններին և ոչ էլ առանձին ցեղերի ու կրոններին պատկանել: Արևելյան տերությունը կարող է միայն Արևելքի հավաքական միությունը պատկանել:

Ուժեղ Գերմանիան, Ֆրանսիան իրենց 50-60 միլիոն բնակիչներով, Անգլիան՝ օժտված բնական զորությունով... Բոլոր այս մեծ ազգերը, իրապես, հարկադրված են շատ հաճախ պաշտպանել իրենց կարողությունը և օգտակար անհատականությունը: Սակայն մի Մոնտենեգրո, մի Սերբիա և մի Հայկական Թագավորություն, առանց իրենց կամ աշխարհին չնորհելու չնչին առավելություն, այլ բան չեն, եթե ոչ առասպելական պետություններ, թշվառ մնացորդներ մարդկության վաղեմի ցնցումից, նորանոր աշխարհակալների համար անխուսափելի ավարներ, մարդկային ցեղի վնասակար տարրեր և աշխարհի խաղաղությունը վտանգ սպառնացողներ:

Ներկա տերությունների սահմանադրություններում ամենակենսունակ տեսակետը մեծ ձուլումներն են: Ուրեմն, մեր պետության քայքայման առաջն առնելու համար և նրա անխախտ հիմքերը վերադնելու միակ միջոցը մեր բոլոր այլազան տարրերը՝ առանց դավանանքի ու ցեղի խտրականության, այդ գործի մեջ ընդգրկելն է:

Այստեղ սկսում ենք հանդիպել բավականին լուրջ դժվարությունների: Մեր քրիստոնյա ժողովուրդները շուտ միաթափվեցին այն շարժումից, որն իրենց ենթակաների տեղ դրեց: Նրանք պատրաստ էին նախկին ուսուցիչների տեղը գրավել: Մասնավորապես, հայերի վարձուները տիրակալական բնույթ ստացավ, սակայն ճիշտ կլինի, եթե նրանց եռանդը չափավորենք: Բնականաբար, լավագույնն այն է, որ քաղաքական ասպարեզը այնպիսիներին հանձնենք, որոնք անկեղծորեն կհետևեն մեր տերության միադավան սկզբունքներին: Մեր բոլոր քրիստոնյա ժողովուրդները, ընդհանրապես, ունեն երկու այլազան կրոններ. մեկը՝ բարոյական, իսկ մյուսը՝ քաղաքական: Նկատի առնելով բարոյական կրոնը՝ մեր կառավարությունը պետք է ամբողջությամբ ճանաչի, սակայն մյուս կողմից՝ պետք է շատ ուշադիր լինենք նրանց քաղաքական կրոնի հարաբերությունների նկատմամբ: Երբեմն տեսակետներ են մշակվում, որոնք մերժում են մեր գոյությունը:

Մի աստվածապաշտ փաշա համաձայն է Մովսեսի կամ Քրիստոսի օրենքներին, դա պատճառ չէ նրան պաշտոնադրվելու, բայց եթե այդ փաշան անտեսում է մեր երկրի միասնությունը, ոգևորվում է բյու-

զանդական տերությունները և կամ տենչում է կլիկյան Թագավորությունը ծառայել, այդ դեպքում դադարում է հավատարիմ ծառայելու և նրան պետք է վտարել...

Քաղաքացիների կյանքն ու սեփականությունը օրենքով ապահովելուց հետո Ձեր կառավարությունն իր պարտքը պետք է համարի կառուցել նորանոր ճանապարհներ: Այն օրը, երբ մենք այնքան չատերակալի կունենանք, որքան եվրոպական ազգերը, Ձերդ Վեհափառությունը աշխարհում առաջինը կլինի... Այստեղ կա մի ուրիշ հարց ևս, որը մեզ համար բացառիկ կարևորություն ունի, դա ժողովրդի կրթությունն է՝ միակ և ամենազորավոր հիմքը բոլոր հասարակական առաջադիմությունների, մշտական աղբյուրը՝ ամեն բարոյական ու նյութական մեծության: Բանակը, նավատորմը, վարչությունը՝ սրանք բոլորն էլ ամփոփված են նրա մեջ: Առանց այս հիմնական խարխալի... մեզ համար չկա ոչ անկախություն, ոչ կառավարություն, ոչ էլ ապագայի հույս...¹:

Օսմանյան կայսրություն, բարձրաստիճան պետական գործիչ, դիվանագետ Մեհմեդ Բյամիլ փաշայի նամակը սուլթան Աբդուլ Համիդին (1879 թ.).

– Ի՞նչ օգուտ ստացանք Ռումինիային, Սերբիային տված ինքնուրույնությունից կամ անիշխանությունից: Բոլոր դաշինքները ոտնակոխ արեցին, Վեհապետական լուծը խորտակելու համար բոլոր ջանքերը գործադրեցին: Բուն մեծ և հզոր թշնամուն չտեսած, իրենք թըշնամի դարձան, իրենց թույլ և ողորմելի զենքերը մեր դեմ շարժելու առաջին փորձը արեցին՝ դաշնակցած թշնամու հետ: Մեզ հպատակ եղողները դավաճանեցին ու մեզ վրա հարձակվեցին: Մեր դատավոր Եվրոպան ոչ միայն թույլ չտվեց մեր հաղթական զենքերը ուղղելու նրանց դեմ, այլև ծայրահեղ կողմնակալ մոտեցում ունեցավ բարբարոս ապստամբներին, որոնք զազանաբար սպանում էին մեր ձերբակալվածներին, քիթ ու ականջ էին կտրում... Եթե կայսրության եվրոպական մասում մեր ծոցում օձ տաքացրինք, ապա պետք է, որ նույն հիմարությունը անենք մեր ասիական Տաճկաստանում. խելոքությունն այն է, որ ջնջենք ու վերացնենք այն բոլոր տարածքները, որոնք մի օր կարող են մեզ համար նույն վտանգը ծնել և օտարների միջամտության համար առիթ տալ ու նրանց ձեռքին գործիք լինել... Հիմա գոնե Անգլիայի շահերը պահանջում են, որ Փոքր Ասիայի (մենք

և Անգլիան Հայաստան բառը ոչ միայն չենք ճանաչում, այլև այդ անունն արտասանողի կզակը կջարդենք) մեր երկրները զերծ մնան օտար միջամտություններից և միջամտության բոլոր առիթներից: Ուստի այդ սուրբ նպատակի համար պետք է և պետական շահն է պահանջում, որ կասկածելի բոլոր տարրերին անհետացնենք, որպեսզի ապագան ապահովենք: Ուրեմն այդ հայ ազգը վերացնենք, անհետացնենք ու անսերունդ թողնենք: Եվ դա գլուխ բերելու համար մեզ ոչինչ չի պակասում: Բոլոր գործիքները պատրաստ ունենք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ: Կրոնական պատերազմ կհայտարարենք և դուրին պատերազմ մի այնպիսի ազգի դեմ, որը ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան, երբ ընդհակառակը, մենք զենք էլ ունենք, զինվորություն էլ, և աշխարհի ամենամեծ ու ամենահարուստ տերություններից մեկը մեզ զինակից է և մեր Ասիական աշխարհի երաշխավորը: Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի, և քրիստոնյա Եվրոպան կրոնակից փնտրի ու թուրքական Ասիայում չկարողանա գտնել, մեզ հանգիստ կթողնի, և այդ ժամանակ կզբաղվենք ներքին գործերով ու բարենորոգումներով: Ի՞նչն է մեզ պակասում: Հողը: Միայն մեր Ասիայի տարածությունը գրեթե չորս անգամ Ֆրանսիայից մեծ է: Բոլոր տեսակի հարստություններ, բազմազան կլիմա, ամեն տեսակի բերք: Քաջ, պատերազմող և սակավապետ ժողովուրդներ, որոնք երբեմն ամբողջ աշխարհին սարսուղացրել են, փոխադարձ կապ, նյութական և ոչ նյութական տապալրով զինված կենտրոնական կառավարություն: Այն ժամանակ կկարողանանք մեր ձայնը բարձրացնել, այն ժամանակ կկարողանանք մեր հին փառքը կենդանացնել, մեր ֆինանսական վիճակը կարգավորել, մեր դատարաններն օրինավորել, արհեստները, գիտությունները ծաղկեցնել, Եվրոպայից փոխանակ դաս առնելու, նրան դաս տալ¹:

Սուլթան Մուրադ V-ի հրովարտակը Օսմանյան կայսրությունում բարենորոգումների անհրաժեշտության մասին.

Մեծ վեզիրի անունով նա գրում էր.

– Բարձրապատիվ վեզիրս Մեհմեդ Րիշտի փաշա.

Աստուածային նախասահմանությունամբ և բոլոր հպատակներուն հաւաքական փափաքովը մեր երջանկայիշատակ նախահայրերուն

¹ «Revue de Paris», 1^{er} novembre, 1896, "Русская мысль", 1896, N 11.

¹ «Փորձ», 21-ը հունիսի 1879 թ., Ծերենցի «Ազգային տեսություն» հոդված, էջ 200–211:

գահը բազմեցանք: Ձեր հաւատարմութիւնն ու կարողութիւնը փորձով ծանօթ ըլլալով մեզ, վերահաստատեցինք Ձեզ եպարքոսական պաշտօնին մէջ, ինչպէս նաեւ միւս նախարարներն ու բոլոր պաշտօնատարները վերահաստատած են իրենց պաշտօնին մէջ: Յայտնի է, թէ բաւական ժամանակէ ի վեր կառավարութեան ներքին և արտաքին գործառնութեանց մէջ առաջ եկած դժարութիւնները՝ յոռի տպաւորութիւններ ըրած են հանրային կարծիքին վրա ու անվստահութիւն ներշնչած, որուն հետեանքով երկիրը հողային և դրամական այլազան վնասներու և վրդովումներու ենթարկւած է: Ուստի՝ ամենէն առաջ անհրաժեշտ է երկրին բարենորոգութեան ձեռնարկել ու կառավարութեան ամբողջ հպատակներուն անդորրութիւնը և բարոյական ու նիւթական երջանկութիւնը ապահովել: Այս արդիւնքին հասնելու համար պէտք է երկրին վարչութիւնը արդար ու ամուր հիմի մը վրայ դնել, ինչ որ մեր փափաքն ու մտադրութիւնը եղած է միշտ: Հետեաբար Շէրի-ի տրամադրութիւնները գործադրելով հանդերձ, այնպիսի հաստատ օրէնքներ կազմեցէ՛ք, որոնք թէ՛ օրւան պահանջներու և թէ՛ ժողովուրդին ընդունակութեանը պատշաճին, և որոնց շնորհիւ մեր կայսերական ամբողջ հպատակները անխտիր կատարեալ ազատութիւն վայելեն ու առաջադիմութեան ճամբան բացւած ըլլայ բոլոր հպատակներուն առջև, որոնք սիրով միանան հայրենիքը, ազգն ու կառավարութիւնը պաշտպանելու գործին ու գաղափարին: Ինչ միջոցներ որ անհրաժեշտ են այս նպատակին հասնելու, նախարարներուն հետ խորհրդակցելով ծրագրեցէ՛ք և մատուցէ՛ք ինձ: Անհրաժեշտ ու կարևոր է այս նպատակին վրայ հիմնելով վերակազմել Պետական խորհուրդը, Արդարութեան, Հանրային Կրթութեան և Ելմտական նախարարութիւններն ու վարչութիւններն և ուրիշ պաշտօնէութիւնները: Այս բոլոր պաշտօնատուներուն բարեկարգութեանը պէտք է հսկել: Տէրութեան գործերը դժարացնող ամենամեծ խնդիրներէն մէկն ալ ելմտական գործերն են. հետեաբար պէտք է նախ պետութեան ելմտացոյցը ապահովութեան տակ առնել: Այսինքն անանկ օրէնքով մը կապել և այնպիսի խիստ հսկողութեան մը տակ առնել տէրութեան գանձը, որ ժողովուրդը վստահի, թէ ելմտացոյցէն դուրս ծախք պիտի չըլլայ բնաւ...¹:

¹ «Ժամանակ», 1908, թիվ 20:

Մի առիթով սուլթան Աբդուլ Մեջիդը Աբդուլ Համիդի մասին ասել է.

– Եթե մի օր այս լակոտը գահ բարձրանա, ապա կայսրութեան համար մի մեծ պատուհաս կղանա...¹:

Օսմանյան կայսրութեան գաղտնի ոստիկանութեան պետ Զիա բեյը սուլթան Աբդուլ Համիդ II-ի կյանքի մանրամասների մասին.

... Անհրաժեշտ է ասել, որ փաղիչահը, իրականում սերվում էր հայ մորից: Դրա մասին գոյություն ունեն բազմաթիվ երևակայական պատմություններ: Ստույգ աղբյուրներից հայտնի է, որ Համիդի մայրը նախկինում եղել է սուլթանուհի էսմէ հանումի պարուհին, որը ինքնակամ ընդունել է իսլամն իր մահից մեկ ամիս առաջ: Աբդուլ Մեջիդը՝ Համիդի հայրը, չէր շտապում ստիպել իր սիրելիին կրոնափոխ լինել: Այդ պատճառով էլ ապագա սուլթանը ծնվել էր հայուհի քրիստոնյայից, ինչքան էլ որ նա փորձեր հակառակը ապացուցել: Ատելով քրիստոնյաներին և հատկապես հայերին՝ ապագա սուլթանը չէր կարող չպահել լուսավոր հիշողություններ իր մոր մասին: Մոր հոգատարութեան շնորհիվ նա կենդանի մնաց և մեծացավ բավարարվածության մեջ: Մոր մահից հետո, որը փոքրիկ Համիդը գաղտնի սգում էր, նրա ճակատագիրը կտրուկ փոխվեց... Նա մեծանում էր մենակ քույրերի և եղբայրների մեջ, որոնք ուրախանում էին՝ ապագայի մասին չմտածելով: Դաստիարակվելով սուլթանի բազմաթիվ կանանցից մեկի մոտ՝ փոքրիկ Համիդը ամբողջությամբ առանձնացավ իր հասակակիցներից և կարծես ապրում էր ժամանակից դուրս: Եվ իսկապես, նրա դրությունը սուլթանի ընտանիքում նախանձելի չէր: Նայելով չըջապատող միջավայրին և ճշտելով իր համար կյանքի իմաստը՝ երիտասարդ թագաժառանգը սկսեց երազել անհնարին բաների մասին: Իր հոր՝ Մեջիդի մահից հետո սուլթան պետք է դառնար Մուրադը, որին տարիքային հերթականությամբ հաջորդելու էր Համիդը... Ոչ մի հույս չէր կարող լինել, բայց երազանքները նրան հանգիստ չէին թողնում... Պալատում ապրում էր սուլթանուհի Կադիյեն, որը երեխ թե Մեջիդի մայրն էր և որի նկատմամբ էլ Համիդը տածում էր ինչ-որ յուրահատուկ կապվածություն: Նրա առջև Համիդը բացվում էր՝ պատմելով, որ ինչ-որ ներքին ձայն տանջում է իրեն՝ ամբողջ ժամանակ կրկնելով, որ ինքը մի օր դառնալու է սուլ-

¹ Եղգճեան Գ., Աբդուլ Համիդ Բ., Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 10:

Թան: Տարված լինելով տարբեր սնահավատություններով և տալով մեծ նշանակություն տարբեր հրաչքների՝ սուլթանուհին հրավիրում է ինչ-որ չեյխի, որն էլ գուշակում է երիտասարդ արքայազնի ցանկությունները, և առանց որևէ խոսակցության հայտարարում, որ Ալլահին ցանկալի է նստեցնել Համիդին Օսմանյան գահին: Համիդը 34 տարեկան էր, երբ սուլթան դարձավ Մուրադ V-ը... 7 ամիս անց Մուրադին հանկարծակի հայտարարեցին խելագար, և ծեր չեյխի գուշակությունը կատարվեց: Այդ պահից սկսվում է թուրքական պատմության մեջ մի նոր շրջան... Երիտասարդ սուլթանը ամենից առաջ փորձում էր ազատվել իրական և երևակայական թշնամիներից: Վախենալով հետագա հեղաշրջումներից՝ Աբդուլ Համիդը ձգտում էր ամբողջապես ապահովագրել իրեն անցանկալի պատահականություններից: Կառավարման առաջին իսկ օրվանից էլ նա ամբողջ ուժով փորձում էր ապացուցել, որ չի սիրում քրիստոնյաներին և անխնա հետապնդում է նրանց: Դա պարզ էր, եթե ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ նրա ծագումը հայտնի էր չատերին: Ժամանակի ընթացքում Համիդը, ջանասիրաբար կատարելով իսլամի բոլոր ծեսերը, ստիպեց մոռանալ իր ծագման մասին... Նա միշտ վրստահ էր, որ ոսկու միջոցով կարելի է գնել ցանկացած մարդու, և եթե հանդիպում էին այդպիսիները, որոնց գնել չէր կարելի, զարմանում էր, բայց ամեն դեպքում չէր հավատում: Նույնիսկ հայտնի Բիսմարկին էլ չէր հավատում և անընդհատ շրջապատին հավաստիացնում էր, որ թուրքական լիրայով կփակի այդ գյավուրի բերանը... Հայտնի է, որ նրանք, ովքեր հավատարիմ էին կրոնին և խստորեն հետևում էին Ղուրանի կանոններին, գտնվում էին սուլթանի ուժեղ հովանավորության ներքո: Շատերը՝ ավելի ձիշտ մեծամասնությունը, օգտվում էր սուլթանի այդ թուլությունից և մզկիթը լցնում էր այսպես կոչված հավատացյալներով և գաղտնի հույս էին տածում, որ փաղիչահը կիմանա դրա մասին և կպարգևատրի իրենց: Սուլթանն էլ ամբողջ օրը անցկացնում էր ճարտարապետների և ինժեներների հետ՝ մտածելով այն տարբերակների մասին, թե ինչպես իր պալատը դարձնելու անմատչելի մի կառույց... Սուլթանն իր տունը ամբողջ էր դարձրել, ուր անհնար էր մտնել սովորական ճանապարհով: Երևի թե, միայն նավերի թնդանոթները կարող էին վնասել այդ բույնը: Անընդհատ անհանգստանալով իր կյանքի համար և կասկածելով յուրաքանչյուրին իրեն թունավորելու մեջ՝ Համիդը ստեղծել էր տարբեր պաշտոններ և

միշտ ստիպում էր ուրիշներին փորձել իր ուտելիքներն ավելի չուտ, քան ինքը կդիպչեր դրանց: Սուրճը եփում էին նրա առջև և փորձում էին նրա ներկայությամբ, նույնը տեղի էր ունենում ուտելիքի հետ: Վերջիվերջո, նա ստեղծեց յուրահատուկ աշխարհ, որը բոլորովին նման չէր նրան, ինչը գտնվում էր պալատի պատերից դուրս: Սովորաբար սուլթանն արթնանում էր առավոտյան ժամը 4-ին, լոգանք էր ընդունում և գնում էր իր աշխատասենյակ, ուր նրա համար պատրաստում էին սուրճ և ծխախոտ: Նա ուշադիր նայում էր ծխախոտի կույտին, ընտրում էր պատահականորեն մի քանիսը և տալիս էր մյուսներին: Համոզվելով վերջնականապես, որ թունավորված չէ, սուլթանը սկսում էր ծխել և չէր գցում ծխախոտը ձեռքից մինչև քնելը: Մոտավորապես ժամը տասին նախաճաշում էր և լսում քարտուղարների զեկույցները: Սուլթանն ուտում էր շատ քիչ, բայց ուտելիքը կույ էր տալիս գրեթե ամբողջությամբ, որի պատճառով էլ հաճախ էր ունենում մարսողական խանգարումներ: Վախենալով բժիշկներից՝ Համիդը բուժվում էր տնային պայմաններում, իսկ երբ պետք էր ինչ-որ դեղ խմել, նախ ստիպում էր պատրաստողին փորձել, ապա նոր համարձակվում էր խմել: Այսպիսի հանգամանքում դժվար էր թունավորել սուլթանին՝ չնայած ինչքանով ինձ հայտնի է, ոչ մեկը այդ մասին չէր էլ մտածում: Միակ դեպքը եղել է իմ առջև, երբ անպատասխան սիրուց վրեժով լցված մի կին ուզում էր վախեցնել սուլթանին, որպեսզի դրանով ապացուցեր իր սերը: Այդպիսի հաճույքի համար նրան գցեցին ծովը՝ ձկներին որպես կերակուր... Անընդհատ վախենալով արքունական դավաճանություններից՝ նա իրականացնում էր նախագուշակական միջոցներ և դրա շնորհիվ ամեն գիշեր փոխում էր ննջասենյակը՝ չնայած որ մթության հանդեպ վախը նրան հասցնում էր ինչ-որ անհասկանալի սարսափի: Գիշերը նրա համար իսկական փորձություն էր: Անքնությունը դարձել էր նրա համար սովորական երևույթ, և դժվար թե նա քներ 3-4 ժամ: Սրա հետ մեկտեղ օրվա ընթացքում սուլթանը պարգևատրում էր պահակներին, քանի որ նրանց կաշառելով՝ հնարավոր էր դավաճանություն կատարել: Գանձապետերն ինձ ասում էին, որ թիկնազոր պահելը ամեն գիշեր արժենում էր 10 հազար ուլուլի, ինչն անհավանական էր, եթե չիմանայինք սուլթանի բնավորությունը: Այս միջոցներով նա իսկապես անհնարին էր դարձնում թիկնազորին կաշառելը, և չէր գտնվի մի մարդ, որը կվտանգեր իրեն դավաճանու-

Թյան փորձ կատարելու համար... Ի միջի այլոց, հետաքրքիր էր այն չշուկը, որը տարածվել էր երկրով մեկ, սուլթանի նմանակի վերաբերյալ: Անկեղծ ասած՝ նրանք մի քանիսն էին: Քիչ չէր այն հայերի թիվը, որոնք սուլթանին նման լինելու պատճառով մահապատժի էին ենթարկվել: Բայց և այնպես, հենց հայերից էր հնարավոր առանձնացնել Համիդի նմանակներին: Դրանով հասկանալի է նրա անհամատեղելի ատելությունը այդ ազգի նկատմամբ...

Սուլթանի կյանքի մասին պատմելը չափ դժվար է, քանի որ նա առանձնանում էր զարմանալի տարբերություններով, այն իմաստով, որ փորձում էր պաշտպանել իրեն: Այստեղ երևում էր փաղիչահի ողջ գաղափարը, որ ոչ մի բանի մասին չէր մտածում այնպես, ինչպես իր անձի մասին... Ընդհանրապես Համիդի կյանքի մասին կարելի է գրել մի ամբողջ հատոր...¹:

Արդուլ Համիդ II-ի գահակալական ճառից (10-ը սեպտեմբերի 1876 թ.).

... ձիշտ է, որ կայսրության ներկայումս ապրած ճգնաժամի աղբյուրներն ու պատճառները բազմազան են և արտահայտվում են տարբեր ձևերով: Սակայն որ տեսակետն էլ քննության ենթարկենք, բոլորն էլ նույն խնդրին են հանգում՝ օրենքների անբավարար գործադրում, իսկ օրենքները բխում են Շերիի բարձրագույն պատվիրաններից: Դրանք կազմում են կայսրության հիմնական սկզբունքները...

Եթե մի որոշ ժամանակ ի վեր վարչական ու տնտեսական կացության մեջ զգալի են անկանոնություններ, եթե կառավարության վարկի հանդեպ հասարակական կարծիքը նպաստավոր չէ, եթե մինչև օրս դատարանական ատյանները չկարողացան երաշխավորել անձի իրավունքները, եթե մինչև այժմ հնարավոր չեղավ չահագործել մեր երկրի տնտեսապես շահավետ բոլոր աղբյուրները՝ երկրագործական, արդյունաբերական և այլն... Եթե, վերջապես, իրադարձությունների ու հանգամանքների անընդհատ փոփոխությունների հետևանքով, հոգուտ երկրի ձեռնարկված միջոցները՝ առանց բացառության, ապահովելու մեր բոլոր հպատակների համար ազատության կենսական երաշխիքներ, չհասան կատարելության և ոչ էլ իրենց նպատակին, չնայած դրանք անկեղծ մղումներից էին ծնված,

¹ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 201–204.

այս բոլորի պատճառը մեկն է՝ օրենքների ոչ օրինապահ գործադրումը:

... Դեպի առաջադիմությունը մեր ժողովրդի ունեցած առանձնահատուկ ընդունակությունը պարտավորեցնում է զարկ տալու ուսման և կրթության տարածմանն ու համընդհանուր դարձնելուն: Սա մեզ համար ամենակենսական և ամենաանհրաժեշտ հարցն է:

... Բացի այդ, պետք է անմիջապես ձեռնամուխ լինել գավառների տնտեսական և դատարանական բարենորոգումներին, որպեսզի իսկապես ստեղծվի բնականոն կացություն:

... Ազգիս փրկությունը տեսնում եմ Սահմանադրության մեջ¹:

Արդուլ Համիդ II-ի հրովարտական ուղղված իր հպատակներին.

— Իմ միակ փափագն ու մտածմունքն այն է, որ բոլոր հպատակներս վայելեն ազատության, անդորրության և արդարության բարիքները...²:

Թուրք հեղինակ Ջեմալ Բարքերն իր «40 տարի արտաքին գործերի հիշատակումներ» գրքում գրել է.

— Ոչ մի նախարար իրավունք չունի պալատից հեռանալիս որևէ մեկի հետ տեսակցել... Իրենց հատկացված «պալատական կառքով» կարող էին միայն ելքից իրենց ապարանք գնալ և հակառակը... Մի օր արտաքին գործերի նախարարը Բ. Դուռ գնալիս անհրաժեշտ պետքի համար կառքը կանգնեցնում է և մտնում մի պետքարան: Հաջորդ օրը Համիդը կանչում և բացատրություն է պահանջում, թե ինչու է կառքը պետքարանի առջև կանգնեցրել: Ամեն ինչից քաջատեղյակ լրտեսները արդեն տեղեկացրել էին սուլթանին այս արտակարգ դեպքի մասին: Եթե նախարարներից որևէ մեկն իր ապարանքից գնար որևէ այլ տեղ, ապա իր գրպանում պետք է ունենար արքայական մասնավոր հրամանագիր³:

1876 թ. դեկտեմբերի 23-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սաֆեթ փաշան մի ծանուցագիր է ուղարկում սահմանադրության ընդունման մասին իր դեսպաններին, ուր ասվում էր.

¹ Եազճևան Գ., Արդուլ Համիդ Բ., Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 135–136:

² Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 120:

³ Եազճևան Գ., Արդուլ Համիդ Բ., Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 329–330:

– Մահմեդական ու քրիստոնյա ժողովուրդները միևնույն զգացմունքով և հույսով են համակված... Այս նոր հաստատություն չնորհիվ Օսմանյան կայսրության մեջ այսուհետև ազատություն, հավասարություն և արդարություն պետք է թափափորի, որն էլ քաղաքակրթության հաղթանակն է: Սահմանադրությունը մի դատարկ խոստում չէ, այլ մի իրական և ճշգրիտ գործ, որը սեփականություն է դառնում բոլոր օսմանցիների համար և որը կարող է դադարել ազգի և միապետի միացյալ կամքով...¹:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սաֆեթ փաշայի նամակը Թուրք դեսպաններին.

– Ոչ մի խոչընդոտ չի կարող արգելել, որպեսզի մենք իրականացնենք խոստացված բարենորոգումները՝ առանց նահանգի, կրոնի և դասակարգի զանազանություն: Մենք բողոքում ենք այն ստորագրող խնամակալության դեմ, որը եվրոպան ուզում է մեր վրա դնել²:

Մեծ վեզիրի և սահմանադրական չարժան առաջնորդ Միհդատ փաշայի նամակը սուլթանի առաջին քարտուղարին.

– Այն ժամանակ, երբ մենք, աշխատում ենք անհապաղ ի կատար ածել բազմաթիվ կայսերական ֆերմաներով խոստացված այն բոլորը, ինչը որ անմիջապես իրագործել է և ահա սուլթանն անցյալ օրը հրամայել է, որ ոչ մահմեդական աշակերտներին զինվորական զբաղրոց չընդունեն: Սահմանադրության այս կարևոր կետը, որի իրագործմանը բոլորը սպասում են, սկզբից խախտելը և արգելելը մեզ չափազանց վիշտ է պատճառում...³:

Մեծ վեզիրի գրության պատճենը, ուղղված արդարադատության և ֆինանսների նախարարություններին, ոչ մահմեդական հպատակներից զինվորական հարկ գանձելու մասին.

Զինվորական հարկի գանձումը, որը նշանակված է ոչ-մահմեդական բնակչության համար, չի կատարվում անհրաժեշտ պայմաններ-

¹ Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 113:

² Նույն տեղում, էջ 184:

³ Նույն տեղում, էջ 217:

րով, որի համար էլ զինակոչիկների մեծ մասը դուրս է մնում հաշվարկից: Այս առթիվ, ֆինանսների նախարարությունը, որպեսզի ապահովի (զինվորական հարկի) գանձումը, նախաձեռնեց անհրաժեշտ միջոցառումներ: Տվյալ հարցը քննարկվեց նաև նախարարների հատուկ խորհրդում:

Ձեռնարկված միջոցառումները հետևյալներն են:

«Մահմեդականները զինապարտ են համարվում 20-ից մինչև 40 տարեկան, իսկ 20-ից մինչև 40 տարեկան ոչ մահմեդականները, զինվորական ծառայության փոխարեն հարկատու են լինելու 5,000 դուրուշով, որը բաժանվելու և գանձվելու է 180-ից մեկը հաշվով: Ոչ մահմեդականներից այս գումարի գանձումը այսուհետև կատարվելու է պետական հարկահավաքների կողմից: Եթե վերակազմված զինվորական ծառայությունը բոլոր հպատակների վրա տարածվեր հավասարապես, ապա, հասկանալի է, որ անհրաժեշտություն չէր զգացվի զինվորական հարկ գանձելու ոչ մահմեդական բնակչությունից: Այսուհանդերձ, ֆինանսական դժվարություններից ելնելով, մինչև վերոհիշյալ որոշումը ուժի մեջ մտնելը, անհրաժեշտություն է զգացվում զինվորական հարկ գանձելու հաշվարկից դուրս մնացած զինապարտներից:

Ի միջի այլոց, մի ժամանակ զինվորական նման ծառայության հետևանքով (այսինքն՝ 20-ից մինչև 40 տարեկան) զինվորական հարկի գանձումը խիստ նվազեց, որը և դժվարության տեղիք տվեց: Այս կապակցությամբ հոգևոր համայնքների առաջնորդների հավանությունը, առաջարկվեց զինվորական ծառայության հարկատվությունը բաժանել մահմեդական զինապարտների կարգ ու կանոնով, այսինքն՝ արական սեռի 180-ից մեկը հաշվով: Իսկ ոչ մահմեդական հպատակները ծառայության փոխարեն հարկատու էին 5,000 դուրուշով: Ինչ վերաբերում էր զինվորական հարկին, ապա այն գանձվում էր բոլոր ոչ-մահմեդական հպատակներից, բացառությամբ հոգևոր անձանցից, հիվանդներից ու աղքատներից և այն մարդկանցից, որոնք չէին հասել 15 տարեկան հասակին և կամ անցել էին 75-ը: Հոգևոր համայնքների առաջնորդները զինվորական հարկի բաժանման և նշանակման ժամանակ պետք է հաշվի առնեին զինապարտի նյութական վիճակը:

Զինապարտության այդ ձևը հավանության էր արժանացել նախարարների խորհրդում և այնուհետև վավերացվել բարձր ֆերմա-

նով, որը և հանձնվել էր պաշտոնական անձանց, համայնքի ղեկավարներին, որպեսզի նրանք օժանդակեին գործադրելու համար:

Այժմ, եթե վերոհիշյալ ձևը նորից տարածվի զինապարտների վրա (այսինքն՝ 20-ից 40 տարեկանների վրա), ապա, այդ կնշանակե՞ր կրկին վերադառնալ այդ որոշմանը, որը մի անգամ արդեն փորձով հաստատվել է: Այսպիսով, նկատի ունենալով, որ այժմյան գործող կարգը արդեն հավանություն է արժանացել ոչ-մահամեղական առաջնորդների կողմից, ուստի այն մնում է ուժի մեջ և այսօր:

Բայց և այնպես, զինվորական հարկի բաշխման և գանձման ընթացքում, համայնքի ղեկավարների շրջանում, առաջ էին եկել մի շարք չարաչառումներ: Այսուհետև այդ չարաչառումները կանխելու համար՝ անհրաժեշտ է կիրառել հետևյալը: Զինվորական հարկի բաշխումը և գանձումը կրկին կատարվելու է համայնքների կողմից, սակայն բաշխման ցուցակների գումարը չպետք է անցնի պետության կողմից նշանակված գումարից: Բացի դրանից, տվյալ ցուցակի մի պատճենը ցուցադրվելու է գյուղերում, թաղամասերում, եկեղեցիներում կամ այլ հարմար վայրերում, որպեսզի գյուղացիները և (քաղաքի) բնակիչները ծանոթանան դրա բովանդակությանը: Ցուցակներում նշված զինապարտներից բացի, ոչ ոքից հարկ չի գանձվելու: Եթե ցուցակում նշված զինապարտներից մեկը հրաժարվի իրեն բաժին ընկած գումարը վճարելուց, ապա, համայնքի ղեկավարները դիմելու են պետական հարկահավաքներին, որոնք գանձելու են հարկը՝ գործող ընդհանուր օրենքի հիման վրա:

Այս կանոնը տարածվում է նաև այն զինապարտների վրա, որոնք հաշվարկից դուրս են մնացել:

Այս որոշումը հավանության է արժանացել նախարարների խորհրդում և վավերացվել Նորին Մեծություն փառիչահա՛հ հրամանագրով, իսկ նրա պայմանները հաղորդվելու են արդարադատության և պետական գանձարանին, որպեսզի օժանդակեն դրա գործադրմանը¹:
1297 Սաֆեր, 27 (1879 թ. հունվար 10)

Սուլթան Համիդ II-ը երկրում տիրող կաշառակերություն մասին.

– Ես գիտեմ, որ իմ շուրջը բոլորը թալանում են և նույնիսկ հսկայական հարստություն են դիզում՝ շորթումներով ու կաշառքով: Բայց թուրքիայում մարդ չկա, որը եթե հանգամանքները թույլ տան, չթա-

¹ Փափազյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահամեղական ժողովուրդների մասին 1839–1915 թթ., Երևան, 2002, էջ 178–180:

լանի: Ես նախընտրում եմ իշխանություն ղեկին թողնել հին թալան-չիններին: Նրանք արդեն հարուստ են, դիզել են իրենց հարստությունը և եթե շարունակում են թալանել, ապա այնպիսի չափերով, որոնք ինձ հայտնի են: Փոքր կաշառք նրանք չեն վերցնի: Իսկ նոր նշանակվողները քաղցած են, չբավարարված փսթոթակով, իհարկե, թալանելու են ավելի շատ՝ մինչև որ կշտանան... Հներին ես իմ ձեռքում եմ պահում... Իրենց կամքից անկախ՝ նրանք ինձ հավատարիմ են: Այն մարդկանց հավատարմությանը, որոնք կորցնելու բան չունեն, ես չեմ հավատում¹:

Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության պետ Զիա բեյը պալատում տիրող կաշառակերության մասին.

– Մի առիթով իմացա, որ սուլթան Աբդուլ Համիդը գերմանական մի ընկերությունից պատվերի ընդունման համար 300 հազար ռուբլի է «ստացել»: Այդ դեպքը իմ աչքերը բացեց, և ես ինքս ինձ ասացի, որ եթե փաղիչահա՛ն է կաշառակերությամբ զբաղված, ապա ինչու ես պետք է ամաչեմ...

Օսմանյան մի ուրիշ պաշտոնյա՝ Իզզեթ փաշան, որը երկար տարիներ արտաքին գործերի նախարար էր եղել, հասցրել էր «խնայել» մոտ 20 միլիոն ռուբլի: Ինձ հայտնի են բազմաթիվ փաստեր, որոնցից բերեմ մի օրինակ... Հույն-թուրքական պատերազմի ժամանակ՝ ավելի շուտ՝ դրա ամենասկզբում, հույները փորձում էին ամեն հնարավորության դեպքում հետաձգել այն, որպեսզի ավելի լավ նախապատրաստվեն: Բացի այդ, Պետերբուրգից խոստացել էին նյութական օգնություն... Կ. Պոլսում գտնվող հունական դեսպան կոմս Մավրոկորդատը հաճախակի էր հյուրընկալվում Իզզեթ փաշային... Ինձ հաջողվեց կաշառքի միջոցով ճշտել նրանց խոսակցությունների մանրամասնությունները, որոնց համաձայն իշխանը Իզզեթ փաշային 200 հազար ռուբլի կաշառք էր առաջարկում՝ պատերազմը մեկ շաբաթով ձգձգելու համար... Խորամանկ Իզզեթ փաշան կարողացավ մեկ շաբաթվա փոխարեն երեք շաբաթ ձգձգել. չնայած որ դա հույներին ոչինչ չտվեց, բայց փաստը մնում է փաստ... Մի առիթով ես ակնարկեցի այդ մասին և ի դարմանս ինձ՝ հաջորդ օրը նրանից տասը հազար ռուբլի ստացա...

Երիտասարդ ժամանակ Իզզեթ փաշան շատ էր սիրում կանանց, հատկապես՝ եվրոպացիներին... Մի օր երեկոյան ինձ մոտ եկավ մի

¹ Եազեման Գ., Աբդուլ Համիդ Բ., Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 680:

Հարուստ եվրոպացի և տեղեկացրեց իր աղջկա անհետացման մասին: Պատմեց, որ իր ծանոթը խորհուրդ է տվել դիմել իմ օգնությունը և ինձ առաջարկեց 50 ֆունտ նախնական ծախսերի համար, ապա խոստացավ ևս 400 ֆունտ, եթե ես գտնեմ նրա աղջկան... Կարճ ժամանակում լրտեսներս պարզեցին, որ աղջկան առևանգել են Իզդեթ փաշայի մարդիկ: Ինձ դա չգարմացրեց, քանի որ գիտեի, որ փաշան իր ընկերների հետ հաճախակի է երեկոյթներ կազմակերպում... Հաջորդ օրը ես այցելեցի Իզդեթ փաշային և տեղեկացրի, որ եվրոպական ղեսպանները տեղյակ են այս դեպքի մասին, և կարող է մեծ ազդուկ բարձրանալ... Փաշան խոստացավ, որ հաջորդ օրը աղջկան կհանձնի ինձ... Հաջորդ օրը իմ լրտեսները աղջկան գտան Սկյութարի թաղամասի խորշերից մեկում... Աղջկան հանձնեցի հորը և ստացա այն գումարը, որը ինձ խոստացվել էր... Աղջիկը ոչինչ չէր հիշում և չէր կարող պատմել, թե ինչ է տեղի ունեցել իր հետ... Մի քանի ամիս հետո տեղեկացա, որ այդ մարդը անտերություն է մատնել իր բոլոր գործերը և հեռացել, քանի որ երիտասարդ աղջիկը պետք է մայր դառնար... Որոշ ժամանակ անց Իզդեթ փաշայից երկու արաբական նժույգ և 5 հազար ուրլի ստացա...

... Մահապատժի ենթարկված մի մեծահարուստի և հայ արքեպիսկոպոս Եղնիկ Աբախունյանցին ազատ արձակելու համար Օսմանյան կայսրության զինվորական դատախազը և սուլթանի գաղտնի լրտեսական գրասենյակի պետը կես միլիոն ուրլի կաշառք վերցրեցին, որից ինձ բաժին հանեցին 40 հազար ուրլի...¹:

Մուստաֆա Նեղիմը Ելզըզում տարածված մի չչուկի մասին.

– Սուլթան Աբդուլ Համիդ II-ի՝ կաշառքի համար գլխավոր միջնորդներն էին պալատական Ռահիբ փաշան, ծովային նախարար Հասան փաշան, սպարապետ Ալի Սայիբ փաշան: Այս կապակցությամբ մի հետաքրքիր դեպք է ինձ պատմել սպայակույտի հրամանատար Իսմայիլ Ֆազլի փաշան, որն անձամբ է լսել: Նակեմաքերս անունով մի մեծահարուստ եվրոպացի ցանկացել է մի երկաթուղի կառուցելու համար մենաշնորհ ստանալ և դիմել Ռահիբ փաշային, որ դեռ նախարար չէր: Նրանք սկսում են սակարկել գումարը: Ռահիբը սուլթանին հայտնում է առաջարկած կաշառքի չափը և տեղեկացնում է

¹ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 19–27, 80–81.

եվրոպացուն, որ հաջորդ օրը առավոտյան գա իր տուն վերջնական համաձայնության գալու համար: Ռահիբ փաշան տեղեկացնում է նրան, որ Համիդը չի հավանում առաջարկած գումարի չափը և պահանջում է՝ ասելով. «... ոսկի եթե չտա, չի լինելու»:

Բայց այդ օրը Ռահիբ փաշան իբրև թե հիվանդանում է և գնում է տուն բուժվելու: Գիշեր ու ցերեկ սուլթան Համիդը, մարդ ուղարկելով նրա մոտ, փորձում է իմանալ նրա որպիսությունը, սակայն Ռահիբը չէր ապաքինվում: Նա կեսօրին սուլթանին մի նամակ է ուղարկում հետևյալ բովանդակությամբ. «Պ. Նակեմաքերս եկավ, նրան հայտնեցի Ձեր պահանջած... ոսկու չափը, սակայն նա չհամաձայնվեց և առաջարկեց վերջնական գին ... ոսկի: Ցավում եմ, որ հիվանդ լինելու պատճառով չկարողացա հարգանքներս անձամբ մատուցել Նորին Կայսերական Վեհափառությանը: Ինչ հրովարտակ որ հրամայեք, այնպես էլ կպատասխանեմ...»: Սուլթան Համիդը այս թղթի հետևում գրում է հետևյալ երկխոսությունը. «... ոսկուց պակաս չի լինի. այս պատասխանը կտաս»: Սակայն Ռահիբ փաշայի հիվանդությունը կեղծ էր: Նա ցանկանում էր սուլթան Աբդուլ Համիդի ստորագրությամբ մի թուղթ ունենալ՝ իրեն ապահովագրելու համար: Ռահիբ փաշան հաջորդ օրը գալիս է պալատ և ասում է սուլթան Համիդին. «Դուք արժանի չեք վստահության, վաղը կվնասեք այն մարդուն, որին այսօր պաշտպանում եք: Ինձ ապահովագրելու համար Ձեր գրլխին մի խաղ խաղացի: Շատ վստահելի տեղ եմ թաքցրել Նակեմաքերսի կաշառքի վերաբերյալ Ձեր նամակը, եթե ինձ հետ որևէ բան պատահի, կամ էլ մահանում ոչ իմ բնական մահով, ապա այս նամակը մի քանի հազար օրինակով պետք է տպվի և ցրվի աշխարհով մեկ»: Սուլթան Համիդ II-ը այս անփութությունը համար չատ է ծնկներին տալիս, բայց բանը բանից անցել էր... Այդպես էլ Ռահիբ փաշան երկար տարիներ մնաց Ելզըզում և դիզեց 5 միլիոն ոսկի հարստություն...¹:

Սուլթանի պալատական ծախսերի մասին.

– Միայն 1891 թ. սուլթանի պալատն իր կարիքների համար ծախսել է ավելի քան 200 միլիոն ֆրանկ, որից կահույք ու կահկարասի գնելու համար՝ 7 միլիոն, սննդամթերքի ծախսերը կազմել էին 80 միլիոն, պալատի կենդանիների և ձիերի խնամելը՝ 3 միլիոն, հարեմին

¹ Մուստաֆա Նեղիմ, Հայ Եղեռնը և իմ վկայությունները, Սոֆիա, 1936, էջ 42–43:

Հատկացվել էր 49 միլիոն, ժամանցների և խրախմանքների համար՝ 30 միլիոն: Ընդ որում, այս գումարներից միայն աշխատավարձի և պարգևատրումների վրա՝ 28 միլիոն ֆրանկ: Սուլթանի ու նրա պալատի ծախսերը կազմում էին կայսրության եկամուտի 1/7 մասը¹:

Սուլթանի անձնական քարտուղար Իսմեթ փաշայի մասին.

– Իսմեթ փաշան օտարերկրյա ընկերությունից մի ծառայության համար 650 հազար ֆրանկ է գրպանել՝ պետությունը պատճառելով 2,2 միլիոնի վնաս: Երբ այդ ամենը սուլթանին հայտնի է դարձել, ապա նա իր Հիացմունքն է հայտնել Իսմեթ փաշայի ճարպկության համար... Հետագայում երբ Իսմեթ փաշան Թուրքիայից փախչում էր, իր հետ տանում է մեքենայությունների ու զանազան խարդախությունների միջոցով զիջած 15 միլիոն ֆրանկ հարստությունը²:

Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության պետը Զիա բեյը սուլթանի գաղտնի լրտեսական գրասենյակի և նրա ղեկավարներ Հանի ու Ֆեհիմ բեյերի (փաշաների) գործած ոճիւրների մասին.

... Ինձ մոտ էր գործուղվել մի երիտասարդ, որը հազիվ 20 տարեկան լինեք: Ինձ ուղղված հեռագրից տեղեկացա, որ հատուկ ուշադրությամբ պետք է վերաբերվեմ այս երիտասարդին, քանի որ նա չուտով պետք է նշանակվեր ինչ-որ բարձր պաշտոնի: Այս երիտասարդը սուլթանի մոր ավագ աղախնի թոռն էր... Նա ինձ մոտ մնաց կես տարի, և ես անհամբեր սպասում էի այն օրվան, թե երբ եմ ազատվելու այս բեռից... Մի անգամ շատ զարմացա՝ իմանալով, որ այս երիտասարդը՝ Հանին, նշանակվել է սուլթանի լրտեսական գրասենյակի պետ: Անկեղծ ասած, կային երեք անկախ հաստատություններ, որոնք կուլ էին տալիս հսկայական միջոցներ, սակայն առհասարակ օգուտ չէին բերում: Իմ լրտեսական գրասենյակից բացի, որը բաղկացած էր հարյուրավոր լրտեսներից... գոյություն ունեւ նաև սուլթանի լրտեսական գրասենյակը, որը պարզ չէր, թե իրականում ինչով էր զբաղված... Ինձ համար միայն պարզ էր այն, որ նորանշանակ Հանի բեյի հրամանով ոչնչացվել էին բավականին շատ երիտթուրքեր և նաև անմեղ մարդիկ... Բերեմ երկու օրինակ այս

¹ Назум Хамкет, Жизнь замечательных людей, Москва, 1968, стр. 11.

² Պողոսյան Ս., Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 108:

մարդու կատարած բազմաթիվ հանցանքներից... Մի անգամ, երբ ես պետք է մասնակցեի 14 սպաների մահապատժին (խեղդման միջոցով), նկատեցի, որ Հանի բեյը հրաման է տալիս սպանել նաև մի անմեղ անձնավորության, որին բանտի ղեկավարները մի քանի օր է սպասում էին, որպեսզի ազատ արձակեին... Մեկ ուրիշ դեպք էլ տեղի էր ունեցել թեյարանում, որն այդպես էլ երկար ժամանակ իմ մտքից դուրս չէր գալիս: Հանի բեյին չչուկով մի հույն մատուցող ծառա անվանում է խաֆե (լրտես), սակայն Հանի բեյը լսում է և հրամայում ձերբակալել այդ խեղճին, ապա, ավելի ուշ մահապատժի է ենթարկում...

Բարեբախտաբար, մի գեղեցիկ օր նա սպանվել էր ինչպես չուն, և նրա դիակը ողջ գիշեր մնացել էր փողոցում...

Հանի բեյի սպանությունից հետո այդ պաշտոնում նշանակվում է Ֆեհիմ բեյը, որը անմիջապես ստանում է գեներալի կոչում... Մինչ այդ նա զբաղեցնում էր Հանի բեյի տեղակալի պաշտոնը: Ֆեհիմ բեյը, որին անվանում էին «սուլթանի սիրելի», կարճ ժամանակում կարողացավ մեծ իշխանություն կուտակել իր ձեռքում... Եթե Հանի բեյը աչքի էր ընկնում բացառությամբ դաժանությամբ, ապա նորանշանակ բեյը ոչ միայն կատարում էր դաժանություններ, այլև թալանում էր այն ամենը, ինչ ընկնում էր ձեռքը... Կար ևս մի բան, որը առանձնացնում էր այս խելագարին. նա մեծ սեր ուներ կանանց նկատմամբ, հատկապես՝ երեխա-աղջիկների (10–12 տարեկան)... Երբ սուլթանին տեղեկացնում են այդ ամենի մասին, Աբդուլ Համիդը խոստանում է «պատժել իր սիրելի բեյին»... Կարճ ժամանակում Ֆեհիմ բեյը մեծ ունեցվածք է դիզում և ապրում բացառիկ ճոխությամբ... Եվրոպական դիվանագետները և ընկերությունները նրա միջոցով կարողանում էին սուլթանից իրենց ուղածները ստանալ՝ իհարկե մեծ գումարի դիմաց. չէ՞ որ նա սուլթանի սիրելի բեյն էր, որին այդքան վրստահում էր փաղիչահը... Եթե ինչ-որ մեկը ուզում էր մի անօրինական բան անել, դիմում էր Ֆեհիմ փաշային, որն էլ կաշառքի դիմաց անպայման օգնում էր... Ես չեմ չափազանցնի, եթե ասեմ, որ նրա համար չկային սրբություններ, և եթե ինձ անվանում էին դժոխքի ծրնունդ, ապա ես ինչպե՞ս անվանեմ այս մարդուն... Ինձ մեղադրում են դաժանությունների և սպանությունների մեջ, դա այդպես է, բայց ես երեխա էի այս գիշատչի առջև...

Ճակատագիրը ճիշտ համարեց նրան հանձնել գաղաղած ամբոխին, որն էլ նրան պատառ-պատառ արեց... Պատմություն մեջ քիչ են դեպքերը, երբ դահիճը մահանում է իր իսկ մահով¹:

Աբդուլ Համիդ II-ը սուլթանական պատվո պահակության ենթասպային.

– Ի՞մ բարեկամ, նախ՝ քեզ չնորհավորում եմ գնդապետի կոչման արժանանալու համար, ապա՝ լսել եմ, որ այսօր գիշեր սոֆթաները հավաքվում են Ենի Վալիդե-Ջամիե մեջլիսին կից հոգևոր դպրոցի բակում, որտեղ ճառեր են ասելու իմ դեմ... Մտադրվել են ինձ գահընկեց անել:

Սիրելի գնդապետ, քեզ հետ վերցրու ինձ հավատարիմ զինվորներ, որքան անհրաժեշտ է, և հենց որ սոֆթաները հավաքվեն, չըջապատիր մեջիդը...

– Ես նրանց բոլորին ձերբակալե՞մ, Ձե՛րդ մեծություն, – հարցնում է գնդապետը:

– Ո՛չ: Ինչո՞ւ ձերբակալել, ավելի լավ է նրանց բոլորին մորթել: Քիչ գլխացավանք կլինի, – պատասխանում է սուլթանը²:

Սուլթան Աբդուլ Համիդին Միհդատ փաշայի կողմից ներկայացված հրաժարականից.

... Ձերդ Վեհափառության պարտականություններն են պարզել և որոշել նախարարների պարտականությունները, մեր ազգի մեջ կատարյալ հավասարություն ապահովել և, իրոք, աշխատել երկրի բարգավաճման համար: Ձեր այժմյան Ոսթի-Հումայունը չպետք է նմանվի այն խաթիբերին, որոնք 30 տարուց ի վեր հրատարակվել են և չեն գործածվել: Այն չի կարող անհետևանք մնալ նույնիսկ ներկա փոթորիկների անցնելուց հետո, որովհետև սահմանադրությունը հրատարակելով՝ մեր նպատակը չէր Արևելյան հարցի հաջողությանը ծառայել և մեր դեմ բացած եվրոպացիների բերանները փակել... Դուք պետք է անպատճառ գիտենաք Ձեր արքայական պարտականությունները, որովհետև պատասխանատու եք Ձեր բոլոր արածների համար... Ես չատ եմ հարգում Ձերդ Վեհափառությանը, սակայն Շարիաթի տրամադրությունների համաձայն՝ ինձ ներելի է չհպա-

¹ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 51–52, 11.

² Кауфман, "Коронованный узник", С. Петербург, 1910, стр. 84.

տակվել Ձեզ այն պարագայում, երբ մեր ազգի չահերին նույնիսկ ամենափոքր վնաս է հասցվում, որովհետև ծանր է իմ պատասխանատվությունը: Ես վախենում եմ խղճիցս, իսկ հայրենիքի փրկության և երջանկության համար ես իմ խղճի պատասխանատուն եմ: Վախենում եմ, որ այս գործերի համար տերությունները ինձ ճանաչեն մեղավոր և պատասխանատու... Ո՛վ արքա, ես մի ծանր բեռի տակ եմ, և իմ պարտականությունը պիտի կատարեմ իբրև օսմանցի... Ինչ օր է, ինչ Դուք բավարարություն չեք տալիս իմ զեկույցներին: Դուք մերժում եք հաստատել այն կանոնները, որոնք նման են բանվորների գործիքներին, իսկ առանց գործիքի բանվորը չի կարող աշխատել... Եթե մենք աշխատում ենք պետության հիմքերը նորոգել, ապա Դուք պարզապես կամենում եք քանդել... Այսպիսի հանգամանքներում ցանկացեք գործի ղեկավարությունը հանձնել այնպիսի մեկին, որ կարողանա Ձեր արքայական քմահաճույքը համաձայնեցնել պետական ներկայիս կարևոր գործերի ընթացքին¹:

Միհդատ փաշայի ճառից մի հատված, որը նա կարդացել է դատարանում, երբ նրան մահապատժի էին ենթարկելու.

– Դատաւորներ՝, այս սուտ աշխարհում դուք խաբեցիք ստոր չահից, ստորագոյն յոյսերից... դուք մոռացաք մարդկային և դատաւորական առաքինությունները, դուք ծունկ չոքեցիք, Աբդուլ Համիդի նման փաղիչահի առաջ, որը այնքան վնասներ է հասցրել մեր հայրենիքին... Գրաւեցիք նրա խօսքերից, չնորհներից:

Դատաւորներ՝, մի կարծէք, թէ մահւան սարսուռի ազդեցութեան տակ ենք արտասանում այս խօսքերը: Ոչ: Մենք մեր նահատակութեանը սպասում ենք իբրև զթուլթեան մի բարիքի: Մենք՝ հաւատացեալներս նշանակութիւն չենք տալիս, թէ արդեօք շուտ կամ ուշ ենք հեռանալու այս պանդոկ աշխարհից:

Մենք՝ հայրենիքի ֆիդայիներս, պարզ տեսնում ենք, թէ ինչպէս մեր երկիրը ամեն կողմից թշնամիների ոտքի տակ է առնւած, թէ ինչպէս նա քար ու քանդ է լինում:

Այդ տեսնելու պատճառով դուք մեզ պատժում էք: Պատժեցէ՛ք, դատաւորներ, բայց լաւ իմացէք, որ աստուածային արդարութեան հակառակ գէնքի դիմեցիք. չամաչեցիք ձեր խիղճը վաճառելուց: Եւ այդ ամենը արիք մի բռնակալի ցանկութեանը ծառայելու նպատակով...

¹ «République Française» 23 հունվարի, 1877 թ.:

Մենք ծառայել ենք մեր Հայրենիքին այնպես, ինչպես պահանջում է իրաւունքը: Բայց Եղբոր կախարհները մեր դէմ սարքեցին այս դատաստանը և այս գոհճիկ ժողովը, որ դատաստանի կոչումն ունի, մերժեց մեր բոլոր օրինական իրաւունքների պաշտպանութիւնը, զըրկեց մեզ Շերիի օրէնքներից օգտւելը...¹:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը 1877 թ. սկզբին գումարում է օսմանյան պառլամենտ 237 պատգամավորների մասնակցութեամբ, որից 13-ը Հայեր էին: Այդ առիթով սուլթանը հրովարտակ է արձակում, ուր ասվում էր.

– Տեսարք ծերակուտանք.

Տեսարք երեսփոխանք.

Ամենամեծ գոհունակութեամբ կը բանամ կայսրութեան խորհրդարանն, որ այսօր առաջին անգամ կը գումարի...

Այս սահմանադրութեամբ իմ դիտաւորութիւնս ոչ այնչափ ժողովուրդները վարչական գործողութեանց ներկայ գտնւելու հրաւիրելն էր, որչափ զօրաւոր գործիք մը Հայթայթի վարչական բարենորոգման և զեղծմանց ու քմահաճ գործոց բարձման:

Սահմանադրութիւնը, իրեն յարակից օգուտներէն զատ՝ ժողովըրդոցս մէջ եղբայրութեան ու միութեան հիմքերը ձգելու և այնպէս ամենուն հաւասարապէս զարգացման ճամբայ բանալու սահմանաւած է:

Իմ հոյակապ նախնիք-մեծամեծ յաղթութիւններ տարին և այս ընդարձակ կայսրութեան մէջ բնակիչ բազմազան ժողովուրդներ իրենց գաւազանին տակ գումարեցին:

Եւ սակայն կը մնար այդ կրօնքով ու ազգութեամբ իրարմէ տարբեր ժողովուրդները միենոյն օրինաց ներքև և միենոյն կենսավառութեան զգացմամբ միարանել:

Աստուծային նախախնամութիւնը իր անհուն ողորմութեամբ կամեցաւ, որ այս գործն ալ կատարում գտնէ:

Այսուհետև իմ ամեն հպատակներս միենոյն Հայրենեաց որդիք ըլլալով և միենոյն օրինաց ներքև ապրելով՝ միենոյն անունը պիտի կրեն – այն բարձր անունը, զոր իմ նախնիքս կրած են 600 տարիէ ի վեր և որ փառաց և մեծութեան այնչափ յիշատակներ թողած է պատմութեան մէջ: Օսմանեան անունն, որ մինչև հիմա զօրութեան և տիրապետութեան գաղափարը կանձնաւորէր, հաւատացած եմ, որ ապագային մէջ իմ ամեն հպատակացս միացած չահերն անբաժանելի պահելու խորհրդանիշ մը պիտի ըլլայ:

¹ Թուփչան Ե., Երիտասարդ Թուրքիան և Հայերը, Թիֆլիս, 1909, էջ 173:

Ահա այս սկզբունքներէն և այս դիտաւորութիւններէն ներշնչւելով գծեցի այս ճամբան, որոյ մէջ մտադիր եմ յարատեւել և հիմա կը սպասեմ, որ ձեր ազգու և հանճարեղ գործակցութեամբը կարող ըլլամ քաղել այն արդիւնքները, զորս իրաւունք ունինք յուսալ արդարութեան վրայ հիմնեալ սահմանադրութիւնէ մը:

Հարկաւոր և անհրաժեշտ դատեցի իմ հպատակացս ազատութիւն ու հաւասարութիւնն ապահովել, քմահաճ դրութեանը վերջ տալ, օրինաց պատրաստութիւն և գործադրութիւն, և գործոց վարչութիւն երկրին կամացն և հսկողութեան ներքև դնել: Միով բանիւ մեր վարչական դրութեան կանոնները սահմանադրական և որոշողական սկզբան հետ կապել:

Այս մասին ունեցած ամենասիրելի բաղձանքս իւրացնելու համար՝ խորհրդարան մը գումարել որոշեցի ծերակոյտի և երեսփոխանաց ժողովներէ բաղկացեալ:

Ձեզ կը վերաբերի հիմա ձեր Հայրենասիրութեան յանձնած օրէնսդրական պարտականութիւններն ուղղութեամբ և հաւատարմութեամբ կատարել: Այդ պաշտօնին մէջ բնաւ որեւէ անձնական նկատմունք պէտք չէ ազդեցութիւն ընեն ձեր վրայ, այլ միայն պետութեան և երկրին փրկութիւն և բարեկեցութիւնը նպատակ պիտի ունենանք ձեր աշխատութեանց հաւատարիմ գործադրութեան մէջ: Մեզ այսօր պէտք եղած բարւոքումներին և ամեն կողմէ սպասեալ վարչական բարենորոգումնք ամենամեծ կարեւորութիւն ունին: Ասոնց աստիճանաբար գործադրութիւնը ձեր մէջ տիրելիք համաձայնութիւնէն կախումն ունի: Պետական խորհուրդը միւս կողմէ ձեզ ներկայացուելիք օրինաց ծրագրեր պատրաստելու կը զբաղուի:

Ներկայ շրջաններու մէջ ձեզ պիտի ներկայանան ձեր ժողովին ներքին կանոնադրութեան, ընտրական օրինաց, վիլայէթներու և աւաններու վարչութեան, թաղապետական օրինաց, քաղաքային դատավարութեան, դատական ատենից վերակազմութեան, դատաւորաց առաջացման կամ հրաժարման, ընդհանրապէս ամեն պաշտօնատարաց իրաւասութեան և հրաժարեցուցման, լրագրութեան, համարակալութեան դիւանի և վերջապէս բիւջէի վերաբերեալ օրինաց ծրագրերը:

Կը փափագիմ, որ այս ամեն օրէնքներն հետզհետէ քննւին, վճուին և որոշւին...¹:

¹ «Մասիս», 1877, թիվ 1951–52:

Ելզըզի կայսերական գլխավոր քարտուղար Թահսինը՝ այն մասին, թե ինչի վերաբերյալ իրավունք ունեն գրելու Օսմանյան կայսրությունում.

1. Ամենից առաջ լուրեր հաղորդել նորին մեծության փառիչահի աշխարհարժեք առողջության, գյուղատնտեսական բերքի վիճակի, կայսրությունում առևտրի և արհեստների առաջադիմության մասին:

2. Թերթում Հրատարակել ոչ մի տարակարծիք հոգված, որի բարոյական անվնասակարությունը վավերացված է ընդհանուր լուսավորության վսեմաշուք մինիստր փաշայի կողմից:

3. Ձթույլատրել գրական և գիտական այնպիսի երկարաչուն Հոգվածների հրատարակումը, որոնք հնարավոր է սեղմել և տալ մեկ համարում, ինչպես նաև՝ «չարունակելի», «չարունակությունը վաղը» բառերի օգտագործումը:

4. Հոգվածներում չթողնել սպիտակ տեղեր և կախման կետերով թողնված բաց տեղեր, բացարձակապես առիթ չտալ այնպիսի երեվոյթների, որոնք կարող են պատժառ դառնալ զանազան անտեղի ենթադրությունների և մտքերի չփոթություն:

5. Բացարձակապես չչոչափել անձնականությունը. եթե ասեն, որ որևէ կուսակալ կամ կառավարիչ թույլ է տվել գողություն, զեղծում, սպանություն և պարսավանքի արժանի այլ գործ, հայտնել, որ դրա ստույգությունը հնարավոր չի եղել հաստատել, թաքցնել այն, երբեք թույլ չտալ հրատարակել:

6. Ոստիվ արգելվում է հրատարակել կառավարական օրգանների զեղումների դեմ բողոք հայտնող այն դիմումներն ու խնդիրները, որոնք ներկայացվում են վիլայեթի ազգաբնակչության որևէ անհատի կամ համայնքի կողմից և նպատակ ունեն այդ մասին հայտնել նորին բարձրություն փառիչահին:

7. Արգելված է «Հայաստան» և պատմության ու աշխարհագրության վերաբերյալ նման այլ անունների հիշատակումը:

8. Քանի որ մեր հավատարիմ և հանդարտաբար ժողովրդի համար պատշաճ է տեղեկություն ունենալ օտար վեհապետների դեմ կատարվող մահափորձերի և օտար երկրներում տեղի ունեցող խռովարարական ցույցերի մասին, բոլոր միջոցներով արգելք լինել դրանց մասին նյութեր հրատարակելուն:

9. Որոչ չարամիտ մարդկանց անտեղի քննադատությունն ու դի-

տողություններին առիթ չտալու համար խստորեն զգուշանալ թերթերում այս հրահանգի մասին խոսելուց¹:

Օսման Նուրին՝ Ստամբուլում հրատարակվող թերթերի և գրաքննության մասին.

... 1876 թ. Ստամբուլում հրատարակվող լրագրերի թիվը հասել էր քառասունյոթի, որից տասներեքը՝ թուրքերեն էր, մեկը՝ արաբերեն, ինը՝ հունարեն, ինը՝ հայերեն, («Մասիս», «Ավետարներ», «Ժամանակ», «Մանգումնի էֆքյար», «Մեջմուա-ի հավադիս», «Հայրենիք», «Նորագիր», «Մամուլ» և «Փունջ»), երեքը՝ բուլղարերեն, երկուսը՝ եբրայերեն, երկուսը՝ ֆրանսերեն, երկուսը՝ անգլերեն, երկուսը՝ գերմաներեն:

Եթե որևէ ձևով նրա (սուլթանի) ծանր հիվանդության մասին լուրը տարածվեր, թերթերն երբեք այդ մասին չպետք է խոսեին: Եթե եվրոպացի հռչակավոր բժիշկներից մեկը Ելզըզ հրավիրվեր, թերթերը գրում էին, որ եկել է չնչնու Բոսֆորի օդը, այցելելու Համիդի մանկական հիվանդանոցը:

... Գրաքննիչների կողմից արգելված և խոսակցական լեզվից ջրնջված բառերով ու տերմիններով հնարավոր էր կազմել մի մեծ բառարան: Պատմությունը և աշխարհագրությանը վերաբերող նման բառերի թիվում կային նաև, օրինակ, այնպիսի բառեր, ինչպես հիմնական օրենք, հեղափոխություն, ազատություն, անիշխանություն, եղբայրություն, բռնություն, ազգային իրավունք, հավասարություն, հայրենիք, երիտասարդություն, դինամո, դինամիտ, ազգ, միջազգային, գահաժառանգ, հանրապետություն, խորհրդարան, ծերակույտ, ուսմբ, Միհդատ փաշա, Քեմալ բեյ (Նամըք), սուլթան Մուրադ կամ պարզապես Մուրադ, Կրետե, Մակեդոնիա, բարենորոգում և այլն:

Մեր երկրում ամենազժրախտը թուրքերեն և այլ լեզուներով տպագրված գրքերն էին: Բառիս բուն իմաստով, մաղից էին անցկացվում գլխավորապես դասական գործերը: Արգելված էր ընդհանուր պատմությունը, քիմիայում արգելված էին մի շարք բանաձևեր, որոնց միջոցով ստացվում էին պայթուցիկ նյութեր, Աբդուլ Համիդի անվան սկզբնատառերով կազմված քիմիական մի շարք բանաձևերն ու մաթեմատիկական ֆորմուլաները, օրինակ՝ z էր կարելի գրել $OH=O$, որովհետև այն հնարավոր էր բացատրել՝ Աբդուլ Համիդը հավասար

¹ Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, հ. IV, Երևան, 1972, էջ 161–162:

է զրոյի: Քերականութեան գրքերում հանդիպող «դժգոհ ենք», «զրժ-բախտ ենք», «ազատ չենք» և նման այլ բառեր վտանգավոր էին համարում և ջնջվում էին՝ իբր գրանք կարող էին արտահայտել օսմանյան ազգի տրտունջը: «Եղբայր» բառն արգելված էր, քանի որ կարող էր հիշեցնել տարաբախտ սուլթան Մուրադին, «Հիվանդ» բառն արգելված էր, քանի որ հիշեցնում էր «Հիվանդ մարդ» խոսքը¹:

Օտարերկրյա մի լրագրող, երբ այցելում է Ստամբուլ, անմիջապես գնում է ոստիկանատուն և խնդրում է ասել, թե Թուրքիայում ինչ կարելի է գրել, ինչ՝ չի կարելի: Ոստիկանը նրան պատասխանում է.

– Ամեն ինչի մասին կարող եք գրել՝ օղի, ջրի, նույնիսկ Պոլսի չների մասին կարող եք ճառել, բայց միայն մի պայմանով, որ նրանց հավաքել չառաջարկեք: Անշուշտ, Նորին Վսեմութեան մասին կարող եք ներբողներ հյուսել... Սակայն արգելված է, որ վարդապետութեան մասին խոսել և օգտագործել այն մատնանշող բառեր... Ջգուշանալ մանավանդ Մակեդոնիա, Հայաստան բառերից...²:

Օսմանյան կայսրութեան լուսավորութեան նախարար Հալիմ փաշան մի առիթով խոստովանել է.

– Նախարարութիւնը հիանալի կկատարի իր պարտականութիւնները, եթե դպրոց ընդհանրապես չլինի³:

Նամըք Քեմալը «Իբրեթ» թերթում լույս տեսած «Ժողովուրդների միաձուլում» հոդվածում գրել է.

– Մարդկանց հոգեւոր միաձուլումը առաջանում է մանկութեան ժամանակ, հատկապես դպրոցում՝ չփման հետեանքով: Այդ իսկ պատճառով մեզ անհրաժեշտ է այնպիսի դպրոցների ստեղծման վրա աշխատել, ուր կընդունենին բոլոր ազգերի և հավատքների ներկայացուցիչներին⁴:

¹ Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, Հ. IV, Երևան, 1972, էջ 160–164:

² Պողոսյան Ս., Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 132:

³ Berkes N., The Development of Turkey, Montreal, 1964, p. 275.

⁴ Boran B., Namik Kemal – sosyal fikirleri, – Namik Kemal hakkında, İstanbul, 1942, s. 274.

Թուրքական դպրոցներում աշակերտներին սովորեցնում էին երգել հետևյալ բովանդակությամբ.

– Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ: Եկեք սպանենք, եկեք պատառ-պատառ անենք: Եկե՛ք արյան ծովում լողանանք: Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ¹:

Թանգիմաթյան բարեփոխումների ժամանակակից Թուրք պատմաբան Ահմեդ Զեդեթը գրել է.

– Օսմանյան կայսրութիւնում բարեփոխումների փորձերը հաջողութեամբ չէին պսակվում այն պատճառով, որ պետական գործիչները մեծամասամբ եղել են անկիրթ անբարոյականներ և կուրորեն ընդօրինակել են ամբողջ եվրոպականութեանը: Նրանք կամա-ակամա դարձել են Արեւմուտքի հպատակ ծառաներ²:

Երիտթուրք Նամըք Քեմալը Լեսըոս կղզում աքսորված լինելու ժամանակ նամակ է գրել սուլթանին կղզու կարիքների և առաջնահերթ կրթական խնդիրների մասին.

– Կղզու դպրոցները գտնվում են խղճահարույց վիճակում, իսկ բնակչութեան մեծամասնութիւնը անգրագետ է... Քրիստոնյաների կրթվածութեան մակարդակը ավելի բարձր է, քան մուսուլմաններինը: Քրիստոնյաների կրթութեամբ զբաղվում են իրենց համայնքները, իսկ Թուրքական դպրոցները ղեկավարում են կառավարական մարմինները, որոնք էլ այդ դպրոցների ուսուցիչներին աշխատավարձ վճարելուց բացի ոչինչ չեն անում³:

Սուլթան Աբդուլ Համիդը Բուղայեչտից հրավիրել էր տնտեսաքաղաքական գիտութեան հայտնի ուսուցչապետ Վամբերիին, որպեսզի դասախոսի Կ. Պոլսի համալսարանում: Սակայն մի քանի ամիս հետո սուլթանը արգելում է դասախոսութիւնները, քանի որ նա խուսափում էր իր համար անմարսելի տեսութիւններից: Երբ պր. Վամբերիին համարձակվում է հարցնել այս խափանման պատճառը, սուլթան Համիդը պատասխանում է.

– Ինչպես կարող եմ ընդունել, որ մի օր իմ հպատակներից մեկը գա ինձ մոտ և ասի, որ կայսրութեան տնտեսական սկզբունքները սխալ հիմքերի վրա են հաստատված և ներկայիս դրութիւնը չի հա-

¹ United States Official Documents on the Armenian Genocide, vol. II, Watertown, 1994, p. 105.

² Berkes N., Türkiye'de Çağdaşlaşma, Ankara, 1973, s. 207–208:

³ Петросян Ю. А., Младотурецкое движение, Москва, 1971, стр. 113.

մապատասխանում պր. Վամբերիի սովորացրած տնտեսագիտական սկզբունքներին... Կարծում եք, որ ես նման բան կարող եմ թույլ տալ...¹:

Թուրքական «Օսմանլը» թերթը օտար լրագրերի մասին.

– Առաջ եվրոպայից ստացած լրագրերը չէին գրաքննվում, մինչդեռ դրանք վնասակար բովանդակություն էին ունենում... Օրինակ՝ անգլիական լրագրի մի համարը պարունակում էր անգլիական խորհրդարանի նիստերից մեկի ատենագրությունը, մի նիստի, որում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի վերաբերյալ բանավեճ էր տեղի ունեցել: Այդ բանավեճը կարող էր հայերի միտքը գրգռել... Մայրաքաղաքի ֆրանսերեն լրագրերն էլ արտատպեցին հիշյալ ատենագրությունը, որը հայ լրագրերը թարգմանեցին: Սրանց հետևում է, թե օտար մամուլը նույնքան և ավելի չարիք կարող է պատճառել, որքան հեղափոխական գաղափարներ տարածող մարդկանց խումբը²:

Նորագույն շրջանի թուրք պատմաբան Քարալը դպրոցների մասին.

– Դպրոցները խստագույն վերահսկողության տակ էին: Պատմության առարկան միայն սուլթանների գործունեության շարադրանքն էր: Արգելված էր համաշխարհային դասական գրականության բազմաթիվ գործերի, ինչպես նաև թուրքական առաջադեմ հեղինակների ստեղծագործությունների դասավանդումը³:

Հայ քաղաքական և մտավորական գործիչներին հեղափոխության կամ դավաճանության մեջ անհեթեթ մեղադրելու բազմաթիվ օրինակներից մեկի մասին է վկայում Մուստաֆա Նեզհիմը.

– Համիդի լրտեսները թերթերի միջոցով ամբաստանում էին Արտաքին գործերի նախարարության խորհրդական Հարություն փաշա Տամատյանին, որը շատ խելացի և առաքինի մի անձնավորություն էր: Նրան մեղադրում էին հեղափոխականների նախագահ լինելու մեջ... Չնայած որ Արդուլ Համիդը գիտեր, որ այս թերթերը դրամ կորզելու համար են, ոչ միայն չէր պատժում կեղծ ամբաստանողներին, այլև երբեմն ինքն էլ էր նրանց առջև ոսկոր նետում: Նա վախենում էր, որ սուտ ամբաստանողներին պատժելու կամ նրանց բան չտալու

¹ **Եազմեան Գ.**, Արդուլ Համիդ Բ., Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 587:

² **Պողոսյան Ս.**, Հայոց ցեղասպանության պատմություն, հ. I, Երևան, 2008, էջ 25:

³ **Karal E. Z.**, Osmanlı Tarihi, Cilt VIII, Ankara, 1962, s. 413–414.

պարագայում թերթերի վախճանը պիտի գար: Երբեմն հոդվածներ հրապարակող լրագրողներին ավերով ոսկի էր նետում՝ նրանց լուծվան դատապարտելով¹:

Բայբուրդի Ռումելի գյուղից փախցրած ու բռնի մահմեդականություն ընդունած հայ աղջկա ազգականների դատական հայցը քննելու ժամանակ մահմեդական ամբոխը ներս է խուժում դատարան ու բղավում.

– Աղջիկն արդեն մահմեդականություն է ընդունել, նորից հարցաքննելու հարկ չկա. եթե նա ասի, որ մահմեդական չէ և վերադառնա քրիստոնեության, չարիաթի օրենքով նրան պետք է գլխատել...²:

Մալաթիայի բանտում հայերի նկատմամբ կատարվող բռնության մի դեպք.

Բացում է խուցերից մէկի դուռը:

– Դօկտէօր,– ձայն է տալիս զինուորը:

Բժիշկ Ա... կորագլուխ դուրս է գալիս և ընկնում զինուորի առաջ: Բանտի բակից դուրս են հանում նրան և տանում փօլիսխանան, ուր նստած են մուավինը, հազարապետը և կօմիսէրը: Երեք ոստիկան և մի քանի ժանդարներ ոտքի վրայ սպասում են:

– Արի՛, խայի՛ն, տեսնե՛ք ինչպէ՞ս կազմակերպեցիր զինւած խումբը և ուղարկեցիր Զէյթուն՝ օգնութեան,– ասում է կօմիսէրը:

– Ստաֆուրուլլա՛հ (քաւ լիցի), էֆէնդի՛մ, ես այդպիսի գործեր կատարող չեմ, ես վեհափառ սուլթանի ստրուկն եմ:

– է՛, խնդի՛ր, դեռ սուլթանի անո՞ւնն էլ ես առնում պղծւած բերանդ. պապանձի՛ր ու ճիշտ պատասխան տո՛ւր,– ասաց, ոտքի ելաւ և մի ուժեղ ապտակ իջեցրեց բժշկի երեսին:

Նրա աչքերի մէջ երևացին արցունքի կաթիլներ:

– Ինչո՞ւ ես դար...,– դեռ խօսքը չը լրացած՝ ապտակը կրկնեց:

– Դեռ համարձակւում է պատասխան տալ այս խնդիրը,– պոռաց կօմիսէրը և ուզեց կրկին զարկել:

Մուավինը դարձաւ հազարապետին և կամացուկ նկատեց, որ իր ներկայութեան զարկել չը տայ: Կօմիսէրը հասկացաւ այդ և յետ քաշւեց՝ կրկին առաջին հարցը առաջարկելով:

¹ **Մուստաֆա Նեզհիմ**, Հայ եղևոնր և իմ վկայությունները, Սոֆիա, 1936, էջ 11–12:

² Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, стр. 97.

– էֆէնդի՛մ, այդ Հարցին պատասխանեցի,– կրկնեց կալանաւորը: Տիրեց լուռութիւն: Մուսվինը զգաց, որ իր ներկայութիւնը խանգարում է «քննութեան» գործին: Վերկացաւ և բինբաշու ականջին փսփսալով՝ – «Ձեզ տեսնեմ, առանց խօսք քաշելու՝ իր տեղը չը դրուէք»,– դուրս գնաց և կողքի սենեակը մտաւ, որպէսզի այնտեղից զաղտնի լսէ:

– Չե՞ս ուզում խոստովանել, Հա՛ւ,– գոռաց կօմիսէրը,– Հիմայ քեզ ցոյց կը տամ, թէ ինչ է նշանակում այդքան յանդուգն խօսել. զափթիէներ, սրան գետին զարկէ՛ք:

Ջափթիէները մի ականթարթում վայր գլորեցին բժշկին և քացիների տակ առան: Սկսեց սովորական դարձած տանջանքը: Բժիշկը, որչափ ոյժ ունէր, զսպում էր իրեն. նա ամաչում էր ձայն հանել... Ահա ոտքի կանգնեց ինքը՝ կօմիսէրը, իր ձեռքով «Ջինիվիդը» անցկացրեց խեղճի երկու բթամատերին և սկսեց պտուտակը դարձնել: Ցաւի մի ծանր հառաչ դուրս թռաւ բժշկի բերանից, բայց նա իրեն նորից զսպեց. ատամները իրար կցեց, որ չլինի թէ գոռայ: Կօմիսէրը որքան ոյժ ունէր, դարձրեց պտուտակը: Բթամատերի ոսկոռները սկսեցին ճթճրթայ, արիւնը դուրս ցայտեց... Բայց բժիշկը շարունակեց զսպել իրեն... Կօմիսէրը կատաղեց և հրամայեց զափթիէներին կատարել վերջին պատուէրը: Չորսն էլ միանգամից յարձակեցին և սկսեցին սղմել կալանաւորի ամորձիքը... Սա արդէն անկարելի էր տանել: Բժիշկը արձակեց մի այնպիսի ակամայ գոռոց, որ աւելի եզան բառաչի էր նման, քան մարդու կոչի: Տանջանքի ողբն էր այդ... Բոլոր ինկվիզիտորները այդ ձայնից ետ քաշեցին. սէրայի բակում քնած պահապաններն ու պաշտօնեաները վազեցին իմանալու, թէ ում են տանջում: Միւս սենեակից դուրս եկաւ մուսվինը և իբրեւ զժգո՛հ՝ ասաց.

– Այս ի՞նչ է, ինչո՞ւ է գոռում այս մարդը:

– Գեաւուրները լաւ միջոց ունին արդարանալու, դիտմամբ առաջուց են գոռում–գոչում, որ պատժից ազատուեն,– վրայ բերեց կօմիսէրը:

– Այդ ոչի՛նչ, անիծածը խոստովանեց, որ ինքն է արել,– աւելացրեց բինբաշին:

– Չէ՛, ես չե՛մ արել,– կիսաշունչ արտասանեց բժիշկը՝ խրախուսւած մուսվինի ներկայութիւնից:

– Շատ մի խօսիր,– վրայ բերեց մուսվինը, ես ականջովս լսեցի... Տարէ՛ք սրան,– հրամայեց նա:

Չորս զափթիէներ դուրս հանեցին դժբախտին փօլիսխանայի դռնից, ոտքերից բռնած՝ քարերի ու ցեխերի միջով քաշ տւին տարան նախկին խցիկի դռնից ներս գլորեցին: Դուռը գոցեց...¹:

1878-ի Հունվարյան երեսփոխականների նիստի ընթացքում Այդնի վիլայեթի ներկայացուցիչ Ահմեդ էֆենդին հայտարարել է.

– Իմ գալառում կառավարութեան պաշտոնյաները հարստահարում են ժողովուրդին, դատարանի պաշտոնյաները վերցնում են իրենց իբրեւ ավանդ հանձնված գումարները, իսկ ոստիկանները ուղղակի կեղեքում են ժողովուրդին...²:

Ջիա բեյը սուլթանի անձնական լրտեսական գրասենյակի պետ Ֆեհիմ փաշայի վրա իրականացված մահափորձի մասին.

– Չնայած այն փաստին, որ սուլթանի անձնական լրտեսական գրասենյակի պետ Ֆեհիմ փաշան ատելութուն ուներ Հայերի նկատմամբ, այնուամենայնիվ նա Հայերի հետ ուներ մեղ համար անհասկանալի գործեր... Շատ հաճախ փաշան երեկոները անցկացնում էր Հայկական թաղամասում իր անձնական լրտեսների հետ, որոնք երբեք չէին թողնում իրենց տիրոջը մենակ... Մի անգամ, երբ Ֆեհիմ բեյը գտնվում էր Հայկական թաղամասում, Հզոր պալլոն տեղի ունեցավ դեղատան մոտ, որը այնքան ուժեղ էր, որ ոչնչացրեց դեղատան դիմացի ողջ պատը: Կարելի է ենթադրել փաշայի վախն ու սարսափը, երբ նա գլխի ընկավ, որ այս ումբը նախատեսված էր իր համար... Կատաղութունից նա ոտքի հանեց ողջ ոստիկանութեանը և կատարվեցին բազմազմիվ անմեղ մարդկանց (Հայերի) ձերբակալութուններ... Իսկ սուլթան Աբդուլ Համիդն էլ այս առիթով հայտարարեց, որ Հայերը փորձում էին ոչնչացնել իր սիրելի ծառային, քանի որ անձնական ատելութուն ունեն իր նկատմամբ...³:

Թուրք նշանավոր պատմաբան Օսման Նուրին իր «Աբդուլ Համիդ Երկրորդ և նրա իշխանութեան շրջանը» եռահատոր աշխատութեան մեջ գրել է.

¹ Տեր-Միքայելյան Գ., Թուրքական բանտերը, Ժնև, 1906, էջ 20–21:

² Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրութունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 339:

³ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 71–79.

– Օսմանյան պետության 33 տարվա քաղաքական դեպքերի մասին մեզ մոտ ոչ մի պաշտոնական թուղթ չի հրապարակվել, ամենակարևոր դեպքերը մշտապես գաղտնի են պահվել օսմանյան ժողովրդից: Ոչ մեկին չեն ներկայացվել պատերազմի նման օրինական միջոցառումների մութ ծալքերը, պատերազմներ, որոնց մի քանի անգամ ստիպված է եղել դիմելու մեր պետությունը: Բռնապետության ամենամեծ հենարանը, գործողության ամենազորեղ միջոցը եղել է տգիտությունը: Մտքերի լուսավորումը, երկրի անցյալն ուսումնասիրող և նրա ապագան գուշակելու համար ուղեցույց հանդիսացող երկերի ոչ թե հրապարակումը, այլ անգամ ընթերցումը համարվում էր ոճիր¹:

Աբդուլ Համիդ II-ը 1877 թ., որպես պատրվակ օգտագործելով ռուս-թուրքական պատերազմը, ցրեց երեսփոխանական ժողովը և հայտարարեց.

– Ես ցանկացա հետևել հորս՝ Աբդուլ Մեջիդի քայլերին... Նա փորձել է բարենորոգումներ մտցնել զոհողությանը և ազատական եղանակներով: Տեսնում եմ, որ սխալվել եմ: Սրանից հետո քայլելու եմ պապիս՝ սուլթան Մահմուդի ուղիով: Ես էլ նրա նման տեսնում եմ, որ Աստծո կողմից ինձ վստահված ժողովրդին միայն բռնի ուժով է հնարավոր տեղից չարժեղ²:

Օսման Նուրին 1877–78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտի և թուրքական պաշտոնյաների կողմից այդ լուրը խանդավառությամբ ընդունելու մասին.

– Ռուս-թուրքական պատերազմի այն պահին, երբ ռուսները խիստ մոտեցել էին Ստամբուլին, սուլթան Համիդը ժողով գումարեց պալատում և հայտարարեց. «Պատերազմը ցանկացա ոչ թե ես, այլ իմ ազգը: Մենք պարտություն կրեցինք: Ահա՛ տեսնո՞ւմ եք, թե ինչ վիճակի ենք հասել: Եթե ես թույլ չտամ, որ անգլիացիներն անցնեն Դարդանեղից, ապա նրանք հայտարարել են, որ այդ բանը կանեն բռնությամբ: Մյուս կողմից էլ ռուսներն են սպառնում, որ եթե անգ-

¹ Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, Հ. IV, Երևան, 1972, էջ 83:

² Մարութան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 346:

լիական նավատորմը մտնի Ստամբուլ, ապա քաղաքը կենթարկվի ռազմական գրավման: Ձեզ այստեղ եմ հրավիրել, որպեսզի միասնաբար որոշում կայացնենք այս կացության մասին: Հնարավոր է արդյոք կասեցնել ռուսների առաջխաղացումը և արգելք հանդիսանալ մայրաքաղաքի գրավմանը»: Մասնակիցները պատասխանեցին՝ «Ոչ»...

... Ինչ վերաբերում է այն հարցին, թե Բեուլինի պայմանագիրը օսմանցիների կողմից ինչպիսի ընդունելության արժանացավ, ապա այդ ժամանակ մեզանում հասարակական կարծիքը որոշ չափով հակասական էր: Ոմանք հայտնում էին իրենց ուրախությունն ու գոհունակությունը: Պաշտոնյաների դասը բախտավոր էր ու երջանիկ, որ հակառակ պետության կորցրած այդքան վայրերին՝ իրենց պաշտոնը վարելու համար ղեռ մնացել էր մի երկիր՝ կողոպտելու համար մի ժողովուրդ և դատարկելու համար մի գանձարան: Գործերի՝ այսպես հեշտությամբ իրենց հունի մեջ մտնելու, նման ընթացքից մասնավանդ չատ գոհ էր Աբդուլ Համիդը, որովհետև, Ստամբուլն իր պալատներով թողնելով՝ Անատոլիայի խորքերը գաղթելու աստիճանին հասած Աբդուլ Համիդը կարող էր այլևս մայրաքաղաքում մնալ: Արդարև, իր նախնիների նվաճող բռան մեջ առնված վայրերից շատերն իր չափաքանակի իշխանության առաջին իսկ տարիներին ձեռքից բաց էր թողել, կորցրել, սակայն նրա ինչի՞ն էր պետք. նա նորից կմնար իր պալատում, անձնատուր կլինե՞ր զվարճություններին և հաճույքներին, միահեծան բռնակալի իր տենչանքը կատարել կտար, իսկ մնացյալը կթողներ Աստծո շնորհին¹:

Սան-Ստեֆանոյի հաշտության ժամանակ թուրքական պատվիրակությունը Արևմտյան Հայաստանի ինքնավարության վերաբերյալ հայտարարեց.

– Հայերը երբեք էլ դժգոհ չեն եղել թուրքական կառավարությունից: Թուրքերը միշտ էլ եղել են անչափանդիր իրենց հպատակ քրիստոնյաների նկատմամբ...²:

¹ Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, Հ. IV, Երևան, 1972, էջ 116, 154–155:

² Բաղայան Ռ., Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեուլինի կոնգրեսում 1878 թ., Երևան, 1955, էջ 89:

Հայոց պատրիարք Տ. Ներսես արքեպիսկոպոսի և սուլթան Աբդուլ Համիդ II-ի հանդիպումից մի հատված (1877 թ. 22 օգոստոսի).

Հայոց պատրիարք Տ. Ներսես արքեպիսկոպոսի և սուլթան Աբդուլ Համիդ II-ի հրամանով ներկայացավ Աբդուլ Համիդի պալատ (Եղզը):

Պալատ հասնելով՝ Հայոց պատրիարքին դիմավորեց արքունիքի արարողապետը և առաջնորդեց մի սենյակ, ուր քառորդ ժամ անց սուլթանը նրան ընդունեց:

Պատրիարքը ցանկացավ խոնարհվել սուլթանի առջև, սակայն Համիդը թույլ չտվեց և հրամայեց նստել հատուկ նրա համար պատրաստված աթոռի վրա, որը դրված էր սուլթանի գահին շատ մոտ:

Պատրիարքն ասաց. «Վեհափառ Տեր, Ձեզ նման ինքնակալի առջև կանգնելն անգամ պատվավոր է»:

Սուլթանը հրամայեց. «Ննդրեմ, նստեցեք»:

Պատրիարքը խոնարհաբար նստեց, որից հետո նրանց միջև տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը:

Սուլթանն ասաց. «Ինչպե՞ս եք, աղեկ եք, հանգի՞ստ եք, վաղուց-վանից փափագում էի տեսնվել Ձեզ հետ, բայց պատշաճ պահի էի սպասում: Ես Ձեզ սիրում եմ, այս տեղը Ձերն է, երբ կամենաք, կարող եք գալ ինձ մոտ»:

Պատրիարք. «Վեհափառ տեր, մենք մեզ բոլորովին մոռացել ենք և միայն Ձերդ վեհափառության և կայսերական բանակի մասին ենք մտածում՝ աղոթելով գիշեր-ցերեկ: Հայ ազգը չի զլացել կայսերական բանակին ամեն կերպ օգնելու...»:

Սուլթանը. «Այո՛, գիտե՛մ, բայց շատ եմ ցավում ներկա ժամանակի համար: Ես, որ խղճում եմ մի մրջյուն անգամ տրորել, այսքան արյունահեղություններ տեսնելով՝ սաստիկ ցավում եմ: Սակայն Աստված վկա է, որ այս պատերազմի համար ես պատասխանատու չեմ»:

Պատրիարք. «Թագավորներից մեծագու՛յնն եք Դուք և Ձեր նախորդներին գերազանցած եք: Նրանք իրենց ժամանակին գիտություն մեծ փառավորվեցին, իսկ Դուք տաղնապի և նեղության մեջ օսմանյան դրոշմ փառավորեցիք: Դո՛ւք, Վեհափառ Տեր, Ձեր կայսերական գահին ելնելով՝ մի օր հանգիստ չունեցաք և դրա համար ավելի մեծ եք, և մենք ազգովի աղոթում ենք, որ Ձեր զենքերը միշտ փառավոր լինեն և այս աղետալի օրերն անցնեն, որպեսզի կարողանաք Ձեր գահակալության օրը փառավոր խաթմով խոստացած բարեփոխումներն իրագործել, որպեսզի վաճառական և երկրագործական դպրոցներ հաստատեք և արհեստներին բարգավաճում տաք»:

Սուլթան. «Իմ հայոց ազգից անչափ գոհ եմ և շատ շնորհակալ եմ բոլորից: Ննդրում եմ, որ հայոց ազգին հաղորդես իմ շնորհակալություններն ու սերը: Գոհ եմ նաև իմ Բ. Դուռը գտնվող հայ պաշտոնյաներից, որոնք ամենայն անձնվիրությունով աշխատում են: Գիտեմ, որ հայ ազգը այս պատերազմի պատճառով շատ նեղություն կրեց, բայց հայերը պետք է գիտենան, որ բոլոր այս տառապանքների փոխարեն շատ լավ օրեր պիտի տեսնեն և իրենց հավատարմության պտուղը պիտի վայելեն և բախտավոր պիտի լինեն: Բոլոր հպատակներին սիրում եմ, հատկապես՝ հայոց ազգիս, որ իր դարավոր հավատարմության արգասիքը այս նեղ ժամանակի ընթացքում ցույց տվեց: Ինձ համար մուսուլմանի և քրիստոնյայի միջև տարբերություն չկա, ամեն ոք էլ օսմանցի է, կրոնը Աստծուն է վերաբերում: Ես իրենց սահմանադրություն տվեցի. ամենքն էլ հավասար եղբայրության սկզբունքով թող առաջնորդվեն»:

Պատրիարքն այստեղ մի երկար բարեմաղթություն է անում սուլթանի կյանքի, թուրք բանակի հաջողության և իր բարի բաղձանքի կատարման համար՝ հայտնելով, որ հայ ազգը անբաժանելի է Օսմանյան տերությունից: Նրա արդարության աթոռին ապավինելով՝ հարատևություն և հաստատություն է ցանկանում: Սուլթանը այդ ընթացքում ջերմեռանդորեն լսում էր և բազմիցս կրկնում էր, որ շնորհակալ է: Պատրիարքը պատրաստ էր մեկնել, բայց սուլթանը հրամայեց նստել՝ ասելով. «Ձեր աղոթքը և խնդրածները բարձրյալ Աստվածը թող ընդունի, որպեսզի իմ բոլոր դիտավորությունները գործի դնեմ: Սակայն շատ եմ ցավում բուլղար ազգի համար, որը խավարամտության դեմ մեղանչեց»:

Պատրիարք. «Իրավունք ունի Ձերդ Վեհափառությունը ցավելու, բայց ես կարծում եմ, որ ողջ բուլղար ազգը չէ Ձեր անունը երախտել և հացին ապերախտ գտնվել, այլ փոքր մասն է միայն, որ խաբված է, ուստի Ձերդ Վեհափառությունը, անտարակույս, գթալու է նրանց, ովքեր չեն մեղանչել հպատակության մեջ»:

Սուլթանը. «Ծատ եմ ցավում, բայց ի՞նչ ասեմ, ես պատասխանատու չեմ այս արյունահեղության համար»:

Նույն պահին սուլթանի հրամանով ներս են բերում մի արծաթե ափսե՝ վրան օսմանյան բարձր չքանչառ, որն էլ սուլթանը կախում է պատրիարքի վզից:

Պատրիարքը կրկին բարեմաղթանք և շնորհակալություն է հայտնում՝ ասելով.

«Հայ ազգին շնորհազարդ արեցիք՝ հանուն Ձերդ Վեհափառության ունեցած սիրո զրավականի»:

Սուլթան. «Այս նշանը հանուն իմ հայոց ազգի շնորհում եմ Ձեզ հորից հոր շնորհակալ եմ»:

Պատրիարք. «Երանի թե այսպիսի բարի, հազվագյուտ և հրեշտականման թագավորի արժանավոր հպատակը լինենք...»¹:

Թուրքական «Օսմանլը» Թերթը Հայաստան բառի օգտագործման վերաբերյալ գրել է.

– Պատմական անունների օգտագործումը պարտադիր չէ, մանավանդ երբ այդ անուններն իրենց պատմական նշանակությամբ կարող են մտքերում խոռովություն և գոյություն ունեցող վիճակի դեմ հեղափոխական գաղափարների պատրանք առաջացնել... Ոչ մեկի մտքով էլ քան անցնի առաջ քաշել այդ հարցը, եթե մի քանի բանասեր-կուներ ինչ-որ Հայկական հարց չհնարեն, որի վերջը, ըստ նրանց, պետք է հանդիսանար նշված նահանգների անջատումը և, թերևս, մի նոր իշխանություն կազմավորումը²:

Թուրքական «Օսմանլը» Թերթը քրդերի հնարավոր ըմբոստության մասին.

– Քրդերը չափազանց չփոխված են Հայկական Հարցից... Նրանք հենց տեսնեն, որ ցանկանում են իրենց Արևելյան Ռումելիայի բնակիչների օրը գցել, իսկույն կմիավորվեն և մի մարդու նման ոտքի կկանգնեն: Քրդերի մի մասը քոչվոր կյանք է վարում, նրանց բնակարանն ու գույքը ձիերի վրա է: Ուստի նրանց բարձրացնելու համար բավական է հրամայել ձի նստել³:

Երիտթուրքական «Թանին» պաշտոնաթերթի համարներից մեկում ասվում է.

– Ով կարող է հավաստիացնել, թե այսօր կենդանանալու ձգտող 23-րդ հոդվածին (Բեռլինի պայմանագրի Մակեդոնիային վերաբերյալ հոդվածն է) վաղը չի հաջորդի 61-րդ հոդվածը... Հետևաբար, երբ խոսում ենք Եվրոպայի միջամտության և մեր ներքին գործերը հակա-

¹ Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 202–205:

² «Մասիս», 29 սեպտեմբեր, 1880 թ.:

³ «Մշակ», 1880, թիվ 166:

կշռի ենթարկելու մասին, պետք է մտածենք ոչ միայն Ռումելիայի, այլև Արևելյան Անատոլիայի մասին, քանի որ Ռումելիային սպասող վախճանից հնարավոր չի լինելու փրկել նաև Անատոլիան¹:

Երիտթուրք տեսաբան Աբդուլլա Ջևդեթը գրել է.

– Որտեղի՞ց գոռում-գոչունները, որ լսվում են մեր եվրոպական սահմաններից. արդյոք ի վիճակի՞ են դրանք մեզ արթնացնել: Ինքներդ ձեզ մի խաբեք, մտածելով, թե քանի որ մեր մտահոգությունները առնչվում են եվրոպական Թուրքիային, ապա հարկ չկա մտահոգվել նաև Անատոլիայի համար: Անատոլիան մեր կյանքի ամեն մի մանրամասի ափսոսանքն է, մեր սիրտը, գլուխը և մեր շնչած օդը²:

Թուրք հայտնի քաղաքական գործիչ, պատմաբան Ջիա փաշան գրել է.

– Կաթ վաճառող բուլղարացիների, հովիվ սերերի և պանդուկապան հույների հանդեպ մեր առավելության կորցնելը այնպես էր վիրավորել մեր հպարտությունը, որ պարզ դարձավ՝ արյան հոտ է գալու... Մինչև օրս մահմեդականները համբերել են, սակայն դա (իրավահավասարության սկզբունքը) դարձավ մեր համբերության բաժակը լցնող վերջին կաթիլը...³:

Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Աբդին փաշայի պատասխանը մեծ տերությունների ներկայացուցիչներին (1880 թ.).

– Չնայած պատերազմի առաջացրած ամեն տեսակի դժվարություններին ու բարդություններին՝ օսմանյան կառավարությունը մտադիր է կատարել այդ կետերը (Բեռլինի դաշնագրի) և Քրդստանի (Հայաստանի) բոլոր մասերն ու վիլայեթներն ուղարկել մի քանի գիտակ պաշտոնյաների, ովքեր պետք է գտնեն արդյունավետ միջոցներ ոչ միայն հարկերը հավաքելու, այլև նորին մեծության սուլթանի մյուս հպատակների անվտանգությունն ապահովելու համար...

Օսմանյան կառավարությունը օրենք է հրատարակել գործադիր իշխանությունից նիզամի դատարաններն անջատելու վերաբերյալ...

¹ Անտոնեան Ա., Պատկերազարդ ընդարձակ պատմություն Պալկանեան պատերազմին, Հ. Գ., Կ. Պոլիս, 1912, էջ 499:

² Tunya T. Z., Türkiye'de siyasal partileri, Cilt III, İstanbul, 1989, s. 463.

³ Akçura, Türk Yurdu, Cilt III, Ankara, 1990, s. 47.

փորձեր է կատարում սահմանել նոր եղանակներ տուրքերի և տասանորդ հարկի բաշխման համար, որով հույս ունի ապահովելու ազգաբնակչության հանդարտությունը և վերջապես՝ նա արդեն ձեռնարկել է մի քանի տեղերում ոստիկանություն և ժանդարմների ստեղծումը...¹:

Անգլիական փոխհյուպատոս Ստեֆանի զրույցը մուհաջիրների հետ (18-ը օգոստոսի, 1880 թ.).

Փոխհյուպատոսը հարցնում է. «Դուք ինչո՞ւ թողեցիք այն երկիրը, որտեղից հիմա գալիս եք»:

Պատասխան. «Մենք ինչպե՞ս կարող ենք ապրել քրիստոնեական կառավարության հպատակության տակ: ... (Բացի այդ) մեզ կանչել են կառավարական պաշտոնատարները»²:

1881 թ. օգոստոսի 29-ի համարում «Հայաստան» բառը գործածումից հանելու դեմ «Թերջուման-ի հաքիքատ» թերթը գրել է.

– Անատոլիան չի պատկանում որևէ ազգության, քանի որ այնտեղ բնակվում են մի քանի ժողովուրդներ, իսկ այն, որ այդ տարածքը ինչ-որ ժամանակ հայկական է եղել, վաղուց արդեն մոռացվել է և ինչո՞ւ պիտի այն կոչվի Հայաստան³:

Սուլթան Աբդուլ Համիդի մեծ վեզիրներից մեկը՝ Սաիդ փաշան, 1881 թ. բացահայտորեն հայտարարել է.

– Հայկական Հարցը մեկընդմիջտ վերացնելու համար պետք է վերացնել Հայերին⁴:

1883 թ. Հոկտեմբերին Թուրք զորահրամանատար Մուխտար փաշան, պատասխանելով Վիեննայի «Standard» թերթի թղթակցի հարցին, ասել է.

– Բնույնի դաշնագիրը մեզ վրա պարտականություն է դրել Հայկական մարզերում բարենորոգումներ գործադրել: Սակայն ի՞նչ է

¹ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, стр. 92.

² Նույն տեղում, էջ 69:

³ Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Հ. I., Երևան, 2008, էջ 253:

⁴ Պեյքերյան Ա., Մեծ տեղություններ, Օսմանյան կայսրությունը և Հայերը Փրանսիական արևմտյան (1914–1918), Երևան, 2005, էջ 12:

Հայաստանը: Այդ անունով օսմանյան զավառ չկա և վարչական անվանումն էլ մի կողմ թողնելով՝ Հայաստանի սահմանները, ինչպես նշվել է Բնույնի դաշնագրով, չատ դժվար է ճշտել... Ինչը Դուք Արմենիա եք անվանում, չատ ավելի Ռուսաստանի և Պարսկաստանի կազմում է... Արմենիան ոչ այնքան Արարատի այս կողմն է, որքան մյուս կողմը¹:

1889 թ. Հոկտեմբերի 22-ին Վամբերին հաղորդում է Լոնդոն, թե սուլթան Աբդուլ Համիդը զրույցի ժամանակ իրեն ասել է.

– Պատմի՛ր քո անգլիացի բարեկամներին, մասնավորապես՝ լորդ Սոլսբերիին, որի նկատմամբ մեծ հարգանք ունեմ, որ ես ավելի չուտ թույլ կտամ գլուխս մարմնիցս պոկել (այստեղ նա ավելի է զրգրվում), քան թույլ կտամ ստեղծել անկախ Հայաստան²:

Թուրք պաշտոնյաները քուրդ բեյերին հորդորում էին.

– Հայը ձեր պատառն է... Դուք Հայերի տերն եք, նրանց անձն ու ինչքը ձերն է: Ճշմարտությանը կատարեք այդ դերը, որպեսզի չգրկվեք ձեր արտոնություններից³:

Տերիկի իրադարձությունները հետաքննող Հանձնաժողովի ղեկավար Նիվսրեք քրդերին ասել է.

– Եթե երբեքից Հայերի կողմից նույնիսկ ամենափոքր շարժում նկատվի, իսկույն հարձակվեք նրանց վրա և կոտորեք՝ առանց սպասելու լրացուցիչ հրամանի⁴:

Էրզրումում Հայերի նկատմամբ իրականացված չարաչառումների և ոճրագործությունների մասին.

1889 թուի ընթացքում Էրզրումի վայրին մի անստորագիր նամակ է ստանում, որի մէջ գրուած է լինում՝ թէ Հայոց դպրոցում պատերազմական մթերքներ են պահուած և թէ այնտեղ մի գործարան կայ, ուր գէնք ու զրահ են պատրաստում: Նահանգապետը կարդալով այդ, ծիծաղում է և նամակը մի կողմը ձգում: Բայց կարճ միջոցից յետոյ

¹ «Արևելյան մամուլ», 1883, Հոկտեմբեր, էջ 483–484:

² Պողոսյան Ս., Գոյատեման պալքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 95:

³ «Հնչակ», 1890, թիվ 2:

⁴ Նույն տեղում, թիվ 9:

վալին երկրորդ անատորագիր նամակն է ստանում՝ նոյն բովանդակությամբ: Վալին, այդ բանն իբրև հետաքրքրական և ծիծաղելի դէպք և ո՛չ թէ քաղաքական խնդիր դարձնելու նպատակով, պատմում է իր բարեկամին՝ Երզնկայի մութեսարիֆին: Վերջինս անմիջապէս այդ իրողութիւնը հետագրում է Կ. Պօլիս՝ մեծ վէզիրին և շուտով Ստամբուլից հրաման է գալիս էրզրումի վարչութիւններին՝ հայոց դպրոցն ու եկեղեցին հետախուզելու: Հրամանը կատարւում է՝ առանց պատճառների մասին տեղեկութիւն տալու սաստիկ վրդովուած ու վիրաւորուած հայերին:

... Հետախուզութեան ժամանակ տաճիկ սպաները վայրենի կերպով են վարւում, նրանք պղծում են եկեղեցու սրբազան անօթները և վիրաւորական խօսքեր ասում, բայց ի հարկէ՝ ո՛չ մի զէնք չեն գտնում: Հասկանալի է, որ այս դէպքերը բոլոր քրիստոնեաներին վրդովեցին: Հայերը պատգամաւորներ ուղարկեցին նահանգապետի մօտ՝ բացատրութիւն պահանջելու: Վալին բաւական համարեց միայն պատասխանել՝ թէ եղածը կատարուել է բարձրագոյն հրամանով. բայց հայ ժողովուրդը գոհ չմնաց այդ պատասխանից: Վաճառականները մի քանի օր շարունակ փակեցին իրենց խանութներն ու գրասենեակները և այդպիսով զգալի խանգարումն առաջացրին քաղաքի սովորական կեանքի մէջ: Նահանգապետն, այդ տեսելով, կանչում է իր մօտ քրիստոնեայ համայնքների գլխաւորներին և պատուիրում, որ սրանք իրենց ազդեցութիւնը գործ դնեն՝ վաճառականներին համոզելու, որ կրկին բանան իրենց խանութները: Հոգեւորականներն աշխատեցին այդ ուղղութեամբ, բայց յաջողութիւն չունեցան: Այն սակաւթիւ վաճառականները, որ հետեւելով նրանց խրատներին՝ խանութները բաց արին, միւսներից հռչակուեցան իբրև դաւաճաններ և ուրացողներ: Յառաջացան նորանոր պառակտումներ և կուսակցութիւններ. յուզմունքը նկատելի կերպով աճում էր քաղաքում, և մահմեդականների հինաւորաց ատելութիւնը քրիստոնեաների դէմ՝ սկսեց բորբոքուել: Հետեանքն այն եղաւ, որ մահմեդականները յարձակումն գործեցին հայ ժողովրդի վրայ, հայոց եկեղեցու առաջը, և այդպիսով առաջացաւ այն մեծ հրապարակային կոտորածը: Զօրքը միջամտեց, բայց որովհետեւ զինուորները բացառապէս իսլամներ են, կոխը ողբալի հետեանքներ ունեցաւ էրզրումի քրիստոնեայ ազգաբնակչութեան համար: Պաշտօնական տեղեկութեանց համեմատ՝ սպանուել

էին 20 հոգի և 80 էլ վիրաւորուել, սակայն զոհերի թիւը տարաբաղդաբար չատ աւելի է եղել¹:

Մուստֆա Նեղիմը Գում Գափուի դեպքերի մասին.

... Երբ իմ կառքը Կեսիկ փաշայի զառկայրից ցած էր իջնում, անընդհատ հետեւում էի, որ զենքի ձայն լսեմ: Սակայն ձեն-ձուն չկար... Տեսա Դայի Դինիտչի անունով ծանոթիս, որը պատմեց.

— Ոչ մի առանձնակի բան չի կատարվել... Եկեղեցու արարողութեան ընթացքում մի ձկնորս աղմուկ է բարձրացրել և մի քանի անգամ կրակել է: Գնդակներից մեկը կպել է ոստիկան Կարապետ էֆենդուն, խեղճը մեռել է... Զորանոցում դեպքի մասին իմանում են: Ո՞վ իմանա, թե ինչպե՛ս են ներկայացրել, որ սպարապետի դռնից դուրք եկավ: Պատրիարքարանն ու փողոցները չըջափակված են...

Վանեցի սրճարանապետ Հակոբ աղան ասաց.

— Կատարվածը նշանակութունից զուրկ է, բայց զգում եմ, որ անիրավորեն փորձանք է գալու հայերի գլխին...

Վերադարձաւ պալատ ու տեսածներին ու լսածներին մասին գրեցի. «Այս դեպքը, իրոք... դիվանագիտութեան և քաղաքականութեան հետ կապ չունի: Եթե նույնիսկ քաղաքական բնույթ էլ ենթադրվի, կառավարութեան համար ավելի նպատակահարմար է մի սովորական դեպքի գոյն տալ: Հակառակ պարագայում՝ ոչ հեռվում եղած կրակը, որն ուշ էր բռնկվելու, մեր ձեռքով ենք խառնելու և ավելի չուտ բռնկելու: Դժբախտաբար, անձնական օգուտներ ապահովելու համար հազար հրդեհ ցանկացող անձանց, անձրևի նման տեղացող ժուռնալների դեմ իմ անհատ խորհրդածութիւնները որևէ ազդեցութիւն չունեցան...

Մի հայ չմնաց, որ վստահ լիներ իր անձի ու ունեցվածքի անվտանգութեան համար... Գում Գափուի դեպքերից հետո Պոլսի հայերից հազարավորների օջախները մարեցին²:

Գում Գափուի ցույցից հետո սուլթան Աբդուլ Համիդը Հայոց պատրիարքին.

— Լսեցի ու սաստիկ բարկացա: Այլևս նման դեպքեր չլինեն, թե չէ Զեզ ու ձեր ժողովրդին լրիվ կջախջախեմ: Հայտնեցե՛ք, թե ինչո՞ւ այդ

¹ Նաումյան է., էրզրում, Թիֆլիս, 1896, էջ 7–10:

² Մուստաֆա Նեղիմ, Հայ եղեռնը և իմ վկայութիւնները, Սոֆիա, 1936, էջ 7–12:

ղեպքերը պատահեցին: Անշուշտ, դրանց մասնակցություն ունեցել եք¹:

1909 թ. Թուրքական «Թանիր» թերթը տպագրում է նախկին մեծ վեզիր, ծերակույտի նախագահ Սայիդ փաշայի հուշագրությունները, որոնցում կան Գում Գափուի ցույցի վերաբերյալ հետևյալ տողերը.

– Սուլթանը զորքը չէր կանչել հայերի ցույցը ցրելու համար... Նա կարող էր ցույցը ընդհանրապես թույլ չտալ, սակայն գիտակցաբար այդ չարեց, որպեսզի թուրք զինված ամբոխը հաշվհարդարի ենթարկի հայերին: Սուլթանի հրամանով զինվեցին սոֆիստներին, զինվորներին հագցրին ուսանողական արտահագուստ և տարան հայերի դեմ...²:

Բիթլիսի վիլայեթի վարչությունը սուլթանական պալատի պետական քարտուղարին ուղղված նամակում գրել է (1890 թ.).

– Ազայի Բոկ, Կանչ սանջակների մեջ մտնող կազանների բնակիչները (քրդերը), որոնք բացի հարկեր վճարել հրաժարվելուց, վերջին 7–8 տարիներին թալանում էին հարևան (հայկական) գյուղերը, հըրդեհում էին տները, կատարում էին սպանություններ և նման այլ հանցագործություններով ճնշում էին խաղաղ բնակիչներին, իսկ ուղարկված ժանդարմներին դիմադրություն էին ցույց տալիս, այժմ հնազանդության ցանկություն են հայտնել և խոստացել են իրենց հանգիստ պահել...

Իր հանցանքը ընդունեց նաև քուրդ Թաղիրը՝ Օսման օղլու որդին, այն նույն Թաղիրը, որը զավթել էր (հայկական) եկեղեցին Ռասս գյուղում և նրանում ամրանալով՝ 15 տարի շարունակ թալանել էր չըրջապատի (հայկական) գյուղերը, կատարել էր այլ չարագործություններ. անցյալ տարի ուղարկված զորքերը, երեքամսյա արշավանքներից հետո, վերադարձել էին ձեռնուռնայն³:

Թուրքական պաշտոնական մամուլը 1891 թ. մարտի 31-ին գրել է.

– Երեկ Տրապիզոնից ժամանեցին քոչվոր ցեղերից ձևավորված նոր զնդերի սպաներն ու շարքայիները: Նորին մեծությունը սուլթան-

¹ «Հնչակ», 1890, թիվ 6:

² **Туния В.**, Младотурки и Армянский вопрос. 1908–1912, Е. 2004, стр. 91.

³ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, стр. 42.

նը նրանց տեղավորեց Քեռքում (Ելզըզում)՝ պալատի հարևանությամբ և Դերվիշ փաշային ուղարկեց նրանց հաղորդելու միապետի ողջույնը: Սուլթանը հրամայեց նրանց տեղավորվել նոր զինանոցներում և հետևել, որ որևէ բանի կարիք չզգան¹:

Թուրքական պաշտոնական մամուլը 1891 թ. ապրիլի 3-ին համիդյան զնդերի ստեղծման մասին գրել է.

– Այս երջանիկ գաղափարի (համիդիե զնդերի ստեղծման) նախաձեռնություն և դրա իրականացման մեծ հաջողություն համար մենք պարտական ենք Նորին կայսերական մեծությունը սուլթանի իմաստությունն ու հեռատեսությունը... Կազմակերպվելու է 24 գունդ և դրանք բոլորը հավաքագրվելու են էրզրումի և Բիթլիսի վիլայեթներում բնակվող ցեղերից... Ելզըզում վերջերս ստեղծվեց հանձնաժողով մարշալ Շաքիր փաշայի՝ սուլթանի գլխավոր թիկնապահի գլխավորությամբ՝ այդ զնդերի կանոնադրությունը մշակելու համար²:

Մուստաֆա Նեդիմը համիդյան հեծելազնդերի ստեղծման մասին.

– Գում Գափուի ղեպքերից հետո սկսվեցին կազմավորվել համիդյան հեծելազնդեր: Վերջնականապես որոշված էր, որ այս զինված ելուզակախմբերի գործադրած խայտառակությունները Փոքր Ասիայում, Քրդստանում, հայաբնակ վայրերում չափ և սահման չպետք է ունենային... Բարեբախտաբար, արաբ և քուրդ ցեղապետներից չատերը, չկարողանալով գուշակել սպասվելիք հետևանքները, խուսափեցին զինվորական լծի տակ ընկնելու երկյուղից: Սակայն հետո ամոթով մնացին՝ տեսնելով մտնողների կատարյալ սանձարձակությունն ու անզգամությունները: Որոշ խորամանկ ցեղապետներ չուշացրին յուրի պես հոսող նվերներ և դրամ ուղարկել Կ. Պոլսի պաշտոնյաներին և ազդեցիկ անձանց: Նրանցից համաձայնություն ստանալով՝ հրեշների պես հարձակվեցին իրենց չուրջը գտնվողների վրա՝ թալանելով այն ամենը, ինչն ընկնում էր ձեռքները...³:

¹ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, стр. 162.

² **Blue Book**, Turkey, N I, 1892, p. 32.

³ **Մուստաֆա Նեդիմ**, Հայ եղևոնը և իմ վկայությունները, Սոֆիա, 1936, էջ 12:

Էրզրումի բերդի պետ և յոթերորդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Աթուկ փաշան համիդյան զնդերի մասին.

– Բացարձակ արհամարհանքով եմ վերաբերվում դրանց նկատմամբ... Ես բազմաթիվ հայտարարություններ եմ արել այն մասին, որ դրանք նույնիսկ ավազակներ չեն, այլ պարզապես թալանչիներ...¹:

Համիդյան զնդապետ Ֆահեդը, որն առանձնանում էր բացառիկ բռնություններ և դաժանություններ, ցուցմունք տալով ասել է.

– Չարագործությունների հեղինակը ես չեմ, այլ՝ եկող-զնացող կուսակալները: Եթե նրանց հրամանով ու հաճությունով չլինեք, ո՛չ ես, ո՛չ էլ իմ մարդիկ չէինք համարձակվի ժողովրդի մեկ շուրջին դիպչել: Մեղավորները նրանք են, ովքեր թույլատրեցին կատարել այս ամենը: Հայաստանի մեջ կատարված բոլոր գողությունները, ավազակությունները, ոճրագործությունները կառավարության գիտություններ ու մասնակցություններ են տեղի ունենում²:

Թուրք փաշաներից մեկը Բայազետում վալի նշանակվելիս ասել է.

– Գնում եմ Բայազետ վերջնականապես պաշտոնանկ լինելու, որովհետև չեմ կարողանում տանել համիդե կոչված գազանների արարքները, քանի որ թագավորի անունը կրող զինվորներին դիմակայելը նույնն է, ինչ թագավորին դիմադրել³:

Քուրդ ավազակապետ Մոստիգոյի հետ անգլիացի դիվանագետ Դիլոնի զրույցից մի քաղվածք.

– Հարց.— Ինձ պատմել են, որ դուք հսկայական թվով հայեր եք սպանել, փախցրել նրանց կանանց, հրդեհել եք նրանց գյուղերը...

– Պատասխան.— (արհամարհանքով) Դա ոչ մի ընդհանուր բան չունի իմ բանտարկության հետ: Ես հայերին թալանելու համար չէի պատժվի: Մենք բոլորս ենք այդ անում: Ես հազվադեպ եմ նրանց սպանել, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք դիմադրել են... Եթե ինձ կախեն, ապա այդ կանեն թուրքական պահակակետի վրա հարձակման ու թալանի, ինչպես նաև թուրք զնդապետի կնոջ բռնաբարության համար... Բայց ոչ երբեք հայերի համար: Նրանք ո՞վ

¹ ЦГВИА, ф. 2000, ош. 1. А. 1006, л. 15.

² Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Հ. II, Երևան, 2008, էջ 21:

³ Պողոսյան Ս., Սասունի պատմություն, Երևան, 1985, էջ 167:

են, որ ես տուժեմ, մենք այնպիսն գործեր ենք կատարել, որոնք կզարմացնեն տերություններին: Մենք հարձակվեցինք գյուղերի վրա, սպանեցինք նրանց, ովքեր ի գորու էին մեզ սպանել, տներ թալանեցինք, դրամ զավթեցինք, ոչխարներ ու կանանց փախցրինք և ճանապարհորդների վրա հարձակվեցինք: Մեր գործերը մեծ ու խիզախ էին, և մարդիկ դրանց մասին չատ էին խոսում:

Լսելով այդ «մեծ գործերից» շատերի մասին, որոնցից մի քանիսն արժեցել են 50 մարդու կյանք՝ ես հարցրի.

– Որե՛ հայ երբեկիցե ձեզ դիմադրություն ցո՞ւյց տվել է, երբ փախցնում էիք նրա անասունները, կնոջը...

– Ոչ հաճախ: Նրանք չեն կարող, քանի որ զենք չունեն, և նրանց քաջ հայտնի է, որ եթե մեզանից մի քանիսն սպանեն, մյուս քրդերը մեր վրեժը կհանեն, այսինքն՝ հայերը ոչինչ չեն չահի: Երբ մենք նրանց սպանում ենք, ոչ ոք չի վրդովվում: Թուրքերը հայերին տանել չեն կարողանում, իսկ մենք նրանց հանդեպ թշնամություն չենք տածում: Մեզ լոկ փող և ավար է պետք, իսկ որոշ քրդեր ուզում են նաև զավթել նրանց հողերը, մինչդեռ թուրքերը տենչում են հայերի արյունը¹:

Իշխանության կողմից հովանավորություն ստացած քուրդ բեյերի ոտնձգությունների և դաժանությունների մասին վկայում է Մուսա-տաֆա Նեդիմը.

– Բիթլիսի Մուսա բեյը, որը Բիթլիսի շրջանում ինքնիշխան և բռնակալ մի անձ էր, մի ափ հող չէր թողել ոչ մի հայի ձեռքում: Մուսա բեյը հայերին աշխատեցնում էր ինչպես գերիների: Հայերը համբերությամբ տանում էին բռնությունը, տառապանքն ու քաղցը, սակայն մի անգամ առաջ եկավ պատվի խնդիր, որը եթե նույնիսկ հյուլի չափ էլ լինեք, հայերը չէին կարող հանդուրժել: Նրանք անպատիվ ապրելուց պատվով մեռնելը նախամեծար էին համարում: Մուսա բեյը սկսեց ձեռք գցել հայերի կանանց ու աղջիկներին: Մի կույսի առեկանգելը և իր հպատակ մի քրդի հետ ամուսնացնելը զրգոեց հայերին: Հայերը օգնության կոչեր ուղարկվեցին ամենուրեք, եվրոպական լրագրերին ու դեսպաններին: Դեսպաններն ու եվրոպական մամուլը ստիպեցին սուլթան Համիդին պարզելու իրողությունը: Մուսա

¹ Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897, ч. II, стр. 24–29.

բեյին հսկողութեան տակ Պոլիս բերեցին: Հարցը հանձնեցին արդարադատութեանը: Այնուամենայնիւ, չցանկանալով Մուսա բեյին ճգմել հայերի պատճառով, մինչև դատավարութեան սկսվելը նրան հյուրընկալեցին Սկյուտարի կառավարիչ քուրդ Բահրի փաշայի պալատում... Բահրի փաշան անուս, տգետ, խորամանկ մի մարդ էր, որն իր այդ պաշտոնին հասել էր խարդախութեամբ ու խաբուութեամբ... Մի առավոտ պալատ հասավ Մուսա բեյի փախուստի լուրը: Վախենալով Եվրոպայից՝ Արդուլ Համիդը հուզվեց: Անմիջապես բոլոր կողմերը հրաման ուղարկվեց նրան ձերբակալելու համար... Վերջապես Մուսա բեյին ձերբակալեցին էնկյուրիի կուսակալութունում և Պոլիս բերեցին: Քննութեամբ ապացուցվեց, որ նրա փախուստը կազմակերպվել էր Բահրի փաշայի օգնությամբ՝ մեծ կաշառքի գնով... Մուսա բեյը՝ Թաիֆե, իսկ Բահրի փաշան՝ Ալբանայի Փրիշթինա գավառ արքայականացին: Տարօրինակ է, որ Բահրի փաշան իր արքայական Փրիշթինայի մութեսարիֆ և ապա Ադանայի կուսակալ նշանակվեց...¹:

Համիդի կապիտան Իդրիսը Համանչեյի հայերին ասել է (1892 թ.).

– Առանց խոսք իսկ արտասանելու ձերբիս համար խոտ բերեք, թե չէ՝ ձեզ կգնդակահարեմ:

– Սակայն խոտ չկա և քեզ համար մենք այն ստեղծել չենք կարող, – պատասխանեցին հայերը:

– Որ այդպես է, մեռեք, – բղավում է կապիտանն ու տեղնուտեղը սպանում հայերին²:

Քուրդ բեյերը, երբ իրար հետ թշնամանում էին, ասպատակում էին հակառակորդին պատկանող հայկական գյուղերը: Այսպիսի մի դեպքի մասին է վկայում թուրք պատմաբան Ջևդեթը.

– Վանի բերդապահ Մուհամմեդ Դերվիշ փաշան Մուշի սանջակի մութեսարիֆ միրմիրան Սելիմ փաշայի դեմ ունեցած թշնամութեան պատճառով և վրեժ լուծելու նպատակով Սեբքի աշիրեթին նրա դեմ էր գրգռել. Վանի վիլայեթից որոշ մարդկանց և հպատակ մի քանի աշիրեթների իր շուրջն էր հավաքել և Սեբքի–Արդուլլահ օղլու Սուլեյ-

¹ Մուստաֆա Նեդիմ, Հայ եղեռնը և իմ վկայությունները, Սոֆիա, 1936, էջ 12–14:

² Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, стр. 336.

մանին բազմաթիվ քրդերով Մշո սանջակի Բուլանըլս կոչված վայրն էր տարել և այն կողոպտել տվել: Սելիմ փաշան էլ փոխադարձաբար Զրփլաք–Շեյխս անունով անձի ղեկավարությամբ բազմաթիվ քուրդ զինվորներով կողոպտել էր Վանի էյալեթին ենթակա Սուլեյմանի գավառը¹:

1892 թ. վերջերին Կեսարիա, Մարզվան, Յոզղաթ, Սերաստիա և մի շարք այլ քաղաքներում տարածված հայտարարություն.

– Օսմանցիներ, հասել են Արդուլ Համիդ բռնակալի թագավորության վերջին օրերը, որը անպատվել է իսլամության անունը և կեղտոտել է Օսմանի սուրբ գահը:

Այդ բռնակալը հափշտակել է կայսրությունը, ավերել է մեր սիրած հայրենիքը և կառավարության գլխին մնալու համար, մեր ամենալավ հայրենասերների արյունն է հոսեցնում:

Այդ գործերի համար վրեժխնդրության ձայնը բարձրացել է մինչև երկինք:

Գործելու ժամը հասել է: Իսլամի միլիոնավոր հավատարիմները, որ ազատ կերպով ու առաջադիմելով ապրում են մեր ուժեղ տերության ձեռքի տակ, գալիս են ձեզ օգնության: Եղեք քաջարի...²:

(1893 թ.) Մշո կառավարիչ Ղասըր փաշան հանձնարարում է հայկական գյուղերում խուզարկություններ կատարել և զենք գրտնել, սակայն թուրք սպա Ռեչիդը Ավդուտ գյուղում զենք չի գտնում և վերադառնալով՝ զեկուցում է կառավարչին.

– Դուք ինչպե՞ս եք համարձակվում պնդել, որ իմ ունեցած տեղեկությունները կեղծ են: Անմիջապես վերադարձե՛ք և գտե՛ք զենք: Առանց զենքի՝ չհամարձակվեք վերադառնալ, – բղավում է Ղասըր փաշան:

Ավդուտ գյուղում այս անգամ էլ զենք չգտնելով՝ Ռեչիդը գյուղի տանուտիրոջը ասում է.

– Ինձ ուղարկել են գտնելու թաքցրած զենք: Ասեք որտե՞ղ է:

– Մենք որևէ զենք չունենք, – պատասխանում է տանուտերը:

– Լավ, այժմ լսեք: Ես պետք է այստեղ զենք գտնեմ, անկախ նրանից՝ դուք այն ունեք թե ոչ: Առանց զենքի ես վերադառնալ չեմ

¹ «Թարիխի Ջևդեթ», հ. IX, Ստամբուլ, 1871, էջ 64 (արաբատա թուրքերեն):

² «Հնչակ», 9-ը սեպտեմբերի, 1892 թ.:

կարող: Եթե դուք ինձ որևէ զենք չտանք, ես իմ մարդկանց հետ տեղավորվելու եմ ձեր գյուղում: (Իսկ դա նշանակում էր թալան):

... Ձուներ՝ զնացեք գտեք կամ էլ գողացեք, ինչ ուզում եք արեք, միայն թե ճարեք, — սպառնում է թուրք սպան:

(Հայերը հարկադրված են լինում հարևան քրդերից հրացաններ գնել ու տալ Ռեչիդին)¹:

Տրապիզոնի բնակչությունը հարկահավաքների կեղեքումների դեմ Բ. Դուռ բողոքելուց հետո, երբ տեսնում է, որ ոչ մի օգուտ չի տալիս, նամակ է գրում Գերմանիայի կայսր Վիլհելմին (այս նամակի գաղափարը առաջարկել է Ռիզայի մութեսարիֆը 1894 թ.):

— Կա՛յսր, Դուք մեր սուլթանի մտերիմ բարեկամն եք, խնդրում, աղաչում ենք Ձեզ միջնորդել նրան, որպեսզի գործադրել տա այն օրենքը, որը ինքն է գրել... Հարկահանները կողոպտում են մեզ՝ հակառակ բոլոր օրենքների: Իսկ եթե մեզ չպետք է աղատեք այս անտանելի վիճակից, ապա աղաչում ենք տեղ պատրաստեք, որ գաղթենք այստեղից և հեռանանք...²:

Նիկոմիդիայի թուրք դատավորի կարծիքը Օսմանյան կայսրության ապագայի մասին (1895 թ.):

— Վաղ թե ուշ անհազ եվրոպական տերությունները մեզ Կ. Պոլսից արտաքսելու են, գիտենք նաև, թե ուր ենք գնալու... Հավաքվելու ենք Երուսաղեմի կողմերում: Եվ այնտեղ գնալուց հետո մեր երկրի ազգերը մեր չուրջն ենք հավաքելու, և այդ ժամանակ Մուհամեդը և Հիսուսը պիտի գան...³:

Սեբաստիայում կառավարչական գնդի հրամանատար Մահմեդը ցուցադրաբար մի հայ սպանելով, ասել է.

— Ահա օրինակ ցույց տվի... Վստահ եղեք, որ հայ ցեղը ոչնչացնելու կայսերական իրադե կա⁴:

¹ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, стр. 351–352.

² Պաժակ, Հարկերը Տաճկա-Հայաստանում, Բաքու, 1904, էջ 73:

³ Տեր-Միքայելյան Գ., Հայն ու թուրքը և Արևելյան խնդիրները, Կահիրե, տարեթիվը բացակայում է, էջ 17:

⁴ Lepsius J., L'Arménie et l'Europe, Lausanne, 1896, p. 140.

Սեբաստիայի վալին հայերին սպառնում է՝ ասելով.

— Հայե՛ր, հանգիստ մնացեք, իզուր հույսեր մի կապեք Անգլիայի կամ ուրիշների հետ: Մենք արդեն գիտենք Եվրոպայի հետ վարվելու եղանակը: Եթե հարկ լինի, Անգլիային էլի մի բան կտանք, ինչպես 1878 թ. տվեցինք Կիպրոսը և ձեր բոլորի հոգին կհանենք...¹:

Սեբաստիայի կոտորածների հաջորդ օրը իշխանությունն այն դադարեցրեց՝ ասելով.

— Երեկ մահմեդականի պարտքը պարտավորեցնում էր սպանել, և թալանվածը նրա պարգևատրությունն է, իսկ այսօր պետք է ամեն ինչ ավարտվի²:

Երբ ժողովուրդը Սեբաստիայի վալիից պահանջում է զորք հանել և կոտորածները դադարեցնել, ապա վերջինս հանում է մի հեռագիր և ասում.

— Մի քանի սրիկաներ են կովում, դրա համար ինչո՞ւ զորք հանեմ... 24 ժամ պետք է կոտորեն, թալանեն: Դրանից հետո միայն կառավարությունը զորք կհանի և խաղաղություն կվերահաստատի³:

Թուրք կայմակամը և չեյխ Մեհմեդը քուրդ ցեղապետերին գրել են.

— Ձեջե՛ք բոլոր որդերին... Եթե Մուհամեդի իսկական հավատացյալներից եք, հավաքեք ձեր բոլոր մարդկանց և սկսե՛ք հայ գյուղերը թալանել, այրել ու սպանել: Այդ գյուղերները աշխատում են տիրանալ այս երկրին և ձեր տերը դառնալ: Ժամանակն է գործելու: Դրանց արմատները չորացրեք. ոչ մի հայ թո՛ղ չմնա⁴:

Մի առիթով սուլթան Աբդուլ Համիդը կատաղություն բացականչել է.

— Սասո՛ւն, Սասո՛ւն՝ հրաբուխի բերան, խառնարան, պետք է մառնե՛լ այդ հրաբուխը⁵:

¹ «Մշակ», 1895, թիվ 67:

² Les massacres d'Arménie, Paris, 1896, p. 226.

³ «Դրոշակ», 1896, թիվ 3:

⁴ «Հնչակ», 1984, թիվ 11:

⁵ Պետոյան Վ., Սասունն անցյալում և Սասունի աղատագրական շարժումները, Երևան, 2005, էջ 112:

Արդուլուհան Բինբաշին, որը 1894 թ. հուլիսին զորքերի գլուխն անցած մտնում է Սասուն, կանգ է առնում Շենիկ գյուղում և 16 օր ապրում հայերի հաշվին՝ ամեն օր ստանալով 16 ոչխար, 21 փութ ալյուր, 1,5 փութ յուղ, 2 փութ պանիր, 80 հավ, 18 փութ գարի և 30 աման սեր, հրամայել է.

– Հարկ չվճարողների հագուստները հանել, վերցնել տնային կահ-կարասին ու վաճառել, դատարկել հացահատիկի հողերը (վերցրածի համար որևէ փաստաթուղթ չտվեց): Յուրաքանչյուր ունևոր գյուղացի չարչարանքը թող հատուցի 150 դուրուշով: Սուլթանի ներմանն արժանանալու համար սասունցիները պարտավոր են լրացուցիչ հատուցել¹:

Սուլթան Արդուլ Համիդը Զեքի փաշային հեռագրում է.

– Քուրդիստանի կողմերում աշիրեթների միջև ծագած խռովությունները հանգստացնելու և մի քանի ապստամբ ցեղերի զսպելու համար հրամայում եմ՝ Զեքի փաշային մի քանի վաշտերով գնալ այդ կողմերը և բնաջնջել Սասունի և չրջակայքի բովանդակ հայերին...²:

Զեքի փաշան Տարոնում մահմեդականներին հայերի դեմ հանելու համար հայտարարել է.

– Սասունը ապստամբել է սուլթանի դեմ՝ հարկ չի՝ վճարում. ուստի պետք է մոխրակույտի վերածենք Սասունը³:

Բիթլիսի վիլայեթի վալի Հասան Թահսին փաշան Գեղիեզուզանում բարձրացել է մի գերեզմանաքարի վրա, դուրս է բերել սուլթանի ֆերման, կախել կրծքից և մի էֆենդի քարտուղարի կարգադրել կարդալ այն.

– Այն ատելի գյուղերը, որոնք մեղադրվում են ըմբոստության մեջ հիմնահատակ կործանել...⁴:

¹ Лазарев Я. А., Причины бедствий армян в Турции и ответственность за Сасуна, Тифлис, 1895, стр. 31–32.

² Պոյաճեան Գ., (Ժիրայր), Ելորդէ Սասուն, Կ. Պոլիս, 1910, էջ 160:

³ Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Հ. I, Երևան, 2008, էջ 474:

⁴ Սպիրով Դ., Հայերի սարսափելի կոտորածները (1894–1896), Երևան, 1997, էջ 41:

Բիթլիսի վալի Հասան Թահսին փաշայի ճառը Գեղիեզուզանում.

– Կարեկցություն չցուցաբերել ոչ մեկի և ոչնչի նկատմամբ: Դուք ինչ որ անում եք, անում եք սուլթանի և մարզարեի համար¹:

Զեքի փաշան Սասուն էր բերել չեյիս Մահմեդին, որն էլ խուժանին կոչ էր անում.

– Ո՛վ իսլամի զավակներ, գյավուրի կնոջն ու աղջկան առևանգելը արդար գործ է, նրանց եկեղեցիները քանդելն ու այրելն աստվածային գործ է: Զեքի փաշա՛ն արյան չափ հուրի ու փերի պետք է առնեք²:

Զեքի փաշայի ուղերձը և սուլթան Համիդի նամակը քուրդ մեծապետներին.

– Հարգելի՛ պետեր, մեր քուրդ հայրենակիցներ՝, Ելդըզից ձեզ շատ-շատ բարևներ մեր Վեհափառ Փադիշահի՛ ողջ մուսուլմանների Մեծ Նալիֆի կողմից: Հինգ հարյուր տարի մեր սուլթանների գթության և արդարության չնորհիվ հարուստ կյանք վարող հայ ժողովուրդը, օտարների կողմից խաբված և ապերախտության ախտով վարակված, ապստամբության դրոշ է պարզել մեր օրինավոր, նվիրական ու հավերժական տերության դեմ: Հույների, ռումիների, սերբերի, բուլղարների և ուրիշ անհավատ ու թշնամի ժողովուրդներից քաջալերված՝ ինքն էլ է ուզում ինքնավարություն... Ռուսաստանի հպատակ կովկասաբնակ հայերը գաղտնի դաշինք են կնքել Թուրքիայում ապրող իրենց կրոնակիցների հետ և ահագին զինվորական պատրաստություններով պիտի ներխուժեն սահմանազուլս, պիտի կրակի տան Քրդստանի բոլոր գյուղերը, պիտի ջնջեն քուրդ անունը... Այս հայերը՝ մեր ցեղի և կրոնի ոխերիմ թշնամիները, վաճառականությունը, երկրագործությունը և երկրի ամբողջ հարստությունն իրենց ձեռքում առած, քամում են իսլամի ժողովրդի արյունը: Գաղթականության պատրվակով, ապաստանելով Եվրոպայի և Ամերիկայի բարգավաճ ու փարթամ կենտրոններում՝ բոլոր մեծ տերությունների քրիստոնյաների վրեժխնդրության են գրգռում մուսուլմանների և մասնավորապես՝ քուրդ ազնիվ ու քաջամարտիկ ցեղի դեմ՝ որակելով նրան մարդասպան, գող, ավազակ, բարբարոս... Եթե

¹ Սպիրով Դ., Հայերի սարսափելի կոտորածները (1894–1896), Երևան, 1997, էջ 41:

² «Հնչակ», 1884, թիվ 2:

այսպես թողնենք այս վիճակը, ապա շատ չանցած՝ մի քանի տարվա ընթացքում երկրագնդի երեսին Քրդստան անունով անգամ մի հողակտոր չի մնա... Վաղը այս անկրոն ազգը կգրավի այս երկիրը, կվտարի կամ բռնի քրիստոնյա կղարձնի բոլոր քրդերին...

Ահա՛ Նորին Կայսերական Վեհափառության կամքը. «Քուրդ ազնվազարմ ցեղի պատմական պետեր, կոչ եմ անում ձեր ազնվազարմ չեյխերի ասպետական ոգուն և հավատարմության անկեղծ զգացումներին և ձեր աջակցությունն ու գործնական օժանդակությունն եմ խնդրում՝ ներկա տագնապային իրավիճակում. գործադրելու Ելզըզի բարձրագույն հրահանգները, որոնք մինչ այս արդեն ձեզ պետք է հայտնի լինեին... Ուրեմն, կազմ ու պատրաստ եղե՛ք պատասխանելու առաջին իսկ ազդանշանին: Ձեր և համիդյան գնդերի պետերի խոհանությունն է մնում կարգադրել յուրաքանչյուր ցեղախմբերի մասնակցությունը մոտավորապես ղեկավարին: Ձեզ կարողություն, ձեր զենքերին՝ փառք և ձեր ցանկություններին լիակատար հաջողություն եմ մաղթում...»¹:

Սուլթանի քարտուղար Սուրեյա փաշան Աբդուլ Համիդին տեղեկացնում է Ջեքի փաշայի հեռագրի մասին, ուր գրված էր.

– Եվրոպական թերթերի թղթակիցներից ոմանք թափառում են Սասունի կողմերում և ղեկավարելով խեղաթյուրելով՝ հեռագրեր են ուղարկում արտասահման: Խնդրում եմ՝ ինձ արտոնություն տալ երկրից վտարելու անգլիական թերթերի թղթակիցներին, որոնք իրենց հոտառությամբ կարողանում են ամեն ծածուկ անկյուն սողոսկել, ամենաչնչին ղեկավարն անգամ քննել, նույնիսկ՝ ստոր, կաշառակեր պաշտոնյաներից պետական գաղտնիքներ կորզել... Խնդրում եմ, որ Ելզըզից ամենախիստ հրամանները տաք մայրաքաղաքի ու ծովեզրյա քաղաքների անցագրի և նավամատուցի պաշտոնյաներին, որպեսզի ամեն ջանք գործադրեն կասկածելի որևէ մեկի՝ երկիր մտնելը կանխելու համար...

Սասունում դեռ անպատիժ գործում է հնչակյան մի պետ՝ Մուրադ կոչեցյալը, որը ենթադրվում է՝ բժշկական վարժարանից փախած ուսանողն է... Առաջին արյունոտ ընդհարումը աշիրեթների պարտությունամբ ավարտվեց՝ չնայած հայերի սակավաթիվ լինելուն. մեկ հայի

¹ Պոյաճեան Գ. (Ժիրայր), Ելզըզէ Սասուն, Կ. Պոլիս, 1910, էջ 192–194:

դիմաց 20 քուրդ՝ չհաշված մերոնք... Երկրորդ հարձակման հրամանը տրված է Մուշի կառավարչին՝ վճռական հարված հասցնելու Սասունի ապստամբ գյուղերի բնակիչներին...¹:

Ջեքի փաշան Սասունի կոտորածից հետո հեռագրում է սուլթանին.

– Կայսերական հրամանը գործադրված է ամբողջովին, Սասունի և չրջակայքի մեջ անդորրությունը կատարյալ է²:

«Դեյլի թեղեզրաֆի» թղթակցին քրդերը ասել են.

– Մենք նույնքան մահմեդական ենք, որքան ուրիշները, և հասկանալի է, որ մեզ էլ բաժին պետք է հասնի քրիստոնյայի աշխատանքից... Մենք ապրում ենք մեր սրով ու դաշույնով, և անհրաժեշտ է, որ մեկն աշխատի, որպեսզի մենք արմատիք, յուղ, մեղր և ոչխարներ ունենանք: Այդպես որոշել է մարգարեն և նա գիտի թե ինչու: Քրիստոնյաները դրա համար գոյություն ունեն... Նրանք պարտավոր են մեզ համար աշխատել, որովհետև գյավուրներ են: Միշտ այդպես է եղել և այդպես էլ կմնա... Ձե՞ որ մենք նրանց պաշտպանում ենք... Գյուղից դուրս գնալիս մեր միակ նպատակն է ավար ձեռք բերել՝ լավ կարպետներ, փող, տավար և սիրուն կին... Մենք ինքներս Սասունի ղեկավարի ժամանակ փախցրել ենք մի քանի կարպետ և գորգ: Մի երկուսն էլ չնչին գնով վաճառեցինք: Մի քանիսն էլ տանն են... Մեր մեծավորը շատ-շատ ունի...

Մորթելն ու սպանելը գուցե և անախորժ են, բայց դրանցում ահագին զվարճություն կա... Քրդի սիրտը երկնաքարի նման կարծր է... Մինչդեռ թուրքինը՝ շատ նուրբ, դժոխային և հաշվենկատ գաղափարություն է: Թուրքը սառը, ժպիտը դեմքին, դավաճան, զգույշ ու նենգ է: Նա բարեկամաբար կարող է աջ ձեռքը մեկնելու պահին ձախով մերկացնել դաշույնը: Դրան հակառակ՝ քուրդը տաքարյուն է, վառվռուն, ամենհին նրա անգթությունը չի ծագում նպատակին հասնելու ձգտումից: Հայաստանում քուրդը կռանի, իսկ հայը՝ սալի դեր է խաղում: Հայերը բնակվում են հարթավայրում, իսկ քրդերը՝ սարերում, բացի Բեշերիկից ու Սիլվանից³:

¹ Պոյաճեան Գ. (Ժիրայր), Ելզըզէ Սասուն, Կ. Պոլիս, 1910, էջ 220–221:

² Նույն տեղում, էջ 1302:

³ «Daily Telegraph», 3-րդ ապրիլի, 1895 թ.:

Քուրդ աղաներից մեկը վկայում է.

– Անցած տարի Սասունի կոտորածի համար կառավարությունից հեռագիր եկավ մեզ, թե մեր բոլոր հեծյալների բազմությունը և զենքով զնանք Սասունի հայերի վրա և կոտորենք, որովհետև թագավորի հրամանն է: Եթե չզնանք, համիդությունից զրկվելու ենք, մեր տները թալանելու են, և ինքներս մաշվելու ենք բանտերում: Բայց մենք կարևորություն չտվինք և չզնացինք: Հիմա նոր հասկացանք, թե ինչու անցյալ տարվա հոկտեմբերին Ալայ բեյը գործերով մեր տներն ավերեց, եղած-չեղածներս տարավ և մեզ բանտ ուղարկեց...¹:

Մի քուրդ Սասունի ֆիդայիների մասին.

– Մենք 2000 հոգի էինք... Հայդուկները 70 հոգուց ավելի... Մեզ հաջողվեց նրանց իջեցնել լեռներից ու գցել բաց դաշտ... փախչելու ոչ մի հնար չունեին: Բայց որքա՜ն զարմացանք, երբ այդ ֆիդայիներից շատերը, երբ մենք կրակ բացեցինք, ամենայն սառնասրտությամբ ու հանգստությամբ հանեցին իրենց թաշկինակներն ու սկսեցին պարել կլոր պար: Տեսնելով արհամարհանքը դեպի մեր զնդակները՝ ակամա դադարեցրինք հրաձգությունը և ապշած նայում էինք այդ տարօրինակ մարդկանց²:

Էրզրումից քուրդ Հաջի Ղազարը պատմում է սասունցիների մասին.

– Մուշի դաշտում ապրող ժողովուրդը խեղճ է, ոչ զենք ունի, ոչ պաշտպան: Հայը զենք կրելու համար պիտի թուղթ ունենա փաշայից: Սասունցիները քաջ են, քրդերն ու թուրքերը նրանցից վախենում են: Սասունի հայերը միայն հայերեն են խոսում, պասը պինդ են պահում: Նրանք չեն թողնում, որ քուրդը կամ թուրքը վնասի իրենց: Եթե նրանցից մեկին քրդերը սպանեն, ապա սասունցիները մեկի տեղը հիսուն քուրդ կջարդեն: Եթե մի հայ փախավ կառավարությունից նրանց մոտ, նրանք կպահեն և չեն մատնի: Թուրքերը չեն խառնվի նրանց գործերին³:

¹ «Հնչակ», 1895, թիվ 14:

² «Գրողակ», 1896, թիվ 4:

³ Սարգսյան Լ., Այց թուրքական Հայաստան, Թիֆլիս, 1890, էջ 144–145:

Մի թուրք սպա Սասունի կոտորածների ժամանակ ասել է.

– Մենք ժանտախտն ենք Ասիայի: Եթե մի հզոր զենք մեր ուղին չկանգնեցնի, ոչնչացնելու ենք ստորացված ազգերին¹:

Թուրք զինվորները հաճախ խոստովանում էին.

– Մենք տեսել ենք Սասունի կոտորածները, հիմա էլ սա (Էրզրում-մի կոտորածները) տեսանք: Եթե այս բոլորը մարսենք, ուրեմն Աստված գոյություն չունի²:

Թուրք պաշտոնյաները հայերին սպառնում էին ասելով.

... Պետք է ղեկավարներ ժողովին ներկայանաք և ասեք այն, ինչ կպատվիրենք և եթե այս անգամ էլ մերժեք, գիտցած եղեք, որ կյանք-ներդ ձերը չէ և հավերժ կորած եք: Միաժամանակ... նշան և պատիվներ կստանաք, եթե մեր խոսքերին ունկնդրեք³:

Սասունի կոտորածից հետո սուլթան Համիդը իր քարտուղար Սուրեյա փաշային ցուցադրաբար հանդիմանեց խիստ հեռագրեր ուղարկելու համար.

– Ես ասել էի խփել, այլ ոչ թե կոտորած սարքել: (Սուլթանն այս դեպքում էլ խաբում էր, և Սուրեյան հարկադրված եղավ անգլիական ղեկավարատուն տանել սուլթանի ստորագրությամբ հայերին կոտորելու մասին հրահանգը, ինչը և պատճառ հանդիսացավ նրա «հանկարծակի մահվան»)⁴:

Թուրք պատմաբան Օսման Նուրին Սասունի 1894 թ. դեպքերի մասին գրում է.

– Բ. Դուռը այնպես էր նկարագրում, թե իբր հայերը հրաժարվում էին հարկեր վճարելուց և ինքը հարկադրված եղավ գործեր ուղարկել, բայց դրանք ղեռ տեղ չհասած, հայերն ապստամբելու նպատակով արդեն այրել էին իրենց գյուղերն ու ավանը և քաշվել սարերը: Մինչդեռ քննիչ հանձնաժողովն այդ փաստը հերքում է: Հա-

¹ Սեյլան (Արշակ Մատոյան), Հուլիս-ֆիրատ, Թիֆլիս, 1904, էջ 7:

² Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. I, Երևան, 2008, էջ 598:

³ Պողոսյան Ս., Պողոսյան Վ., Ինձ բաժնի տվեք, Երևան, 1990, էջ 137:

⁴ Hatrat-ı sadr-i esbak Kâmil paşa, Kastantinya, 1329, s. 180 (արաբատառ); Hilmi Kâmil Bayur, Sadrazam Kâmil paşanın siyasi hayatı, Ankara, 1954, s. 173.

մաձայն զեկուցագրի՝ քաղաքացիական և ռազմական իշխանությունների հրամանով քրդերը հարձակվել էին հայկական գյուղերի վրա, բայց հետ էին մղվել, որից հետո էին միայն բանակային ուժեր ուղարկվել: Այդ ժամանակ զինվորներն այրել էին գյուղերն ու բաղձաթիվ մարդկանց կոտորել: Հայերի վրա քրդերի հարձակումն ուներ ածանցիկ նշանակություն, քանի որ այդ հարձակումների հրամանները տվել էին տեղական պաշտոնյաները, որոնց ձեռքին քրդերը գործիք էին: Հետաքննիչ հանձնաժողովը նաև արձանագրել է, որ պետությունը հանդեպ հայերի կողմից որևէ դատապարտելի արարք տեղի չի ունեցել: Եթե նույնիսկ հայերը կառավարությունը դեմ ապստամբած լինեին, միևնույն է, դրա համար ամբողջովին պատասխանատու էին իշխանությունները, քանի որ ոչինչ չէին ձեռնարկել հայերի ու քրդերի միջև խառնակությունները կանխելու համար: Գյուղերն էլ հրդեհել էին ոչ միայն քրդերը, այլև զորքեր¹:

Թուրքական «Սաբա» թերթը Սասունի 1894 թվի կոտորածների մասին.

– Կայսերական կառավարությունը դարեր ի վեր իր հպատակների հանդեպ առանձնահատուկ արդարամիտ է եղել... և բոլորն էլ նրա գլխից հոսում էր տակ բարգավաճում ու խաղաղ ապրում էին...

Կայսերական կառավարությունն իր պարտականությունները բերմամբ հետևում է, որպեսզի երկրի թե՛ մոտ և թե՛ հեռավոր մասերում խաղաղությունը և անվտանգությունը չխախտվեն: Օրինակ՝ Տավրիսում և այլ վայրերում, խռովարարների դրդումով, առանձին անձինք համարձակվեցին խաղաղությունն ու անդորրությունը խանգարել: Սուլթանական զորքերը պարտադրված էին ապահովել խաղաղությունն ու անդորրությունը և օրենքի սահմանում պատժել ու կարգի բերել խռովարարներին: Նախնակչություններ չտարածելու համար կայսերական կառավարության կողմից հատուկ միջոցներ ձեռնարկելը հպատակասիրության ամենամեծ փառքն է, ինչի ապացույցներն են խռովարարների այն ձեռնարկները, որով ձգտում են սատանայական պատրանքներով խաբել խաղաղ ու հավատարիմ հպատակներին²:

¹ Օսման Նուրի, Սուլթան Համիդ II-ն ու նրա իշխանության շրջանը, հ. Բ., Կ. Պոլիս, 1909, էջ 827–828 (արաբատառ թուրքերեն):

² «Նոր կյանք», 1894, թիվ 217:

Թուրք քաղաքական գործիչ Զևադ փաշան Սասունի կոտորածի մասին.

– Օտար մամուլում հայկական խնդիրների վերաբերյալ քարոզչությունը հետևանք է արտասահմանում բնակվող հայերի բանասարկությունների: Անհնար է հավատալ, որ կայսերական զորքերը նման (Սասունի) խստություններ գործադրած լինեն¹:

Եվրոպական պետությունների ներկայացուցիչներին ուղարկված Բ. Դոան «Պաշտոնական զեկույցը» Սասունի իրադարձությունների մասին.

– Վերջերս մի քանի եվրոպական թերթեր հրապարակեցին ճշմարտության հետ որևէ առնչություն չունեցող լուր՝ Սասունում օսմանյան զորքերի կողմից մի քանի հայկական գյուղեր ավերելու և այդ ընթացքում հայերի սպանությունների մասին...

Սասունում բնակվող կայսերական հպատակները ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, միանգամայն խաղաղության և հանդարտության մեջ լինելով, իրենց գործերով էին զբաղված, սակայն մի շարք հայ ավազակներ, խաբվելով խռովարարներից, Տավրիսի ու նրա մերձակա շրջաններում հարձակվել են ու մարդ սպանել, ավարառություն կատարել, կողոպտել, թալանել, ճանապարհները կտրել և անվտանգությանն ու խաղաղությանը խանգարող ավազակություններ արել: Այդ խռովությունը զսպելու համար կառավարությունը, բնականաբար, անհրաժեշտ միջոցների դիմեց 4-րդ զորաբանակից հարկ եղած թվով զինվոր ուղարկեց և խռովության առաջն առավ: Երբ խաղաղությունը վերահաստատվեց, զինվորները ետ ուղարկվեցին իրենց տեղերը...

4-րդ բանակի մուշիրը և Բիթլիսի կուսակալը ծանուցել են, թե քրդերը որևէ միջամտություն չեն կատարել և ինչպես վերևում ասվեց, մի քանի հայ ավազակներ իրենց անվայել են պահել... Որպեսզի վերահիշյալ ավազակների այդ ասպատակությունների վերաբերյալ քննություն կատարվի, ստեղծված է մի հանձնաժողով, որի մեջ մտնում են կայսերական թիկնապահ Ֆերիդ Աբդուլահ փաշան, Պոլսի էնիսե Սանդղիի տնօրեն էտմեր բեյը, ներքին գործերի նախարարության լրատվական դիվանի առաջին քարտուղար Մեջիդ էֆենդին և կայսերական անձնական սպայակույտի միրլիպա Հաֆիզ Թեֆիզ փաշան: Այս հանձնաժողովը մինչև չաբաթվա վերջը չոգենավով

¹ «Նոր Դար», 14-ը դեկտեմբերի, 1894 թ.:

ճամփա է ելնելու... Կառավարությունը երբեք պատշաճ չի կարող համարել իր արդար և զթասիրտ հովանու տակ հավասար վիճակում պաշտպանված հպատակների հանդեպ լրագրերի հրապարակած նման դեպքերը և ճշմարտությունը չհամապատասխանելու համար հերքում է այդ հրատարակությունները¹:

Քյամիլ փաշան Աբդուլ Համիդին խորհուրդ է տալիս Սասունի կոտորածի վերաբերյալ.

– Սասունի դեպքերը, ավելի շուտ այնտեղի ապստամբության ճնշումը, հայերի կողմից այնպես են ուռնացվել և անգլիական մամուլում այն աստիճան դաժանություններ են նկարագրվում, որ այդ հրապարակումները չէին կարող ազդեցություն չգործել ոչ միայն Անգլիայում, այլև այստեղ՝ Օսմանյան կայսրության տարբեր հպատակների շրջաններում... Եթե այժմ որևիցե հրատապ բան կա անելու, ապա Հետաքննող Հանձնաժողովի գեկույցի շտապ հրատարակվելն է Անգլիայում, որպեսզի Հանդարտեցվի ընդհանուր տրամադրությունը: Եվ այդ հանդարտեցման նպատակին հասնելու համար բավական է, որ Հիշյալ գեկույցը հրապարակվի օտար պաշտոնյաների ստորագրությամբ²:

Թուրքական «Սաբահ» թերթը Սասունի դեպքերի մասին 1894 թ. նոյեմբերի 11-ին գրել է.

– Նորից գործ է մեկնել ապստամբության վայրը չարագործներին հալածելու համար, ինչից էլ կարելի է ենթադրել, որ Սասունում ընդհարումները չարունակվում են: Լեռնաշխարհ տանող ճանապարհները փակ են: Այսինքն՝ Անդոկի ու Տալվորիկի անկումը չնշանակեց ռազմական գործողությունների ավարտ: Սասունցին, ապավինած հայրենի լեռներին, փոքր ու մեծ խմբերով շարունակելու է մարտնչել իր օջախն ավերող, իր արյունը հեղող ջարդարար թշնամու դեմ³:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի և անգլիական դեսպան Ֆիլիպ Քլերրիի զրույցից.

– Կ. Պոլսում Անգլիայի մեծ դեսպան սըր Ֆիլիպ Քլերրին պաշտոնական համազգեստով ժամանել էր Ելզըզ սուլթան Աբդուլ Համիդի

հետ կարևոր տեսակցություն ունենալու համար: Այս տեսակցությունը նախորդ օրը դեսպան Ֆիլիպ Քլերրիի և մեծ եպարքոս Ջեադ փաշայի, արտաքին գործերի խորհրդական Տատյան Հարություն փաշայի միջև տեղի ունեցած տեսակցության շարունակությունը պետք է լիներ: Սուլթան Համիդը հոտնկայս սպասում էր Անգլիայի վեհափառ թագուհու կառավարության ներկայացուցչին: Տեսակցությանը ներկա էր միայն կայսրության Ա. քարտուղար Սուրեյա փաշան:

– Վեհափառ, Նորին Վեհափառության կառավարության արտաքին գործերի նախարարի հրահանգների համաձայն՝ երեկ շտապեցի դիմել Բ. Դուռ, որպեսզի պաշտոնական տեղեկություններ ստանամ ոչ միայն Մուշի ու Սասունի, այլև Հայաստանի մյուս վայրերում տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ,– ասաց դեսպանը:

– Մե՛ծ դեսպան, առաջին անգամ է, որ պաշտոնական անձնավորության անունից լսում եմ մի բառի գործածություն, որը երբեք իրավունք չունի գոյություն ունենալու: Այնպես չէ՞,– ասաց Համիդը՝ հոնքերը խոժոռելով և դեմքին դժգոհության արտահայտություն տալով:

– Վեհափառ, սխալվում եք, այդ բառը դիվանագիտական աշխարհի բառարանի մեջ Բեռլինի վեհաժողովից հետո գործածվում է,– ասաց դեսպան Քլերրին:

– Ինչպե՞ս,– զարմացած հարցրեց Համիդը:

– Վեհափառ, Բեռլինի վեհաժողովը կիրառել է Հայաստան բառը: Հայաստան բառը գոյություն ունի այնպես, ինչպես գոյություն ունեն՝ Պարսկաստան, Հնդկաստան, Հունաստան, Ռումինիա, Սերբիա և ուրիշ երկրների անուններ: Պաշտոնական Եվրոպան ճանաչել է Հայաստանի գոյությունը և այդ երկրի ճակատագիրը վճռող մի հոգված է մտցրել Բեռլինի դաշնագրում: Անշուշտ հիշո՛ւմ եք 61-րդ հոդվածը,– ասաց դեսպան Քլերրին:

– Մե՛ծ դեսպան, ենթադրենք թե այդ բառը պաշտոնական Եվրոպան գործածում է, հիմա վերադառնանք բուն թեմային՝ ի՞նչ պաշտոնական տեղեկություններ եք փափագում ստանալ Մուշում և Սասունում կատարված դեպքերի վերաբերյալ,– ասաց Համիդը:

– Եվ Հայաստանի մյուս մասերից,– ավելացրեց դեսպանը և ապա շարունակեց,– ցանկանում եմ, որ Ձերդ Վեհափառությունը հնարավորության դեպքում հրամայի իր մեծ եպարքոսին և արտաքին գործերի նախարարի խորհրդականին ներկա գտնվելու այստեղ, որպեսզի որոշ հարցեր պարզենք երեկ մեր միջև տեղի ունեցած միջադեպից...

¹ «Մուրճ», 1894, թիվ 11–12:

² *Uzunçarşılı H.*, II Abdul Hamid devrinde Kâmil paşa, “Belleten”, 1955, № 78, s. 227.

³ «Նոր Դար», 1894, թիվ 197:

Արդուլ Համիդը սըր Քըրրիի խոսքերից չփոխված, հրամայեց իր մոտ կանչել Ջևադ և Արթին փաշաներին և ապա ասաց.

– Մե՛ծ ղեսպան, երեկ ի՞նչ միջադեպ է տեղի ունեցել Ձեր և մեծ եպարքոսի միջև, չե՞ք ցանկա ինձ նախապես տեղեկացնել...

– Ավելի լավ չէ՞, Վեհափա՛ռ, գրուցենք նրանց ներկայությամբ, – ասաց ղեսպանը:

– Ներեցե՛ք մեզ, ղեսպան, – միջամտեց Սուրեյա փաշան, – ավելի լավ չէ՞, որ մենք կանխավ տեղյակ լինենք եղելությունը և պատրաստ լինենք: Դուք լավ գիտեք, որ Վեհափառ տերս սովոր չէ չուտափույթ վճիռ կայացնել. նա նախապես մանրակրկիտ քննությամբ համոզվում է և ապա վճիռ արձակում...

– Լա՛վ, – համաձայնվեց ղեսպանը և ապա շարունակեց, – ինչպես ասացի, երեկ մեծ եպարքոսից պաշտոնական տեղեկություններ ուղեցի վերջին ղեպքերի վերաբերյալ, և գիտե՞ք, թե նա ինչ պատասխանեց. հանկարծ հայտարարեց, թե Վանում մեր բրիտանական հյուպատոսը գրգռել է հայերին կայսրության դեմ ապստամբելու...

– Ծիծաղելի հայտարարություն է, մեծ ղեսպան, սխալ պետք է լինի. մեր Ջևադ փաշան հավանաբար խենթացած պետք է լինի՝ այդպիսի հայտարարություն բերանից թուցնելու համար, – ասաց սուլթանը...

Այդ պահին մեծ եպարքոսը և արտաքին գործերի խորհրդականը միասին ներս մտան դահլիճ... Նրանց տեսնելով Համիդը հարցրեց.

– Ի՞նչ է պատահել, Ջևադ փաշա, ինչո՞ւ եք վշտացրել մեր բարեկամ բրիտանական տերության մեծ ղեսպանին, խոսեցե՛ք տեսնեմ, ի՞նչ է պատահել երեկ...

– Վեհափա՛ռ տեր, Նորին Վսեմություն բրիտանական մեծ ղեսպանը երեկ եկավ Բ. Դուռ՝ պաշտոնական տեղեկություն ստանալու Սասունի, Մուշի և կայսրության մյուս չրջաններում տեղի ունեցող ղեպքերի վերաբերյալ: Առանց վերապահության՝ հաղորդեցի նահանգներից ստացած հեռագրերի տեղեկությունները: Վանի, Բիթլիսի կուսակալներից և Մուշիի Ջեքի փաշայից ստացած երեք հեռագրերն էլ գրեթե միևնույն իմաստով...

– Ի՞նչ էին հեռագրում, – ընդմիջեց Համիդը:

– Ներեցե՛ք Վեհափա՛ռ տեր, – միջամտեց արտաքին գործերի խորհրդական փաշան, – մի թյուրիմացություն կա... Մեծ եպարքոսը սխալ է հասկացել հեռագրում եղած մեկ բառ՝ իրանական հյուպատոսը բրիտանական հյուպատոս է կարծել:

Սըր Ֆիլիպ Քըրրին ծիծաղեց, տեսակցության ընթացքը փոխվեց, և ղեմքերը զվարթացան: Արդուլ Համիդը ներքին գոհունակություն էր զգում խորհրդական փաշայի հանճարեղ հնարքի համար:

– Ուրեմն, – ասաց Համիդը, – իմ բարեկամ տերության ներկայացուցիչը թող հաճենա բավարարվել այս բացատրությունից, քանի որ, ինչպես պարզվեց, կատարվածը թյուրիմացություն է և չարժե այդքան կարևորություն տալ...

– Վեհափա՛ռ, համարենք, թե մեծ եպարքոսը թյուրիմացության գոհ է եղել, և այդ թեման փակված է, սակայն խնդիրը սրանով չի վերջանում... Ես ի՞նչ պիտի պատասխանեմ կառավարությանս արտաքին գործերի նախարարին: Խնդրում եմ հայտնել որոշ տեղեկություններ այդ ղեպքերի մասին, – ասաց ղեսպանը...

– Թո՛ղ մեծ եպարքոսը հայտնի, թե ինչ գիտի. չեմ կարծում, թե մտահոգություններ պատճառող ղեպքեր լինեն այդ կողմերում, – ասաց Համիդը...

– Վեհափա՛ռ տեր, մեզ հասած լուրերը շատ վրդովեցուցիչ են: Եվրոպայից մի խումբ հայ անիխանականներ՝ մեր կայսերական բժշկական վարժարանից փախած ուսանող Համբարձում Բոյաջյանի ղեկավարությամբ, հայտնվել են Մուշում ու Սասունում: Լեռներից ցած են իջել. թալանում են դաշտերի ու գյուղերի խեղճ հողագործներին և վրդովեցնում են քուրդ բնակչության խաղաղությունը՝ իրենց ավազակային արարքներով սարսափ սփռելով չրջակայքում: Այնպես որ, Ջեքի փաշան կայսերական իրադեով Դ. բանակը շարժման մեջ է դրել և Համիդյան հեծելազորների հետ ստիպված է եղել հաստատվել Մուշի դաշտում:

– Վեհափա՛ռ, – ընդմիջեց ղեսպանը, – ցավում եմ, որ Ձեր մեծ եպարքոսը խեղաթյուրում է իրողությունը: Իբրև թե հայ անիխանականները իջել են լեռներից և վրդովեցնում են քուրդ բնակչության խաղաղությունը. այս ամենը շատ ծիծաղելի է... Ջևադ փաշան իր նախորդների կրկնեղեն է երգում... Ես բոլորովին այլ տեղեկություն եմ ստացել իմ հյուպատոսից...

– Մե՛ծ ղեսպան, – ընդմիջեց Համիդը, – Դուք չափազանցնում եք, և արդար լինելու համար պետք է ասեմ, որ Դուք նախատում եք կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներիս...

– Վեհափա՛ռ, ես չեմ նախատում պաշտոնյաներին, այլ դատապարտում եմ նրանց արարքները. ի՞նչ խղճով են ստեր հորինում և քաջություն ունենում կեղծ հեռագրեր ուղարկել, – ասաց ղեսպանը...

– Մե՛ծ ղեսպան,– ասաց Համիդը բիրտ ձայնով,– չարունակում եք նախատել կառավարությունս և նրա ներքին գործերին եք միջամբտում...

– Բողոքո՛ւմ եմ,– ասաց ղեսպանը,– բողոքո՛ւմ եմ այդ խոսքերի դեմ... Դուք չարաչար սխալվում եք, երբ անկախ եք կարծում ձեր կառավարությունը և նույնիսկ իր ներքին գործերի մեջ: Դուք մոռանո՞ւմ եք դաշնագրերը...

– Ո՞ր դաշնագրերն են, մե՛ծ ղեսպան, այդ ո՞ր դաշնագրերն են հաստատում, թե իմ կառավարությունն իր անկախությունը չի վայելում, մանավանդ՝ ներքին գործերի մեջ:

– Բոլոր միջազգային դաշնագրերը, Վեհափա՛ռ,– կրկնեց խրոխտ ձայնով ղեսպանը,– սկսած Ղրիմից մինչև Բեռլինի դաշնագրությունը... Ուզո՞ւմ եք Ձերդ Վեհափառությունը հիշեցնեմ, որ մեկ ու կես դար ավելի Օսմանյան կայսրությունը անքակտելի կապերով կապված է և առանց Եվրոպայի հավանություն չի կարող ոչ մի քայլ կատարել... Եվրոպան և մասնավորապես՝ բրիտանական կառավարությունը դաշնագրերով կապված են Օսմանյան կայսրության հետ, որի ամբողջականության պահպանումը կախված է տարբեր ժամանակներում կնքված դաշնագրերից. հետևաբար, մենք իրավունք ունենք միջամտելու կայսրության ներքին գործերին: Ձե՞՞ որ բրիտանական կառավարությունը երաշխավոր է կանգնել Ձեր և Եվրոպայի միջև խոստացված բարենորոգումներն իրականացնելու համար, որի իրագործումը խոստացել եք Դուք...

Աբդուլ Համիդը ցնցվեց, սըր Ֆիլիպ Քրորիի հայտարարությունը անգույթ էր, դառը ճշմարտություն էր, որը գալիս էր իր՝ բացարձակ միապետի երանելի խաղաղությունը խափանելու: Այդ պահին արտաքին գործերի խորհրդականը, ջանալով հաշտության և մերձեցման եղբեր գտնել, միջամտեց՝ ասելով.

– Վսեմաշո՛ւք մեծ ղեսպան, ինչո՞ւ են բոլոր այս մանրամասնությունները, մի՞թե մեզ ծանոթ չեն միջազգային դաշնագրերը, ի՞նչ հարկ կա դրանք կրկնելու և հիշեցնելու:

– Անհրաժե՛շտ է... Ես ցանկանում եմ ասել, խորհրդական փաշա, որ անօգուտ է գաղտնի պահել վերքը. մենք տեսնում ենք, Եվրոպայի աչքերը կույր չեն... Մյուս տերությունները դարանակալած սպասում են, ամենափոքր շարժումն իսկ կարող է մեծ փլուզումներ առաջացնել: Ձե՛մ հասկանում, Վեհափա՛ռ, թե ի՞նչ գործ ունի Ձեր փաշան Հայաստանում...

– Մե՛ծ ղեսպան, ներեցե՛ք ինձ,– ասաց Համիդը,– բայց Դուք ոտնձգությունք եք անում կայսրության իշխանությունս սահմաններում...

– Բայց ինչո՞ւ Դուք դարձյալ ստիպում եք հիշեցնել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը,– ասաց ղեսպան Քրորին...

– Մե՛ծ ղեսպան,– ասաց Ջեադ փաշան,– չեմ կարծում, որ իրավունք ունեք մեզ հրահանգներ տալ և հարցապնդումներ անել Օստունի ու ուրիշ կողմերի մեջ տեղի ունեցող սովորական դեպքերի մասին:

– Մե՛ծ եպարքոս... բրիտանական կառավարության ներկայացուցիչը ոչ միայն իրավունք, այլև պարտականություն ունի Օսմանյան կառավարությանը պարտադրելու հայկական բարենորոգումները գործածելու համար, որոնք հանդիսավոր կերպով խոստացվել են Բ. Դուան կողմից, և դրանց երաշխավորը Բեռլինի դաշնագրով մեծ տերությունների կողմից հանձնված է Վեհափառ Թագուհու բարձր կառավարությանը,– ապա, ոտքի կանգնելով և պատրաստվելով հեռանալ, շարունակեց,– ստիպված եմ պաշտոնապես խնդրել Ձերդ Վեհափառության արտաքին գործերի նախարարին ե՛տ կանչել այդ Ձեր փաշային...¹:

Օսման Նուրին Դիարբեքիրում տեղի ունեցած կոտորածների մասին.

– Միևնույն ժամանակ Դիարբեքիրում էլ ջարդ տեղի ունեցավ...

Այստեղ տիրող գրգռված վիճակն իր վրա էր հրավիրել այս քաղաքում գտնվող ֆրանսիական հյուպատոսի ուչադրությունը: Տեղական պաշտոնական անձինք իրոք բարյացակամություն էին ցուցաբերում հայերի հանդեպ: Իսկ 1885 թվականից հետո նահանգապետ էնիս փաշայի ժամանակ թշնամությունը գնալով ավելի էր սրվել:

Էնիս փաշան միշտ թշնամական զգացում էր սնուցում եվրոպացիների հանդեպ, մինչև իսկ հյուպատոսները մի ժամանակ բողոք էին հայտնել նրա անարդար գործերի դեմ, իսկ ղեսպանները պահանջել էին տեղափոխել նրան: Նա Դիարբեքիրի կուսակալ նշանակված ժամանակ այն աստիճանի անբարյացակամություն էր ցուցաբերել, որ ֆրանսիական ղեսպանը իսկույն ձեռնարկել էր անհրաժեշտ միջոցներ... Էնիս փաշան Դիարբեքիրի կուսակալ նշանակված պահին բրո-

¹ Պոյաճեան Գ. (Ժիրայր), Ելտրդէ Սասուն, Կ. Պոլիս, 1910, էջ 915–930:

նույնիսկ մի հեռագիր է ստորագրել տվել քրիստոնյա երեկիններին, որում իր կուսակալ նշանակվելու կապակցությամբ շնորհակալություն էր հայտնվում Աբդուլ Համիդին: Սակայն այս հեռագիրը տարածայնության ու վեճի պատճառ էր դարձել քրիստոնյաների միջև: Նրանցից չատերը գանգատ էին հայտնել իրենց եպիսկոպոսին և բողոքի հեռագրեր տեղացրել Ստամբուլ:

Բոլոր պարագաներում էնիս փաշան գործում էր քրիստոնյաների դեմ, պնդում էր, որ հայերը մտադիր են հարձակվել մզկիթների վրա, որ հայերի պահանջած բարենորոգումը վնասակար է մուսուլմաններին¹:

1895 թ. նոյեմբերի 1-ին Դիարբեքիրում քարոզիչ Աբբաս Հոջան հետևյալ խոսքերով է դիմում թուրք խուժանին.

– Քանի որ գլավուրները ձգտում են թոթափել օսմանյան լուծը, մեր Ղուրանի օրենքներով և կայսեր հրամանով ամեն մի իսկական մահմեդական պետք է 25 անհավատ քրիստոնյա ջարդի և նրանց ունեցվածքին, եկամուտին ու կնոջը տիրանա: Ձեզ տեսնեմ Ղազի լինեք թե Շիրիթ, Մուհամեդն արքայության մեջ զրկաբաց սպասում է ձեզ...²:

Օսմանյան կայսրության մեծ եպարքոս Քյամիլ փաշան Ավստրիայի դեսպանի հայկական կոտորածներին վերաբերող զեկույցի մասին (նոյեմբեր 1895 թ.).

– Նա (Ավստրիայի դեսպանը) հայտնեց, որ նախորդ օրը տեղի ունեցած ժողովում, Հյուպատոսարաններից դեսպանատները եկած զեկուցագրերի ընթերցումից պարզվել է, որ կոտորվել են հազարավոր հայեր, որ Դիարբեքիրում քրդերի կողմից առանց խտրակալության քրիստոնյաների սպանությունները, կողոպուտներն ու բռնությունները, ինչպես նաև Անատոլիայի այլ վայրերում տեղի ունեցած նույն խժոժությունները, այդ դարի համար չտեսնված և չսված երևույթներից են³:

¹ Օտար աղբյուրները հայերի և հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, Հ. IV, Երևան, 1972, էջ 175–176:

² «Արմենիա», 1896, թիվ 54:

³ Hatrat-ı sadr-ı esbak Kâmil paşa, Kastantinya, 1329 (արաբատառ); Hilmi Kâmil Bayur, Sadrazam Kâmil paşanın siyasi hayatı, Ankara, 1954, s. 188.

Մուստաֆա Նեղիմը Նարբերդի կոտորածների մասին.

... Երբ հայ մեծամեծները կուսակալի փոխանորդին խնդրում են քրդական խուժանին դուրս բերել հայկական գյուղերից և ավերածությունների ու թալանի դեմը առնել, կուսակալն ասում է. «Շատ լավ, բայց զորքերը գյուղերից դուրս բերելուց հետո ինչպե՞ս կարող ենք վստահ լինենք, որ տհաճ դեպքեր չեն պատահի կուսակալության կենտրոնում»: Հայերը պատասխանում են. «Վստահության ինչպիսի երաշխիք ուզեք, կարող ենք տալ»: «Ուրեմն հայ մեծամեծները պետք է իրենց վստահության տակ առնեն հայկական թաղերը, և որևէ դեպք պատահելու ժամանակ պատասխանատվությունը կրելու է տվյալ թաղի երաշխավորը, սրանից բացի՝ բոլոր հայերի զենքերը պետք է հավաքել և հանձնել: Եթե այսպես լինի, ես էլ զորքը կհանեմ և կցրեմ թուրքական խուժանին ու քրդերին», – ասում է կուսակալի փոխանորդը: Այս առաջարկությունը շնորհակալությամբ ընդունվեց, նույնիսկ հայերը երաշխավորագիր տվեցին և յուրաքանչյուրն ուրախությամբ բաժանվեց զորանոցից՝ հուսալով, որ գրգռվածությունները կվերանան: Մյուս օրը՝ առավոտյան, հավաքված զենքերի դեպքի քանակից ենթադրվում էր, որ եթե ամբողջը չասեմ, գոնե քաղաքի մեջ եղած զենքերից 100-ից 80-ը (տոկոս) հավաքված էր... Հազիվ կես ժամ չէր անցել, երբ նկատեցի, որ մոտակայքում գտնվող Մորնիք գյուղից ծուխ է բարձրանում: Հասկացա, որ հարձակման ենթարկելով գյուղը, կրակի են տվել... Շտապելով կուսակալի փոխանորդի մոտ՝ ասացի, որ կառավարության պարտքն է հարգել երեկվա համաձայնագիրը: Կուսակալի փոխանորդը խոսքերիս ուղարկի հրդեհի մատնված գյուղը փրկելու: Սակայն նա պատասխանեց, որ զորքը հանելու համար պետք է կայսերական հրաման ունենալ: Բոլորս զարմանքից սարսափեցինք: Սենյակից դուրս գալով՝ ասացի հայերին, որ կառավարությունը ստոր նպատակ ունի, և ամեն ոք պետք է իր գլխի ճարը տեսնի... Ուեղճ հայերը, փախչելով Մորնիքից, ապաստանում էին այն մահմեդականների տներում, որոնց վստահում էին: Իմ ապրած տանը ապաստան տվեցի 700–800 հոգու: Բոլորի դեմքերն ու մարմինները արյունվա էին. պարզ էր, որ սրի տակից էին փախել: Քաղաքում ոչ մի ոստիկան չէր երևում՝ գնացել

էին գյուղերը թալանելու: Այդ օրը մինչև երեկո քաղաքը մխրճվել էր սգի և ամայության մեջ... Մուլթն ընկնելուն պես Հին Նարբերդում հրդեհի բոցեր երևացին: Այցելեցի Նարբերդում մահմեդականների տներում թաքնվող հայերին, որոնք նման էին սպանդանոցում փակված մսավաճառի հոտի: Շատ հուզվեցի: Եվ այդ զգացումը ինձ դրդեց կառավարչատուն գնալ, ուր ես նորից հանդիպեցի կուսակալի փոխանորդին, որն էլ ինձ մի նամակ տվեց և խնդրեց, որ ծածկագրեմ: Նամակում գրված էր. «Կայսերական կառավարություն չնորհիմ անդորրությունը կատարյալ է, ամեն ոք զբաղված է իր գործով»: Մինչդեռ կուսակալի փոխանորդը պետք է ամաչեր Ստամբուլ այս տեսակ հեռագիր ուղարկելուց, եթե երբեք կառավարչատան տանիքին ելած լինե՛ր՝ կտեսներ մոմի պես այրվող գյուղերը, կլսեր սպանված կանանց ու տղամարդկանց ողբազին օգնություն կոչերը... Ես համբեցի հեռագրի տողերը, նույնիսկ բառերը և գրեցի ճիշտ նրա չափ մի հեռագիր, և կուսակալի փոխանորդը ստորագրեց դրա տակ՝ չկասկածելով, որ ես փոխել եմ դրա բովանդակությունը: Հեռագրիս իմաստը հետևյալն էր. «Դերսիմի, Բալուի, Քաղզեքի քրդերը միացել են Բերդակ գետի գլխին և հզոր ուժ ստեղծելով՝ անընդհատ մրմնջում են. «Ինչո՞ւ թույլ տանք, որպեսզի այստեղ Հայաստան կազմվի: Այսքան ուժ ունենալով՝ ինչո՞ւ ապրենք օսմանյան լծի տակ: Անպայման պետք է ստեղծենք քրդական կառավարություն...»: Անընդհատ այսպիսի խորհրդակցություն են անում: Ի՞նչ կարող ենք անել...»: Այս տեսակ մի երկյուղ էր պետք սուլթան Աբդուլ Համիդին վախեցնելու և լուրջ հրովարտակ ձեռք բերելու համար... Հաջորդ օրը առավոտյան հեռագրի պատասխանը եկավ Ստամբուլից. «Շուտ հանեցե՛ք պատրաստի զորքը, զենքի տակ առե՛ք պահեստները, գործածեցե՛ք որքան թնդանոթներ ունեք, ցրեցե՛ք քրդերին, խառնաչփոթությունը վերջ տվե՛ք»: Կուսակալության կենտրոնն իսկույն չըջապատվեց զորքով... Քրդական սպառնալիքի առջև զինվոր և թնդանոթ հանելը տվեց սպասված օգուտը: Կուսակալությունում հայերի վրա 2 օր տևող հարձակումներից հետո քրդերը նահանջեցին...

Էրզրումի կուսակալ Ալի էմիրե էֆենդուն փոխարինելու համար էրզրում եկավ Մալաթիայի կառավարիչ Ալի փաշան, որը ծանոթ է իբրև արաբ Ալի փաշա անվամբ: Նա հայտնի էր իր դաժանություններով և կողմնակալություններով: Այս մարդն էր, որը պատճառ էր դարձել Մալաթիայի 1000-ի չափ հայերի այրվելուն... Նա լուր է ու-

ղարկում նույնիսկ զավառական ժողովի և դատարանի անդամ հանդիսացող հայերին ու հայտնի վաճառականներին՝ ասելով, որ բոլորը գան իր մոտ, քանի որ ինքը նրանց պաշտպանելու է: Բոլորին հավաքելով՝ ոստիկաններին հրամայում է հրկիզել նրանց: Ալին հաարտանալով պատմում էր, որ հրկիզվածների մեջ էին նաև Մենտլիճյան և Բոնափարտյան էֆենդիների պես մեծարժեք անձինք... Կուսակալի փոխանորդ Ալի փաշան անգուլթ, անզգամ լինելով հանդերձ՝ ապուշ և վախկոտ մի մարդ էր: Նրա հետ խոսելիս մի անգամ ասացի.

– Լուր ստացա, որ Անգլիան զորք պետք է ուղարկի, Ռուսաստանն էլ մի բանակ է ցանկացել ուղարկել: Հայտնի է, որ մեծերը պատասխանատվությունից խուսափելու համար իրենց գործած հանցանքները գցում են փոքրերի վրա: Այս պատճառով մեր աչքերը բաց պիտի պահենք:

– Ի՞նչ պետք է անենք,– հարցրեց Ալին:

– Անելիք չատ կա: Նախ ամենակարևորը՝ պետք է հավաքել հայերից խլված ապրանքներն ու գույքը և դրանք վերադարձնել նրանց: Պետք է կերակրել և բնակեցնել սոված և մերկ մնացածներին: Եթե ցանկանում եք, մի հանձնախումբ կազմենք. ես էլ կդառնամ այդ հանձնախմբի անդամներից մեկը: Հայերից էլ մի քանի անդամ թող լինի:

– Պոլսից թույլտվություն ստանա՞նք,– հարցրեց Ալին:

– Սա ներքին գործ է, Պոլսի հետ կապ չունի: Երբ այստեղ օտարներ գան, անտուն և սոված ոչ մեկի չեն տեսնի: Սրանց կայսրն էլ գոհ կմնա:

Ալի փաշային համոզեցի, նա հանձնախումբ կազմեց, հայերից էլ 4 անդամ ընդգրկեց: Կառավարչատան մեջ սենյակներ ազատեցինք անտուն հայերին ապաստանելու համար: 6–7-ական ոստիկանների հետ գնացինք գյուղերը, սկսեցինք որոնումները և բավականին գույք գտանք, որը բնակչությունը թաքցրել էր գետնի տակ, ախոռներում, ծխնելույզների և պատերի մեջ: Այսպես, շատ ընտանիքներ, որոնք թաքցրել էին իրենց գույքը, պատսպարվեցին և դիմակայեցին ցրտին...¹:

¹ Մուստաֆա Նեգիմ, Հայ եղեռնը և իմ վկայությունները, Սոֆիա, 1936, էջ 20–27:

Մահմեդական մոլլաները ամենուրեք քարոզում էին.

– Ով որ քեզ կծեծի, դու էլ նրան ծեծի՛ր... Նրա ապրանքը քեզ հալալ է. կոխի՛ տուր թշնամուդ հետ: Այդ կովի մեջ թե սպանես՝ դրախտ կգնաս, թե սպանվես՝ դարձյալ դրախտ կգնաս...¹:

Էրզրումի հայկական գյուղերից մեկում հյուր գտնվող մի թուրք ասել է.

– Աշխարհի մեջ ամեն բան պատահում և լինում է, բայց մերկ կանանց վրա հարձակվելը, նրանց ծեծելը և բռնաբարելը ո՛չ կարող է Աստծո օրենք լինել և ո՛չ էլ արդարասեր փաղիչահին հաճույք պատճառել...²:

Էրզրումում թուրք մոլլաներ մզկիթներում քարոզում էին.

– Ով որ հային իր տուն ընդունի իբրև հյուր, նա պիղծ է: Ով որ հայի հետ ընկերանա՝ նա պիղծ է... Հայի ապրանքն ու պատիվը հալալ է մուսուլմանին...³:

Մուհամադ Նեղիմը հայաբնակ վայրերում քրդերի գործադրած դաժանությունների մասին.

– Քրդերը պաշարել են Արաբկիր քաղաքը, կոտրել են քաղաքից դուրս գտնվող շտեմարանը և շտեմարանում գտնվող քարյուղը թափել են հայկական թաղի շուրջը: Կրակի տալով այն: Մեջը մնացողներին այրել են, իսկ դուրս եկողներին՝ գնդակահարել: Կոտորել են 4 հազարից ավելի հայերի: Մալաթիայում նույն օրը քարյուղ թափելով այրել և սպանել են եկեղեցում ապաստանած հազարավոր մարդկանց, թալանել ու հրդեհել են նույնիսկ շուկաները: Միայն Ոսրերդի կուսակալությունում կորստի քանակը 50 հազարի է հասնում: Նման ոճիրներ են կատարվել Սվազի, Էնկյուրիի, Էրզրումի, Երզնկայի և վերջապես՝ բոլոր հայաբնակ գավառներում: Քրդական զորքերի՝ հետ քաշվելուց հետո հայերը սկսեցին իրենց տները վերադառնալ, սակայն նրանց սպասվում էր մի ահավոր ողբերգություն ևս:

¹ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, стр. 97.

² Պոյաճեան Գ. (Ժիրայր), Ելտրդէ Սասուն, Կ. Պոլիս, 1910, էջ 473:

³ Նույն տեղում, էջ 394:

Ձմեռն իր խստությունները սկսեց գործադրել: Այդ ժամանակ էր, որ մեջտեղ պիտի գար երկրորդ ողբերգությունը: Իրենց հարազատներին կորցրածները մխիթարվում էին, որ նրանք որևէ տեղ թաքնված լինեին: Բայց, վերադառնալով իրենց գյուղերը, նրանց հետքն անգամ չգտնելով, սկսում էին ողբալ նրանց մահը: Նրանց տներում գույքի և ուտելիքի ոչ մի նշույլ չէր մնացել: Փոքր փորձություն չէր նաև ձյան և անձրևի տակ անտուն, սոված, առանց անկողնու մնալը: Այս պատճառով երկյուղից, վշտից, տեսակ-տեսակ ձախողություններից հիվանդացան, հազարավոր դժբախտներ անապաստան մնացին՝ գետիններն ընկած: Պատկեցին հրկիզված տների տակ, որոնք փլվելու վտանգի տակ էին և այս խեղճերը, թափառական դառնալով, կրկին կուսակալություն կենտրոն վերադարձան՝ ստիպված դռնեղուռ ընկնելով և ափ մեկնելով մի կտոր հաց մուրալու համար...¹:

Արաբկիրում իշխանությունները մահմեդականներին կոչ էին անում.

– Մի՛ խնայեք գյավուրներին. ամեն ինչ մուսուլմաններին հալալ է... Մահմեդականները պետք է կատարեն իրենց պարտքը՝ սպանեն բոլոր հայերին, կողոպտեն ու հրդեհեն նրանց տները: Ո՛չ մեկին չխընայել՝ սուլթանի հրամանն է: Ով չենթարկվի հրամանին՝ պետք է սպանվի որպես հայ²:

– Մուհամեդի զավակները պարտավոր են կատարել իրենց պարտականությունը՝ ոչնչացնել բոլոր հայերին, թալանել ու հրկիզել նրանց տները: Ոչ մի հայ չպետք է ողջ մնա...³:

Մուստաֆա Նեղիմը Ոսրերդի, Տիգրանակերտի, Ուրֆայի և Սեփերեկի հայերի կոտորածների մասին.

... Հայերից մեկը՝ Աբրահամը, պատմեց ինձ, որ ինքը, որդին ու եղբայրը արդեն 14 տարի է ինչ աշխատում են մի պանդոկի տիրոջ մոտ... Սակայն օրերից մի օր աշխարհը իրար է խառնվել: Պանդոկ են եկել մի քանի արնաթաթախ հայեր և հայտնել, որ մուսուլմանները բոլոր հայերին սկսել են կոտորել: Աբրահամը, թաքցնելով այդ հա-

¹ Մուստաֆա Նեղիմ, Հայ եղևուր և իմ վկայությունները, Սոֆիա, 1936, էջ 24–25:

² Նանսեն Ֆ., Հայաստանը և Մերձավոր Արևելքը, Երևան, 2002, էջ 247:

³ Les massacres d'Arménie, Paris, 1896, p. 258.

յերին, չտապում է գյուղ՝ ընտանիքը փրկելու: Սակայն տուն հասնելով՝ նա կնոջն ու աղջիկներին գտնում է դաժանորեն սպանված: Խնդազարված վերադառնում է պանդոկ, ուր էլ ականատես է լինում ևս մի ողբերգություն. պանդոկատերը դաշունահարում էր նրա տղային: Իսկ Աբրահամին ու մնացած հայերին ստիպում է ընդունել մուսուլմանություն, ավելի ուշ հայերին թլպատում են և ստիպում աղոթել սուփորել...

... Տիգրանակերտում լուր տարածվեց, թե իբր հայերը հարձակվել են մզկիթի բակում լողանք ընդունող մահմեդականների վրա և սպանել 7-8 մահմեդականների: Բերնբերան անցնելով՝ մի խոսքը դառավ հազար: Այս լուրը ահավոր հուզում ու գրգռվածություն առաջացրեց մահմեդականների շրջանում: Որոշ ժամանակ անց լուրեր տարածվեցին, թե քրդերը հարձակվել են հայկական գյուղերի, իսկ թուրքերը՝ քաղաքի հայերի տների վրա՝ սպանելով, հրդեհելով, թալանելով նրանց: Երեքշաբթի լուր եկավ, թե Մալաթիայում մի հայ սափրիչ կտրել է սափրվելու եկած քրդի գլուխը: Այս պատճառով կատաղած խուժանը հարձակվել է հայերի վրա՝ թալանել, հրդեհել և սպանել բնակչությանը...

... Իզմիր գնալու ճանապարհին հյուրընկալվեցի Տիգրանակերտում և ականատես եղա մի շարք դաժանությունների: Տիգրանակերտի քրիստոնյաների թաղերը, շուկաները ծայրից ծայր հրկիզված էին: Բոլոր հայերի տներն ու խանութները ավերվել և ոչնչացվել էին: Նույն վիճակն է տիրում նաև Տիգրանակերտին պատկանող գյուղերում ու գավառներում: Հազարավոր մարդկանց մահմեդականները կոտորել էին, իսկ նրանց ունեցվածքը՝ թալանել, տները՝ այրել: Ոչ մի հայ բնակվելու տեղ չունեք: Նույնիսկ ուտելու համար մի կտոր չոր հաց չունեք...

Քաղաքում ոչ բոլորն էին տրամադրված հայերի դեմ: Այսպես օրինակ. զորաբանակի հրամանատար Մյունիր փաշան չատ էր աշխատում, որպեսզի արգելի Տիգրանակերտում արյունահեղություններն ու վայրագությունները, սակայն, միայնակ մնալով, ոչինչ չկարողացավ անել: Հանդիպեցի այս անձնավորության հետ: Նա չատ ուղղամիտ մի մարդ էր: Նրա պատվավոր գործողությունները կատաղեցրին մյուս ավազակներին և, ի վերջո, սրանց զրդամբ նա պաշտոնանկ եղավ ու աքսորվեց: Տիգրանակերտից ճանապարհ ընկանք Սևերեկ քաղաք, որտեղ հյուրընկալվեցին տեղի ամենաազդեցիկ հարուստ-

ներից մեկի՝ Օսման աղայի տանը: Օսման աղան սաստիկ չքեղություն սիրող, արնախում, անգութ մի մարդ էր: Նա հպարտությամբ պատմեց, թե առանց բացառության կոտորել է տվել Սևերեկի հայերին և նրանց դիակները լցրել չօգտագործվող հորերը: Օսման աղայի արյունոտ աչքերի մեջ կարդացվում էին ամեն տեսակի ստորություն և զազանություն: Սևերեկից ցանկացանք մեկնել Ուրֆա, սակայն լուր ստացանք, որ Ուրֆայում կատարված ոճիրները շատ ավելի դաժան ու ցավալի են, քան մինչև այդ մեր տեսածներն ու լսածները: Մի կողմից՝ կապարի տարափ տեղալով, մյուս կողմից՝ քարյուղ թափելով թուրքերը ողջ-ողջ այրել էին եկեղեցում ապաստանած 10 հազարից ավելի տղամարդկանց, կանանց ու երեխաների...¹:

Թուրա-Կալեի ժողովի (ապրիլ 1895 թ.) թուրք և քուրդ հոգևոր ու աշխարհիկ երևելիների որոշումը.

— Անխնա հրի ու սրի մատնել բոլոր այն հայերին, ովքեր կհրաժարվեն ընդունել սուրբ կրոնը²:

Երբ կառավարական պատվիրակությունը Աբդուլլահի գլխավորությամբ (նոյեմբեր 1895 թ.) ժամանում է Սեբաստիա՝ իբրև թե քննելու տեղի ունեցած դեպքերը, հայ ավազանին, տեղեկանալով այդ մասին, մի կոլեկտիվ նամակ է հանձնում Աբդուլլահին, սակայն վերջինս առանց այն ընթերցելու հայտարարում է.

— Հայերին հնազանդեցնելու համար թուրքական կառավարությունը հավաքել է 150 հազար զինվոր և մտադիր է ոչնչացնել բոլոր հայերին...³:

Ելլըզլից քուրդ հայտնի մեծամեծներ Զիլան չեյխ Մեհմեդին ու Ամրին ուղղարկված նամակում հաղորդվում էր.

— Քրիստոնյայի կինն ու աղջիկը առևանգելն արդարություն է, նրան կողոպտելը Ալլահի համար աշխատել է... Սպանված գյավուրի արյան կաթիլների չափ հուրի եք ստանալու ջնններթում...⁴:

¹ Մուստաֆա Նեդիմ, Հայ եղեռնը և իմ վկայությունները, Սոֆիա, 1936, էջ 17-18, 31-32, 33-37:

² «Արձագանք», 1895, թիվ 53:

³ АВТР, Посольства в Константинополе, д. 3181, л. 38.

⁴ «Հնչակ», 1895, թիվ 1:

Թուրք մոլլաները, մոլեռանդ մահմեդական ամբոխները հայերի դեմ գրգռելու համար, կոչեր էին անում.

– Հայերը միացած Անգլիայի հետ, ուզում են կործանել մեր օսմանյան թագավորությունը, ջնջել իսլամը: Գալիք ուրբաթ օրը հայերը հարձակվելու են մզկիթների վրա և կոտորելու են մուսուլմաններին: Ուստի, հարկ է առաջ ընկնել և թույլ չտալ, որ անհավատ հայերը կոտորեն մեզ¹:

Վանում հայերի նկատմամբ տեղի ունեցած բռնությունների մասին է վկայում Օսմանյան կայսրության զաղտնի ոստիկանության պետ Զիա բեյը.

– Իմ լրտեսները ինձ հաղորդում էին Վանում տեղի ունեցող դեպքերի մասին: Լրտեսագրերից տեղեկացա, որ մի քանի օր առաջ Վանում, ուր իշխում էր տգետ Բահրի փաշան, ինչ–որ մեկը օրը ցերեկով կրակել է ոստիկանի վրա և դիմել փախուստի: Ժողովուրդը լսելով կրակոցներ՝ փախուստի է դիմել՝ ենթադրելով, որ վալին նորից սկսում է կոտորածները: Այդ պահին արհեստանոցներից դուրս են եկել 4 հայեր և շարժվել դեպի տուն՝ ճաշելու: Ոստիկանները, տեսնելով նրանց, փորձել են ձերբակալել, բայց հայերը դիմել են փախուստի... Իհարկե, հայերին առանց զժվարության բռնել են և 24 ժամ հետո՝ առանց նախնական հարցաքննման, ենթարկել մահապատժի... Իսկ Բահրի փաշան սուլթանի կողմից պարգևատրվել է 5 հազար լիրայով... Մեկ ուրիշ տեղեկություն համաձայն՝ Վանի բանտերում այնպիսի հանցագործություններ էին կատարվում, որոնք ինձ ապշեցնում էին... Լրտեսները հոխորտում էին, որ Բահրի փաշան հաճախակի մասնակցում է ձերբակալվածներին խոչտանգելու, տանջամահ անելու և նույնիսկ նրանց քույրերի բռնաբարության դեպքերին...

Եվ ես երբեք չէի կարողանալու հասկանալ, թե որտեղից այս լազի մեջ այսքան ատելություն հայերի նկատմամբ... Ավելի ուշ եվրոպական մամուլի զրդմամբ Աբդուլ Համիդը ազատում է նրան պաշտոնից, բայց մի ամիս անց նշանակում է Ալեպոյի (Հալեպ) վալի²:

¹ Les massacres d'Arménie, Paris, 1896, p. 27.

² **Хаджетлаше М.**, Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 29–33.

Ներքին գործերի նախարարին Վանի վալիի (նոյեմբեր 1894 թ.) չինծու հեռագրից.

– Արճեչի շրջանում ժանդարմների չրջիկ խումբը, լսելով, որ մի քանի անհայտ ավազակներ այդ գյուղախմբի գյուղերից մեկի ոչխարը քչել են, սկսել է նրանց հալածել: Տեղի ունեցած ընդհարման ժամանակ մի ժանդարմ էլ վիրավորվել է: Օգնության հասած Թափուր Աղասին Ախթե լեռան փեշերին շրջապատել է ավազակներին և վեց հոգու գերի է վերցրել, իսկ մյուսներին հաջողվել է փախչել: Ավազակները քրդի տարազ հագած հայեր էին: Տասնչորս հայ գյուղացիներ, որոնք օգնել են ավազակներին, ձերբակալված են³:

Թուրքական թերթերից մեկը Վանում սուլթանի ներկայացուցիչ Սաբաէդդին փաշայի գործունեության մասին.

– Փոխանակ փաշան գործերի միջոցով դրույթունը կարգավորե՛ր՝ քրդերի հետ հարաբերության մեջ մտավ՝ մտածելով, որ կարող է ճարպկությամբ նրանց համախմբել հայկական հեղափոխությունը ճնշելու համար⁴:

Վանում Սաբաէդդին փաշան այցելում է Համիդե գնդի հրամանատարին և կարգադրում է.

– Հայերին կոտորելու հրամանը ստանալուն պես գունդը ոտքի՛ հանել և հայկական գյուղերը կոտորելուց հետո լցվել Վան, որպեսզի ջնջենք քյաֆիրներին, որոնք ուզում են թագավորություն ձեռք բերել և իշխել մուսուլմանների վրա: Որքան կարող եք անխնա ու աներկյուղ կոտորե՛ք: Քաղաքի ամբողջ ավարն ու հարստությունը ձերն է⁵:

Կ. Պոլսից Վանի վալի Նազիմին եկած հեռագրում հրամայվում էր.

– Կոտորե՛լ հայերին, չխնայե՛լ տղամարդկանց, հրկիզե՛լ նրանց ունեցվածքը, հնարավորինս չափ խնայել միայն կանանց⁶:

Քրդերին ուղղված նամակում թուրք պաշտոնյաներից մեկը գրել է.

– Ջնջե՛ք բոլոր գյավուրներին: Սույն նամակը ստանալուն պես, եթե Մուհամեդի իսկական հավատացյալներն եք, հավաքե՛ք ձեր բոլոր մարդկանց և սկսե՛ք թալանել հայ գյուղերը, այրե՛ք և սպանե՛ք:

¹ «Նոր Դար», 1894, թիվ 214:

² «Դրոշակ», 1896, թիվ 17:

³ **Առաքելյան Հ.**, ԳԱԹ, գ. 155, թիվ 3:

⁴ «Արաբս», 1897, գ. Բ, էջ 103:

Գյավուրները աշխատում են տիրանալ այս երկրին և ձեր տերը դառնալ: Գործելու ժամանակն է: Դրանց արմատները չորացրե՛ք: Ոչ մի հայ թո՛ղ չմնա: Մեր առատագուլթ սուլթանը, եթե լսի ձեր քաջագործություն մասին, պատիվներով ու չքանչաններով կփառավորի ձեզ...¹:

Խիզանի կայմակամը հրամայում է.

– 15 տարեկանից փոքրերին չկոտորե՛ք, իսկ չափահասներին նախ պետք է թուրքացնել և ապա միայն սպանել, որպեսզի նրանց որդիները, հայրերի թուրքական գերեզմանը տեսնելով, այլևս չհիշեն իրենց հայկական կեղտոտ ծագումը²:

Ուրֆայում տեղի զինվորական հրամանատար Հասանը և չեյի Սեիդ Ահմեդը հավաքված մահմեդականներին կոչ էին անում.

– Հայերին կոտորեք որպես պետություն թշնամիներ և սուլթանի իշխանությունը չենթարկվողներ: Ուտքի՛ ելեք... ձեզ տրված է 48 ժամ. կոտորեցե՛ք բոլոր գյավուրներին, ու նրանց հարստությունը ձերը կլինի³:

Ուրֆայում վալիի կինը, տեսնելով հայերի նկատմամբ իրագործվող կոտորածները, բացականչել է.

– Պետք է քարե սիրտ ունենալ, որպեսզի չհուզվել այն տանջանքներից, որոնք կրեցին քրիստոնյաները...⁴:

Բաղեշում տեղի ունեցած կոտորածների վերաբերյալ հայերի ներկայացրած բողոքներին կառավարիչը պատասխանում է.

– Քրդերի հարձակմանը մի դիմադրեք՝ թագավորի հրամանն է⁵:

Եղեսիայում 1895 թ. նոյեմբերի 17-ի առավոտյան կրոնական Սեյիդ Նալիլը Ուլի ձամի մզկիթի մոտ, որը նախկինում եղել է հայկական Քառասուն Մանուկ եկեղեցին, արտասանում է գրգռիչ մի ճառ արյունարբու խուժանին ուղղված.

¹ Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. I, Երևան, 2008, էջ 500:

² Les massacres d'Arménie, Paris, 1896, p. 191.

³ «Արարատ», մայիս, 1896, էջ 127:

⁴ Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897, ч. II, стр. 1.

⁵ Les massacres d'Arménie, Paris, 1896, p. 257.

Օհ, Մուհամմետի՛ հաւատացեալներ, մեր երկրին մէջ ապրող քրիստոնեաները (կեաւուրները) մեր օգուտին համար է, որ կը պահենք: Անոնք մեր եղեմական պարտէզին շուրջ ցանկապատի համար թողուած վարդենիներ են, եւ մեր աշխարհակալ խալիֆաները այդ մտօք պահեն են դիրենք: Բայց ճշմարիտ հաւատացեալներուն թող յայտնի ըլլայ, որ վարդենիներուն փուշերը շատցած են. պէտք է յօտել: Իսլամին Աստուածը չի ներեր, որ այդ փուշերը մեր մատները արիւնեն: Բոլորը փճացնել՝ մեր դատին օգտակար չէ: Նման պարագայի այս անօրեններուն ազգակիցները՝ Անգլիան, Ֆրանսա, Ռուսիա, կը յարձակին ու մեր եղեմական պարտէզը կը գրաւեն: Իսկ եթէ այսպէս թողունք, մեր պարտեզը փուշերով պիտի ծածկեն. ուրեմն՝ կը հասկնաք, թէ ինչ պիտի ընէք:

Ձէյթունը տեսանք. զէյթունցիք այս կեաւուրներուն արենակից են: Դուք գացիք ու կոուեցաք, հազարաւոր չէհիտներ (նահատակներ) տուիք, ու հիմա ձեր մայրերը կու լան: Եթէ ձգենք, ասոնք ալմեզի աղպէս պիտի ընեն: Ո՛չ, մենք պէտք է թոյլ տանք ասոնց բազմանալ: Յօտիչը (սուրը) ասոնց մէջէն վերցնելու չէ: Իրենց մայրերը լացնելու է: Սա ապերախտ հայերը, որ մեր խալիֆային չնորհիւ կ'ապրին, կ'ուզեն մեր երկիրը իրենց ձեռքը առնել... Բայց, ո՛չ, չեն կարող. իսլամին Ալլահը զօրաւոր է: Անոր մարգարէին փոխանորդը՝ Ապտիլ Համիտ, հրաման կու տայ ձեզի ջարդել 15-էն վեր եղող բոլոր տղամարդիկը: Ամբողջ ունեցածին ձեզի հալալ է: Անոնց գեղեցիկ կիներն ու աղջիկները կրնաք առնել ու ձեզի կին ընել: Պաշը՝ պէկրիկ, մալը՝ եաղմա (գլուխը՝ պետութեան, կայքը՝ յափշտակութեան), «մուշիրին դաթլը հալալ» – կ'ըսէ Գուրանը: Ով որ մատնութիւն կ'ընէ՝ զայն սպաննելը արդար է: Այս կեաւուրները մատնութիւն կ'ընեն. մեր գաղտնիքները մեզի թշնամի Անգլիոյ, Ֆրանսայի, Ռուսիոյ կը տանին:

Օհ, Գուրանը այսպէս կը հրամայէ. «Ով որ կեաւուր մը մեռցնէ, անիկա արքայութեան մէջ 40 յաւերժահարսեր պիտի ունենայ՝ իբրեւ վարձատրութիւն իր բարի գործին»:

Ձեր փափաքը կատարուած է: Մեր սուլթանը ազատ կը ձգէ ձեզ, որ այս անօրեններուն հաշիւը մաքրէք: Իրարու հետ հաշտուեցէք, իրարու ներեցէ՛ք: Աւարի եւ աղջկայ վրայ կոխ չընէք. գոյքի մի՛ նաշիք. կոտորելո՛ւ նայեցէք. պատեհ առիթ է:

Թագաւորը շատ ապրի ու իսլամին Ալլահը ձեզ զօրացնէ¹:

¹ Գազանճեան Ն., Յուշագրութիւն Եղեսիոյ 1895-ի ջարդէն մինչև 1915-ի հերոսամարտը և եղեռնը, Երևան, 2004, էջ 55–56:

Տուրսուն բեյ անվամբ թուրք մի ոստիկան հայերին ասել է.

– Կամ պետք է ձեզ յոթ տարեկանից մինչ յոթանասուն տարեկաններին սրի անցկացնենք, կամ էլ Ռուսաստանի հրեաների պես երկրից արտաքսենք... Այս ազգը վատ և ստորին է...¹:

Ուռհայի զորքերի հրամանատար Հասան փաշան հայտարարում է.

– Թալանի համար ժամանակ դեռ չատ կլինի, հիմա գնացե՛ք հայկական թաղամասեր և կոտորեցե՛ք հայերին, իսկ նրանցից ազատվելուց հետո վերցրե՛ք տներում ու խանութներում եղած ամեն ինչ²:

Երբ Իշխանաձորի հայ բնակչությունը պատրաստակամություն է հայտնում հնազանդվել կառավարությունը, թուրքական զորքի հրամանատար Մուստաֆա փաշան պատասխանում է.

– Ես չեմ եկել ձեզ խնայելու, ինձ հանձնարարված է արմատախիլ անել գյուղացիներին... (չուռ գալով զորքին՝ նա կտրել է քահանայի գլուխը)...³:

Մի թուրք զինվորական հայերին կոտորելու մասին գրել է.

– Անցնելով որոշ տարածություն՝ սպայի հրամանով բանտարկյալներին չրջապատեցինք, սվինների օգնությամբ ձոնեցինք, ապա բոլորին այրեցինք... ստացել էինք կառավարական հանձնարարություն՝ սպանել բոլոր քրիստոնյաներին⁴:

Մշո կառավարիչը գանգատվում է.

– Քրդերին հրամայեցինք սպանել հայերին, սակայն նրանք ավելի հակում ցուցաբերեցին ոչ թե սպանություն, այլ՝ թալանի⁵:

Պաղեստինում գտնվելու ժամանակ Վիլհելմ 2-րդի այն հարցին, թե ով է պատասխանատու վերջին ջարդերի համար (խոսքը 1894 թ.

¹ Պոյաճեան Գ. (Ժիրայր), Ելտրգէ Սասուն, Կ. Պոլիս, 1910, էջ 472:

² Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897, ч. II, стр. 109.

³ Лазарев Я. А., Причины бедствий армян в Турции и ответственность за Сасуна, Тифлис, 1895, стр. 35.

⁴ Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897, II, стр. 119.

⁵ ՀՀԳԱ ինֆորմացիոն բյուրոն, 1983, թիվ 8, էջ 26:

հայերի կոտորածների մասին է), օսմանյան զաղտնի ոստիկանությունը հեկավար Զիա բեյը առանց վարանելու պատասխանում է.

– Նորին Վեհափառությունը¹:

Մարչալ Շաքիր փաշան սուլթանի անունից դիմում է քրդերին.

– Սպանե՛ք և ոչ թե թալանե՛ք... Հայերի գլուխը կտրե՛ք և ունեցվածքը կողոպտե՛ք²:

Երբ Անգլիայի դեսպանը սուլթան Համիդին ասում է, որ մի մահմեդականի սպանելու համար բանտ են նետվել հայկական գյուղի բոլոր տղամարդիկ, Համիդը զարմացած պատասխանում է.

– Բայց դուք հասկանում եք, չէ՞, որ մահմեդական է սպանվել³:

Սուլթանի կաթնեղբայր Ֆեհիմը մի գիշերվա ընթացքում սպանել է Կ. Պոլսի փողոցներում հանդիպած 14 հայի և երբ պատճառը հարցրել են, նա պատասխանել է.

... Այն վիրավորանքների պատճառով, որ սուլթանի գլխին թափում է եվրոպական մամուլը⁴:

Անգլիացի դիվանագետ Դիլոնին համիդե մի սպա զարմացած հարցրել է.

– Մի՞թե մահմեդականները պիտի պատժվեն հայերին սպանելու համար⁵:

Քրդերը Ալաշկերտի Զլկան գյուղում հարձակվում են հայ ընտանիքի վրա և տիրանում նրանց ունեցվածքին, երբ հայերը գանգատվում են տեղական իշխանությունը, վերջիններս պատասխանում են.

– Մենք ի՞նչ կարող ենք անել, հարձակվողները քրդեր են: Նրանք ոչ միայն ձեր, այլև մեր կյանքը չեն խնայում: Դուք էլ թուրքերի նման

¹ Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. I, Երևան, 2008, էջ 673:

² «Դրոշակ», 1896, թիվ 10:

³ Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 220:

⁴ Кайфман, "Коронованный узник", С. Петербург, 1910, стр. 68.

⁵ Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897, ч. II, стр.

վարվեք՝ ինքներդ հետ խլեք ձեր ունեցվածքը... Իսկ եթե չեք կարող, Ռուսաստանի ճանապարհը ձեր առաջ բաց է¹:

Կեսարիայում թուրքերը պատեհ և ոչ պատեհ առիթով կրկնում էին.

– Անհավատնե՛ր, դուք գյավուր թագավորների օգնությամբ եք դիմում մեր դեմ: Գարունը բացվելուն պես կտեսնեք, թե ինչ արժեք ունի այդ օգնությունը: Մեր կողմից ջարդվելուց հետո՝ դիմեք ուր ուզում եք: Ամեն ինչ պատրաստ է, և սուլթանի հրամանին ենք սպասում: Կարկանդակի միայն եզրերն ենք կարողացել ուտել, մեջտեղը դեռ մնացել է²:

Մուստաֆա Նեղիմը Հալեպի կառավարչի և հայերի մասին.

– Երբ Պերեճիկից դուրս էինք գալիս, իմ հովանավորության տակ գտնվող հայերի թիվը հասել էր 91-ի, որոնք Ուարբերդից, Տիգրանակերտից, Սևերեկից, Պերեճիկից էին միացել ինձ: Պերեճիկի զինվորական սպաները ոչ մի կերպ չէին ցանկանում անցագիր տալ այս հայերի համար և փորձում էին հետ վերադարձնել նրանց... Ես փորձեցի կաշառել նրանց, սակայն վերջիններս յուրաքանչյուր հայի գրվախի համար 10 ոսկի պահանջեցին: Հնարավոր չլինելով 91 մարդու համար 910 ոսկի վճարել՝ ես որոշեցի խիստ վարվել. մեկ-մեկ նամակ գրեցի Բ. Դուան և Հալեպի կուսակալի համար: Հալեպի կուսակալից մի խիստ հրաման եկավ կայմակամին, որի շնորհիվ էլ մենք, օձիքներս ազատելով, անցանք Եփրատ գետը և ապահով հասանք Հալեպ: Այստեղ այցելեցի կուսակալ Ռեուֆ փաշային, որը պատվավոր և առաջադեմ մի անձնավորություն էր... Լուրեր էին տարածվում, որ Հալեպում հավաքված խուժան դասակարգը պատրաստվում է թալանի ու ոճրագործությունների: Այդ մասին Ռեուֆ փաշան տեղեկություններ, ապացույցներ ուղեց, ես էլ պատմեցի նրան այն ամենի մասին, ինչին ակնհայտ էր եղել ճանապարհին: Նա ասաց, թե ինչ լավ կլիներ, որ Աստված բոլորին էլ տված լիներ այն ամենը, ինչը պատիվ, սիրտ, խելք և զոհողություն են կոչվում:

Այդ օրը երեկոյան լուր ստացա, որ Ռեուֆ փաշան թնդանոթներ է տեղադրել զորանոցի շրջակայքի բարձր կետերում՝ հայտարարե-

¹ «Արձագանք», 2-ր հունիսի, 1895 թ.:

² Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. II, Երևան, 2008, էջ 20:

լով, որ հայերի վրա հարձակվելու պարագայում նա թնդանոթի տակ կանոնի ռամիկ խուժանի բնակատեղի թաղերը:

Այսպես, Հալեպը դերժ մնաց այն խոշոր վտանգից, որ կախված էր իր գլխին¹:

Մուստաֆա Նեղիմի նամակը ուղղված սուլթան Աբդուլ Համիդին.

– Բնավ կասկած չկա, որ պիտի գա այն ժամանակը, երբ հաշիվ ենք տալու Եվրոպային ու թերևս ողջ մարդկությանը այս ցավագին ոճիրների համար: Այս աննախագեղ ոճրագործությունները կարեկցանք են առաջացնում խիղճ և դատողություն ունեցող բոլոր մարդկանց սրտերում... Սաստիկ սրտածմլիկ մի տեսարան է, երբ տեսնում ես մարդկանց, որոնք կյանքում որևէ բան չեն խնդրել, սակայն հիմա դուռն դուռ ընկած մի կտոր հաց են մուրում: Իսկ որբերը փողոցից փողոց թափառելով՝ որոնում էին իրենց հայրերին, մայրերին ու հարազատներին...

Հայտնի է, որ հայերին վերագրվող հերյուրանքների նպատակը նրանց դեմ ատելության կրակ վառելն է...²:

Պետերբուրգում թուրքական դեսպանը, բողոքելով «Вестник» թերթում հրապարակված որոշ հայկական կոտորածների վերաբերող նյութերի դեմ, գրել է.

– Թուրքական դեսպանությունը խնդրում է հերքել սխալ լրատվությունը, քանի որ հայ զավակները, զինված արտասահմանից ստացված զենքերով, միացել են քուրդ ապստամբներին և թալանելու նպատակով հրդեհել ու ավերել են մահմեդական գյուղերը, դյուրավառ հեղուկով այրել մահմեդականներին: Իսկ գնդերին, որոնք ուղարկված էին դեպքերի վայրերը, հրամայված էր պաշտպանել տուժած բնակչությանը: Կայսերական զորքը ոչ միայն պաշտպանություն տակ առավ խաղաղ բնակչությանը, մասնավորապես կանանց ու երեխաներին, այլև օրինական միջոցներով հաստատեց կարգուկանոն... Քրդերը չեն հափշտակել հայերի ունեցվածքը, եկամուտն ու անասունները: Նման բան չի եղել, իրենք՝ ավագակ հայերն են ապստամբությունից առաջ անասունները քշել լեռները, իսկ ունեցվածքը հանձնել իրենց քրվո քրդերի հոգացողությանը: Նաև ճիշտ չէ, որ

¹ Մուստաֆա Նեղիմ, Հայ եղևունը և իմ վկայությունները, Սոֆիա, 1936, էջ 37–38:

² Նույն տեղում, էջ 26–28:

քրդերը բազմաթիվ հայ կանանց են առևանգել: Դրանք նույն հայ ավազակների կանայք են, ովքեր իրենց կամքով գնացել են ապրստամբ քրդերի մոտ: Հայերն իրենք են ավերել իրենց գյուղերը¹:

Լոնդոնում թուրքական դեսպանի 1894-ի նոյեմբերի 28-ի գաղտնի հեռագրից.

Լորդ Քեմբլեյը խնդրեց այս երեկո գնամ իր մոտ: Նա ինձ ասաց, որ խիստ վրդովված է Կ. Պոլսից ստացած տեղեկությունների պատճառով՝ համաձայն որոնց կայսերական կառավարությունը պաշտոնապես մամուլում հայտարարել է, որ հանձնաժողով է գնալու Մուշի հայ հրոսակների կողմից կատարած ոճրագործությունները քննելու համար: Նույն հաղորդագրությունը հայտնում է նաև, որ չքանչաններ են շնորհվելու զորքերի հրամանատարին և Մուշի մոֆթիին, իսկ զորքերի գործունեություններին ընդդիմացող նահանգապետը հեռացվել է պաշտոնից:

Լորդ Քեմբլեյը գտնում է, որ այդ հաղորդագրությամբ ամբողջությամբ փոխվում է հետաքննության բնույթը և կանխորոշվում է դրա արդյունքը...

Լորդ Քեմբլեյը խնդրեց կայսերական կառավարությանը հայտնել կայսրության համար արտակարգ վտանգավոր կացության մասին: Մինչև այժմ Անգլիան ջանացել է այդ հարցին մոտենալ ամենաբարեկամական ձևով, հնարավորության սահմաններում նսեմացնել այն և չօգտվել դաշնագրի ընձեռած հնարավորությունից, բայց սրանից հետո այդ անկարելի է և նա շատ է վախենում, որ հարցը կարող է շատ լուրջ և եվրոպական բնույթ ստանալ...²:

Պետերբուրգում Թուրքիայի դեսպանի հուլիսի փաշային (1894 թ. նոյեմբեր) ուղղված Օսմանյան կայսրության վարչապետ Սայիդ փաշայի նամակից.

– Ռուսաստանն ընդունել է Անգլիայի առաջարկը Սասունի դեպքերի կապակցությամբ մեր դեմ դիմանադիտական քայլեր ձեռնարկելու վերաբերյալ: Չդիմելով որևէ պաշտոնական կամ այլ աղբյուրի՝ հայտնեք այդ հարցի վերաբերյալ, ինչ կարող եք: Հակառակ Շիշկինի (Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության վարչության

¹ «Մուրճ», 1894, թիվ 11–12:

² АВТР, Политархив, д. 3435, лл. 100–101.

պետ) խոստումներին՝ ռուսական մամուլը շարունակում է տեղի տալ Օսմանյան կառավարության դեմ թշնամաբար տրամադրված հոգեվաճներին: Վերսկսե՛ք այս կապակցությամբ ձեր դեմարշները¹:

Ըստ Հյուսիսային հեռագրական գործակալության՝ սուլթանի պալատում օսմանյան նախարարների խորհուրդը 1894 թ. դեկտեմբերին հավանություն է տվել հետևյալ ծրագրին.

– Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Մուշի վիլայեթներից կկազմվի մեկ ընդհանուր նահանգ, որի նահանգապետին հինգ տարի ժամանակով նշանակելու է սուլթանը: Առաջին նահանգապետը կլինի մահմեդական, իսկ հաջորդները՝ քրիստոնյա, բայց՝ ոչ հայ: Տեղական ժանդարմների գտնվելու է սուլթանի նշանակած զորաբանակի հրամանատարության տակ: Նահանգից ստացած եկամուտները կծախսվեն տեղական կարիքների համար, բացի այն գումարներից, որոնք հատկացվում են պետական պարտքի վարչությանն ու ծխախոտամաքսահարկմանը... Դատավորները, բացի դատարանի նախագահից, ընտրվելու են²:

Սուլթան Ադուլ Համիդ II-ը Հայոց պատրիարք Աշրեպանին ասել է.

– Անհնար է հայերին երազած ինքնուրույնությունը տալ: Ես կտակում եմ ինձ հաջորդող սուլթաններին, որպեսզի հայերին նման բան չտան և նրանց ուխտում եմ, քանի դեռ աշխարհում մահմեդական կա, պատերազմել հայերի անկախության դեմ³:

Թուրքական «Հաքիքաթ» թերթը, խեղաթյուրելով իրականությունը, գրել է.

– Կատարյալ անգործություն է տիրում կայսերության բոլոր մասերում: Այդ պետք է վերագրել սուլթանի իմաստունությանը, որն առաջացրել է երախտագիտություն այն բանի համար, որ նա կարողացավ արագությամբ վերացնել խաղաղությանը սպառնացող խառնակչությունները:

Եվրոպայում, մասնավորապես Անգլիայում, չէին հավատում, որ մի բուռ հայ ազդեցությունների խառնակչությունները կարող են մեծ

¹ Ламсдорф Н., Дневник 1894–1896, Москва, стр. 88–89.

² «Նոր Դար», 14-ր դեկտեմբերի, 1894 թ.:

³ Եղաճեան Գ., Արդուլ Համիդ Բ., Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 409:

հրդեհ առաջացնել. մինչդեռ ազիտատորների իսկական նպատակը բացահայտվեց, և հասարակական կարծիքը, որ մի ժամանակ նրանց համար նպաստավոր էր, չուռ եկավ նրանց դեմ: Այդ բանասարկուներն իրենց գարշելի արարքների համար դեռևս օրենքի ամբողջ խրատով լայսերական կառավարության կողմից չեն պատժվել և նրանց հանդեպ վեհապետի մեծահոգությունը բացարձակապես աննախադեպ է¹:

Վիեննայի «Neue Freie Press» լրագրի հրատարակչին Աբդուլ Համիդ II-ը ասել է.

– Թե քաղաքական և թե վարչական գործերում ինձ առաջնորդող սկզբունքներն են չափավորություն և հավասար հոգածություն բոլոր հպատակների հանդեպ՝ առանց խիստ միջոցների դիմելու: Հույս ունեմ, որ վերջերս օրինական ճանապարհից չեղված իմ հայ հպատակները կզղջան և գործով ցույց կտան ինձ այդ զղջումը: Իմ պետության մեջ ապրող հայերը միշտ օգնություն և հովանավորություն են գտել իմ կողմից, և նրանց երևելիներից չատերը բացառապես մեր տոհմի բարեսիրության չնորհիվ են հարստություն և դիրք ստացել: Հետևաբար, ես նայում եմ վերջերս իրենց հպատակության պարտքին հակառակ ընթացք ցույց տվող հայերի վրա որպես մոլորված որդիների վրա, ովքեր գայթակղվել են օտարների սադրանքներից և համոզված եմ՝ հենց որ ճշմարտությունն իմանան, իսկույն կվերադառնան ուղիղ ճանապարհ²:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը Անգլիայի դեսպան Քլերին ասել է (1895 թ.).

– Բնական է, որ բարենորոգումների ծրագիրը պահանջում է երկար քննարկումներ: Բայց հենց որ հավանություն տրվի ու որոշում կայացվի, մտադիր եմ այն ամբողջությամբ կատարել³:

Գերմանիայի կայսեր հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ Աբդուլ Համիդը բացահայտորեն հայտարարել է.

¹ «Մշակ», 1895, թիվ 144:

² «Արձագանք», 28-ը ապրիլի, 1895 թ.:

³ *Blue Book*, Turkey, N I, 1896, p. 123.

– Ես ավելի կնախընտրեմ մեռնել, քան թե Անատոլիայի արևելքում ինքնավարության տանող բարեփոխումներ անցկացնել¹:

1895 թ. հոկտեմբերին Աբդուլ Համիդ II-ը՝ Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի դեսպանների ճշմամբ, ստորագրում է բարենորոգումների մի նոր ծրագիր, որի մասին իր տարակուսանքն է հայտնում Քյամիլ փաշան.

– Ընթերցելու ընթացքում ես նկատել էի, որ հազիվ թե գործադրվեին այս հոգվածները կյանքում, քանի որ քրդերի զինաթափումը և քրիստոնյա պաշտոնյաների նշանակումը ծանր էր նստելու քրդերի վրա: Այնուհանդերձ, քանի որ տվյալ որոշումը հաստատվել էր կայսերական հրամանով, ես ստիպված ստորագրել էի այն՝ միայն մատնանշելով, որ տվյալ հոգվածների կիրառումը կապված է դժվարությունների հետ²:

Օսման Նուրին այն մասին, թե Աբդուլ Համիդ II-ը ինչպես էր վերաբերվում բարենորոգումների գաղափարին.

– Անգամ բարենորոգում բառը վրդովեցնում էր Աբդուլ Համիդին և գրգռում նրա ոճրային բնազդները... Նրա միակ նպատակը դարձավ թույլ չտալ Եվրոպայի միջամտությունը, ի չիք դարձնել անգլիական ազդեցությունն Անատոլիայում, միաժամանակ ներկայանալ իբրև գործիչ, որն անհրաժեշտ նախազգուշական միջոցներ է ձեռնարկել վերահաս հեղափոխությունը կանխելու համար³:

Աբդուլ Համիդ II-ը Վամբերինին ասել է.

– Ձեզ վստահեցնում եմ, որ չուտով հայերին խելքի եմ բերելու: Նրանց գլխին մի հարված հասցնելով՝ մոռացնել եմ տալու հեղափոխության գաղափարը... Գրեթե պարտադրված եմ այդ արմատական միջոցներին դիմել ի հակակշիռ այն անդուլ հալածանքների ու թրջնամությունների, որ ցույց է տալիս քրիստոնյա աշխարհը: Ուլելով Ռումի-նիան և Հունաստանը՝ Եվրոպան Թուրքիայի ոտքերը կտրեց: Բուլղա-

¹ *Zuhuri Danişman*, *Osmalı İmparatorluğu tarihi*, C. XIII, sultan ikinci Abdul-Hamid Han, İstanbul, 1966, s. 145.

² *Hatrat-ı sadr-i esbak Kâmil paşa*, Kastantinya, 1329 (արաբատա); Hilmi Kâmil Bayur, *Sadrazam Kâmil paşanın siyasi hayatı*, Ankara, 1954, s. 186.

³ **Օսման Նուրի**, Սուլթան Համիդ II-ն ու նրա իշխանության շրջանը, Հ. Բ., Կ. Պ., 1909, էջ 838 (արաբատա թուրքերեն):

րիայի, Սերբիայի և Եգիպտոսի կորուստներով նրա ձեռքերը կտրեց և այժմ էլ այս հայկական հուզումներով ուզում է մեր ամենակենսական մասերը՝ մեր աղիները խելի: Այս կլինի ամբողջական կործանում, և մենք ամբողջ զորությամբ ընդդիմանալու ենք դրան¹:

Սուլթան Աբդուլ Համիդը՝ Հայոց պատրիարք Իզմիրյանի կողմից ներկայացված բռնությունների փաստերին ի պատասխան, ասել է.

– Ես հայ ազգին չատ եմ սիրում, մոտ ժամանակներս մեծ բարիքներ եմ անելու Զեր ժողովրդին: Փոխանակ ուրիշներին դիմելու՝ համարձակ առաջարկեք. ինչ ցանկանում եք՝ պիտի կատարեմ²:

Օսման Նուրին Հայոց պատրիարք Իզմիրյանի հրաժարականի մասին.

– 1896 թվականի օգոստոսի առաջին օրը Ստամբուլ եկավ Համիդին գնդերից մի վաչտ հեծելազոր: Աբդուլ Համիդը այս միջոցը ձեռք առնելուց հետո պահանջեց, որ Հայոց պատրիարք Իզմիրյան էֆենդին հրաժարական տա: Աբդուլ Համիդը բոլորովին չէր համակրում Իզմիրյան էֆենդիին: Հատկապես եվրոպական շրջաններում Իզմիրյան էֆենդիի ունեցած բարձր վարկը ավելացնում էր Աբդուլ Համիդի կասկածները:

Աբդուլ Համիդը չատ էր աշխատել, որ Իզմիրյան էֆենդին հրաժարական տա, բայց Հայերի խնդրանքով շատ անգամ այդ մտքից հրաժարվել էր: Իսկ այս անգամ, երբ ժամանել էին Համիդին գնդերը, Աբդուլ Համիդը պնդեց իր այս միտքը: Իզմիրյան էֆենդին հրաժարական տվեց: Աբդուլ Համիդը, ջնջելով հայ համայնքի ընտրական օրենքը, Իզմիրյանի տեղ նշանակեց անարժան մեկին³:

Բաբ Ալիի ցույցից հետո Աբդուլ Համիդ II-ը Հայոց պատրիարքին ասել է.

– Հայերը այդ միջոցներով ուզում են առաջ բերել եվրոպական միջամտությունը: Լավ իմացեք, որ եվրոպական նավերը կարող են Նեղուցներիցս ներս մտնել, և եվրոպական բանակները կներխուժեն

¹ Գաբրիելյան Ա., Հայկական ճգնաժամ և վերածնունդ, Բոստոն, 1905, էջ 64:

² «Հնչակ», 1895, թիվ 4:

³ Օտար աղբյուրները Հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, հ. IV, Երևան, 1972, էջ 211:

իմ մայրաքաղաք, բայց նրանց մտնելուց առաջ Բոսֆորի ալիքները կներկվեն բոլոր հայերի արյունով¹:

Աբդուլ Համիդ II-ի խորհրդատու, զորահրամանատար Իզզեթ փաշան Հայկական հարցի մասին.

– Հայկական հարցի լուծման միակ եղանակը հանդիսանում է հայերի ֆիզիկական բնաջնջումը²:

Շաքիր փաշան արդեն որպես Հայկական նահանգների գլխավոր կոմիսար Հայտարարել է.

– Հայաստան բառը մեղանում արհամարհված է, սակայն չնորհալ կալ կլինեմ, եթե ինձ ցույց տայիք Հայաստանի սահմանները: Գնում եմ ոչ թե Հայաստան, այլ Քրդստան: Գնում եմ Թուրքիայի ու Անգլիայի միջև նախկին բարեկամությունը վերականգնելու համար³:

Աբդուլ Համիդ II-ը Պետերբուրգում Թուրքական դեսպանին գրած նամակով հրամայել է.

– Համոդի՛ր ցարական կառավարությունը, որ սուլթանն արդարություն է գործադրելու հայերի հանդեպ... Ամեն ինչ կանի օտար պետությունների հանձնաժողովին պաշտպանելու համար և խստորեն կպատժի Թուրքական այն աստիճանավորներին, ովքեր հանցավոր են հայերի հանդեպ բռնությունների գործում...⁴:

Աբդուլ Համիդ II-ը Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հերբերթին ասել է (1895 թ.).

– (Հայկական նահանգներում) բարենորոգումներ չնորհված են: Աշխարհում չկա մի պատճառ կարծելու, թե դրանք կամովի չպետք է գործադրվեն: Իմ և այս երկրի շահերը պահանջում են, որ բարենորոգումներ ներմուծվեն...

Հայերն իրենց բանասարկությունների և ապստամբությունների պատճառով, ինչպես նաև անկարգությունների առիթ տալով՝ եղել և չարունակում են մնալ բարենորոգումների հետաձգման պատճառ⁵:

¹ Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. I, Երևան, 2008, էջ 581:

² Akçam T., Siyası kültürümüzde zulüm ve iskence, İstanbul, 1992, s. 301,

³ «Արձագանք», 1895, թիվ 100:

⁴ «Արձագանք», 1-ը հունվարի, 1895 թ.:

⁵ Blue Bokk, Turkey, N I, 1896, p. 94.

Սայիդ փաշան Նելիդովի միջոցով ցարին խնդրում է.

– Թուրքիային տրամադրեք ժամանակ, որպեսզի այնպիսի համաձայնագիր պատրաստենք, որը Հայկական հարցում բավարարի երեք տերությունների պահանջները¹:

Ցարական կառավարությունն ուղղված Բ. Դուան հեռագրից.

– Կ. Պոլսում անդորրությունը վերականգնված է, ոչ մի օտարահպատակ անկարգությունից չի տուժել, և ներկա պահին երկրորդ հերթապահ նավերի գալը ժողովրդի կողմից դիմվելու է որպես ցույց՝ ի նպաստ Հայերի, ինչը կդժվարացնի թուրքական կառավարության ջանքերի՝ հանդարտությունը պահպանելու խնդրում²:

1896 թ. հունիսի 31-ին սուլթան Աբդուլ Համիդ II-ին ուղարկված մի լրտեսագրից.

– Սուլթանի շնորհիվ ներկայումս ամեն ինչ կարգին է, և մահմեդականների մեծամասնությունը ապահովված է³:

Բ. Դուռը 1896 թվին տեղական իշխանություններին հրահանգել էր.

– Անխնա ոչնչացնել Հայկական հուշարձանները, որպեսզի դրանք չհիշեցնեն Հայաստանի պատմական անցյալը և հայ ժողովրդի մեջ չարթնացնեն ազգային անկախության գաղափարը⁴:

Սուլթան Աբդուլ Համիդի նամակը Սուլթանին.

... Բարենորոգումներն իմ կողմից որոշված խնդիր է: Բացի այդ, ես ձգտում եմ դրանք հնարավորության սահմաններում չուտ գործադրել...

Պիտի խնդրեմ, որ Անգլիայի դեսպանատունն ինքը խրատի Հայերին, նաև հրահանգ տա իր հյուպատոսներին, որ նրանք էլ ամենաազդու ձևով խորհուրդ տան Հայերին, որ նրանք զոհ մնան եղած բարենորոգումներից... Նրանք պետք է հասկանան, որ բարենորոգումները չեն կատարվի, եթե խռովություններ առաջանան⁵:

¹ Ламсдорф Н., Дневник 1894–1896, Москва, 1991, стр. 334.

² Նույն տեղում:

³ Lepsius J., L'Arménie et l'Europe, Lausanne; 1896, p. 211.

⁴ "Биржевые Ведомости", 1896, N 109.

⁵ Blue Bokk, Turkey, N I, 1896, p. 118.

Սուլթան Աբդուլ Համիդի քարտուղար Թահսինի կողմից վալիների հասցեագրված մի շրջաբերականում ասվում է.

– Իմացել ենք, որ հյուպատոսներին հրամայված է ձշտել Անատոլիայում եղած Հայերի թիվը, ուսումնասիրել մուսուլման դարձածների, մուսուլմանների տներում պահվող կանանց, Հայերի ընտանիքների և դատապարտվածների թիվը: Այժմ բոլորին է հայտնի, որ Հայերն են եղել խռովությունների կազմակերպիչն ու հրահրողները: Քանի որ այս ամենը սպասելի էր, անտարակույս է, որ Հայերի ձեռքն են անցել մուսուլմանների կանայք ու երեխաները: Մյուս կողմից՝ ստույգ է նաև, որ ոչ մի հայ կին ու երեխա չէր կարող մուսուլմանների մոտ գնալ...

Առանց այս ամենը հաշվի առնելու՝ անընդհատ քննություններ են կատարում Հայերին իբրև զոհ ցույց տալու համար: Դա արվում է հատուկ՝ կայսերական կառավարությունը խարխելու համար: Հյուպատոսները այդ ուղղությամբ են գործում: Այդ թշնամական փորձերը խանգարելու համար ձեռնարկվում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Հայերին նշված ոգով նախապատրաստելու և կայսրությանը ձեր նվիրվածությունը փաստելու ուղղությամբ:

Այլ կերպ վարվելու դեպքում՝ կդիմվեք որպես կառավարության և իսլամի դավաճաններ¹:

Օսման Նուրին՝ թուրք-անգլիական, թուրք-ռուսական հարաբերությունների և Հայկական հարցի ու կոտորածների մասին.

– Հայերին պաշտպանելու Անգլիայի նպատակը հիմնված չէր միայն առևտրական սկզբունքի վրա: Անգլիական կառավարությունը պատրիարք Իզմիրլյանին պաշտպանելու, Սասունի դեպքի վերաբերյալ հետաքննություն կատարելու խնդրում ուներ մի նպատակ, այն է՝ տեղի ունեցած կոտորածներում երևան հանել Ռուսաստանի մատը:

Այդ մասնակցությունը ոչ խոստովանվում էր, ոչ էլ ուղղակիորեն հրապարակ էր հանվում, նույնիսկ դեպքերի մանրամասնությունները քննության առնված ժամանակ այդ մասին չէր ստացվել ոչ մի փաստ: Սակայն Հայկական հարցում ռուսական քաղաքականության ամբողջ էությունը շատ պարզորոշ կերպով այդ էր ապացուցում: Մի քանի տարուց ի վեր ռուսական քաղաքականությունը վճռական ազդեցություն էր ձեռք բերել Աբդուլ Համիդի շրջապատի վրա: Ստամբուլի և

¹ «Դրոշակ», 1897, թիվ 16:

Պետերբուրգի կառավարությունների միջև շատ կետերում մտքերի համաձայնություն էր առաջացել. օրինակ՝ մի ժամանակ Ռուսաստանը չէր մասնակցել Թուրքիայի հանրային պարտքի վերաբերյալ մեծ տերությունների ձեռնարկին, այդ հարցը լուծվել էր առանց Ռուսաստանի մասնակցության: Ռուսաստանը շատ առնելիք ուներ Արդուլ Համիդից. օրինակ՝ ռուսական սահմաններին մերձակա նահանգների հասույթով ապահովված պատերազմական տուգանքը... Բայց ռուսական կառավարությունը քմահաճության համար գիտեր նաև հետաձգել այս մասնավորները: Բացի դրանից, Արդուլ Համիդը միջազգային ֆինանսի հանդեպ իր պարտավորությունը հետաձգելու համար բարոյական հենարանի կարիք էր զգում, ռուսական կառավարությունը այդ էլ գտնում էր շատ արագ:

Եթե Ռուսաստանի և Արդուլ Համիդի միջև հեշտորեն համաձայնություն չգալու մի հարց կար, ապա դա Հայկական Հարցն էր, որովհետև եթե Հայաստանի մի մասը գտնվում էր օսմանյան երկրում, ապա նրա մեծ մասն էլ Ռուսաստանի տիրապետության տակ էր:

Կովկասում էջմիածնի կաթողիկոսը հայերի միակ և իրական պատրիարքն էր: Արդուլ Համիդը օսմանյան երկրում հայերին օսմանցի չղարձրեց, սակայն ռուսական կառավարությունը Ռուսաստանի հայերին աշխատում էր ռուսացնել...

Արդուլ Համիդի հոռի ուժեղ տարածվում էր ոչ միայն հայերի վրա, այլև ազգի բոլոր անհատների, ամբողջ օսմանյան ազգի վրա: Հետևաբար օսմանցիների անունից գործելով և օսմանյան հայրենիքի փրկությունը նկատի ունենալով՝ ցանկալի էր նախ և առաջ գործել ազատասեր զաղափարների տեր օսմանցիների հետ միասին և այս պահանջների մեջ մտցնել նաև մյուս հայրենակիցների իրավունքների պաշտպանությունը երաշխավորող հոգվածներ:

Հայկական հարցը բացառապես հայերի կյանքի և ազատության պահպանման համար հրապարակ եկած հարց էր: Արդար է՝ այս հարցի առաջադրումը հայերի կողմից նպատակ ուներ պահպանել նրանց հասարակական դիրքը և ազատությունը, սակայն կային երկու պետություններ ևս, որոնք ցանկանում էին ամենից ավելի օգուտ քաղել դրանից և իրենց քաղաքական ու տնտեսական շահը կապում էին այդ հարցի լուծման հետ: Դա էլ Անգլիան էր և Ռուսաստանը:

Ի միջի այլոց, Կիպրոսի պայմանագրում հիշատակված հանձնառություններից բացի, Անգլիայի ուղադրությունը շարունակ կենտրո-

նացած էր Անատոլիայի վրա. սրա պատճառը այն է, որ Անգլիան Անատոլիայում ուներ տնտեսական, կրոնական և քաղաքական շատ կարևոր շահեր: 1890 թվականից ի վեր Արդուլ Համիդը երբեմն ձեռնարկում էր այնպիսի գործեր, որոնք վնասում էին այդ շահերից մի քանիսը:

Բեռլինի պայմանագրից հետո Անգլիայի առևտրական շահերի մեջ նկատվում էր նպատակի որոշ փոփոխություն: Այն ճանապարհը, որը ժամանակին էրգրումի և Բայազետի միջոցով Սև ծովը կապում էր Իրանի հետ և դարեր շարունակ հայերի համար ծառայում էր որպես հարստացման միջոց, 1878 թվականին ստացել էր արտակարգ նշանակություն:

Հենց դրա համար էլ անգլիական կառավարությունը հավանություն չէր տվել Սան-Ստեֆանոյի դաշնագրի տասնիններորդ և քսաներորդ հոդվածներին, որովհետև այդ հոդվածները վերահիշյալ ճանապարհը դնում էին Ռուսաստանի մշտական վերահսկողության տակ: Հետևաբար, Բեռլինի դաշնագրի վեցերորդ հոդվածի համաձայն՝ այս հոդերը թողնվել էին Թուրքիային, և այս փաստը համարվել էր որպես Անգլիայի հաղթանակ:

Սակայն այս ճանապարհը հետզհետե կորցրեց իր նախկին նշանակությունը: Ավելի ուշ հայերի համար բացվեց առևտրական նոր ճանապարհ՝ Սև ծովից դեպի Կասպից ծով տանող ճանապարհը: Բայց այդ ժամանակամիջոցում հայերը առևտուրը կատարում էին միշտ Անգլիայի հետ: 1840 թվականից ի վեր Մանչեստրում հաստատված հայերը բամբակ էին արտահանում դեպի Թուրքիա և Իրան, և այդ բամբակը հասնում էր մինչև Միջին Ասիա: Հետևաբար Անգլիայի առևտրական շահերը Ռուսա-Հայաստանից ավելի Թուրքա-Հայաստանում էին վտանգի ենթարկվում: Այստեղից երևում էր, որ Վանի և էրզրումի շրջաններում հայերի կրած ճնշումներից ամենից ավելի անհանգստանում էր Անգլիան...¹:

Զիա բեյը օտարերկրյա դիվանագետների և հայկական կոտորածների մասին.

— Բոլոր մեծ և փոքր տերությունների մշտական ներկայացուցիչներից Ելզըզում առավել հաճախ մենք ստիպված էինք ընդհարվել

¹ Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, պրակ VII, Թուրքական աղբյուրներ, հ. IV, Երևան, 1972, էջ 184–190:

Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի և Անգլիայի դիվանագետների հետ: Գրեթե յուրաքանչյուր պետություն Թուրքիայի վրա նայում էր ինչպես մեծ պատառի՝ փորձելով հնարավորություն գտնել օգուտ քաղել իր երկրի համար: Մրցակցությունը գնում էր հիմնականում հիշատակվող մեծ տերությունների միջև: Վերջին ժամանակներս նրանց միացավ նաև Ճապոնիան: Ինչ վերաբերում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին և Չինաստանին, ապա նրանք մեզ հոգս չէին պատճառում: Անձամբ ես բացահայտ կերպով նախընտրությունը տալիս էի Չինաստանի ներկայացուցիչներին: Ես, իհարկե, չեմ ասում Գերմանիայի մասին, որի դիրքին Համիդը տալիս էր մեծ նշանակություն: Նա խորապես համոզված էր, որ Գերմանիան միշտ ճգնաժամային պայմաններում կաջակցի իրեն... Հազվադեպ էր պատահում, որ Գերմանիայի ներկայացուցիչը մեզանից հեռանար չբավարարված... Յուրաքանչյուր դիվանագետ մտածում էր, որ ինքը կարող է ազդել սուլթան Համիդի վրա և իհարկե նրանցից չատերը սխալվում էին: Հայկական ջարդերի ժամանակ, երբ մեծ տերությունների ներկայացուցիչները անհոգաբար նայում էին անխնա սպանողին, իբր թե եվրոպացի մի հայտնի դեսպան, ստանալով մի ծածկագրված հաղորդագրություն Ստամբուլից, շտապել է ուղարկել այն Ելզըզ՝ պահանջելով վերջ տալ կոտորածներին: Իրականում չեմ կարող ասել՝ դա այդպես է եղել թե ոչ, բայց մի բան հաստատ է, որ կոտորածը դադարել է միայն երկուշաբթի օրը՝ սուլթանի անձնական ցանկությունով: Քանի որ Համիդը որոշել էր, որ բավարար է պատժել չհպատակվողներին: Իսկապես, ո՞վ իրավունք ունի խառնվել մեր ներքին գործերին: Ինչքան էլ մենք մեզ թույլ էինք զգում, այնուամենայնիվ թույլ չէինք տալիս խառնվել սուլթանի անձնական որոշումներին... Այս մոայլ անցյալը շատ երկար կմնա հիշարժան բոլորի համար... Մանրամասն նկարագրելը պատմիչի գործ է, և թող նա պատմի մեզ, թե ինչպես մի սովորական մարդ, որը, չունենալով քաղաքական տաղանդ, հիմարացրեց անկասկած այսքան խելացի և կրթված մարդկանց: Երբ դադարեց կոտորածը, մեզ մոտ մեկը մյուսի հետևից եկան տերությունների ներկայացուցիչները: Համիդն էլ հասցրեց բոլորին համոզել, որ խիստ վշտացած է և անպայման գործի կղնի իր ամբողջ ուժը, որպեսզի պատժի մեղավորներին: Նայելով նրան՝ կարելի էր ենթադրել, որ այդ խորամանկ մարդը իսկապես խղճում է անմեղ զոհերին, որոնք սպանվել էին միայն նրա համար, որ Հայ էին անվանվում: Ես երբևիցե չէի տեսել այսքան ատելություն, որքան սուլ-

թանը տածում էր այդ ազգի նկատմամբ: Այն միտքը, որ իրեն կարող էին կասկածել հայկական ծագման մեջ, անսահմանափակ խելագարություն էր հասցնում Օսմանյան կայսրության տիրակալին: Ինչով էլ որ լինեք, նա պատրաստ էր ապացուցել, որ դա կեղծիք է և որ բոլոր գյավուրներին, առանց բացառության, ատում է...¹:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը քրիստոնյաների և մահմեդականների մասին.

— Արևմուտքում ո՞վ գիտե մեր պատմությունը, այնտեղ ընդհանրապես ո՞վ է սովորում այն... Ես մտածում եմ, որ նա, ով երկար ժամանակ ապրել է Արևելքում և պահել է իր օբյեկտիվությունը, պիտի ասի, թե մահմեդականները արևելյան քրիստոնյաների համեմատ ավելի լավ մարդիկ են... Պետք է մարդ զարմանա համբերող թուրքերի վրա. նա, ով մինչև այսօր չփացրել է հայերին, նրանցից իբրև չնորհակալություն՝ իր անձնական տան մեջ հարձակման է ենթարկվել... Լեզուցը խուժել է արյան մեջ: Հայերը՝ այդ անիշխանականները, դաշույնով ու ուռնեբերով մեզ չսպանեցի՞ր: Հայկական հարցը դա հայերի հարցը չէ...²:

Ջիա բեյը քրիստոնյաների նկատմամբ Աբդուլ Համիդի վերաբերմունքի մասին.

— Տաքարյուն և մոլի կրոնական սուլթանը եղել է քրիստոնյա համայնքի ոխերիմ թշնամին՝ առանց ազգային պատկանելության: Շշուկներն այն մասին, որ նրա հայրը եղել է հայ, տանջում էին նրան: Չնայած իր բանականությանը՝ նա փորձում էր այդ ժողովրդին դաժան հալածանքների ենթարկելով՝ ապացուցել ինչ-որ մեկին, որ դրանից սուտ լուր չկա ողջ երկրով մեկ: Ջարմանալի ոչինչ չկար, այդ էր պատճառը, որ նա հանդիսանում էր խաղալիք մեր հոգևորականների և արքունի անբանների ձեռքում, որոնց անցյալը խիստ կասկածելի էր: Եթե ես կատարեի կամ ժամանակ ունենայի կատարելու Ելզըզի բոլոր հրամանները, ապա Թուրքիայում ազգաբնակչությունը կպակասեր մեկ երրորդով...³:

¹ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 29–33.

² Bozdog I., Abdul Hamid hatıra defteri, (Belgeler ve resimlerle) İstanbul, 1975, s. 55.

³ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 47.

Սիրիայի նախկին նահանգապետ Իսմայիլ Քեմալ բեյը հայերի մասին.

– 1894-ին տեղի ունեցավ հայերի հանդեպ թուրքերի բարի հարաբերությունների վերածվելը նրանց հետևողականորեն ճնշելու քաղաքականություն... Արդույ Համիդը հայերից վախենում էր որպես առաջադիմական գաղափարների կարծեցյալ կրողների և հակահայ քաղաքականությունը գտավ ուսական կառավարության աջակցությունը... Մոտ 3–4 միլիոն հայեր ցրված ապրում են թուրքական 14 վիլայեթներում՝ մոտավորապես 12 միլիոն մարդկանց մեջ, որոնք պատկանում են ուրիշ ռասայի... Ելքը մեկն է՝ Կովկասում ստեղծել էջմիածին մայրաքաղաքով ինքնուրույն հայկական պետություն, որը կընդգրկի Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի միջև բաժանված և Արագածի շուրջն ընկած նահանգները¹:

Թուրք պատմաբան Սադկ Շահիդը, որը համիդյան ջարդերի ժամանակակիցն էր, գրել է.

– Հայոց վերջին ջարդերը նախապես մտածված, պլանավորված և կարգադրված էին սուլթանի կողմից²:

Հայկական ահավոր ջարդերի դեմ Օսմանյան խորհրդարանում առաջին բողոքողը եղել է երեսփոխան Սալիտես էֆենդին, որը հայտարարել է.

– Ինչ զեղծումներ որ գործադրվել են Ռումելիայի և Բուլղարիայի մեջ, նույնն էլ գործադրվում են երկար տարիներ ի վեր Հայաստանում քրդերի ձեռքով: Սակայն հույները և բուլղարները, եվրոպայում նյութեր հրատարակելով և բողոքի ձայն բարձրացնելով, կարողացան եվրոպայի ուշադրությունը իրենց կողմը հրավիրել, մինչդեռ հայերը, զուրկ լինելով այդ միջոցներից, լռությամբ տարան և հանդուրժեցին դառն տառապանքները: Բայց մի՞թե արդարություն էր, որ հայ ազգը՝ տերության առավել հնազանդ և հավատարիմ ազգը, այսպես չարչարվի ու կեղեքվի՝ նույնիսկ մեր տերության դեմ ապստամբող քրդերի ձեռքով³:

¹ Կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվ, R 14098, AB 360:

² Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. I, Երևան, 2008, էջ 713:

³ Կիտուր Ա., Հայ ազատագրության ճանապարհին, Բելյուրթ, 1949, էջ 22–23:

1894–1896 թթ. կոտորածներին ակնհայտես եղած թուրք մտավորական եկեղնը գրել է.

– Եթե պատահեր, որ որևէ հայ ընտանիք տնից դուրս գար ճանապարհորդելու, ավագակները և մարդ կոչվող անարժան ստորները նրանց պաշարում էին և այնպիսի չարիքներ էին հասցնում, որ ճանապարհորդելը անհնար էր դառնում: Վայն էր եկել այն խեղճի գըլ-խին, ով համարձակվել վերադառնալ և կառավարությունից պահանջել, որ իր ընտանիքի առևանգված անդամները վերադարձվեն: Այն ժամանակ ավելի մեծ չարիք ու աղետներ կարող էին կատարվել: Եթե կատարվածները գրվեն, ընթերցողը անպայման կսարսափի և գիտակցությունը կկորցնի... Հայերից չատերը, իրենց հետևում թողնելով հայրենիքը, հարազատներին ու բարեկամներին, Ամերիկա կամ Եվրոպա գաղթել ուզեցին: Գաղթել ուզեցին ոչ թե հանուն գաղթելու սիրո կամ իրենց երկիրը չսիրելու համար, այլ հուսահատվելով ու փախչելով թուրքերի ստեղծած անտանելի վիճակից... Բռնապետերը գաղթի համար հայերի առաջ դռները բաց էին արել...¹:

1919 թվի հունվարի 28-ին թուրքական «Սապահ» թերթի գըլ-խավոր խմբագիր Ալի Քեմալ բեյը, որը սրանից օրեր անց Կ. Պոլսի ոստիկանության կողմից առևանգվում է և Անատոլիայում ազգայնականների կողմից կախաղան հանվում, հետևյալ հոդվածն է գրել.

– Մարդկային խիղճն է, որ կը խօսի այս թուրք գրողներուն բերնովը՝ բողոքելու համար ոչ միայն ժամանակակից ոճիրներու, այլ նաև բոլոր ժամանակներու ոճրային դրուժեան դէմ. ամօթը՝ վեց դարերու: Որովհետեւ Օսմանեան Վեհապետները իրենց Թագաւորութեան սկիզբէն իսկ, միշտ խուսափած են Քրիստոնէութեան հետ ճակատիլ հաւասարութեան պատուանդանին վրայ, փոխան ողջամտութեան՝ միշտ դիմած են սուրին, հաւասարութենէն վախնալով, միշտ զինաթափ ըրած են քրիստոնեաները, անոնց զլանալով հաւասարութեան իրաւունքները՝ նոյնիսկ որեւէ իրաւունք օրէնքի առջեւ... Եւ ամէն անգամ, որ քրիստոնեաները այս աստիճան անկարողութեան մատնուած վիճակին մէջ իսկ, գլխած անցած են իսլամ ժողովուրդը, ըլլայ թուով, ըլլայ դաստիարակութեամբ կամ բարգաւաճումով, մահմէդական վեհապետները, փարաւորներու ստրուկ խորայեւացիներուն դէմ ի գործ դրած քաղաքականութիւնը շարունակելով, պակսեցու-

¹ Պողոսյան Ս., Գոյատեման պայքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 259–260:

ցած են քրիստոնեայ բնակչութիւնը Պուլկարիոյ մէջ (1876) եւ Սասունի մէջ (1894), եւ վերապրողները՝ թշուառութեան մատնած՝ ճրգմելով զանոնք ծանր տուրքերու բեռան տակ: Ապտիւլ Համիտի օրով բնաջնջման մեթոտը կը տարածուի ամբողջ Փոքր Ասիոյ եւ գլխաւորապէս Կիլիկիոյ եւ Տաճկա-Հայաստանի մէջ...¹:

Ղրիմի թուրքական «Թուրքմանիչ» թերթի խմբագիր, պանթուրքիստ Իսմայիլ Գասպիրինսկին Հայերի մասին.

– Իրոք, թուրքահայերը բողոքելու առիթ չունեն, որ Բ. Դուռը հայերի համար առանձին կառավարիչներ չունի, հետեւաբար հայերը նույն բարիքներն ու արտոնութիւններն են վայելում, ինչ որ թուրքերը, քրդերը, հույները, վրացիները, բայց ոչ ոք չի գանգատվում, և եթե հայերը գանգատվում են, և եթե հայերը ապստամբում են, դժգոհ են և այլն, այդ ամենը սարքված է, դրսից դրդված և անգլխական քաղաքականութեան հետեւանք: Հայեր կան, որոնք թուրքերի հետ հավասար պաշտոններ են վարում, մինչև անգամ նախարարներ են, ուստի թուրքական կառավարութիւնը կարելի է թուրք-հայկական կառավարութիւն անվանել...²:

Իթիմիհադականների սպառնալիքն ուղղված Հայերին.

– Հայերը մի նոր Բուլղարիա են ուզում ստեղծել... Դեռևս չեն խրատվել, չգիտեն, որ մեր կամքին հակառակ՝ ցանկացած ձեռնարկ ջախջախվելու է: Թող սպասեն, հավանաբար մեզ ևս պատեհութիւն չի պակասի...³:

Ահմեդ Ռիզան իր հոդվածներից մեկում գրել է.

... Եթե ժողովուրդը ինքնաբերաբար գնում է նրան, որի դեմ ուժ չունի պայքարելու և ոչինչ չի կարող անել, ուրեմն պարզ է, որ դա ժամանակավոր բնույթ է կրում: Մի՞թե ոտքի ելած հայերն ու բուլղարները հույսը դնում են իրենց վրա. նրանք ունեն բարոյական աջակցութիւն քաղաքակիրթ եվրոպայի կողմից, որի մտավորականութիւնը գտնում է, որ մարդկութիւնը ոչինչ չի կորցնի Օսմանյան

¹ Նաղլյան Հով. արք., Հուշերը Մերձավոր Արևելքի 1914–1928 թթ. չրջանի քաղաքական դեպքերի մասին, հ. Ա., Բեյրութ, 1960, էջ 51–52:

² «Մուրճ», 1894, թիվ 12:

³ Արմեն Գարո, Ապրած օրեր, Բոստոն, 1948, էջ 191:

կայսրութեան ոչնչացումից՝ չնայած ուրիշներն էլ օգտագործում են հայերին ու բուլղարներին իրենց երկրների քաղաքական նպատակների համար: Նրանք «գործիքներ» են, որոնք ձայն չեն հանում: Իսկ մեզ՝ մուսուլմաններին, չկա ոչ մի օգնութիւն, նույնիսկ քրիստոնյա աշխարհը ատում է մեզ: Մեծագույն թուրքական ազգը, չնորհիվ ոչ նորմալ տիրակալի, հայտնվել է մի այնպիսի իրավիճակում, որում հայրը պետք է լրտեսի որդուն, իսկ որդին՝ հորը...¹:

Օսմանյան կայսրութեան գաղտնի ոստիկանութեան պետ Զիա բեյը Ահմեդ Ռիզայի մասին.

– Բնականաբար, ապրելով Ֆրանսիայում, դարձել է իսկական գյավուր՝ ընդօրինակելով եվրոպական մշակույթի ողջ կեղծիքը: Իհարկե, նրան չէր կարող դուր գալ հարազատ երկիրը: Եվ երբ նա վերադարձել էր Կ. Պոլիս, կարելի էր սկզբից էլ ենթադրել, որ առաջին իսկ հնարավորութեան դեպքում կլքի հայրենիքը, որովհետև նրա համար իսկական հայրենիք եղել է Ֆրանսիան...²:

1894–1896 թթ. հայերի նկատմամբ իրականացված կոտորածները երիտթուրքերը օգտագործեցին սուլթան Աբդուլ Համիդ II-ի իշխանութիւնը քննադատելու համար: Թուրքական «Մեշվերեթ» թերթի խմբագիր Ահմեդ Ռիզան Համիդի մասին գրել է.

– «Հարամ կաթնակեր Համիդը գազազել է», «Կատաղած շանը (սուլթանին) պետք է սատկացնել», «Գազանաբարո փաղիչահի Ելդըզը հօդս ենք ցնդեցնելու», «Մեր հայրենակից հայերից օրինակ վերցրեք, որպեսզի անցյալում գործած մեղքերը քավեք և ձեռք մեկնեք նրանց», «Բռնակալի անգթութիւններին զոհ գնացած հայեր, մայրեր, եղբայրներ ու զավակներ», «Վրե՛ժ, վրե՛ժ»...³:

Թուրքական «Մեշվերեթ» թերթն իր համարներում հայկական կոտորածների մասին գրել է.

– Մի՞թե Թուրքիան հազարավոր քրիստոնյաների կուլ չի տվել: Նա պետք է մարի գործած վայրագութիւնների և ստորացումների պարտամուրհակը...

¹ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 177–178.

² Նույն տեղում, էջ 169:

³ «Meşveret», 01.01, 15.03. 1900; 01.01, 01.02, 15.05, 01.08, 10.10. 1901.

Ինչպես մենք, այնպես էլ Հայերը տառապում են գոյություն ունեցող վարչակարգից: Դա անվիճելի է: Նրանց տառապանքները մեր տառապանքներն են...¹:

Երիտթուրքական «Միզան» թերթի խմբագիր Մուրադ բեյն իր հոդվածներից մեկում գրել է.

– Բացի թուրքին ծառայելուց հայը այլ առավելություն ունենալ չի կարող...²:

Թուրքական «Մեչվերեթ» թերթի 1895 թ. դեկտեմբերի 3-ի համարից.

– Մենք (նոր օսմանները) բարենորոգումներ ենք պահանջում, բայց ոչ թե այս կամ այն նահանգի, այլ՝ ամբողջ կայսրության համար, ոչ թե այս կամ այն ազգության, այլ Օսմանյան կայսրության բոլոր քաղաքացիների համար՝ լինի հրեա, քրիստոնյա թե մահմեդական: Մենք ուզում ենք գնալ քաղաքակրթվելու ուղիով, բայց վճռականապես հայտարարում ենք, որ այդ ուղիով կգնանք՝ ուժեղացնելով օսմանյան տարրին...³:

Արտասահմանում գործունեություն ծավալելիս «երիտթուրքերը» որդեգրել էին հետևյալ սկզբունքները.

1. Գահընկեցություն Սուլթան Համիտի:
2. Պահպանություն Օսմանի դինաստիի, Սուլթանականության և Ոսլիֆայության:
3. Հակառակի օտար պետությունների միջամտությունները Թուրքիայի ներքին գործերի մէջ, մասնաւորապէս դէմ լինել նրանց միջամտությանը՝ հայկական, մակեդոնական, կրէտական, արաբական և ալբանական շարժումների պատճառով:
4. Չճանաչել ո՛չ հայկական և ո՛չ էլ մակեդոնական խնդիրներ: Դէմ լինել, պայքարել բաղկացուցիչ ազգությունների շարժումներին՝ յանուն Օսմանեան կայսրութեան միութեան և ամբողջականութեան:
5. Պաշտպանել Թուրքիայի ներկայ ընկերական, կրօնական և տնտեսական հաստատությունները՝ իրենց ամբողջութեան մէջ:

¹ «Meşveret», 1898, N 12, 1897, N 42.:

² «Նոր Կյանք», 1900, թիվ 21:

³ «Meşveret», 03.12. 1895.

6. Ներքին քաղաքականություն տեսակէտից պաշտպանել և իրականացնել օսմանականության գաղափարը՝ թուրք նացիօնալիզմը՝ իր բոլոր հետևանքներով. ընդունել քաղաքական բացարձակ կեղրոնացումն. ժխտել ամէն տեսակ ապակեղրոնացումն:

7. Վերահաստատել Միզնատի Սահմանադրությունը, և իրենց հետևում ու մօտաւոր իղձերի իրականացումը նրա մէջը տեսնել և նրանով առաջ երթալ:

8. Արտաքին քաղաքականություն տեսակէտից՝ պաշտպանել ալ-ժիրցիներին, թունիսցիներին, մարօկկօցիներին, Բուլղարիայի, Կրետէի, Կովկասի, Անդրկասպեան երկրների և Հնդկաստանի մէջ եղող մահմեդականներին՝ իրենց տիրապետող կառավարությունների դէմ: Ամբողջ մահմեդական աշխարհը մի ընտանիքի գաւակ համարել և նրանց յոյսերի առանցքը դարձնել օսմանեան պետութիւնը, և այդ հիմունքով ջանալ սերտ յարաբերութիւններ մշակել մահմեդական անկախ և կիսանկախ տէրութիւնների միջև:

9. Ծանօթացնել եւրոպացիներին իսլամության բարձր կողմերը և մահմեդական քաղաքակրթությունը¹:

Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնական կանոնադրությունից մի հատված.

– Պետք է միջոցներ ձեռք առնել վերջ տալու համար զանազան ժողովուրդների միջև գտնվող խտրականությունները և նրանց միջև ծագող վեճերն ու կռիվները, ինչպես նաև՝ ապահովել բոլոր ազգերի իրավունքները՝ ընտրելու նահանգական այլևայլ ժողովների անդամներ կամ պատգամավորներ՝ համաձայն իրենց ազգաբնակչության թվին:

Ամենքն, առանց ազգային խտրականության, պետք է վայելեն միևնույն իրավունքներն ու արտոնությունները, ինչպես նաև պետք է ծանրաբեռնված լինեն միևնույն պարտականություններով: Ամեն հպատակի առջև պետք է բաց լինեն, առհասարակ, ոչ միայն բոլոր բարձրագույն դպրոցներն, այլև զինվորական վարժարանները...²:

¹ Սապահ-Գուլյան Ս., Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 19–20:

² Զավեն Տ., Թուրք սահմանադրությունը և երիտասարդ թուրք կուսակցությունները, Թիֆլիս, 1908 թ., էջ 59–60:

«Երիտասարդ Թուրքիա ծրագրից» տպված 1897 թ. օգոստոսի 15-ին.

– Համառոտակի մեր ծրագիրը հետևյալն է՝ միասնություն, կայսրություն ամբողջականություն և անբաժանելիություն, գահին պահել Օսմանի դինաստիան...: Նա, ով ձգտում է կայսրությունից անջատել մեր հողերի մասեր, հանդիսանում է հայրենիքի թշնամի¹:

1902 թ. փետրվարին Փարիզում երիտթուրքերի նախաձեռնությամբ տեղի է ունեցել մի համագումար, որին մասնակցում էին արաբ, թուրք, ալբան, չեքոսլովակ, հույն, հրեա և հայ 47 պատգամավորներ: Հայ պատգամավոր Միսյանը (Հնչակյան կուսակցությունից) ասել է.

– Եթե Թուրքիայում այսօր կա մեկը, որի հետ հայերը երբեք չեն կարող համաձայնվել, ապա դա Ահմեդ Ռիզան է:

– Եթե ես էլ հայ լինեի, թերևս այս պարոնի պես կվարվեի, սակայն ես թուրք եմ, – պատասխանել է Ահմեդ Ռիզան²:

Բ. Դուռը հայ հեղափոխականների մասին.

Հայ հեղափոխականները եղեռնագործների հսկա ընկերություն են՝ տարածված աշխարհի բոլոր կողմերում: Նրանք ահարկու թշնամի են Եվրոպայի բոլոր օրինական կառավարություններին: Նրանք դավադրություններ նախապատրաստող միջազգային ընկերության մասն են կազմում³:

Կայսրության ոստիկանության պետ Նազըմը իր հուշերում Հայ Հայդուկական շարժման հատնի գործիչ և Հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Մինաս Օղլու մասին.

– Սամսոնի ենթակա Չարսամպայի գաղայի Գարու Գայեա գիւղին մէջ Մինաս անունով ոճրագործ մը յայտնուեցաւ... Ան 300 ֆիտայիներ ուներ: Գարահիսարի, Թոգաթի եւ Մարգուանի միջեւ թռչուն չէր թոցներ... Ի՞նչ էր գաղտնի Քոմիթէին նպատակը.

ա. Բոլոր կալուածները եւ հարստութիւնները հաւասարապես բաժնել:

բ. Կրօնքն ու ամուսնութիւնը բոլորովին վերցնել:

¹ Bayur Y. H., Türk İnkılâbı tarihi, Cilt 1, Ankara, 1963, s. 260.

² Եղեռնի Գ., Արդու Համիդ Բ., Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 462:

³ «Դրոշակ», 1896, թիվ 23:

Առաջին նպատակին յաջողութենէն ետք՝ կատարյալ անիշխանական դրութիւն մը հաստատելու խոստումով, հայ քոմիտէիները յարաբերութեան մէջ մտած էին Եւրոպայի անիշխանականներուն հետ:

Ամեն միջոցի դիմեցի Մինասը ձերբակալելու համար, որովհետեւ Արեւելեան նահանգներու հայերուն հոգեկան դրութիւնը նորէն փոխուած էր, եւ առիթ կը փնտռէին շարժումը ընդարձակելու:

Մինաս Օղլուն իր բանակատեղին հաստատած էր Թելմէ Գաղային Գուրչունլու Տերէյի անտառը: Ասպատակութիւնը զսպելու գործը դրամ կը պահանջէր, մինչդեռ մենք պաշտօնեաներուն ամսականները տալու ի վիճակի չէինք, զինուորները կէս անօթի կես կուշտ էին եւ բոլորովին մերկ:

Մինաս Օղլուն մարտահրաւէր կը կարգար, գիւղերը կ'արշաւեր, դրամ կը հաւաքէր եւ նոր ֆետայիներով կը զօրանար: Մինաս 150 հոգիով կը յարձակի 200 հոգինոց ժանդարմներու վելի պահականոցին դէմ, չէթէներէ 88 հոգի կը սպանուին: Մինասի տուն կը խուզարկուի եւ «Հնչակներ» կը գտնուին: Լոնտոնի մէջ բոլոր կուսակցութիւնները միացած էին, Պոլսոյ վրայ պիտի յարձակէին եւ Հայկական հարցը զենքի ուժով լուծել պիտի տային¹:

Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության պետ Զիա բեյը մի քանի հայ հեղափոխականի ձերբակալության մասին.

... Ինչպես միշտ, իմ լրտեսները կարողացել էին դուրս գալ մի ամբողջ հեղափոխական կազմակերպության հետքի վրա և ուշ գիշերով ինձ տեղեկացրին, որ քաղաքի ծայրամասերից մեկում գաղտնի խորհրդակցություն է տեղի ունենում և եթե ես կամենամ, ապա մենք կարող ենք բոլորին բռնել: Բնականաբար, ես չէի կարող թողնել այդ լուրը առանց ճշտելու... Մեր կյանքը հանձնելով Ալլահի հովանավորությանը՝ գիշերվա ժամը 3-ին հասանք տեղ: Մեր առջև բացվեց խավարի մեջ մխրձված մի հին տուն: Մի քանի բոպե մենք մտածում էինք, թե ինչպես ներս մտնենք, մինչ լրտեսներից մեկը առաջարկեց ներս մտնել հարևան տան միջոցով: Անկյունում գտնվում էր մի կոշկակարի խրճիթ, որն ապրում էր քաղաքի մյուս կողմում: Կարճ ժամանակում մենք ներխուժեցինք հարևանի տուն և թաքնվեցինք ոչ այնքան բարձր պատի ետևում: Մենք կրկին խորհրդակցեցինք և որոշեցինք ուղարկել մեր լրտեսներից մեկին, որն առաջինն էր հա-

¹ Կիտուր Ա., Պատմություն Ս. Գ. Հնչակյան կուսակցության (1887–1963), Բեյրութ, 1962, էջ 108:

մարձակվել: Մի բոլորում մեր պարանի օգնությունը նա հայտնվեց պատի այն կողմում: Սպասեցինք մոտ 20 րոպե և դա սկսեց ինձ անհանգստացնել: Այն պահին, երբ որոշում էինք, թե ինչ կարող ենք անել, նկատեցինք մի բան, որը ցնցեց ինձ ու իմ ենթականերին ու չազնայությունն աստիճանի հասցնելով: Մենք տեսանք, թե ինչպես պատի վրա հայտնվեց մեր լրտեսը, բայց ոչ ինքնուրույն, այլ պարանի օգնությամբ: Երբ նա հայտնվեց պատի այս կողմում, մեր առջև ընկած էր մեռած մի մարդ, որի աչքերում կարծես մահվան սարսափն էր տիրել: Ես զգում էի, թե ինչպես է հուսահատ վախը ինձ զրկում խոսելու շնորհից... Սպանված լրտեսի ընկերները լուռ կանգնել էին և անհամբերությամբ սպասում էին իմ հրամանին: Բայց ես ի՞նչ կարող էի ասել նրանց... Պարզվում է՝ այդ տանը պատրաստվել էին ամեն ինչի, և ինչ-որ խղճով մարդկանց խումբ չէր կարող վախեցնել նրանց: Միակ ելքն այն էր, որ պետք էր տունը շրջապատել բոլոր կողմերից և սպասել լուսաբացին: Ուշ գիշերով կրկին ներխուժելը շատ վտանգավոր էր, բայց այնուամենայնիվ, ես կարգադրեցի սպանվածի դին տեղափոխել փողոց: Հազիվ թե մենք արել էինք մի քանի քայլ, երբ ինչ-որ մի տեղից ձայն լսեցինք. «Իզուր եք փորձում ներխուժել հարգելի՜ ընկերներ: Ձեր տանջանքն իզուր է անցնելու և յուրաքանչյուր ոք, ով կփորձի ներխուժել, կհայտնվի իր մեռած ընկերոջ կողքին: Գնացե՛ք և ուրիշ տեղերում ման եկե՛ք և փոխանցե՛ք ձեր ղեկավարին, որ նրա համար էլ մենք ունենք լավ կատակներ»: Ինչքան էլ փորձեցինք պարզել, թե որ կողմից էր գալիս այդ ձայնը, այնուամենայնիվ, ոչինչ չստացվեց: Ձայնը միանգամայն կորավ, և մենք կրկին հայտնվեցինք մեռելային լուծության մեջ՝ մեր ձեռքում պահելով մեռած ընկերոջ դին: Ոչ ոք չէր հավատա այն հոգեկան վիճակին, որ տիրում էր ինձ մոտ, և կարծես արցունքները կանգնել էին կոկորդուս... Եվ ես որոշեցի, որ ինչ գնով էլ լինի, ձերբակալեմ այդ ավազակներին, և նրանք կարող էին վստահ լինել, որ չեմ խնայելու իրենց կյանքը: Արդեն լուսանում էր, իմ հրամանով մեզ օգնության եկած լրտեսները տեղավորվեցին բոլոր ուղղություններով, և ոչ ոք չէր կարող մեղանից փախչել: Բացի այդ, ես հրամայել էի, որ եթե կոչկակարը հայտնվի, փորձեն նրանից ինչ-որ բան պարզել: Մի խոսքով, ես արել էի ամեն ինչ, որպեսզի հանցագործները չկարողանային փախչել... Չնայած այդ ամենին՝ ես արդեն կորցրել էի հույսս, բայց կատաղած որոշում կայացրեցի դենքի օգնությամբ բռնել մարդասպաններին: Մեղանից պահանջվում էր ոչ մի ղեպքում ցրելը չկատարել ձերբակա-

լություն և խուզարկում, բայց քանի որ խոսքը հեղափոխականների մասին էր, ապա ես բացառություն արեցի... Ի վերջո, մեզ հաջողվեց մեծ դժվարությամբ ներխուժել տունը և ձերբակալել նրանում ողջ մնացած երկու հայի, ևս հինգին էլ փոխհրաձգության ժամանակ սպանեցինք... Կրակոցները կարող էին ինձ վրա էլ թանկ նստել, բայց ես հրաշքով ողջ մնացի... Այդ օրը մենք կարողացանք մեծ քանակությամբ նամակներ և նյութեր բռնագրավել, որոնց շնորհիվ հաջորդ օրերին մեզ հաջողվեց ձերբակալել 116 քաղաքացիներին...

... Ինչքան էլ փորձեն ինձ համոզել, քանի գոյություն ունի աշխարհը, հայերն ու թուրքերը չեն բարեկամանա, նույնիսկ երկրում տիրի Աստծո թագավորությունը: Դրա համար, որ կատարվի հակառակը, անհրաժեշտ է ոչնչացնել մուսուլմանական կրոնը, և թուրքերին դարձնել կաթոլիկներ, կամ էլ ընդհակառակը՝ հայերին մուսուլմաններ: Չնայած այդ ղեպքում էլ չեմ հավատում հնարավոր համեմատությանը: Ապագան ցույց կտա, թե որքանով եմ ես իրավացի...¹:

Թուրքական իշխանությունները զինվորական Ֆեյզի բեյին աքսորել և ավելի ուշ թուրք ծայրահեղականների կողմից մահապատժի էին ենթարկել, քանի որ վերջինս Հայկական շարժումների վերաբերյալ արտահայտել է հետևյալ միտքը.

— Հայկական շարժումներն իրենց պատճառներն ու արդարացումն ունեն: Դրանց զրդողն ու հիմք տվողը նույն ինքը թուրք կառավարությունն է՝ իր կաշառակեր, անբարոյական, խարդախ, տխմար պաշտոնյաներով և արտասովոր կառավարական համակարգով²:

1903 թ. հոկտեմբերին Բ. Դուռը, փորձելով տեղական իշխանություններին հայերի դեմ տրամադրել, վալիներին ուղարկեց հետևյալ հեռագիրը.

— Բուլղար ավազակների ձեռքերում եղած ուժերը պատրաստել են հայերը... Ուստի, ձեր խնդիրն է աշալուրջ հետևել սահմաններն անցնող հայերի շարժումներին: Կասկածելիներին անմիջապես ձերբակալել: Այս ծառայություն մեջ աչքի ընկնողներին սպասվում է կայսերական բարձր վարձատրություն³:

¹ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 72–79.

² Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Ինձ բաժն տվեք, Երևան, 1990, էջ 28:

³ «Դրոշակ», 1903, թիվ 8:

Բեհաշեղին Շաքիրի 1906 թ. նոյեմբերի 23-ի նամակը Կովկասի մահմեդականներին.

Ստացանք ձեր եղբայրական նամակը: Մեր ձեռնիցների ժողովին կարդացինք: Իսլամական և ազգային իրավունքների պաշտպանության համար Կովկասի բոլոր անկյուններում գիտական և քաղաքական խմբակներ կազմակերպելու, դպրոցներում, հրատարակություններում օսմանյան թուրքերենն օգտագործելու և մեզ հետ հարաբերությունները զարգացնելու համար Եվրոպա ներկայացուցիչներ ուղարկելու Ձեր մտադրությունները միաձայն ողջունում ենք:

1. Կովկասում և նույնիսկ ամբողջ Ռուսաստանում հարկ է ջանքեր թափել մահմեդականներին մեկ ամբողջության մեջ միավորելու համար: Ձեր հարևանները՝ դադստանցիները, չերքեզները՝ պատերազմիկ, քաջ մարտիկներ են, լավ գիտեն զենք օգտագործել: Համաձայն «Հավատացյալների միջև եղբայրություն» Մարգարեի խոսքին՝ ձեզ եղբայրական օգնության ձեռք ենք մեկնում: Դրանում երբեք չկասկածե՛ք:

2. Լեհերը ռուսական լծից ազատվելու համար արդեն մեկ-երկու տարի է, որ հայրենասիրական մեծ վճռականությամբ են աշխատում: Բոլորս այդ մասին լսել ենք:

Կովկասում եղող իսլամները այդ ինքնազոհ ազգից, եթե ոչ նյութական, ապա գոնե բարոյական աջակցություն են սպասում: Նրանց հետ լինել և Օղեսայում եղած հեղափոխական հրեաների հետ բարեկամական կապ պահելն օգտակար է մի քանի տեսակետներից:

3. Աշխատեք ամեն քաղաքում գաղտնի ընկերություն ստեղծել:

4. Հայտնի է, որ առանց դրամի ոչինչ անել հնարավոր չէ: Ամենից առաջ ձեր ընկերությունը պետք է կենտրոնանա դրա վրա...

5. Գաղտնի պահեցե՛ք ձեր ձեռնիցների կենտրոնի անդամների անունները:

6. Առայժմ զգույշ եղե՛ք ռուս կառավարության դեմ բացահայտ ապստամբության փորձերից:

7. Մեր թշնամի ռուսական լծից Ձեր ազատվելու ամենամեծ արգելքներից մեկը հայերն են: Մշակե՛ք մի հատուկ ծրագիր նրանց թուլացնելու համար¹:

¹ Kuran A. B., İnkılâp tarihimiz ve ittihad ve terakki, s. 214.

Օսմանյան կայսրության ընդդիմադիր կուսակցությունների Փառիզի 1907 թ. համաժողովի բանաձևից.

(Օսմանյան կայսրության ժողովուրդները) տանջվում են բռնատիրական վարչակարգի կրնկի տակ, որը ճնշում է երկիրը և ամբողջ աշխարհի աչքում դարձել է զգվելի՝ միապետ կառավարող Աբդուլ Համիդ II-ի սարսափելի հանցագործությունների պատճառով: Այդ 30-ամյա կառավարումը... կործանարար է եղել ոչ միայն քրիստոնյա ժողովուրդների համար, որոնց սուլթանը հետապնդում ու ոչնչացնում էր հօգուտ իր սեփական շահերի, այլև իրենց՝ մահմեդականների՝ քայքայված, ճնշված, աքսորված ու սպանված և, վերջապես, անմեղ դատապարտված քաղաքակիրթ ժողովուրդների համար, որոնք կարող են նրան պատասխանատու համարել մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար՝ իրականացված տիրակալի ու նրան շրջապատող թափթփուկների կողմից: Կայսրության բոլոր ժողովուրդները հերթով գոհ են դարձել Աբդուլ Համիդի հիմադրություններին: Նա հետևողականորեն նրանց իրար դեմ է լարել, ժողովուրդների միջև արհեստական թշնամություն և կրոնական հակամարտություն բորբոքել: Թուրքերը, հայերը, հույները, բուլղարները, վալախները, արաբները, հրեաները, ղրուզները, քրդերը՝ բոլորը տարել են հալածանքներ, աքսորներ, բռնազաղթեր և կոտորածներ: Եվ հայկական կոտորածը, պսակելով այդ բոլոր սատանայական քայլերը, նրա նախաձեռնողին, որը չարունակում է իր հանցագործ գործունեությունը Արաբիայում, բերեց «Մեծ մարդասպան», «Արյունոտ սուլթան» տիտղոսները:

Հարկահանությունը, գյուղերում անդորրի ու անվտանգության բացակայությունը, հացահատիկի բռնագրավումը, կապի միջոցների բացակայությունը՝ այս ամենը քայքայել են հողագործությունը: Լավագույն բնական պայմաններ ունեցող շրջանները, որոնք մի ժամանակ գյուղատնտեսական մթերքների համաշխարհային շտեմարաններ էին, վերածվեցին անապատի¹:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի վրա իրականացրած մահափորձի վերաբերյալ Թուրք գրող Ահմեդ Ռեֆիկն ասել է.

– Վերջապես ճշմարտությունը մեջտեղ եկավ... Այս հերոսական դեպքով օսմանյան ազգը Համիդից ազատելու համար մենք պարտական ենք մեր հայ ազգակիցներին²:

¹ Kuran A. B., İnkılâp tarihimiz ve jön türkler, İstanbul, 1945, s. 153–156, 240–242.

² Եղգնան Գ., Աբդուլ Համիդ Բ., Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 418:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի քեռայր Դամադ Մահմուդը Սասունի ղեկավարի մասին.

– Աբդուլ Համիդն իր սուլթանությունյան 25-ամյակը սկսում է Սասունի նոր կոտորածներով... Որովհետև առաջին ոճիրները չպատժվեցին, համը մնաց Աբդուլ Համիդի բերանը, և նա նորից հայացքը չուռ տվեց հայերի կողմը... և բռնակալի իր դաժան հայացքը մխրճեց հպատակների արյան մեջ: Նա այն տարիներին ղժբախտ Հայաստանը ջարդուփչուր էր անում...¹:

Գրող, հասարակական գործիչ Հայրիկ Զիա Ուշագլըզլը Աբդուլ Համիդ II-ի կառավարման շրջանի մասին.

– Սկսած վիլայեթից մինչև գավառները որդերն ամբողջ երկիրն ուտում էին ներսից ու դրսից: Հարստության բոլոր աղբյուրները կառավարությունն ուղղել էր պալատի անհագ, անհատակ որովայնը: Երկրի բոլոր ծագերում լրտեսներ էին, որոնց վրա առատորեն թափվում էին դրամը, հագուստը, կոշումները: Այս երկրում եղած ամեն ինչ գնում էր նրանց անկուշտ որովայնը... Այստեղ գավաճաններից հավաքագրում էին ծառաներ, թշնամիներից՝ նախարարներ: Կրճերին, որոնք բացի կեղտից ոչինչ չեն եղել, կպցվում էին թանկագին քարերից չքանչաններ: Անկման խորխորատներին ընկած այլանդակներին բարձր պաշտոններ էին տրվում... Եվ այդ պաշտոնների, կոշումների, փողերի հետևում չէր նկատվում տանջահար, ճնշված ժողովուրդը:

Ստամբուլի մութ փողոցները սարսափից քարացել էին: Քաղաքի մի ծայրից մյուսն անցնելը պահանջում էր մեծ խիզախություն: Լըրտեսներ, լրտեսներ... Բոլորն իրարից վախենում էին. հայրերը՝ որդիներից, ամուսինները՝ կանանցից: Լրտեսության ամենագլխավորներին արդեն գիտեին և նրանցից որևէ մեկի ստվերը երևալիս գլուխները մտցնում էին ուսերի մեջ և բոլորը ձգտում էին ինչ-որ տեղ թաքնվել: Համիդին զեկուցում էին ամեն ինչ, նույնիսկ, թե պալատականներից ով է թատրոն հաճախել և ինչ ներկայացման, նրանցից ով և որտեղ է սպիրտային խմիչք օգտագործել և այլն²:

Թաեղաթ փաշայի կարծիքը համիդյան իշխանության նկատմամբ.

– Աբդուլ Համիդի կամայական վարչակարգը թե՛ կենտրոնում, թե՛ վիլայեթներում ստեղծել էր մի խավ, որին պատկանողները աշխա-

¹ Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. II, Երևան, 2008, էջ 16:

² Алькаева Л. О., Творчество Халида Зии Ушакальгия, Москва, 1956, стр. 17, 19.

տելու էին առաջին հերթին և առավելագույնս՝ ապահովել իրենց չահը: Դրա հետևանքները ամբողջությամբ ծանրանում էին խեղճ ժողովրդի վրա... Պետություն կենտրոնական մարմիններում նախարարներն ու պալատականները սերտորեն համագործակցում են Ստամբուլի իրենց գործակիցների հետ և օժանդակում միմյանց: Վիլայեթներում նույնիսկ հարուստներն ու երեկիները, սերտ կապ ունենալով նախարարների ու պալատականների հետ, շարունակում էին անարգել շահագործել ժողովրդին¹:

Թուրք գրող և երիտթրքական գաղափարախոսությունյան ներկայացուցիչ Ջելալ Նուրի բեյը, որը ականատես է եղել Օսմանյան կայսրության անկմանը, իր «Օսմանյան անկման պատմությունը» գրքում գրել է.

– Աշխարհի մէջ ո՛չ մէկ ազգ չկայ, ո՛չ մէկ ազգ չի գտնուիր, որ ունենայ այնպիսի վերին խաւեր, որոնք թուրքերուն չափ ուրիշ ազգերու եւ ցեղերու հետ իր արիւնն ու ցեղը միացուցած ըլլայ... Օսմանյան թուրքերու կազմած ազգը, ուրիշներու հետ չհամեմատուելու աստիճան խառնուրդ ըլլալով, անոր անդամները ապականութեան են յարած, խաթարած են իրենց տոկունութիւնն ու ինքնութիւնը՝ հետեւաբար առաջ է եկած այժմեայ վիճակը...

Առաջները դրական, յետոյ բացասական կերպով, բայց միշտ ու շարունակաբար օսմանցի թուրքերը պատերազմելու պատրաստ վիճակի մէջ կը գտնուէին: Վերջին ժամանակները ներքին խռովութիւններն ալ շատացան: Թէ՛ զանազան ցեղերու զարթնումի և թէ՛ եւրոպացիներու, մանավանդ՝ ռուսներու զրդումով ապստամբութիւնները բազմացան. տարի չեղաւ, որ առանց ապստամբութեան անցնէր: Այս խռովութեանց պատճառով ալ միշտ զինուորի անհրաժեշտութիւնը ակներեւ էր... Ահա այս ներքին ազդեցութեանց հետեւանքով թուրք ցեղը հետզհետէ յոգնեցաւ, ուժասպառ եղավ: Զինուորութեան գացողը, պատերազմներու և ապստամբութեանց մէջ մեռնողը ու վիրաւորուողը թուրքերն էին: Այդ պատճառով ալ թուրքին արտերը չէին մշակուեր, կ'ամայանային: Անատոլուի մէկ գիւղէն ռուսական պատերազմին կամ Եւմէնի անապատները մեկնող Մեհմեմետիկը վերադարձին իր արտին տեղ մացառոնոց մը կ'գտնէր: Ասոր հակառակ՝ միւս ցեղերը ո՛չ պատերազմի կ'երթային, ո՛չ ալ պատերազմի ու ապստամբութեանց մէջ իրենց անձը զոհէին: Այս անհա-

¹ «Sabah», 1917, N 9.

ւասար մրցումին մէջ թուրքերը շատ բան կորսնցուցին, նուազեցան, սպառուեցան... Գոնէ թուրք ցեղն ալ Թուրքիոյ մէջ միւս ցեղերուն հետ հաւասարութեան վրայ դրուելով՝ մէկ քանի տարի յետոյ մահ-մետական և ոչ մահմետական, մանավանդ՝ մահմետական գիւղերու միջև բարգաւաճումի ու բարեկեցութեան, հանգստութեան և անդոր-րութեան այնքան ալ տարբերութիւն չի մնար... Թուրք չեղող օսման-ցի տարրեր շարունակեցին աշխատիլ, և շատ տեղեր վաճառակա-նութիւնն ու արուեստները առանց մենաշնորհ մնացին... Ոչ մահմե-տականը կ'աշխատէր, և մահմետականը կ'ուտէր միայն:

... Պետական մարդիկը չկրցան քննել ու իմանալ, թէ վերջին դա-րերուն հարստացած երկիրներու մէջ արտադրուած ազգային հա-րստութիւնները մեր մէջ ալ ինչպե՞ս կարելի է ստեղծել: Պուլկարիա, Յունաստան և Սերպիա յառաջադիմեցին, Պոսնիան առաջ անցաւ, անգլիական գրաւման ենթարկուած Եգիպտոսի մէջ Փրանսացի և անգլիացի վարիչներու շնորհիւ յառաջադիմութիւն գոյացաւ, Հարա-ւային Ամերիկան, քառասուն-յիսուն տարի առաջ ոչինչ ըլլալով հան-դերձ, այսօր իր յառաջադիմութիւնն ու հարստութիւնը նախանձ շար-ժելու աստիճանին են հասած... Իսկ Ճաբոն աշխարհը զարմացուց: Այս բոլոր կատարելագործմանց առաջ գալը հարկաւ շարք մը կարգ ու կանոններու գործադրութեան կը կարօտի: Որո՞նք են անոնք: Ինչո՞ւ մեր մէջ յառաջադիմութիւնը դժուարութիւններով և հազար տառապանքներով առաջ կուգայ... Ասոր գաղտնիքը գուշակելու հա-մար մեծ կարողութեան հարկ չկայ: Այն երկիրներուն մէջ ընկերային ու տնտեսական յառաջադիմութեան պատճառ եղող բոլոր օրենք-ները՝ հաստատուած և յարատե հաստատակամութեամբ, բարեխիղճ ու լուրջ ջանքերով գործ դրուած են: Թուրքիոյ մէջ ոչ միայն այդպիսի նոր կարգեր չեն հաստատուիր, այլ և որքան սահմանափակող աւան-դութիւններ որ կան, առևտրական ազատութեան և տնտեսական ա-զատութեան հակառակ որքան կարգ ու կանոններ և սովորութիւն-ներ որ ունինք, բոլորն ալ կատարեալ մոլեռանդութեամբ, ծայրահեղ տգիտութեան յաւանականութիւններով պահպանելու և պաշտպա-նելու են նուիրուած մեր ամբողջ ուժերը...

Եթէ ուս կառավարութիւնը և անոր հետեւելով Արեւելեան հարցի գլխաւոր դերակատար միւս պետութիւնները չգտնէին Օսմանեան կայսրութիւնը խառնաչփոթ վիճակին մէջ՝ հպատակ տարրերը գրգը-ռելու կարող չէին ըլլար... Եթէ օսմանեան տարրերէն ոմանք վերջին ժամանակներս ուրոյն իշխանութիւններ կամ անկախ պետութիւններ

հիմնելու յաջողեցան՝ շնորհիւ մեր վարչական ղեղձումներուն է... Եւ սակայն մէկ ազգէ չբաղկացած ընկերութիւններ իրենց գոյութիւնը միմիայն լաւ վարչութիւնով կարող են ապահովել... Ազգ մը իր քաղա-քական անկախութիւնը կորսնցնելու համար յաճախ նախ և առաջ ան-կումի ու կազմալուծման ենթարկուած ըլլալու է... Մեր անկամ պատ-ճառ եղող Եւրոպայի թշնամութեան պատճառներէն մէկն ալ, ինչ որ ալ ըսուի, կրօնական մոլեռանդութիւնը հոգեւորականներու մեղքի դէմ ունեցած ուղեգիծն է... Մեր հպատակներէն մէկ մասին քրիստո-նեայ ըլլալը մեզի համար դժբաղդութեան պատճառ է եղած: Ասոնք գործիք են եղած, որ Եւրոպա մեր երկրին մէջ դեր խաղար: Մեր քրիս-տոնեայ հպատակներուն եւրոպական պետութեանց կողմէ պաշտ-պանուիլը մեր վեհապետական իրաւունքին ուղղակի միջամտութիւն է, որ ոչ մէկ կերպով տանելի չէր: Նոյնպէս, եւրոպական պետու-թեանց կրթնելով և անոնցմէ պաշտպանուող Պատրիարքի և հոգեւոր պետերու վարչական գործերու միջամտութիւնը չափազանց վնասա-կար սովորութիւն մըն է...

Ամէն ազգ առանձին ազգութիւն մը կը կազմէ, որ օսմանեան ընդ-հանուր իրաւագոյութեան մը մէջ տեղ չի կրնար ունենալ: Այս մաս-նաւոր ազգութիւններէն բարձր ընդհանուր և պաշտօնական ազգու-թիւն մը կայ՝ այդ ալ օսմանցիւթիւնն է...

Կը կարծեմ թէ անոնց նպատակը այնքան ալ շատ բովանդակալից չէր. ապագայով իրենց ուղեղը չէին յոգնեցնել, անոնց համար էն կարեւոր հարցը ներկան էր. տարաբաղտաբար օսմանցիւններուն այս հոգեբանական սխալը կը տեսնենք ամէն բանի մէջ. թուրքերը շատ տեղեր են նուաճեր, տիրացեր և շատ տեղերէ ետ են քաշուեր... Այս պատճառով՝ մէկ տեղի մէջ մշտապես մնալ, այն տեղը չէնցնելու և բարգաւաճեցնելու միտքը հին թուրք ընկերութեան մէջ այնքան ալ մուտք չէր գտած: Ասոր հակառակ կարծիքն ալ պաշտպանենք. թուր-քերը ձուլելու շատ աշխատանք թափեցին... Թուրքերը իրենց հաւա-քած մանուկները մահմետականացուցին, բոլոր եէնիչերիները ձուլու-ած, թրքացած քրիստոնեաներ էին. անկասկած, որ յողթող Օրխանի նպատակը ձուլումի քաղաքականութեան մէկ ձեւի գործադրութիւնն էր... Լեզուի մէջ ձուլում կը տեսնենք... Ինչո՞ւ միայն լեզուական ձու-լում է եղեր ու կրօնականը, ազգայինը չէ եղեր: Այս պարագաները քննել դժբաղդաբար մեր կարողութեան սահմանին մէջ է: Անատոլիի նահանգներուն մէջ բնակող, այն եւս ոչ թէ ցիր ու ցան, այլ խմբովին ապրող յոյները իրենց լեզուն մոռցած, բոլորն ալ թուրքերէն կը խօ-

սին ու կ'աղօթեն... Նոյնպէս Հայերու մէկ կարեւոր մասը միայն թուրքերէն կը խօսի. Հայ լեզուն նոր կ'ընդհանրանայ. «Հնուց թուրքերէնը Հայերուն ընդհանուր լեզուն էր...»:

Երեւան կուգայ, որ ազգի մը ուրիշ ազգերու ազդեցութեան տակ մնալը ոչ թէ բարձրացման, այլ անկման պատճառ կը դառնայ: Թէև յետամնաց ազգերը ուրիշներու զարգացումէն օգտուելով կարող են առաջադիմել... Ընդհատումի շրջան մը չանցուած և կամ նոր ազգերու և ժողովուրդներու հետ իրենց արիւնը չխառնող Հին ազգերը դժուարութեամբ կը վերանորոգուին... Արդ, ամբողջ Արեւելքը մեծ յոգնութեան մը, թմրութեան մը մէջ կը գտնուի: Այս ազգերուն մէջ եթէ կայ չյոգնած և մաքուր արիւնով ազգերու հետ միանալով իր արիւնը մաքրագործուած ազգ մը, ան ալ թուրք ազգն է... Ճաբոնական պետութիւնն ու ազգը թէև ամբողջովին ընդունեց եւրոպական քաղաքակրթութիւնը, բայց իր անհատականութեան, ցեղին ու արիւնին մէջ պատուաւորներ, խանգարումներ չէր ունեցեր, այդ պատճառով ալ Երկնային Արեգակի կայսրութեան պետական մարդիկը յաջողեցան իրենց նախաձեռնութեան մէջ...¹:

Նորագույն շրջանի թուրք պատմաբան Զուհուրի Դանիշմանը Հայկական բարենորոգումների խնդրում Աբդուլ Համիդ II-ի ունեցած դիրքորոշման մասին.

– Հայկական Հարցում այս պետությունների (Անգլիայի և Ռուսաստանի) ունեցած մոտեցումից Աբդուլ Համիդը կարողացավ գտնել օգտվելու ուղին: Նախ և առաջ, Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերում արևելյան վիայեթներում բարեփոխումներ կատարելու խնդրին բոլորովին ուշադրություն չդարձրեց²:

Նոր շրջանի թուրք պատմաբաններից մեկը Համիդյան շրջանի մասին.

– Աբդուլ Համիդը մի մարդ էր, որը ոչ ոքի չէր վստահում... Ինքն էր գիվանազետը, ինքն էր գիւնվորական հրամանատարը, ինքն էր վարչական ղեկավարը, ինքն էր ֆինանսիստը, ոստիկանը, նույնիսկ ժանդարմական ենթասպան ինքն էր³:

¹ Ասում, Օսմանյան կայսրության անկման պատմությունը, Կ. Պոլիս, 1913, էջ 10, 24–26, 32–33, 53–57, 66–67, 74–75:

² Zuhuri Danişman, Osmalı İmparatorluğu tarihi, C. XIII, sultan ikinci Abdul-Hamid Han, İstanbul, 1966, s. 146,

³ Topedelenioglu N. N., İlan-ı hürriyet ve Sultan II-ci Abdul-Hamid Han, İstanbul, 1960, s. 25.

Թուրք պատմաբան Քարալն իր «Հայկական Հարցը (1878–1913)» գրքում գրում է.

– Օսմանյան կայսրությունն իր ծագումով թուրքական էր, կառուցվածքով՝ մահմեդական և, իհարկե, կոսմոպոլիտ, քանի որ կայսրության կազմում կային տարբեր համայնքներ...

Հայկական Հարցը փաստորեն Հայերի գինված ապստամբությունն էր Օսմանյան կայսրության դեմ: Ապստամբական այդ շարժումը սկիզբ առավ դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին և, անցնելով մի քանի ժամանակաշրջաններ, Օսմանյան կայսրության անկման հետ միասին անհետացավ պատմությունից:

Հայերը գրավում էին այնպիսի դիրք, որը կարելի է համարել բացառիկ... Նրանք ամենաբարեկեցիկ համայնքն էին... Նրանց ձեռքում էր կայսրության արտաքին առևտրի մենաշնորհը... Հայերի խելամտությունը, աշխատասիրությունը և այն, որ ի տարբերություն մյուս Հայրենակիցների, անկախության չէին ձգտում, Հնարավորություն էր ստեղծում, որպեսզի նրանք զբաղեցնեն բարձր պաշտոններ... Այն կարծիքը, թե Հայերը դարեր շարունակ ճնշված են եղել... պատմական իրականության հետ որևէ կապ չունի... Անժխտելի է, որ Հայերի հանդեպ կիրառված Հալածանքները և բնաջնջման գործողությունները հետևանք էին մեծ տերությունների քաղաքականության: Այդ քաղաքականության հետևանքն էր Հայկական Հարցը:

Հայ կուսակցությունների ընդհանուր ձգտումը և նպատակն էր օգնել Արևելյան Անատոլիայի Հայերին ձեռք բերելու անկախություն... Նրանց գործունեության նպատակադրումների շրջանակների մեջ մտնում էին նախ ազգային գիտակցության սերմանումը, գինումը (ֆիդայական) պայքարի համար, դրանով կայսրությունում ճրգնաժամ առաջացնելը, վերջապես, մեծ տերությունների ներխուժման ապահովումը և Արևելյան Անատոլիայում Հայկական անկախ պետության ստեղծումը...¹:

Թուրք պատմաբան Ահմեդ Քուրանը թուրքական հեղափոխությանը նվիրված իր գրքում գրել է.

– Միայն սկսած 1894-ից, երբ Կ. Պոլսում Հայերն անցան ակտիվ հակասովթանական գործունեության, երիտթուրքական ղեկավարները, անհանգստացած Անգլիայի և Ֆրանսիայի դիրքից, սկսեցին եվրոպացիներին համոզել, որ երկրում ոչ միայն Հայերն էին մատ-

¹ Karal E., La Question arménienne (1878–1923), Ankara, 1984, p. 5–14.

ներված զրկանքների, այլև բոլոր օսմանցիները: Նրանք սկսեցին շատախոսել այն մասին, որ տերությունների դիվանագիտական որոշումները պետք է ծառայեն ոչ միայն մի որևէ փոքրամասնության (Հայերի), այլև բոլոր օսմանցիների շահերին: Սարսափած Հայկական շարժման ուժեղացումից՝ 1894-ին երիտթուրքական մի մանիֆեստ հրապարակվեց, որը ոչ թե բռնակալությունը տապալելու, այլ լիբերալ ռեֆորմներն իրականացնելու կոչ էր անում¹:

Թուրք պատմաբան Այհան Յալչին իր «Թուրք-Հայկական Հարցի էությունը» գրքում գրել է.

– Հայերը Օսմանյան կայսրությունում իրենց տրված իրավունքի չնորհիվ, ոչ մահմեդական մյուս տարրերի նկատմամբ նյութական ու քաղաքական առավելություններ էին ձեռք բերել: Երբ նրանց ապագան արդեն իսկ ապահովված էր, խանգարեցին խաղաղությունն ու անդորրությունը և Անկախ Հայաստան ստեղծելու համար կամենում էին Թուրքիան մասնատել²:

Թուրքական «Վոլքան» թերթի գլխավոր խմբագիր Վահտեթի էֆենդու բաց նամակը ուղղված Աբդուլ Համիդ II-ին.

«Բաց նամակ իսլամներու խալիֆային՝

Վեհ. Ապտիվ Համիտ խանին.

Մեր գտնուած վիճակը պատճառ եղած է որ ձեր Վեհափառութեան հետեւեալ աղերսանքները ընեն.

Այս միջոցին առած տեղեկություններու համեմատ՝ ձեր Վեհափառութեան բոլոր զօրքը, երէկ գիշեր ժամը 6-ին գինուորական վարժարանէն չըջանաւարտ իրենց բոլոր սպանները բանտարկելէ ետքը Օսմ. խորհրդարանը պաշարեց: Բայց չկրցանք հասկնալ, թէ գինուորներուն բուն նպատակը ի՞նչ է: Ո՞վ խալիֆայ, ձեզի համար եթէ ամէնէն մեծ փառք մը կայ, ան ալ Օսմ. Սահմանադրութեան պաշտպանութիւնն է: Եթէ այս խնդրին մէջ կառավարական դրութիւնը փոխելու կողմնակիցները աշխատին ձեր Վեհափառութիւնը խաբել, երբէք կարենորութիւն մի՛ տաք անոնց: Այսօր ձեր Վեհափառութեան ձեռքն է մեր Սահմանադրութիւնը ջնջել և Օսմ. Երեսփ. Ժողովը փակել: Ո՞վ Վեհ. խալիֆայ, «Ազատութիւնը չի տրուիր, այլ կ'առնուի»

¹ Алчев Г., Турция в период правления младотурок (1908–1918 гг.), Москва, 192, стр. 57.

² Պողոսյան Ս., Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 59–60:

ըսողներուն հաճեցէք պատասխանել. «Ահա՛ տեսէք, թէ՛ առնել և թէ՛ չնորհել իմ Վեհափառութեանս ձեռքն է»: Եւ այն ատեն ձեր կայսերական անունը ոսկեղէն թուղթերու վրայ պիտի արձանագրուի ազամանդեայ գրիչներով: Կրօնքի և հայրենիքի դաւաճան նկատեցէք զանոնք, որ ձեր Վեհափառութիւնը յորդորել կ'ուզեն վայրկեան մը իսկ գոցելու Երեսփ. Ժողովը: Զեզ համար ամէնէն փառայեղ չըջանը այսօր կ'սկսի, ո՞վ խալիֆայ: Անհրաժեշտ է, որ ամենամեծ ուշադրութիւն ընէք այսօր, որպէսզի կազմուելիք դաշիճը ոչ Օսմ. Միութեան և Յառաջադիմութեան Քոմիթէին և ոչ ալ Ազատական Կուսակցութեան պատկանի: Երկրին փրկութիւնը այս կէտին մէջ կը կայանայ: Անտարակոյս, ձեր Վեհափառութիւնն ալ լաւ համոզուած է, որ ամէն պարագայի մէջ անկողմնակալ դաշիճ մը պէտք է կազմել: Այս մասին և ամէն պարագայի մէջ հրամանը ձեր Վեհափառութեանն է¹»:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահընկեցությունը.

Երեսփ. Ժողովի և ծերակոյտի անդամները, ինչպէս նաև նախարարութիւնը ժողով գումարեցին խորհրդարանին մէջ և զբաղեցան Համիտի գահընկեցութեան հարցովը: Դաշիճին հրաժարականը չէր ընդունուած և ամբողջութեամբ վերակազմուած էր քսանը չորս ժամուան համար: Ժողովին մէջ կարդացուեցաւ Շէյխ-իւլ-իսլամին հետեւեալ ֆէթվան.

– Իսլամներու Իմամը եղող անձը Շէյրիի կարգ մը կարեւոր խընդիրները Շէյրիաթի գիրքերէն ջնջած, դուրս ծգած և յիշեալ գիրքերը արգիլած ու այրած է: Պէյթիւլ-Մալի մէջ չոայլութիւններ ընելով, Շէյրիի թոյլտուութեանց հակառակ, ծախքեր ըրած է: Առանց օրինական պատճառի հպատակներ սպաննած, բանտարկած և վտարած և ուրիշ կարգի հարստահարութիւններ ըրած է: Ասոնցմէ ետքը՝ մինչդեռ երդում ըրած էր բարեկարգելու՝ զրժեց իր երդումը և իսլամական բոլոր պարագաները և գործերը խանգարելու հանգամանք ունեցող մեծ խռովութիւններ առաջ բերելու յամառեցաւ և կոտորած ի գործ դրաւ: Իսլամները անոր բռնակալութիւնը փճացնել ուզեցին, և շատ մը իսլամական քաղաքներու կողմէ ծանուցուեցաւ, թէ յիշեալը գահընկէց կը նկատեն: Ըստ որում, յիշեալին իշխանութեան շարունակութենէն յառաջ գալիք վնասը բացորոշ է, և հակառակ պարագային՝ հաւանական է բարեկարգութիւնը, ուստի եթէ կապելու և արձակելու

¹ Փալազաշեան, Ազատարար շարժում բանակին յաղթական մուտքն Կ. Պոլիս, պրակ առաջին, Կ. Պոլիս, 1909, էջ 70–71:

իշխանությունը և գործելու խնամակալությունը ունեցողներուն կողմէ պատշաճ դատուի, յիշեալին առաջարկել խալիֆայութենէ և կայսրութենէ հեռանալ և կամ զայն գահընկէց ընել, այն ատեն ասոնց գործադրությունը հարկ կ'ըլլա՞:

Պատասխան,– կ'ըլլայ:

Ժողովը երկարօրէն վիճաբանեցաւ՝ թէ՛ Համիտը գահընկէց ընելու է, թէ՛ հրաժարականը պահանջելու է. և միաձայնութեամբ որոշեց՝ ԳԱՀԸՆԿԷՑ ԸՆՆԵԼ¹:

Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության պետ Զիա բեյը Աբդուլ Համիդ II-ի վարած քաղաքականության և նոր իշխանությունների մասին.

– Թո՛ղ ինձ ների իմ փաղիչահը, բայց ես պետք է ասեմ, որ նա ավելի քան մեղավոր է տեղի ունեցած հեղաշրջման համար: Սուլթանը սիրում էր հաճախակի կարդալ տարբեր եվրոպական գրականություններ, ուր նկարագրվում էին օտար տիրակալների կյանքն ու գործունեությունը և փորձում էր նմանվել նրանց: Սկզբում նա ուզում էր նմանվել Պետրոս Մեծին, բայց, հասկանալով, որ այդպիսի դերն իր ուժից վեր է, փորձեց նմանվել Ֆրանսիայի կայսր Լյուդովիկոս XIV-ին, որն ինչպես հայտնի է, շատ էր սիրում կրկնել. «Պետությունը ես ինքս եմ»: Իսկ մինչդեռ Աբդուլ Համիդը որոշում էր, որ Թուրքիան ինքն է, խելացի մադիկ հայտնվեցին և իրենց ձեռքի տակ առան երկիրը... Վերջին տարիներին սուլթանը արհամարհանքով էր վերաբերվում իր նախարարներին և պալատականներին... Շատ հաճախ հրաժարվում էր նրանց ընդունելուց կամ ընդունում էր ծառաների ներկայությամբ, իհարկե, որոնց ներկայությունը խանգարում էր կարևոր որոշումներ կայացնելիս...

... Չնայած ինձ անիծում են, բայց ես ցավով եմ նայում, թե ինչպես է թափվում մուսուլմանների արյունը և միևնույն ժամանակ չեմ կարողանում թաքցնել հեգնանքս, երբ տեսնում եմ Համիդի թշնամիներին: Անկեղծ ասած, նրանք հոգով և գործով ճիշտ և ճիշտ Աբդուլ Համիդի ժառանգներն էին:

Ես չեմ զարմանա, եթե մի հիասքանչ օր ծերուկ Համիդը նորից նստի Օսմանյան կայսրության գահին, որը երիտթուրքերը ցանկանում են վաճառել և ինչպես իսկական տիրակալ բոլոր այս նորաթուխ

¹ Փալազաշեան, Ազատարար շարժուն բանակին յաղթական մուտքն Կ. Պոլիս, պրակ առաջին, Կ. Պոլիս, 1909, էջ 169:

նախարարներին ձկների կեր ուղարկի: Արդյոք գիտեք, թե ինչ է իրենից ներկայացնում Օսմանյան կայսրության գահը: Փողի բացակայությունն է եղել թուրքերի միակ և մշտական հիվանդությունը... Բայց փողը շատ է եղել, որը հեղաշրջումից հետո հայտնվեց նրանց գրպաններում... Այժմ երիտթուրքերը զգուշությամբ պաշտպանում են գահը, որովհետև դա կործանումից փրկվելու միակ միջոցն է: Թուրքական սուլթանների գահը մուսուլմանական մասունք է՝ պատրաստված մեծածավալ ոսկուց, որի բարձրությունը երկուս ու կես մետր է, իսկ լայնությունը՝ վաթսուն սանտիմետր՝ զարդարված թանկարժեք քարերով: Եթե գահը վաճառվի իր կշռով, ապա կարժենա տասնյակ միլիոններ: Իսկ ինչ վերաբերում է թանկարժեք քարերին (գահը զարդարող), ապա չի գտնվի երևի թե այնպիսի կապիտալիստ, որն ի վիճակի լինի ձեռք բերել այն իրական արժեքով: Համենայնդեպս, երիտթուրքերը, քանի դեռ իշխանության գլխին են, ունեն ինչ-որ բան սև օրվա համար, և ամերիկացիները չեն հրաժարվի այդ գահի համար տալ հարյուրավոր միլիոն դոլար...¹:

¹ Хаджетлаше М., Убийца на троне, Записки начальника Тайной полиции в Турции, Петроград, 1918, стр. 50, 10–11.

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II-ի ՀՈՒՇԵՐԸ ԵՎ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐԸ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԵՋ

Կարելի է միշտ հաստատել, թե Պրզմարք իր գաղափարները չէր թաքցնել բառերու ետև, ինչպես ուրիշ քաղաքագետներ կ'ընեն, այլ ամեն ինչ կը յայտնէր, ինչ որ կը մտածէր: Կարելի է, բայց իր վճիռը Փոմերական նոնակագորքի, որ Արեւելքի համար վնաս մըն է, անկարելի է, որ իր ճշմարիտ գաղափարն ըլլայ:

Ես ստիպուած էի այլապէս գիտնէր իր կարճատեւ քաղաքապետ համարիլ: Թերեւս, ենթադրելով որ դեռ ժամանակը չէ եկած իր աչքերը համակ աշխարհի առջեւ, արեւելքի վրայ սեւեռելու: Եթէ ան ճիշդ ժամանակին իմանար, թէ Գերմանիոյ համար կենսական մասնաւոր հարց մըն է Տաճկաստանը զօրաւոր պահելը, ասիկա երկու կողմերուն համար ալ լաւ պիտի ըլլար: Ցաւալի է, որ Պրզմարք մեղ Երրեակ Դաշնակցութեան մէջ առնել չուզեց: Այն ատեն կարելի էր: Նաեւ Վիլհելմ կայսրը պէտք էր համարձակիլ մեղ Եռապետութեան միացնել:

Փոխանակ իր առատ ոյժերը ամբողջ աշխարհի մէջ ջլատելու եւ գաղթականութիւններ շահելու, որոնցմէ երբեք պտուղներ չեն քաղուիր, պէտք էր Գերմանիան իր նպատակաւոր ազդեցութիւնը մինչեւ պարսկական ծովախորշ տարածէր: Ասով պիտի յաղթէին գերմանացիները. բայց նաեւ՝ մեհր:

ԳԵՐՄԱՆԻԱ, ՏԱՃԿԱՍՏԱՆ ԵՒ ԱՆԱՏՈԼՈՒ

Իրապէս ամենէն յարմար ժամանակն է Գերմանիոյ ազդեցութեան դարձեալ դիմադրելու: Մարաջախտ դեսպան Պիպեռլթայնին պէտք է ցոյց տանք, թէ մենք իր եւ Գերմանիոյ քաղաքականութեան անվրտահելիութիւնը կը նշմարենք: Գերմանիոյ կայսեր ծրագիրն է (այսպէս

պէս կը տեղեկացնէ ինծի Պերլինի մեր դեսպանը) գերմանական երկրագնդային ազդեցութիւն մը ստեղծել Փոքր Ասիոյ մէջ: Գերմանացիներու կողմէ եղած Անատոլիոյ երկրագործային կեդրոնացումին ըսելիք չունիմ: Սակայն գերմանական լրաբերները կը պահանջեն գերմանացի գաղթավայր մը հաստատել Պաղատտի գիծի երկայնքին: Ի՞նչ կը խորհին թերթերու թղթակիցները: Կը կարծեն, որ մենք մեր նախնիներու գոհողութիւններով ձեռք բերած Անատոլիոյ գերմանացի գաղթականներուն պիտի տրամադրենք...: Դժբախտաբար մենք միշտ տուժած ենք. օտար տարրէր մեր վիզէն բռնած են, ահա այս է մեր դժբախտութիւնը: Մենք կ'ուզենք ապրիլ Անատոլիոյ մէջ եւ պէտք է մնանք առանձին: Փառք Աստուծոյ, որ ամէն կողմէ հալածուած մեր ազգակիցներուն եւ հաւատակիցներուն մնացած է միայն այս վերջին ապաստանարանը:

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՏԱՃԿԱՍՏԱՆ

Եւտրդի իմ ծեր պարտիզպանս իրաւունք ունէր, երբ Պալքանեան քաղաքականութեան խառնակութիւններուն մասին իր գաղափարը հետեւեալ ձևով յայտնեց ինծի.

— Խնձորենի մը, տանձենի մը, սալորենի մը, կաղնի մը եւ սոճի մը քով քովի կը գտնուէին, եւ զրեթէ անոնց ոստերը կը չօշափէին զիրար: Կաղնին վեր բարձրացաւ. սակայն միւս ծառերը վարի ճիւղերէն առին առատ օդ եւ լոյս, գիրցան եւ ինկան: Այս բոլոր ծառերը սկսան դէպի լոյս ցցուիլ իրենց տեղերէն: Վէճի բռնուեցան: Կշտամբանքներն ու աղաղակները այնքան բուռն էին, որ վերջապէս Աստուած լսեց երկինքէն: Երեւցաւ անոնց եւ ըսաւ. «Ինչո՞ւ կը վիճիք: Դուք բոլորդ ալ իրաւունք ունիք գոյատեւելու. ոչ մէկ ծառ միւսէն աւելի լաւ է. ամէն մէկը մեծ է իր վայրին մէջ»:

Թող խնձորենին՝ Ռումանիան, սալորենին՝ Սերպիան, սոճին՝ Յուլաստանը, տանձենին՝ Պուկարիան ըլլան. բայց մեր Թուրքիան՝ կաղնին է, որուն քանի մը փտած ոստերը արդէն ինկած են, ինչպէս կը կարծեմ, ո՛չ ի վնաս բունին: Մինչդեռ հիմա, մեր կորսնցուցած փտած ոստերը վտանգ մը կը ստեղծեն մեր բունի առողջութեան:

ԱՆԳԼԻԱՆ ՆԵՂՈՍԻ ԵԶԵՐՔԻՆ

Իմ թագաւորիս տեղեկատուին Եգիպտոսի մէջ Մուխթար փաշա՝ կայսերական յանձնակատար, կը գովէ այն բաները, զորս անգլիացիք Նեղոսի երկրին մէջ ըրին. «Երկրին նիւթական բարւոքումը հոն կարծուածէն աւելի լայն չըջագիծ մը առած է: Ժողովուրդին մտային բարձրացումը օրէ օր յառաջացումներ կը գործէ»:

Մուխթարը խենթ մըն է. նոյնիսկ ան ալ անգլիացիներու թոյնէն վարակուած է: Ի՞նչպէս կրնայ գովել անգլիացիները, որոնք մի միայն անձնասիրութենէ տարուած կը գործեն, մեր Նեղոսի երկիրը կը քամեն. կ'ուզեն զայն անգլիական նահանգ մը դարձնել: Եւ ասիկա աւելի լաւ կարենալու համար ժողովուրդին նկարագիրը կ'ապականեն ու կը փորձեն մահմետական առաքինութիւնները թաղել:

Ի՞նչ պիտի բերեն այս բոլոր յառաջացումները եւրոպական մշակոյթին: Անոնք կը չլացնեն տգիտութիւնը եւ կը խաբեն ազգը, որ ասկէ առաջ այնքան խաղաղ ու երջանիկ կապրեր: Ո՛չ, արեւմուտքի քաղաքականութիւնը մեզի համար մահացու թոյն մըն է, բան մը, որ մարդիկ մեզի կը հրամցնեն կեղծաւորական ժպիտով:

Հիւրասիրաբար ընդունեցանք օտարները, եւ այս է շնորհակալութիւնը, որ անոնք մեզ ոչնչացնեն, եւ աշխատին մեր կործանումին վրայ:

ՈԱԶԱԿՐՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԲԻՈՅ ԴԷՄ

Ուաչակրութիւնը մեր դէմ երբեք չէ դադրած. Կլատսթոն՝ այդ ծերուկ «տաք խթանը» ու չաղակրատը, կը չըջի Պիոս Բ. Պապի հետքերուն վրայ: Հակառակ ասոր՝ քրիստոնեաներէն ատուած օսմաններու երկիրը, արդէն միջնադարի մէջ, երբ արեւմուտքի եկեղեցական կատաղի հալածանքները տեսիլներու փոխուեցան, ապաստանարան էր բոլոր անոնց, որոնք իրենց հաւատքին համար կը հալածուէին: Երբ Սպանիոյ մէջ սուրբ Ատեանը կ'իշխէր, որ հրեաները կ'այրէր, այն ատեն ասոնց օգնութեան հասանք եւ զիրենք ներս ընդունեցանք: Մեր Մահիկը միշտ եւ ամէն ժամանակ իրենց կրօնական ու քաղաքական տեսութիւններուն ապահով ապաստարաններ տուաւ: Բայց արեւմուտքի մէջ ո՞վ գիտէ մեր պատմութիւնը, հոն ընդհանրապէս ո՞վ կ'աշխատի սորվիլ զայն: Օրինակի համար, այդ մեծ ու ծերուկ Կլատսթոնը ի՞նչ կը հասկնայ արեւելեան բաներէն: Եթէ ես իր ար-

տայայտութիւնները ուղիղ որակել ուզեմ, իր յարձակումները մեր կառավարութեան վրայ, «որոնք ոչ թէ օրինաւոր են, այլ կը յենուին բռնապետութեան վրայ», այդ ըսածները ես կրնամ կոշտութիւն անուանել: ՆՈՅՆՊԷՍ ԶԵՆ ԱՅՍ ՍՈՍԿԱԼԻ ՀԱՅԵՐԸ, ինչպէս նաեւ «Պուկար Սարսափները»... Ինչ սուտ լուրեր այն ժամանակ անգլիական թերթերը հրապարակ հանեցին: Անոնք ծանուցին քայքայում մը քրիստոնեայ գիւղերու եւ բնաջնջումը անոնց բնակիչներու: Հակառակ ասոր՝ երեւան եկաւ թէ այդ վայրերը ծաղկումի մէջ էին եւ անոնց բնակիչները մահմետական դրացիներու հետ անխռով համաձայնութեամբ կ'ապրէին: Ես կը խորհիմ, թէ ան, որ երկար ժամանակ ապրած է Արեւելքի մէջ ու պահած իր առարկայականութիւնը, պիտի ըսէ, թէ մահմետականները սակայն լաւ մարդիկ են՝ համեմատութեամբ արեւելեան քրիստոնեաներուն: Սակայն սպանացիները ինչպիսի սարսափելի արարքներ գործեցին, երբ իրենց խուզարկութիւնները սկսան: Ինչպիսի վայրագութեամբ Փրանսիացիները յարձակում գործեցին՝ գրաւելու համար Ալճերիան: Անգլիացիք՝ հնդկական յեղափոխութեան ժամանակ, պելճիքացիք՝ Գոնկոյի մէջ, իսկ Ռուսաստան՝ իր սիպերական բրտութեամբ... Լռելու է: Պէտք է մարդ դարձանայ համբերող թուրքերուն վրայ. ԱՆ ՈՐ ՄԻՆԶԵԻ ԱՅՍՕՐ ՇՓԱՅՈՒՅ ՀԱՅԵՐԸ, ԵՒ ԻՔՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ, ԱՆՈՆՅՄԷ ԻՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԱՆ ՄԷՋ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԿՐԵՅ, ԼԵՂՈՒՅԸ ՈՒՍԻԺԵՅ ԱՐԵԱՆ ՄԷՋ: ՀԱՅԵՐԸ ԱՅԴ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԻՇՆԱՆԱԿԱՆՆԵՐԸ, ԴԱՇՈՅՆՈՎ ԵՒ ՌՈՒՄԲԵՐՈՎ ՄԵՋ ՉՍՊԱՆԵՅԻՆ: Իշխանութիւնները չեն թոյլատրեր, որ մենք մեր անձնական տան մէջ տէր դառնանք. կստիպէն մեզի իրենց առաջարկութիւնները եւ դաշնագիրները...

Ինչ որ աշխարհի որեւէ պետութեան, նոյնիսկ Մոնաքոյի, ուղիղ եւ իրաւացի է, սակայն մեզի դեռ անիրաւ կը նկատեն քրիստոնեայ պետութիւնները: Ուաչակրութիւնը թուրքիոյ դէմ միշտ թաքուն կը շարունակուի:

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԹՈՒՐԲԻԱ

Մեր յարաբերութիւնները Ֆրանսայի հետ նախընտրելի էր: Յայտնի է, թէ Փրանսացիները սրուած են մեզի հետ, Գերմանիոյ կայսեր մեզի այցելելու պատճառով: Մենք այս վերջին դարերուն մեր ակնարկը Ֆրանսայի վրայ չատ ուղղեցինք: Այն օրէն ի վեր, երբ Լուդովիկոս ԺԴ. յայտնեց, թէ Եւրոպայի միւս քրիստոնեայ իշխանները իրեն օգ-

նականներ չեն կրնար ըլլալ պատերազմի մը մէջ ասպետական օսմանլիներու դէմ, հաստատուեցաւ թուրք-ֆրանսական բարեկամութիւնը:

Վստահ եմ, որ մենք խորին շնորհակալութիւն կը պարտինք այն ֆրանսական զինուորականներուն, որոնք մեր բանակը եւ, ի մասնաւորի, մեր թնդանօթաձիգները բարեկարգեցին, եւ ստէպ ու երկար ժամանակ ֆրանսացի զինուորականներ մեր կարգերու մէջ տեսնուեցան: Խրիմի պատերազմը վերջապէս որոշ զինական եղբայրութիւն մը ստեղծեց երկու ազգերու միջեւ: Մեր պատմութեան վերջին դարը՝ կրնանք իրաւունքով ֆրանսական անուանել: Ամենակարեւոր փոփոխութիւնները եղած են իմ պատուական նախորդիս Ապտիւլ-Ազիզի եւ իմ երանելի հօրս Ապտիւլ-Մէճիտի օրոք, որոնք էլ ֆրանսական ծագում ունին: Զօրք, դպրոց եւ լեզու մեր քով մինչեւ վերջնաւ գրեթէ ամբողջապէս ֆրանսերէն էին, առաջին երկաթուղիները ֆրանսիացիներու կողմէ շինուած են: Հաւանական է, որ դժպէս է մեր զգայուն պարոններուն ըսել, որ հիմա մեր դաստիարակները գերմանացիներն են, թէ մեր պաշտօնարաններուն մէջ գերմանացիներ նստած են:

Զարմանալի չէ, թէ անոնք գերմանական ազդեցութեան այս զօրացումը Արեւելքի մէջ տհաճութեամբ կը դիտեն: Դեռ երկու տասնեակ տարիներ առաջ Պիզմարքի համար մենք Փոմերական նրոնականգօրքի ոսկրի մը արժէքը չունէինք. հակառակ ասոր՝ Գերմանիան ուզեց միւս բոլոր ազգերը Արեւելքի մէջ գլել-անցնիլ առանց պատերազմի: Ես պէտք է ըսեմ, որ ֆրանսական ղեսպանը՝ Գոնստանս, շատ խանդով աշխատեցաւ ֆրանսական ազդեցութիւնը Արեւելքի մէջ զօրացնելու. ան շատ օգնեց ֆրանսացի առաքելներուն՝ այս ֆրանսական ռազմական ռազմիրաններուն, ան բախտաւորուած էր զանազան առանձնաշնորհումներով: Այս հարցի մէջ, իրապէս, իմ կողմէս սխալ մըն էր ֆրանսիացիներու հին առանձնաշնորհումները ջնջելու: Դժբախտաբար մէկ վէճէն միւսին մէջ կը մխրճուինք: Ասկէ առաջ թղթաբանական վէճեր ունէինք. յետոյ համաշխարհային առողջութեան խորհուրդին հետ եւայլն: Գէշ ըրինք մենք՝ մեր հին բարեկամէն բաժնուելով: Այո՛, այս է մեր ներկան, մարդս անգամ մը մղուեցաւ ընելու այն, ինչ որ հակառակ էր իրեն: Ամէն պարագայի, անոր տեղ այսօր մեր ժառանգական թշնամի Ռուսաստանի հետ ավելի լաւ ենք, քան ասկէ առաջ:

ՊՈԻԿԱՐԻԱ

(1903)

Հետաքրքրական յիշատակարան մը ձեռք ձգած է իմ կայսերական ոստիկանապետս Նէկիպ Սոֆիայի մէջ:

«Վայրկեանը դեռ չէ հասած»,— այսպէս կը գրէ Սինովիեւ ուս դեսպանը իմ ճորտ Ֆերտինանդիս,— «Պուկարիան անկախ ընելու: Զեր թագաւորական Վեհափառութիւնը թող սպասէ աւելի լաւ առիթի մը. ներկայիս Ռուսաստան ոչ մէկ համաձայնութիւն կրնայ ընել: Ամենէն առաջ հարկաւոր է, Աւստրիա-Հունգարիան իրեն համամիտ դարձնել», եւայլն: Խորամանկ Նէկիպը պէտք չունէր այնքան մեծ գումարներ մսխելու, ձեռք ձգելու համար այս նամակը: Եւ թէ «նաեւ Ֆերտինանդ՝ Վիեննայի մէջ, ամբողջ լծակները շարժումի մէջ դրած էր Պուկարիան թուրքերէն յափշտակելու օգնութեան համար, արդէն շատոնց իմ Վիեննայի դեսպանս լուր տուած էր ինծի: Հակառակ իր ամէն սիրայօժար հպատակութեան եւ ցոյցներուն հանդէպ մեզի՝ պէտք չէ վստահիլ իշխան Ֆերտինանդին: Թող համարձակի, նայինք կրնա ինքզինքը թագաւոր հռչակել: Ասիկա չենք կրնար եւ հրաման չունինք թողատրելու, եթէ չենք ուզեր, որ մեր պատիւը, իբր մեծ պետութիւն, տուժէ: Այլապէս, Ազրիանապոլսոյ բանակը պէտք է անմիջապէս Սոֆիայի վրայ քալէ: Ռուսաստան եւս պիտի մտադրէ յարձակիլ: Աւստրիա կոչտ սխալ մը պիտի գործէ, եթէ իր մեծ տէրութեան կիրքին մէջ Պուկարիոյ օգնել ուզէ:

ՊՈԻԿԱՐԻԱՆ ԵՒ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԴԱՇԻՆՔԸ

(1906)

Ֆերտինանդ իշխանին բոլոր երդումները, Պուկար կառավարութեան բոլոր հանգարտութեան փորձերը ի՞նչ բանիս կու գան...: 20,000 զինուորներ Ռումէլիի՝ կը վրդովեն մեր սահմանները: Եւ տէրութիւնները կը զարմանան, որ մենք շարժումի մէջ կը մտնենք եւ թէ մենք վերջնականապէս կուրիլ կ'ուզենք պուկարներու դէմ՝ խաղաղութիւն ստեղծելու համար մեր շուրջը: Արդէն Ռուսաստան համաձայնած է Աւստրիոյ հետ՝ մեր դէմ խառն մարմին մը ստեղծելու համար, եւ ֆրանսական նաւատորմի մը Ռուսաստանի հրամանով մեր ջուրերուն վրայ կ'երեւայ:

Ռուսական թերթերը Պալքանեան բոլոր երկիրներու միութեան գաղափարը կը հաղորդեն: Սերպիա, Պուկարիա, Ռումանիա, Յունաստան, քրիստոնեայ մակեդոնացիներ, Պոսնիա եւ Հերցեգովինա պէտք է, որ միութիւն մը կազմեն, որուն ուսական մամուլը 18 մի-

լիոնէն աւելի հոգիներ կը հաշուէ: Անհամաձայնութիւն եւ փոխադարձ անվստահութիւն ամբողջական անգորութեան կը մատնեն Պալքանեան պետութիւնները ուրիշներու դերին եւ գործունէութեան մէջ: Ճիշդ է թէ մեր իշխանութիւնը Եւրոպայի մէջ հիմնուած է այս Պալքանեան ազգերու անհասկացողութեան վրայ: Ռուս թղթակիցները կը մտածեն միասնական միութիւն մը Պալքանեան երկիրներու: Սերպեր չեն սիրեր պուլկարները, պուլկարները կ'ատեն ռումանացիները: Յոյներն ու պուլկարները, ինչպէս գիտէք, մահացու թշնամիներ են իրարու: Պուլկարները կը հաստատեն, թէ Մակեդոնիոյ մէջ պուլկարական ցեղն է տիրապետողը: Յոյները կը հաստատեն, թէ Մակեդոնիան յոյն բնակչութիւն մը ունէր եւ բռնութեամբ պուլկարացած է: Իսկ եկեղեցական անհամաձայնութիւնը՝ յաւիտենականապէս բաժնեց – 1870-ին – յոյներն ու պուլկարները իրարմէ:

ԱՆԳԼԻԱՅԻՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Անգլիացիներէն պէտք է աւելի վախճանք, քան ուրիշ որեւէ ազգէ: Ոչ մէկ խոստում իրենց համար նուիրական է:

Տակաւին անցեալ նոյեմբերին լորտ Կրանտուիլ արտայայտուեցաւ, թէ անգլիական քաղաքականութիւնը՝ Եգիպտոսի կապակցութեամբ՝ ոչ մէկ նպատակ կը հետապնդէ, ինչ որ մեր հրովարտակին մէջ ալ արձանագրուած է: Յուլիս 1882 Սէմուր ծովակալը բացատրեց, թէ Անգլիա չէ մտածած Եգիպտոսը գրաւել. նաեւ ոչ մէկ կերպով մօտենալ Եգիպտոսի ազատութեան:

Միեւնոյն ժամանակ Անգլիոյ ղեսպանը Իսթանպուլի մէջ՝ Տաֆֆըրին, հաստատեց, թէ Մեծն Բրիտանիա Եգիպտոսի մէջ ոչ մէկ եղական նախապատուի եւ նոյնիսկ ոչ մէկ վաճառականական նախաիրաւունքի կը ձգտի:

Օգոստոսին զօրավար Վոլսելէյ պնդեց, թէ անգլիական գունդերը Եգիպտոսի մէջ երեւցած են միմիայն Ստիւններու հեղինակութիւնը վերահաստատելու համար:

Այս բոլոր խոստումները նենգ Ալպիոնը չատ չուտով մոռցաւ:

Իմ վերին ոստիկանապետիս ազդեցութիւնը Եգիպտոսի մէջ, անգլիացիներէն կանոնաւոր կերպով կը թաղուի. մենք հոն պարզապէս պատին փակած ենք:

Ես չեմ հասկնար, թէ ֆրանսիացիները այսքան քնացկոտ կրնան ըլլալ, եւ այս բոլորը խաղաղ դիտել:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՅԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ

Բրիտանացիները իրենց բոլոր կարելիութիւնները կ'ընեն Եգիպտոսի մէջ մեր հեղինակութիւնը թաղելու, եւ արդէն եգիպտացի մահմեդականները թունաւորուած են այդ միտքէն: Եգիպտացիները կը կարծեն թէ միմիայն անգլիական մշակոյթը երջանկացուցիչ է. անոնք ազգութիւնը վեր կը դասեն կրօնքէն: Անոնք կը կարծեն, թէ եւրոպական քաղաքականութիւնը իրենց մէջ կրնայ ձուլուիլ: Բայց արդեօք, կրնա՞ն երկու տարբեր ու հիմնական աշխարհայացքներ, ինչպէս իսլամութիւն եւ քրիստոնէութիւն, իրարու հետ միանալ: Նաեւ խտրել իր բոլոր իրաւունքներով գրեթէ կեաւուր մը եղած է: Եւ արդէն ի՞նչպէս կրնար ուրիշ տեսակ ըլլալ: Իր կրթութիւնը Կենֆի մէջ, յետոյ վիեննական Թերեզիանումի մէջ. բայց ստիպուած չէր եւրոպացի մը ըլլալ: Անգլիացիները սիրով կ'ուզեն խալիֆայութիւնը անոր ձեռքերուն մէջ խաղցնել, որպէսզի իսլամական ազդեցութիւնը կասեցնեն եւ իրենց իշխանութեան ենթարկեն:

Ոչ մէկ ճշմարիտ մահմետական պէտք չէ ճանչնայ խտրել իր իշխան մեր հաւատացեալներու: Հետեւաբար անգլիացիները կրնային լորտ Գրոմըրը խալիֆա հռչակել:

ՊՈԼԿԱՐԻԱ ԵՒ ՄԻԱՅԵԱԼ ՍԼԱԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ուրիշ աւելի ի՞նչ կ'ուզէ Ռուսաստան Միացեալ Սլաւականութիւնը մինչեւ Վոսիոր յառաջացնելու համար: Պուլկարները միայն ամբարանոցներն են՝ նախագիծը ռուսական խոյացումին, եւ են ու կը մնան հնազանդ ումերը ցարին: Միայն յոյնն է, որ Պալքանի վրայ հակառակութիւն պիտի հրամցնէ սլաւներուն: Փա՛ռք Աստուծոյ. թէ՛ պուլկարները եւ թէ՛ յոյները զիրար կ'ատեն՝ ինչպէս կրակ եւ ջուր: Պուլկարիան պաշտպանեալն է ոչ միայն Ռուսաստանի, այլեւ Անգլիոյ: Ապացուցուած իրականութիւն մըն է, թէ Պալքան կոմիտէն Լոնտոնի մէջ անհամար գումարներ կը մսխէ՝ պահպանելու համար պուլկարական այն խումբերը, որոնք կ'անցնին մեր սահմանները եւ տարիներէ ի վեր հանգիստ չեն տար սահմանի մեր գաւառներուն: Եթէ Պուլկարիան դրամական անդունդի եզերքը չգտնուէր, չատոնց մեզ ծածկած կ'ըլլար պատերազմով:

Պատերազմը Պուլկարիոյ դէմ անհրաժեշտութիւն է եւ պէտք է գայ: Ասկէ եօթը տարի առաջ արդէն մենք պէտք է հաշուակցէինք

մեր այս չար գործակիցին հետ: Սակայն Ռուսաստան եւ Անգլիա ամէն անգամ մեր ձեռքին կ'իյնան, երբ մենք փորձենք հարուած մը տալ Պալքանի այդ աւազակներուն:

Այսպէս, ահա՛, Անգլիա եւ Ռուսաստան պեղումներ կը կատարեն մեր սեպհական տան մէջ երկու մուկերու նման: Ֆրանսան, յառաջագոյն, մեզի համար վստահելի թակարդ մըն էր. այն ատեն կրնայինք ամէն յարմար վայրկեանին երկու անախորժելի կրծագոգիներուն վրայ յարձակիլ: Բայց Ֆրանսան երթալով աւելի կը զլանայ: Փառք Աստուծոյ, մենք անոր փոխարէն Գերմանիան գտանք: Որպէսզի բոլորը «չախի» բռնենք, կրնանք մեր պատուաւոր միջնապաճառը» օգտագործել:

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ ԱՐԵՒԵԼՔԻ Մէջ

Ֆրանսացիք շատ դժգոհ են, որ ես նախապատուութիւն կու տամ գերմանացիներուն: Բայց ասիկա ունի իր հիմնական պատճառները: Միայն կայսրը արդէն բաւական է, որ ես իմ համակրանքս գերմաններուն ուղղեմ: Ան մարդ մըն է, որուն վստահութիւն եւ սէր միայն պէտք է ունենանք: Ան սքանչելի մէկն է. եւ տեսէ՛ք, ինչպէս բարձր պահած է իր երկիրը: Բոլոր գերմաններն անգամ ինծի աւելի համակրելի են, քան ֆրանսացիները: Ան իր նկարագրով շատ մերձ է օսմանին. հանդարտ ու ծանրաբարոյ, բայց նաեւ հաւատարիմ ու պատուաւոր: Գերմանացին ժրջան է եւ յարատեւող. Ֆրանսան ալ փութաջան է. բայց ան չ'աշխատիր գերմանական կորովով. ան կը վատնէ իր ոյժերը անհիմն քաղաքականութեամբ: Գերմանական յարատեւութեան փոխարէն ֆրանսացին ունի միայն մեծ ոգեւորութիւն, որ միայն շուտով կ'աներեւութանայ, նման յարգի կրակին: Սակայն գերմանացիներուն ամենէն աւելի ունեցածն է հիմնական կրթութիւն, ինչ որ ֆրանսացիներուն ընդհանրապէս կը պակսի: Ներկայիս ֆրանսացիք մեզի աւելի նուազ համակրելի են այնու, որ Թունուզը մեզմէ գրաւեցին, ինչպէս նաեւ, որ մենք չենք բարեկամացած հանրապետական կարգուսարքի: Հոն, ուր կը պակսի միապետին գաւազանը, չի կրնար տեւականութիւն գոյութիւն ունենալ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ճարոնական յաջող ելքը ընդդէմ ռուսերուն պէտք է մեզ խանդավառէ, որովհետեւ ճարոնի յաղթութիւնները են նաեւ մերը: Բախտաւոր ենք, որ Ռուսաստան իր յաւելուած բանակը Ծայրագոյն Արեւելքի մէջ կը գործածէ, որովհետեւ ասով կը տկարացնէ իր յարձակողական ոյժը Սեւ ծովու ափերուն: Ամէն պարագայի, հազիւ քիչ մը կազդուրուին ու զօրանան, նորէն պիտի սկսին մեզի դէմ գործի լծուիլ: Արեւելեան ծովը չկրցան ռուսականի վերածել, սակայն միշտ պիտի ջանան Սեւ ծովը գրաւել: Ասիկա շատ ըմբռնելի ու բնական է: Ռուսիոյ ջուրի գլխաւոր երակները՝ Տնիբերը, Տնիսթէրը, Տոնը, ինչպէս նաեւ անուղղակի ջրանցքներով Վոլկան՝ Սեւ ծով կը թափին: Ռուսական ոյժերը Նեղուցներով դէպի Միջերկրական ծով կը խուժեն: Ռուսիոյ համար լուրջ հարց մըն է Տարտանելի չղթաները խորտակելը, բայց նաեւ մեզի համար կենսական խնդիր մը՝ այս նեղուցը պահել մեր գերիշխանութեան ներքեւ: Եթէ այս կէտիս մէջ անհաշտ հակառակորդներ չըլլայինք, այն ատեն աշխարհիս լաւագոյն բարեկամները կըրնայինք ըլլալ: Մեր երկուքին պետական կառուցվածքները շատ նմանութիւններ եւ ազգակցութիւններ ունին. նոյնքան նաեւ այս երկու ժողովուրդներու նկարագրին մէջ: Այս ամենէն այն միայն կարելի է եզրակացնել, որ այս երկուքն աւելի իրարու դաշնակից կրնան ըլլալ, քան թէ մահացու թշնամիներ: Ասոր վրայ կարելի է փոխադարձաբար նաեւ յաւելուել, որ մենք Ռուսաստանի մէջ միլիոնաւոր մահմետականներ ունինք, մինչ ռուսերն ալ իմ տէրութեանս մէջ Ուղղափառ եկեղեցւոյ պաշտպանները կրնան ըլլալ եւ ե՛ր իսկ:

ՏՐԻՊՈԼԻՍ

Տրիպոլիսի ստացուածքը մեզի համար շատ անշահաբեր է: Ամէն տարի այս գաւառը մեզի շատ դրամ արժեց. միւս կողմէ խտլացիներու ամբաստանութիւնները այնտեղ վերջ չեն գտներ: 54 միլիոն լիր կը յամառին տալ մեզի խտլացիները, եթէ մենք Տրիպոլիսը իրենց առջեւ բանանք «տնտեսապէս» եւ իրենց պաշտպանութեան յանձնենք: Որոհելու է, թէ մենք պէ՞տք է իրենց տեղի տանք: Այն ատեն հոն խաղաղութիւն կ'ունենանք, դրամ կը ստանանք, ուրիշ պարտականութիւններ կը կատարենք. բայց յամենայն դէպս այսպէս աւելի

լաւ է: Իմ իրաւունքներուս ամենալաւ պաշտպանը Տրիպոլսոյ մէջ է եւ կը մնայ չէյթա Իւլ-Մահտի Սենուզզին: Ան դիւրաւ պիտի չձգէ, որ իտալացիները ներս մտնեն. պէտք է սակայն կարենայ 30.000 մարդ ոտքի կանգնեցնել: Բայց աստի, աշխարհի գրեթէ բոլոր տէրվիչներու միութիւնները, քանի մը հարիւր հազար հոգի սենուզիոններու հետ կարգուած են: Եթէ սենուզիոնները ոտքի կանգնին, այն ատեն իտալացիներուն համար պատերազմ կայ՝ աւելի արիւնալից, ինչպէս ժամանակին Մահտին՝ Սուտանի մէջ. մենք բաւարար զէնք ու թնդանօթ իրենց տրամադրութեան յանձնեցինք. անոր համար չատ ուշագրաւ հակառակորդներ են:

ՍՈՒԷՋԻ ԶՐԱՆՅՔԻ ՄՐՅԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ջրանցքին հետաքրքրական ծրագիր մը պարզեց մեզի փրուսացի սպայ մը: Ան մեզի խորհուրդ տուաւ, որ մենք Սուէզի ջրանցքը պաշարենք մրցակցութիւն մը ստեղծելու համար: Ուստի էլ Արաբիայի մէջ բարձրութեան յարաբերութիւնները մեզի ենթադրել տուին, որ ժամանակին Մեռեալ ծովը եւ Ազապայի ծոցը ջուրով միացած էին իրարու հետ: Փորելով գրեթէ 90 քիլոմետր հող Մեռեալ եւ Կարմիր ծովերու միջեւ՝ բաւական է ամբողջական վայրը 25–30 քմ. լայնութեամբ դարձեալ ջուրի տակ առնել: Յորդանանի եւ Կհորի ձորին տեղ յետոյ պիտի կազմուի ներքին մեծ լիճ մը, որուն շուրջ, ինչպէս հին ժամանակներ, վաճառականութիւն եւ պտոյտ պիտի ծաղկին: Տեղագրական ճշգրիտ պատկերներով պէտք է հաստատել, թէ արդեօք այս հեռաւոր լճակէն, որ իմ պատուիս համար «Ապտիւլ Համիտ» լիճ պիտի կոչուի, մինչեւ Միջերկրական ծով կապակցութիւն մը կարելի՞ է հաստատել: Այս ջրանցքներուն քաղաքական արժէքը պէտք է աւելի նուազ ըլլայ քան տրնտեսականը: Սուէզի ջրանցքին երթեւեկի մաս մը սուրիական ջրանցքի վրայ պիտի չեղի. Թուրքիան եւ իրեն բարեկամ պետութիւնները անկախ պիտի ըլլան Սուէզի ջրանցքէն: Ծախքերը 120 միլիոնը պէտք է անցնին: Մեր յարգանքները փրուսացի սպային այս ծանօթութիւններուն համար: Յատուկ յանձնախումբ մը պէտք է զբաղի ասոնցմով ու հետապնդէ ծրագիրը:

ԻՍԼԱՄԸ ԵՒ ԱԶԳՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

«Երկրագնդի բոլոր պետութիւնների մէջ ամենամիջազգայինը Օսմանեան պետութիւնն է: Մեր ժողովուրդի մէջ կան թուրքեր, արաբներ, յոյներ, առնաւուտներ, բուլղարներ, քրդեր, նիկրեր, եւն. սակայն հաւատը սրանց բոլորին միացնում եւ դարձնում է մի ընտանիք, եւ օսմանցիների մասին խօսելիս երբեք մեր ազգային առանձնայատկութիւնները չեն աչքի առաջ ունենում, այլ եւ այն փաստը, որ մենք բոլորս էլ հաւատացեալներ ենք: Ես նախ եւ առաջ հաւատացեալների իշխանն եմ եւ դրանից յետոյ միայն օսմանցիների միապետը: Մեր ամբողջ պետութեան հիմքը կրօնն է: Դժբախտաբար Անգլիան յաջողել է իր օտար քաղաքականութեամբ հրահրել մեր երկրում ազգայնութեան հուրը: Արաբիան ապստամբուած է. Ալբանիան, իսլամի այս եւրոպական մարտկոցը, նոյնպէս վեր է կեցել. Ասորիքում եւս խառնակութիւնները ծայր են առել»:

ԻՍԼԱՄԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱՅ

«Մեր պետութիւնը կրօնական պետութիւն է. եթէ իսլամի միութեան իդէան վերջացաւ՝ մեր պետութիւնն էլ կը վերջանայ:

Ուստ ցաւալի է, որ հաւատացեալներով բնակուած երկրներն ընկել են քրիստոնեայ պետութեանց իշխանութեան տակ: Օսմանեան կայսրութեան մնացեալ են միայն 20 միլիոն հաւատացեալներ: Սակայն եւ այնպէս բոլոր մահմետականների աչքերը դարձած են դէպի Ստանպուլ: Պէտք է տարէջ-տարի աւելի սեղմել ու ամրացնել այն կրօնական կապերը, որոնք միացնում են բոլոր հաւատացեալներին, որովհետեւ այդտեղ է մեր ապագան:

Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանն ու Հոլանդիան իմ ձեռքին չեն: Իմ խալիֆայական մի հատիկ խօսքը բաւական է սրբազան պատերազմ առաջացնելու համար: Այն ժամանակ վաճ քրիստոնեայ պետութիւններին. ժամանակը դեռ չէ հասել, բայց կը գայ մի օր, եւ բոլոր հաւատացեալները մի մարդու պէս վեր կը կենան՝ փչելով անհաւատների շղթաները: Անգլիական տիրապետութեանց մէջ զբոսնող 85 միլիոն, հոլանդական գաղութներում բնակուող 30 միլիոն, եւ Ռուսաստանում ապրող 10 միլիոն մուսուլմանները բոլորն էլ կը միանան այն ժամանակ:

Զգիտե՞ն արդեօք, որ 250 միլիոն մահամետականները ամէն օր աղօթում են Ալլահին՝ դարձնելով իրենց աչքերը դէպի խալիֆան, որ մարգարէի ժառանգն է:

Ո՞վ կարող է սրանից յետոյ պնդել, թէ մենք ոչ այլ ինչ ենք, բայց եթէ մի թոյլ գործիք պետութեանց կոնցերտի մէջ:

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Այն, ինչ որ անուանում են բարենորոգումներ, վատահօրէն կարելի է ասել, մեր կործանումն է: Ինչո՞ւ են ցանկանում մեզ հետ ժառանգական թշնամութեան մէջ գտնուող պետութիւնները բարենորոգումները մեր գլխին կապել, որովհետեւ նրանք լաւ գիտեն, որ այդ բարենորոգումները պարունակում են իրենց մէջ մեր պետութեան կործանման պացիլները:

Ամբողջ աշխարհը ողբում է մեր կուլտուրայի իբր թէ ցածր աստիճանը: Եւրոպական ժողովուրդները մեզ քննադատում են եւ պահանջում, որ մենք որեւէ բան անենք մեր կուլտուրան բարձրացնելու համար: Նրանք մոռանում են, որ իրենք կարիք ունեն դեռ իրենց մօտ շատ բան բարեկարգելու համար: Հարկաւ, ես չեմ ասում, թէ Եւրոպայում եւ Ամերիկայում թեխնիկայի կատարած պրոգրէսի վրայ հիանալ չի կարելի. մենք Արեւմուտքից 100 տարում ետ ենք մնացել: Բայց եւ այնպէս անկողմնապահ մարդիկ պէտք է խոստովանին, որ իմ թագաւորութեան սկզբից սկսած մեր յառաջադիմութեան էվոլյուցիան եղել է նորմալ եւ մինչեւ անգամ արագընթաց:

ՍՏՐԿՈՒԹԻՒՆԸ

Զարմանալի է, թէ Եւրոպան ինչքան անգիտակ է մեր վիճակին ու բարքերին: Մարդիկ աչքի առաջ են ունենում Ամերիկայի ստրուկների տխուր վիճակը եւ դրանց համեմատութեամբ էլ խօսում Արեւելքի ստրուկների մասին: Ինչպէ՞ս կարելի է ստրկութիւն անուանել այն ընտանեկան եւ նահապետական յարաբերութիւնները, որ գոյութիւն ունին մեզ մօտ տէրերի եւ ծառաների մէջ: Ղուրանը մեզ պատուիրում է բարութեամբ վարուիլ մեր ծառաների հետ: Ճիշդ է, ծառաները մեզնից որոշ կախման մէջ են, սակայն մեր օրէնքները այս կէտում այնքան խիստ են, որ ծառաները լիովին հովանաւորուած են

իրենց տէրերի բոլոր բռնութիւններից: Այսպիսի պայմաններում չի կարելի խօսել մեր ստրկատիրութեան մասին: Վատահօրէն կարելի է ասել, որ մեր աղախինն աւելի լաւ վիճակի մէջ է, քան բռնան Եւրոպայում: Մեր աղախինները կապուած են ընտանիքին, եւ այս բխում է մեր բարքերից ու օրէնքներից: Շատ վատ բաներ են պատմում ստրուկների վաճառքով պարապողների մասին. սակայն սրանց արածն ամենեւին վաճառք չէ: Այս մարդիկը մեզ մատակարարում են ծառաներ միայն շատ երկար ժամանակով եւ վճարելով միանգամից բոլոր տարիների համար: Այս ձեռնարկն օգտակար է թէ՛ ծառաների եւ թէ՛ նրանց ծնողների համար: Այդպիսով ընտանիքներում օթեւան են գտնում շատ որբեր, որոնք այլապէս դատապարտուած պէտք է լինէին քաղցից մեռնել փողոցներում:

ԹՈՒՐԲԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԱՅԻՆ

Յաճախ մեզ անուանում են Արեւելքի գերմանացիներ, ինչպէս որ ասում են, թէ յոյները Արեւելքի ֆրանսիացիներն են: Ճիշդ է, մենք բնաւորութեամբ շատ նման գծեր ունենք գերմանացիների հետ: Եւ սա է գլխաւոր պատճառներից մէկը, որ մենք իրար լաւ հասկանում ենք: Մենք գերմանացիների նման հանգիստ, վերապահ եւ համբերող բնաւորութիւն ունենք: Մենք երկուսս էլ բաւականաչափ ծանրաշարժ ենք եւ երկար ժամանակ է հարկաւոր մեզ տաքացնելու համար: Համբերութեամբ մենք թոյլ ենք տալիս մեզ տանջել, սակայն դրանից մեր հարուածի թափը միայն աւելի ուժեղանում է: Մեր վերջին կոիւր Յունաստանի հետ պարզ ապացոյց է սրան: Քաջութիւնն ու պատուասիրութիւնը, ասպետական բնազդներն ու հիւրասիրութիւնը միաժամանակ թէ՛ գերմանացիների եւ թէ՛ թիւրքերի առաքինութիւնն են կազմում: Գերմանական հին կայսրերը ցանկանում էին տարածել իրենց տիրապետութիւնը մինչեւ Ալպերի այն կողմը եւ երազում էին հռոմեական մեծ կայսրութեան մասին: Իմ նախնիներն եւս ցանկանում էին հիմնել մի կայսրութիւն, որ տարածուէր ամբողջ աշխարհի վրայ՝ չնդկաստանից մինչեւ Վիեննա: Գերմաններն ու թիւրքերը ցրեցին, սպառնեցին իրենց ուժերը այս միապետական ձրգտումներին համար:

ԻՍԼԱՄԻ ԲԱՐՁՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

«Ի՞նչ իրաւունքով Արեւմուտքի ամենակոմպէտէնտ մարդիկ իրենց թոյլ են տալիս անուանարկել մեր կրօնը: Անկասկած մարգարէի պատուիրաններից մի քանիսը խիստ դաժան են թուում. բայց նման պատուիրաններ կան թէ՛ քրիստոնէական եւ թէ՛ հրէական կրօնական գրքերի մէջ: Գործնական կեանքը նրանց մեղմացրել եւ շատ բաների ուրիշ տեսակի լուսաբանութիւն է տուել: Ղուրանի իւրաքանչիւր էջում քարոզւում է առաքինութիւնը, եւ նրա քարոզած գեղեցիկ վարդապետութիւնը քրիստոնէականից եւ հրէականից ստոր չէ. բայց որ իսլամն ամենաուժեղ եւ ամենաբարձր կրօնն է աշխարհիս վրայ՝ այդ երեւում է նրանից, որ ամէն տեղ, ուր նա մրցման է գալիս ուրիշ կրօնների հետ, միշտ յաղթանակում է:

Ինչ վերաբերում է կրօնական ազատութեան՝ դա մահմեդականներիս մօտ աւելի մեծ է, քան երկրագնդի որեւէ այլ վայրում: Ասպընջականութիւնը եւ ոչ մի տեղ աւելի չէ գործադրւում, քան մեզ մօտ: Մենք չե՞նք որ մի քանի ժամանակ առաջ ընդունեցինք իսպանական հրեաներին եւ ռուսական լեհերին, որոնց վտարել էին իրենց հայրենիքներից: Այս վերջիններիս մենք մեր հովանաւորութեան տակ առանք՝ մինչեւ անգամ Ռուսաստանի հետ պատերազմի մտնելու ռիսկով:

Մեր բոլոր դժբախտութիւնն այն է, որ մեր պետութիւնը մի կրօնական տարրից չէ բաղկացած, եւ որ մենք շատ քրիստոնեաներ ունենք մեր երկրում: Այս հանգամանքը անհրաժեշտօրէն պէտք է առաջ բերէր մեզ մօտ ներքին անհամաձայնութիւններ, ինչպէս որ առաջ է բերում ուրիշ պետութիւնների մօտ: Կրօնական եւ դաւանաբանական զանազանակերպութիւնը դժբախտութիւն է ամէն մի երկրի համար: Այս բանը երեւում է, օրինակի համար, Գերմանիայում: Պետական կառուցվածքի ամրութիւնն անհրաժեշտաբար պէտք է պակասի, երբ երկրի ներսում կատաղօրէն գլուխ են բարձրանում կրօնական եւ դաւանաբանական վէճերը:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ԻՍԼԱՄԸ

Վերջիներ այս ժամանակները, երբ Աստուծոյ մարգարէն երեւաց երկրի վրայ, լուսաւորեց աշխարհի խաւարը, փոխեց ժողովուրդների կոպիտ բարքերը՝ նրանց տեղը դնելով մեծահոգութիւն եւ սէր. այս-

պէսով առաջնորդելով մարդկային ցեղը դէպի խաղաղութիւն, ուրախութիւն եւ իմաստութիւն: Չմոռանանք իսլամի բարձր քաղաքակրթութիւնը, անօրինակ բարգաւաճումը իսլամական երկրների այն ժամանակ, երբ Եւրոպան թաղուած էր ամենախռոր բարբարոսութեան մէջ:

Ինչպիսի՜ մեծութիւն էր ներկայացնում մեր քաղաքակրթութիւնը այն ժամանակներում, երբ քրիստոնէական հորդաները, որսի տենչով բռնուած, ընկնում էին մեր երկրների վրայ, հրդեհում եւ աւերում՝ կեղծաւորաբար յայտարարելով, թէ ուզում են ազատել Երուսաղէմը...

Եթէ մենք ցանկանում ենք մեզ ճանաչել, եթէ մենք կամենում ենք մեր նախկին զօրութիւնը վերականգնել, եթէ մենք ուզում ենք վերածնել նախկին քաղաքակրթութիւնը, պէտք է վերջիներ մեր նախկին մեծութեան իսկական աղբիւրը: Վտանգաւոր ժանտախտային բացիւններով վարակուած եւրոպական քաղաքակրթութիւնը կապկօրէն ընդօրինակելով չէ, որ մենք պէտք է փրկուենք, այլ մենք պէտք է վերադառնան իսլամի նախկին ծաղկման հիմքին՝ «չէրիաթի-չէ-րիֆ»ին (Ղուրանի աստուածային օրէնքին), որի էութիւնը ամփոփուած է հետեւեալ խօսքերի մէջ. «Փառք Ալլահին, տիեզերքի տիրոջը. մենք պարտական ենք նրան ծառայելու եւ աղօթելու: Թող նա առաջնորդի մեզ դէպի ճշմարիտ ճանապարհը եւ մեզ դարձնի մոլորութեան չաւիղից»:

ՖԱՏԱԼԻԶՄ

«Կիսմէթ-կիսմէթ»*... Ինչ դժբախտ խօսք է սա եւ ինչքան դժբախտութիւններ է սա մեզ պատճառել... Ղուրանի մէջ ոչ մի տեղ ֆատալիզմի մասին ակնարկ չկայ. միայն վերջին դարի ընթացքումն է, որ ծուլութիւնը ու բթամտութիւնը հանդէս են բերել այն: Եւ մեր «իշ-Ալլահ»ը (Աստուծով) շատ յարմար է մեղկութիւնն ու ծուլութիւնը ծածկելու համար:

Մահմէդը ցանկացել է, որ մենք ենթարկուենք Աստծուն, բայց ոչ թէ մի անմիտ ֆատալիզմի մտքով: Մեծ է բարութիւնն Ալլահի, բայց նա չի կարող իւրաքանչիւր մարդու կարիքների հոգացողութիւնն իր վրայ վերցնել. սրա մասին ամէն մի արարած ինքը պէտք է մտածի եւ աշխատի: Նա, ով չի ցանում, չի էլ հնձի. նա ով չի աշխատում,

* Կովկասեան թիւրքերն ասում են դսմաթ-դսմաթ (ճակատագիր):

ուտելու հաց էլ չի ունենայ: Դժբախտաբար մեր թուրք ժողովուրդը չի կարողացել հասկանալ այս: Այլ բան են սիրիացին եւ արաբը, որոնք այդ մտքերի համաձայն են գործում: Նման նախադասութիւնները քրիստոնեաներն աւելի լաւ մտքով են ըմբռնել: Աստուածաշունչն էլ ասում է. «Մի մտածէ՛ք վաղուայ մասին, որովհետեւ Տէրը, որ երկնի թռչունների եւ երկրի գաղանների մասին հոգում է, կը հոգայ եւ ձեր մասին»: Բայց այնուամենայնիւ քրիստոնեաներն աշխատում են, այդ պատճառով էլ նրանք յառաջադիմում են, իսկ մենք յետադիմում:

ՏԱՃԿԱԿԱՆ ՅՈՒԵՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Ինչ որ մեզ մօտ պատահում է, անմիջապէս քննադատութեան է ենթարկում. մանաւանդ երիտասարդ «էֆէնդիների» կողմից: Նրանք ամէն բան ուրիշներից լաւ են իմանում: Մեր դեկավարող չըջանները, մեր պաշտօնեաներն ու սպաները բռնուած են մի անբուժելի յոռետեսութեամբ, որի շնորհիւ նրանք ամէն բան սեւ են տեսնում: Նրանք փակում են իրենց աչքերը այն լաւ բաների առաջ, որ մենք անում ենք եւ սեւատեսութեամբ փակուած իրենց հայեացքով չեն կարողանում իմանալ, որ հակառակ մեծ պետութիւնների բոլոր ջանքերին՝ մենք յառաջադիմում ենք: Այս յոռետեսները, որոնք դատապարտում են եւ անուանարկում ամէն ինչ, դանդաղեցնում եւ կանգնեցնում են մեր յառաջադիմութիւնը: Եթէ սրանք ցանկանային մեր պետութեան դրութիւնը բարելաւել, նրանք պէտք է այն եզրակացութեան գային, որ աւելի լաւ է լաւատես լինել եւ ընդհանուր գործին օգնել, քան թէ ընկնել ունայն քննադատութիւնների կործանիչ կրաւորականութեան մէջ: Ծնորհիւ յառաջ բերածս հսկողութեան լաւ կազմակերպութեան՝ եւ ճշգրիտ գիտեմ ով, որտեղ եւ ինչպէս է մեզ հայհոյում: Ծերերը պախարակում են երիտասարդներին, եւ երիտասարդները՝ ծերերին, ո՛չ ոք չէ ուզում ճանաչել միւսի տեղն ու աստիճանը: Ունայնասիրութիւնից եւ երեսայական նախանցի մղուած՝ նրանք փոխադարձաբար ամենազգուշիկ ինտրիգներ են լարում իրար դէմ: Այս ֆոնադա էֆէնդիները բոլորից վատն են: Մեր ժողովուրդը, փառք Աստուծոյ, հեռու է այդ յոռետեսութիւնից, որովհետեւ իսկական մահմեդականը միշտ լաւատես է:

ԱՇԽԱՏԱՆՔ

Բոլոր չարիքների արմատն այն է, որ ոչ մի օսմանլի չի աշխատում իրական արժէքներ արտադրելու համար: Օսմանլին սովոր է պարոն լինել եւ աշխատանքը ուրիշներին թողնել: Նա ապրում եւ զուարճանում է... Շէյխ-ուլ-իսլամն, իմ հրահանգների համաձայն, քանիցս յիշեցրել է ժողովրդին, որ աշխատանքը հաճելի է Աստուծուն եւ ոչ ոքի պատուից զրկել չի կարող: Այս միեւնոյն բանը պէտք է շարունակ սովորեցնել եւ դպրոցներում: Մեր երիտասարդները կարծում են, թէ նրանք չեն կարող այլ բան դառնալ, քան պաշտօնեայ եւ սպայ... Ինչո՞ւ թուրքը չի կարող դառնալ նաեւ առեւտրական, տեխնիկ եւ ընդունակ բանուոր: Ես ինքս այդպիսի աշխատանքի օրինակը տուել եմ՝ նուիրուելով ձեռագործի: Ինչ դժուար է ցրել նման նախապաշարմունքները եւ ինչքան ցաւալի է, որ այդ այդպէս է...

ԱՆԲԱՆՈՒԹԻՒՆ

Բնութիւնը մեր ժողովրդի լայն խաւերում մինչ այն աստիճան միաբարին է դառել, որ կարելի է իրաւամբ ասել. «Թե մեր բոլոր դժբախտութիւնն այս աղբիւրից է բխում: Քաղցր ֆէւ նիէնթէ-ն այնպիսի բախտաւորութիւն է համարում, որ ամէն մէկը ձգտում է մասնակցել այս կարծեցեալ բախտաւորութեանը: Ես էլ երիտասարդ ժամանակս անբանութեան մատնուելու փորձութիւնն եմ ունեցել: Բայց երբ իմացայ, թէ անբանութիւնն ինչ պակասութիւններ է բերում, երբ տեսայ, որ նա իմ եղբայր Մուրադին հասցրեց լիակատար անասնացման եւ խելագարութեան, եւ ազատագրուեցի ծուլութեան այս արատից: Մեր ժողովրդի մէջ գտնուող բոլոր իմացական տարրերը, մանաւանդ ուսուցիչներն ու կրօնական պաշտօնեաները, պարտաւոր են անդուլ կերպով ազդել մատաղ սերնդի վրայ, որպէսզի նա հրաժարուի քաղցրը, բայց փճացնող ֆէւ նիէնթէ-ից եւ աշխատի իր համար եւ իր ցեղակիցների եւ հաւատակիցների համար: Եթէ մենք յաջողենք յաղթել մեր ժողովրդի բնաւորութեան ծուլութիւնը եւ եթէ մենք վանենք չափազանցացրած հարեմական կեանքի մեղկութիւնը, մեր Օսմանեան պետութիւնը կը բուժուի:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Ի՞նչ է նշանակում մարդկային սրբազան իրաւունք, որի մասին այնքան խօսում են Արեւմուտքում: Եթէ մենք մի Հայեացք ձգենք մեր պատմութեան վրայ, չենք կարող չնկատել, որ դա մի ծաղր է: Այո, եղել են բարձր հմայութեան տէր մարդիկ, որոնք ջանք են գործ դրել մշակելու այս իրաւունքը, սակայն ազգերը միայն ծաղրում են նրա պատուիրանները: Նրանց համար միայն բնութեան երկաթէ օրէնքները գոյութիւն ունեն, եւ այդ պատճառով էլ միշտ ուժեղը թշնամութեան մէջ է թոյլի հետ: Եւրոպան մեզ վրայ անդադար բռնութիւն է գործ դնում: Երբ մի յետադարձ Հայեացք ենք ձգում մեր անցեալի վրայ, տեսնում ենք, որ մեր սթաթուս քուօն շատ անգամ մեծ պետութեանց դաշնագրերը երաշխաւորել է, սակայն չնայած սրան՝ նրանք սրի տակ տալով մարդկութեան իրաւունքները՝ մէկը միւսի ետեւից խլել են մեր գաւառները:

ՀԱՄԲԵՐՈՂՈՒԹԻՒՆ

Երբ մէկը մեր իսլամին մեղադրում է անհամբերութեան մէջ, դրանով նա ցոյց է տալիս անիրազեկութիւնը փաստերի հանդէպ: Եթէ մեր կրօնը նախկին դարերում այնքան համբերող չլինէր, մեր պետութիւնը աւելի ամրակուռ կը լինէր, եւ մենք կարիք չէինք ունենայ ներկայումս ողբալու այն ներքին անհամաձայնութիւնը, որ բխում է պետութեան մէջ գոյութիւն ունեցող կրօնների տարբերութիւնից: Ներկայումս էլ մենք շատ նրբանկատ ենք օտար կրօնական համայնքների վերաբերմամբ. մենք նրանց չափից աւելի իրաւունքներ ենք տալիս:

Մեր կրօնական համբերութեան մի ուրիշ ապացոյցն է խառն ամուսնութիւնը, որ մեզ մօտ բաւական յաճախ կրկնում է: Պետութեան ամենաբարձր պաշտօնեաներն ամուսնացած են օտարուհիների հետ, առանց որ դրա համար որեւէ մէկը նրանց յանդիմանէր: Թէֆիկ փաշայի¹ կինը շուեցարուհի է, Րիֆատտ² փաշայի կինը մի ռուս գեներալի աղջիկ է եւ տասնեակ ուրիշ այսպիսի փաստեր կան: Մեր սպանները եւս, որոնք պաշտօնով արտասահման են ուղարկւում,

¹ Նախկին մեծ վէզիր, ներկայումս Լոնտոնի ղեսպան:

² Փարիզի ներկայ ղեսպանը:

յաճախ այնտեղից են բերում իրենց կանանց: Այս կանայք չեն դադարում գովաբանել այն ընդունելութիւնը, որ նրանք գտնում են իրենց ամուսինների ընտանիքում, բացի այն, որ վերջիններիս հետ նրանք երջանիկ ամուսնական կեանք են ունենում:

Ձէ՛, ոչ ոք չի կարող իսլամը անհամբերողութեան մէջ մեղադրել: Եթէ երբեմն-երբեմն հասարակ ժողովուրդը գեաւուրների գաղանու-թիւնից եւ արհամարհանքից զրգուած դուրս է գալիս նրանց դէմ, դրանում զարմանալի բան չկայ եւ նման փաստեր ուրիշ ժողովուրդների մէջ էլ տեղի են ունենում:

Քրիստոնէական դաւանութիւններից ոչ մէկը միւսին չէ յարգում: Եւ այն միջադէպերը, որ ամէն տարի տեղի են ունենում Երուսաղէմի Սուրբ Գերեզման եկեղեցում, բաւականաչափ ցոյց են տալիս, թէ ո՛րտեղ է գտնւում անհամբերութիւնը: Գրեթէ ամէն մի մեծ տօնի արինահեղ ընդհարումներ են տեղի ունենում այլադաւան քրիստոնեաների միջեւ, այնպէս որ իմ զինուորներն են ստիպուած լինում միջամտել՝ կարգն ու խաղաղութիւնը վերականգնելու համար:

ՕՍՄԱՆՑԻՆԵՐԻ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Ինչ վերաբերում է մեր ժողովրդի «խորին տգիտութեանը», պէտք է ասեմ, որ մեր ժողովուրդը իր բնաւորութեամբ եւ առողջ բանակա-նութեամբ յետ չի մնում երկրագնդի այլ ժողովրդներից:

Ոչ մի բանական մարդ չի կարող հակառակ լինել լուսաւորութեան: Ես էլ ցանկանում եմ տալ իմ հաւատակիցներին լուսաւորութիւն, սա-կայն միայն այն չափով, որ նա մարսել կարող է: Ինչ վերաբերում է այն լուսաւորութեանը, որ կարող է փչացնել ժողովրդի բնաւորու-թիւնը, դրա դէմ ես պէտք է կռուեմ մինչեւ վերջին շունչս:

ԲԱՐԵՆՈՐՈԳՁԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Եթէ մենք ցանկանում ենք բարենորոգումներ մտցնել մեր պետու-թեան մէջ, չպէտք է աչքից թողնենք երկրի իրական դրութիւնը: Մենք պէտք է հաշուի առնենք մեր ժողովրդների քաղաքակրթական աստիճանը եւ ոչ թէ մի քանի ընտրող մարդկանց: Մենք պէտք է աչքի առաջ ունենանք եւ մեր ուլեմաներին, որոնք անվստահութիւն են տաժում դէպի ամէն ինչ, որ Արեւմուտքից է գալիս եւ այդ պատ-ճառով յաճախ վատ բանի հետ լաւն էլ են մերժում:

Ես կարծում եմ, որ այն դատողությունը, որով ես քայլ առ քայլ մօտենում եմ բարենորոգումներին, միանգամայն իրաւացի է: Միայն հետագայ սերունդը կարող է տէր դառնալ մի նոր քաղաքակրթութեան, որի մէջ արեւմտեան կուլտուրայի լաւ կողմերը միացած կը լինին արեւելեանին: Եւրոպայի ժողովուրդները հպարտանում են՝ կարծելով, թէ իրենց տիրապետած քաղաքակրթությունը միակ լաւն է: Մեր իսլամական օսմանեան քաղաքակրթությունը նոյն գոյութեան իրաւունք ունի, ինչ որ արեւմտեան քրիստոնէականը, ինչպէս որ այդ շատ գիտնականներ արդէն ընդունել են: Սակայն մեր զարգացման ուղին տարբեր է արեւմտականից: Մենք պէտք է զարգանանք ներսից դուրս՝ ինչպէս բնութեան մէջ է լինում, եւ օտար ազդեցություններ տեղ տանք միայն այն չափով, ինչ չափով սա մեզ օգտակար կարող է լինել: Անմտութիւն է հակառակել արեւմտեան բոլոր նորոյթներին: Ո՛չ, մենք նոյնպէս ցանկանում ենք առաջ գնալ, սակայն շտապողությունը սատանայական է, իսկ հանգստությունն ու խոհականությունը՝ աստուածային:

ԴՊՐՈՑՆԵՐԸ

Մեր պետութեան համար մեծ վտանգ են ներկայացնում մասնաւոր դպրոցները: Մէկ աններելի թուլութեամբ ամէն տեղ եւ ամէն ժամանակ թոյլատրել ենք բոլոր ազգութիւններին բանալ իրենց համար դպրոցներ: Քանի՛, քանի՛ անգամ ապացուցուել է, որ այս դպրոցները, ի տրիտուր մեր համբերութեան, ատելություն են սերմանում մեր կրօնքի դէմ: Այս գրությունը չպէտք է ներուի մեր լուսաւորություն մինիստրին, նա քաջութիւն չունի միջոցներ ձեռք առնելու մասնաւոր դպրոցների դէմ, իսկ ես էլ հօ չեմ կարող ամէն բան ինքս անել: Ճիշդ է, յաճախ շատ դժուար է լինում վերջ տալ այս դպրոցների ուսուցիչների գործունէութեանը: Նրանք թաքնուում են հիւպատոսների ու ղեսպանների յետեւ, իսկ վերջիններս էլ, աչքի ընկնելու համար նրանց պաշտպանում են:

ԿԱՆԱՅՔ

Եւրոպացիք միանգամայն սխալ գաղափար ունեն այն դրութեան մասին, որ կանայք ունեն մեզ մօտ, մանաւանդ սխալ է մեր «բազմակնութեան» մասին նրանց ունեցած հասկացողությունը: Բազմակնութեան մասին, ինչպէս Եւրոպայում, նոյնպէս եւ Ամերիկայում, շատ

տարբեր կարծիքներ կան, սակայն բազմաթիւ ամուսնալուծութիւններն ու ամուսնական սկանդալները, որ հանդէս են գալիս այդ երկրներում, ցոյց են տալիս, որ տղամարդը միշտ հակամէտ է բազմակնութեան: Ասում են, որ կայ մինչեւ անգամ մի աղանդ, մորմոնների աղանդը, որ ընդունում է բազմակնությունը իբրեւ անհրաժեշտ հասարակական կարգ:

Մեր մեծ մարգարէն ասում է. «Պատուեցէք կնոջը, որ ձեզ կեանք է տալիս» եւ Աստուած մեզ վրայ պարտականութիւն է դնում դէպի կինը սէր եւ քնքանք տածելու: Սրանցից ամենեւին չէ երեւում, թէ մեր կանայք ստորացած են, թէ նրանք ստորադրեալ վիճակի մէջ են գտնուում, ինչպէս ենթադրում են շատերը: Անկասկած, Ղուրանը պատուիրում է, որ կինը հնազանդի իր ամուսնուն, բայց միեւնոյնն է ասում Աստուածաշունչը: Ճիշդ այնպէս, ինչպէս եւրոպացի կինը, նոյնպէս եւ մահմետական կինը, ազդում է շրջապատի վրայ այն չափով, ինչ չափով մեծ են նրա արժանիքները: Այս ազդեցությունը նախ տարածուում է ընտանիքի վրայ եւ ապա այն ընկերուհիների վրայ, որոնց հետ նա շփման մէջ է: Բարեբախտաբար կարող ենք ասել, որ մեզ մօտ կնոջն արգիլուած է մասնակցել հասարակական գործերին, եւ իթէ այդպիսով այդ գործերի հոգացողութիւնն ամբողջովին տղամարդկանց վրայ է ընկած, դրա փոխարէն կինը ամբողջովին տէր ու տնօրէն է իր տանը: Մայրը մեր երեխաների սրտում միշտ առաջին տեղն է բռնում. բայց իթէ հէնց նրա տղաներն են գործում հասարակական ասպարեզում, էլ ինչպէս կարելի է եւրոպացիների պէս պնդել, թէ մեզ մօտ կինը զուրկ է հասարակական գործերի վրայ ազդելու հնարաւորութիւնից:

Ամբողջ աշխարհի հեղինակաւոր պետական մարդկանց կարծիքով, որ յաճախ արտայայտուում է, չի կարելի մի ազգի համար բախտաւորութիւն համարել այն, որ նրա կանայք շատ ազատութիւններ ունեն, որ նրանք առաջին հերթին լինում են փողոցներում եւ սալոններում՝ թողնելով տան տիրապետությունը աղախիններին, ինչպէս որ այդ տեղի ունի յատկապէս Ամերիկայում: Երբ ես սէլամյլքի արարողութեան ժամանակ դիտում եմ եւրոպացի կանանց մօայլ եւ գոռոզ դէմքերը եւ համեմատում մեր կանանց հետ՝ տեսնում եմ, թէ մերոնք ինչքան առաւելություններ ունին: Ի՞նչ պակասություններ են գտնում եւրոպացիք մեր կանանց մէջ, կարող են նրանք ասել, թէ իրենց կանայք աւելի բարոյական են, աւելի անձնուէր ու հաւատարիմ են իրենց ամուսիններին եւ աւելի գեղեցիկ, քան մերոնք:

Եւրոպայում կինը չատ ազատութիւններ ունի, որպէսզի նա կարողանայ իր կանացիութիւնը պահպանել: Եւ եթէ թէկուզ միայն կիսով չափ ճշմարտութիւն լինի այն բոլորին մէջ, ինչ որ պատմում են արեւմտեան երկրների կանանց մասին լրագիրներն ու գրքերը, կարելի է իսկապէս խղճալ այդ երկրների տղամարդկանց:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՅՆԸ

Նղովուած լինին այս նոր գաղափարները, որ գալիս են Արեւմուտքից: Նրանք մեծ վտանգ են ներկայացնում մեր երկրի համար: Երբ ես տեսնում եմ, թէ ինչքան երջանիկ են հաւատացեալ մահմեդականները, այս երկրի երջանիկ զաւակները, ես ինձ ստիպուած եմ զգում բոլոր ուժովս դիմադրել այն հովերին, որը մեզ ուղարկում է Եւրոպան:

Եւրոպական այս հովերը թունաւորում են մեր հաւատացեալների հոգին եւ բնաւորութիւնը: Խղճալի է մեր երիտասարդութիւնը, որ բռնուած քաղաքակրթութեան տենդով՝ իր փրկութիւնը այդ քաղաքակրթութեան պրոքլեմատիկ բարիքների մէջ է որոնում: Այս երիտասարդները իրենց նոր գաղափարներով իրենց ցեղակից ու հաւատակից եղբայրներին միայն կասկածամիտ ու յոռետես կարող են դարձնել: Ճշմարտութիւնն այն է, որ դրսից չեն գալիս. ամէն ինչ պէտք է ներսից դրսեւորուի:

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՐՈՒԵՍԸ

Մենք՝ օսմանցիներս, չպէտք է անգիտանայինք, որ մենք ունենք մի մեծ ու հին քաղաքակրթութիւն եւ այդ պատճառով էլ չպէտք է շատ աչք տնկէինք Արեւմուտքի վրայ: Սխալ է, թէ մենք արուեստի եւ գրականութեան մէջ ինքնուրոյնութիւն չունենք: Մենք շատ անգամ ենք բնորոշուել պարսիկներին, սակայն չնայած սրան՝ մենք միշտ պահել ենք մեր ինքնութեան ոգին: Մեր ճարտարապետութեան գեղեցիկ շինութիւնները ապացոյց են սրան: Աւելին կ'սսենք. մեր գրականութեան մէջ յիշում են երկու հազարից աւելի բանաստեղծների եւ բանաստեղծուհիների անուններ. ինչքան կատարեալ ու գեղեցիկ ոտանաւորներ են գրել մեր նշանաւոր բանաստեղծները, ինչպէս օրինակ՝ Ֆալսի, Լամիի եւ նորերից՝ Գալի, Պէրտէվ, Արզիւ Հակկ Համիդ եւ Քեմալ, թէեւ այս վերջինիս բոլոր գործերը ինձ դուր չեն գալիս:

Մենք պէտք է շարունակենք մեր քաղաքակրթական կառուցվածքը՝ հնի հետ վարպետօրէն միացնելով նորը: Մեր գործնական արուեստագիտական դպրոցը եւ Հէրէքում հիմնած գորգի գործարանը չպէտք է նորամոլութեան տարուած՝ օտար ձեւերին դիմեն: Նմանապէս մեր հեղինակները. նրանք սխալում են, երբ Ֆրանսական երկերը օրինակելի են համարում: Միմիայն ժողովրդական տարրերի աղբիւրից եւ միայն ազգային հոգի վրայ պէտք է մենք զարգացնենք մեր արուեստն ու գրականութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր Օսմանեան պետութիւնը տկարացած է իր գերաճումով: Մենք հիւանդացած ենք մեր չափազանց ազգայնամոլութեամբ: Վա՛յ այն խենթերուն, որոնք կը կարծեն մեզի օգտակար ըլլալ բուռն հաշիւներով. ատոնք մեր պետութիւնը կործանումի կ'առաջնորդեն: Մենք այժմ կը մտնինք ափուրէն յորդած լեռնային գետի մը մեջ: Պատմա-իմաստասէր ըլլալու պէտք չկայ՝ հաստատելու, որ մեր թրքական ազգային ոյժը՝ միայն երեւութական է: Մինչեւ Վիեննա մեր յառաջ-խաղացումէն ետք, մեր պետական կազմուածքէն ետեւէ ետեւ պոկուեցան գաւառներ. բայց այս՝ շատ բնական բան մըն էր: Համեմատաբար այսպիսի փոքր ցեղ մը, ինչպէս մերինը, չէր կրնար տեսականօրէն այս երկիրները գրաւած պահել: Ես չեմ զղջար, որ մեր ոյժերը ծծող Պալքանեան երկիրները կորսնցուցինք: Որքան արագօրէն դէպի ետ կեդրոնանանք, այնքան աւելի շուտով պիտի կարենանք յաղթահարել մեր տկարութեան եւ «հիւանդութեան»: Եւրոպան պիտի տեսնէ, որ անարգուած «հիւանդ մարդը» նորէն ինքզինք գտեր է ներքուստ եւ եղեր «ուժեղ մարդ»:

ՍՊԱՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

Իմ բարեկամս՝ գերման կայսրը, կը գովէ Գերմանիոյ մէջ կրթուած մեր սպաներուն յառաջդիմութիւնը: Վախ՛նամ՝ կայսրը կը սխալի, որովհետեւ, Պերլինի իմ դեսպանիս յատուկ տեղեկութիւններուն համաձայն, այս երիտասարդ պարոններուն ուսումը շատ վատորակ է: Անոնցմէ շատ քիչերը իսկական աշխատանքի լծուած են: Յիրականին փայլուն են այն դատաստանները, որոնք իրենց մեծերէն՝ փրուսական հրամանատարներէն ըսուած են: Պատահաբար գիտեմ, որ

այդ խօսքն արտասանուած ժամանակ աչքերէն մին՝ թերեւս նաեւ երկուքն ալ գոցուած են: Շատ դրամի կը նստի, երբ մեր երիտասարդ փաշա որդիները փրուսական զինուորական գիտութիւնը «խրացնեն»։ սակայն արտասահմանի հանդէպ լաւ կ'երեւան: Օսմաններու հին առաքինութիւնները՝ պարզութիւն եւ չափաւորութիւն, մեր երիտասարդները Գերմանիոյ մէջ դժբախտաբար կը կորսնցնեն. հոն կը սորվին անբարոյականութիւն եւ գինեմոլութիւն եւ այսպէս զարգարուած եւ փրացած կը վերադառնան հայրենիք, բարձրաքիթ կը նային իրենց ընկերներուն, նախկին փորձառու զօրավարներուն վրայ ու կը ծաղրեն մեր բարոյականութիւնը: Օսման փաշան գերմանական ոչ մէկ մարզանք սորված էր եւ սակայն ընտիր ու ճարպիկ զօրավար մըն էր: Ի՞նչ օգուտ ունին տեսակ-տեսակ գիրքերը, մարդկային առողջ միտք, արիւթիւն եւ տոկունութիւն, բայց ամենէն աւելի հաստատուն եւ արդար հաւատք Աստուծոյ. ահա՛ ասոնք են որ լաւ զինուոր մը կը կերտեն:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կրնամ սպասել այն մարդերէն, որոնք այսպիսի դաւ մը նիւթած են: Պէտք է վստահի՞մ Միթհաթ, Ռուշտի կամ Մահմուտ-Տամատ եւ Նուրի-Տամատ մարդերուն՝ հակառակ, որ այս վերջին երկուքը իմ հօրեղբօրս, Ապտիւլ-Ազիզին փեսաներն են: Կատակերգութիւն մը չէ՞, երբ մենք այս մարդերուն «անմահ պատիւ» փաղաքականն ուզենք տալ, որովհետեւ Սահմանադրութիւն մը նուիրած են պետութեան, որպէսզի այս կերպով «քաղաքակրթութեան յաղթանակը կանգնեն օսմանեան պետութեան» մէջ: Արդ, պէ՞տք ենք ոռնալ գայլերուն հետ: Ես անձամբ ստիպուած եմ՝ լաւ թէ գէշ է հաւատալ Օսմանեան խորհրդարանի բացման՝ 23 դեկտ. 1876 Սահմանադրութեան հրատարակման...:

ՆԵՐՔԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր պետութեան մարդաթափուր գաւառները լեցնելու համար պէտք է բանաւոր ներգաղթ մը կազմակերպենք, բայց ոչ հրեաներու նման (խօսքը Ռոզիլտի պաղեստինեան գաղթավայրերու մասին է): Անցեր են այն ժամանակները, երբ մենք օտար կրօններու մարդակները ցցեցինք մեր յատուկ միսերուն մէջ: Միայն մեր յատուկ ժողո-

վուրդին ու կրօնքին ընկերները կրնանք հանդուրժել մեր պետութեան սահմաններէն ներս: Պէտք է մտադիր ըլլանք աճեցնելու թրքական տարրին ոյժը: Մահմետականութեան տարածման դէմ կանգնող հոսանքը՝ Պոսնիայէն, Հերցեգովինայէն, ինչպէս նաեւ Պուլկարիայէն, պէտք է կասեցնենք յատուկ ծրագրով: Այս ներգաղթներով ոչ միայն ազգային ոյժը կը տկարանայ, այլեւ պետութեան ղեկավարութիւնը կը գունատի: Պէտք է զօրացնենք Ռումելիի մահմետական տարրը, բայց նաեւ ի մասնաւորի Փոքր Ասիոյ մէջ քրիստները պէտք է մեզի հետ նոյնացնենք: Իմ նախորդներու ամենամեծ սխալն այն եղաւ, որ մեր եւրոպական պետութեան սլաւ տարրը անտեսեցին մահմետականացնել: Ամէն պարագայի դժուար էր այդ: Սակայն Դիհրին է ՅՈՅՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ ՄԻՐԱՇԱՀԻԼ, ԶԻ ՇԱՏ ԱՐԻԻՆ ԿԱՅ ԱՍՈՆՅՄԷ ՄԵՐ ԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ:

ԴԻԻԱՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԵՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Լոյս տեսած է 1313 տարուոյ մեր պետական գիրքը: Պէտք է բարձրագոյն ուսում ունենալ ատոր մէջէն դուրս ելլել կարենալու համար: Մեր համազգեստներն ալ այնքան նշաններ ու ոսկի ժապաւէններ ունին, որ դժուար է զիրենք ճանչնալ: Ես ուրախ եմ, որ իմ նախաւորներէս ոմանք, նոյնիսկ հանդիսական առիթներուն, միշտ պարզ ու սեւ լոգիկով կը ներկայանան: Ասոնց համար արժէք ունեցող բաներն են՝ գիտութիւն եւ արդարութիւն: Մեր երկրին մէջ, ուր կրօնը արդէն կը քարոզէ ամենուն հաւասարութիւնը, պէտք է ջանանք պարզ ըլլալ օրական սնունդի թէ աղանելիքի մէջ: Ես անձամբ ասոր բարի օրինակը կու տամ: Ցաւալի է, որ իմ փաշաներս բնաւ հոգ չեն տանիր պարզութեան: Սակայն չեմ ուզեր պիծակի դեր կատարել: Անլուր է մեր մեծերուն ստացած տարապայման ոռճիկները: (Հոս պէտք է նշենք քանի մը նախարարներու տարեկան ոռճիկները: Մեծ վէզիրը կը ստանայ 330.000 ֆրանք, ծովային նախարարը՝ 414.000 ֆր., ելեւմտից նախարարը՝ 120.000, միւս նախարարները՝ 330.000 ֆր.): Մեր պետական ձեռատետրին մէջ նշանակուած են՝ 40 սպարապետներ, 60 փոխարքաներ, 13 նախարարներ, յետոյ նաեւ 120 բարձրաստիճան անդամներ, 390 Ուլա աստիճանի Ա. կարգիներ, 21 օգնական զօրապետներ, 125 պատուակալներ, 31 իսկական օգնականներ: Չափազանց է, սակայն պէտք է այդպէս մնայ, եթէ կ'ուզենք ամենուն հաճելի ըլլալ: Վերադարձ հին պարզութեան՝ միշտ ու շատ

դժուարին է: Ընդհակառակն փոքր պաշտոնեաները չատ խեղճ են: Քանի անգամներ հրամայած եմ զանոնք օրինաւորապէս վարձատրել, սակայն միշտ լսած եմ նորանոր գանգատներ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԲԻԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ժողովրդեան մը յիշողութիւնը շատ տկար է: Ինծի դէմ յարձակողները լաւ չեն ճանչնար պետութիւններու թշնամական քաղաքականութիւնը, վանդակապատ դիւանագիտութիւնը չեն կրնար տեսնել: «Երիտասարդ Թուրքիա» կուսակցութեան մարդիկ, որոնք իմ հիւանդ եղբօրս ժամանակ չափազանց յանդուգն եղած էին, ատոնք յանցաւոր են ու պատասխանատու այժմեան գէշ դրութեան: Սուլթի էֆէնտին Լոնտոնի մէջ եւ Մուսթաֆա Ֆալլին Պոլսէլի մէջ վտանգի ենթարկեցին մեր պետութիւնը, երբ բացորոշ կերպով յայտարարեցին թրքական ցեղին պարտութիւնը, ինչպէս նաեւ մեր երկրին տնտեսական ու բարոյական աւերը: Անոնք կորսնցուցած էին իրենց պատիւը, այլապէս պիտի չաղտոտէին իրենց սեպհական բոյնը: Զիս պէյը, իր ազգայնական նորոգ կուսակցութեամբ, արի մարդ մըն է. ան կ'ուզէ ի մի համախմբել քրիստոնեաներն ու իսլամները՝ անձնական ոյժերով ի գլուխ հանելու պետութեան հիմնարկը եւ խորհրդարանական սահմանադրութիւն մը: Զիս վատ կը համարին ու կը զարմանան, որ այդ նորոգիչներուն մահաւձիռ չեմ արձակեր: Անոնք կը մոռնան իմ զարհուրելի ապրումս՝ նախ՝ իմ հօրեղբօրս՝ Ապտիւլ Ազիզին՝ սեպհական «ինքնասպանութիւնը» եւ յետոյ իմ Մուրատ եղբօրս խենթութիւնն ու արգելափակումը:

ԱՆԱՏՈԼՈՒԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Երբ իրբու յետադէմ կը նկատեն զիս եւ կը կարծեն, որ ես հակառակ եմ յառաջդիմութեան ու չեմ թողուր, որ ան իմ երկրիս մէջ մտնէ, անոր դէմ ահա իմ լաւագոյն ապացոյցս՝ Անատոլուի չոգեկառքը: Հազիւ կազդուրուած էինք ռուսական պատերազմին պատճառած վերքերէն, երբ բոլոր ոյժովս փարեցայ Անատոլուի երկաթուղիի գիծին շինութեան, որուն նպատակն էր Միջագետք-Պաղտատ միացումը՝ կարելի արագութեամբ հասնելու համար Պարսկական ծոց: Շնորհիւ գերմանական օգնութեան՝ յաջողութեամբ աւարտեցաւ այդ գիծը, որուն երկայնքի գաւառներուն մուտքերը տարուէ տարի կ'աւելնան:

Այդ կողմի արտերուն արմտեղէնները փոխանակ փտելու այժմ դիւրաւ կը վաճառուին. պղինձը, ինչպէս օրինակի համար իմ սենեկապետ Ռադիպ պէյի քրոմպղինձները, աշխարհի տօնավաճառներու մէջ համբաւ ունի: Անատոլուն երջանիկ ապագայի մը կը դիմէ:

ԹՈՒՐԲԻԱՆ ԿԱՐՕՏ Է ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Աստուած մեզի խաղաղութիւն եւ հանդարտութիւն թող պարգեւէ: Ոչ մէկ երկիր այնքան պէտք ունի ատոնց, որքան մեր Օսմանեան պետութիւնը: Մենք գիտենք, որ մեր պաշտօնեաներու կանխակալ սովորութիւնները, բաղձալի կը դարձնեն ինչ ինչ բաներ. այսպէս՝ մեր պետութեան յաւիտենական կարգերու անհաստատ վիճակը խաղաղութիւն կ'ուզէ: Ամենէն աւելի սակայն պետութիւններու նենգութիւններն են աւեր գործողները: Տարուէ տարի մեզ անհանգիստ կ'ընեն՝ մեր ժողովուրդը մէկ ապստամբութենէն միւսին առաջնորդելով: Ինչքան բարիք կրնանք գործել այն բազմաթիւ միլիոններով, որոնք ամէն տարի առանց օգտակարութեան կը կորսուին-կ'երթան: Այդ պետութիւնները մեզ երբեք հանդարտ թողուցած են ու ժամանակ տուած են մեր պետական ընդարձակ կառոյցը շտկելու եւ ուղղելու: Հոս է ահա մեր անորոշ կացութիւնը: Պետութիւններու նենգութիւնները անկարելի ըրած են մեզ՝ առաջ տանելու մեր ժողովուրդները: Թող մեզ տասը տարի հանգիստ ձգեն ու պիտի տեսնեն մեր ճարտական զարմանալի յառաջադիմութիւնները: Բնական է՝ անոնք մեզմէ շատ աւելի լաւ են ու յառաջադէմ, որովհետեւ երկայնաբազուկ եւրոպացիներէն հեռու կը բնակին: Իսկ մենք մեր վրանները հաստատած ենք եւրոպացի բորենիներու դժոխամուտին:

ՊՐՈՒՍԱ – ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Տարօրինակ առաջարկ մըն է, որ ինծի կը ներկայացնէ իմ Քիւչիկ Սայիտ վէզիրս: Պրուսան պէտք է մեր նիստը՝ մեր մայրաքաղաքն ընենք: Ամէն պարագայի այսպիսի ծրագիր մը իրագործելը շատ դժուարին պիտի գայ: Իսթանպուլին կապուած են մեր մեծ աւանդութիւնները. հոս է, որ ունինք հին նուիրական մզկիթները, մարգարէներուն նշխարները. բաց աստի՝ միլիոններու պիտի նստի մեր պաշտօնեաներով ու նուիրապետութիւններով Պրուսա փոխադրուիլը: Ճիշդ է, որ հոս՝ Իսթանպուլի մէջ, վառօդի տակառի մը վրայ նստած ենք, պէտք է լրջօրէն նկատի ունենանք Սաիտի ծրագիրը: Ի՞նչ պիտի

ընենք, երբ ուսերը անգամ մը եւս Իսթանպուլի պարիսպներուն առջեւ երեւան. պիտի գրաւեն, եւ այն ատեն ամէն բան վերջացած կ'ըլլայ: Իսթանպուլը կորսնցնելով՝ կորսնցուցած կ'ըլլանք նաեւ խալիֆայութիւնը:

ԹՈՒՐԲԻՈՅ ՕՏԱՐ ՆԱՄԱԿԱՏՈՒՆԵՐԸ

Մենք ապօրինաւոր ենք: Մեծերը այդպէս կ'ուզեն, եւ մենք ստիպուած կը հնազանդինք: Սայիտ փաշան փափաք յայտնած է մեծերուն՝ օտար նամակատուները վերցնելու ու... ձախողած է: Լաւագոյն կ'ըլլար, եթէ սպասէր դեսպաններուն մերձենալու երջանիկ վայրկեանին: Ես համամիտ չեմ իր այս քայլին: Իմ նախնիներս բարեմտութեամբ համամիտ գտնուած են, որ անոնց պաշտօնական սուրհանդակին հետ նաեւ անհատական նամակներ ալ գտնուին, մինչեւ այն աստիճանի հասաւ, որ նամակատուներ եւս հաստատեցին. եւ հիմա այս օտար հիմնարկները նստեր են մեր կոկորդին վրայ: Տարեկան որքան մեծ գումարներ այս կերպով կը կորսուին: Բայց չէ՞ որ մեր տէրութեան ճոխութիւնն ալ այս կերպով կը վարկաբեկուի: Փոքրիկ ճարտը կրնայ իր անսակարկ նամակատունն ունենալ. միայն մենք է, որ նման ամօթի մը պիտի համբերենք: (Թուրքիոյ մէջ Աւստրիան ունի 30 նամակատուն, Ռուսաստանը՝ 24, Ֆրանսան՝ 20, Իտալիան՝ 8, Գերմանիան՝ 5, Անգլիան՝ 4 եւ Հնդկաստանը՝ 2 նամակատուն):

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԲԵՐԸ

Ժրնեւի մէջ իսկական երիտասարդ թուրքերը ժողով գումարներ են: Հակառակ «գաղտնի» նիստին՝ ստոյգ տեղեկութիւններ ստացայ: Իմ ցանկս 17 անուններ ունի: Յաւալի է, որ այս մոլորած երիտասարդները՝ իբրեւ առաջնորդ՝ վրիժառու եւ մոլորած մարդեր ունին: Յառաջադիմութիւն եւ լոյս տարածելու կցկտուր խօսքերով, կը ջանան կանգուն կեցածը կործանել, փորձուածը մէկդի չպրտել՝ փոխարէն նորի մը: Իրականին, անոնք կ'ուզեն, որ տէրութեան «փորձառու» մարդիկը տապալել՝ գրաւելու համար անոնց աթոռները եւ իրենք զիրենք իբրեւ գլուխ ներկայացնելու: Ասոնք խղճալի կեղծաւորներ են, որոնք կորսնցուցած են կրօնք եւ հայրենիք. այլապէս պիտի չմիաբանէին մեր մահացու թշնամիներուն՝ այդ քրիստոնեայ տէրութիւններուն հետ ապականելու համար իրենց հաւատակիցները:

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԳՈՅԲԵՐԸ

Օրինակ տալու համար իմ վեզիրներու, 500.000 թրքական լիրա կտրել տուի իմ քաղաքային գանձումէս: Գիտեմ, որ եւրոպական լրագիրները ստէպ գրգռուած կը յիշեն իմ այս մուտքս, սակայն չեն գիտեր, որ ատով ստիպուած եմ գրեթէ ամբողջ քաղաք մը կերակրել. այսպէս՝ իմ թիկնապահներս, Ելտըզի իմ ամբողջ պալատականներս. բաց աստի ամբողջ պետութեանս մէկ-երրորդ մասը: Ես նաեւ խալիֆա եմ՝ բոլոր իսլամներուն հայրը. հետեւաբար իմ եկամուտս կը վերաբերի աշխարհի բոլոր իսլամներուն: Այլահը գիտէ, թէ ես իմ անձին համար որքան քիչ կը գործածեմ: Եթէ կրցած եմ մեծամեծ գոյքեր հաւաքել, պարտիմ շնորհակալ ըլլայ իմ ստացուածքներու, անտառներու եւ երկիրներու բերած մուտքերուն: Ակոս փաշան՝ քաղաքային ցանկի նախարար, ճարպիկ գանձապահ էր. ան գնահատեց իմ ունեցածներս այնպէս, որ ի վերջոյ 500.000 լիրա եկամուտ նշանակեց: Իր առաջարկը եղաւ՝ բոլոր այն հողերն ու կալուածները, որոնք չէին վերաբերեր անհատականներու, սուլթանին ստացուածքներն էին. եւ այս շատ առաջնակարգ կարգադրութիւն էր: Նաեւ Միքայէլ փաշա Փոռթուկալ՝ Հայ մը եւ յաջորդ Ակոս փաշային՝ նմանապէս շատ ճարպիկ տնտեսագէտ մըն էր: Ձանազան մեծ ընկերութիւններու վատնուած առանձնաշնորհումներու եկամուտներէն զգալի կերպով բարձրացուց մեր մուտքերու գումարները... Ի վերջոյ, իմ կալուածներս 8 միլիոնը գլեցին անցան: Քաղաքական մեծ խառնակութիւններու ժամանակ այդ դրամը մեզի շատ օգտակար կրնայ ըլլալ:

ԳԱՀԱԺԱՌԱՆԳ

Երկար մտածած էի այն մասին, թէ արդեօք խոհեմակա՞ն է Օսմանի տան գահաժառանգները փոփոխութեան ենթարկել եւրոպական իշխանական ընտանիքներու սովորութեան համաձայն: Մեր պատմութեան արիւնալից էջերը յայտնապէս կը ցուցնեն, որ մեր թրքական ժառանգութեան աւագութիւնը մեր դարաշրջանի համար շատ ճակատագրային բան մըն է: Ճիշդ է, որ ժառանգական մեր իրաւունքները ընտանեկան ոչ մէկ անդամին վնաս կը հասցնեն, քանի որ մասնակից են բոլոր ինչքերուն: Նաեւ շատ բնական է, որ ընտանիքին երիցագոյնը իր ձեռքին ունի ամենուն սանձը, սակայն իշխանական

կամ թագաւորական տան մը համար, այս տեսակ աւագութիւնը կործանարար եւ աղիտաբեր է: Մեր քով ալ պէտք է երիցագոյն որդին հօր յաջորդն ըլլայ, եւ թէ ընտանիքին որեւէ երէց մէկ անդամը: Օսմանի տան եղբայրներուն եւ հօրեղբորդիներուն մրցոյթը, Օսմանի տան մէջ բաւական փորձանքներ հաստատած է. ընտանեկան անդամներու իրարու հանդէպ ունեցած անվստահութիւնը եւ փաշաներու տիրապետելու տենչը դուռեր բացեր ու գոցեր են: Ես իմ երիտասարդութեանս ի՞նչ ըրած էի, որ զիա աշխարհէ կտրեցին, եւ չթողուցին, որ ուսանիմ, որովհետեւ կը վախճային, որ կրնայի վնասակար ըլլալ գահին: Երեք անգամ մեր Շէյխ-իւլ-իսլամի համեմատութիւնը խնդրեցի մեր գահաժառանգութեան փոփոխման համար. ան պատրաստակամ է. սակայն չ'ուզեր իր վրայ առնել այն զարհուրելի հետեւանքները, որոնք կրնան առաջ գալ նման յեղաշրջումէ: Ես ի՞նչ ընեմ, կու գայ ժամանակը եւ կու գայ խորհուրդը, կամաց-կամաց:

ՄԵՐ ԵԼԵՄՈՒՄԻՏՔԻ ՎԻՃԱԿԸ

Մեր ելեմուտքի վիճակը անդադար գլխաւոր նիւթ եղած է եւրոպական մամուլին եւ միշտ ալ մութ գոյներով նկարագրուած է: Ես կը կարծեմ, որ Եւրոպան պէտք է մեր տնտեսական յարաբերութիւններէն գոհ ըլլայ: Մենք, Յունաստանի, Ռումանիոյ կամ ուրիշ տէրութիւններու նման չչարժեցանք. անարդարութիւն է Թուրքիոյ «սնանկութեան» մասին խօսիլը: Ամէն պարագայի, մենք 1885-ին, երբ վախճառու տուրքեր մեզմէ կը գանձէին, սկսանք վերաքննել մեր պարտաւորութիւնները: Անկէ ի վեր մեր հաւատացեալները եթէ նուազ տոկոս կը ստանան, սակայն ատոր կրկնապատիկը կը ստանային նախապէս: Ելեմուտքի կանոնաւոր վիճակը, գիտեմ, կրկնաբաժանագրութիւն կը պահանջէ. դժախտաբար սակայն մեր տէրութեան Եւրոպի մէջ կեդրոնացումի հետեւութեամբ միայն մէկ նահապետական տրնտեսութիւն մնաց:

ԵԼԵՄՈՒՄԻՏՔ – ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նորէն նոր փոխառութիւն մը յաջողութեամբ ստորագրեցինք: Ի՞նչ եւ ո՞րքան պիտի օգնէ մեզի: Պետական մեր դրամարկը առաջուան պէս նորէն դժուար կացութեան մէջ է: Քանի, քանի անգամներ արտասահմանէն ճարպիկ մարդիկ կանչեցինք կազմակերպելու համար

մեր տնտեսական վիճակը, եւ նորէն ի գուր: Բանակին կոկորդը եւ պաշտօնէութիւնը երկրին բոլոր հարստութիւնը կը կլլեն: Մեր վաճառականութիւնը կը քնանայ: Ոչ ոք հոգ կը տանի անոր զարգացման: Հայերու եւ յոյներու վաճառականութիւնը բաւարար չէ մեր երկրին յառաջադիմութեան. իսկ մեր էֆէնտիները որեւէ սէր չունին վաճառականութեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Եւրոպական տուրեւաւոր մեր հայկական դէպքերուն գէշ աչքով կը նայի, չատ գէշ, քանի որ իրականին է: Արտասահմանեան մեծ հիմնարկներ կը մերժեն փոխառութիւններ տալ նոյնիսկ մեր բանակին. այսպիսի սնոտի սարսափ մը բոլորովին աւելորդ է: Ամէն պարագայի, ՄԵԾ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐՈՒ ԿԸ ՊԱՏԿԱՆԷՐ մինչեւ վերջին դէպքերս, երբ չատեր մեր երկրէն հեռացան եւ գացին Անգլիա կամ Ամերիկա: Այսու պէտք է մեր Պոլիսը սնանկանա՞յ: Հայ վաճառականը որո՞ւն հետ գործ կը տեսնէր: Ան անխիղճ կերպով կողոպտեց մեր ժողովուրդը: Սակայն այն աղբիւրներն, ուրկէ ՀԱՅԵՐԸ իրենց բարգաւաճումն ստեղծեցին, կը մնան նոյն եւ չեն կնքուած: Այժմ ուրիշներ պիտի գան եւ նորէն շահագործեն:

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Ոչ մահմետականներուն զինուորական ծառայութիւնը բանդագուշանք է: Ինքնասպանութեան հաւասար է, եթէ մենք՝ իբրեւ «տիրող տարր» մեր բանակին մէջ հաւասարութիւն հաստատենք օտար հաւատացեալներու հետ: Այդ պարագային, մենք պարզապէս պատին գամուած պիտի մնանք: Սիրելի պատրիարքները ինչո՞ւ դժուարութիւններու առջեւ գտնուին: Իրենց քրիստոնեայ տարրին հանդէպ, իրաւամբ պէտք է հոգածու ըլլան, որ հայ զինուորները իրենց մահմետական ընկերներէն չվարակուին եւ իսլամ չըլլան: Արդեօք մեր քրիստոնեայ զինուորներուն համար զօրանոցներուն մէջ աղօթատեղիներ՞ չինենք ու քահանաներ՞ կանչենք... Անմիտ բան է նաեւ քրիստոնեայ բանակներու պահանջը: Ահա հոս է քաղաքական մեծ վտանգը. այսինքն՝ «բանակի մէջ բանակ» ստեղծելը: Ի վերջոյ պիտի գար նաեւ կարգը «յունական», «պուլկարական» բանակներու... Առաջին լուրջ պարագային արդէն պէտք է մեր սուրբը վար դնէինք: Մենք

իրաւունք ունինք դժգոհ ըլլալու, որովհետեւ մեր երկրին քրիստոնեաները, փոխանակ մահմետական դառնալու եւ կամ երկրէն հեռանալու, եւրոպական տէրութեանց հետ միախորհուրդ մեզի դէմ կը դաւակցին: Դեռ այսօր իսկ միասին կ'աշխատին քրիստոնեայ տէրութիւններու հետ. դեռ չէ դադրած խաչակրութիւնը կիսալուսնի դէմ: Բաժանում մը եկեղեցիի եւ պետութեան միջեւ միայն հնարաւորութիւն կրնայ տալ մահմետական-քրիստոնեայ միակ բանակի մը ստեղծման: Սակայն ոչ մէկ խալիֆա տեղի պիտի տայ այսպիսի անմիտ միութեան մը: Իսլամութիւնը պէտք է եւ ստիպուած է պետական կրօնք մնալ: Հետեւաբար նաեւ քրիստոնեայ աշակերտները մեր զինուորական դպրոցներուն պէտք է միշտ ուրբաթը տօնախմբեն իբրեւ կիրակի, իսկ իրենց «կիրակի» օրն աշխատանքի լծուին:

ՊԱՂՏԱՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Պարոն Օփփենհայմի գրութիւնը՝ «Միջերկրականէն մինչեւ Պարսից ծով», սքանչելի կերպով կը պատկերացնէ Եփրատ-Տիգրիս ցամաքամասին տնտեսական վերելքը: Ինծի ներկայացուած այս սքանչելի գիրքը Միջագետքի ապագային զարգացման կը նայի. վերջապէս պէտք է լուրջ առնենք Պաղտատ գիծի շինութիւնը եւ սկսինք գործի՝ հակառակ որ անգլիացիները ամէն ճիգ կը թափեն ի դերեւ հանելու այս ծրագիրը: Հին ճամբան, որուն վրայ երբեմն Եւրոպա-Հնդկաստան եւ Հնդկաստան-Եւրոպա վաճառականութիւնը կը բանէր, հիմա նորէն պիտի հաստատուի շնորհիւ Պաղտատի գնացքին: Սուրիոյ հետ կապուած այս ուղին, որ իրարու կրնայ կապել Պէյրութ-Ալեքսանդրէթ-Հայֆա քաղաքները, տնտեսական ու զինուորական մեծ առաւելութիւններ կրնայ ներկայացնել մեզի: Եւ եթէ մենք կարենանք երկուորեակ Եփրատ-Տիգրիսի առատ ջուրերը օգտագործել, հին դրախտը վերստին պիտի կանգնի մեր երկրին մէջ: Գերմանական դրամով ու ճարտարապետներով եւ Աստուծոյ օրհնութեամբ պիտի կարենանք ի գլուխ հանել այս մեծ ծրագիրը: Կարեւորն այն է, որ գերմանական քաղաքականութիւնը չկքի անգլիականին ներքեւ:

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Գիտեմ, որ կեանքիս դէմ դաւողներ կան. դժգոհ են ինձմէ: Ես ի վիճակի չեմ եղեր իմ փակարանիս մէջ պետութեան յարաբերութիւն-

ները ճշդիւ դատելու: Սակայն իմ տեղեկատու պաշտօնէութիւնս այնպէս լաւ կազմակերպուած է, որ ինծի բան չի կրնար պատահիլ: Իմ թշնամիներս կ'առարկեն, որ մերթ ասոր ու մերթ անոր ազդեցութեան տակ կը գտնուիմ. այդ սխալ է: Նոյնիսկ Իզդէթ պէյը իմ վրաս ազդեցութիւն չունի. անշուշտ, որ ես զինքը կը գնահատեմ, որովհետեւ արտակարգօրէն խոհեմ մէկն է: Ես պաղարեամբ միտ կը դնեմ ամենուն եւ կամաց-կամաց կու գամ իմ որոշումիս, զոր անպայման կը գործադրեմ: Իմ գործերս քննադատելը դիւրին է. անոնք կը մոռնան, որ ես ոչ միայն պետութիւններու պահանջները նկատի պիտի ունենամ, այլ նաեւ թէ ի՞նչ պիտի ըսեն առ այդ նաեւ իմ մահմետական հպատակներս: Ես խալիֆա եմ՝ հաւատացեալներու գլուխ, եւ ամենէն աւելի իբրեւ այդպիսի պէտք է գործեմ:

ՖՈՒԱՏ ՄԱՐԱԶԱԽՏԸ

Մարաջախտ Տէյի Ֆուատը շատ քաջասիրտ կրնար ըլլալ, եթէ չգիտնայի, որ ան «յիմար» կը կոչուի: Ան կը համարձակի իր 10 էջնոց տեղեկագիրով եռանդի եւ ձեռնարկութեան ոգիի պակասներ գտնել: Թուրքիոյ վերածնունդը չի կրնար ինքնաձին ըլլալ. պէտք է ընդառաջ ելլել յառաջդիմութեան, գիշեր-ցերեկ աշխատիլ, որ չուն քրիստոնեաները մեզ չգերազանցեն: Ան կ'այսպէս մեր բանակին յետամնացութիւնը: Յայտնի է, որ պարզ նախանձէ տարուած՝ կը խօսի միւս զօրավարներուն վրայ: Կոյց փաշան մինչեւ անգամ աշխարհի առաջին գիրքը կը գրաւէ: «Իմ զինուորներուս ոչինչ կրնայ պատահիլ» կ'ըսէ: Ֆուատը կ'երեւայ կեաւուր (չուն) մըն է. այլապէս պիտի գիտնար, որ հոգեկան պայքարը մարդս երջանիկ չ'ըներ: Թող տանք քրիստոնեաները իրենց Արեւմուտքի քաղաքականութեան մէջ: Պէտք չունինք ատոր համար իրենց նախանձելու: Ֆուատը քաղաքականութեան հիւանդութեամբ վարակուած է: Լաւ կ'ըլլայ, որ զինք հեռացնենք, որպէսզի ուրիշներն ալ չվարակուին:

ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԳԼԽԱՐԿԸ

Շէյխ-իւլ-իլամը խենթ է: Ի՞նչպէս կրնայ պայքարիլ զինուորական նոր գլխարկի մուտքին դէմ: Կարծես ասով ամբողջ տէրութիւնը պիտի կործանի... Զիւաւոր բանակը արդէն չատոնց ի վեր քալիփա չի՞ գործածեր, առանց արդար միւսլիմանէ մը գանգատ լսելու: Նոյնիսկ

եթէ մեր զինուորներու գլխուն վրայ փրուսական սրածայր գլխարկները դնենք, այս ի՞նչ կապ ունի մեր կրօնքին հետ: Այլեւս ժամանակն է, որ պայքարին հին եւ անմիտ նախապաշարումներուն դէմ եւ դանոնք նետենք աղբանոց: Նաեւ հին սովորութիւնը՝ երբեք բաց գլխով չերեւալու, վերջապէս պէտք է ջնջել ու անհետացնել: Մեր բժիշկները պէտք է յայտնապէս բացատրեն, որ ֆէսի այդ գործածութիւնը խենթական եւ հակառողջապահական է:

ԳՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Պէտք է գրաքննութիւն հաստատենք: Աւելորդ են առ այս եղած մեղադրանքները: Մեր եւ արեւելքի յարաբերութիւնները տարբեր են: Հոն ժողովրդական կրթութեան համար մամուլի կեցուածքը կրնայ աւելորդ նկատուիլ. սակայն մեր քով ժողովուրդը շատ պարզամիտ է եւ քիչ կրթուած: Մենք պէտք է մեր պետական պաշտօնեաները որպէս տղայ նկատենք, եւ իսկապէս՝ անոնք խոշոր տղաներ են: Ինչպէս որ ծնողք եւ դաստիարակներ կը հսկեն, որ երիտասարդութիւնը գէշ գիրք մը ձեռք չանցընէ, այսպէս ալ տէրութիւնը պարտք ունի գէշն ու թունաւորը հեռացնելու: Իսկապէս ցաւալի է, որ ֆրանսական շատ մը թեթեւօղիկ վէպեր մուտք գործած են մեր հարէմներու մէջ. ասոնք սիրտ եւ զգացում կը թունաւորեն: Տկար մխիթարութիւն մըն է, երբ կ'ըսենք թէ թրքական գրավաճառները չեն ներածողները, այլ միշտ ֆրանսացիները, յոյներն ու ՀԱՅԵՐՆ են, որ այս աղտեղութիւնները կը ներածեն: Այո՛, այս յոյներն ու ՀԱՅԵՐԸ՝ այս ստախօսները... Հետեւաբար, պէտք է գրաքննութիւնը մնայ:

ՊԱՔՇԻՇ

Մեր Թուրքիոյ մասին գրողները՝ ֆրանսացի, գերման թէ անգլիացի, անպայման պէտք է, որ գլուխ մը յատկացնեն մեր պաքչիի գրութեան. այո՛, ֆրանսական հրատարակութիւն մը նոյնիսկ կը խօսի «սուլթան պաքչի»ի մասին, որ փատիշահէն աւելի ուժեղ է եղեր: Սակայն պաքչիչը այնքան ալ գէշ բան մը չէ. ամենէն աւելի արեւմուտքի մը չի գիտեր, թէ ինչ ծածկուած է անոր ներքեւ: Ընդհանրապէս «նուէր» մը կը նկատուի: Այո, քիչ պարագաներուն այդպէս է. ցարերու թագաւորութեան մէջ եւս աւելի «Յար պաքչի»ներ կան, քան մեր քով «սուլթան պաքչի»ներ: Ռուսական այդ անխիղճ յատ-

կացումը մեր քով գոյութիւն չունի: Եւրոպացիք, ինչպէս նաեւ մենք, կանոնաւոր ռոճիկներ ունէինք նախորդ դարերուն. պաշտօնեաները կ'ընտրէին իրենց աշխատանքի վայրերը: Արեւմուտքի քահանաները մինչեւ այսօր իրենց հօտին պաքչիչին կապուած են: Եւրոպացի հեղինակներուն գրգռութիւնը մեր պաշտօնեաներու «անամօթ» պաքչիչառումներու դէմ՝ անհիմն է: Մարդիկ կը մոռնան, որ Արեւմուտքի պայմանները տարբեր են. անոնք բարոյազուրկ եւ անպատիւ կը նկատուին, երբ պաքչիչ պահանջեն: Սակայն պետութեան տուած խեղճ ու կրակ ամսականով կարելի չէ ապրիլ: Հետեւաբար շատ բնական կը գտնեն, որ իրենց ջանքերը բացառիկ կերպով վարձատրուին: Դարերու սովորութեամբ պաքչիչը անփոփոխելի եւ երկրին յատուկ հիմնարկ մը եղած է: Օտար մը բնական է չի հասկնար, որովհետեւ իր հայրենիքի կանոններով կը չափէ ու կը զարմանայ, որ թրքական կայսերական պաշտօնեայ մը ինչպէ՞ս կրնայ այսպէս վարուիլ: Մեր անբախտ ելեւմուտքին պատճառաւ երբեմն վճարումները կը յետաձգուին: Ընտանիքը անօթութեան մէջ է, հետեւաբար պաքչիչը կրնայ օգտակար ըլլալ: Այս մարդկայնօրէն ըմբռնելի է. եւ ամէն գերման, ֆրանսացի կամ անգլիացի պաշտօնեայ նոյն վարմունքը պիտի ցուցնէր նման պարագաներուն: Պաքչիչի այս դրութիւնը դժբախտութիւն մըն է ի մասնաւորի մեր պետութեան համար, ուր ահագին գումարներ մուտքի մէջ կը կորսուին: Մեր քով ամէն պաշտօնեայ իրաւունք ունի պաքչիչ պահանջելու: Ելեւմուտքի վերանորոգում մը նոր մուտքերու աղբիւրներ միայն կրնան փոփոխութիւն յառաջ բերել:

ՀէՃԱԶԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Հէճագի երկաթուղին՝ իմ հին երազս, աւարտելու վրայ է: Իմ ամենալաւ գործակիցս եղաւ իմ Իզգէտս (2-րդ քարտուղար եւ սիւրելին սուլթանին): Ան եռանդով նուիրուեցաւ այս իմ զաղափարիս իրագործման. երախտապարտ եմ իրեն: Կը զարմանամ թէ ինչպէս արագութեամբ բոլոր մահմետական երկիրներէն, ի մասնաւորի նաեւ Հնդկաստանէն, զրամները հոսեցան: Նոյնիսկ Փարիզ ու Պերլին բնակող քրիստոնեաներ մասնակցեցան այս գործին, ի մասնաւորի այն գեղեցիկ մետալներուն համար, զորս խորամանկ Իզգէտը տալել տուած էր մեծագումար նուիրատուներուն համար: Մէքքէի այս մեր երկաթգիծը ցուցուց, որ մենք ատակ ենք յառաջդիմութեան եւ թէ հաստատուն կամքով կրնանք Անգլիան խաղի բերել: Ինչե՛ր չորին

անոնք, արգիլելու համար Հէճազի երկաթուղին. ահա աւարտելու մօտ է, եւ մենք այլեւս պէտք չունինք Սուէզի ջրանցքին: Մենք հիմա Իսթանպուլի եւ Մէքքէ-Մէդինայի միջեւ ունինք երկաթուղի մը եւ կրնանք ամէն ատեն մեր բանակները ցամաքամասով ուղարկել:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Դեռ միշտ ու միշտ մեզ կ'ամբաստանեն, որ Անատոլուն մենք անտառաթափ ենք, եւ թէ մեր քով անտառի վարչութիւնը ոչինչ կ'ընէ: Շատ լաւ. այս երկրորդ կշտամբանքը կրնայ արդարացի ըլլալ. թէեւ նորէն զանազան երիտասարդներ Եւրոպա ղրկեցինք անտառային տնտեսութեան ուսման հետեւելու, թէեւ մենք արդէն քանի մը տկար փորձերու դիմած ենք: Ամէն պարագայի, ապագային յարմար դաշտագետներն ծառերով պիտի բեռնաւորուին. բայց ամենէն աւելի պիտի խնայենք մեր սակաւ անտառներուն: Բոլորովին անարդար է ըսել, որ մենք պատասխանելու ենք մեր երկրին ամայութեան: Երբ մենք հոս եկանք ու գրաւեցինք, արդէն ամէն կողմ դաշտագետին էր ու լեռներն ալ ծառազուրկ: Հին յոյները, ինչպէս նաեւ միջնադարեան վենետիկցիք ու ճենովացիք յանցաւոր են այս անտառամերկութեան: Սակայն անտառի մեծագոյն թշնամին մեր քով եղած է այծաբուծութիւնը, որ հնագոյն ժամանակներէ ի վեր մեր երկրին մէջ մուտք գործած է: Լեռներու նման զոհ չեն մնար տերեւներու եւ ծիլերու ճաշակումով, հապա նաեւ ծառին ամբողջ փոճոկիկը կը փրցնեն: Եթէ կ'ուզենք զարգացնել անտառամշակութիւնը, ամենէն առաջ պէտք է սահմանափակենք այծերու աւերները. այն ատեն է, որ կրնանք անտառազարգացումի մասին մտածել:

ԱԻԱԶԱԿԱՅԻՆ ՀՐԷՇՈՒԹԻՒՆ

Հայտնի է նշանաւոր աւազակապետ Աթանասիոսի յանդուգն յարձակումը չոգեկառքի մը գերմանացի ճանապարհորդներու վրայ: Անլուր դէպք մըն է ֆրանսացի Շվալիէի վրայ (Քասանտրայի արծաթահանքի տնօրէնը) յարձակումն ու առեւանգումը: 15,000 թրքական լիրա կը պահանջեն ազատ արձակելու համար. Ֆռաթելլի Ալլամասնակից ըլլանք, քանի որ ֆրանսական հպատակի մը մասին է խօսքը: Յաւալի է, որ այս բոլոր դէպքերու մէջ տուժողը մենք կ'ըլլանք: Քանի մը տարի առաջ ալ Պր. Ռայմոնտի եւ տիկին Պոանցոյի

համար ստիպուեցանք քառորդ միլիոն ֆր. վճարել: Միշտ յոյներն են այսպիսի անամօթ գործեր կատարողները: Ասոնց յարձակումները, առեւանգումները, կեղեքումները պէտք է ըսել, որ շատ ճարպկութեամբ եղած են: Ամենէն գէշը այն է, որ գրեթէ միշտ, երբ կալանաւորուած են մեր ոստիկաններէն, իրենց դեսպանը երեւան կու գայ եւ ազնուօրէն կը յայտարարէ, որ իրենց հպատակն է, այնպէս որ շատ անգամ զանոնք կ'ազատէ կախաղանի պարանէն:

ՆԵՐՔԻՆԻՆԵՐ

Ինծի համար անըմբռնելի է եւրոպացիներուն իբրեւ ներքինի մեր կանանոցներուն մէջ աշխատելու յայտարարութիւնը: Մէկ չարթուան մէջ 3 նամակ ստացած եմ. Փարիզէն՝ երաժիշտէ մը, գերման դեղաւաճառէ մը եւ սաքսոնացի վաճառականէ մը: Արտակարգ նեղութեան մէջ կ'երեւան այս մարդիկ, որ ոչ միայն կ'ուրանան իրենց հաւատքը, այլ նաեւ ինքզինքնին կ'ենթարկեն թիփատումի (կրճատումի): Յայտնի է, որ այս մարդիկ չեն ըմբռնած թէ ինչ կը նշանակէ ներքինի ըլլալ. եւ դեռ աւելին, չեն գիտեր, որ ես այս բարբարոս սովորութիւնը մեր մէջէն վերցնել կ'ուզեմ: Պէտք չէ՞ արգահատինք այս խեղճ էակներուն, որոնք իրենց երիտասարդութեան ծախուած են ընչաքաղց ծնողներէ ու յանձնուած տխուր նուագումի: Իմ անձնական բժիշկս՝ Մալոուկէնին, կը հաստատէ, որ 70 առ հարիւրը այս կրտումով կը կորսուին: Պէտք է վերջ դնել այս ներքինի կեանքին. ծերացած մարդիկ ալ կրնան լաւ կերպով կանանոցի աշխատանքները:

ՄԻՏՀԱՏ ԵՒ ՀԱՄԱԽՈՂՆԵՐ

Սարսուռ մը կը զգամ, երբ կը մտածեմ թէ պետական մարմինը ինչ սարսափելի փտութեան մէջ էր, երբ ես գահ բարձրացայ: Պատերազմի նախարար Ռէտիֆ, այդ ինչ տխուր նկարագիր ունէր. ոչինչ կարգի էր, երբ Ռուսաստան պատերազմի անցաւ: Փաքէ՛՛ զնդապետը նոյն ժամանակուան թրքական բանակին վերանորոգիչը, ճարպիկ մէկն էր եւ կ'ուզէր լաւագոյնն ընել. սակայն խաբեբայ Ռէտիֆին հետ չկրցաւ գլուխ ելլել: Միտհատ կը կատողէր ինծի դէմ լուռումունջ եւ իր օգնականներով ինծի դէմ կը դաւէր: Իմ հաւատարիմներուս արթնութեան շնորհիւ միայն կրցայ ազատիլ: Իմ քաջած նեղութիւններս ուրիշ մէկը պիտի չկարենար տանիլ. եւ զարմանալի չէ, որ այս փոր-

ձառութենէն ետք զգուշաւոր եղայ: Ես ան գիտեմ, որ շատեր իմ ջղային տկարութենէն օգտուիլ ուզած են, եւ թէ այդ գտիչ հեղինակները ողորմելի գոհհիկներ են, ինչպէս նաեւ մեր Շէրիան կը դատապարտէ լրտեսութիւնը. սակայն, ես ի՞նչպէս կրնամ զիս չըջապատող վտանգներէն ինքզինքս պահպանել, եթէ ոչ տարածուն հսկողութեամբ միայն: Նոյնը չէ՞ միւս տիրակալներու, ինչպէս՝ ցարին վիճակն ալ....:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀՈՒՄ

(1908)

Անգլիոյ գործը աւարտած է: Մեր բանակը եռուզեռ խմորումի մէջ է. երկու մասի բաժնուած է: Հիմա մեզի մէկ փրկութիւն միայն կայ, ազատելու համար անգլիական նենգութիւններէն: Ես անձամբ պէտք է գլուխ անցնիմ այդ «նորոգում» ըսուածին. պէտք է տեղի տամ անգլիական գործելակերպին եւ անձամբ հրատարակեմ Սահմանադրութիւնը: Այս է իմ վերջին հարուածս, որ կրնամ տալ խաչաձեւելու համար Անգլիոյ խորամանկ ծրագիրները: Թերեւս յետոյ այս մարդիկ, որոնք այսօր յղփացած են նորոգութեան գաղափարներով, իրենք անձամբ պիտի տեսնեն, որ իրենց այս նոր ուղին զիրենք դէպի անդունդ կ'առաջնորդէ: Յուսանք, որ վերջի ժամուն ճանչնան, թէ Թուրքիան այն ատեն միայն կրնայ դեռ ապրիլ, երբ բոլոր օսմաններն հաւատարմութեամբ զիրար բռնեն մեր սուրբ օրէնքներու նախկին եւ հաստատուն հիման վրայ: Այլապէս մենք աւար ենք քրիստոնեայ պետութիւններու, որոնք անհամբեր մեր կորուստին կը սպասեն¹:

¹ Եսադեան Գ., Արդուլ Համիդ Բ, Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 312–336, Ալի Վահիդ բեյ, Սուլթան Արդուլ Համիդի Հուշերը և մտածմունքները, Զամալյան Ա., Արդուլ Համիդի Հիշողութիւնները, Հորիզոն, Թիֆլիս, 1913, թ. 41–44:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Յօդուած 1. – Օսմանեան պետութիւնը՝ ներկայ երկիրներէն ու մասերէն եւ արտօնեալ (միւլթաղէ) գաւառներէն բաղկացեալ եւ միամարմին ըլլալով՝ եւ ո'չ մէկ ժամանակի մէջ եւ ո'չ մէկ պատճառաւ բաժանուած չընդունիր:

2. – Օսմանեան պետութեան մայրաքաղաքը՝ Կոստանդնուպօլիս քաղաքն է. եւ յիշեալ քաղաքը՝ օսմանեան ուրիշ քաղաքներէն բացառիկ ո'ր եւ է արտօնութիւն եւ առանձնաչնորհ չունի:

3. – Օսմ. կայսրութիւնը (սուլթանաթ), որ իսլամութեան վեհագոյն յաջորդութիւնը (սիլաֆէթ) կկրէ, Ալ-Օսմանի ազգատոհմէն երիցագոյն որդւոց յատուկ է՝ ըստ վաղեմի սովորութեան:

4. – Սուլթանը՝ յաջորդութեանը պատճառաւ, իսլամ կրօնին պաշտպանը, եւ համայն օսմանեան հպատակաց իշխանն ու թագաւորն է:

5. – Սուլթանին անձն՝ նուիրական եւ անպատասխանատու է:

6. – Ալ-Օսմանի ազգատոհմին ազատական իրաւունքն, անձնական գոյքն ու կալուածքն, եւ ցկեանս յատկացեալ թոշակն՝ ընդհանրութեան երաշխաւորութեան ներքեւ են:

7. – Սուլթանին նուիրական իրաւունքներն են՝ – Նախարարները կարգել ու հրաժարեցունել. – Աստիճան, պաշտօն ու պատուանշան տալ. – Արտօնեալ գաւառաց պաշտօնավարութեանց վաւերացումն՝ իրենց արտօնութեանց պայմաններուն համաձայն. Ստակ տալել. – Աղօթից մէջ՝ իւր անուան յիշատակութիւնը. – Օտար տէրութեանց հետ դաշնագրութիւններ կնքել. – Պատերազմ ու հաշտութիւն հրատարակել. – Հրամանատարութիւն ցամաքային ու ծովային զօրութեանց. – Զինուորական շարժում. – Շէրիի ու կանոնաց տրամադրութեանց գործադրութիւն. – Վարչական պաշտօնատանց գործառնութեանց վերաբերեալ կանոնադրութիւններ սահմանել. – Կանոնական պատիժներն թեթեւցունել կամ ներել. – Ազգային ժողովոյ բացումն ու դադարումն, եւ ի հարկին՝ լուծումն, երեսփոխանաց նոր ընտրութիւն ըլլալու պայմանաւ:

Օսմանեան պետութեան հպատակաց
ընդհանուր իրաւունքը

8. – Օսմանեան պետութեան հպատակ եղող անհատներուն ամենուն ալ՝ ինչ կրօնքէ եւ դաւանութենէ ալ որ ըլլան՝ օսմանցի (օսմանլը) կրսուի անխտիր: Օսմանցիի հանգամանք կստացուի կամ կկորսուի՝ ըստ կանոնի որոշեալ պարագայից համաձայն:

9. – Համայն օսմանցիք՝ իրենց անձնական ազատութեան տէր են, եւ ուրիշին ազատական իրաւանց դէմ չը գործելու պարտաւոր:

10. – Անձնական ազատութիւնը՝ պաշտպանեալ է ամեն տեսակ յարձակմանէ: Ո՛չ ոք կպատժուի, կանոնին սահմանած պատճառներէն ու եղանակներէն զատ պատրուակաւ (պէհանէ) մը:

11. – Օսմանեան պետութեան կրօնքը՝ իսլամ կրօնքն է: Այս հիմունքը պաշտպանելով հանդերձ, պետութեան պաշտպանութեան ներքեւ է՝ Տաճկաստանի մէջ ծանուցեալ բոլոր կրօնքներուն ազատ կիրառութիւնը, պայմանաւ, որ հասարակաց խաղաղութիւնը չվրդովեն եւ բարոյականութիւնը չապականեն: Նաեւ՝ պետութեան պաշտպանութեան ենթարկեալ է, այլեւ այլ ժողովրդոց տրուած կրօնական արտօնութեանց՝ ինչպէս մինչեւ ցարդ նոյնպէս եւ այսուհետեւ՝ գործադրութիւնը:

12. – Ազատ է տպագրութիւնը, կանոնական սահմանին մէջ:

13. – Օսմանեան հպատակն՝ առեւտրական, արհեստական եւ երկրագործական ամեն տեսակ ընկերութիւններ կազմելու ազատ է, օրինաց ու կանոնաց սահմանին մէջ:

14. – Օսմանեան հպատակներէն մէկ կամ մէկ քանի անձինք՝ եթէ կա՛մ իրենց անձնականին եւ կա՛մ հասարակաց դէմ օրինաց ու կանոնաց հակառակ վարմունք մը տեսնեն՝ ինչպէս գործին բուն տեղին խնդրագիր տալու, նոյնպէս ստորագրեալ խնդրագիր մը՝ իբրեւ ամբաստանող՝ ազգային ժողովոյն մատուցանելու, եւ պաշտօնակալաց արարքներուն դէմ զանգատելու իրաւունք ունին:

15. – Դաստիարակութիւնն ազատ է: Ամեն օսմանցի՝ ընդհանուր եւ մասնաւոր դաստիարակութիւն ընելու ազատութիւն ունի, որոշեալ կանոնաց հետեւելու պայմանաւ:

16. – Համայն վարժարանք՝ պետութեան վերատեսչութեան ներքեւ են: Օսմանեան հպատակաց կրթութիւնը՝ միօրինակ եւ կանոնաւոր ըլլալու համար՝ պէտք եղած միջոցներուն պիտի ձեռնարկուի: Այլեւայլ ազգաց կրօնական դաւանութեանց վերաբերեալ ուսմանց եղանակին չպիտի դաչուի:

17. – Համայն օսմանցիք՝ կանոնին առջեւ երկրին իրաւանց եւ պարտեաց մասին հաւասար են, բաց ի կրօնական եւ դաւանական պարագաներէ:

18. – Պա՛յման է, որ օսմանեան հպատակ մը՝ պետութեան պաշտօններու մէջ գործածուելու համար՝ պետութեան պաշտօնական լեզուն եղող թուրքերէնը գիտնայ:

19. – Առ հասարակ ամեն հպատակք՝ իրենց արժանեաց եւ ընդունակութեան համաձայն յարմար պաշտօններու կրնդունուին:

20. – Որոշեալ տուրքերն՝ յատուկ կանոնաց համաձայն՝ բոլոր հպատակաց՝ իւրաքանչիւր կարողութեան համեմատ՝ կրաչխուին:

21. – Ամեն ոք ապահովեալ է՝ ըստ օրինի տէր եղած գոյքին (մալ) եւ ստացուածոց (միւլը) մասին: Եւ ո՛չ մէկուն ստացուածքը չառնուիր, մինչեւ որ՝ հասարակաց օգտին համար պէտք ըլլալը չհաստատուի, եւ մինչեւ որ՝ ըստ կանոնի բուն արժէքն կանխիկ չվճարուի:

22. – Տաճկաստանի մէջ ամենուն բնակարանն (մէսքէն) եւ օթեւանը (մէնզիլ) յարձակմանէ կպաշտպանուի: Կառավարութեան կողմանէ՝ բռնի եւ ո՛չ մէկուն բնակարանն ու օթեւանը չմտնուիր, կանոնին որոշած պարագաներէն զատ:

23. – Ո՛չ ոք կրնադատուի՝ դատավարութեան համար նոր հաստատուելիք կանոնաց համաձայն երթալիք դատարանէն ուրիշ դատարան մը երթալ:

24. – Արգիլեալ են գրաւումն (միւսատէրէ), տարապարհակ վարել (անկարիա) եւ տուգանք (ճէրիմէ), ի բաց առեալ պատերազմի ժամանակ ըստ օրինի որոշուելիք տուրքերն ու պարագաներն:

25. – Երբէք մէկէ մը ստակ մը չառնուիր, տուրք եւ ուրիշ անունով, քանի որ կանոնով մը հաստատուած չէ:

26. – Վերջնական կերպիւ եւ իսպառ արգիլեալ են՝ չարչարանք (խսէնճէ) եւ այլ ամեն տեսակ տանջանք (էզիյէթ):

Նախարարք պետութեան

27. – Մեծ եպարքոսութեան եւ Շէյխ-իւլ-իսլամութեան պաշտօնները՝ Սուլթանին կողմանէ կյանձնուին իրեն վստահացած անձանց: Ուրիշ նախարարաց պաշտօնակալութիւնք ալ՝ կայսերական հրամանաւ կգործադրուին:

28. – Նախարարաց ժողովը՝ մեծ եպարքոսին նախագահութեամբ կզումարի, եւ ներքին ու արտաքին կարեւոր գործոց կեդրոնատեղին է: Որոշումներէն ո՛րը որ հրամանի կարօտ է՝ կայսերական հրամանաւ կգործադրուի:

29. – Նախարարաց ամեն մէկը, իւր ճիւղին վերաբերեալ խնդիրներէն՝ իւր իրաւասութեան ներքեւ գտնուողները ըստ օրինի կգործադրէ. իսկ գործադրութիւնը իւր իրաւասութենէն դուրս եղողները կներկայացունէ մեծ եպարքոսին, եւ նա ալ՝ խորհրդակցութեան կարօտ չեղածներուն համար պէտք եղած գործողութիւնը կընէ, կամ Սուլթանին հրամանը կընդունի. բայց խորհրդակցութեան կարօտ եղողները նախարարաց ժողովոյն հաղորդելով՝ կգործադրէ ըստ կայսերական հրամանի: Այս խնդրոց տեսակն ու աստիճանը յատուկ օրէնքով պիտի որոշուի:

30. – Նախարարք պատասխանատու են՝ իրենց պաշտօնին վերաբերեալ խնդրոց ու գործադրութեանց համար:

31. – Երեսփոխաններէն մէկը կամ մէկ քանին՝ եթէ, երեսփոխանական ժողովոյ պարտաւորութեանց ներքեւ եղող խնդրոյ մը նկատմամբ, նախարարի մը պատասխանատուութեան պատճառ տուող գանգատ մը յայտնէ, երեսփոխանական ժողովոյ նախագահը, իրեն տրուած գանգատագիրն (Թագրիր, չիքեայէթի միւշիյը) առ առաւելն երեք աւուր մէջ նախ կյդէ ա՛յն դիւանին (չիւպէ), որոյ պաշտօնն է քննել ըստ ներքին կանոնաց երեսփոխանական ժողովոյ, թէ խնդիրն հա՞րկ է ներկայացունել ժողովին, թէ՛ ո՛չ: Այս դիւանը՝ պէտք եղած քննութիւններն ընելէն, եւ գանգատեալ անձին կողմանէ բաւական բացատրութիւն ստանալէն յետոյ, գանգատին նկատառման (միւզաքէրէ) արժանի ըլլալը մեծագոյն մասամբ հաստատող տեղեկագիր (գարարնամէ) մը կուտայ: Այս գիրը կկարդացուի երեսփոխանական ժողովոյն մէջ, ի հարկին՝ գանգատեալ անձն ալ կհրաւիրուի, եւ նորա կողմանէ անձամբ կա՛մ փոխանորդաբար տրուած բացատրութիւններն ալ լսուելով, երբ ներկայ գտնուող երեսփոխանաց երկու երրորդ մասին բացարձակ առաւելութեամբն կընդունուի, դատաստան պահանջող գիրն (մագպաթա) մեծ եպարքոսին կըտրուի, եւ կայսերական հրամանաւ՝ բարձրագոյն ատենանին կը յանձնուի:

32. – Ամբաստանեալ նախարարաց դատման եղանակը՝ յատուկ կանոնով մը պիտի որոշուի:

33. – Նախարարք՝ իրենց պաշտօնին սահմանէն դուրս, միայն իրենց անձնականին վերաբերեալ ամեն տեսակ դատերու մէջ, օսմանեան հպատակ ուրիշ անհատներէն երբէք տարբերութիւն չունին: Այս տեսակ խնդրոց դատաստանը՝ հասարակաց դատարաններու մէջ կտեսնուի:

34. – Բարձրագոյն ատենանի ամբաստանութեանց քննիչ բաժնին (տայիրէի իթթիհամ) կողմանէ յանցաւոր վճռեալ նախարարն՝ պաշտօնէն կղաղարի, մինչեւ որ ինքզինքը արդարացունէ:

35. – Երբ՝ նախարարաց եւ երեսփոխանական ժողովոյ մէջ անհամաձայնութեան պատճառ եղող խնդրոց մէկուն ընդունելութեան դէմ՝ նախարարք պնդեն, եւ երբ՝ երեսփոխանք մեծագոյն մասամբ եւ բանաւոր պատճառներն մանրամասն յայտնելով վերջնական կերպիւ եւ կրկին ու կրկին մերժեն, – այսպիսի պարագայի մը մէջ, Սուլթանին իրաւասութեան յատկացեալ է՝ կա՛մ նախարարները փոխել, եւ կա՛մ երեսփոխանական ժողովը ցրուել, կանոնական ժամանակին մէջ նոր ընտրութիւններ ըլլալու պայմանաւ:

36. – Ընդհանուր ժողովոյ չգումարուած ժամանակներուն մէջ, եթէ՛ կա՛մ պետութիւնը վտանգէ եւ կա՛մ հասարակաց ապահովութիւնը վնասէ պահպանելու համար անհրաժեշտ հարկ մը երեւան գայ, եւ եթէ՛ այս մասին կանոնի մը հաստատութեան խորհրդածութեան համար ժողովոյն գումարման չներէ ժամանակն, հիմնական օրինաց տրամադրութեանց հակառակ չըլլալու պայմանաւ՝ նախարարաց ժողովոյն կողմանէ տրուած որոշումներն՝ կայսերական հրամանաւ առժամանակեայ կերպիւ իբրեւ կանոն կընդունին եւ կգործադրուին մինչեւ երեսփոխանական ժողովոյ գումարումն եւ տալիք որոշումն:

37. – Նախարարաց ամեն մէկը իրաւունք ունի՝ երբ ուզէ, երկու ժողովոց ալ ներկայ գտնուիլ կա՛մ անձամբ, եւ կա՛մ իւր ստորակարգեալ պաշտօնակալաց գլխաւորներէն մէկն իւր կողմանէ փոխանորդաբար զրկելով, եւ խօսից կարգին մէջ անդամներէն նախադաս ըլլալ:

38. – Եթէ երեսփոխանական ժողովը մեծագոյն մասամբ որոշէ՝ նախարարաց միոյն ներկայութիւնը՝ բացատրութեան մը համար, եւ հրաւեր ըլլայ, նոյն նախարարն կա՛մ անձամբ պիտի ներկայանայ, եւ կա՛մ իւր ներքեւ եղող պաշտօնակալաց գլխաւորներէն մէկն զրկելով՝ եղած հարցմանց պիտի պատասխանէ, եւ եթէ հարկ համարի՝ պատասխանը յետաձգելու իրաւունք պիտի ունենայ՝ պատասխանատուութիւնը իւր վրայ առնելով:

Պաշտօնակալք

39. – Համայն պաշտօնակալք՝ ըստ օրինի որոշուելիք պայմաններով, իրենց ձեռնհաս եւ արժանաւոր եղած պաշտօններուն վրայ պի-

տի դրուին: Այս կերպով կարգեալ պաշտօնակալք՝ պաշտօնէ ո՛չ կհանուին եւ ո՛չ կփոխուին, մինչեւ որ ըստ կանոնի պաշտօնանկութեան պատճառ եղող գործ մը չստուգուի, կամ իրենք հրաժարական չտան, եւ կա՛մ կառավարութեան կողմանէ հարկադրիչ պատճառ մը չտեսնուի: Իրենց պաշտօնին մէջ ուղղութեամբ եւ բարւոք վարուողներն, եւ կառավարութեան կողմանէ հարկադրիչ պատճառաւ մը հանուողները՝ յատկապէս հաստատուելիք օրինաց համաձայն, պիտի յառաջանան, եւ դադարման (թէգայիւտ) ու հրաժարման (մազուլիյէթ) թոշակներու պիտի արժանանան:

40. – Որովհետեւ իւրաքանչիւր պաշտօնակալի պարտաւորութիւնք՝ յատուկ օրէնքով պիտի սահմանուին, ուստի ամեն պաշտօնակալ՝ իւր պարտաւորութեանց սահմանին մէջ պատասխանատու է:

41. – Թէպէտ պաշտօնակալ մը իւր մեծին (ամիր) յարգանք ընծայել պարտի, սակայն հնազանդութիւնը՝ կանոնին որոշելիք սահմանին մէջ պիտի ըլլայ. կանոնի հակառակ խնդրոց մէջ մեծին հնազանդ գտնուիլը՝ պատասխանատուութենէ ազատելու չնպաստէր:

Ընդհանուր ժողով

42. – Ընդհանուր ժողովը՝ աւագաժողով (հիյէթը այան) եւ երեսփոխանական ժողով (հիյէթը մէպուսան) անուններով, զատ զատ, երկու ժողովներէ կբաղկանայ:

43. – Ընդհանուր ժողովոյ երկու մասն ալ՝ ամեն տարի նոյեմբերի սկիզբը կժողովուի, կայսերական հրամանաւ կբացուի, եւ մարտի սկիզբը դարձեալ կայսերական հրամանաւ կգոցուի: Այս երկու ճիւղերուն մէկը՝ միւսին չժողովուած ատենը՝ չկրնար բացուիլ:

44. – Երբ պետութիւնը պէտք տեսնէ՝ Սուլթանը ժամանակէն յառաջ ալ կբանայ ընդհանուր ժողովը, եւ գումարման որոշեալ ժամանակն ալ կկարճէ կամ կերկարէ:

45. – Ընդհանուր ժողովոյ բացման օրը, ի ներկայութեան Սուլթանին, կամ իւր կողմանէ փոխանորդաբար մեծ եպարքոսին, եւ ի ներկայութեան նախարարաց պետութեան, եւ ի միահամուռ ներկայութեան ընդհանուր ժողովոյ երկու մասին ամբողջ անդամոց՝ բացման հանդէսը կը կատարուի, եւ ներկայ տարւոյն մէջ պետութեան ներքին վիճակին ու արտաքին յարաբերութեանց, եւ առաջիկայ տարւոյն մէջ պէտք եղած ձեռնարկութեանց ու միջոցներուն վրայ կայսերական պատգամագիր (նութղը հիւմայուն) կկարդացուի:

46. – Ընդհանուր ժողովոյ անդամ ընտրեալ կամ կարգեալ անձինք՝ ժողովոյն բացման օրը՝ առաջի մեծ եպարքոսին, իսկ եթէ բացման օրը ներկայ չգտնուող ըլլայ՝ ամբողջ ժողովոյն գումարուած ատենը, առաջի նախագահաց կերդնուն հաւատարիմ ըլլալ Սուլթանին ու հայրենեաց, եւ հիմնական կանոնաց տրամադրութեանց, եւ իրենց աւանդեալ պարտաւորութեանց, եւ զգուշանալ՝ ընդհակառակն վարուելէ:

47. – Ընդհանուր ժողովոյ անդամք՝ ազատ են իրենց կարծիքն ու դիտողութիւններն յայտնել. ո՛չ ոք ի սոցանէ կճնշուի ո՛րեւէ խոստմամբ կամ հրահանգով. երբէք չամբաստանուի թէ՛ տուած կարծեացն եւ թէ՛ ժողովին բանակցութեան ատեն արտայայտած խորհրդածութեանցն համար. բայց երբ ժողովին ներքին կանոնադրութեան հակառակ վարուած ըլլայ՝ ըստ այնմ պէտք եղած գործողութիւնը կըլլայ:

48. – Ընդհանուր ժողովոյ անդամ մը անդամակցութեան իրաւունքը կը կորսնցնէ, եթէ՝ ժողովոյն երկու երրորդ մասին բացարձակ առաւելութեամբ որոշուի նորա անհաւատարմութիւնը, հիմնական կանոնաց հակառակ վարուիլն եւ ջնջել ուղելն եւ կա՛մ զօջաբաղութիւնը. եւ կամ եթէ՝ ըստ կանոնի դատապարտուի բանտարկութեան կամ աքսորման պատժով մը: Այսպիսի գործոց դատաստանն ու պատժոյն որոշումը կտեսնէ եւ կվճռէ՝ ա՛յն դատարանն, որու որ անկ է:

49. – Ընդհանուր ժողովոյ անդամոց ամեն մէկը՝ անձամբ կուտան իրենց կարծիքը. ամեն մէկը ազատ են՝ ձեռնպահ մնալ խնդիր մը ընդունելու կամ չընդունելու համար:

50. – Մէկը չկրնար անգամ ըլլալ՝ ընդհանուր ժողովոյ երկու ճիւղերուն ալ:

51. – Ընդհանուր ժողովոյ երկու ճիւղերն ալ չեն կրնար ատեան բանալ, մինչեւ որ իրենց ամբողջ անդամոց կէսէն մէկ աւելին ներկայ չգտնուին. որոշումները կը տրուին ներկայ անդամոց բացարձակ առաւելութեամբ, երկու երրորդ մասին մեծագոյն մասամբն որոշել պայմանեալ խնդիրներէն զատ: Քուէից հաւասարութիւն տեղի ունեցած ատեն, նախագահին քուէն կրկին կհամարուի:

52. – Մէկը երբ իւր անձին վերաբերեալ դատի մը համար խընդրագիր տայ ընդհանուր ժողովոյ երկու ճիւղերէն մէկուն, եւ երբ ստուգուի որ նախ դիմած չէ խնդրոյն վերաբերութիւն ունեցող պաշտօնակալաց, եւ կամ նոցա վերաբերեալ կեղորոնին, կը մերժուի խնդրագիրը:

53. – Նախարարաց ժողովոյն կը վերաբերի նոր կանոնի մը հաստատութիւն կամ արդէն գտնուած կանոնաց մէկուն բարեփոխութիւնը առաջարկել: Աւագաժողովն եւ երեսփոխանական ժողովն ալ իրաւունք ունին՝ իրենց յատկացեալ պարտաւորութեանց սահմանին մէջ գտնուող խնդրոց համար կանոնի մը հաստատութիւն, եւ կամ հաստատեալ կանոնաց մէկուն բարեփոխութիւնը խնդրել. բայց կանխաւ մեծ եպարքոսին միջոցաւ Սուլթանէն հրաման կ'իսնդրուի. եւ եթէ հրաման ելնէ՝ ո՛ր պաշտօնատան որ կ'վերաբերի, անկէջ բացատրութիւն եւ ծանօթութիւն տրուելէն յետոյ՝ Շուրայի-տէվլէթի կյանձնուի ծրագրոյն խմբագրութիւնը:

54. – Շուրայի-տէվլէթի խմբագրած կանոնական ծրագիրք՝ երեսփոխանական ժողովին եւ ապա աւագաժողովին քննութեան ենթարկուելէն եւ ընդունուելէն յետոյ՝ կ'գործադրուին, եթէ՝ գործադրութեան համար կայսերական հրաման ելնէ: Այս երկու ճիւղերէն մէկուն մէջ վերջնական կերպիւ մերժուած կանոնական ծրագիր մը՝ նոյն տարւոյն բացման ժամանակին մէջ դարձեալ վիճաբանութեան չենթարկուիր:

55. – Կանոնական ծրագիրն՝ նախ երեսփոխանական եւ ապա աւագային ժողովոյ մէջ յօդուած առ յօդուած կկարդացուի, եւ ամեն մէկուն վրայ դիտողութիւն ըլլալէն ու ձայնից առաւելութեամբ որոշուելէն յետոյ՝ ամբողջութեանը վրայ դարձեալ որոշում տալով կ'ընդունուի:

56. – Այս ժողովներն՝ նախարարներէն, աւագաժողովոյ ղրկելիք փոխանորդներէն, կա՛մ իրենց անդամներէն եւ կա՛մ ի պաշտօնէ հրաւիրեալ պաշտօնակալներէն չեղող անձինքն, թէ՛ իրենց կամ թէ՛ ժողովրդեան մը կողմանէ փոխանորդաբար խնդիր մը մատուցանելու եկած ըլլան, չեն կրնար ընդունիլ եւ ունկնդրութիւն տալ:

57. – Ժողովոց խորհրդակցութիւնը՝ թուրքերէն լեզուաւ կ'ըլլայ: Վիճաբանութեան ենթարկելի ծրագրոց պատճէնք՝ տպեալ՝ երեսփոխանաց կրածնուին վիճաբանութեան օրէն յառաջ:

58. – Ժողովոց մէջ տրուելիք քուէներն՝ (րէյ) կա՛մ անուանական կոչմամբ (թայինի էսամի) կա՛մ յատուկ նշաններով եւ կա՛մ գաղտնի կը տրուին: Գաղտնի քուէարկութիւնը՝ ներկայ անդամոց մեծագոյն մասին որոշմամբը կ'ըլլայ:

59. – Իւրաքանչիւր ժողովի ներքին բարեկարգութեան հոգսը՝ նոյն ժողովին նախագահին կ'վերաբերի:

Աւագաժողով

60. – Աւագաժողովոյ նախագահն ու անդամք՝ ուղղակի Սուլթանէն կ'ընտրուին, առ առաւելն՝ երեսփոխանական ժողովոյ անդամոց թուոյն մէկ երրորդն չանցնելու պայմանաւ:

61. – Աւագաժողովոյ անդամ կ'ընտրուին հասարակաց վստահութեան արժանացած, պետական գործոց մէջ բարւոք ծառայութիւններ հաստատեալ, եւ համբաւուոր, եւ 40 տարեկանէն վար չեղող անձինք:

62. – Աւագաժողովոյ անդամակցութիւնը՝ ցկեանս է: Նախարարութիւն, կուսակալութիւն, բանակի ընդհանուր հրամանատարութիւն (օրտու միւշիլիքի), գաղասքէրութիւն, ղեսպանութիւն, պատրիարքութիւն, խախամպետութիւն ըրած եւ հրաժարած անձերէն, եւ ցամաքային ու ծովային ֆէրիքներէն, եւ պէտք եղած հանգամանքն ունեցող ուրիշ անձերէն յարմարներն կ'ընտրուին: Իրենց խնդրանքն, պետական ուրիշ պաշտօնի վրայ ղրուողները՝ անդամակցութենէ կ'ելնեն:

63. – Աւագաժողովոյ անդամակցութեան ամսականը 10 հազար դրուչ է: Կառավարական գանձէն ուրիշ անունով թոշակ ունեցող անդամին ամսականն ու ռոճիկն (թային), եթէ 10 հազար դրուչէն վար է, նոյն քանակութեան կ'վերածուի. իսկ եթէ 10 հազար դրուչ կամ աւելի է՝ նոյնը կ'հաստատուի:

64. – Աւագաժողովն՝ երեսփոխանական ժողովէն տրուած կանոնական եւ հաշուէկշռական (մուվազէնէ) ծրագիրները քննութեան ենթարկելով, իւր դիտողութեամբքն հանդերձ՝ կա՛մ իսպառ կ'մերժէ, եւ կա՛մ բարեփոխութեան համար երեսփոխանական ժողովին կ'ղարձուէ, եթէ՝ անոնց մէջ, ըստ սկզբանց (էսասէն), կրօնական գործոց, Սուլթանին իրաւասութեան, ազատութեան, հիմնական կանոնաց տրամադրութեանց, պետութեան երկրին ամբողջութեան, երկրին ներքին ապահովութեան, հայրենեաց յարձակողական ու պաշտպանողական միջոցներուն, եւ հասարակաց բարոյականութեան վնաս տուող կէտ մը նկատէ: Սակայն, ընդունած ծրագրերը հաստատելով՝ մեծ եպարքոսին կ'մատուցանէ: Նոյնպէս, իրեն մատուցեալ խընդրագրերը՝ քննելէն յետոյ՝ եթէ կարեւոր համարի, դիտողութեամբք կ'ներկայացունէ մեծ եպարքոսին:

Երեսփոխանական ժողով

65. – Երեսփոխանական ժողովը կկազմուի՝ անդամոց թիւը, օսմանեան հպատակներէն ամեն մէկ յիսուն հազար արանց գլուխ՝ մէկ հոգի առնուելով:

66. – Ընտրութեան գործը՝ գաղտնի քուէարկութեան եղանակին վրայ հաստատեալ է: Յատուկ կանոնով պիտի որոշուի ընտրութեան եղանակը:

67. – Մէկը թէ՛ երեսփոխանական ժողովոյ անդամ եւ թէ՛ միանգամայն կառավարական պաշտօնակալ չկրնար ըլլալ: Բայց, եթէ նախարարներէն մէկն ընտրուի՝ ընդունելի է. իսկ եթէ ուրիշ պաշտօնակալներուն մէջէն մէկը երեսփոխան ընտրուի՝ ընտրեալին կամքէն կախում ունի ընդունիլ կամ չընդունիլ. եթէ ընդունի՝ պաշտօնէն կհրաժարի:

68. – Երեսփոխանական ժողովոյ անդամ չեն կրնար ընտրուիլ հետեւեալ կարգի անձինք: 1. – Օսմանեան հպատակ չեղողը. 2. – Յատկապէս հաստատեալ օրինաց համաձայն՝ առժամանակեայ կերպիւ օտար կառավարութեան մը պաշտօն վարելու արտօնութիւն ունեցողն. 3. – Թուրքերէն չգիտցողը. 4. – Երեսուն տարեկան հասակը չլրացունողը. 5. – Ընտրութեան ժամանակ մէկուն ծառայութեան մէջ գտնուողը. 6. – Մնանկութեամբ դատապարտուող ու վարկը չուղղողը (իատէի իթիպար). 7. – Յոռի ընթացքով վատահամբաւեալն. 8. – Արգելանաց դատապարտեալ եւ տակաւին նոյն վիճակին մէջ գտնուողը. 9. – Քաղաքական իրաւունքէ զրկեալն. 10. – Օտար հպատակութենէ ըլլալու պահանջման մէջ գտնուողը: Ասոնք չեն կրնար երեսփոխան ըլլալ: Չորս տարիէն ետքը ըլլալիք ընտրութեանց ժամանակ, թուրքերէն կարդալ՝ եւ կարելի եղածին չափ, գրել՝ պայման պիտի ըլլան, երեսփոխան ըլլալու համար:

69. – Երեսփոխանաց ընդհանուր ընտրութիւնը՝ չորս տարին անգամ մը կկատարուի: Ամեն երեսփոխանի պաշտօնավարութեան շրջանը՝ չորս տարի է. սակայն դարձեալ վերընտրելի են:

70. – Երեսփոխանաց ընդհանուր ընտրութիւնը՝ երեսփոխանական ժողովոյ բացման ժամանակն եղող նոյեմբեր ամսէն, առ նուազն՝ չորս ամիս առաջ կսկսի:

71. – Երեսփոխանական ժողովոյ անդամոց ամեն մէկը՝ զինքը ընտրող վիճակին (տայիրէ) առանձինն ներկայացուցիչը չէ, այլ՝ համայն օսմանցւոց ներկայացուցիչը:

72. – Ընտրողք պարտաւորեալ են՝ իրենց ընտրելիք երեսփոխանները, իրենց գտնուած կուսակալութեան վիճակին ժողովրդէն ընտրել:

73. – Երեսփոխանական ժողովը՝ եթէ կայսերական հրամանաւ ցրուի, համայն երեսփոխանաց նոր ընտրութիւնք պիտի սկսին՝ առ առաւելն վեց ամիսէն լրանալու պայմանաւ:

74. – Եթէ երեսփոխանական ժողովոյ անդամներէն մէկը վախճանի, կամ արգելման օրինաւոր պատճառներէն մէկուն ենթակայ ըլլայ, կամ երկար ժամանակ ժողովէն բացակայ գտնուի, կամ հրաժարի, կամ դատապարտութիւն մը կրէ, եւ կամ պաշտօն ընդունելով՝ անդամակցութենէ ելնէ, – տեղը ուրիշը կընտրուի ըստ կանոնի, վերջապէս մինչեւ յաջորդ բացումն հասնելու պայմանաւ:

75. – Պակսած երեսփոխանին տեղ ընտրուելիք երեսփոխանին պաշտօնը՝ մինչեւ յաջորդ ընդհանուր ընտրութեանց ժամանակը կը տեւէ:

76. – Երեսփոխանաց ամեն մէկուն՝ ամեն տարւոյ բացման համար կառավարական գանձէն 20 հազար դրուչ պիտի տրուի, եւ՝ 5 հազար դրուչ ամսականի հաշուով, քաղաքական պաշտօնավարութեան հաստատեալ օրինաց համաձայն, գալու եւ դառնալու համար ճանապարհի ծախք պիտի տրուի:

77. – Երեսփոխանական ժողովոյ նախագահութեան համար՝ երեսփոխանական ժողովը կընտրէ երեք, եւ երկրորդ ու երրորդ նախագահութեան համար՝ երեքական, ընդ ամենը՝ ինը հոգի. եւ Սուլթանին ներկայացուելով, անոնց մէջէն մէկը՝ նախագահութեան, եւ երկուքը՝ նախագահի փոխանորդութեանց համար կորոշուին եւ կը հաստատուին կայսերական հրամանաւ:

78. – Երեսփոխանական ժողովոյ նիստերն՝ հրապարակային են. բայց՝ երբ նախարարաց կամ երեսփոխանական ժողովոյ 15 անդամոց կողմենէ կարեւոր խնդրոյ մը վրայ գաղտնի վիճաբանութիւն առաջարկուի, խորհրդարանին մէջ երեսփոխանք միայն մնալով՝ առաջարկութեան ընդունելութեան կամ մերժման համար մեծագոյն մասին կարծիքը կառնուի:

79. – Երեսփոխանական ժողովոյ բացման ժամանակին մէջ, անդամներէն եւ ո՛չ մէկը բանտարկութեան եւ դատաստանի չենթարկուիր, մինչև որ ժողովը մեծագոյն մասամբ չորոշէ յանցաւորութեան բաւական պատճառ մը գտնուիլը, կա՛մ՝ մինչև որ յանցանք կա՛մ ոճիր մը գործածատեն, եւ կա՛մ գործելէն անմիջապէս յետոյ չընտրուի:

80. – Երեսփոխանական ժողովն՝ վիճարանութեան ենթարկելով իրեն յանձնուած կանոնական ծրագրերը, անոնցմէ՝ զանձային գործառնութեանց եւ հիմնական կանոնաց վերաբերեալները կմերժէ կամ կընդունի եւ կամ կրարեփոխէ: Եւ ընդհանուր ծախքը՝ հաշուէկշռոյն կանոնին տրամադրութեանց համաձայն, երեսփոխանական ժողովոյ մէջ բացատրութեամբք քննուելէն յետոյ՝ քանակութիւնը նախարարաց հետ կորոշուի. նոյնպէս՝ անոր համապատասխանող հասոյթին խնդիրն ու քանակութիւնը, եւ բաշխման ու հայթայթման եղանակը՝ դարձեալ նախարարաց հետ կսահմանուի:

Դատարանք

81. – Յատկապէս սահմանեալ կանոնաց համաձայն՝ պետութեան կողմանէ կարգեալ, եւ ձեռքերնին հրովարտակ (Պէրաթը չէրիֆ) տրուած դատաւորք՝ անհրաժարելի են. բաց եթէ իրենք հրաժարին՝ կընդունուի: Դարձեալ, յատուկ կանոնին տրամադրութիւններէն կախումն ունին՝ դատաւորաց յառաջագիմութիւնը, ընթացքը, պաշտօններուն փոփոխութիւնը, պաշտօնավարութենէ հանգիստն (թէգա-յիւտ), եւ յանցանքով մը դատապարտուելով պաշտօնէ ձգուիլը: Դատաւորաց ու դատարանաց պաշտօնակալաց համար պէտք եղած հանգամանքն ալ՝ այս կանոնը կտրամադրէ:

82. – Դատարանաց մէջ ամեն տեսակ դատաստան՝ հրապարակաւ կըլլայ. ազատ է՝ վճիռներուն հրատարակութիւնը. բայց՝ դատարանը, կանոնին որոշած պատճառներովն կրնայ զաղտնի տեսնել դատաստանը:

83. – Ամեն ոք, դատարանին առջեւ, իւր իրաւունքը պաշտպանելու համար կարելոր համարած օրինաւոր միջոցներն կրնայ ի գործ դնել:

84. – Դատարան մը՝ եւ ո՛չ մէկ պատճառանօք չկրնար մերժել՝ իւր իրաւասութեան վերաբերեալ դատի մը դատաստանը. եւ անգամ մը սկսելէն կամ պէտք եղած նախնական քննութեանց ձեռնարկելէն յետոյ չկրնար դադարեցունել կամ խափանել. ուրիշ բան է՝ երբ ամբաստանողն դատէն ետ քաշուի. բայց՝ պատժոյ վերաբերեալ դատերու մէջ կառավարութեան յատկացեալ իրաւունքն դարձեալ ի գործ կդրուի ըստ օրինի:

85. – Ամեն դատ՝ ձեռնհաս դատարանաց մէջ կտեսնուի. անհատներու եւ կառավարութեան մէջ եղած դատերն ալ՝ հասարակաց դատարաններու կվերաբերին:

86. – Դատարանք՝ ազատ են ամեն տեսակ միջամտութենէ:

87. – Շէրիի դատերը՝ Շէրիի, եւ Նիզամիյէի դատերը՝ Նիզամիյէի դատարանաց մէջ կը տեսնուին:

88. – Դատարանաց կարգերը, պարտաւորութիւնք, իրաւասութեանց աստիճաններն ու բաժանմունք, եւ դատաւորաց վարձատրութիւնք՝ ըստ կանոնաց ի գործ կդրուին:

89. – Ուրեւէ խնդրոյ մը դատին համար, ինչ անունով որ ըլլայ, որոշեալ դատարանէն դուրս արտաքոյ կարգի դատարան կամ վճիռ տալու արտօնութեամբ յանձնաժողով կազմել՝ բացարձակապէս անընդունելի է. սակայն ըստ կանոնի որոշեալ եղանակաւ, քննիչ կարգել եւ հաստատել կրնայ ըլլալ:

90. – Եւ ո՛չ մէկ դատաւոր, չկրնար՝ դատաւորի կերպարանքն վրան ըլլալով՝ պետութեան ուրիշ մէկ թոշակաւոր պաշտօնն ալ ստանձնել:

91. – Պատժական խնդրոց մէջ՝ հասարակաց իրաւունքը պաշտպանելու պաշտօն ունեցող ընդհանուր ամբաստանողք (միւտտայիի ումումի) պիտի գտնուին, եւ ասոնց պարտաւորութիւններն ու աստիճանները կանոնով պիտի սահմանուին:

Բարձրագոյն ատեան

92. – Բարձրագոյն ատեանը՝ 30 անդամէ կըադկանայ. ասոնց 10ը՝ աւանդաժողովոյ, 10ը՝ Շուրայի Տէվլէթի, եւ 10ը՝ վճռաջինջ (թէէմիզ) եւ վերաքննութեան (իսթինաֆ) դատարանաց նախագահներէն ու անդամներէն քուէով կընտրուին, եւ ի հարկին՝ կայսերական հրամանաւ կգումարին աւագաժողովոյ յարկին մէջ:

Այս ատեանին պարտքն ու պաշտօնն է՝ դատել ա՛յն անձինքն, որք նախարարաց, վճռաջինջ դատարանին նախագահաց ու անդամոց, եւ Սուլթանին անձին ու իրաւանց դէմ կշարժին, եւ պետութիւնը վտանգաւոր վիճակի մը ենթարկելու կնկրտին:

93. – Բարձրագոյն ատեանը երկուքի կըաժնուի. մէկը՝ Տայիրէ-ի-իթթիհամիլէ (դատապարտող), եւ միւսը՝ Տիվանը-հիւքմ (վճռատու): Առաջինը կըադկանայ ինը անդամէ, որոց երեքը՝ աւագաժողովոյ, երեքը՝ վճռաջինջ եւ վերաքննութեան ատեաններու, եւ երեքը՝ Շուրայի-Տէվլէթի անդամներէն բարձրագոյն ատեանին համար առնուելիք անդամոց մէջէն քուէով կընտրուին:

94. – Այս Տայիրէն՝ ամբաստանեալ անձանց յանցաւոր ըլլալը կամ չըլլալը կորոշէ երկու երրորդին մեծագոյն մասամբ: Առաջին Տայիրէին մէջ գտնուող՝ չկրնար երկրորդին մէջ գտնուիլ:

95. – Վճռատու ատեանը 21 հոգիէ կրողկանայ, 7ը՝ աւագածո-ղովոյ, 7ը՝ վճռաջինջ ու վերաքննութեան ատեաններու, եւ 7ը՝ Շու-րայի-Տէվլէթի նախագահներէն ու անդամներէն ըլլալով: Ամբողջ անդամոց երկու երրորդին մեծագոյն մասամբն բացարձակաբար եւ հաստատեալ կանոնաց համաձայն կ'վճռէ՝ Տայիրէ-ի-իթթիհամիյէի կողմանէ դատաստանը պէտք ըլլալը որոշուած դատերը: Տրուած վճիռը՝ անվերաքննելի եւ անջնջելի է:

Ելեւմտական գործառնութիւնք

96. – Պետութեան տրոց եւ ո'չ մէկն ո'չ կ'հաստատուի, ո'չ կրաչ-խուի եւ ո'չ կ'հաւաքուի, մինչեւ որ կանոնով չսահմանուի:

97. – Պետութեան պիւտճէն՝ հաւանական (թագրիպիյէ) մուտքն ու ելքը որոշող կանոնն է. այս կանոնին վրայ կ'հիմնուի՝ պետութեան տրոց հաստատութիւնը, եւ բաշխումն ու հաւաքումն:

98. – Պիւտճէն, այսինքն՝ ընդհանուր հաւասարակշռութեան կա-նոնը՝ ընդհանուր ժողովոյ մէջ յօդուած առ յօդուած կ'քննուի եւ կ'ըն-դունուի:

Հաւանական (մուխմինէ) մտից եւ ելից մանրամասնութիւնը պա-րունակող կցեալ ցուցակներն (ճէտվէլ), ըստ կանոնի որոշեալ օրի-նակին համաձայն, հատուածոց՝ գլխոց եւ այլ եւ այլ յօդուածոց բաժ-նուած ըլլալով, ասոնց վիճաբանութիւնն ալ՝ գլուխ առ գլուխ կ'ըլլայ:

99. – Ընդհանուր հաւասարակշռութեան կանոնը՝ ո'ր տարւոյն որ կ'վերաբերի, նոյն տարւոյն մէջ կարենալ գործադրելու համար՝ ծրա-գիրը երեսփոխանական ժողովոյն կ'ըտրուի, ընդհանուր ժողովը բա-ցուելուն պէս:

100. – Մինչեւ որ յատուկ կանոնով մը չորոշուի՝ ընդհանուր հա-շուէկշուէն դուրս ծախք չըլլար պետութեան գանձէն:

101. – Ընդհանուր ժողովոյ բաց չգտնուած ժամանակ, եթէ ար-տաքոյ կարգի հարկադրիչ պատճառներով հաշուէկշուէն դուրս ծախք ընելու անհրաժեշտ պէտք մը ստուգուի, կայսերական հրամանաւ նոյն ծախքը կ'ըլլայ՝ պէտք եղած դրամը հայթայթուելով. բայց պա-տասխանատուութիւնը նախարարաց վերապահեալ ըլլալու, եւ անոր վերաբերեալ կանոնական ծրագիրը՝ ընդհանուր ժողովը բացուելուն պէս մատուցանելու պայմանաւ:

102. – Հաշուէկշուէն կանոնը՝ մէկ տարուան յատկացեալ է. նոյն տարիէն դուրս ազդեցութիւն չունի. բայց՝ եթէ ինչ ինչ արտաքոյ կարգի պարագայից պատճառաւ երեսփոխանական ժողովը լուծուած

ըլլայ, առանց հաշուէկշու որոշած ըլլալու, – պետութեան նախա-րարք՝ նախորդ տարւոյն հաշուէկշուր՝ մէկ տարիէն աւելի չանցնելու պայմանաւ կ'գործադրեն կայսերական հրամանաւ, մինչեւ երեսփո-խանական ժողովոյ յաջորդ բացումն:

103. – Հաշուէկշուին վերջնական կարգադրութեան օրէնքը՝ նոյն տարւոյն համար որոշեալ ելումտից ցուցակին մէջ ձեռք բերուած ե-կամուտներուն եւ ի գործ դրուած ծախքերուն գումարը կ'ներկայա-ցունէ: Ասոր ձեւն ու բաժանումները՝ ընդհանուր հաւասարակշռու-թեան օրինաց համաձայն պիտի ըլլան:

104. – Վերջնական հաշւոյն կանոնական ծրագիրը՝ ո'ր տարւոյն որ կ'ը վերաբերի, նոյն տարւոյն լրանալէն սկսեալ վերջապէս չորս տա-րիէն յետոյ, ընդհանուր ժողովոյն պիտի տրուի:

105. – Հաշուական ատեան մը պիտի կազմուի, պետութեան հասոյթն դարձնելու եւ ծախք ընելու, պաշտօն ունեցողներուն հա-շիւները տեսնելու, պաշտօնատուներէն տրուած տարեկան հաշիւնե-րը քննելու եւ քննութեանցն ու դիտողութեանց արդիւնքը ամեն տա-րի յատուկ տեղեկագրով մը երեսփոխանական ժողովին մատուցանե-լու համար: Այս ատեանը, ամեն երեք ամիսն անգամ մը, նախարա-րաց նախագահին միջոցաւ, գանձային վիճակը տեղեկագրով մը պի-տի մատուցանէ Սուլթանին:

106. – Հաշուական ատեանը՝ 12 անդամէ պիտի բաղկանայ, որոնք կայսերական հրամանաւ պիտի ընտրուին. ցկեանս պիտի մնան իւ-րաքանչիւր, մինչեւ որ երեսփոխանական ժողովոյ մեծագոյն մասին կողմանէ նոցա հրաժարման պէտքը չհաստատուի:

107. – Յատուկ կանոնով մը պիտի որոշուին՝ հաշուական ատեա-նին անդամոց ունենալիք հանգամանքը, պարտաւորութեանց սահ-մանները, հրաժարումն, փոփոխումն, յառաջացումն, պաշտօնավա-րութենէ հանգիստն, եւ դիւաններուն (ազլամ) կազմակերպութիւնը:

Կուսակալութիւնք

108. – Գաւառաց վարչութիւնը՝ իրաւասութեանց ընդարձակման եւ պարտաւորութեանց բաժանման եղանակին վրայ հիմնեալ ըլլա-լով, աստիճաններն յատուկ օրինօք պիտի սահմանուին:

109. – Յատուկ կանոնով մը պիտի ընդարձակուին՝ վիլայէթներու, լիվաներու եւ գազաներու կեդրոնները գտնուած վարչական ժողովոյց (Իտարէ մէճլիսի), եւ տարին անգամ մը կուսակալութեան կեդրոնը գումարուելիք ընդհանուր ժողովոյ անդամոց ընտրութեան եղանակը:

110. – Ինչպէս պիտի նշանակուին Հաստատուելիք կանոնին մէջ, կուսակալութեանց ընդհանուր ժողովոց պարտաւորութիւնք են՝ խորհրդակցիլ ճանապարհաց շինութեան, վարկի սնտուկներուն (իթիպար սանտրզը) Հաստատութեան, արուեստից՝ վաճառականութեան ու երկրագործութեան դիրութեան, Հասարակային գործոց վերաբերեալ խնդրոց, եւ Հասարակաց կրթութեան ու դաստիարակութեան տարածման վրայ: Ասոնցմէ զատ, իրաւունք պիտի ունենան՝ կառավարական տրոց ու Հարկաց բաշխման ու Հաւաքման եւ այլ գործառնութեանց մէջ Հաստատեալ օրինաց ու կանոնաց տրամադրութեանց հակառակ իրենց տեսած պարագաները, հաղորդել ա՛յն տեղերուն եւ պաշտօնատանց՝ որոց կվերաբերին, եւ ուղղութիւն ու բարեկարգութիւն պահանջել:

111. – Ամեն գաղայի մէջ ամեն ազգ թաղային ժողով (ճէմաթ մէճլիսի) պիտի ունենայ, կտակեալ (վագրֆ) միւսագաֆաթ եւ միւթէղէլաթ (վրան ծածկոյթ ունեցող եւ չունեցող) տեղերու եւ պատրաստ դրամի Հասոյթները՝ կտակային պայմանաց եւ վաղեմի գործառնութեանց Համաձայն՝ ըստ կտակագրին, նպատակին գործածուելուն հսկելու, եւ որբոց ստացուածոց՝ ըստ յատուկ կանոնագրին՝ մատակարարութեան վերատեսչութիւն ընելու Համար: Այս ժողովները՝ Հաստատուելիք յատուկ օրինաց Համաձայն պիտի ընտրուին իւրաքանչիւր ազգի անհատներէն: Այս ժողովները, ի հարկին դիմելու տեղ պիտի ճանչնան՝ իրենց տեղական կառավարութիւնները, եւ կուսակալութեանց ընդհանուր ժողովները:

112. – Քաղաքային (պէլէտիյէ) գործերը՝ Պօլսոյ մէջ եւ դուրսերը ընտրութեամբ կազմեալ քաղաքային չրջանակներու ժողովներով պիտի տեսնուին. եւ այս չրջանակներուն կազմութեան եղանակը, պարտաւորութիւններն եւ անդամոց ընտրական գործողութիւնները յատուկ կանոնով պիտի սահմանուին:

Ձանազան յօդուածք

113. – Երբ երկրին մէկ կողմը ապստամբութիւն ելնելու սկզբնական հետք եւ նշաններ տեսնուին, կառավարութիւնը իրաւունք ունի՝ միայն նոյն տեղին համար առժամանակեայ կերպիւ բուռն վարչութիւն (խտարէի էօրֆիյէ) հրատարակել: Բուռն վարչութիւնը՝ կանոնաց ու օրինաց առժամանակեայ դադարմամբ կրլայ, եւ այնպիսի վարչութեան համար յատուկ օրէնք պիտի սահմանուի: Սուլթանին ձեռնհասութենէն է՝ Տաճկաստանէն հանել եւ հեռացունել ա՛յն ան-

ձինքն, որոց՝ կառավարութեան անդորրութեան վնասող ըլլալը կըստուգուի ոստիկանութեան Հաստատուն քննութեամբքն:

114. – Համայն օսմանեան Հպատակաց համար ստիպողական են՝ նախնական կրթութիւնք: Ասոր մանրամասնութիւնը՝ յատուկ օրէնքով պիտի նշանակուի:

115. – Հիմնական կանոնաց եւ ո՛չ մէկ յօդուածն՝ եւ ո՛չ մէկ պատճառաւ եւ ո՛չ մէկ պատրուակաւ չդադարի կամ անգործադրելի չմնար:

116. – Երբ հիմնական կանոնաց յօդուածոց մէկ քանիին փոփոխումն կամ բարեփոխութիւնը պէտք ըլլայ, հետեւեալ պայմաններով ի գործ կղրուի: Այսինքն՝ կա՛մ նախարարաց, կա՛մ աւագաժողովոյ եւ կա՛մ երեսփոխանական ժողովոյ կողմանէ երբ այս մասին առաջարկութիւն ըլլայ՝ նախ, երեսփոխանական ժողովոյ մէջ, ամբողջ անդամոց երկու երրորդին մեծագոյն մասամբն կընդունուի. եւ այս ընդունելութիւնը՝ աւագաժողովոյ երկու երրորդին մեծագոյն մասամբն ալ Հաստատուելէն յետոյ, եթէ կայսերական հրամանն ալ ըստ այնմ ելնէ, փոփոխութիւնը ի գործ կղրուի: Հիմնական կանոնաց մէջէն՝ փոփոխութիւնը առաջարկեալ յօդուածն իւր ոյժը չկորսնցունէր եւ կգործադրուի, մինչեւ որ յիշեալ եղանակաւ բանակցութիւնն ըլլայ, եւ նոյն գործադրութեան կայսերական հրամանը ելնէ:

117. – Երբ կանոնական յօդուածի մը բացատրութիւնը պէտք ըլլայ, եթէ դատական է՝ վճռաջինջ ատեանին, եթէ քաղաքային է՝ Շուրայի-Տէվլէթի, եւ եթէ ներկայ հիմնական կանոններէն է՝ աւագաժողովոյ կվերաբերի բացատրել:

118. – Մինչեւ ցարդ գործադրութեան մէջ եղող կանոնք, օրէնք, գործառնութիւնք եւ սովորութիւնք գործադրելի են, մինչեւ որ յառաջակային Հաստատուելիք կանոններով ու օրէնքներով չփոխուին կամ չխափանուին:

119. – Ընդհանուր ժողովոյ վերաբերեալ՝ 93 չէվվալ 10 թուականաւ առժամանակեայ հրահանգը կգործադրուի, միայն մէկ անգամ գումարուելիք ընդհանուր ժողովոյ բացման մինչեւ վերջը, եւ այնուհետեւ կխափանուի¹:

¹ Ալաճաճեան Հ. Ս., Հիմնական կանոնք Օսմանեան պետութեան, Կ. Պոլիս, 1878:

ՀԱԹԹԸ ՀԻՒՄԱՑՈՒՆԸ

(ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ)

Իմ մեծաշուք վեցիրս Միդհատ փաշա.

Մեր պետությունն զօրութիւնը ժամանակէ մը ի վեր ընկնելու վրայ էր: Ասոր պատճառը արտաքին խնդիրներէն աւելի՝ ներքին գործերու վարչութեան մէջ ուղիղ ճամբէ խոտորիլն էր, որով հպատակներու՝ իշխանութեան վրայ ունեցած վստահութեան կապերը թուլցած էին: Այս պատճառով իմ Օգոստափառ Հայրս՝ Հանգուցեալ սուլթան Աբդուլ-Մէջիդ՝ շնորհեր էր բարենորոգումներու սկիզբ մը, «Թանգիմաթը», որ, Շէրիի նւիրական տրամադրութիւններուն համաձայն, կերաշխատէր ամենուն կեանքը, ինչքն ու պատիւը: «Թանգիմաթի» փրկարար արդիւնքովն է, որ պետութիւնը մինչև հիմա ապահովութեան ճամբուն մէջ հաստատ մնաց, և մենք ալ յաջողեցանք այսօր հիմնել ու հրատարակել այս Սահմանադրութիւնը, որ հետեանք է ազատութենէն յայտնուած գաղափարներու և կարծիքներու:

Այս երջանկառիթ օրւան մէջ յատկապէս կը մտաբերեմ իմ Օգոստափառ Հօրս յիշատակը և կանւանեմ զինքը կայսրութեան վերանորոգիչ: Անկասկած նա ինքը կը հիմնէր ու կը գործադրէր այս Սահմանադրութիւնը, որ մենք այժմ կը հրատարակենք: Բայց ես մեծապէս փառք կուտամ Աստուծոյ, որ մեր սուլթանութեան ժամանակին վերապահեց այսպիսի բարեբաղդ գործ մը, որ մեր ազգին կատարեալ երջանկութիւնը կերաշխատէ:

Բացայայտ է, որ մեր պետութեան կառավարութեան ձևը բոլորովին գոհացուցիչ չէր, բաղդատմամբ այն փոփոխութիւններուն, որոնք բնականօրէն տեղի ունեցան երկրին ներսը և այն ընդարձակումներուն, որոնք առաջ եկան մեր արտաքին յարաբերութիւններուն մէջ: Մեր մեծագոյն ցանկութիւնն է ջնջել այն արգելքները, որոնց պատճառով ազգն ու երկիրը չեն կրցեր մինչև հիմա պէտք եղածին պէս օգտուիլ իրենց բնական հարստութիւններէն և բնածին ընդունակութիւններէն, ինչպէս և տեսնել մեր բոլոր հպատակներուն միաբան և համերաշխ յառաջադիմութիւնը զարգացման ճամբուն մէջ:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ համարեցինք ընդունել կառավարական առողջ և կանոնաւոր ձև մը. այն է՝ նախ՝ պահպանել կառավարութեան օրինաւոր և յարգւած իրաւունքները, երկրորդ՝ արգիլել և ոչնչացնել ապօրէն վերաբերմունքները, այսինքն՝ այն յանցանքներն ու զեղծումները, որոնք յառաջ կուգան մէկ կամ քանի մը անհատներու բռնակալ տիրապետութենէն, և երրորդ՝ ապահովել մեր հասարակութիւնը կազմող գանազան ժողովուրդներու՝ ազատութեան, հաւասարութեան և արդարութեան բարիքներէն անխտիր օգտուելու իրաւունքը, որուն արժանի է ամեն քաղաքակիրթ համայնք:

Որովհետև այս բարիքներուն ապահովութիւնն ու իրականացումը կախումն ունին այն օգտաշատ դրութենէն, որով հասարակաց գործերն ու կանոնները կը կապին օրինաւոր խորհրդակցական և սահմանադրական սիստեմին և որուն պէտքը ունին ներկայ ժամանակները, այդ պատճառով մեր գահակալութեան առիթով հրատարակւած Հաթթին մէջ մենք յայտնած էինք խորհրդարան մը կազմելու անհրաժեշտութիւնը:

Ասոր համար անհրաժեշտ էր կազմել Սահմանադրութիւնը, որ յօրինեցաւ մեր կայսրութեան ամենամեծ աստիճանաւորներէն, հոգեւորականներէն և ուրիշ պետական մարդոցմէ ու պաշտօնեաներէ բաղկացած յանձնաժողովի մը խորհրդակցութեամբ և որը մեր նախարարական խորհրդին կողմէն բաղմակողմանի քննութեան մը ենթարկելով՝ վաւերացեցաւ: Այդ Սահմանադրութեան յօդուածները կը նւիրագործեն իսլամական մեծ խալիֆայութիւնը, օսմանեան արքայական սուլթանութեան իրաւունքները, օսմանցիներուն ազատութիւնն ու հաւասարութիւնը, պաշտօնեաներուն ու նախարարներուն պարտականութիւններն ու իրաւասութիւնները, Ազգային Ժողովի հսկողութեան իրաւունքը, դատարաններուն կատարեալ անկախութիւնը, ելեմուտքի իրական հաւասարակշռութիւնը, կեդրոնի իրաւունքները, վիլայէթներուն վարչական ապակեդրոնացումը: Այս բոլորը միանգամայն համաձայն են Շէրիի սրբազան օրէնքներուն, երկրին ու ազգային այժմեան պէտքերուն ու ընդունակութիւններուն, ինչպէս և ընդհանուր յառաջադիմութեան ու երջանկութեան վսեմ գաղափարին, որը մեր նւիրական ցանկութիւնն է: Այդ պատճառով՝ ահա հիմնուած Աստուծոյ օգնութեան և Մարգարէի բարոյական օժանդակութեան վրայ, կրնդունիմ և կը հաստատեմ այս Սահմանադրութիւնը և Ձեզ կը զրկեմ:

Մեր հաստատուն կամքն է, որ, Աստուծոյ օգնութեամբ, օսմանեան երկիրներուն ամեն կողմերը իբր օրէնք գործադրելու համար յայտարարէք զայս և այսօրւնէ սկսիք գործադրել անոր տրամադրութիւնները, և ժամ առաջ ձեռնարկէք արագ և ազդու միջոցներու՝ ամբողջացնելով և խմբագրելով նշանակւած, որոշւած օրէնքներն ու կանոնները:

Թող Աստուած յաջողութեամբ պսակէ մեր երկրին ու ազգին երջանկութեան համար աշխատողներու ջանքերը:

7 Զիլհիջէ 1293

Աբդիւլ Համիդ

(23 դեկտեմբեր 1876 թ.)

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. – Օսմանեան կայսրութիւնը, որ կը բաղկանայ իր այժմեան սեփականութիւնն եղող երկիրներէն և առանձնաշնորհեալ գաւառներէն, կը կազմէ անբաժանելի ամբողջութիւն մը, որուն և ոչ մէկը կրնայ երբէք անջատուիլ՝ որեւէ պատճառով:

Յօդ. 2. – Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքն է Կ. Պօլիսը, որ կայսրութեան միւս քաղաքներէն բացառիկ արտօնութիւն մը կամ առանձնաշնորհութիւն մը չունի:

Յօդ. 3. – Օսմանեան վեհապետութիւնը, որ վեհապետին անձին վրայ կը միացնէ իսլամութեան գերագոյն խալիֆայութիւնը, կը վերաբերի Օսմանի ազգատոհմէն եղող կայսերազուններու երիցագունին՝ վաղեմի կանոններու համաձայն:

Յօդ. 4. – Վեհափառ Սուլթանը, իբրեւ Գերագոյն Նախիֆա, իսլամութեան կրօնին պաշտպանն և միանգամայն բոլոր օսմանցիներու վեհապետն ու Փաղիչահն է:

Յօդ. 5. – Վեհափառ Սուլթանը պատասխանատուութենէ ազատ է: Իր անձը նւիրական է:

Յօդ. 6. – Օսմանեան կայսերական գերդաստանի անդամներուն ազատութիւնը, անձնական անշարժ և շարժական ինչքը, ցկեանս յատկացւած թոշակն ամենուն երաշխաւորութեան ներքեւ են:

Յօդ. 7. – Վեհափառ Սուլթանի վեհապետական իրաւունքներու կարգէն են հետեւեալ արտօնութիւնները. Նախարարները կանուանէ և կը հրաժարեցնէ. աստիճաններ, պաշտօններ և պատանշաններ կուտայ. առանձնաշնորհեալ գաւառներու իշխաններուն հաստատութեան հրովարտակը կը շնորհէ՝ անոնց տրւած արտօնութիւններու որոշեալ ձևերով. դրամ կը կոխէ. աղօթքի ատեն մզկիթներու մէջ անոր անունը կը կարդացուի. պետութիւններու հետ զաշնադրութիւններ կրնէ. ցամաքային և ծովային զօրքերուն կը հրամայէ. զինուորական շարժումներ ընել կուտայ. Շէրիի և օրէնքի տրամադրութիւնները գործադրել կուտայ. հասարակային վարչութեան վերաբերեալ կանոններ կը հաստատէ. ոճրադատ ատեաններուն վճռած պատիժները

կը ներէ կամ կը թեթեցնէ. ընդհանուր ժողովը* կը գումարէ կամ կարձակէ և, եթէ Հարկաւոր դատէ, կը լուծէ պատգամաւորական ժողովը, վերստին ընտրել տալու պայմանով:

ՕՍՄԱՆՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Յօդ. 8. — Օսմանեան կայսրութեան բոլոր Հպատակներն առանց խտրութեան կը կոչին օսմանցի, ինչ ալ որ ըլլայ անոնց դաւանած կրօնը:

Օսմանցիի Հանգամանքը կըստացւի կամ կը ջնջւի օրէնքի որոշած պարագաներուն համեմատ:

Յօդ. 9. — Բոլոր օսմանցիները կը վայելեն անհատական ազատութիւն, պայմանով, որ վնաս չհասցնեն ուրիշներու ազատութեան:

Յօդ. 10. — Բացարձակապէս անբռնաբարելի է անհատական ազատութիւնը: Ո՛չ ոք, ո՛րեւէ պատրուակով, օրէնքի որոշած պարագաներէն ու սահմանած ձևերէն դուրս որեւէ պատիժ չպիտի կրէ:

Յօդ. 11. — Պետութեան կրօնքը իսլամութիւնն է. պետութիւնը պահպանելով Հանդերձ այս սկզբունքը, կը պաշտպանէ կայսրութեան մէջ ճանցցւած բոլոր կրօններու ազատ կիրառութիւնը և հաստատ կը պահէ զանազան Հասարակութիւններու շնորհւած կրօնական առանձնաշնորհումներն այն պայմանով, որ վնաս չհասնի բարեկարգութեան և բարի վարքին:

Յօդ. 12. — Մամուլն ազատ է օրէնքի գծած սահմաններուն մէջ:

Յօդ. 13. — Օսմանցիները կարող են առևտրական, արհեստական և երկրագործական ընկերութիւններ կազմել օրէնքի և կանոնադրութիւններու որոշած սահմաններուն մէջ:

Յօդ. 14. — Օսմանեան ազգութեան վերաբերեալ մէկ կամ քանի մը անձեր իրաւունք ունին խնդրագիր մատուցանել ձեռնհաս իշխանութիւններուն՝ ի վնաս իրենց կամ Հանրային շահին գործած օրինազանցութիւններու և կանոնազանցութիւններու համար. կրնան նոյնպէս բողոքի ձևով ստորագրւած խնդրագիր մատուցանել օսմանեան ընդհանուր ժողովին՝ զանգատելու համար պետութեան պաշտօնատարներու ընթացքէն:

Յօդ. 15. — Ուսումն ազատ է: Ամեն օսմանցի կրնայ հասարակային կամ մասնաւոր ուսումնարան բանալ օրէնքի համաձայն վարելու պայմանով:

* Պարլամենտի և Սենատի համագումար ժողովը:

Յօդ. 16. — Բոլոր վարժարանները պետութեան Հսկողութեան ներքև են: Բոլոր օսմանցիներուն տրւած ուսումը կանոնաւորելու և միացնելու միջոցներ պիտի խորհին. բայց զանազան Հասարակութիւններու՝ կրօնական ուսմանը չպիտի ձեռք դարնի:

Յօդ. 17. — Բոլոր օսմանցիները հաւասար են օրէնքի առջև: Երկրին Հանդէպ անոնք միևնոյն իրաւունքներն ու պարտականութիւններն ունին՝ բացի կրօնի և դաւանանքի վերաբերող պարագաներէն:

Յօդ. 18. — Պետութեան պաշտօններուն մէջ ծառայելու համար օսմանեան Հպատակները պէտք է գիտնան պետութեան պաշտօնական լեզուն, թուրքերէնը:

Յօդ. 19. — Բոլոր օսմանցիները կրնողունին պաշտօններու մէջ իրենց ընդունակութեան, արժանիքին և յաջողականութիւններուն համեմատ:

Յօդ. 20. — Յատուկ օրէնքի տրամադրութեան համեմատ, տուրքերու բաշխումն ու գանձումը կը կատարւի համաձայն իւրաքանչիւր անհատի կարողութեան:

Յօդ. 21. — Ըստ օրինի ամեն մարդու սեփականութիւնն անձեռնմխելի է:

Կարելի է գրաւել անհատական սեփականութիւնը միայն այն ժամանակ, երբ Հանրային շահը կը պահանջէ, պայմանով սակայն, որ իրական արժէքը կանխիկ վճարուի:

Յօդ. 22. — Օսմանեան երկիրներուն մէջ անձեռնմխելի է ամէն մարդու բնակարանը: Օրէնքի որոշած պարագաներէն դուրս իշխանութիւնն իրաւունք չունի բռնութեամբ մտնել մէկու մը տունը:

Յօդ. 23. — Դատաւարութեան համար հաստատուելիք օրէնքի համեմատ, երբէք կարելի չէ ստիպել մէկը, որ իր վերաբերած և ձեռնհաս դատարանէն զատ երթայ մէկ ուրիշ ատեան:

Յօդ. 24. — Գոյքերու գրաւումը, տարապարհակ աշխատանքն ու տուգանքն արգիլւած են: Սակայն պատերազմի ժամանակ օրինականապէս կատարւած հանգանակութիւններն ու այլ պարագաները բացառութիւն են:

Յօդ. 25. — Առանց հիմնւած ըլլալու որեւէ օրէնքի վրայ, կարելի չէ մէկէ մը փող առնել՝ տուրքի կամ ուրիշ բանի անունով:

Յօդ. 26. — Չարչարանքը և ուրիշ ամէն կարգի տանջանքները բացարձակապէս արգիլւած են:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

Յօդ. 27. – Վեհափառ սուլթանը մեծ-եպարքոսի և Շէյխ-իւլ-իս-լամի պաշտօնները կը յանձնէ իր բարձր վատահութեան արժանի դատած անձերուն: Միւս նախարարները կանանին իրադէտով:

Յօդ. 28. – Նախարարներու խորհուրդը կը գումարւի մեծ-եպարքոսին նախագահութեամբ: Նախարարներու խորհրդին իրաւասութեան սահմանին մէջ են պետութեան բոլոր կարևոր գործերը, ներքին և արտաքին: Իր որոշումները Վեհափառ Սուլթանին հաւանութեանը ներկայացելէ յետոյ, կայսերական իրադէտի համաձայն կը գործադրին:

Յօդ. 29. – Իւրաքանչիւր նախարար իր իրաւասութեան սահմանին մէջ իր պաշտօնին վերաբերեալ գործերը կը կարգադրէ: Իսկ իր սահմանէն դուրս մեծ-եպարքոսին խորհուրդը կը հարցնէ: Մեծ-եպարքոսը գործադրել կուտայ՝ զանազան նախարարներու խորհրդին և յետոյ կայսերական հաճութեան ներկայացնելով զանոնք, և կամ եթէ հարկ չէ, ինքն անձամբ որոշելով կամ միայն Վեհափառ Սուլթանին հաւանութեանը ենթարկելով: Մասնաւոր կանոնադրութեամբ մը պիտի որոշւի այդ գործերու տեսակն ու չափը:

Յօդ. 30. – Նախարարները պատասխանատու են իրենց վարչութեան վերաբերեալ խնդիրներուն և գործերուն համար:

Յօդ. 31. – Եթէ պատգամաւորական ժողովի անդամներէն մէկը կամ շատերը ուզեն նախարարի մը դէմ բողոքել՝ անոր պատասխանատուութեան պատճառով և այնպիսի գործերու առիթով՝ զորս ժողովն իրաւունք ունի քննելու, բողոքագիրը ժողովի նախագահին պիտի տրուի, որ զայն կը դրկէ, երեք օրւան մէջ, այն դիւանը, որ ժողովի ներքին կանոնադրութեան համաձայն, պաշտօն ունի բողոքը քննելու և որոշելու, թէ հարկ կա՞յ արդեօք զայն ներկայացնելու ժողովին վիճաբանութեան: Դիւանին որոշումը կը կատարուի քէներու առաւելութեամբ, մեղադրուող նախարարին բացատրութիւններն ստանալէ յետոյ: Եթէ դիւանը յարմար դատէ բողոքը պատգամաւորական ժողովին ներկայացնել, այդ որոշումը հաստատող տեղեկագիրը հրապարակային նիստի մը մէջ կը կարդացուի և ժողովը՝ մեղադրւած նախարարին՝ որ պիտի հրաւիրուի ներկայ գտնուիլ և կամ անոր փոխանորդին՝ բացատրութիւնները լսելէ յետոյ, ներկայ գտնուող պատգամաւորներու երկու-երրորդին բացարձակ մեծամասնութեամբ կը քէնարկէ տեղեկագրին եզրակացութիւնները: Եթէ այդ եզրակացութիւններն ընդունին, մեղադրուող նախարարը դատի ենթարկուող ուղերձ մը

կը դրկուի մեծ-եպարքոսին, որ Վեհափառ Սուլթանին հաւանութեան կը ներկայացնէ զայն և կայսերական իրադէտով բարձրագոյն ատենանի առջև կեցել նախարարը:

Յօդ. 32. – Մասնաւոր օրէնք մը պիտի որոշէ նախարարներու դատման եղանակը:

Յօդ. 33. – Նախարարներու և անհատներու միջև ամենեին տարբերութիւն չկայ այն դատերուն նկատմամբ, որոնք անոնց պաշտօնէն դուրս են: Այդ կարգի դատերը կը տեսնին սովորական դատարաններու ձեռքով:

Յօդ. 34. – Այն նախարարը, որուն դատի ենթարկուիլը որոշւած է բարձրագոյն ատենանի ամբաստանիչ ճիւղէն, պաշտօնէն կը հեռացուի, մինչև որ իրեն դէմ եղած մեղադրանքէն անպարտ հռչակուի:

Յօդ. 35. – Եթէ պատգամաւորական ժողովը պատճառաբանւած քէնով մը մերժէ օրինագիծ մը, հակառակ նախարարներու պնդումին Վեհափառ սուլթանն ի՛ր վեհապետական իրաւունքով նախարարներու փոփոխութիւնը կամ ժողովի արձակումը կը հրամայէ, օրէնքի որոշած պայմանաժամին մէջ պատգամաւորական նոր ընտրութիւններ կատարելու պայմանով:

Յօդ. 36. – Ստիպողական պարագաներու մէջ եթէ ընդհանուր ժողովը գումարւած չէ, նախարարութիւնը կրնայ միջոցներ ձեռք առնել պետութիւնը վտանգէ մը պահպանելու կամ ընդհանուր անդորրութիւնը ապահովելու համար: Այդ միջոցները կայսերական իրադէտով վաւերացելէ յետոյ, առժամանակեայ կերպով օրէնքի ոյժ ունին, եթէ Սահմանադրութեան հակառակ չեն: Յիշեալ միջոցները պէտք է ընդհանուր ժողովին ներկայացնել անմիջապէս, երբ որ գումարուի:

Յօդ. 37. – Ամեն նախարար իրաւունք ունի ծերակոյտին (սենատ) և պատգամաւորական ժողովին ներկայ գտնուելու կամ իր պաշտօնատան բարձրագոյն պաշտօնեաներէն մէկը փոխանորդաբար ղրկելու: Իրաւունք ունի նաև խօսք ուղղող որեւէ պատգամաւորէ առաջ լսելու:

Յօդ. 38. – Երբ քէներու առաւելութեամբ տրւած որոշումի մը համեմատ նախարար մը հրաւիրուի պատգամաւորական ժողովին առջև բացատրութիւններ տալու, նախարարը պարտաւոր է իրեն ուղղւած հարցման պատասխանել անձամբ կամ իր պաշտօնատան բարձրագոյն պաշտօնեաներէն մէկուն միջոցով: Իրաւունք ունի սակայն իր պատասխանը յետաձգելու, իր վրայ առնելով անոր պատասխանատուութիւնը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ

Յօդ. 39. – Պետական զանազան պաշտոնեաներու անւանումը կը կատարուի պահանջած արժանիքներու և կարողութեան պայմանները որոշող կանոնադրութեան համեմատ: Այդ պայմաններուն համապատասխան պաշտօնեայ մը չի կրնար պաշտօնանկ ըլլալ կամ փոխիլ, եթէ իր պաշտօնանկութիւնն արդարացնող բաւականաչափ փաստեր չկան, եթէ ինքն իսկ հրաժարական չի տար, կամ, մանաւանդ, եթէ իր պաշտօնանկութիւնն անհրաժեշտ չի դատուի կառավարութեան կողմէ: Այն պաշտօնատարները, որոնք բարւոք ծառայութեան և պարկեշտութեան փորձեր կուտան, ինչպէս և անոնք, որոնց պաշտօնէ հեռանալը անհրաժեշտ կը դատուի կառավարութեան կողմէն, ատոնք, առանձին կանոնադրութեամբ որոշելի օրէնքներու համաձայն, իրաւունք ունին պաշտօնի բարձրացման կամ հանգըստեան թոշակի և կամ պաշտօնէ հեռացման թոշակի:

Յօդ. 40. – Բոլոր պաշտօնատարներու պարտականութիւնները պիտի սահմանին յատուկ կանոնադրութեամբ: Ամեն պաշտօնեայ իր պարտականութիւններու շրջանակին մէջ պատասխանատու է:

Յօդ. 41. – Ամեն պաշտօնեայ պարտաւոր է յարգելու իր մեծը, բայց օրէնքի գծած սահմաններէն դուրս անոր հրամաններուն հնազանդելու պարտական չէ: Նոյնիսկ մեծին հնազանդելով օրինազանց գտնուող պաշտօնեան պատասխանատուութենէ ազատ չէ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 42. – Ընդհանուր ժողովը կը բաղկանայ երկու ժողովներէ: Աւագներու ժողովէն կամ Ծերակոյտէն և Պատգամաւորական ժողովէն:

Յօդ. 43. – Ամեն տարի այս երկու ժողովները կը գումարին նոյեմբերի սկիզբը և կը փակին յաջորդ մարտ ամսի 1-ին: Թէ բացումը և թէ փակումը տեղի կունենայ կայսերական իրադէտով: Երկու ժողովներէն և ոչ մէկը կրնայ միւսին գումարման ժամանակաշրջանէն դուրս նիստ կայացնել:

Յօդ. 44. – Վեհափառ Սուլթանը կարող է, ի պահանջել հարկին, երկարել կամ կարճել ժողովներու նստաշրջանը:

Յօդ. 45. – Բացման հանդէսը կը կատարուի կամ Վեհ. Սուլթանին կամ փոխանորդաբար մեծ-եպարքոսին կողմէ, նախարարներու և եր-

կու ժողովներու անդամներուն ներկայութեամբ: Կայսերական ճառը կը չօչափէ կայսրութեան անցեալ տարւան ներքին կացութիւնն ու արտաքին յարաբերութիւններու վիճակը և յաջորդ տարւան համար հարկաւոր դատած կարգադրութիւնները մատնանիչ կրնէ:

Յօդ. 46. – Ընդհանուր ժողովի բոլոր անդամները երգում կրնեն հաւատարիմ մնալու Վեհ. Սուլթանին, հայրենիքին և Սահմանադրութեանը: Նորընտիր անդամներուն երգումը կը կատարուի ժողովի բացման ժամանակ, մեծ-եպարքոսին առաջ, իսկ բացման ներկայ չեղողներունը՝ ժողովի նախագահին և անդամներուն առաջ:

Յօդ. 47. – Ընդհանուր ժողովի անդամներն իրենց կարծիքը յայտնելու կամ քէն տալու կատարեալ ազատութիւն ունին. անոնց և ոչ մէկը կրնայ հրահանգներով և կամ խոստումներով կապուիլ, ոչ ալ սպառնալիքներու ազդեցութեան տակ գործել: Նոյնպէս չի կրնար դատի կամ պատասխանատուութեան ենթարկուիլ ժողովին մէջ յայտնած իր կարծիքին համար, եթէ մեղանշած չէ ժողովին ներքին կանոնադրութեան դէմ: Այս վերջին պարագային մէջ անոր վրայ գործ կը դրին կանոնադրութեան տրամադրութիւնները:

Յօդ. 48. – Երբ ընդհանուր ժողովի անդամներէն մէկը իր պատկանած ժողովին երկու երրորդ մասին բացարձակ առաւելութեամբ կամբաստանի իբր դաւաճան, Սահմանադրութեան զեղծող, կամ կաշառակեր, և կամ երբ օրէնքով կը դատապարտուի բանտարկութեան կամ աքսորի՝ իր անդամութեան պաշտօնէն կը զրկուի: Դատաստանն ու պատժի գործադրութիւնը կը վերաբերին ձեռնհաս ատեանին:

Յօդ. 49. – Ընդհանուր ժողովի իւրաքանչիւր անդամը պարտաւոր է քէն անձամբ տալ. իրաւունք ունի և քէնարկութեան ժամանակ ձեռնապահ մնալու:

Յօդ. 50. – Չէ կարելի երկու ժողովներու միաժամանակ անդամ ըլլալ:

Յօդ. 51. – Մինչև որ ժողովականներու կէսէն աւելին ներկայ չըլլայ, ժողովներէն և ոչ մէկը կրնայ նիստ գումարել: Ամեն որոշում կը տրուի քէներու բացարձակ մեծամասնութեամբ, բացի այն դէպքէն, երբ կը պահանջուի քէներու երկու երրորդի մեծամասնութիւնը: Երբ քէները հաւասար են, նախագահին քէն երկու ձայն կը սեպուի:

Յօդ. 52. – Անձնական գործերու համար ժողովներէն մէկին կամ միւսին տրւած խնդրագիրը կը մերժուի այն ժամանակ, երբ կը ստուգ-

ւի, որ խնդրամատոյցը նախ չէ դիմած ձեռնհաս պաշտօնատուներ և կամ այն իշխանութեան, ուրկէ ուղղակի կախումն ունի այդ պաշտօնատուներ:

Յօդ. 53. — Օրէնքի մը հաստատման կամ փոփոխութեան առաջարկը նախարարներուն կը վերաբերի: Ծերակուտականներն ու պատգամաւորներն ալ կրնան սակայն, իրանց իրաւասութեան սահմաններուն մէջ, նոյն առաջարկներն ընել: Այս վերջին պարագային, առաջարկը մեծ-եպարքոսին կողմէ կը ներկայացուի Վեհ. Սուլթանին, որ եթէ յարմար դատէ, իրադէտով կը յանձնէ պետական խորհուրդին, որպէսզի ձեռնհաս պաշտօնատուներէն ստացած բացատրութիւններուն և ցուցումներուն համաձայն առաջարկած օրէնքին նախագիծը պատրաստէ:

Յօդ. 54. — Պետական խորհուրդին պատրաստած օրինագիծը՝ նախ պատգամաւորներու ժողովին և յետոյ ծերակուտին քննութեան ու քննարկութեանը կենթարկուի: Օրինագիծը գործադրութեան կը դրուի, երբ երկու ժողովներէն կրնալուի և կայսերական իրադէտով կը վաւերացուի: Երկու ժողովներէն մէկին կողմէ վերջնականապէս մերժած օրինագիծ մը չի կրնար նոյն ժողովին քննութեան ենթարկուի, նոյն նստաշրջանին:

Յօդ. 55. — Օրինագիծ մը ընդունած կը համարուի միայն այն ժամանակ, երբ երկու ժողովները զայն կը քննարկեն ձայներու մեծամասնութեամբ, յօդուած առ յօդուած, և յետոյ իր ամբողջութեան մէջ:

Յօդ. 56. — Բացի նախարարներէն և անոնց փոխանորդներէն, ինչպէս և պաշտօնապէս հրաւիրուած պաշտօնատարներէն, ո՛չ ոք կրնայ մէկ կամ միւս ժողովին սրահը մտնել, եթէ նոյնիսկ իր և կամ հասարակութեան մը կողմէ խնդրագիր մատուցանելու կամ զեկուցում ընելու համար եղած ըլլայ:

Յօդ. 57. — Ժողովներու խորհրդակցութիւններն ու վիճաբանութիւնները կը կատարուին թիւրքերէն լեզուով: Օրինագծերը կը տպուին և անդամներուն կը բաժնուին վիճաբանութեան օրէն առաջ:

Յօդ. 58. — Քննարկութիւնը կը կատարուի կամ անուններու կոչումով կա՛մ ձեռնամբարձ և կա՛մ գաղտնի: Գաղտնի քննարկութիւնը կը կատարուի ժողովականներու մեծամասնութեան պահանջով:

Յօդ. 59. — Իւրաքանչիւր ժողով կը կառավարուի իր նախագահին միջոցով և ներքին կանոնադրութեան համաձայն:

ԾԵՐԱԿՈՅՏ (ՍԵՆԱՏ)

Յօդ. 60. — Ծերակուտի նախագահն ու անդամները կանաւուն ուղղակի Վեհ. Սուլթանէն: Ծերակուտին անդամներուն թիւը պատգամաւորական ժողովին անդամներուն մէկ երրորդ մասէն աւելի չի կրնար ըլլալ:

Յօդ. 61. — Ծերակուտի անդամ ընտրելու համար պէտք է իր գործերով հասարակական վստահութեան արժանացած կամ պետութեան նշանաւոր ծառայութիւններ մատուցած ըլլալ: Պէտք է ըլլալ առ նազն երեսուն տարեկան:

Յօդ. 62. — Ծերակուտի անդամները կը նշանակուին ցկեանս: Ծերակուտի անդամութիւն կրնայ չնորհուիլ այն անպաշտօն անձանց, որոնք վարած են արդէն նախարարի, կուսակալի, զօրաբանակի հրամանատարի, քաղաքակալութեան, առաջին և երկրորդ կարգի դեսպանութեան, պատրիարքութեան, բարբուռապետութեան պաշտօնները, նոյնպէս այն անձներուն, որոնք ծովային և ցամաքային զօրքերու «ֆէրիկ» են և կամ կը լրացնեն առ հասարակ պահանջած բոլոր պայմանները: Ծերակուտի անդամները, երբ իրենց խնդրանքով, ուրիշ պաշտօնի կը կոչուին, իսպառ կը դադրին իրենց անդամութենէն:

Յօդ. 63. — Ծերակուտի անդամները կը ստանան ամսական 10,000 դրուչ թոշակ: Երբ ծերակուտական մը ուրիշ պատճառով թոշակ կը ստանայ գանձէն, այդ թոշակը, եթէ 10,000 էն պակաս է, կը լրացուի, իսկ եթէ հաւասար կամ աւելի է, կը չարունակէ ստանալ զայն:

Յօդ. 64. — Ծերակուտը կը քննէ օրինագծերն ու ելեմուտքի նախահաշիւը, որ կը ղրկուին իրեն պատգամաւորական ժողովէն: Եթէ ծերակուտը՝ օրինագիծ մը քննած ժամանակ, անոր մէջ Վեհ. Սուլթանի վեհապետական իրաւունքներուն, Սահմանադրութեան, երկրի հողային ամբողջութեան, ներքին ապահովութեան, Հայրենիքի պաշտպանութեան և բարոյականի դէմ տրամադրութիւն մը գտնէ, պատճառաբանած քէտով, վերջնականապէս կը մերժէ, կամ իր դիտողութիւններով հանդերձ կը վերադարձնէ պատգամաւորական ժողովին, խնդրելով՝ որ ցոյց տրուած ձևով փոփոխէ կամ չափաւորէ: Ծերակուտի քննարկած օրինագիծը կը ղրկուի մեծ-եպարքոսին: Ծերակուտը իրեն ներկայացուած խնդրագրերը քննելէ յետոյ, արժանի դատածները կը ղրկէ, իր դիտողութիւններով, մեծ-եպարքոսին:

ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 65. – Պատգամաւորներու թիւը կորուչի հետեւեալ կերպով. օսմանեան 50,000 արու անձ մէկ պատգամաւոր կրնարէ:

Յօդ. 66. – Ընտրութիւնը կը կատարուի գաղտնի քւէարկութեամբ: Ընտրութեան եղանակը կորուչի առանձին օրէնքով:

Յօդ. 67. – Բացի նախարարներէն՝ պետական պաշտօնատարները պատգամաւոր չեն կրնար ըլլալ: Որեւէ պաշտօնատար մը պատգամաւոր ընտրելէ յետոյ, ազատ է գայն ընդունիլ կամ մերժել. ընդունելու պարագային պէտք է հրաժարի իր պաշտօնէն:

Յօդ. 68. – Պատգամաւոր չեն կրնար ընտրուիլ.

ա. – Օտարահպատակները:

բ. – Անոնք, որ գոյութիւն ունեցող մասնաւոր օրէնքի մը համաձայն, օտար ծառայութեան մէջ մտած ըլլալով՝ առանձին արտօնութիւններ կը վայելեն:

գ. – Անոնք, որ թիւրքերէն չեն գիտեր:

դ. – Անոնք, որ երեսուն տարին լրացուցած չեն:

ե. – Որեւէ մէկի մը մօտ ընտրութեան ժամանակ ծառայ եղողները:

զ. – Մնանկացած և իրենց վարկը չվերականգնած անձինք:

է. – Այն անհատները, որ իրենց վատ ընթացքով արատաւորւած են հասարակութեան աչքին:

ը. – Դատաստանական արգելքի տակ գտնուող անձինք, մինչև արգելքին վերանալը:

թ. – Անոնք, որ զրկւած են իրենց քաղաքացիական իրաւունքներէն:

ժ. – Անոնք, որ օտարահպատակութեան խնդիրք տւած են:

Առաջին ընտրութիւններէն չորս տարի յետոյ, պատգամաւորութեան պայմաններէն մէկը պիտի ըլլայ թիւրքերէն կարողալ և՛ որքան կարելի է՝ գրել գիտնալ:

Յօդ. 69. – Պատգամաւորական ընդհանուր ընտրութիւնները կը կատարուին չորս տարին անգամ մը: Իւրաքանչիւր պատգամաւորի պաշտօնը կը տեւէ միայն չորս տարի. բայց վերընտրելի է:

Յօդ. 70. – Ընդհանուր ընտրութիւնները պիտի սկսին նոյեմբերի 1-էն գոնէ չորս ամիս առաջ: Ժողովը պիտի բացուի նոյեմբերի 1-ին:

Յօդ. 71. – Իւրաքանչիւր պատգամաւոր կը ներկայացնէ ո՛չ միայն զինքն ընտրող չրջանակը, այլ և ամբողջ օսմանցիները:

Յօդ. 72. – Ընտրողները պարտաւոր են իրենց պատգամաւորներն ընտրել իրենց գաւառէն:

Յօդ. 73. – Երբ ժողովը կայսերական իրադէտով լուծուի, ընտրութիւնները պէտք է տեղի ունենան այնպիսի ժամանակ մը, որ ամենաշատը վեց ամսէն վերստին գումարի նոր ժողովը:

Յօդ. 74. – Պատգամաւոր մը իր ընտրեալի կոչումը կը կորցնէ մահան, դատաստանական արգելման, երկար բացակայութեան, դատապարտութեան կամ պետական պաշտօնի մը հրաւիրելու հանգամանքին մէջ. անոր տեղ փոխարինողին ընտրութեանը կը ձեռնարկուի ընտրական օրէնքի տրամադրութեան համեմատ և այնպիսի պայմանաժամի մը մէջ, որ նորընտիր պատգամաւորը կարող ըլլայ իր պաշտօնը կատարել գոնէ ժողովի յաջորդ նստաշրջանին:

Յօդ. 75. – Պատգամաւորնի մը տեղ ընտրուող երեսփոխանին պաշտօնը կը տեւէ մինչև յառաջիկայ ընդհանուր ընտրութիւնները:

Յօդ. 76. – Պետական զանձարանէն իւրաքանչիւր պատգամաւորի տարեկան ոռճիկ պիտի յատկանայ 20,000 դրուչ: Պատգամաւորներու Կ. Պօլիս երթևեկելու ճանապարհածախքը կը վճարուի նոյնպէս զանձարանէն և այն հաշուով, ինչ հաշուով ճանապարհածախք կը տրուի առ հասարակ պետութեան քաղաքացիական բոլոր այն պաշտօնեաներուն, որոնք 5000 դրուչ ամսաթոշակ կը ստանան:

Յօդ. 77. – Պատգամաւորական ժողովի նախագահն ու երկու փոխ-նախագահը կընտրուէ Վեհ. Սուլթանը ինը հոգիէ բաղկացած թեկնածուներու ցանկի մը մէջէն, զոր ժողովը կորոչէ քւէներու մեծամասնութեամբ: Այս ինը ընտրելիներուն երեքը առաջին նախագահութեան, երեքը՝ երկրորդ նախագահութեան և երեքն ալ երրորդ նախագահութեան համար են: Նախագահն ու փոխնախագահը իրադէտով կանաւնին:

Յօդ. 78. – Պատգամաւորական ժողովին նիստերը հրապարակային են: Սակայն ժողովը կարող է դոնփակ նիստ ընել, եթէ նախարարները, նախագահը կամ տասնհինգ պատգամաւորներ կառաջարկեն և ժողովը կը քւէարկէ առաջարկը:

Յօդ. 79. – Պատգամաւոր մը, բացի այն դէպքէն, երբ յանցանք գործած տեղն իսկ կը բռնուի, չի կրնար ձերբակալուիլ կամ դատի ենթարկուիլ, մինչև որ ժողովը մեծամասնութեամբ չքւէարկէ:

Յօդ. 80. – Պատգամաւորական ժողովը քննութեան կենթարկէ օրինագծերը, պետական ելևմուտքի և Սահմանադրութեան վերաբե-

րեալ տրամադրութիւնները, զորս կընդունի, կը բարեփոխէ կամ կը մերժէ: Նախարարներուն հետ համաձայնութեամբ կը քննէ և կը քննարկէ պետութեան ընդհանուր ծախքերու գումարն ու զանոնք ծածկելու համար որոշուած տուրքերու չափը և բաշխման եղանակը:

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 81. — Յատուկ օրէնքով անւանուած և «բերաթ»-ով հաստատուած դատաւորները չեն կրնար պաշտօնանկ ըլլալ, բայց իրենք կարող են հրաժարիլ: Յիշեալ օրէնքի տրամադրութիւններուն համեմատ պիտի կատարուի դատաւորներու պաշտօնի բարձրացումը, տեղափոխութիւնը, հանգստեան կոչւիլը, դատաւճռի մը հետեանքով պաշտօնանկութիւնը: Նոյն օրէնքը կը սահմանէ նաև դատաւորներէն կամ դատական պաշտօնեաներէն պահանջուած յատկութիւնները:

Յօդ. 82. — Դատաւարական բոլոր նիստերը հրապարակային են: Կարելի է հրատարակութեան տալ դատաւճիռները: Դռնփակ նիստ տեղի կունենայ միայն օրէնքի նշանակած մասնաւոր պարագաներուն մէջ:

Յօդ. 83. — Իւրաքանչիւր անհատ կարող է իր իրաւունքներուն պաշտպանութեան համար գործ դնել բոլոր օրինական միջոցները:

Յօդ. 84. — Դատարան մը չի կրնար որևէ պատճառաբանութեամբ մերժել իր ձեռնհասութեան վերաբերեալ դատ մը, ո՛չ ալ քննութիւնն սկսելէ յետոյ դատը դադրեցնել կամ յետաձգել, մինչև որ դատախազը, գանգատաւորը չհրաժարի իր դատէն: Այս պարագային մէջ, կառավարութիւնը դարձեալ կը շարունակէ դատական գործողութիւնները, եթէ դատը պատժական նկարագիր ունի:

Յօդ. 85. — Ամեն դատ կը տեսնուի ձեռնհաս դատարանէն: Անհատներուն և պետութեան միջև ծագած դատերը տեղի կունենան նոյնպէս հասարակ դատարաններու առաջ:

Յօդ. 86. — Դատարանները ազատ են ամեն տեսակ միջամտութիւններէ:

Յօդ. 87. — Շէրիի վերաբերեալ գործերը կը դատուին Շէրիի դատարաններէն: Քաղաքացիական դատերը՝ քաղաքացիական դատարաններէն:

Յօդ. 88. — Օրէնքով կորուչին զանազան դատարաններու պարտականութիւնները, անոնց իրաւասութեան աստիճանները և դատաւորներու թոշակները:

Յօդ. 89. — Մասնաւոր գործեր դատելու համար, սովորական դատարաններէն դուրս որևէ պատճառով արտակարգ դատարաններ և յանձնախումբներ չեն կրնար հաստատուիլ: Սակայն օրէնքի սահմանած ձևերով կարելի է նշանակել իրաւաբաններ (Թահքիմ) կամ պատուիրակ-դատաւորներ (միւթէվէլլա):

Յօդ. 90. — Դատաւոր մը չի կրնար իր պաշտօնին հետ թոշակաւորուիլ հանրային պաշտօն վարել:

Յօդ. 91. — Պատժական դատերու մէջ հասարակութեան իրաւունքը պաշտպանելու համար կը կարգւին ընդհանուր դատախազներ (պրօկուրօր): Անոնց պաշտօնին սահմաններն ու պաշտօնական դասակարգութիւնը կորուչին օրէնքով:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՏԵԱՆ

Յօդ. 92. — Բարձրագոյն ատեանը կը բաղկանայ երեսուն անդամներէ, որոնց տասը Մերակոյտի անդամներէն, տասը՝ պետական խորհրդի և տասն ալ վճռաբեկ ու վերաքննիչ դատարաններու նախագահներէն ու անդամներէն կընտրուին: Բոլոր անդամները վիճակով կորուչին: Բարձրագոյն ատեանը կը գումարուի՝ կայսերական իրադէով, պէտք եղած ժամանակ, Մերակոյտի խորհրդարանին մէջ: Անոր պաշտօնն է դատել նախարարները, վճռաբեկ ատեանի նախագահներն ու անդամները, ինչպէս և ծանր դաւաճանութեամբ կամ պետական ապահովութեան դէմ գործելու յանցանքով մեղադրուող բոլոր անձերը:

Յօդ. 93. — Բարձրագոյն ատեանը կը բաղկանայ երկու ճիւղէ. ամբաստանիչ և վճռատու: Առաջինը կը կազմուի ինը հոգիէ, որոնց երեքը Մերակոյտի, երեքը պետական խորհրդի և երեքը վճռաբեկ ու վերաքննիչ դատարաններու անդամներէն, վիճակով:

Յօդ. 94. — Ամբաստանիչ ատեանը իր անդամներուն երկու երրորդին մեծամասնութեամբ կորուչէ վճռատու ատեանին առջև հանել մեղադրական գործը: Ամբաստանիչի անդամները չեն կրնար մասնակցիլ վճռատուի խորհրդակցութիւններուն:

Յօդ. 95. — Վճռատու ատեանը կը բաղկանայ քսան և մէկ անդամէ, որոնց եօթը Մերակոյտի, եօթը Պետական խորհրդի և միւս եօթը վճռաբեկ ու վերաքննիչ դատարաններու անդամներէն: Վճռատու ատեանը իր վճիռները կը կայացնէ հաստատուած օրէնքներուն համաձայն և իր անդամներուն երկու երրորդին մեծամասնութեամբ: Իր վճիռներն անփոփոխ են ու անջնջելի:

ԵԼԵԻՄՈՒՏԲ

Յօդ. 96. — Պետական որևէ տուրք առանց օրէնքի չի կրնար որոշուիլ, բաշխուիլ և հաւաքուիլ:

Յօդ. 97. — Բիւզջէն պետական երեւոտքի նախահաշիւը որոշող օրէնքն է: Այդ օրէնքով միայն կը կատարուին պետական տուրքերու որոշումը, բաշխումն ու հաւաքումը:

Յօդ. 98. — Ընդհանուր ժողովը յօդուած առ յօդուած կը քննէ բիւզջէն և կը քւէարկէ: Երեւոտքի մանրամասն կէտերը և բիւզջէի յարակից ցուցակները կը բաժանին մասերու, գլուխներու և յօդուածներու, կանոնադրութեամբ որոշուած եղանակի համաձայն: Այդ ցուցակները կը քւէարկին գլուխ առ գլուխ:

Յօդ. 99. — Բիւզջէի նախագիծը կը ներկայացուի պատգամաւորական ժողովի բացումէն անմիջապէս յետոյ, որպէսզի հաստատուի և գործադրուի երեւոտական տարիին սկիզբէն:

Յօդ. 100. — Բիւզջէի նախատեսած ծախքերէն զատ ոչ մէկ ծախք կրնայ կատարուիլ առանց յատուկ օրէնքի:

Յօդ. 101. — Արտակարգ պարագաներու մէջ, երբ ստիպողականութիւն կայ, նախարարները կարող են, Ընդհանուր ժողովի բացակայութեան ժամանակ, կայսերական իրադէտով պէտք եղած դրամական միջոցը հայթայթելով՝ բիւզջէն դուրս ծախք մը ընել, բայց այն պայմանով, որ Ընդհանուր ժողովը գումարելուն պէս օրինագծով մը այդ մասին հաւանութիւն առնեն անկէ:

Յօդ. 102. — Բիւզջէն մէկ տարւան համար միայն կը քւէարկուի և միայն այդ տարւան համար օրէնքի ոյժ ունի: Սակայն, երբ բացառիկ հանգամանքներու պատճառով, պատգամաւորական ժողովը կը լուծուի նախքան բիւզջէի քւէարկումը, նախարարները կրնան, կայսերական իրադէտով, նախորդ տարւան բիւզջէն գործադրել մինչև ժողովին յառաջիկայ գումարումը: Այդ առժամանակեայ բիւզջէին գործադրութիւնը չի կնար մէկ տարիէն անցնիլ:

Յօդ. 103. — Բիւզջէի վերջնական կարգադրութեան օրէնքը՝ նոյն տարւան հասոյթներէն և ծախքերէն գոյացած մուտքերու և ելքերու գումարները կը նշանակէ: Իր ձևն ու բաժանումները բիւզջէին յար և նման են:

Յօդ. 104. — Վերջնական կարգադրութեան օրինագիծը ընդհանուր ժողովին կը ներկայանա նոյն տարւան վախճանէն գոնէ մինչև չորս տարի:

Յօդ. 105. — Հաշուակալ ատեան մը պիտի հաստատուի, որուն պաշտօնը պիտի ըլլայ գանձարանի հաշուակալներու գործողութիւններն, ինչպէս նաև այլ և այլ պաշտօնատներու տարեկան հաշիւները քննել: Յիշեալ ատեանը պէտք է ամեն տարի իր աշխատութիւններուն արդիւնքը ներկայացնէ պատգամաւորներու ժողովին, առանձին տեղեկագրով մը: Իսկ ամեն եռամսեայի վերջն ալ պետական երեւոտքի վիճակին վրայ պէտք է տեղեկագիր մը ներկայացնէ Վեհ. Սուլթանին, մեծ-եպարքոսին միջոցով:

Յօդ. 106. — Հաշուակալ ատեանը պէտք է կազմուի 12 անփոփոխ անդամներէ, որոնք կայսերական իրադէտով պիտի նշանակուին: Այդ անդամներէն և ո՛չ մէկը պաշտօնանկ կրնայ ըլլալ, մինչև որ պատգամաւորներու ժողովը մեծամասնութեան քւէով և պատճառաբանուած առաջարկութեամբ չորոշէ:

Յօդ. 107. — Առանձին օրէնքով պիտի որոշին հաշուակալ ատեանի անդամներէն պահանջուած յատկութիւնները, անոնց իրաւունքներուն և պարտականութիւններուն մանրամասնութիւնները, հրաժարման, փոփոխման, յառաջացման և թողակով պաշտօնէ դադարման համար պէտք եղած տրամադրութիւնները, ինչպէս նաև ատեանին դիւաններուն կազմութիւնը:

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 108. — Գաւառներու վարչական ձևը հիմնված է ապակեղրոնացման սկզբունքին վրայ: Առանձին օրէնքով պիտի որոշին այդ վարչական ձևին մանրամասնութիւնները:

Յօդ. 109. — Առանձին օրէնքով մը մանրամասնօրէն պիտի որոշուի գաւառներու, նահանգներու և անոնց վարչական խորհուրդներու ընտրութեան ձևն, ինչպէս նաև ամեն տարի նահանգական քաղաքներու մէջ գումարուող ընդհանուր խորհուրդներու անդամներուն ընտրութիւնը:

Յօդ. 110. — Նոյն օրէնքով պիտի որոշին նոյնպէս նահանգական ընդհանուր խորհուրդներու իրաւասութիւնները, որոնք են.

ա. Իրաւունք ժողով և որոշում կայացնելու հասարակական շահի վերաբերեալ խնդիրներու մասին, ինչպէս օրինակ, հաղորդակցութեան ճանապարհներու շինութիւն, գիւղացիական փոխատու բանկերու հիմնարկութիւն, արհեստներու, վաճառականութեան և երկրագործութեան զարգացում և ընդհանուր կրթութեան ծաւալում և այլն:

բ. Իրաւունք բողոքելու ձեռնհաս իշխանութեան՝ տուրքերու բաշխման և հաւաքման, ինչպէս և ուրիշ խնդիրներու մէջ, ապօրէն գործողութիւններու և դէպքերու համար դարման և արդարութիւն ձեռք բերելու համար:

Յօդ. 111. — Աւաններու (կազա) մէջ այլ և այլ հասարակութիւններու վերաբերեալ խորհուրդ մը պիտի գտնուի, որուն պաշտօնը պիտի ըլլայ հսկել:

ա. Բարեպաշտական հիմնարկութիւններու կամ անոնց անշարժ կալաւածներու եկամուտներուն մատակարարութեան վրայ, որոնց գործադրութեան բուն նպատակը հիմնադիրներու յատուկ տրամադրութիւններով կամ սովորութեամբ որոշուած է:

բ. Ողորմութեան կամ բարեգործութեան համար կտակած կամ նւիրած գումարներու կամ գոյքերու գործածութեան վրայ:

գ. Որբերու դրամներուն՝ հաստատուած յատուկ օրէնքներու համաձայն՝ մատակարարութեան վրայ:

Իւրաքանչիւր խորհուրդ պիտի կազմուի իր պատկանած հասարակութեան ընտրեալ անդամներէն, հաստատելի յատուկ կանոններու համաձայն:

Այդ խորհուրդները կախում պիտի ունենան տեղական իշխանութիւններէն և նահանգական ընդհանուր խորհուրդներէն:

Յօդ. 112. — Քաղաքային կամ թաղային գործերը, Կ. Պօլսի և գաւառներու մէջ, ժողովուրդէն ընտրուած քաղաքային խորհուրդներէ պիտի մատակարարուին: Այդ խորհուրդներու կազմութիւնը, իրաւասութիւնն ու ընտրութեան եղանակը պիտի որոշուին յատուկ օրէնքով:

ԶԱՆԱԶԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 113. — Երբ պետութեան որեւէ մասին մէջ խռովութեան յայտարար որեւէ դէպքեր և նշաններ երևան գան, կայսերական կառավարութիւնը իրաւունք ունի նոյն տեղը դնելու պաշարման վիճակի մէջ: Պաշարման վիճակին հետեանքով ժամանակաւորապէս կը դադարի քաղաքացիական օրէնքի գործադրութիւնը: Պաշարման վիճակի մէջ գտնուող տեղերու կառավարութեան եղանակը պիտի որոշուի յատուկ օրէնքով: Վեհ. Սուլթանը միայն իշխանութիւն ունի պետութեան հողէն արտաքսելու այն անձերը, որոնք, ոստիկանութեան արժանահաւատ տեղեկութիւններուն համեմատ, վնասակար կը ճանչըցին պետական ապահովութեան:

Յօդ. 114. — Ամեն օսմանցիի համար նախնական կրթութիւնը պարտաւորիչ է: Գործադրութեան պարագաները յատուկ օրէնքով մը պիտի որոշուին:

Յօդ. 115. — Սահմանադրութեան ո՛չ մէկ տրամադրութիւնը չի կրնար դադրիլ կամ անգործադրելի մնալ որեւէ պատճառով:

Յօդ. 116. — Սահմանադրութեան որեւէ մէկ տրամադրութիւնը կրնայ փոփոխութեան ենթարկուիլ միայն հետեւեալ պայմաններով.

Փոփոխութեան որեւէ առաջարկ թէ նախարարներու կողմէն ըլլայ և թէ երկու ժողովներէն մէկին կամ միւսին կողմէն, նախ պէտք է ներկայանայ պատգամաւորներու ժողովին քննութեանն ու որոշմանը: Եթէ առաջարկը այս ժողովին անդամներուն երկու երրորդէն ընդունի, կը զրկուի Ծերակոյտին, եթէ Ծերակոյտն ալ ձայներու նոյն մեծամասնութեամբ ընդունի, կը ներկայացուի Վեհ. Սուլթանի վաւերացման և եթէ կայսերական իրազէով հաստատուի, այն ժամանակ օրէնքի ոյժ կը ստանայ: Սահմանադրութեան այն տրամադրութիւնը, որու փոփոխութեան առաջարկ կը ըլլայ, օրէնքի ոյժ ունի մինչև այն ատեն, երբ նոր առաջարկը կընդունուի երկու ժողովներէն և կը վաւերացուի կայսերական իրազէով:

Յօդ. 117. — Օրէնքի մը որեւէ կէտին մեկնութեան պէտք տեսնուած ժամանակ, եթէ այդ օրէնքը դատական է, կը դիմուի վճռաբեկ ատենին. վարչական-քաղաքական է՝ պետական խորհուրդին: Սահմանադրութիւններու մասին է՝ ծերակոյտին:

Յօդ. 118. — Այժմ գործադրութեան մէջ եղած ամէն օրէնք, կանոն, սովորոյթ, պիտի չարունակէ գոյութիւն ունենալ, գործադրուիլ, մինչև որ չխափանուի նոր օրէնքով կամ կանոնադրութեամբ:

Յօդ. 119. — 1293 Շէվվալ 10 (1876^{16/28}) թուակիր՝ ընդհանուր ժողովին վերաբերեալ՝ հրահանգը գործադրութենէ պիտի դադարի առաջին նստաշրջանէն յետոյ¹:

¹ Զապեն Տ., Թուրք Սահմանադրութիւնը և Երիտասարդ թուրք կուսակցութիւնները, Թիֆլիս, 1908, էջ 5-38:

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՑԻ ՀՈՒՇԵՐԸ*

– Արևելյան հարցը այնպես, ինչպես ներկայացվում է, մարդկային և քրիստոնեական հարց է: Ընդհակառակն, **գարչանքի** և **չահերի** հարց է: Դրա վրա են հենված եղել թուրք պետության ներքին գործերի նկատմամբ կատարված բոլոր միջամտությունները: Արդարև, համարձակություն է պնդել, որ թուրքական պետությունը կարողացել է կազմել (թուրքերն էլ մեջը լինելու պայմանով) իր բոլոր հպատակներին լավ վերաբերմունք ապահովող կանոնավոր մի վարչություն: Սակայն ճիշտ է այս հարցում սխալը միայն թուրքերի վրա բեռնավորել: Հրեաների, իսլամների և նույնիսկ բռնակալ ցարական իշխանության հակառակորդ քրիստոնյաների դեմ ուսման գործադրած վայրենությունը թեև մարդկային զգացումներն է բորբոքում, սակայն Եվրոպայի մարդասեր դիվանագետները այս հարցում համարձակություն չունեցան ամենափոքր մի խոսք անգամ ասելու: Գիտեին, որ Ռուսաստանի մասին ամենաթեթև բողոքն անգամ պիտի դառնար պատերազմի պատճառ. սրա համար էլ նախընտրեցին լռել: Ազատության պաշտպանի դերը ստանձնող, մարդկային իրավունքների հայտարարությունը հրապարակող Ֆրանսիան չամաչեց վայրենի ու բռնակալ ցարական իշխանությանը ամեն տեսակի օժանդակություն ցույց տալուց և 1871 թվականի պատերազմից հետո այս բռնակալ պետության հետ դաշինք էլ կնքեց: Գերմանիայի հանդեպ պիտի կազմվեր զորավոր մի Ռուսաստան: Ցարական բռնապետությունը առողջացվեց: Նա աչք փակեց թուրքիայի բարենորոգման ձեռնարկների հանդեպ Ռուսաստանի գործադրած արգելքներին: Թուրքիայի կողմից բարեկարգություն կատարելուն երբեք լրջորեն ցանկություն չհայտնվեց: Դաշնագրերում նշված բարենորոգումը, ըստ էության, միջամտություններից բացի ոչ մի բան է: Մի պետության վարչության մեջ առաջադիմությունը և բարենորոգումը ենթակա են նրա քաղաքական և տնտեսական անկախությանը:

Մի կողմից՝ Թուրքիային ստիպում էին բարենորոգումներ կատարել, իսկ մյուս կողմից էլ՝ միջամտություններով և հովանավորումներով՝

* Ներկայացվում է Թալեաթ փաշայի հուշերը առանց մեկնաբանության:

րով՝ քաղաքական, իսկ կապիտուլացիաների միջոցով՝ տնտեսական անկախությունը մեջտեղից բոլորովին վերացնելու համար ապստամբություն էին գրգռում թուրքիայի հպատակ ազգերին:

Ըստ մի թուրք բանաստեղծի՝ այս ձևի բարենորոգման հանձնարարությունները նմանվում էին ձեռներն ու ոտները կապված վիճակում մի մարդու վազել ստիպելուն:

Սրա փոխարեն, Անգլիան, միայն իր քաղաքական շահերը նկատի ունենալով, արգելք հանդիսացավ Ռուսաստանի կողմից թուրքիայի և, ի մասնավորի, Պոլսի գրավմանը: Միայն այս նպատակի վրա էր հենված Սան-Ստեֆանոյի դաշնագրի բարեփոխումը Բեռլինի դաշնագրով: Սակայն Գերմանիայի զինվորական և տնտեսական տեսակետից ցուցաբերած զարմանալիորեն արագ հառաջադիմության Բիզմարկի կողմից կազմված եռյակ դաշնակցության և, մասնավորապես, Անգլիական մեծ նավատորմին վտանգավոր մրցակից եղող գերմանական ծովային ուժերի զարմանալիորեն արագ զարգացման հետևանքով Անգլիան միացավ իր քիչ սիրած ցարի հետ: Այդ օրվանից սկսած՝ Թուրքիան եվրոպական պետություններից և ոչ մեկից, նույնիսկ ի չափ իրենց, ամենափոքր օժանդակություն չստացավ Դաշնակից կողմերից. ամեն մեկն աշխատում էր Արևելյան հարցը լուծել իր նպատակներին հարմար ձևով:

Այն ժամանակ, երբ Բարձրագույն Դուռը իր գոյությունն ապահովելու համար օգտվում էր քաղաքական հակասություններից, պետությունների միջև եղած հավասարակշռումն ու անջատումները այլևս դարձել էին իր դեմ: Եռյակ դաշնակցության (զինակցության) և երկյակ դաշնակցության հարաբերությունները և հատկապես՝ եռյակ դաշնակցության անդամների միջև եղած հարաբերություններն այն աստիճան էին լարված և տեսակետների միջև այնքան տարբերություններ էին երևան եկել, որ պետություններից ոչ մեկը չէր հրաժարվում Արևելյան հարցի քաղաքականությունից: Պետությունների խմբերից յուրաքանչյուրը տարբեր ձևերով աշխատում էր ապահովել իր շահերը: Փարիզի և Բեռլինի դաշնագրերով և պետությունների երաշխավորությամբ ապահովված թուրքիայի գոյության հանդեպ ակնածանք և հարգանք չունեի այդ դաշնագրերը ստորագրող պետություններից ոչ մեկը:

... Արդուլ Համիդի կամայական վարչությունը թե՛ կենտրոնում, թե՛ վերջիններում ստեղծել էր մասնավոր մի խավ, որին պատկանողներն աշխատում էին ապահովել իրենց շահերը ամենամեծ չափով:

փով, ինչի հետևանքով ամբողջապես ճնշվում էր խեղճ ժողովուրդը: Նույն այդ մարդիկ իրար հետ կապված էին իրենց հավաքական շահերով: Պետություն կենտրոնում միևնույնները և պալատականները Ստամբուլի իրենց համագործակիցների հետ ամուր կերպով համախմբված էին և փոխադարձաբար օժանդակում էին իրար: Վիլայեթներում էլ հարուստները և երեւելիները, միևնույնների և պալատականների հետ սեղմ շփում ունենալով, շարունակում էին շահագործել ժողովրդին: Այս խավի մի մասն էլ կազմված էր զանազան փոքրամասնություններից: Հույները, բուլղարները, սերբերը, հայերը, արաբները, քրդերը և առնավուտները (ալբանցիներ) աշխատում էին երկու ձևով օգուտ ապահովել Թուրքիան դեպի անկում և մահ տանող Արդուլ Համիտի կառավարությունից:

Հույները մի կողմից հասկանում էին, որ այս կառավարության գոյատևումը պիտի վերջանա պետության ստույգ փլուզումով և իրենց էլ, մասնավորապես Ռումելիում, համարում էին նրա ժառանգները: Մյուս կողմից Պատրիարքարանի ձեռք բերած առանձնաշնորհումների և ղինվորական ծառայությունից (Հույների) զերծ լինելու շնորհիվ, բարոյական անկախություն էին չահել: Այսպիսով, առանց մրցակցի, մեծ չափերով առևտուր էին անում և այս կերպ ապահովում էին խոշոր հարստություններ:

Բուլղարները և հայերը, իրենց անկախությունը եվրոպական միջամտությամբ ապահովելու նպատակով, պատճառաբանում էին Արդուլ Համիդի կամայական վարչությունը:

Իսկ քրդերն ու ալբանացիները ապաստանել էին պալատի պաշտպանությանը: Առանց մասնակցելու պետական բեռան՝ նրանք անհատապես մեծ շահեր էին ձեռք բերում:

Գալով արաբներին՝ սրանք իրենց շահը տեսնում էին քրիստոնյա և իսլամ արաբների համար մեծ դիրքեր ապահովելու և մասնավոր առանձնաշնորհումներ ձեռք բերելու մեջ: Այս կերպով իրենց շահերն ապահովելու աշխատող ալբանացիները, քրդերը և արաբները մտնում էին վերևում ակնարկածս խավի մեջ: Քրիստոնյա ժողովրդի թշվառությունը չէր տարբերվում իսլամների թշվառությունից:

«Ժեռն թուրք» չարժույթը երևան էր եկել երկրում հավասարություն, ազատություն և արդարություն ապահովելու ցանկությամբ: Այս սկզբունքը ապահովելու նպատակով՝ «Երիտասարդ թուրքերը» կարծում էին, որ երկրի բոլոր ազգերին՝ արաբներին, հույներին, առնավուտներին, թուրքերին և այլ ազգերի, կարելի պիտի լինի

միացնել և այս կերպով միասին աշխատել սիրելի հայրենիքի ապահովության և առաջադիմության համար: Սակայն հեղափոխությանը հաջորդող իրադարձությունները, դժբախտաբար, բոլորովին տարբեր կերպարանք ստացան: Հույները, որպեսզի չիրականանան «Միություն և առաջադիմություն» կուսակցության բուն դիտավորությունները, բուռն կերպով հակառակ կանգնեցին այս միության գաղափարին: Հավասարությունն ու ազատությունը նրանց նպատակներին ու շահերին հակառակ էին: Հավասարությունը նշանակում է բոլոր հայրենասերների շահերի և աշխատանքի հավասարություն:

Սակայն Մեջլիսում հույները ուժեղ դիմադրություն ցույց տվեցին ընդհանուր ղինվորական ծառայության գործադրմանը: Բնական է, որ անկարելի էր հավասարության և մասնավոր առանձնաշնորհումների հաշտեցումը: Օսմանցիության գաղափարը հելլենականության համար վտանգ էր: «Օսմանցի» խոսքից ջղայնացող Սերվիլի պատգամավոր Բոչո էֆենդին Մեջլիսի ատենախոսական ամբիոնից հրապարակավ և լրջությամբ հայտարարեց, որ իր համար օսմանցիությունը «օսմանյան բանկի» «օսմանցիությունից» ավելի ոչինչ չի նշանակում: Այս նկատառումով հույն պատգամավորները նման հարցերում միշտ հակառակ էին կառավարության նախագծերին ու միանում էին ընդդիմադիրներին և ռեակցիոներներին:

Հայերն ու բուլղարները իրենց նպատակների իրագործման համար դիմում էին տարբեր միջոցների: Հիմնական օրենքի պարզեցած ազատության շնորհիվ, առաջին նպաստավոր առիթի ժամանակ կառավարության դեմ դուրս գալով, եվրոպայի կողմից կատարվելիք միջամտության հետևանքով իրենց համար ինքնավար վարչություն և, վերջապես, անկախություն ապահովելու նպատակով, սրանց մի մասը՝ Անատոլիայում, մի մասն էլ՝ Ռումելիում տենդային արագությունը և շատ բացահայտ ձևով աշխատում էին իրենց ազգային գոյության համար:

«Ժեռն թուրքերի» հանդեպ ձևացնում էին որպես Հիմնական օրենքին կատարյալ հավատարիմ և համերաշխ, միաժամանակ՝ եվրոպայի թե՛ հին և թե՛ նոր կառավարության դեմ բողոքող և ճգնում էին ապացուցել, որ շարունակվում է թուրքական վայրենությունը: Նրանք իրենց հավակնությունները աշխատում էին իրականացնել քաղաքական կուսակցությունների միջոցով: Ազանայի դեպքերը, Ռումելիի հուզումներն ու ոճիրները բացառապես նրանց գործերն են, որոնք ի վերջո վերագրվել են թուրք ժողովրդին:

Այնուամենայնիվ, չեմ ուզում ասել, որ իսլամ ժողովուրդը չի մասնակցել կոտորածներին: Իմ նպատակն է ապացուցել, որ այդ դրդումներն ու գրգռությունները հայերի և բուլղարների կողմից կատարվել են սոսկ քաղաքական նպատակներով:

Ադանայի ղեպքերից անմիջապես հետո ներքին գործերի նախարար եղա: Ամբողջ ցանկությունս ու նպատակս էր զանազան ազգություններ, ի մասնավորի՝ հայերին և թուրքերին միացնել բարեկամական կապով: Ուշադրությամբ քննեցի Ադանայի ղեպքերի մասին եղած գրգռիչ թղթերը: Դեպքերի՝ հայերի կողմից կատարված գրգռումի արդյունք լինելը հաստատվում են Քննիչ Հանձնաժողովի հայ անդամների վկայությամբ ևս: Հանձնաժողովի անդամներից մեկը՝ Հակոբ Պապիկյանը, ինձ անձամբ խոստովանեց: Ապացուցվում էին նաև գրգռության ենթարկված ժողովրդի կատարած անագորույն ոճիրները: Ադանայի ղեպքերը տեղի են ունեցել 1909թ. մարտի 31-ին ռեակցիայի օրերին: Անկասկած է, որ հետապնդված նպատակն է եղել ժողովրդական զանգվածների մոլեռանդությունը գրգռելով՝ ջարդի պատճառ հնարել, այդ ձևով Եվրոպայի ուշադրությունը իրենց վրա գրավել և Կիլիկիայում ստեղծել հայկական ինքնավար մի միություն: Ես այդ հարցում, անկողմնակալ պետական մարդու հանգամանքով, ուզում էի քաղաքական նպատակս մոռանալ և իսլամ լինի, թե հայ՝ ջարդի հեղինակներին իրենց արժանի պատժին ենթարկել: Այս ղեպքերի ընթացքում պնդեցի, որ պետք է պատժի ենթարկվեն նաև իսլամ հասարակությունը կոտորածի գրգռող մյուսներին և մյուս իսլամները: Դատարանը մահապատժի ենթարկեց մյուսներին և ընկերներին: Մինիստրների խորհրդում այս մահապատժի վավերացման ապահովողը դարձյալ ես եղա: Ես այն համոզումն ունեի, որ հարցը պիտի թեթևանա: Կոմիտեների հանդեպ միջոց ցույց եմ տվել առավելագույն ներողամտություն: Ես գործում էի նրանց իսկական նպատակները գիտեցողի պես: Սակայն կառավարության այս վերաբերմունքը կոմիտեների մոլի ցանկությունները թեթևացնելու փոխարեն, ընդհակառակն, ավելի ամրացրեց:

Մի խոսքով, երբ «Ժեռն թուրքերը» երկրի ներսում պայքարում էին մոլեռանդ, ազդեցիկ, միայն իրենց չահերը մտածող և զանազան ազգությունների պատկանող անհատների, քաղաքական պատճառներով «Ժեռն թուրքերի» ազատ պետության հանդեպ հարուցած դժվարությունների և արգելակումների դեմ, դրսում էլ ոտքի տակ էին առնվում գոյություն ունեցող դաշնագրերը: Առանց իրական պատ-

ճառի, որպես կատարված իրողություն, մի շարք պետությունների կողմից հափշտակվում էին թուրք պետության զանազան մասերը, իսկ դաշնագրերը միասին ստորագրած տերությունները այս մասին լուրջություն էին պահպանում:

1908 թվականին մի կողմից Բուլղարիան, Ստամբուլում իր գործակատար պարոն Կեչչոֆին (գլխավորապես) խնջույքի հրավերած չլինելու պատրվակով, Արևելյան Ռումելին (Պլովտիվի մարզը) իրեն միացրեց և թագավորություն հռչակեց: Մյուս կողմից՝ Ավստրիան, առանց որևէ պատճառի, Բոսնիա-Հերցեգովինան իրեն միացրեց: Այնուամենայնիվ, պետությունների երկու խմբերն էլ չհամարձակվեցին բողոքելու: Այդ շրջանում, Բելգիայի չեզոքությունը երաշխավորող դաշնագիրը խախտելու համար Գերմանիայի հանդեպ պատերազմ հայտարարած կարիները իշխանության գլուխը գտնվող Ասքուլիթի կարիներն էր: Սակայն հողային կցումները և դաշնագրի խախտումները միայն սրանցից էին բաղկանում. 1906 թվականի ֆաս-ի (Մարոկկո) մասին համաձայնությունից հետո Խտալիան, առանց որևէ պատճառի, հարձակվեց Տրիպոլիի վրա: Բելգիին դաշնագիրը ստորագրող պետությունները լուրջություն պահեցին այս հափշտակության հանդեպ: Թուրքիան, սոսկ այս հափշտակության և կատարված իրողությունների դեմ բողոքելու նպատակով, ստիպված եղավ պատերազմ հայտարարել Խտալիայի դեմ: Մյուս նպատակն էր փակել տարբեր պետությունների ախորժակը և արգելք հանդիսանալ նոր «կատարված իրողություններին»: Դժբախտաբար այս ջանքերն ու զոհողությունները չկարողացան կասեցնել այդ մոլի տենչանքն ու ցանկությունները: Պատերազմի երկարաձգման և կուսակցական հակառակությունների պատճառով երկրի ներսում երևան եկած խառնակություններից օգտվելու նպատակով մեր դեմ կազմակերպվեց Բալկանյան միությունը:

Եվրոպական մեծ պետությունների համար Բալկանյան պատերազմի առաջն առնելը շատ պարզ մի գործ էր: Պետությունների որ խմբից էլ լինեք, մեծ պետություններից որևէ մեկի լուրջ դիրք բռնելը բավական էր արգելք հանդիսանալու այս արյունահեղության: Սակայն քաղաքական հաշիվներն ու մտքերը այստեղ ևս հաղթեցին ողջամտությանը և մարդկային իդեալներին: Երեք համաձայնական պետությունները իրենց նպատակին հարմար գտան այդ միությունը և հույս ունեին եղյակ դաշնակցության հանդեպ մի ուժ ստեղծել: Սրա փոխարեն Ավստրիայի դեսպան Մարկոֆ Պալլավիչինին, ինչպես

Հաստատում էր ինձ մեր զանազան տեսակցություններում, հույս ուներ, որ Թուրքիան հաղթական դուրս կգա պատերազմից: Ավստրիան հույս ուներ, որ պարտված և պատերազմից թուլացած Բալկանյան պետությունները, մասնավորապես Սերբիան, ենթակա պիտի դառնան իր ցանկություններին, ինքն էլ հատուկ և մեծ դեր պիտի խաղար Ալբանական հարցում: Պետությունների մյուս խումբը ևս, Թուրքիայի՝ պատերազմից հաղթական դուրս գալու պայմանով, որպես կանխազգուշություն, պատերազմից հետո գոյավիճակը (ստատուս քվո) պահպանելու մասին էին արտահայտվում: Գալով Թուրքիային՝ նա զբաղված էր ներքին հակառակություններով և ապստամբություններով: Փոխվել էր բանակի կազմակերպական ձևը, սակայն նոր կարգը տակավին չէր գործադրվել: Այդ ժամանակ իշխանության գլուխ գտնվող Ղազի Ահմեդ Մախթար փաշայի կարիքները, համոզված լինելով, որ Եվրոպան պատերազմ չի թույլատրելու, զինավարժության նպատակով զենքի տակ կանչված ստորաբաժանումները՝ մոտավորապես 100,000 մարդ, ազատ էր արձակել: Սակայն պատերազմը ծագելուն պես, բանակը տարօրինակ կացության մատնվեց: Մի կողմից՝ ստորաբաժանումները ազատ էին արձակվում, մյուս կողմից՝ նոր զնդեր զենքի տակ էին առնվում, որով կադրերը փոխված լինելով՝ ոչ սպաններն էին ճանաչում զինվորներին և ոչ զինվորները՝ սպաններին:

Այսպիսի չփոթության մատնված բանակով պատերազմը, Թուրքիայի համար ղեռ չսկսած, արդեն կորած էր:

Առանց նկատի առնելու, որ Ալբանիայում և Մակեդոնիայում թուրքերը մեծամասնություն են կազմում, 1913 թվականին Լոնդոնի կոնֆերանսը անգույթ վիրաբույժի գործողություններ կատարեց և դանակը ազատորեն խաղացրեց Բալկանյան քարտեզի վրա: Սակայն այս գործողությունը չապահովեց ցանկացած արդյունքը. հիվանդացան նաև ուրիշները:

Այս կերպով ամբողջ Եվրոպան դատապարտված էր անբուժելի հիվանդության: Բալկանյան պատերազմն առաջացրել էր համաշխարհային պատերազմ: Հնարավոր չէ նախապես որոշել, թե համաշխարհային պատերազմն ինչեր պիտի ծնի: Սա ստույգ է, որ ղեռ տարիներով չպիտի վերահաստատվի հրապարակից վերացած եվրոպական հավասարակշռությունը և այն դեմ պիտի առնի մի շարք տնտեսական և քաղաքական երևույթների:

Բալկանյան պատերազմում թուլացած Թուրքիային այլևս ոչ մի իրավունք չէր մնացել: «Ուժը վեր է իրավունքից» խոսքը իր ամբողջ բովանդակությամբ և բացահայտ կերպով գործադրվում էր Թուրքիայի նկատմամբ: Առանց ժողովրդին, կրոնական և քաղաքակրթական հարաբերությունները հաշվի առնելու՝ չորս հարյուր, հինգ հարյուր տարիներ ի վեր թուրք պետությանը կապված երկրների շատ մասեր՝ նահանգները անողորմ կերպով պոկվում էին պետությունից: Լոնդոնի կոնֆերանսը այս հարցերում գործում էր բացառապես «իրավունքը գորավորին է» սկզբունքով:

Երկրորդ Բալկանյան պատերազմի ծագումով, երբ Թուրքիան իր իրավունքի և ուժի վրա հենված, կուտուրական պատմության միակ իսլամական ավանդություններ պարունակող երկրորդ մայրաքաղաքը՝ էդիրենն (Ադրիանապոլիս), և չրջակայքը դարձյալ գրավեց, բոլոր կողմերից առարկություններ բարձրացան: Այդ ժամանակ պետություններից ոչ մեկը Թուրքիայից ոչ մի օգուտ չէր սպասում: Սրանցից ամեն մեկը աշխատում էր իր կողմը շահել Բալկանյան տերությունները: Նկատվում էր, որ դարձյալ քաղաքական շահն է այս անիրավությունների պատճառն ու չափանիշը: Այն ժամանակ, երբ Բալկանյան պետությունների՝ Թուրքիային պատերազմ հայտարարելը, պատերազմից հետո հողաբաժիններ խլելը օրինական էր ճանաչված, Թուրքիայի՝ Բուլղարիային պատերազմ հայտարարելը և հինգ հարյուր տարիներ ի վեր իր սեփականություն եղող հողային մասերը ետ առնելը իրավացի չէր ճանաչվում: Սրբի վարդ Գրեյը մեր ղեսպանին սպառնում էր՝ «էդիրեն» գնալու ղեպքում՝ Ստամբուլն էլ պիտի կորցնեք»: Պարոն Սազանովը տեղեկացրել էր, որ էդիրենի վրա մեր կատարած արշավի մասին պատերազմական և ծովային նախարարների հետ կայացած խորհրդակցությունում պատրաստված և տրված մանրամասն հուշագրին պիտի պատասխանվի: Պարոն Պիչոն ևս պնդում էր, որ մենք իրավունք չունենք Լոնդոնի որոշումների դեմ դուրս գալու: Բոլորն էլ մեզ սպառնում էին Թուրքիայի կործանմամբ: Այն ժամանակվա թուրք կառավարությունը կատարելապես ծանոթ էր Եվրոպայի և մասնավորապես՝ Ռուսաստանի և նրա անհաղ ցանկություններին ու փափագներին օժանդակելու պարտավորություն ունեցող Անգլիայի և Ֆրանսիայի նպատակներին ու մտքերին: Էդիրենի նորից գրավումը բարձրացրեց հոգեպես և բարոյապես ճգնված ժողովրդի բարոյականը: Աշխատելու և ապրելու հույսը նորից կենդանացավ: Այս, բնականաբար, երբեք գոհ չթողեց Թուրքիայի մահվանն ու ժառանգությունն սպասող Ռուսաստանին:

Ռուսաստանը ուզում էր Ռումելիում իր հրամանների գործադրման պատրաստ կանգնած Բուլղարիայի, իսկ Անատոլիայում, ցանկացած անկախ Հայաստանի շնորհիվ, Թուրքիան փոքրացնելով օղակի մեջ առնել և այսպիսով, Ռուսաստանի համար ամեն տեսակի վտանգ մեջտեղից վերացնելուց հետո, կտրել նաև Կովկասի մուսուլմանների հետ թուրքերի հարաբերությունները: Սրանից հետո Ստամբուլի մասին իր ծրագիրների իրականացումը շատ դյուրին պիտի լիներ: Երբ Հայերը հակացան Ռուսաստանի այս ծրագրերը, սկսեցին հակում ցույց տալ դեպի այն Ռուսաստանը, որին երբեք չէին սիրում և Կովկասում ենթակա էին եղել նրա բռնություններին: Նրանք կարծեցին, որ այլևս հասել է Թուրքիայում անկախություն ձեռք բերելու առիթն ու ժամանակը: Հնչակ, դաշնակ և ռամկավար Հայ ազգային կազմակերպությունները միացան Հայ պատրիարքարանին և էջմիածնին ու կաթողիկոսի միջնորդությամբ և Նուբար փաշայի նախագահությամբ կազմեցին մի հանձնաժողով: Նուբարի հանձնաժողովի՝ Ստամբուլում ռուսական կառավարության և ղեսպանատան կողմից հրահանգ առնելը մեզ հետ չփուլ ունեցող կոմիտեները մեզնից թաքցնելու կարիքն անգամ չէին զգում:

1914 թվականին ռուս կառավարությունը, մյուս պետությունների սկզբունքային համաձայնությունն էլ առնելուց հետո, Ստամբուլի իր ղեսպան պարոն Գիրսի միջոցով մի առաջարկ ներկայացրեց Բարձրագույն Դռան: Այդ առաջարկը պարունակում էր հետևյալ կետերը.

ա) Վեց նահանգների միացում և վարչական մի կենտրոնի հաստատում.

բ) Մուսուլմանների և քրիստոնյաների նույն համեմատությամբ զինվորագրություն, պաշտոնյաների, մանավանդ՝ ոստիկանների նշանակման ժամանակ նույն համեմատության կիրառումը.

գ) Այս մարզի կառավարումը մի ընդհանուր կուսակալի կողմից:

Բարձր Դուռը բանակցության մեջ էր մտել և աշխատում էր թեթևացնել այդ առաջարկները:

Այդ ժամանակ Սայիդ Հալիմ փաշայի կարիքնտրում ես ներքին գործերի մինիստր էի: Ռուսաստանի նպատակները ականեր և էին: Այդ նկատառումով ես Մինիստրների խորհրդում բացահայտ կերպով մեր անկախության դեմ ուղղված այդ սկզբունքների դեմ էի քվեարկել: Սաղրազամ Սայիդ Հալիմ փաշան այս պարագան իմացրել էր ռուս ղեսպանին: Դեսպանը ինձ հետ տեսնվելու ցանկություն էր հայտնել: Դեսպանը մի օր ինձ այցելելով հասկացրեց, որ Ռուսաստանը ցան-

կանում է այս հարցը Թուրքիայի չահերին համապատասխան ձևով լուծել, և այսպիսի բարյացակամությամբ լի մի առաջարկի հանդեպ վարանումը անտեղի համարեց: Մեր տեսակցություն՝ անպաշտոն և կատարելապես մասնակի բնույթ ունենալու պատճառով ես ղեսպանին բացորոշ կերպով հայտնեցի, որ Թուրքիայի ներքին հարաբերության մասին իր արտահայտությունները դեմ են մեր անկախությանը այնպես, ինչպես ներհակ կլինեն Ռուսաստանի անկախությանը, եթե Թուրքիայում բարեկարգության մասին Պետերբուրգի մեր ղեսպանը նման առաջարկ ներկայացներ Ներքին գործերի մինիստրությանը: Այդ նկատառումով խնդրեցի, որ այս բնույթի խոսքերով մեր հանգստությունը չվրդովեն և ավելացրի «Ձեր նպատակը լավ գիտենք. Ռուսաստանը այսպես է ցանկանում: Մենք ուժեղ ենք, դուք թույլ եք, ուրեմն պարտավոր եք ընդունել»: Ահա այսպես ասելը ավելի ճիշտ կլինի: Սրա համար ղեսպանը հեռացավ՝ հայտնելով, որ ինձ հետ կարելի չէ տեսակցել:

Սրանից հետո եկավ Հայերին համոզել աշխատելու չրջանը: Մի կողմը թողնելով արտաքին միջամտությունները՝ առաջարկեցինք (Հայերին) բարենորոգումները կատարել միասին: Սակայն մենք պատասխան ստացանք, որ այլևս կարելիություն չկա կացությունը փոխելու. տրված խոստումների նկատմամբ Հայ ազգը այլևս վստահություն չունի: Այսպիսով, մեր առաջարկները մերժվում էին: Դրանից հետո պետությունների երկու խմբերի ղեսպանները Բարձր Դռանը հայտնեցին, որ մասնակից են ռուս ղեսպանի առաջարկներին: Սակայն կարելի էր ենթադրել, որ գերմանական ղեսպանի հայտարարությունը մյուս ղեսպանների հայտարարությունների չափ կտրուկ չէր:

Այդ օրերին էր, որ սպանվեց Ավստրիայի զահաթառանգը: 1914 թ. հունիսի 22-ին քաղաքական մթնոլորտը ծածկվեց մութ ու վտանգավոր ամպերով:

Թուրքիան իր ներքին վարչությունը կազմակերպելու, առևտուրն ու արդյունաբերությունը զարգացնելու և պաշտպանելու, երկաթուղիները¹ ընդարձակելու, մի խոսքով ապրել կարողանալու և իր գո-

¹ Արդյուլ Համիդի ժամանակ Ռուսաստանի և Թուրքիայի միջև փոխանակված հուշագրերով Ռուսաստանը իր վրա պարտավորություն էր վերցրել չթույլատրել հայերի վերադարձը: Սրա փոխարեն Թուրքիան խոստացել էր Սև ծովի և ռուսական սահմանների մոտ երկաթուղային մեռաշնորհներ չտալ ոչ մի պետության, բացի Ռուսաստանից:

յությունը պահպանելու համար վաղուց ի վեր փնտրել է միջոցներ, որպեսզի կարողանա միանալ պետությունների խմբերից մեկին, բայց պետություններից ոչ մեկը հավանություն չէր հայտնել: Այդ ժամանակի Սաղրազամ Սայիդ Հալիմ փաշան էնվեր փաշային, Նալի բեյին և ինձ իր մոտ կանչեց՝ հայտնելու, թե ղեսպան ֆոն Վանգենհայմը առաջարկել է իրեն, կողմերի հավասարության պայմաններով, Գերմանիայի ու Թուրքիայի միջև դաշինք կնքել և հարցրեց մեր տեսակետը: Մենք բոլորս էլ այն համոզմունքն ունեինք, որ մեր գոյությունը պահպանել կարողանալու համար Թուրքիային այդպիսի եվրոպական մի պետության հետ դաշնակցելը անհրաժեշտություն է, և գիտությունն ու արվեստի, առևտրի և արդյունաբերության տեսակետից այդ աստիճանի առաջադիմած մի տերություն օժանդակությամբ Թուրքիան կարող կլինի ապահովել իր գոյությունն ու առաջադիմությունը: Սաղրազամը ցանկանում էր բանակցություններն ինքն անձամբ կատարել և խնդրեց մեզ խնդիրը գաղտնի պահել և ղեռնա որոշ ու պաշտոնական առաջարկ գոյություն չունենալու պատճառով, առայժմ ոչ մի բան չհայտնել մյուս ընկերներին: Մենք իսկույն հասկացանք, որ այս առաջարկն արդյունք է մոտավորապես պատերազմի վտանգի: Մեզ համար շատ բնական էր, որ թույլ ու տկար Թուրքիային իր միության մեջ առնելու մի պետության (Գերմանիայի) ցանկությունը պետք է արդյունք լինի շատ կարևոր պատճառի առկայության: Սակայն մենք մտածում էինք, որ ընդհանուր պատերազմ չպիտի առաջանա, իսկ մենք այդ միության մեջ մտնելով, այլևս պաշտպանած կլինենք մեր պետությունը բոլոր տեսակի վտանգներից:

Դաշինքը վերջապես մի որոշ ձև ստացավ, և համաձայնությունը ստորագրվեց Սաղրազամի և ֆոն Վանգենհայմի կողմից: Նույն ձևով համաձայնություն կայացավ և ստորագրվեց նաև Ավստրիայի ղեսպանի հետ: Այս իրադարձության մասին տեղեկություն տրվեց նաև կաբինետի կարևոր անդամներին: Սրանից քիչ հետո պայթեց Գերմանիայի և Ռուսաստանի պատերազմը: Ըստ համաձայնության՝ անհրաժեշտ էր մեր մասնակցությունը պատերազմին: Սաղրազամը, իսկույն պատերազմի մեջ մտնելու մտադրություն չունենալու պատճառով, երկու ղեսպանների հետ բանակցելիս հարցը ձգձգում էր... իսկ ես և մի քանի ընկերներ այս վիճակը երկրի շահերին համապատասխան չէինք գտնում, որովհետև մի կողմից խախտում էինք կայացած համաձայնությունը, իսկ մյուս կողմից Գերմանիայի հանդեպ մեր ցուցաբերած համակրանքով չարաչափ կլինեինք մեր չեղոքությունը:

նր: Այս կերպով պետությունների երկու խմբերն էլ դժգոհ էին: Իսկ Սաղրազամն իմացրեց, որ դաշնակից երկու կողմերի ղեսպաններն էլ թեև չեն պնդել մեր՝ իսկույն պատերազմին մասնակցելը, սակայն բավականացել են՝ հայտնելով մեր անհավատարմությունը դաշինքին: Նրանք այս հայտարարությունով միաժամանակ հասկացրել են, որ մեր հանդեպ այլևս ոչ մի հանձնառություն չունեն:

Մինիստրների խորհրդի մի նիստում որոշվեց տեղեկացնել ղեսպաններին, որ Բուլղարիայի և Ռումինիայի դիրքը չհասկացած, Թուրքիայի՝ իսկույն պատերազմի մեջ մտնելը ներհակ է թե՛ դաշնակիցների և թե՛ Թուրքիայի շահերին, որ Բուլղարիային դաշնակիցների (Գերմանո-Ավստրիայի) կողմը շահելու համար անհրաժեշտ է այդ ուղղությամբ աշխատել և նախ՝ նրան համոզել:

Նորհրդակցությունները շատ հաճախ կատարում էինք գիշերները Սաղրազամի ծովեզերյա բնակարանում: Մի երեկո Մինիստրների խորհուրդը դարձյալ հավաքվել էր այս հարցերի մասին խորհրդակցելու: Քիչ ուշացած՝ պատերազմական մինիստր էնվեր փաշան ծիծաղելով հայտնեց մի նոր երեխայի ծնունդը, այսինքն՝ ճիշտ այդ ընդհանրապես «Գյոբենի» Դարդանելի նեղուցից ներս անցնելը: Սաղրազամը արտակարգորեն հուզվեց: Քիչ հետո ծառան հայտնեց գերմանական ղեսպանի գալուստը: Մինչև այդ պահը, մեզինք ոչ մեկը ոչինչ չգիտեր Գյոբենի գալուստի մասին: Ամերիկյան նախկին ղեսպան Մորգենթաուն իր երկրում գրում է, որ Գյոբենի՝ նեղուցից ներս մտնելը նախապես պատրաստված էր և որ Վանգենհայմը այդ դեպքը պատկերացնում է իր համար որպես քաղաքական հաղթանակ: Սա կատարելապես սխալ է:

Եթե մինչև անգամ ընդունենք, որ Վանգենհայմը, ճշմարտության հակառակ այսպիսի բան ասած էլ լինի, սակայն փաստ է, որ նա վերին աստիճանի պատվավոր նկարագրի տեր և չիտակ մի անձնավորություն է: Բայց Մորգենթաուն իր գրքի տարբեր տեղերում էլ ճշմարտությունը թաքցնում է և աղավաղում: Փաստ է, որ Մորգենթաուն Ստամբուլ գտնվելու ամբողջ շրջանում ոչ ոքի կողմից չի ճանաչվել որպես խոհական մարդ, և տարակույս չկա, որ այդ սուտը ինքն է հնարել: Մորգենթաուն, իր գրքում իմ մասին էլ խոսելով, պնդել է, որ ես ոչ թուրք եմ, ոչ էլ իսլամ: Այս պնդումն էլ Մարգարեի իսլամ չլինելու պնդումի նման անիմաստ է: Ես միշտ կարող եմ ապացուցել իմ՝ թուրքի զավակ և մուսուլման հոր մուսուլման զավակ լինելը: Իմ համոզմամբ, ամեն մարդ պատկանում է իր ծնած և հա-

վատացած կրոնին և այն ժողովրդին, որի մեջ մեծացել է: Կրոնի և ազգություն հարցերը բացառապես համոզմունքի և ըմբռնումի հարցեր են: Եվրոպայում էլ այսօր տիրապետողը այս սկզբունքներն են: Օրինակ, ժամանակին Գերմանիա գաղթած ֆրանսիացիները, ցեղայնորեն ֆրանսիացի լինելով հանդերձ, Գերմանիայում ծնած լինելու և գերմաներեն խոսելու համար իրենք իրենց զգում են կատարյալ գերմանացի: Ինձ համար այս խնդիրները ոչ մի կարևորություն և արժեք չունեն: Միայն Մորգենթաուի հերյուրանքները հերքելու համար կարիք զգացի խոսելու ծագման և ցեղային հարցերի մասին: Հայրս ծնվել է Բալկանյան պատերազմից անմիջապես հետո Բուլղարիային թողնված Գարաջալի Ալի գավառակի Ջեպլեջի գյուղում: Էդիրնեի նահանգում այս գավառակի ժողովրդին դաղլի (լեռնցի) են կոչում: Սրանք պատկանում են ժամանակին Անատոլիայից գաղթած հին և մաքուր թուրք ընտանիքներին: Սրանց և փոմաքների միջև չկա ոչ մի առնչություն: Փոմաքները Ռոստոպ լեռների մյուս կողմն են բնակվում և խոսում են բուլղարերեն: Հայրս իր կրթությունը ստացել է Էդիրնեի մետրեսեում և այնտեղ ճանաչված է Ջեպլեջի Ահմեդ Էֆենդի անունով: Նա եղել է աստվածաբանության դասախոս: Իմ պապը գյուղում «Նալիլ Բայրաթթար»¹ էր կոչվում: Նրա հայրը՝ Ահմետը հորս հայրն էր՝ Ազ Հյուսեին անվամբ էր հայտնի: Ասում են, որ Ազ Հյուսեինը Ալեմտարի հեղափոխականների հետ միասին Պոլիս է եկել: Երկսի գերեզմանները և նույնիսկ Ազ Հյուսեինի հոր գերեզմանը ևս գտնվում են Ջեպլեջիում: Շահագրգռվողները շատ դյուրությամբ կարող են ստուգել այս պարագան: Մայրս բնիկ կեսարացի է: Նրա հոր կողմից մեծ հայրն էլ Չոլաք Մեհմեդ աղան է, որ ենիչերի լինելով՝ էդիրնե է եկել: Թե ինքը և թե տղան՝ «Թոմրուք աղան», բանտապահ են եղել: Մոր կողմից մեծ մայրս էլ Գարաջալը Ալի լեռներում Դեսեյեր գյուղից է: Այս բացատրություններին նպատակն է ապացուցել, որ ես իսկապես թուրքի գավալ թուրք (Türk oglu türk) և կատարյալ մուսուլման եմ: Պարոն Մորգենթաուն մեզ բացատրեց, որ Ռումինիան փոքր երկիր է, և ի նպաստ, որ կողմին էլ լինի, պատերազմի մեջ մտնելու երկրորդ օրը իրենց մայրաքաղաքը կզրավվի, և երկիրը ավերակի կվերածվի:

¹ Ալեմտար (Բայրաթթար) Մուստաֆա փաշան «Ռումելիի բարեկամներ» կազմակերպության ղեկավարն է եղել: Այս կազմակերպությունը ակտիվորեն նպաստել է Սելիմ III-ի (1789–1807 թթ.) բարենորոգման փորձերին: Բայրաթթար Մուստաֆա փաշան Սադրազամ եղած ժամանակ սպանվել է ենիչերիների կողմից:

Հնարավոր չեղավ հույների հետ հասկացողություն գալ: Նալիլ բեյին Բուխարեստ թողնելով՝ վերադարձա Ստամբուլ: Սայիդ Հալիմ փաշային առաջարկեցի, որ կտրուկ միջոց ձեռք առնի: Սադրազամը կատակի ձևով նչեց իմ՝ շատ պատերազմասեր լինելու մասին: Ես երբեք պատերազմասեր չէի: Բայց համոզված էի, որ դաշնակիցների հանդեպ մեր բռնած դիրքը ճիշտ չէր, իսկ համաձայնական պետությունների հանդեպ էլ մենք կողմնակալ էինք երևում: Այս նկատառումով առաջարկեցի, դաշնակիցների հավանության դեպքում, մի առժամանակ ևս մեր պատերազմին չմասնակցելու մասին պայմանագրին մի հավելված ավելացնել: Մինիստրների խորհուրդը ընդունեց իմ առաջարկը: Որոշվեց այս խնդրի մասին բանակցելու համար Բեռլին ուղարկել Արդարադատության մինիստր Նալիլ բեյին: Նալիլ բեյը պատրաստվում էր Կուրբան Բայրամի երրորդ օրը Բեռլին մեկնելու: Մենք աշխատում էինք հանդարտեցնել Բարոն Փոն Վանգեն-Հայմին, որը դաշնակիցների կողքին մեր պատերազմին մասնակցելու օրը որոշելու հարցում անհամբեր և ջղայնոտ էր դառնում: Տոնի նախօրյակին լուր ստացանք, որ Սև ծովի նավատորմի և ադմիրալ Սուխոնի միջև պատերազմ է տեղի ունեցել և Գյոբենը ուժեղացել է ռուսական ծովեզերքները: Սադրազամը այս հարվածից սաստիկ հուզվեց և մյուս օրը զրավոր կերպով ինձ հայտնեց, որ չի կարող մասնակցել Բայրամի տոնակատարությանը:

Այս դեպքի մասին մեզինից ոչ մեկը նախապես տեղեկություն չունեի: Սակայն, ինչպես բոլորը, ես էլ համոզված էի, որ էնվեր փաշան տեղեկություն ունենալու է: Բայրամի օրը հավաքվեցինք պառլամենտի նախագահ Նալիլ բեյի տանը: Ես բավականին հարձակվեցի էնվեր փաշայի վրա, բայց նա երգվեց, որ այդ մասին տեղեկություն չի ունեցել: Այս պատճառով էլ պատերազմը այլևս կատարված իրողության վիճակ էր ստացել: Սադրազամը հրաժարական տվեց: Նա համոզված էր, որ այս վիճակը կարող էր դեռ ամիսներով երկարել: Սակայն հասել էր վերջնական որոշումը տալու ժամանակը: Բայրամի երրորդ օրը հավաքվեցինք Սադրազամի բնակարանում: Մինիստրների մեծամասնությունը իսկույն պատերազմի մասնակցություն կողմնակից չէր երևում: Որոշվեց աշխատել պահպանելու ներկա կացությունը: Իսկ համաձայնական պետությունների դեսպանները ներկա կացության շարունակումը կապում էին հետևյալ պայմանի իրականացման հետ: Գերմանիան ղինվորական մարմին և բոլոր սպաների հետ միատեղ «Գյոբենը» դուրս հանել (Թուրքիայի) սահմաններից:

Սակայն կառավարությունն ուժի և կարողության սահմանից դուրս էր այս պայմանների գործադրումը: Բացի դրանից՝ ընկերներից մի քանիսը կողմնակից էին իսկույն պատերազմի մասնակցությանը, եթե դաշնակիցները այդ պնդեին: Սաղրազամբ ստիպված էր մի որոշում տալ: Ի վերջո նախընտրեց մասնակցել պատերազմին: Զավիղն էլ, մեջը լինելու պայմանով, մյուս մինիստրները հրաժարվեցին:

Այս կերպով Թուրքիան մտավ պատերազմի մեջ: Արևմտյան ճակատի վրա գերմանացիների առաջին հաղթությունները, հետո Մաչուրյան լճերի չրջակայքում Հինդենբուրգի հաղթանակները, թե՛ ցամաքի և թե՛ ծովի վրա Դարդանելի պաշտպանությունը, Քյուլթ-էլ-Ամարայի հաղթանակը պատերազմը դարձրին ժողովրդական: Պատերազմին մասնակցելու որոշման դեմ քվեարկողները, կասկածելով Գերմանիայի վերջնական հաղթանակի մասին, դեմ էին քվեարկել: Այլապես, բոլոր օսմանցիները հավատում էին, որ Թուրքիան անպարտելի Գերմանիայի և Ավստրիայի միություն մեջ պիտի պահպանի իր գոյությունն ու անկախությունը: Ռուսական հեղափոխությունից հետո էլ պարզ կերպով տեսնվում էր այս ճշմարտությունը: Բոլոր դատողությունները հենվում էին Գերմանիայի պարտվելու անհավանականության վրա: Բայց և այնպես, անհավատալի էր թվում նաև Գերմանիայի բացարձակ հաղթանակը: Թուրքիայի համար Գերմանիայի անպարտելիությունը բավարար նկատվելով՝ ոչ մեկը զգում չէր զգում պատերազմին մասնակցելու համար: Սուլթանը, գահաժառանգը (Վահտեղյին), ծերակույտը և պառլամենտը, սպաները, հավանական չէին համարվում պատերազմի չորս տարվա տևողությունը: Ժողովուրդը գոհունակությամբ տարավ պատերազմի առաջին և երկրորդ տարիների բեռն ու դժվարությունները. սիրով տվեց իր հողին և ունեցվածքը: Ոչ մի տեղից չլսվեց որևէ բողոք: Սպաներն ու քաղաքացիական պաշտոնյաները պահպանեցին իրենց արժանապատվությունը: Թեև շատ հազվադեպ, սակայն իսկույն պատժվում էին տեղի ունեցած անկարգությունների հեղինակները:

Պատերազմի երրորդ և չորրորդ տարիներին սկսեցին պակասել եռանդն ու խանդավառությունը: Եվրոպական ճակատների շարունակական պարտությունները, Պաղեստինի, էրզրումի և Բաղդադի մեր բանակների նահանջները, այդ տեղերի ժողովրդի դեպի Անատոլիա փախուստը, հողագործության մեջ աշխատող ձեռքերի պակասելու պատճառով երևան եկած սննդամթերքի սովը և վերջապես զինվորական ստորաբաժանումներում և թիկունքում մի կարգ սպա-

ների կողմից կատարված զեղծումների արձագանքները պատճառ դարձան ժողովրդի մեջ դժգոհության առաջացման: Թեև չէր կարելի պատերազմը բոլորովին կորած համարել, բայց մինչև պատերազմի վախճանը թուրքական հողերի ավերածությունը, թուրք ժողովրդի՝ այսինքն՝ երկրի բուն բնակչության ծանր զրկանքների ենթարկվելու վախը բոլորի վրա սկսեց երկյուղալի ազդեցություն թողնել: Ճակատային սպաների կորուստը լրացվում էր թիկունքի գնդերից առնված սպաներով: Իսկ բաց մնացած տեղերում բերվում էին նախապես հանգստյան կոչված սպաները: Այս սպաներին կարելի էր վերցնել և նշանակել՝ հաշվի առնելով նրանց խաթարված բարոյականը և նկարագիրը: Հնարավոր էլ չէր նրանց պատժել իրենց կատարած հանցագործությունների համար: Այդպիսիներին ետ քաշելը և բանակից հեռացնելը վարձատրություն պիտի լիներ նրանց համար: Առանց հեռանկարի և բարոյականից զուրկ այս սպաները կատարում էին ամենածանր զեղծումներ, և նրանցից շատ շատերն էլ չէին պատժվում: Այս ամենը ավելացնում էր ժողովրդի վիշտն ու հուսահատությունը:

Իրենց չարաչառությունը բացարձակորեն ապացուցված՝ սպաները որպես օրինակ պատժվելու համար, հանձնվում էին պատերազմական մինիստրությանը, սակայն բոլոր բողոքներն ու խնդրանքները մնում էին ապարդյուն: Իսմայիլ Հազզը փաշան իր մարդկանց տվել էր ամենալայն իրավասություններ և իր ուժը (հեղինակություն) այնպիսի եղանակով էր գործադրում, որ քաղաքացիական պաշտոնատների կողմից ներկայացած բողոքները մնում էին անհետևանք:

Ցավալի է, որ այս մտայնությունը տարածվել էր նաև մինիստրության ուրիշ բաժիններում: Իսկապես էլ, կատարվում էին նաև անձնական չահ և նպատակներ հետապնդող բողոքներ, բայց մինիստրությունը, որպես սկզբունք, արդարացի կամ անարդար՝ բոլոր տեսակի բողոքների հանդեպ մնում էր անտարբեր:

Հրամանատարների մասին, մասնավորապես՝ մատակարարման պետ Իսմայիլ Հազզի փաշայի մասին էնվեր փաշային հաճախ բողոքներ էին ներկայացվում: Էնվեր փաշան պատասխանում էր, որ պատերազմի տևողության միջոցին չափազանց անհրաժեշտ է Իսմայիլ Հազզը փաշան: Եթե չլինի Իսմայիլ Հազզը փաշան, չի ապահովվի բանակի մատակարարումը, հետևաբար, պատերազմի շարունակման անհնարին դառնալուն պատճառ կհանդիսանա: Եթե բողոքները շարունակվեն, էնվեր փաշան սպառնում էր հրաժարվել: Իսկ

այս տեսակ դժվարին ժամանակում էնվեր փաշայի հրաժարումը բանակը կմատներ ծանր կացություն, որով ոչ ոք չէր համարձակվում համաձայնվել այդ մտքի հետ:

Անատոլիայում փոխադրական միջոցները բացարձակապես անբավարար էին: Միակ արագ (ճեպընթաց) փոխադրական միջոցը Կոնյա-Բաղդադ երկաթուղին էր: Սրա շոգեչարժերը և վագոնները անբավարար էին: Լավ կառքեր և վագոն չգտնվելու պատճառով գրեթե ամբողջ փոխադրությունները պետք էր կատարել ուղտերով, էշերով և կամ եզան կառքերով: Համառ դիմումներից հետո միայն գերմանական բանակի վարչությունը վերջապես որոշ քանակի փոխադրական միջոցներ և վագոն հանձնեց, այն պայմանով, որ այդ վագոնների մի մասը հատկացվի իրենց կարիքներին: Այդ ժամանակ անհնարին էր (գերմանացիների) այդ պայմանը մերժել:

Գերմանիան և Ավստրիան իրենց անհրաժեշտ պիտույքը գնելու համար հիմնել էին մի գնման ընկերություն: Նրանք պնդում էին, որ գների չարունակական բարձրացման պատճառով այսպիսի մի ընկերության հիմնումը իրենց համար անհրաժեշտ էր: Նրանց այս միջոցառումը որոշ չափով իրավացի լինելով հանդերձ՝ միջնորդ հանձնակատարների կողմից կատարված անխիղճ գործառնությունները բուռն դժգոհանքի բարձրացման և նույնիսկ պառլամենտում մի շարք հարցապնդումների պատճառ դարձան:

Հակառակ Գերմանիայի փոխադրական միջոցներին՝ երկաթուղիները բավարար չէին բանակի ռազմամթերքը և սննդամթերքը փոխադրելու համար, իսկ առևտրականներին չէր տրամադրվում ոչ մի վագոն: Մյուս կողմից՝ գնման ընկերությունը, ի նպաստ իրեն ընդունված պայմանի համաձայն, իրենց հատկացված վագոններով կարող էր կանոնավոր կերպով փոխադրել իր ապրանքները: Այսպիսով, գնման ընկերությունը երկրում ստանձնել էր միակ գնողի դերը: Բոլոր տեսակի ապրանքները կարող էր գնել իր ցանկացած գներով, իսկ այս հանգամանքը ազդում էր առևտրական հրապարակի վրա: Երկրում ազգային դրամատուն (բանկ) և երկրագործական վարկատու հիմնարկներ գոյություն չունենալու պատճառով կառավարությունը վերև հիշված ձևի գնումներն արգելելու կարողություն չունեցրեց: Բոլոր միջոցառումները մնում էին ապարդյուն և պարզապես պատճառ դառնում մեծ չարաչառումների: Ռազմամթերքի և սննդամթերքի փոխադրումներից խնայված վագոնների քանակը չարաթական

երկու-երեք վագոնից ավելի չէր: Սրանք էլ, բնականաբար բավարար չէին Ադանայի բամբակը և Անկարայի բուրդը փոխադրելու համար: Այս պայմաններում սկիզբ առան նաև հովանավորումներ և առանձնաչնորհումներ: Վագոններն առնվում-ծախվում էին: Խոսվում էր այն մասին, որ երկու վագոնի արտոնությունը ստացած մարդիկ չահում էին հազարավոր լիրաներ: Օրինակ՝ դրամ չահելու և զաղտնի կերպով առևտուր կատարելու համար իմ կողմից իր պարտականությունից ազատված (.....) կուսակալը՝ (.....) բեյը, էնվեր փաշային դիմելով, հասկացրել էր իր ցավալի վիճակը և դարման էր խնդրել: Կուսակալը սահմանադրությունից առաջ բարեկամն է եղել էնվեր փաշային: Որպես հին բարեկամության պարտավորություն՝ իրեն մեկ կամ երկու վագոնի համար արտոնություն է տրվում: Իսկույն լուր տարածվեց, որ այդ երկու վագոնների շնորհիվ վալին հինգ հազար լիրա չահ է ապահովել:

Այս գործերին վերջ տալու և այլևս ոչ ոքի վագոն չտալու մասին Մինիստրների խորհրդում ես թախանձանքով խնդրեցի էնվեր փաշային: Արդյունքն այն եղավ, որ ըստ հերթական համարների մի աղյուսակ պատրաստվեց: Սակայն սա էլ չատ անկարգությունների տեղիք տալով, ժողովրդի զանգատի պատճառ դարձավ: Ոչ թե վաճառականներ, այլ առևտրի հետ երեք կապ չունեցող մարդիկ դրամ էին չահում: Այս կարգադրությունը ևս ոչ մի արդյունք չտվեց, և գնման իրավունքը վերապահվեց միայն երկաթուղային վարչությանը: Այս կերպով թե՛ Գերմանիայի հետ մրցում պիտի կատարվեր, և թե՛, չահույթը մեկ-երկու անձի մենաշնորհ չդառնալով, այն ամբողջ երկրի վրա պիտի տարածվեր և այդպիսով ներքին առևտուրը հսկողության տակ պիտի առնվեր:

Ինչպես Ռուսաստանում, նույնպես նաև մեզ մոտ՝ անհրաժեշտ էր համարվում տնտեսապես եկամտաբեր չեղող և միայն զինվորական տեսակետից կարևորություն ունեցող երկաթուղիների կառուցումը կատարել բանակի կողմից: Այս նպատակով պատերազմական մի-նիստությունում «Զինվորական երկաթուղային վարչություն» անունով մի բաժանմունք հիմնվեց: Դժբախտաբար այս կարգադրությունն էլ այդ բաժանմունքի ղեկավարող և արդարություն ու իրավունք չճանաչող Իսմայիլ Հազզը փաշայի պատճառով կարճ ժամանակից հետո նոր չարաչառումների դուռ բաց արեց և սնանկացավ: Իսմայիլ Հազզը փաշան, մի կողմից, իր արտակարգ ջանասիրության շնորհիվ ճնշում էր ժողովրդին, մյուս կողմից էլ՝ իր պաշտպանած անձերին

չնորհաբաշխումներով հղիացնում էր: Երկաթուղային վարչությունը, տասը միլիոն լիրայից ավելի չահույթ ապահոված լինելով հանդերձ, սակայն իր պատճառած անտեղի վնասը դրանից չատ ավելին էր: Այլ դարման գտնելու անկարելիության և իսմայիլ Հագգը փաշայի պաշտոնանկության պատճառներով այս անկանոնությունները տեեքին երկար ժամանակ, առաջացրին մեծ վնասներ և ահագին դժգոհությունների պատճառ դարձան:

Հարկավոր էր, որ այս պատերազմը արթնացներ ազգային զգացումները և այս զգացումը տեղ բռներ ժողովրդի հոգում: Նպատակը իրավացի և անհրաժեշտ էր: Սակայն ճշմարտությունը թաքցնելու կանխամտածություն ունեցող անձերի կողմից տեղի ունեցած հրապարակումները մյուս ազգությունների (փոքրամասնությունների) վրա վնասակար ազդեցություն թողեցին: Նույն ազդեցությունը տեսնվում էր նաև առևտրական ասպարեզում: Բոլոր պատերազմներում թուրք չեզոք տարրերը հարստության էին տիրանում, իսկ (թուրք) հայրենակիցները մարդկային կորուստ տալուց բացի, աղքատանում և ընկնում էին թշվառության մեջ: Այս նկատառումով անհրաժեշտ համարվեց հայրենակիցներին մղել դեպի վաճառականություն և նրանց դուրսություններ ընձեռնել: Չնայած որ այս կարգադրության շնորհիվ գյուղացին մեծ չափով պաշտպանության էր արժանանում և Անատոլիայում ազգային ընկերությունների կողմից ղեկավարելու ազգային եկամուտ հանդիսացող հարստություն էր կուտակվում, սակայն այս ձեռնարկումների մեջ տիրող անկանոնությունը և նրանց ոչ նորմալ ձևով իրագործումը առաջացրել էին մի շարք առարկություններ և քննադատություններ: Արհեստավորական կազմակերպությունները հիմնվել էին բարձր և ազգային նպատակներով: Այս կազմակերպությունների նախագահներն աշխատում էին հայրական խանդաղատանքով, և ոչ մեկը չէր մտածում իր համար ամենաչնչին շահի ապահովում: Որքան ցավալի է, որ այսքան մեծ սիրով և այսքան լավ նպատակներով հիմնված այդ գործը ժողովրդի վստահությանն էլ արժանանալու համար առողջ հիմքերի վրա չէր ստեղծված: Նրանց հիմնադիրների, նույնիսկ անուղղակի կերպով ոչ մի շահի ակնկալություն չունենալու հանգամանքը ամրացնում էր հայրենակիցների բարօրությունն ապահովելու սկզբունքը: Սակայն հետագայում նույն սկզբունքի շնորհիվ մի շարք անձնավորությունների մոտիկ ազգականներն ու բարեկամները առևտրի հետ ոչ մի առնչություն չունենալով հանդերձ, մեծ հարստություններ ձեռք բե-

րեցին: Իսկ այս հանգամանքը խախտեց ամբողջ ժողովրդի վստահությունը:

Բոլոր այս չարաչահությունների հանդեպ մշտապես մաքուր է մնացել «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը: Անտեղի և անարդար են կազմակերպության հանդեպ կատարված բոլոր հարձակումները, ավելի ձիջտը (այդ հարձակումները)՝ կատարվել են մասնավոր նպատակով: Կազմակերպության և «Միություն և առաջադիմություն» կուսակցության հոգին համարվող կենտրոնական օղակը ամենափոքր անիրավություն կատարվելու ժամանակ իսկ գտնվել է ձայն բարձրացնողների գլխին: Կազմակերպության անդամը այսօր էլ ապրում է տասը տարի առաջվա պայմաններում: Կազմակերպությունը միշտ պահպանել է իր մաքրությունը և հեռու է մնացել նյութական շահերից: Կազմակերպության վրա հենվող մինիստրները, մեջլիսի անդամները եվրոպական ոչ մի երկրում նմանը չտեսնված չափով պահպանել են իրենց պարկեշտությունը: Այս կուսակցության մեջ կարող են գտնվել մոլեռանդ հայրենասերներ, ջղային, անփորձ և համառ անհատներ: Այսպիսի տարրեր կուսակցության համար կարող են վտանգ դառնալ: Բայց ամենամեծ ոճիրը կլինի կազմակերպությանը վերագրել գողություն և անփառունակություն: «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը կազմվել է փառքով, իր բոլոր հաջողությունները ձեռք է բերել չիտակությամբ, զոհաբերության ոգու շնորհիվ և իր քաղաքական բովանդակ կյանքը ապրել է պատվով: Այդ բանը կհաստատեն բոլոր նրանք, ովքեր Ստամբուլում հեռվից-մոտիկից ճանաչել են այդ անձնավորություններին: Չի կարելի ցույց տալ մի փոքր կեստ անգամ, որ կասկածի ենթարկել նրա փառքն ու արժանապատվությունը: Նրա անդամներից միայն երկուսը կամ երեքը գտնվել են ժողովրդի զգացումը վրդովեցնող գործերում, և այսպիսով, նրանք թե՛ իրենց, թե՛ բոլոր տեսակի զրկանքներին համբերությամբ տոկացող ընկերների և թե՛ երկրի միակ քաղաքական միություն հանդիսացող կազմակերպության հանդեպ ուղղակի ոճիր են գործել: Այդպիսիների խառնվածքի, բարոյականի և նրանց անհատական մտածումների մասին իմ դատողությունները ես առանձին պիտի պարզեմ: Ուզում եմ այժմվանից հայտնել, որ այս երեք անձերը գրեթե ոչ մի ազդեցություն չեն ունեցել «Միություն և առաջադիմություն» կազմակերպության հետ: Երեքն էլ արժեքավոր նկարագրի տեր մարդիկ էին:

«ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ»
ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

«Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը համագումարում իր կանոնադրությունը հետզհետե ուղղել և կատարելագործել էր: Վերջին բարեփոխումը կատարվել էր 1329–1330 (1911–1912) թվականներին: «Միություն և առաջադիմություն» կազմակերպության այսօրվա կառուցվածքը ամբողջական կերպով նմանվում է եվրոպական նման կազմակերպություններին: Կազմակերպությունն ուներ երկու բյուրո. մեկը՝ մեջլիսում, մյուսը՝ մեջլիսից դուրս: Մեջլիսում եղած բյուրոն՝ «Կուսակցության վարչական խորհուրդ» անվան տակ զբաղվում էր հատկապես կուսակցությանը վերաբերող հարցերով: Մեջլիսից դուրս եղող բյուրոն՝ «Ընդհանուր կենտրոն» անունով, զբաղվում էր մասնավորապես ընտրական գործերով, միևնույն ժամանակ վարում էր նաև պրոպագանդի գործը: Այս երկու բյուրոների վերևում գտնվում էր «Ընդհանուր ժողով»-ը, որն ամեն տարի ընտրվում էր համագումարի կողմից և զբաղվում էր ներքին ու արտաքին հարաբերություններով:

Ընդհանուր ժողովին կարող էին մասնակցել ընդհանուր կենտրոնի անդամներից զատ կաբինետի անդամները, նաև ծերակույտի և մեջլիսի կուսակցական անդամները: Նմանապես համագումարի կողմից ընտրված մի նախագահ կատարում էր ընդհանուր ժողովի նախագահի պարտականությունը: Ահա սրանցից էր բաղկացած «Միություն և առաջադիմություն» կազմակերպության հայտնի և զաղտնի կազմը: Բոլորովին անհիմն է այն պնդումը, թե ընդհանուր ժողովը միջամտում է պետական գործերին: Ընդհանուր ժողովի գումարման ժամանակ կենտրոնի անդամները չարունակ քննադատել են կառավարության գործունեությունը: Շատ անգամներ հանդարտության եմ հրավիրել չափազանց ջղային անձերին: Մասնավորապես իմ վերևում բացատրած չարաշահությունների դեմ կանգնելու անկարելիության և հեղինակներին պատժելու անհնարինության խնդիրները երկար և բուռն վեճերի պատճառ են դարձել: Այսպիսի քննադատություններն արդյոք միջամտություն են համարվում կառավարական գործերին: Եվրոպայում՝ օրինակ Ֆրանսիայում, «Ռադիկալ-սոցիալիստ» կուսակցությունը իր ներսում կայացած մի հավաքություն իրավունք չունի՝ քննադատելու կառավարության կարգադրությունները: Որպես կուսակցության կողմից թեկնածու ընտրված՝ վերջը նույն կու-

սակցության համաձայնությամբ կաբինետ մտած մինիստրները իրավունք ունեն մերժելու լսել այս տեսակի քննադատությունները: Այս տեսակ քննադատությունները որևէ նյութական և գործնական ազդեցություն չունեն: Սրանք, ինչպես մեկնաբանում են ոմանք, միջամտություն չեն կառավարության իրավունքներին: Պատվավոր և չիտակ մի մինիստր պարտավոր է նախ և առաջ լուսաբանել ընկերներին և հաշվի առնել քննադատությունները:

Սա ուղղակի բարոյական պարտավորություն է: Այս պարագան չընդունող մինիստրը խղած կլինի իր հարաբերությունները կուսակցության հետ: Եթե մեջլիսի աչքին ներկայանում է որպես մի արժեք՝ նա կարող է պահել իր դիրքը: Եվրոպայում էլ կան այդպես վարվող մինիստրներ: Կուսակցությունն իր անդամների առաջ և ամբողջ աշխարհի դիմաց չի զգուշացել այդպիսիների հանցանքը հրապարակելուց և նրանց խայտառակելուց: Մի խոսքով, ինչպես ասվեց վերևում, ընդհանուր կենտրոնի անդամների մասին ընդհանուր ժողովում կատարված քննադատությունները բարոյական (գաղափարական) արժեք ունեն: Այս նկատառումով անհրաժեշտ է ոչ միայն քննադատություն, այլև՝ կշտամբանք: Այս պատճառով այն ամբաստանությունը, ըստ որի՝ ընդհանուր կենտրոնի անդամները «Միություն և առաջադիմություն» կազմակերպության անդամների միջոցով մասնակցել են հայերի և հույների տեղահանմանը (Tehcir) և այդ խնդրի մասին հրամաններ են տվել, Ստամբուլում իրենց (հայերի և հույների) ձերբակալումն է:

Ինչպես խոստովանում է նաև դաշնակից մամուլը, այս ձերբակալությունները թեև կատարվել են դաշնակիցների պնդման և ազդեցության հետևանքով, սակայն կառավարությունը նրանց իրավունքների, օրենքի և դեռ այսօր էլ գոյություն ունեցող անկախության վրա հենվելով, օտար պետության հանդեպ պետք է ձեռնարկել անհրաժեշտ պաշտպանություն: Սակայն կառավարությունը ինչպես որ չպիտի կարողանա ազատվել օտար ձեռքերի միջոցով իր հակառակորդներից վրիժառու լինելու արատից, այնպես ստույգ է նաև, որ նա գոհ է գործերի ստացած ընթացքից: Անկասկած է, որ այս կառավարությունն էլ մի օր իր կատարած ոճիրի և այս սխալի պատճառով պիտի պատժվի: Այս ձևով պետության անկախության, օրենքների և դատարանի վրա ազդեցություն գործելու վարժված մի ուժ, անկասկած, մի օր նույն պատճառներով նրանց էլ ձերբակալել պիտի տա:

Ընդհանուր կենտրոնի անդամներին վերագրված ոճիւրներից մեկը այս խնդրի մասին անդամներից մեկի՝ կուսակալների հետ գրավոր չփուլմ ունենալու պնդումն է: Բայց մենք ավելի առաջ գնալով, ընդունենք, որ անդամներից մի քանիսն իսկապես մասնակցել են ընդհանուր նախճիրին: Այս պարագայում, այս անդամի անկախ կերպով գործած ոճիւրի պատճառով ինչպե՞ս կարելի է պատասխանատու համարել նման ոճրածին մտածումներ և գործեր արգելակող ու մերժող ուրիշ մի անդամի: «Միութուն և առաջդիմություն» կազմակերպությունը արդյոք զինված ուժ է: Իր անդամի վրա ազդելու համար անհրաժեշտ ուժը ունի: Հանցանքները և նրանց համապատասխան պատիժները գրված են քրեական օրենքում: Ամեն մարդ պատասխանատու է անձամբ իր գործած ոճիւրի համար: Քրեական օրենքում բացորոշ որոշումներ գոյություն ունեն, թե ովքեր պիտի համարվեն գործակից և ովքեր զրդիչ ու գրգռիչ: Քրեական օրենքի համաձայն՝ իր հղացումով պատրաստված մի հանցանքն ուրիշին գործադրել տվող ուրիշ մեկը բարոյական հեղինակ է: Համաձայնական պետությունները «Միութուն և առաջդիմություն» կազմակերպությունը նկատում են որպես իրենց թշնամի և այդ նկատումով ուզում են նրանց հասցնել վնասազերծ վիճակի: Այս անիրավությունը իր մեջ բովանդակում է մի երկրորդ անիրավություն: Այսօր ձերբակալված և Մալթա աքսորվածների մեջ, օրինակ, գտնվում են Բահմի բեյի նման այնպիսի անձնավորություններ, ովքեր, ինչպես ես գիտեմ, Գերմանիայի հետ միանալով Անգլիայի և Ֆրանսիայի դեմ պատերազմելու հակառակորդներ են եղել: Սա շատ բնական է: Հազարավոր անդամներ ունեցող մի քաղաքական միություն, բնականաբար, իր մեջ պարփակում է տարբեր տեսակետներ ունեցողների: Իմ այս բացատրությունները նոր ապացույց չեն այն նենգամիտ և վրիժառու քաղաքականության, որ ազատության անվան տակ հետապնդում են համաձայնական պետությունները:

Սահմանադրության վերահաստատման ժամանակ իշխանության գլուխը գտնվում էր Քյուչուք Սայիդ աչան: «Միութուն և առաջդիմություն» կազմակերպությունը կենտրոնի հետ մոտիկից չփուլմ ունենալու նպատակով, ուզում էր պատվիրակություն ուղարկել Ստամբուլ, որի համար հեռագրել էր ընդհանուր քննիչ Հյուսեին Հիլմի փաշային: Ընտրված այդ մարմնի մեջ գտնվում էի նաև ես:

Սայիդ փաշայի կարիքները, բացառությամբ Հազգը փաշայի, ամբողջապես բաղկացած էր հին ռեժիմին պատկանող անձնավորություններից: Սրանց մեջ գտնվում էին չարաչառության և լրտեսու-

թյան մեջ անվանի դարձած շատ անձեր: Պատվիրակությունն իր առաջին իսկ տեսակցության ժամանակ հայտնեց Սայիդ փաշային, որ տազնապի և հեղափոխության շրջանում այդպիսի կարիքներով չի կարելի կառավարել երկիրը: Սայիդ փաշան պատասխանեց, որ խընդիրը պիտի ներկայացնի սուլթան Աբդուլ Համիդին: Հաջորդ օրը իմացվեց Սայիդ փաշայի հրաժարականը: Աբդուլ Համիդը պատվիրակության տեսակետը հարցնելուց հետո նոր կարիքներ կազմելու պաշտոնը հանձնեց Քյամիլ փաշային: Քյամիլ փաշան պառլամենտի գումարումից հետո գրեթե մեկ ամիս գլխավորեց կառավարությունը: Գեղովի դեպքը, (Արևելյան) Ռումելիի Բուլղարիային կցումը և թագավորության ու անկախության հռչակումը տեղի ունեցան Քյամիլ փաշայի ժամանակ: Քյամիլ փաշայի տեղն անցավ Հյուսեին Հիլմի փաշան: Մարտի 31-ի դեպքերը տեղի ունեցան նրա վարչության ժամանակ: Մարտի 31-ին կառավարությունը ստանձնեց Թեֆիկ փաշան: Նրա ժամանակ էլ տեղի ունեցան Ադանայի դեպքերը: Ավելի ուշ Թեֆիկ փաշային հաջորդեց Հիլմի փաշան, իսկ այս վերջինին էլ՝ «Միութուն և առաջդիմություն» կազմակերպության հետ ոչ մի առնչություն չունեցող Հոռմի դեսպան Հազգը բեյը:

Նրա կարիքների ժամանակ սկսվեց Իտալական պատերազմը: Հազգը փաշայի կարիքներում, որպես կուսակցության անդամ, գտնվում էինք միայն Ջավիդ բեյը, Սայրի բեյը և ես: Իտալական պատերազմը սկսելուց առաջ Ջավիդ բեյը և ես հեռացել էինք կարիքներից: Հազգը փաշայի հրաժարականից հետո իշխանության գլուխ եկավ նորից Քյուչուք Սայիդ փաշան: Սրան հեռացնելուց հետո էլ Ղազի Մուխթար փաշայի նախագահությամբ Քյամիլ փաշայի և Ջեմալեստին մուլայի մասնակցությամբ կազմվեց «Աբդուլ Համիդանման» մի կառավարություն: Բալկանյան պատերազմը, պատերազմի կորուստը (պարտություն), այդ ամենը տեղի են ունեցել այս մեծ կարիքների օրով: Մինչև այդ ժամանակ «Միութուն և առաջդիմություն» կազմակերպությունը համաձայնություն չի ունեցել կազմելու անկախ մի կարիքներ, այլ պարզապես նեցուկ է հանդիսացել զանազան կարիքներին:

Կուսակցությունը ոչ մի ժամանակ չի միջամտել պետության արտաքին քաղաքականությանը. միշտ կուրորեն ենթարկվել է Միսիստրների խորհրդի և Սադրազամի քաղաքականությանը: Քյամիլ փաշայի հաջորդ Մահմուդ Շեքեթ փաշան ևս բոլորովին անկախորեն էր վարում պետական գործերը և հակառակ կուսակցության առար-

կուլթյուններին՝ Գեոնդերեի դաշնադրությամբ էդիրենն թողել էր Բուլղարիային: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, միայն Սայիդ Հալիմ փաշայի կաբինետի հետ միասին, ստանձնել էր պատասխանատվությունը: Հակառակորդ կուսակցությունը պառլամենտում քվե տալու ձևով ուրիշ կաբինետների համար բարոյական պատասխանատվության տակ էր մտնում, բայց ավելորդ կլինի իրական պատասխանատվության մասին խոսել, որովհետև, համաձայն Հիմնական օրենքի (սահմանադրության) տրամադրությունների, պատասխանատու պաշտոն ստանձնած անձերին միայն կարելի է ենթարկել պատասխանատվության: Ինչպես այսօր, ընդհանուր պատերազմի պատճառով ուզում են Սայիդ փաշայի կաբինետը և նրա նախագահին ու անդամներին պատասխանատու համարել: Պարտադիր կարգով պետք է ձերբակալվեին Իտալական պատերազմի պատճառով Հազգը փաշայի կաբինետի անդամները և Արտաքին գործերի մինիստրը, Բոսնիա-Հերցեգովինայի և Բուլղարիայի ղեպքերի պատճառով՝ Քյամիլ փաշայի կաբինետի անդամներին և բուլղարական պատերազմի պատճառով էլ՝ Ղազի Մուսթաֆա փաշայի կաբինետի անդամներին:

Մինչդեռ ներկա կառավարությունը, մոռանալով ամբողջ անցյալն ու իրականությունը, իր ծրագրում տասը տարվա իրադարձությունների համար պատասխանատու է հայտարարում Սայիդ և Թալաթ փաշաների կաբինետներին: Մյուս կողմից՝ համաձայն նրանց սկզբունքների, պատասխանատու համարվող մի շարք անձնավորությունները ժամանակին իրենց կաբինետին մասնակցած անձնավորություններ են: Իրենց հայտարարությունների մեջ եղած այս հակասություններն ու տեղի ունեցած իրադարձությունները բավական են ապացուցելու, թե ներկա կառավարությունը ինչպիսի վրիժառու ցասումով լցված քաղաքականությանն է հետևում: Հիմնական օրենքի համաձայն՝ մինիստրներին դատում է միայն Բարձրագույն ատյանը: Այս խնդրում օրենսդրության նպատակը պարզ է: Վերևում իմ հիշատակած քաղաքական ղեպքերի մասին քննություն կատարելու և որոշում կայացնելու իրավասու դատարանը կազմվելու է միայն Ծերակույտի, Վճռաբեկ դատարանի, Պետական խորհրդի և պետության մեջ ամենաբարձր աթոռներ գրաված անդամներից: Ամբողջ կյանքում թնդանոթ և հրացան պատրաստելով զբաղված մի զենե-րալ, մի հազարապետ և երկու հարյուրապետ չեն կարող այդ իրադարձություններն ըմբռնել և այդ մասին մի որոշում կայացնել:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայերը 1878 թվականի ռուսական պատերազմից ի վեր հույս ունեն Արևելյան Անատոլիայի նահանգներում անկախություն ձեռք բերել: Սան-Ստեֆանոյի¹ դաշնագրի կնքման ժամանակ Հայերը նույն նպատակով դիմել էին Բեռլինի կոնֆերանսի եվրոպական պետություններին իրավասու ներկայացուցիչներին: Առանց բնակչության քանակը նկատի առնելու՝ Բուլղարական իշխանապետության և Արևելյան Ռումելիի հիմնումը հույսեր արթնացրին Արևելյան նահանգներում փոքրամասնություն կազմող Հայերի մեջ: Հայերը Բեռլինի դաշնագրով Արևելյան նահանգներում ապահովել էին միայն բարենորոգման գործադրումը: Այս հույսերով գորացած՝ Հայերը Արևելյան Անատոլիայում, Կովկասում, Ստամբուլում, Ժնևում և Եգիպտոսում ստեղծել էին կազմակերպություններ և թուրքերի ու քրդերի հարստահարությունների մասին սուտ լուրեր տարածելու նպատակով կազմել էին պրոպագանդայի օրգաններ: «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը Սահմանադրության վերահրուշակումից առաջ «Արտաքին կենտրոնի»² միջնորդությամբ Հայերին առաջարկել էր ներքին գործերում գործակցություն: Չնայած որ «Արտաքին կենտրոնը» տեղեկացրել էր Հայերի տարբեր նպատակներ հետապնդելու և ինքնավարության ու բաժանման ծրագիրներ իրականացնելու աշխատանքի մասին, «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը, Սահմանադրության հռչակումով «ներքին կենտրոնի» հետ թերևս մի հասկացողություն ապահովելու հույսով պնդել էր իր առաջարկի վրա և նույնիսկ պարտադրել էր «Արտաքին կենտրոնին», որ Հայերի հետ նորից սկսի բանակցությունները: Փարիզում կատարված զանազան խորհրդակցություններին իբր հետևանք՝ Հայերը, վերջիվերջո թուրքերի գործունեության հետ ավելի լավ ծանոթանալու նպատակով, ընդունեցին գործակցել աշխատանքներին:

«Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը բռնակալ վարչության դեմ առանձնաբար կամ հավաքաբար ձեռնարկվե-

¹ Հայերի պատրիարք Ներսես Վարժապետյանը մեծ Դուքս Նիկոլայից խնդրել էր, որ իբրև հաշտության պայման՝ թուրքերին առաջադրվի (Հայերի համար) ինքնավարության ճանապարհ:

² «Ներքին կենտրոնը» գտնվում է Սալոնիկում, իսկ «Արտաքին կենտրոնը»՝ Փարիզում:

լիք միջոցառումների պահին դիտավորություն ունեն Անատոլիայի զանազան քաղաքներում կենտրոններ կազմակերպելու և այդպիսով, առանց Սալոնիկի ընդհանուր կենտրոնի ուշադրությունը գրավելու, արգելք հանդիսանալ Անատոլիայից դեպի Ռումելի պահեստային զորամասեր ուղարկելուն, կազմակերպությունը, Արդուլ Համիդի վրա առանձնապես բարոյական ազդեցություն գործադրելով, ուզում էր իր կազմակերպությունը ավելի լայն և ընդարձակ հիմքերի վրա դնել: Ուստի, հանձնարարել էր Հայերին՝ Միություն (Իթիֆհադի) կազմը դեռ թույլ եղող Ստամբուլի և Սալոնիկի կենտրոնների հետ միատեղ գործել և այդ տեղերում, առանց ոչ մեկին վնաս պատճառելու, գիշերները ուումբեր պայթեցնել: Հայերը սկզբունքով մերժեցին մեր բոլոր առաջարկները՝ առաջարկելով, որ իրենց համար կարելի չէ Ստամբուլում և Սալոնիկում նման ձեռնարկ կատարել: Երբ «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը հաջողվեց բացառապես իր ներքին կազմակերպության չնորհիվ ընդունել տալ Սահմանադրությունը, ամբողջ Հայկական մամուլը այն հավակնությունն ի հայտ բերեց, թե այս հաջողությունը ձեռք բերելու գործում «Հայ հեղափոխական դաշնակ» կազմակերպությունը ևս մեծ ջանքեր է գործադրել և երիտասարդ թուրքերին մեծ օժանդակություններ է ցույց տվել: Երիտասարդ թուրքերը այսպիսի մի հավակնության առկայությունը իրենց ձեռնարկի համար վտանգավոր չգտան և դեռ հույս ունենալով հասկացողության գալ Հայերի հետ՝ կարիք չզգացին հարկավոր ուղղումներ կատարել այս հրատարակություններում, որով Հայերին էլ հպարտանալու մի բաժին թողին: Սահմանադրությունից անմիջապես հետո Ստամբուլ վերադարձած (Հայկական) կոմիտեի պետերը և արքայազնից վերադարձող պատրիարք Իզմիրլյան է-ֆենտին դիմավորվեցին մեծ ցույցերով: Թե՛ մայրաքաղաքում և թե՛ նահանգներում երիտասարդ թուրքերը մասնակցեցին կամայական վարչության դեմ (Համիդի ուեթիմ) պայքարի ընթացքում նահատակված և կամ սպանվածների համար կատարված սգահանդեսներին: Երկու կողմից էլ երկար ճառեր արտասանվեցին: Սահմանադրության համար աղոթքներ և ապագա հաջողությունների համար երդումներ կատարվեցին: Բոլոր այս բարեկամական արտահայտությունները փոխանակվեցին առանց երկու կողմերի ծրագիրներն իրար հետ համեմատելու:

Նկատվում էր, որ Հայերը իրենց ծրագրերը «Միություն և առաջադիմություն» կազմակերպությանը ներկայացնելու ժամանակ

իրենց նպատակների իրագործման համար չպիտի քաշվեն ոչ մի զոհաբերությունից և զրված նպատակակետին հասնելու խնդրում չատուրջ վերաբերմունք ունեն:

Երիտասարդ թուրքերը, Սահմանադրության հռչակման պահին, Հայ հայրենակիցների հանդեպ վարվել են ամենամեծ անկեղծությամբ և ապագային նայել են կատարյալ վստահությամբ: Սակայն Հայ «Դաշնակ» և «Հնչակ» կոմիտեները¹ 1908–1918 թվականներին թուրքիայում իրենց հեղափոխական շարժումը ընդլայնեցին և ժողովրդին զինելու խնդրում մեծ ջանքեր թափեցին: Հայ կոմիտեների տարածած մի չրջաբերական հրահանգում այսպես էր ասվում:

Ձենքի կարիք ունեցողը նախ և առաջ պետք է հարցնի իր վրատահած մեկին, թե ո՞րն է ամենալավ տեսակի զենքը: Բնական է, որ Եվրոպայի չինածը ամենալավը և ամենակատարյալն է: Սակայն Հայերի համար դրանցից ոչ մի օգուտ չկա, որովհետև ո՛չ մենք կարող ենք Եվրոպա գնալ և ո՛չ էլ Եվրոպայի զենքը Հայաստան կգա: Ըստ որում, եթե այդ զենքերի հայթայթումը կարելի իսկ լինի, անկարելի է մշտապես ապահովել փամփուշտները: Ուրեմն մենք զենքեր փնտրելու ենք մեր շուրջը: Մենք գտնվում ենք երեք պետությունների սահմանների վրա: Սրանք ներկայումս երկու տեսակ զենք ունեն: Ռուսաստանում նախապես գտնվում էր «Բերդանը», իսկ այսօր «Մոսին» է գործածվում: Թուրքիայում նախապես կար «Մարթին», այժմ կա «Սավզերը»: Սրանցից ամենալավը պետության ձեռքում եղածներն են: Բացի սրանից, այս զենքերը մեզ ավելի մոտիկ լինելով, գնդակներնով էլ հեշտությամբ և էժան գներով կարելի է ձեռք բերել: Այսուամենայնիվ ոչ մի երկրում պետությունը չի թույլատրի ժողովրդի կողմից այդ զենքերի գործածումը, որը թե՛ առնողի և թե՛ ծախողի համար վտանգավոր է: Մենք նախընտրելու ենք ավելի հեշտությամբ ձեռք բերվող հին զենքերը:

Այդ պարագայում առաջ է գալիս ուշագրավ հարցը: Հին և վատ զենքով ինչպե՞ս կարելի կլինի դիմադրել նոր և լավ զենք ունեցողին: Ավելորդ է այս մտածողությունը, որովհետև նախ մեր թշնամիները ոչ մի ժամանակ իրենց զենքերից այնչափ չպիտի օգտվեն, որչափ մենք: Երկրորդ՝ հանրահայտ է, որ ժողովրդի ձեռքում լավ զենքը միշտ չէ, որ կարող է օգտակար լինել:

¹ Կոմիտե բառը այստեղ և առհասարակ գործ է ածվել կուսակցություն բառի իմաստով:

Ռուսաստանում պետական մի քանի զինագործարաններ կան, իսկ Թուրքիայում ոչ մի հատ գոյություն չունի: Հետևաբար, զենքի հայթայթման գործում ռուսահայերը պարտավոր են օժանդակել և միջնորդել Թուրքիայի իրենց ընկերներին:

Գալով գյուղերին, սրանք երեք տեսակ են.

1) Բացառապես հայերով բնակեցված գյուղեր, որոնք գտնվում են երկու հայ գյուղերի միջև:

2) Հայերին չպատկանող գոտիներում գտնվող և բացառապես հայերով բնակեցված գյուղեր:

3) Միևնույն ժամանակ թե՛ հայերով և թե՛ հայ չեղողներով բնակեցված գյուղեր:

Կազմակերպական տեսակետից այս երեք տեսակի գյուղերի միջև տարբերություն չկա: Ամեն գյուղ պետք է կազմի մի խորհուրդ, և բոլոր ուժերը պետք է ենթարկվեն այդ խորհրդին: Ամեն խորհուրդ բաժանվում է երկու մասի. առաջինը լինելու է հաստատուն, երկրորդը՝ չրջուն: Սրանցից յուրաքանչյուրին տրվում է մի պետ և մի օգնական: Բոլոր գյուղերում հաստատուն և չրջուն խորհուրդներն իրենց համար պետ են ընտրում զենք գործածելու մեջ ամենից ավելի փորձառու եղողներին: Այս պետը պիտի լինի նաև գյուղի ամենամեծ իշխողը, և այնտեղի բոլոր ուժերը պիտի կապվեն այս պետին: Պետը միևնույն ժամանակ չրջանի հրամանատարի և շտաբի պետի փոխանորդն է:

Միևնույն գոտում գտնվող գյուղերի պետերը հավաքվելով՝ իրենց միջից ընտրում են երեք հոգուց բաղկացած շտաբի խորհուրդ: Որևէ բախման (կռվի) ընթացքում, երբ շտաբի խորհուրդը կամ չրջանի հրամանատարը որոշակի պարզում են զենք գործածելու անընդունակ եղողներին, նրանք կարող են իրենց պատասխանատվությամբ նրանցից զենքերը վերցնել և տալ այդ գործում ավելի հաջողակ եղողներին: Հանկարծական հարձակման ենթարկվող գյուղերը օժանդակություն ստանալու համար, իսկույն սուրհանդակներ պետք է ուղարկեն հարևան գյուղերը: Ուստի գյուղերում բնակվող և տվյալ գյուղերում փոքրամասնություն լինելու պատճառով հարևան գյուղերից օժանդակության կարիք ունեցող հայերը իսկույն պետք է անցնեն հայկական չրջաններ՝ իրենց հետ տանելով ապրանք՝ որչափ կարող են:

Այն խառը գյուղում, ուր հայերը կազմում են մեծամասնություն, նրանք թշնամուն պահում են որպես պատանդ և կամ պիտի ապա-

հովեն այդ գյուղից նրանց հեռացումը: Բախման ժամանակ զենք չունեցողներին բացարձակապես արգելվում է դուրս ելնել: Գյուղի ամբողջ բնակչությունը պիտի հատուցի թշնամու ձեռքն ընկած զենքի արժեքը: Թշնամուց առնված զենքը պատկանում է առնողին:

Գյուղերի վրա հարձակում գործելու համար պետք է նկատի ունենալ հետևյալները.

1. Անհրաժեշտ է գիտենալ թշնամի գյուղերի ամրացված վայրերը:

2. Նախապես ճշտել նահանջի գիծը և պահակների միջոցով ապահովել նահանջը:

3. Ճշտել թշնամու օժանդակ ուժ ստանալու վայրը և արգելք լինել:

4. Հարձակման ենթակա գյուղը պաշարել միայն երեք կողմերից: Պաշարվածների փախուստի համար բաց է թողնվելու չորրորդ կողմը, որովհետև չորս կողմից պաշարված թշնամու՝ ամեն բան աչքն առած պայքարելու պատճառով, կարող է վտանգվել հաջողությունն ու հաղթանակը: Հարձակվողների մի մասը պետք է թաքնվի ազատ ձգված կողմում, որպեսզի կարողանա ավելի մոտիկից ճնշել թշնամուն և հնարավոր չափով մեծ կորուստ պատճառել փախչողներին: Ընդհանրապես գյուղի մի կողմը ազատ թողնելու բուն պատճառը թշնամու փախուստին կարելիություն ընձեռելուց ավելի՝ նրա դիմադրողականությունը կոտրելու և այդպիսով հաղթանակը ավելի շուտ չահելու մեջ է:

5. Թշնամուն չփոթություն մատնելու համար հարձակման ժամը պետք է ընտրել առավոտյան արշալույսի ժամանակը: Ավելի վաղ կատարված հարձակումը մթութան պատճառով դանդաղում է և անտեղի արյունահեղության պատճառ դառնում:

6. Թշնամու մեջ շտապողականություն և խառնաչփոթություն ստեղծելու նպատակով զանազան տեղերում պետք է հրդեհ առաջացնել. սրա համար էլ անհրաժեշտ է հարկ եղած պատրաստությունը նախապես կատարել:

7. Հարձակող ուժերի մեջ հեծյալներ չգտնվելու դեպքում պետք է ապահովել մի քանի ձիեր, որոնք ծառայեցվեն մեռածների կամ վիրավորների փոխադրման գործին:

Հարձակումից մեկ-երկու օր առաջ շտաբի ընտրած կարող և վրստահելի անձերը պետք է ուղարկվեն գյուղեր: Սրանք առանց ճանաչվելու անհրաժեշտ եղած ժամանակով կարող են մնալ հիշյալ չրջանում: Սրանցից յուրաքանչյուրն իր ստուգումը վերջացնելուց հետո կտա մի տեղեկագիր: Հարձակման պատրաստությունները տեղի կունենան համաձայն այդ տեղեկագրի:

1910 թվականին Կոպենհագենում կայացած սոցիալիստների համագումարում¹, «Դաշնակցության» կոմիտեի տված մի հիշատակագրում հայ կազմակերպության մասին խոսելիս, հիշվում էր հայերի զինվելու և իրենց պետի հսկողությունը գիշերները զինավարժություն կատարելու մասին:

Սրանից բացի, Բիթլիսի ուսու հյուպատոսը 3 դեկտեմբերի 1910 թ. տեղեկագրում Բիթլիսի նահանգում «Դաշնակցություն» կոմիտեի գործունեության մասին խոսելիս գրում է, որ ժամանակին թուրք ուժերի դեմ կռվող կոմիտեի անդամները եղել են դպրոցի ուսուցիչներ և նահանգում դեկավարում են հեղափոխական շարժումը, որ կոմիտեն ունի բազմաթիվ անդամներ, որ կոմիտեի կենտրոնը Մուշն է, և ամբողջ կազմակերպությունը բաղկացած է 20 մասնաճյուղերից: 19 նոյեմբեր 1910 թ. մի տեղեկագրում նշված է, որ թուրքերի հետ միասին ապրել չուզող հայերը «Դաշնակցություն» կոմիտեի հրամաններին չանսացող հայերին պիտի սպանեն և այս ոճիրները վերագրեն թուրքերին:

Հայերի կողմից կատարված նմանօրինակ գործերին հակառակ, «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը հայերի հետ իր խորհրդակցությունները շարունակում էր մեծ ուղղամտությամբ:

Առաջին խորհրդակցությունները կատարվեցին «Դաշնակցական» կոմիտեի հետ: Դաշնակները վերևում մանրամասնորեն բացատրված ուսական առաջարկը պարունակող մի ծրագիր էին պատրաստել և ուզում էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության հավանությունը առնելուց հետո պառլամենտում միասին պաշտպանել և հիմնական կազմակերպությունը դրա համաձայն բարեփոխել: Երիտասարդ թուրքերը այս ծրագրի շատ կետերը համապատասխան չգտան իրենց սկզբունքին: Երկար խորհրդակցություններ և տեսակցություններ կատարվեցին: Թուրքերի առարկությունները կարելի է ամփոփել հետևյալ ձևով:

Օսմանյան կայսրությունը, բաղկացած լինելով թուրքերից, արաբներից, քրդերից, հայերից, բուլղարներից, սերբերից և այլ նման դանազան ժողովուրդներից, համաձայն հայերի ծրագրի՝ քաղաքական ինքնավարության ճանաչումը իրավունք պիտի տա մյուս ազգություններին էլ նույն ձևի կազմակերպություն ստեղծելու: Իսկ դրա

¹ Իրենց նպատակներին ավելի հեշտ կերպով հասնելու և եվրոպական հանրային կարծիքի վրա ավելի լավ ազդելու նպատակով, դաշնակները սկսեցին սոցիալիստ անունը կրել:

հետևանքով երկրի միասնությունը խորտակվելուց բացի վեց հարյուր տարվա կայսրության հիմքերը քանդելով՝ կարող է այն տանել դեպի անկում:

Երիտասարդ թուրքերը իրենց ծրագրում մտցրել էին նաև մասնավոր մի վարչության հիմնումը՝ միևնույն իրավասությունների և պարտավորությունների բաշխումով: Նրանք չատ աշխատեցին համոզել հայերին՝ ընդունելու համար այդ ծրագիրը, բայց հայերը երբեք չմտեցան այդ առաջարկներին: Դաշնակները միշտ պնդեցին բոլոր կոմիտեների հեղափոխական կազմի պահպանման և հավանական հեղաշրջման հանդեպ միշտ զինված վիճակում պատրաստ լինելու վրա: Սակայն անկասկած է, որ նրանց մտադրած իսկական նպատակն էր ազգային և հեղափոխական կազմակերպությունը համարձակ կերպով շարունակել և ծավալել: Երկու կողմերն էլ համոզված էին, որ ծրագրի և նպատակի տեսակետից փոխադարձ հասկացողությունն անկարելի է: Չնայած դրան՝ նրանք իրար հանդեպ վստահություն ցույց տվեցին և հակառակ մեջտեղ եղած տեսակետների հակասության, թերևս ապագային, հակառակ ամեն բանի՝ հասկացողության հանգելու հույսով, պահպանեցին իրար հետ թուրքերությունները: Ավելի ուշ հայերը իրենց նպատակներն իրականացնելու հույսով թեև հարեցին անձնական հակառակությունների հետևանքով նոր կազմված ազատական կուսակցության, բայց անհատական չփոփոխեցին իսկույն հասկացան, որ այս կուսակցությունը երկար գոյություն ունենալ չի կարող: Այս պատճառով հայերը նախընտրեցին նորից լավ հարաբերություններ հաստատել «Միություն և առաջադիմության» հետ:

Մինչև Բալկանյան պատերազմի պայթելը ընդհանուր և իրական մի ապստամբության չձեռնարկեցին: Նրանց ամբողջ գործունեության նպատակն էր կատարելագործել իրենց կազմակերպությունները: Կառավարության և կուսակցության հետ իրենց հարաբերությունների շարունակման քաղաքականության նպատակն էր Աբդուլ Համիդի ժամանակ օտար երկրներ մեկնած հայերին ետ վերադարձնել և նրանց սեփականությունները ետ ստանալ: Կառավարությունը այս հարցումն էլ բարյացակամ և թույլատու վերաբերվեց և անշարժ կալվածները ետ վերադարձնելու մասին օրենքի նախագիծ պատրաստեց: Հողային այս հարցերը ոչ միայն քուրդ, այլև այդ նահանգների թուրք պատգամավորների առարկություններին էլ պատճառ դարձան: Այս հարցի պատճառով երիտասարդ թուրքերի դեմ սկսված

ուժեղ հոսանքին հակառակ՝ կառավարությունը որոշում ընդունեց այդ օրենքը անպայման գործադրության դնել:

Հայերը այդ օրենքը անբավարար նկատեցին և այդ մասին տեղի ունեցած բանակցությունները և բարեփոխման առաջարկների գործը ձգձգեցին: Հողային հարցի հապաղման, երբեմն էլ նրանց (հայերի), պատճառով տեղական բնույթի խառնաչփոթություններից առաջացած անվստահության մասին բողոքներ բարձրացնելով՝ հայերը եվրոպայի ուշադրությունը իրենց վրա էին պահում:

Թուրքիան Բալկանյան պատերազմից հետո շատ էր թուլացել՝ թե՛ ներքնապես և թե՛ արտաքին ճակատի վրա: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը իր ներքին քաղաքականության մեջ ստիպված եղավ արարներին և հայերին բավարարող մի ծրագիր մշակել: Բեյրութում կազմված բարենորոգման կոմիտեի անդամները պատերազմից հետո որոշեցին Փարիզ ուղարկել մի պատվիրակություն և Ֆրանսիայի միջնորդությամբ պահանջել բարենորոգման իրականացում: Այս պատվիրակության իսլամ անդամները իրենք իրենց պաշտպանելու համար հայտարարեցին, որ իրենք մասնակցել են այդ շարժմանը՝ գործը սոսկ քրիստոնյա անդամների ձեռքում չթողնելու նպատակով:

Այդ օրերին պատվիրակության Ստամբուլում գտնվող մի քանի իսլամ անդամների հետ բանակցություն ձեռնարկվեց, և նրանց բացատրվեց, որ նման ձեռնարկությունը կառավարության օտար միջամտություն: Նրանց ապահովություն տրվեց, որ կառավարությունը պիտի համաձայնվի կատարել իրենց ցանկացած բարենորոգումը: Այսպիսով, պատվիրակության մի մասը Ստամբուլ եկավ և որոշ համաձայնություն ձեռք բերվեց (հատուկ մի գլխում կրկին պիտի անդրադառնամ այս հարցին):

Ավելի նպաստավոր հիման վրա մի հասկացողության հանգելու համար հայերի հետ բանակցություն ձեռնարկելու ժամանակ, հայերը այս անգամ տարբեր ձևով ուզեցին օգտվել Թուրքիայի թուլությունից:

Հայերին հայտնի լինելով, որ Ռուսաստանը Թուրքիայում անկախ մի Հայաստան հիմնելու որոշում է տվել՝ վերևում հիշատակվածի համաձայն՝ ռուսական ղեսպանի հանձնարարած գործելակերպի չըրջանակում իրենց միջև գոյություն ունեցող կուսակցական վեճերը մի կողմ թողնել և «Դաշնակ», «Հնչակ» և «Ռամկավար կուսակցությունները իրենց ուժերը միացրին Պատրիարքարանին: Մյուս կող-

մից՝ Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսի և Նուբար փաշայի նախագահությամբ եվրոպական քաղաքներում հայկական ինքնավարություն պահանջելու պարտականությունով մի պատվիրակություն կազմեցին և Փարիզ ուղարկեցին:

Այստեղ ավելացնում եմ «Դաշնակցություն» կոմիտեի մի հայտարարությունը, որը կարևոր մի փաստ է, թե ռուսները եվրոպայում պրոպագանդա կատարելու նպատակով ինչպես էին հայերին գրգռում:

Ձափազանց զաղտնի

Բալկանյան պատերազմի նորից բռնկումով քաղաքական մթնոլորտը ծածկվեց սև ամպերով: Գոյություն ունեն մարդիկ, որոնք այս բանը հայկական հարցի համար չափազանց նպաստավոր են համարում: Սակայն սա ճիշտ չէ: Զանազան անձնավորություններ զանազան կենտրոններ և հատկապես՝ մեր կազմակերպությունը հայկական հարցը չահավետ կերպով լուծելու նպատակով շատ ձեռնարկում են կատարել: Այս նկատառումով մեզ ուղարկված շատ նամակների ամենակարևոր կետերն ամփոփում ենք ներքևում:

1. Այս պահին Լոնդոնում կայացած ղեսպանաժողովում հայկական հարցը խորհրդակցության նյութ չպիտի դառնա:

2. Հաշտությունը վերջնականապես ապահովելուց հետո Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը որոշել են ձեռք առնել մեր հարցը:

3. Այս երեք պետությունները համակարծիք են հայկական նահանգներում մասնավոր մի վարչություն հիմնելուն: Այլ կերպ ասած՝ միայն այս ձևով կարելի է ապահովել բարենորոգման իրականացումը:

Պուանկարեն՝ Փարիզում, սրբ էղվարդ Գրեյը՝ Լոնդոնում, պարոն Սադոնովը՝ Պետերբուրգում և Ստամբուլի նրանց ղեսպանները հանձնարարում են մի քիչ ևս համբերություն: Նրանք հույս ունեն, որ մեր ցանկությունները պիտի իրականանան:

Լոնդոնում Անգլո-հայկական կոմիտեն, որի մեջ գտնվում է նաև Բալկանյան կոմիտեի ամենակարկառուն անդամը, արդեն լրիվ գործունեության մեջ է գտնվում: Այս կոմիտեն մի հուշագիր է ներկայացրել վեց պետությունների վեհապետերին, կարինետներին և ԱՄՆ-ի հանրապետության նախագահ պարոն Թաֆտին: Անգլիական, ֆրանսիական և ռուսական ղեսպաններն իրենց կառավարություններից հրահանգ են ստացել այս հարցով զբաղվելու համար: Դիմում պիտի կատարվի մյուս պետություններին, որ մասնակցեն այս

հարցին և կամ գոնե չանեն որևէ առարկություն: Լոնդոնի դեսպանաժողովում որոշված է անպայման զբաղվել Հայկական հարցով: Սակայն ժողովուրդը երբեք չփոխություն չպետք է մատնվի, որովհետև Անատոլիայի Օսմանյան հարցը քննության պիտի առնվի Եվրոպայի Օսմանյան (Եվրոպական Թուրքիայի) հարցի լուծումից հետո: Այս հարցի ամենակարևոր կետը կազմում է այն, որ Անգլիայի և Ռուսաստանի միջև այս հարցի առթիվ ոչ մի տարակարծություն գոյություն չունի: Ֆրանսիական կառավարությունն ու դեսպանատունն ամբողջ սրտով ու հոգով շահագրգռված են այս հարցով: Պետերբուրգում հայերը դիմել են Արտաքին գործերի մինիստրին: Մինիստրը խոստացել է հարկ եղած հրահանգը տալ Ստամբուլի իր դեսպանին և ավելացրել է, որ հայերը պետք է պրոպագանդա կատարեն Լոնդոնում ու Փարիզում: Հարցի ամենաուշագրավ կետն էլ այս է:

Ինչպես նախապես տեղեկացրել ենք, Պատրիարքարանն իսկույն և ամբողջությամբ ընդունել է մեր առաջարկները: Այժմ սպասում են մեր տեսակետների մանրամասնորեն ներկայացնելուն: Այս ժամին զբաղվում ենք դրանով և մոտակա օրերում կտեղեկացնենք մեր ծրագրի գլխավոր գծերը:

Պետերբուրգից երկու հայ պատվիրակներ են եկել և հայկական չըջանների հետ չփում ունենալուց և կարևոր տեղեկություններ քաղելուց հետո, վերադարձել են:

Ինչպես մեզ հաղորդել են, Վանում ինքնապաշտպանության կազմակերպությունը մեծ ազդեցություն է գործել քրդերի վրա: Անձամբ կուսակալն իսկ փոխել է մինչև այսօրվա իր վարքագիծը և մեզ է մոտենում:

Հարցի քաղաքական կողմից բացի՝ մեզ համար նույնքան կարևոր է նաև ինքնապաշտպանության հարցը: Մի շարք տեղերում կացությունը շատ է դժվարացել: Հայերին այս կացությունից փրկելու համար մեր աչքերը պետք է դարձնենք այդ կողմերը:

Մասնաճյուղերից խնդրում ենք հետևյալները.

1. 1913 թվականի անդամական վճարների ուղարկում:
2. Որպեսզի կարողանանք մեծ ջանքերով իրագործել ինքնապաշտպանության գործին վերաբերվող մեր ձեռնարկումները, դաշնակցության ենթակա թատրոնի, երգահանդեսների և Կարմիր խաչի ընկերությունների հետեղիք ուղղության մասին պետք է տալ հրահանգներ:

3. Կատարել պրոպագանդա և կազմակերպել հավաքություններ՝ վստահ լինելով, որ ժողովրդի լավագույնները մեր կողմն են:

4. Մասնակցել «Հայրենիք» թերթի կողմից բացված նպաստահավաքման:

5. Բոլոր դրոսանքի հավաքությունում, հանդեսներում և այլուր ինքնապաշտպանության համար նպաստ հավաքել:

Այս կարևոր փաստաթղթի վերջում չեղտվում է նաև այն մասին, որ հայերի կացությունը վատթարանալու պարագայում, ապահովությունը վերականգնելու նպատակով, «Ազրբեջանից» դեպի Անատոլիա է գալու ռուսական զորքը:

Բարձրագույն Դուռը շատ լավ գիտեր, որ Արևելյան նահանգներում բարենորոգում կատարելու Եվրոպայի ցանկությունը նման է միշտ այդ անվան տակ տեղի ունեցած միջամտություններին, որոնց պատճառով նա կորցրեց Ռումելիի իր հողերը և հասկանալով, որ այս անգամվա միջամտությունն էլ, ըստ էության, արդյունք է Թուրքիայի հանդեպ թշնամական քաղաքականություն հետապնդող Ռուսաստանի գրգռության, որոշեց որևէ միջամտություն տեղի ունենալուց առաջ հիշյալ նահանգներում բարենորոգում կատարել իր (Թուրքիայի) նախաձեռնությամբ և Եվրոպայի մասնագետների միջոցով: Արտաքին գործերի մինիստրությունը իր այս դիտավորությունը Լոնդոնի դեսպան Թեֆիկ փաշայի միջոցով ներկայացրեց անգլիական կառավարությանը և խնդրեց բավարար մասնագետների ուղարկումը:

Բարձրագույն Դուռը ամենամեծ լրջությամբ և անկեղծությամբ բարենորոգում կատարելու կողմնակից էր: Այս կերպով անգլիացիներին վստահված այս առանձնաշնորհումը հետապնդում էր մի քաղաքական նպատակ. դրանով (Անգլիան) ցանկանում էր ամրացնել նաև Կիպրոսի պայմանագրության տրամադրությունները: Վերևում հիշատակվածի համաձայն՝ անգլիացիների կողմից նախապես ընդունված այս առաջարկը, Ռուսաստանի ընդդիմության հանդիպելու պատճառով, մերժվեց: Այս մերժումը իր հետ մարեց շատ հույսեր: Այլևս բացահայտ էր, որ ամբողջ նպատակը ոչ թե բարենորոգում, այլ այդ նահանգները ռուսական ազդեցության ենթակա դարձնելուց էր բաղկացած:

Այդ միջոցներին իշխանության գլուխը գտնվում էր Մահմուդ Շեքեթ փաշայի կարիները: Ես՝ իբրև կուսակցության ընդհանուր քարտուղար, կարիներում չէի: Մահմուդ Շեքեթ փաշայի հավանու-

Թյամբ ուզում էինք մի անգամ ևս դիմել հայերին: Մի քանի չեֆերի հետ հավաքվեցինք հանրագուտ շինություն նախկին մինիստր Հալաջյան էֆենդիի բնակարանում: Ես ներկայացրի հարցը, հայտնեցի, որ կառավարությունը լուրջ և կտրուկ կերպով որոշել է կատարել բարենորոգումը և մանրամասնորեն բացատրեցի, թե միջամտությունը և Ռուսաստանի թելադրանքով կատարվելիք բարենորոգումը չպետք է տա ոչ մի արդյունք և քաղաքական նոր խարդավանքներով երկու ազգերի միջև պետք է առաջանա նոր թշնամություն:

Դիմելով (հայերի) հայրենասիրական զգացումներին՝ խնդրեցի, որ հրաժարվեն օտար միջամտությունից: Դրա փոխարեն պնդեցի, որ այդ նահանգներում կանոնավոր մի բանակ հիմնելու համար Եվրոպայից բերվեն մասնագետ պաշտոնյաներ: Սակայն (հայերը) մերժեցին այս անկեղծ առաջարկը՝ հայտնելով, որ դա չի գոհացնում ո՛չ ժողովրդին, և ո՛չ էլ Պատրիարքարանին: Շատ լավ էի հասկանում, որ հայերը ոչ թե բարենորոգում, այլ ռուսական միջամտությունով ուզում էին ինքնավարություն, որից հետո էլ՝ անկախության ապահովում: Ավելի ուշ՝ հայերը 1913 թվականի սեպտեմբերին, Կոնստանցա քաղաքում գումարված Հնչակյան կոմիտեի համագումարում որոշեցին անկախության գաղափարը պաշտպանել ամեն կողմերում, որը պարզ կերպով հասկացվում է ներքևում պատճենը բերված համագումարի տեղեկագրից (արձանագրություն):

17 սեպտեմբերի 1913 թվականին «Հնչակյան» կոմիտեի Կոնստանցայում կայացած համագումարի արձանագրություն

Թուրքիայում «Հնչակ» կոմիտեի կացությունը

1908 թվականի Հուլիսի 10-ի գինվորական ապստամբությունից հետո Թուրքիայում Սահմանադրություն հռչակվեց, որի անմիջական հետևանքը լինելու էր Թուրքիայում ապրող զանազան ժողովուրդների, դրանց թվում՝ նաև հայերի ազգային գոյության պահպանումը և կառավարական բոլոր տեսակի ճնշումներից ազատ ազգային սկզբունքներին համապատասխան ձևով զարգացումն ու բարգավաճումը:

... Տարիներ ի վեր հեղափոխության և պայքարի մեջ ապրող և իր բնաջնջման դատապարտված լինելը գիտակցող հայ ազգը իր ուժերը նորից հավաքելու և քաղաքական ասպարեզի վրա կրկին երևան գալու համար նույնիսկ անցողակի, հանգստի և անդորրության կարիքն ունի:

Նկատելով, որ սահմանադրության տված խոստումները չատսահմանափակ են, մեր կուսակցությունն աշխատել է կարելիության սահմաններում, գոյություն ունեցող պայմաններից օգտվելու հույսով, իր կողմից առաջադրված գաղափարները հասունացած վիճակի բերել: Այս պատճառով «Հնչակյան» կուսակցությունը ևս իր վեցերորդ պատգամավորական ընդհանուր ժողովում որոշեց չանջատվել օսմանյան սահմանադրական պետությունից՝ ազատորեն իր գործունեությունը շարունակել՝ կարողանալու համար կառավարությանը ներկայանալ օրինական հանգամանքով:

Չորս-հինգ տարվա ընթացքում հասկացվեց, որ օսմանյան սահմանադրության խոստումներից ոչ մեկը չի իրագործվել, և որ կառավարության հրատարակած օրենքի բուն նպատակն է եղել քաղաքական կուսակցությունների, մասնավորապես՝ ձախերի և արմատականների ճնշումը, իսկ կառավարման գծով նոր օրենքների և կազմակերպությունների նպատակն է եղել զանազան ազգությունների ոչնչացումը: Հայտնի է դարձել, որ տիրապետող ազգը կառավարություն կազմելու կարողություն չունի: Այս պահին պետության ղեկավարությունը իր ձեռքն ունեցող «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունում տիրապետում է մի սակավապետություն (օլիգարխիա): Այս կուսակցության հետապնդած ծրագիրն է՝ կառչած մնալ թրքական դիմանադիտությանը (բյուրոկրատիային) և արգելք հանդիսանալ առաջադիմական մի կառավարության կազմությանը: Արտաքնապես նրա նպատակն է միացնել զանազան ժողովուրդները, իսկ իրականության մեջ նրա հետևած քաղաքականությունն է՝ անհրաժեշտության դեպքում ճզմել այդ ազգերին և նրանց պահել մշտական ճնշման տակ: Գալով (երկրի) կառավարության՝ իր ձեռքում պահած տիրապետող մի դասակարգի միջոցով (հայերի բնաջնջման համար (Իհհհհհհ կողմից) ընդունել է տրվել մի քաղաքականություն, որը համառորեն շարունակվում է: Հայտնի է, որ հայ ազգը այս քաղաքականության և միշտ իր դեմ գործածվող այս ուժերի պատճառով հասել է ոչնչացման աստիճանին: Այս պայմաններում բնական է, որ նա այլևս չի կարող հետապնդել իր սկզբունքները: Հայերը համոզված են, որ տիրապետող դասերից ազատվելու և իրենց գլխի վերև տատանվող մահացու սուրը ոչնչացնելու համար պարտավոր են ապագայում հաստատուն և համարձակ գործելակերպի հետևել:

«Հնչակյան» կուսակցության յոթերորդ պատգամավորական ընդհանուր ժողովում մեկ դեմ ձայնով որոշվել է, որ մարդկային և ազգային իրավունքները ձեռք բերելու համար այլևս օրինական միջոցների գործադրումը ավելորդ է: Առաջիկայում, ոչ օրինական [անլեգալ] ուղիների հետևելու համար մինչև որ քաղաքական ու տեսական նոր պայմաններ կապահովվեն, նպատակահարմար է ավելի ուժեղացնել կուսակցական պայքարը:

Յոթերորդ պատգամավորական ընդհանուր ժողովի գումարումից առաջ որոշված էր Թուրքիայում և Թուրքիայից դուրս գտնվող բոլոր մասնաճյուղերը օրինական (լեգալ) մի ձևի տակ նորից կազմակերպել և կենտրոնացնել: Իսկ ներկա կացության հանդեպ «Հնչակյան» կուսակցության յոթերորդ պատգամավորական ժողովում որոշում տրվեց հետևյալ խնդիրների մասին.

1. Օսմանյան կայսրության մեջ եղած մի շարք մասնաճյուղերի վստահությունը չվայելելու և կուսակցության ներկա պահանջներն էլ բավարարել չկարողանալու պատճառով, լուծել Թուրքիայում գտնված նրանց (հնչակյանների) կոմիտեի վարչական ժողովը և տեղը նոր ժողով նշանակել:

2. Թուրքիայի մասնաճյուղերի գործադիր ուժի ամենամեծ գործադիր կենտրոնը եղող «Կենտրոնական վարչական ժողովը» այսուհետև անվանել «Թուրքիայի վարչական ժողով»:

3. Թուրքիայի վարչական ժողովի անդամներն ընտրված լինելով Օսմանյան կայսրության մեջ գտնվող կոմիտեի (կազմակերպության) մասնաճյուղերի կողմից, ընդհանուր կենտրոնի վարչական ժողովի հանդեպ ճանաչել նրանց մասնակի հեղինակությունը, սակայն նրանց որոշումները պիտի ենթարկվեն կենտրոնի հավանությանը:

4. Այժմ գոյություն ունեցող մասնաճյուղերը և այլ կազմակերպությունները, իրենց ներկա վիճակը արտաքինապես պահպանելով հանդերձ, ընդհանուր կենտրոնական վարչության տալիք հրահանգների և Թուրքիայի վարչական ժողովին տրվելիք հաղորդագրության համաձայն, մեր կոմիտեի գործոն անդամների և պատգամավորների հետ միասին պիտի սկսեն աստիճանաբար գաղտնի, ձեռքի տակից, ոչ օրինական գործունեություն, և վերջին որոշումների համաձայն, կոմիտեի կողմից նորից պիտի աշխատեն գաղտնի մասնաճյուղեր կազմել:

5. Հին ներքին կանոնագրությունները պետք է բարեփոխել ներկա հարաբերություններին հարմար ձևով: Մինչև հիմա գործադրվող քա-

ղաքական և տնտեսական սկզբունքները ջնջված են. նրանք փոխարինվելու են կոմիտեի կողմից ընդունված նոր սկզբունքներով: Միևնույն ժամանակ նրանց գործադրման համար առաջ պիտի քաշվեն գործուն անդամներ:

Անկախ Հայաստան: Օսմանյան պետությունը ցանկանում է Հայաստանում գործադրել ընդհանուր և մասնավոր բարենորոգում և արգելք հանդիսանալ այդ գործում օտար միջամտությունների: Չնայած դրան՝ «Հնչակյան» կոմիտեն կատարելապես համոզված է, որ առանց անկախ Հայաստանի կազմության, Հայաստանի բնակչությունը, որ ժողովրդին էլ պատկանելիս լինի, չպիտի կարողանա ապահովության մեջ ապրել ու զարգանալ, և հայ ազգը չպիտի կարողանա պաշտպանել իր ազգային գոյությունը ներքին և արտաքին հարձակումների դեմ: Այս նկատառումով, կոմիտեն որոշել է պաշտպանել այդ միտքը:

Հայերը իրենց այս պահանջները՝ որպես իրավացի ներկայացնելու համար պատմական ոչ մի իրավունք չունեն: Օսմանցիները արեվելյան նահանգները չեն գրավել, իսկ հայերը Օսմանյան կայսրության կազմավորումից մինչև այսօր սահմանների ապահովման և (երկրի) անկախության խնդրում ոչ մի ջանք ի գործ չեն դրել և ոչ մի ծառայություն չեն մատուցել: Օսմանցիներին ապաստանած այս ժողովուրդը լավ ընդունելություն է գտել և միշտ հայրենակցի վերաբերմունքի արժանացել: Հայերը տեղավորվեցին ամբողջ երկրում: Եթե բացառություն համարվի քրդերի հետ հարևան եղած մասերը, նրանք երկրի բոլոր կողմերում լավ վերաբերմունքի հանդիպեցին: Այս շրջաններում կառավարությունը չկարողանալով կարգը պահպանել, թուրք և քուրդ գյուղերի վիճակը չէր տարբերվում հայ գյուղերից: Անատոլիայում, զանազան նահանգներում և Ստամբուլում հայերը, համեմատած մյուս ազգերին ապրում էին ավելի անվիշտ և երջանիկ կյանքով: Հայրենիքի բոլոր բարիքներից օգտվող այս ժողովուրդը երբեք չէր մասնակցում նրա վշտերին ու ծանրություններին: Երկրի թե՛ երջանկությունից, թե՛ տառապանքներից միշտ օգուտ էր ապահովում: (Հայերը) հայրենիքի համար ոչ մի պատերազմի չմասնակցեցին և հայրենիքի համար ոչ մի կաթիլ արյուն չթափեցին: Ընդհակառակն՝ պատերազմի ժամանակ շարունակում էին իրենց առևտուրը և, հանձառուական գործերի մեջ մտնելով, չատ դրամ էին չահում, վատ ու լավ օրերում ապրում էին հանգստություն և անդորություն մեջ: Այդ շնորհներին որպես շնորհակալություն՝ այժմ ուզում

են մեծամասնություն կազմող բնակչությանը վոնդել և իրենց անկախությունը ձեռք բերելու համար պոկել օսմանյան հայրենիքի մի մասը:

Պատմությունը չի արձանագրել այս տեսակ ապերատությունն մի այլ օրինակ: Ռուս-գերմանական պատերազմի սկզբից այս է եղել հայերի մտայնությունը օսմանյան երկրի և ժողովրդի հանդեպ: Ընդհանուր պատերազմը ուղացրեց ինքնավարության հաստատումը, որի իրականացմանը հայերը այլևս բացարձակորեն վստահ էին: Նրանք իրենց բոլոր հույսերը կապել էին պատերազմի ելքի հետ և այս նկատառումով Ռուսաստանի այս պատերազմից հաղթական դուրս գալու համար որոշեցին գործի դնել իրենց բովանդակ ուժերը...¹:

¹ Թայեաթ փաշայի հուշերը, ԳԱԱ Արևելագիտական ինստիտուտի սեկտոր, Երևան, 1963, էջ 7–60:

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Ալայ-բեյի – սիփահիների պետ, զբնդապետ:	Բինբաշի – տասնապետ:
Ակչե – փոքր արծաթե դրամ՝ 1/120 զուրուշ:	Բյուլուկբաշի – հեծելավաշտի հրամանատար:
Աչար – տասանորդի հարկ:	Գեդիկ – կրոնավորներին շնորհված հողաբաժին:
Աչիրեթ – կրոնա-ցեղային համայնք:	Գյավուր – անհավատ:
Աչիրեթապետ – ցեղապետ, կրոնական ղեկավար:	Գյուլխ(հ)անեի խ(հ)աթթը Շերիֆ (Վարդաստանի հրովարտակ) – 1839 թ. ընդունված օրենք՝ Թանգիմաթ:
Բաբը Ն(հ)ումայուն – կայսերական պալատ:	Գյուլխ(հ)անե – բառացի՝ վարդանոց: Ստամբուլում տեղի անուն:
Բարձրագույն Դուռ (Թուրքերեն՝ Բաբը-Ալի) – Ստամբուլում մեծ վեդիի և մի շարք նախարարությունների շենքը: Հաճախ գործածվում է Օսմանյան կառավարության իմաստով:	Դեֆթերդար – սուլթանական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա, պետական գանձարանի կառավարիչ:
Բ(պ)աքչիչ – կաշառք:	Դինար – ոսկե դրամ՝ 1/4 լիրա:
Բեդլի-ասկերի – զինվորական ծառայության զիմաց հարկ:	Դիվան – սուլթանին առնթեր պետական բարձր խորհուրդ, որը հաճախ գլխավորում էր մեծ վեդիրը:
Բեյլերբեյի – նահանգի (վիլայեթի, էլայեթի) կառավարիչ և զինվորական հրամանատար, որի տնօրինության տակ էր գտնվում թե՛ քաղաքացիական վարչությունը և թե՛ ավատատիրական աշխարհագրորդ, ինչպես նաև տեղի ենի-չերիների կայազորը:	Ելլըզ (Աստղ) – սուլթանական պալատ:
Բերաթ – Սուլթանի կողմից տրված աստիճանների, չքանչանների և արտոնությունների հրամանագիր:	Ենիչերի (ենիչեր) – բառացի՝ «նոր զորք»: Օսմանյան կայսրության կանոնավոր հետևակային զորք: Ստեղծվել է 1361 թվականին, սուլթան Մուրադ Ա-ի ժամանակ:
	Զադե – զավակ:
	Զիմմի – ոչ մահմեդական հպատակ (ռայա):

էմիր – երկրի ղեկավար:
 էյալեթ (վիլայեթ) – նահանգ, վարչական բաժանման մեծ միավոր:
 Թանզիմաթ – բարենորոգում:
 Թարիհ – պատմություն:
 Թափու – մեծ հողատիրոջ կամ պետության կողմից տրված վկայական, որը որոշակի հողաբաժին մշակելու համար համապատասխան վճարով հատկացվում էր գյուղացուն: Այդ հողաբաժինը սահմանված վարձակալային վճարումով կարող էր ժառանգաբար անցնել վարձակալողի սերնդին:
 Թաքիր – գրավոր ուղերձ, կարգադրություն:
 Թեզքերե – գրավոր թույլտվություն:
 Թեհլիր – տեղահանում:
 Թիմար – հողատիրության ձև:
 Թուղրա – սուլթանի անունը պարունակող դժվար ընթերցանելի հատուկ նշան, որը զրոյմվում էր սուլթանական բոլոր գրությունների վրա:
 Ժենն թուրքեր – երիտթուրքեր:
 Իլամ – զեկուցագիր, ծանուցագիր, դատարանի գրավոր որոշում:
 Իլթիզամ – պետական եկամուտների որևէ ճյուղը (գլխավորապես՝ գյուղատնտեսական հարկերը) նախապես վճարելու պայմանով պարտավորագրով վերցնելը կոչվում էր իլթիզամ, իսկ պարտավորագրով վերցնող անձնավորությունը կոչվում էր **մյուլթեզիմ** կամ **մուքաթաաջը**: Մյուլթեզիմները հաճախ զանազան պատերազմականերով նշանակված հարկերից ավելի բարձր էին գանձում:

Իմամ – մահմեդական հոգևորականության առաջնորդ:
 Իջարեթեյն – վաքուֆապատկան որևէ հողատարածության կամ շենքի անժամկետ վարձակալում, որը կատարվում էր հետևյալ կերպ: Վարձակալողը նախապես վճարում էր հողատարածության կամ շենքի ընդհանուր արժեքի մի մասը, իսկ այնուհետև՝ ամսական նշանակված վարձը: Այս ձևով վարձակալողը դառնում էր տվյալ հողատարածության կամ շենքի կատարյալ սեփականատերը, և վաքուֆային վարչությունը երբեք չէր կարող նրան զրկել այդ իրավունքից:
 Իրադե – սուլթանական հրաման, հրամանագիր՝ չարադրված գլխավոր քարտուղարի կողմից՝ սուլթանի կամքով:
 Լիվա – տե՛ս **կազա**:
 Լոկոֆեթ – ղեռնա Բյուզանդական արքունիքում բարձր պաշտոն էր, որի մոտ էր գտնվում պետության կնիքը: Այս տիտղոսը պահպանվել է նաև հետագայում:
 Ռալիֆ – մահմեդականության առաջնորդ:
 Ռալիֆե – Մուհամեդի հաջորդը, տեղապահ:
 Ռարաջ – գլխահարկ, զինվորական ծառայության դիմաց ոչ մահմեդականներից գանձվող հարկ:
 Ռաֆե – լրտես:
 Ռոջա – ուսուցիչ:

Կադի – դատավոր, կազայի կառավարիչ:
 Կազա – Օսմանյան պետության Ռումելիի և Անատոլիայի երկրամասերը բաժանվում էին նահանգների՝ **վիլայեթների** կամ **էյալեթների**: Վիլայեթները բաժանվում էին **սանջակների** կամ **իլաների**, **սանջակները՝ կազաների**, որոնց կառավարիչները կոչվում էին **կազիներ** կամ **կադիներ**, իսկ կազաներն էլ բաժանվում էին **նահիենների**:
 Կալե – բերդ:
 Կասաբա – գյուղաքաղաք կամ մրդկիթ և իջևանատուն ունեցող մեծ գյուղ: Սովորաբար կասաբան վարչական կենտրոն էր, ուր նրստում էր կազայի կամ նահիեի կառավարիչը:
 Կասսամ – արիաթական օրենքների հիման վրա ժառանգականության և կտակների հարցերով զբաղվող պաշտոնյա:
 Համիդիե (համիդյան) գնդեր – քրդական անկանոն հեծելազնդեր՝ ստեղծված ցեղերի հիմքի վրա, ուղղված հայերի դեմ:
 Հավալե – գրավոր հրաման կամ թույլտվություն, որը տրվում էր այն անձնավորություններին, որոնք պետությունից ստանալիք իրենց զրամի գանձումը կատարում էին մյուլթեզիմներից (տե՛ս **իլթիզամ**):
 Ղադի – սրբազան պատերազմ՝ ջիհադ:

Ղուրուշ (ղրուշ) – արծաթյա դրամ, որը հատվելով սլավոնական երկրներում (գրոշ) գործածության մեջ էր նաև Օսմանյան կայսրությունում: Թուրքական դուրուշը սկսել է դրամահատվել XVII դարի վերջերից:
 Մակթու – այսպես էին կոչվում այն հարկերը, որոնք յուրաքանչյուր տարի, առանց հաշվի առնելու բերքի քանակն ու պայմանները, նախապես որոշված հատուկ գումարով գանձվում էին պետության կամ հողատիրոջ օգտին:
 Մեդրեսե – դպրոց:
 Մեջլիսե – սուլթան Աբդուլ Մեջլիդի ժամանակաշրջանում հատված արծաթյա դրամ, որը չրջանառության մեջ է եղել մինչև հանրապետության հաստատման չրջանը (1923):
 Մեջլիս – պետական գործերի քննության և որոշման համար գումարավոր ժողով:
 Միլլեթ – ազգ, ժողովուրդ:
 Միլլեթ սադիկա – հավատարիմ ազգ:
 Միրալայ – գնդապետի աստիճան ունեցող սպա:
 Մյուբաչիր – դատական կատարածու:
 Մյուլդիր – նահիեի (գյուղախմբի) պետ:
 Մյուլթեքլի – վաքուֆի կառավարիչը, որը կրոնական խորհրդի հրամանների և կարգադրության համաձայն իրավունք ուներ ծախսելու վաքուֆի եկամուտները:

Մյուլք – կալվածք:

Մյուշիր – մարշալ:

Մյուֆթի – կրոնավոր, Շարիաթի օրենքները մեկնաբանող:

Մուլա – իսլամական հոգևորական, աստվածաբանություն մասնագետ:

Մուլթասարիֆ (մուլթեսարիֆ) – թանգիմաթից առաջ սանջակները կառավարվում էին սանջակբեյիների կողմից, որոնց ձեռքին էր գտնվում թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական ղեկավարությունը: Թանգիմաթի չրջանում այդ պաշտոնները առանձնացան: Սանջակի կառավարիչը սկսեց անվանվել մուլթասարիֆ:

Մուհասիլ – պետական գանձարանի եկամուտները, ինչպես նաև հարկերը հավաքող պաշտոնյա:

Մուքաթաաջը – տե՛ս **Խլթիզամ:**

Նահիե – վարչական բաժանման միավոր, գավառ: Տե՛ս **կազա:**

Նամազ – ամենօրյա (օրը 5 անգամ) մահմեդական աղոթք:

Նայիր – չարիաթական դատարանի դատավոր:

Նեֆուզ – գլխահարկ՝ զինվորական ծառայությունից ազատվելու դիմաց, գանձվում էր ոչ մահմեդականներին:

Նիզամի դատարան – քաղաքացիական դատարան:

Շեյխ – աշիրեթագետ՝ կրոնական առաջնորդ:

Շեյխ-ուլ-իսլամ – մինչև Մահմուդ Բ

սուլթանը (1808–1839) մահմեդական հոգևորականության առաջնորդը: Հետագայում, Շեյխ-ուլ-իսլամը դարձավ սուլթանական դիվանի բարձր պաշտոնյաներից մեկը: Մեծ վեզիրից հետո ամենաբարձր պաշտոնյան:

Շերի – համաձայն շերիաթի:

Շերիաթ (չարիաթ) – մահմեդական իրավական օրենսդրություն, որը կազմված է հոգևոր հրամանների և պատվերների հիման վրա:

Շիա – ոչ ուղղափառ մահմեդականություն:

Ջելալի – ըմբոստ:

Ջիզիե – ոչ մահմեդականից գանձվող գլխահարկ:

Ջիհադ – սրբազան պատերազմ:

Ռայա (հոտ) – ոչ մահմեդական հպատակ:

Ռում – Բյուզանդական կայսրության կազմում եղած ժողովուրդներ, հույն:

Ռումել(ի, իա) – Օսմանյան կայսրության եվրոպական մասը:

Սադրազամ – մեծ վեզիր, եպարքոս (վարչապետ):

Սանջաղի շերիֆ – սրբազան դրոշակ:

Սիփահի – հատուկ հեծյալ զորք:

Սյուննի – ուղղափառ իսլամ:

Սոմար – հացահատիկի չափ՝ 16 փութ:

Սոֆթա – մահմեդական կրոնական դպրոցի սովորող:

Ստաֆուրուլլահ – քավ լիցի:

Սուլթան – օսմանյան բարձրագույն իշխանություն:

Վալի – վիլայեթի կառավարիչ:

Վաքուֆ – շերիաթի սկզբունքներով մղված շերիական շնորհիվ կալվածներ և այլ շարժական ու անշարժ ունեցվածքներ, որոնց եկամուտները հատկացվում էին կրոնական կամ բարեգործական նպատակներին:

Վեքիլ – տեղակալ:

Ուլեմա – գիտությունը և կրոնական գործերով զբաղվող անձնավորություն:

Ուլուֆե – զինվորականների աշխատավարձ:

Փադիշահ – վեհապետ, սուլթան, խալիֆ:

Փաշա – բարձր աստիճանի զինվորական թե քաղաքացիական, բարձր պաշտոն զբաղեցնող անձին տրվող կոչում:

Փաշալըք – փաշայի տիրույթ:

Փարա – մանր դրամ, դուրուչի մեկ քառասուններորդ մասը:

Քայմաքամ (կայմակամ, գայմագամ) – տեղակալ. քայմաքամ էր կոչվում նաև նահիեի կառավարիչը:

Քիսե – մեկ քիսեն հավասար է 500 դուրուչի:

Քյաֆիր (անտեղյակ, անհավատ) – ենթակայության ճորտատիրական ձև:

Օսմանլը – օսմանցի:

Ֆեթվա – որևիցե հարցի կամ դատական գործի մասին շերիաթի սկզբունքների և պատվերների հիման վրա մահմեդական կրոնավորի (մյուֆթի, կադի) տված իրավական որոշում:

Ֆերման – հրովարտակ, սուլթանի թուղթայով շնորհված հրամանագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Առաջաբանի փոխարեն	11
Բնաջնջման օսմանյան քաղաքականության ծնունդը	25
Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հուշերը և մտածմունքները	170
Հիմնական կանոնք Օսմանեան պետություն	209
Հաթթը Հիւմայունը	226
Թալեաթ փաշայի հուշերը	246
Տերմինաբանական ցանկ	287

ԹՈՒՐԳԵՐԸ ԹՈՒՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

I

Նմբագիր՝	Լ. Գ. Մանուկյան
Կազմի ձևավորումը՝	Գ. Վ. Մարիկյանի
Տեխ. խմբագիր՝	Վ. Զ. Բդոյան
Համակարգչային չարվածքը և ձևավորումը՝	Թ. Շ. Վարդանյանի

Ստորագրված է տպագրության 08.04.2011 թ.:

Չափսը՝ 60x84^{1/16}: Թուղթը՝ օֆսեթ:

Հրատ. 16,5 մամուլ, տպագր. 18,5 մամուլ = 17,2 պայմ. մամուլի:

Տպաքանակ՝ 500: Պատվեր 83:

ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արուսյան 52